

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2025, մայիսի 19-20)

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 811.19(082)
ԳՄԴ 81.51g43
Ա 161

Հրատարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ. Վ.Լ. Կատվայան, բ.գ.դ. Լ.Շ. Հովհաննիսյան,
բ.գ.թ. Գ.Մ. Մխիթարյան, բ.գ.թ. Ն.Ս. Սիմոնյան

Ա 161 Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակի նվիրված միջազգային
գիտաժողովի նյութեր (Երևան, 2025թ., մայիսի 19-20).- Եր.: ԳԱԱ ԼԻ
հրատ., 2025.- 259 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում 2025 թ. մայիսի 19-20-ին
տեղի ունեցած միջազգային գիտաժողովի նյութերը: Գիտաժողովը նվիրված էր անվանի
լեզվաբան Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին: Զեկուցումներում արծարծվում են
ժամանակակից հայերենի քերականական համակարգին վերաբերող արդիական խնդիրներ:

ՀՏԴ 811.19(082)
ԳՄԴ 81.51g43

ISBN 978-9939-970-12-7

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2025

Սուքիասյան Հենրիետա
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական բժշկական համալսարան,
Հայոց լեզվի և բժշկական տերմինաբանության
ամբիոնի վարիչ. henvs@mail.ru

Բանալի բառեր. հայագիտական, վաստակավոր, գործիչ, լեզվաբան, գրական, հայերեն, հետևողական:

Միբեյի՝ գործընկեր, այսօր ոչ միայն մեր՝ լեզվաբաններիս, այլև ամբողջ հայագիտական համայնքի համար նշանակալի օր է: Մեծ սիրով ու երախտագիտության զգացումով նշում ենք երջանկահիշատակ ականավոր լեզվաբան, գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ծննդյան հոբելյանական 100-ամյակը:

Սերգեյ Գյանջումի Աբրահամյանը ծնվել է Արցախի Հաղորթի շրջանի Տումի գյուղում: 1942-ից մինչև 1944 թվականը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ անցնելով դժվարին ու պատվաբեր ուղի: 1950 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, իսկ երեք տարից անց՝ ասպիրանտուրան՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն: 1953-ից մինչև 1959 թվականը եղել է ՀՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1959-92 թ. թ.՝ բաժնի վարիչ, 1967-70 թթ.՝ ՀՀ մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի բաժնի վարիչը: 1953-58թթ դասավանդել է Լենինականի (այժմ՝ Գյումրու) Մ. Նալբանդյանի անվան, 1970-71 թթ.՝ Կիրովականի (այժմ՝ Վանաձորի), 1972-92թթ.՝ Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտներում: 1992թ-ից եղել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի խմբի ղեկավար: 1966 թվականին նրան շնորհվել է գիտությունների դոկտորի աստիճան, 1970 թվականին՝ պրոֆեսորի կոչում, իսկ 1996 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Սերգեյ Աբրահամյանն արժանացել է Հայրենական Մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանի և Խաչատուր Աբովյանի անվան մեդալի: Ականավոր լեզվաբանը մեզանից հեռացավ 2005 թվականի մարտի 30-ին՝ 80 տարեկան հասակում: 2001 թվականին նրա անվամբ կոչվեց իր ծննդավայր Տումի գյուղի միջնակարգ դպրոցը:

Հարգելի՛ գործընկերներ, հայ լեզվաբանության մեջ Սերգեյ Աբրահամյանի տեղն ու դերը գնահատելիս հարկ է հատկապես ընդգծել նրա խոշոր ավանդը ժամանակակից գրական հայերենի կառուցվածքի նկարագրության, նրա պատմության, խոսքի մշակույթի հարցերի, ժամանակակից հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի, հայերենի խոսքի մասերի քննության և մանավանդ շարահյուսագիտական մտքի զարգացման գործում: Տասնամյակներ շարունակ սերունդներ կրթող շարահյուսության նրա դպրոցական դասագիրքն իր որական և մեթոդական արժեքով ցայսօր մնում է չգերազանցված: 2001 թվականին Տումի գյուղի

միջնակարգ դպրոցը Սերգեյ Աբրահամյանի անվամբ կոչելու ամօթիվ իր շնորհավորական խոսքում ակադեմիկոս Գևորգ Բրուսյանը նրան համարել է այն եզակի գիտնականներից, որ սերտորեն կապված են հայկական դպրոցի հետ: Լեզվաբանի հեղինակած դպրոցական և բուհական դասագրքերը, մեթոդական ձեռնարկներն ու ծրագրերը, որտեղ գիտականությունն ու մայրենին սիրելու, անաղարտ պահելու միտումը ներդաշնակորեն միահյուսված են, անգնահատելի դեր են խաղացել մայրենի լեզուն ճանաչելու և ուսուցանելու գործ

Բարեկամներ, ինքներդ լավ գիտեք, թե որքան բարդ ու պատասխանատու աշխատանք է լավ դասագիրք գրելը. չէ՞ որ եթե բուհական դասագիրքը կրթում է ապագա մասնագետին կամ գիտնականին, ապա դպրոցական դասագիրքը՝ ամբողջ հասարակությանը: Օրինակ, ժամանակակից հայերենի կետադրության կանոնարկման ոլորտում նրա մանրակրկիտ ուսումնասիրությունները գործնականից զատ շարահյուսագիտական խոր վերլուծությունների արդյունք են:

Ժամանակակից հայերենի ամենասկնառու հետազոտությունների շարքը թերի կլիներ առանց մեծ լեզվաբանի «Ժամանակակից գրական հայերեն» աշխատության: Հայտնի է, թե որքան տարբեր, հաճախ էլ իրարամերժ հայեցակետերից է քննվել գրական լեզվի հիմնախնդիրները ակադեմիական գիտության մեջ, ինչն, իհարկե, բնական է, բայց գրական լեզվի համապարփակ ուսումնասիրությունը նաև կարիք ունեւ ճշգրտումների և տարակարծությունների հաղթահարման: Այս առումով լուսահոգի ակադեմիկոսի վաստակն անկհայտ է: Նա կարողացավ մշակել և ընդհանրական սկզբունքներով ներկայացնել գրական հայերենի ամբողջական համակարգն իր բոլոր բաղադրիչներով ու հնչույթային, բառական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներով՝ բարեխղճորեն օգտագործելով նախընթաց դրական փորձը: Գիտնականը արդի հայերենի բոլոր կարևոր դրսևորումները դիտարկում է լայն տարածամանակյա համատեքստում՝ ցույց տալով դրանց ծագումնական ակունքները գրաբարից մինչև աշխարհաբար: Նա այն լեզվաբանն էր, որը հստակեցրեց բառագիտության առանցքային միավորի՝ բառի ըմբռնումը՝ առաջարկելով հետևյալ սահմանումը. «Բառն այն հնչյունակապակցությունն է կամ հնչյունը, որն ունի ավարտուն իմաստ, անկախ գործածություն, շեշտ և անընդմիջարկելի է»: Հիշատակման արժանի է նաև նրա ներմուծած «բառիմաստաբանություն» տերմինը, որով ավելի ճշգրտվեցին ընդհանրապես իմաստաբանության գործառույթները, քանի որ իմաստաբանությունը վերաբերելի է նաև քերականության այլ մակարդակների, հետևաբար խոսքն այս պարագայում բացառապես բառի՝ իմաստաբանության մասին է:

Սերգեյ Աբրահամյանն իր աշխատություններում անդրադառնում է բառային կաղապարների եղանակին, երբ բառերը կազմվում են բառական հիմքերի միացմամբ, կիսահարադրումով, հապավումով, ածանցմամբ: Բառաբարդման գործողությունը նա դիտարկում է երկու կերպ՝ համադրական և հարադրական, ընդ որում՝ դրանք էլ ներկայացնելով ավելի մասնավոր ենթախմբերով, օրինակ՝ համադրականները հոդակապավոր, անհոդակապ և այլն:

Սերգեյ Աբրահամյանը խիստ հետևողական ու բծախնդիր էր ոչ միայն համագործածական, այլև լեզվաբանական տերմինների, հասկացությունների ճշգրտման ու բացատրու-

թյան հարցում: Օրինակ, խոսքի մասերի նրա կատարած աստիճանակարգային ու իմաստաբանական դասակարգումը լուրջ նորույթ էր արդի հայ լեզվաբանության մեջ: Ինչ վերաբերում է շարահյուսությանը, կարելի է ասել, որ, ըստ էության, հենց նա՝ է մեզանում առաջինը հստակ սահմանել և արժևորել նախադասությունների կապակցությունը՝ դրանք գնահատելով որպես առանձին բաժին: Նրա ըմբռնմամբ՝ նախադասությունը լեզվական հաղորդակցման հիմնական նվազագույն միավորն է՝ ստորոգման քերականական հատկանիշով և հնչերանգային ավարտվածությամբ: Լեզվաբանը կարևոր տեղ է հատկացնում նաև նախադասության նրբիմաստային ու ոճական-գործառական յուրահատկություններին:

Հարգելի՛ գործընկերներ, այս բանախոսությունը, կարծում ենք, թերի կլինեք, եթե չանդրադառնայինք նաև Սերգեյ Աբրահամյան մարդ-քաղաքացուն: Միջին և ավագ սերնդի մարդիկ լավ են հիշում ռուս բանաստեղծ Նեկրասովի հայտնի խոսքը. «Բանաստեղծ կարող ես չլինել, բայց քաղաքացի լինել պարտավոր ես»: Սերգեյ Աբրահամյանն այն բացառիկ երջանիկներից էր, որը և՛ մեծ գիտնական էր, և՛ մեծ քաղաքացի: Նա անընդհատ դպրոցի կողքին էր և իր արարած գիտական արդյունքի արժեքը միշտ ստուգում ու գնահատում էր այն տեսակետից, թե որքանով է այն կիրառելի և գործածելի հանրակրթության մեջ:

Լեզվի նորմավորումը նրա համար կարևորագույն խնդիր էր, և պատահական չէ գիտնականի եռանդուն ու արդյունավետ մասնակցությունը ժամանակին Լեզվի տեսչությանն առընթեր գործող հայերենի բարձրագույն խորհրդի աշխատանքներին: Նա նախանձախնդիր էր մանավանդ ժամանակակից լեզվում առկա զուգաձևերի հաղթահարման հարցում՝ ցույց տալով և հիմնավորելով ընդունելի ձևերն ու դրանց կիրառությունը հանրային հաղորդագման ու կրթական համակարգերում: Անհանգիստ մարդ էր նա, որևէ կարևոր իրադարձության կողքով անտարբեր չէր անցնում, պետք է հայտներ իր տեսակետը՝ երբեմն նաև անհարմավետություն պատճառելով ընդդիմախոսներին: Անսահման բարություն էր ճառագում Սերգեյ Աբրահամյանը: Նա սասները, ասպիրատները, որոնցից շատերն արդեն համալրել են արդի լեզվաբանության շարքերը, առանձնահատուկ սիրով ու երախտագիտության զգացումով են հիշում իրենց ուսուցչին: Մարդասիրություն, զգայուն սիրտ ու բարյացակամություն. այսպիսին են գնահատում նրան իր երբեմնի գործընկերներն ու ուսանողները: Իր Արցախ աշխարհի արժանավոր զավակն էր նա. մինչև վերջ իր մտահոգությունների ծիրում պահեց ծննդավայրի հոգսերն ու հեռանկարները: Արցախից եկածներից երբ հանդիպում էր, պետք է հարցնեք. «Իսկ ի՞նչ կա Արցախում, ինչպե՞ս են մարդիկ ապրում»: Շատերը պատմում են՝ որքան բարեկիրթ ու հուզական մարդ էր մեծ գիտնականը, որքան ուշադիր ու հարգալից էր երիտասարդ գործընկերների նկատմամբ: Եթե որևէ բան չէր գոհացնում նրան, իր մեղմ ու հանդարտ ձայնով այնպես էր ձևակերպում իր առարկությունը, որ թվում էր՝ գործ ունես ոչ թե իր բարձունքներից քեզ գնահատողի, այլ սրտացավ ու հարազատ մարդու հետ: Մեծ լեզվաբանը շատ էր մտահոգված կրթության, մանավանդ հանրակրթության վիճակով: Նա դժգոհ էր հայոց լեզվի նկատմամբ մամուլի, պետական առանձին մարմինների վերաբերմունքից: Նա այդ վերաբերմունքի արմատները տեսնում էր մեր կյանքում տիրող անարդարությունների, գիտության և գիտելիքի նկատմամբ բացասական կեցվածքի, վերջին տարիներին մեր դպրոցի որակական նահանջի մեջ: Դժգոհ էր ծրագրերից, դասագրքերից և ընդհան-

րապես համազգային կարևոր հարցի նկատմամբ անտարբերությունից: Քանիցս պնդում էր, որ մենք ոչ թե պետք է հրաժարվենք անցյալում ձեռք բերած նվաճումներից, այլ մեզ հետ տանենք այն դրականը, ինչ ունեցել ենք: Իր մի հարցազրույցում այսպես կոչված «դպրոցական բարեփոխումների» մասին ասել է. «Նորարարության մոլուցքն արդեն մի քանի տարի է՝ խանգարում է կրթությանը, դպրոցին, ժողովրդին: Տարիներ շարունակ դպրոցին հասցվող հարվածներն ամենից շատ և ամենից առաջ ուղղված են մայրենի լեզվին»: Սերգեյ Աբրահամյանն այն համոզման էր, որ հայ մարդը պետք է հնարավորինս տիրապետի և՛ ռուսերենին, և՛ եվրոպական ու արևելյան լեզուներին: Որքան շատ, այնքան լավ, բայց ոչ ի հաշիվ մայրենի լեզվի: Նա ընդգծում էր, որ հայերենն օտար լեզուների յուրացման լավագույն միջոցն է: Օտար լեզուների շարքում նա հատուկ տեղ էր տալիս ռուսերենին՝ նկատի ունենալով նրա մեծ դերը և՛ հանրապետությունում, և՛ տարածաշրջանում: Բայց կտրականապես դեմ էր ռուսերենի և առհասարակ որևէ օտար լեզվին պետական լեզվի կարգավիճակ տալու մասին հնչող մտքերին: Մեր երկրում երկրորդ պետական լեզու չի կարող լինել. պնդում էր նա: Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններն այնքան փոքրաթիվ են, որ միմյանց հետ հայերենով շփվելու որևէ դժվարություն չունեն: Նա բազմիցս ընդգծում էր մայրենի լեզվի դերը հայ երեխայի, հայ ժողովրդի և հատկապես նրա ապագայի համար: Մեծ լեզվաբանի կարծիքով՝ հայերենի բացառիկ պետական կարգավիճակը չի համապատասխանում հայեց լեզվի ուսուցման դրվածքին ու որակին: Նա ցավով էր նշում դասագրքերի և ուսուցման մեթոդների նահանջը մեր դպրոցներում: Սերգեյ Աբրահամյանին զարմացնում ու զայրացնում էր մանավանդ կրթության պատասխանատուների խոսքի և գործի անհամապատասխանությունը: Մի կողմից՝ հայտարարում էին, թե լեզվի ուսուցումը, ինչպես ընդհանրապես ուսուցումը պետք է հիմնված լինի ավանդույթների վրա, բայց իրականում անում էին հակառակ քայլեր: Սերգեյ Աբրահամյանը նորարար լեզվաբան էր. այդ է վկայում նրա գիտական ժառանգությունը, նա կողմ էր դպրոցի վերակառուցմանը, միայն թե դա պետք է լինի դպրոցի, նրա արժեքները պահպանելու օգտին և մասնագետների համագործակցությամբ: Բարեկամներ, խոստովանենք, որ այսօր էլ բարվոք չէ վիճակը և գրեթե անտեսված է մասնագիտական ամբողջ ներուժի մասնակցությունը ծրագրերի ստեղծմանը: Սերգեյ Աբրահամյանն ասում էր. «Վերակառուցումը չպետք է լինի վերաքանդման ձևով, այլ իրո՛ք վերակառուցման և դպրոցն առաջ տանելու ճանապարհով»:

Բարեկամներ՝, ահա այս էր մեծ կարճ խոսքը մեծ լեզվաբանի անցած երկար ու բեղմնավոր ճանապարհի մասին: Ասում են՝ մեծերին մեծարելը պետք է նախ և առաջ մեծարողներին:

Ուզում ենք ավարտել մի հատվածով արցախցի բանաստեղծ Սոկրատ Խանյանի բանաստեղծության, որը նվիրված է Սերգեյ Աբրահամյանին և կոչվում է «Ընծա»:

«Իմ թթուջուր աղբյուրից սկիզբ առած մի առու,
Քանի գնում, կարոտի արցունքով է վարարում,
Այդ արցունքի մեջ էլ նա հրաշքներ է արարում:

Միբարդ տված տառերին ու բառերին բյուրանուն՝

Հայոց լեզվի պսակը Աստծուն ընծա է տանում»:

Շնորհակալություն ուշադրության համար:

Sukiasyan Henrieta - Sergey Abrahamyan, the great linguist and citizen. -Language tandardization was a very important issue for Sergey Abrahamyan, and it is no coincidence that the scientist actively and effectively participated in the work of the Supreme Council of the Armenian Language, which operated under the Language Inspectorate at the time. He was especially zealous in overcoming the existing double forms in the modern language, showing and substantiating acceptable forms and their use in public communication and educational systems. He was a restless person, he did not pass by any important event indifferently, he had to express his point of view, sometimes causing discomfort to opponents. Sergey Abrahamyan radiated boundless kindness. His students, aspirants, many of whom have already joined the ranks of modern linguistics, remember their teacher with special love and gratitude. Humanity, a sensitive heart and goodwill: this is how his former colleagues and students evaluate him.

Сукиасян Генриета - Сергей Абрамян, великий лингвист и гражданин. - Стандартизация языка была очень важной проблемой для Сергея Абрамяна, и неслучайно учёный активно и плодотворно участвовал в работе Верховного совета армянского языка, действовавшего в то время при Инспекции по языку. Он проявлял особое рвение в преодолении сложившейся в современном языке двусмысленности, показывая и обосновывая приемлемые формы и их использование в системе общественного общения и образования. Он был неутомным человеком, не оставлял равнодушным ни одно важное событие, ему приходилось высказывать свою точку зрения, порой вызывая дискомфорт у оппонентов. Сергей Абрамян излучал безграничную доброту. Его ученики, аспиранты, многие из которых уже пополнили ряды современной лингвистики, вспоминают своего учителя с особой любовью и благодарностью. Человечность, чуткое сердце и доброжелательность – так оценивают его бывшие коллеги и ученики.

**ՈՒՂԵՐՁ
ԻՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ**

Սաքայան Դորա

Կանադա, Մաք Գիլ համալսարանի ցկյանս պրոֆեսոր
dora.sakayan@mcgill.ca

Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին
նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներին

Հարգելի՛ գործընկերներ, իմ սիրելի՛ հայրենակիցներ,

Ուրախությամբ եմ իմ հեռակա մասնակցությունը բերում հոբելյանական նիստին մեր համբավավոր գիտնականի, որը ոչ միայն մեր գրական լեզվի տերն էր ու ծառան, այլև բազում սերունդների ուսուցիչը, իր երկրի ազնիվ քաղաքացին, և ես էլ՝ Դորա Սաքայանս, պատիվ եմ ունեցել ոչ միայն ճանաչելու նրան, այլև հյուրընկալվելու նրա տանը, որում տիրող ջերմ մթնոլորտը մինչև օրս պահպանված է իմ հուշերի աշխարհում:

Սերգեյ Աբրահամյանը տասնամյակներ շարունակ պատվով է ղեկավարել մեր ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի բաժինը, որի աշխատակիցները, իրենց ղեկավարի հետ ուս ուսի, արևելահայ գրական լեզվի ողջ համակարգի ուսումնասիրության տքնաջան բեռնակիրներն ու նվիրյալները եղան: Թողել է նա մատենագրական անգին մի ժառանգություն՝ հարստացնելով արդի հայերենի ոճաբանության, բառարանագրության, լեզվաշինարարության, լեզվաքաղաքականության և լեզվի ուսուցման ուսումնասիրման մեթոդաբանության բնագավառները: Նրան են պատկանում գիտամեթոդական բնույթի բազմաթիվ արժեքավոր հոդվածներ: Ավելին՝ նա ղեկավարն ու հեղինակակիցը եղավ գրական արևմտահայերենի մի դասագրքի, որը ժամանակին լավագույն ձեռնարկն էր համարվում սփյուռքի հայկական դպրոցներում:

Ավա՛ դ, ծանր ժամանակներ են հիմա մեր հայրենիքի համար: Իմանալով, որ Երևանում Սերգեյ Աբրահամյանի հիշատակին նվիրված գիտաժողով է լինելու՝ այդ օրվանից ի վեր աչքիս առջև 2020-ի արհավիրքի սոսկալի տեսարաններ են պատկերանում, որոնցից մեկը հատկապես տպավորված է հիշողությանս մեջ: Դա Հաղորդի շրջանի՝ հայությունից արդեն պարպված Տումի գյուղի դպրոցն էր՝ Սերգեյ Աբրահամյանի անունը կրող, որ վայրենիները տեսագրել ու տարածել էին՝ հպարտ իրենց բարբարոսությամբ: Դպրոցի որբացած պատերն էին, որբացած միջանցքներն ու դատարկ դասարանները՝ հատակին շաղանցած քարտեղներով, մեր սրբանուն գրողների տրորված նկարներով ու մեսրոպատառ գրերով... Միտ էր պետք՝ դիմանալու այդ մահաբեր նվաստացմանը: Պատերազմի ավարտից երեք ամիս անց մի այլ բոթ ցնցեց ինձ: Անսպասելիորեն վախճանվեց Սերգեյ Աբրահամյանի ազնվական որդին՝ փիլիսոփա-լեզվաբան Աշոտ Աբրահամյանը՝ Էրիկ Աթայանի սանն ու նրա դպրոցի վառ ներկայացուցիչը: Հիմա էլ շուտով երկու տարին կլրանա, ինչ Արցախի մեր հայրենակիցները ստիպված եղան ծանր զոհողությունների գնով լքել իրենց բնօրրանը: Սոսկալի է այն ամենը, ինչ տեղի ունեցավ այս մի քանի տարվա ընթացքում, որի բերած վտանգների

վերջը չի երևում տակավին: Եվ, հակառակ այս ամենին, ճիշտ այս վտանգաշատ ժամանակներում Հայաստանում ահա գիտական նստաշրջաններ են կազմակերպվում, և սա հուսադրող է, որովհետև վկայությունն է այն բանի, որ հայոց հանրությունը չի պատրաստվում տրվելու անելանելիության բարդույթին, չի հասնում հուսալքության և մեր արժանավոր նախնյաց դասերով ոգեշնչված՝ լցված է ապրելու և արարելու վճռականությամբ՝ ընդհուպ մինչև միջազգային գիտաժողովներ անցկացնելու հաստատակամություն: Չգիտեմ՝ բախտ կունենա՞մ արդյոք տեսնելու Արցախի վերադարձն ու Հայաստանի լիարժեք ազատագրությունը, սակայն հայրենակիցներիս ճիգուջանքը՝ արժանավորապես երևալու աշխարհի մարդասեր հատվածին, ինձ ևս հուսադրող պահեր է պարզում: Ուստի ինձ այլ բան չի մնում, քան բարենպաստ ապագայի նկատմամբ տաժաժ իմ հավատով բարի ընթացք մաղթել այս գիտաժողովի աշխատանքներին, քանի որ այն նվիրված է մեր նվիրյալներից մեկի հիշատակին, որն իր դասագրքերով ու մենագրություններով այսօր էլ շարունակում է սիրել տալով սովորեցնել մեր մայրենի կամ, ինչպես Տերյանն էր ասում, արքայական լեզուն:

Ջերմագին ողջույններ րս ձեզ, սիրելիներ: Կարոտով փարվում եմ բոլորիդ...

Հարգարժան ներկաներ, հարագատ ու սիրելի մարդիկ, ես գիտեմ, որ ձեզ բոլորիդ այս գիտաժողով է բերել հայրիկիս հանդեպ ձեր հարգանքը, սերը, պատկառանքը, հայրիկիս մասին ջերմ հուշերով միմյանց հետ կիսվելու անկեղծ ցանկությունը, հենց ա՛յս հարթակից ձեր գիտական պրպտումների, հայտնագործությունների մասին խոսելու մղումը: Եվ ես ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել բոլորիդ՝ հատկապես դրա՛ համար, հայրիկիս նվիրված այս գեղեցիկ միջոցառումը զարդարելու և ջերմացնելու համար:

Այսօրվա իմ խոսքը դատեր խոսք է իր հայրիկի մասին: Ներեցեք, եթե այն չափից ավելի զգացմունքային հնչի գիտաժողովում լսելու համար:

Հայրիկս կաթված ստանալուց մեկ ամիս առաջ մի գրառում էր կատարել և զարմա-նալիորեն ամսաթիվ էր գրել այդ գրառման տակ: Զարմանալի է, որովհետև սովորաբար իր մյուս նոթերի, գրառումների ամսաթիվ չկա համարյա ոչ մի տեղ: Ես մտածում եմ՝ արդյո՞ք պատահականություն է դա. կարծում եմ՝ ոչ: Ահա թե ինչ էր գրված այդ թղթի վրա. «Եվ աշխատում եմ, և լսում երաժշտություն ռադիոյով. մեկ էլ լսեցի երգի խոսքի մեջ այսպիսի արտահայտություն. «Եղած-չեղածը մի կյանք, բայց հազար ու մի հոգս ու ցավ»: Երգի վերնա-գիրը չասացին: Այդ արտահայտությունը ինձ վրա թողեց շատ ուժեղ տպավորություն. «Եղած-չեղածը մի կյանք»...Մոտալուտ վերջի նախազգացու՛մ էր այդ գրառումը... Հնարա-վոր է...

Եղած-չեղածը գուցե և մի կյանք է, բայց հայրս այդ կյանքն ապրեց արժանապատ-վորեն, ապրեց՝ իր ողջ ներուժը, էներգիան, բացառիկ խելքը, տաղանդը նվիրաբերելով իր սիրած գործին, ընտանիքին, հարագատներին և իր հայրենիքին՝ իր պաշտելի Արցախին: Ապրեց այնպես, որ իր հեռանալուց երկու տասնամյակ անց մենք այսօր շուքով, հանդի-սավորությամբ, և որ ամենակարևորն է՝ անկեղծ ջերմությամբ ու սիրով հիշում ենք իրեն և նշում ենք իր ծննդյան 100-ամյակը: Ես համոզված եմ, որ նույնպիսի հանդիսավորությամբ նշվելու է հայրիկիս ծննդյան 150, ապա 200-ամյակը, ավելի հեռու ապագայում ևս նրան մեծարելու են, որովհետև նրա թողած գիտական ժառանգությունն անգնահատելի է:

Հայրիկիս համար դասավանդելը նույնքան կարևոր էր, որքան իր գիտական գոր-ծունեությունը: Իսկ իր դասախոսական աշխատանքի բարձրագույն գնահատականը նա համարում էր իր սաների, ուսանողների ջերմ, անկեղծ վերաբերմունքը, հարգանքն ու պատկառանքը: Կարդում եմ իր գրառումներում. «Ձանգեց մի անձանոթ աղջիկ և խնդրեց որոշ ինքնակենսագրական և գործունեությանս վերաբերող տվյալներ: Ասաց, որ աշխատում է հեռուստատեսությունում և այդ նյութերը պետք են իմ մասին հաղորդում պատրաստելու համար: Իմ հարցերին, թե ով է հանձնարարել, ինչ առիթով է, նա պատասխանեց. «Հանձ-նարարել է մայրս. նա եղել է Ձեր ուսանողուհին 1950-ական թվերին Լենինականի մանկա-վարժական ինստիտուտում: Հիացած է Ձեր դասախոսություններով, հաճախ է հիշում Ձեզ: Խնդրել է որևէ առիթով Ձեր մասին մի հաղորդում կազմակերպեմ՝ որպես երախտագիտու-

թյան արտահայտություն»։ Ի դեպ, մեր տանը մի ստվար կապոց կա, որի հարյուրավոր էջերը լի են հայրիկիս նախկին սաների անկեղծ, ջերմ, երախտագիտական խոսքերով, իրեն նվիրված բանաստեղծություններով։ Կարծում եմ՝ սա է դասախոսի աշխատանքի բարձրագույն և ճշմարիտ գնահատականը։

Անհնար է խոսել հայրիկիս մասին և չխոսել Արցախի մասին։ Հայրս այսպես էր բնութագրում Արցախի հետ իր ոգեղեն կապը. «Արցախը իմ սրտի ծալքերի մեջ է, իմ ուղեղի բոլոր բջիջների մեջ։ Սա ես ասում եմ որդիական հպարտությամբ և երախտագիտության խորը զգացումով»։

Հայրիկս հզոր անձնավորություն էր և միևնույն ժամանակ անչափ մեղմ էր ու զգայուն։ Կարծում եմ՝ նա իր ամուր կամքը, պատկառանք ներշնչող, հզոր խառնվածքը, կեցվածքը ժառանգել էր Արցախի խրոխտ, ամպերից էլ վեր հառնող լեռներից, իսկ իր զգայուն, մեղմ ու անսահման նուրբ հոգին՝ Արցախի անտառներում նազանքով ալիք-ալիք գալարվող գետակներից, Տումու լեռների հետևից իր առաջին շողերը երկրին նվիրող արևից, սառնորակ ջրով լի կուժի թեքվելուց ծնվող մոզական մեղեդուց, դրախտային ծաղիկներից, որոնց բույրը, երանգները ուրիշ ոչ մի տեղ չկան։

Բանաստեղծ Բոգդան Ջանյանը, որը հայրիկիս հայրենակիցը և, նաև, ուսուցիչն է եղել, Տումու դպրոցի անվանակոչության օրը հայրիկիս ուղղված իր ուղերձում այսպիսի տողեր ունեւր. «Ամեն մեծ անհատականություն աշխարհի գույների մեջ ինքն էլ գույն է։ Գիտության աշխարհում, դպրության աշխարհում Սերգեյ Աբրահամյանն էլ գույն է, իր գույնը ունի, որի փայլերի մեջ շողարձակում են հայրենի գեղաշխարհի գույները, իսկ նրա մարդկային նկարագրի մեջ՝ հայրենակիցներից փոխանցված ազնիվ գծերը»։

Ես հույս ունեւմ, որ գալու է այն օրը, երբ հայրիկիս պաշտելի Արցախի դպրոցներում զանգերը կրկին կհնչեն հայերեն, կրկին կլսվի մեր մանուկների խոսքն ու ծիծաղը, իսկ իր անունը կրող, իր հարազատ դպրոցում կրկին կհնչեն հայրիկիս ուղղված երախտիքի խոսքեր ու կբացվեն նրա հեղինակած դասագրքերի էջերը։

Որպես խոսքիս վերջաբան թույլ տվեք կարդալ հայրիկիս՝ իր 1982 թվականին հրատարակված «Ժամանակակից գրական հայերեն» աշխատության՝ մայրիկիս նվիրած օրինակի մակագրությունը. «Իմ լավ Նորա, այս գիրքը, թերևս, կարելի է համարել տասնամյակների իմ մտքի ստեղծածի ծաղկաքաղ, տասնամյակներ, որ մենք միասին, որպես կյանքի ընկերներ, ապրել ենք նույն հարկի տակ, ապրել ենք նույն հոգսերով, նույն հույսերով։ Մեր ուրախ և անուրախ կյանքում, մեր ինքնամոռաց կյանքում մեր աղոթքները եղել են նույնը։ Թող իմ աղոթքները, այսինքն քո աղոթքները հասնեն Աստծուն. այն ժամանակ դու ավելի երջանիկ կլինես։ Քո Սերյոժա»։

Թող իմ աղոթքներն էլ հասնեն Աստծուն և իմ հայրը, մայրը, եղբայրը լույսերի մեջ թող լինեն, ինչին իրենց ազնիվ, ջերմ ու բարի հոգիները արժանի են...

Շնորհակալություն։

**Ս. ԱՔՐԱՀԱՍՅԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ**

Ամիրջանյան Սուսաննա
բանասիրական գիտությունների թեկնածու,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն.
amirjanyan-susanna@mail.ru

Բանալի բառեր. Ս. Աբրահամյան, «Ժամանակակից գրական հայերեն», կառուցվածքային լեզվաբանություն, հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական մակարդակներ, նախադասությունների կապակցություն:

Ներածություն

Ժամանակակից լեզվաբանության ուղղություններից մեկը կառուցվածքային լեզվաբանությունն է: Թեև տարբեր երկրներում կառուցվածքային լեզվաբանությունը տարբեր ուղղություններ ունի, այնուամենայնիվ նրանք առաջ են քաշում լեզվի կառուցվածքի ներքին միասնության սկզբունքը և լեզուն դիտում որպես փոխադարձաբար միմյանց հետ կապված և միմյանց պայմանավորող հնչյունական, բառային և քերականական միավորների և նրանց հարաբերությունների համակարգ:

Ըստ կառուցվածքաբանների՝ լեզվի ամբողջ կառուցվածքը բաղադրվում է մի շարք փոքր համակարգերից, որոնցից յուրաքանչյուրն իր դերն ունի լեզվի ամբողջ համակարգում:

20-րդ դարում հայ իրականության մեջ կառուցվածքային լեզվաբանության սկզբունքների կիրառմամբ լույս տեսավ ակադեմիկոս Էդ. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատությունը:

Արդի հայերենի առանձին բաժինների վերաբերյալ բազմաթիվ գիտական աշխատություններ են հրատարակվել: Սակայն ակադեմիկոս Ս. Աբրահամյանի «Ժամանակակից գրական հայերեն» աշխատությունը, որը լույս է տեսել 1981 թվականին, արդի հայերենի ամբողջ համակարգի կառուցվածքային լեզվաբանության սկզբունքների կիրառմամբ առաջին ուսումնասիրությունն է:

Վերոնշյալ աշխատությունը լրացնում է ոչ միայն հեղինակի իսկ ստեղծած «Հայերենի քերականություն», այլև նշանավոր ուրիշ լեզվաբանների՝ հայերենի առանձին բաժինների վերաբերյալ հետազոտությունները: «Ժամանակակից գրական հայերեն» աշխատությունը մայրենի լեզուն ներկայացնում է իր բոլոր մակարդակներով՝ հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական՝ ըստ կառուցվածքային լեզվաբանության ընդունված չափանիշների՝ լեզուն քննելով որպես ամբողջական համակարգ:

Թեև լեզվաբանը նպատակադրվել էր համաժամանակյա կտրվածքով քննել գրական հայերենի լեզվական երևույթները, այնուամենայնիվ կիրառվում է նաև տարժամանակյա մոտեցումը՝ լեզվական երևույթները ներկայացնելով նաև հայերենի գրաբարյան, նախաաշ-

խարհաբարյան, բարբառային լեզվական երևույթների քննությամբ:

Ներկայացնենք գրական հայերենի տարբեր մակարդակներում Ս. Աբրահամյանի մի շարք կարևոր դիտարկումներ, որոնք այժմ էլ արդիական են և մնայուն արժեք ունեն:

Ս.Աբրահամյանը վերոհիշյալ աշխատության «Հնչյունաբանություն» բաժնում ներկայացնում է գրական հայերենի հնչյունական մակարդակը՝ ա) լեզվի հնչույթային համակարգը (հնչույթաբանություն), բ/հնչույթների դրսևորումները խոսքի մեջ(բուն հնչյունաբանություն, գ) վերհնչույթային հնչական միավորները՝ շեշտ, հնչերանգ, վանկ, հնչաբառ և այլն վերհնչույթային հնչաբանություն):

Հնչույթի վերաբերյալ լեզվաբանի սահմանումները տարբերվում են նախորդ լեզվաբանների՝ նույն լեզվական կարգի վերաբերյալ սահմանումներից: Եթե վերջիններս հնչույթի կարևոր հատկանիշն են համարում իմաստատարբերակիչ դերը, ապա ըստ Ս. Աբրահամյանի՝ «հնչույթը լեզվի հնչական արտահայտության նվազագույն միավորն է, որն ունի բառերի, ձևույթների իմաստաձևավորիչ դեր,իսկ հնչյունը միևնույն հնչույթի խոսքային դրսևորումն է»: Իրավացիորեն հեղինակը հնչույթին վերագրում է իմաստաձևավորիչ դեր՝ նկատի ունենալով լեզվի համանունները,որոնցում հնչույթները ձևավորում են բառեր, օրինակ՝ բույ 1 (առաջին մատ), բույ 2 (ոչ սուր), բույ 3 (կետադրական նշան): Այսինքն, հնչույթը և հնչյունը չնույնանալով հանդերձ են լեզվական-վերացականի և խոսքային-մասնավորի փոխհարաբերության մեջ:

Լեզվաբանը սույն աշխատության հաջորդ էջերում քննության է առնում գրական հայերենի հնչյունափոխական համակարգի շեշտափոխական, փոխազդեցական հնչյունափոխական երևույթները՝ «ենթահնչույթային փոփոխության իրակությունների հետ, որոնք ուղղախոսական արժեք ունեն»:

Հեղինակը գրական հայերենի շեշտափոխական ձևերը համաժամանակյա քննության հետ զուգընթաց դիտարկում է նաև տարժամանակյա կտրվածքով: Նա առանձնացնում է այն դեպքերը, երբ բառակազմության ժամանակ բառը երբեմն չի հնչյունափոխվում, իսկ քերականական փոփոխության ժամանակ հնչյունափոխվում է, ինչպես՝ անկում-անկումայի, բայց անկման, ուսում-ուսման-ուսումնասիրել, բայց ուսման: Նշված հոլովաձևերը գալիս են գրաբարից և անցել են արդի գրական հայերենին: Վերոհիշյալ բառերի բառակազմական ձևերից անկում բառով բառակազմական ձևեր չեն ավանդվել, ուստի անկումային բառը գրաբարից չի գալիս,իսկ ուսում բառից կազմված ձևերը գրաբարում անհնչյունափոխ են եղել:

Ս. Աբրահամյանը վերոնշյալ աշխատությունում քննում է բառիմաստաբանությունը (լեզվաբանի ստեղծած եզրույթն է), բառակազմությունը, բառապաշարը, դարձվածքները: Լեզվաբանության մեջ բառի ընդունված սահմանումներին հեղինակն ավելացնում է բառի անընդմիջարկելիության հատկանիշը: Լեզվաբանը սահմանազատելով ձևույթն ու բառակապակցությունը՝ սահմանում է այսպես՝ «բառն այն հնչյունակապակցությունն է կամ հնչյունը, որն ունի ավարտուն իմաստ, անկախ գործածություն, շեշտ և անընդմիջարկելիություն»:

Նա բառիմաստաբանության բաժնում քննում է ոչ միայն բառերի իմաստային դրսևո-

1 Աբրահամյան Ս., *Ժամանակակից գրական հայերեն*, Ե., 1981, էջ 7-9:

2 Նույն տեղում, էջ 25:

3 Նույն տեղում, էջ 35:

րումները՝ մենիմաստ և բազմիմաստ բառեր, ուղղակի և փոխաբերական, ելակետային և ածանցյալ, գլխավոր և երկրորդական իմաստները, այլև դրանց համատեքստային, խոսքա-իրադրային հասկանիչները, իրավիճակները: Ասինքն, բազմիմաստ բառերի ճիշտ դրսևորման և ընկալման համար անհրաժեշտ է համարում ճիշտ հաշվի առնել համատեքստն ու խոսքային իրադրությունը:

Այս առումով հետաքրքրական է նաև բառի գլխավոր և երկրորդական իմաստների վերաբերյալ լեզվաբանի տեսակետը: Ըստ նրա՝ ժամանակակից գրական հայերենի համակարգում բառի գլխավոր իմաստը կարող է պատմականորեն նախորոշված չլինել: Լեզվի համաժամանակյա ուսումնասիրության դեպքում գլխավոր իմաստ հասկացությունը ընդունելի է համարում սոսկ տվյալ ժամանակաշրջանում բառի իմաստների հաղորդակցության կարևորության տեսակետից՝ անկախ նրանից՝ այն եղել է ելակետային կամ սկզբնական, թե՞ ոչ:

Ս.Աբրահամյանը գրական հայերենի բառա կազմությունը ուսումնասիրելիս թեև պարզ բառերի հարաբերական քանակը լեզվի պատմական տևական զարգացման ընթացքում բաղադրյալ բառերի համեմատությամբ որոշ չափով նվազ է համարում, սակայն հսկայական է համարում այդ բառերի դերը բառակազմության բնագավառում: Քանի որ նոր բառերի իմաստներն արտահայտվում են առկա արմատական բառերի զուգորդումների, ինչպես նաև նրանց և ածանցների զուգորդումների միջոցով:

Լեզվաբանը քննում է ձևային տեսակները, պարզեցման և վերակազմավորման դեպքերը, որոնք ևս բացատրվում են պատմական ակնարկով, ինչպես՝ հլու բառը հայերենի նախագրային շրջանում եղել է բաղադրյալ՝ կազմված հու/լավ/ և լու/լսող/բաղադրիչներից, սակայն այժմ այդ բաղադրիչները չեն գիտակցվում, և հլու բառը ընկալվում է որպես պարզ բառ. երկու ձևայինները վերածվել են մեկ ձևային: Ուստի հեղինակը գտնում է, որ արդի գրական լեզվի ձևայինները գնահատելիս անհրաժեշտ է ելնել նրանց արդի վիճակից և ոչ թե նրանց կազմավորումից և պատմական անցյալից, որը կարող է չհամապատասխանել արդի վիճակին:

Ս. Աբրահամյանը բարդ բառերը բաժանելով երկու խմբի՝ համադրական և հարադրական բարդությունների, համադրականները՝ հոդակապավոր և անհոդակապ, հարադրականները՝ նորովի մոտեցմամբ՝ բուն հարադրական և կիսահարադրական: Ըստ նրա՝ կիսահարադրական բարդ բառերը կազմված են քերականորեն համարժեք երկու միավորներից, որոնց համագործությամբ և կիսանկախությամբ էլ պայմանավորվում է յուրաքանչյուր բաղադրիչի շեշտ ունենալը: Կիսահարադրական բարդ բառերը լինում են երկու տեսակ՝ նույնարմատ (կրկնավոր-փունջ-փունջ) և զուգադրական կիսահարադրական բառեր: Վերջիններս իրենց հերթին ըստ խոսքիմասային արժեքի՝ լինում են անվանական կիսահարադրականներ- տուն-թանգարան, համերգ-դասախոսություն և բայական կիսահարադրականներ- գրել-կարդալ, ծալել-ծալծել: Վերջիններս ըստ նրա՝ առավել գործածական են առօրյա ոճում, հետո անցնում են գրական հայերենին:

⁴ Նշված տեղում, էջ 77:

⁵ Նշված տեղում, էջ 98:

Գրական հայերենի քերականության ձևաբանության բաժնում ևս լեզվաբանը նորովի մոտեցմամբ ու մեկնաբանություններով է քննում ձևաբանական կարգերը, որոնց հատուկ են ձևաբանական նշանակությունը և ձևը: Նա խոսքի մասերը բառաքերականական այն խմբերն է համարում, որոնք որոշվում են բառերի քերականական արժեք ունեցող ընդհանուր իմաստով, որը խոսքիմասային իմաստ է համարվում: Ըստ նրա՝ բառի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ոչ թե այս կամ այն մասնավոր կիրառությունը, այլ այն ընդհանուրը, որ հատուկ է տվյալ բառին: Սակայն լեզվաբանը նկատում է, որ որոշ բառերի խոսքիմասային իմաստը որոշելու համար անհրաժեշտ է լինում դիմել խոսքին՝ նրա միջոցով բառի լեզվական ընդհանուր իմաստը որոշելու համար: Այսինքն, նա ընդգծում է գրական հայերենի բառապաշարում տարբեր խոսքի մասերի արժեք ունեցող բառերի առկայությունը՝ խոսքիմասային տեղաշարժերը:

Ս. Աբրահամյանը կառուցվածքային լեզվաբանության մակարդակների և լեզվական համակարգի հիերարխիկ բնույթի հիման վրա կատարել է խոսքի մասերի աստիճանական դասակարգում: Ըստ նրա՝ խոսքի մասերը երեք տեսակ են լինում՝ ա) նյութական իմաստ ունեցող խոսքի մասեր՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, բ) քերականական իմաստ ունեցող խոսքի մասեր՝ կապակցական, գ) վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասեր՝ եղանակավորիչ, ձայնարկություն: Այս դասակարգմամբ խոսքի մասերի այս խմբերը համապատասխանում են այն իրողությանը, որ՝

ա) Գոյություն ունի նյութական աշխարհ իր տարբեր հատկանիշներով:

բ) Առարկաների, երևույթների միջև կան տարբեր կարգի հարաբերություններ:

գ) Խոսքի մասերը այդ ամենի մասին՝ մենք միաժամանակ դրսևորում ենք մեր վերաբերմունքը»:

Աշխատության հաջորդ էջերում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է բոլոր խոսքի մասերի քերականական կարգերը, միաժամանակ ներկայացնելով խոսակցական լեզվի ազդեցությամբ հոլովման կամ խոնարհման գուրգուռ ձևերի առկայությունը, ինչպես՝ երբեմն նույն բառի անհնչունափոխ և հնչունափոխված տարբերակները ստանում են տարբեր իմաստներ, ինչպես՝ գինիով և գինով (հարբած): Գործիական հոլովը կազմվում հնչունափոխված հիմքով՝ հոգով, բայց ածելով, ուղով, մորթով ձևերը բարբառային համարելով՝ իրավացիորեն գտնում է, որ դրանք գրական լեզվում հանդես են գալիս ի-վ ձևերով (ուղիով, մորթիով): Լեզվաբանը գրական հայերենի յուրաքանչյուր քերականական կարգ ներկայացնում է բոլոր հատկանիշների նկարագրությամբ՝ միաժամանակ ծանոթագրություններում տրվում են դրանց խոսակցական, բարբառային, գրաբարյան դրսևորումները, որոնք առավել ամբողջական են դարձնում դրանց լեզվական նկարագիրը:

Ս. Աբրահամյանը նոր տերմինաբանությամբ է ներկայացնում հայերենի անդեմ բայերը՝ դերբայները՝ դրանք բաժանելով բուն և ձևակազմիչ դերբայների: Վերջիններս բայի ինքնուրույն ձևեր չեն, շարահյուսական ինքնուրույն պաշտոն չունեն, այլ հանդես են գալիս որպես դիմային ձևերի բաղադրիչ: Հետագայում բայական այդ անդեմ ձևերը լեզվաբանական և դասագրքային գրականության մեջ վերանվանեցին ձևաբայեր:

⁶ Նույն տեղում, էջ 130-131:

Լեզվաբանին վաղուց են հետաքրքրել շարահյուսության հարցերը: Նա 1962 թվականին հրատարակել է «Ժամանակակից հայերենի մի քանի հարցեր» աշխատությունը, որում քննարկելով նախադասությունների տեսակները՝ հանգամանորեն ներկայացնում է միակազմ նախադասությունները, դրանց կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները:

Հեղինակը «Ժամանակակից գրական հայերեն» աշխատության մեջ լեզվի շարահյուսական մակարդակի միավորը՝ նախադասությունը, բնորոշում է՝ հիմք ընդունելով նախադասության կառուցվածքը: Նա բարդ նախադասությունները սահմանում է բարդության կազմում եղած նախադասությունների քերականական հարաբերությամբ, այսինքն՝ առաջնային է համարում կապակցության կառուցվածքային հատկանիշը: Ըստ լեզվաբանի՝ շարահյուսության առարկա հանդիսացող երևույթները ըստ ստորակարգության՝ հետևյալ կառուցվածքն են ներկայացնում՝ բառակապակցություն, նախադասություն, նախադասությունների կապակցություն⁷:

Նախադասությունների կապակցությունը հայ լեզվաբանության ոլորտում առաջին անգամ ակադեմիկոս Ս. Աբրահամյանն է դիտարկել որպես շարահյուսության առանձին բաժին: Այն ընդգրկվել է ՀՀ գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզու» աշխատության մեջ: «Ժամանակակից գրական հայերեն» աշխատության մեջ ևս հանգամանորեն քննվում են լեզվի շարահյուսական կարգերը:

Ըստ Ս. Աբրահամյանի՝ նախադասությունը բառերի այն կապակցությունն է կամ բառը, որը ստորոգումով և հնչերանգային ավարտվածությամբ ձևավորվում է որպես մտքի միավոր: Նախադասության վերոհիշյալ սահմանումից հետո նա նախադասությունները դասակարգում է՝ ըստ կազմության, ըստ հիմնական բաղադրիչների դրսևորման, ըստ երանգի, ըստ ոճական–կիրառական առանձնահատկությունների:

Լեզվաբանը գրական հայերենի շարահյուսական մակարդակի միավորները վերլուծում է՝ կիրառելով ժամանակակից կառուցվածքային ուղղության առաջադրած անմիջական կազմիչների տեսությունը:

«Բազմանդամ նախադասությունների կառուցվածքի մեջ կա որոշ աստիճանականություն, այսինքն՝ նախադասությունը միանգամից չի բաժանվում բառ-անդամների, այլ նախ բաժանվում է նախադասության անդամների որոշ խմբերի՝ կապակցությունների, վերջիններս՝ իրենց ենթախմբերի, սրանք էլ՝ բաղադրիչ անդամների»⁸:

Այդպես նախադասության կազմի բաժանման ամեն մի աստիճանում ստացվում են նախորդ աստիճանի (բաժանվող միավորի) անմիջական բաղադրիչները:

Գիտնականի՝ նախադասությունների վերլուծության այս մոտեցումը արդիական է կառուցվածքային լեզվաբանության վերոնշյալ սկզբունքի կիրառմամբ, որը մանկավարժորեն դյուրին է դարձնում նախադասությունների վերլուծության ընկալումը սովորողների կողմից:

Այսպիսով, Ս. Աբրահամյանի «Ժամանակակից գրական հայերեն» աշխատության մեջ

⁷ Նույն տեղում, էջ 269

⁸ Նույն տեղում, էջ 281-282:

արդի հայերենը հնչունական, բառային, ձևաբանական, շարահյուսական մակարդակների կառուցվածքային սկզբունքների քննությամբ ներկայանում է որպես ամբողջական համակարգ: Ակադեմիկոս Էդ. Աղայանը ժամանակակից հայերենի քերականության կառուցվածքի և բառային կազմի ուսումնասիրությունների բնագավառում կարևորում է Ս. Աբրահամյանի աշխատությունները:

Եզրակացություն

Կառուցվածքային լեզվաբանությունը ժամանակակից լեզվաբանության ուղղություններից մեկն է: Ըստ կառուցվածքաբանների՝ ամբողջ լեզվական համակարգը կազմված է մի շարք մակարդակներից, որոնցից յուրաքանչյուրն իր դերն ունի լեզվի կառուցվածքում:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի գիտական ուսումնասիրություններից առանձնանում է «Ժամանակակից գրական հայերեն» աշխատությունը, որն արդի գրական հայերենի կառուցվածքային սկզբունքների կիրառմամբ հետազոտություն է՝ իր նորովի մոտեցումներով և քննությամբ:

Լեզվաբանը գրական հայերենի հնչունական համակարգը ներկայացնելիս գտնում է, որ հնչույթն ունի ոչ միայն ձևային ձևերի, այլև բառերի իմաստաձևավորիչ դեր: Նա գրական հայերենի բառային մակարդակում ևս նորամուծություն է բերում՝ բառի հատկանիշների ավելացնելով նրա անընդմիջարկելի լինելը, իսկ բարդ բառերի հարադրական բարդությունները բաժանում է բուն հարադրական և կիսահարադրական բարդությունների: Լեզվի ձևաբանական մակարդակում կիրառել է խոսքի մասերի աստիճանական դասակարգում, իսկ բայի անդեմ ձևերը բաժանել բուն դերբայների և ձևակազմիչ դերբայների, որոնք հետագայում դասագրքերում կիրառում են ստացել դերբայներ և ձևաբայեր դասակարգմամբ:

Ս. Աբրահամյանը գրական հայերենի շարահյուսական մակարդակում քննելով նախադասություններն իրենց տեսակներով, կազմությամբ՝ կիրառում է կառուցվածքային լեզվաբանության մեջ ընդունված նախադասությունների վերլուծության անմիջական կազմիչների սկզբունքը, բացահայտում նրանցից յուրաքանչյուրի կառուցվածքային, ոճական, կիրառական առանձնահատկությունները:

Լեզվաբանը ժամանակակից գրական հայերենի վերոնշյալ մակարդակները հետազոտել է համաժամանակյա կտրվածքով՝ սահմանազատելով նաև արդի հայերենի գրական նորմայից շեղվող լեզվական ձևերը, ինչպես նաև զուգաձևությունները՝ այդպես հետազոտելով լեզուն՝ նրա բանավոր դրսևորման զուգակցմամբ:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի ուսումնասիրություններում հայերենի վերաբերյալ առաջադրած տեսակետները ուղենիշային են եղել հետագայում՝ հաջորդ փուլերում կատարվող լեզվի հետազոտություններում:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981:

՝ Աղայան Էդ., Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003, էջ 159:

2. Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Շարահյուսություն: Բուհական ձեռնարկ, Ե., 2004:
3. Աղայան Էդ., Հայերենի հոլովման և խոնարհման համակարգը, Ե., 1967:
4. Աղայան Էդ., Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003:
5. Գյուլբուդաղյան Ս., Արևելահայերենի քերականագիտության պատմություն, Ե., 2009:
6. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974:
7. Քոսյան Վ., Ակտուալ անդամատուրը և շարադասությունը ժամանակակից հայերենում, Ե., 1990:
8. Березин Ф., Общее языкознание, М., 1979.
9. Кодухов В., Введение в языкознание, М., 1979.

Amirjanyan Susanna - A Number of Questions of S. Abrahamians Rezerch on “Modern Literary Armenian”.- Among the scientific studies of Academician S. Abrahamyan, the work “Modern Literari Armenian” stands out, wich is an expanded study of modern Armenian according to its structural description:at the fonetic, lexical, morphological and syntactic levels-with its innovative observations.

Linguist examining sentences at the syntactic level by their typs and composition,applies the principle of direct constituents of sentence analysis adopted in structural linguistics, revealing the structural, semantic, stylistic and functional features of each.

Academic S.Abrahamyan has studied the patterns of modern literary Armenian by synchronic aspect, delimiting linguistic forms that deviate from the literary norm of modern Armenian, as well as simultaneously presenting parallelisms, thus staying the modern language in conjunction with its oral manifestation.

The views on Armenian in the studies of Academician S.Abrahamyan were guiding principles in subsequent language research.

Keywords: S. Abrahamyan, “Modern Literari Armenian”, structural linguistics, phonetic, lexicai, morphological, syntactic levels, sentens conjunctions.

Amirjanyan Susanna, PhD Associate professor at the Chair of Armenian Language and Metodology of its Teaching,ASPU after Kh.Abovyan.

Амирджанян Сусанна - О ряде вопросов исследования С. Абрамяна "Современный армянский язык".- Среди научных трудов академика С. Абрамяна выделяется исследование «Современный литературный армрнский язык», представляющий сабой развернутое исследование языка по его структурному описанию: на фонетическом, лексическом, морфологическом, синтаксическом уровнях с его наваторскими аспектами и наблюдениями.

Лингвист рассматривая предложения на синтаксическом уровне по их типам и составу, применяет принятый в стрктурной лингвистике принцип прямых составляющих анализа предложений, выявляя структурные, семантические, стилистические функциональные особенности каждого.

Автор исследования тщательно исследовал языковые единицы вышеназванных уровней,

приняв во внимание не только современные, но и древнеармянские языковые явления.

Лингвист исследовал закономерности современного литературного армянского языка в синхронном аспекте разграничивая языковые формы отклоняющийся от литературной нормы языка, а также одновременно представляя параллелизмы, тем самым изучая современный язык во взаимосвязи с его устными проявлениями.

Взгляды на армянский язык в исследованиях академика С. Абрамяна стали руководящими принципами в последующих языковых исследованиях армянского языка.

Ключевые слова: С. Абрамян, структурная лингвистика, фонетические, лексические, морфологические, синтаксические уровни литературного армянского языка, союзы предложений.

Амирджанян Сусанна, Кандидат филологических наук, доцент кафедры армянского языка и методики его преподавания ЕГПУ им.Х.Абовяна.

**ԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԱՆՎԱՆՈՂ,
ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԵԾԱՏԱՌՈՎ ԿԱՄ
ՓՈՔՐԱՏԱՌՈՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Բալոյան Հրայա,
բանասիրական գիտությունների թեկնածու,
hrachyab@gmail.com

Բանալի բառեր. մեծատառ, փոքրատառ, պետական իշխանության բարձրագույն մարմին, բառային միավոր:

Նախաբան

Լեզուն տարբեր բաժիններից ու մակարդակներից բաղկացած բարդ կառույց է: Այդ բաժիններն ու մակարդակները տարբեր աստիճանի բարդություններ ունեն: Զգալիորեն բարդություն, դժվարություն ներկայացնող բաժիններից է ուղղագրությունը: Այս փաստով է պայմանավորված վերջինիս նկատմամբ մասնագիտական շրջանակներում եղած հետաքրքրությունը և առկա խնդիրները հնարավորինս շուտ ու հիմնավոր լուծելու, անճշտությունները վերացնելու հրամայականն ու անհրաժեշտությունը:

Ուղղագրության մաս են կազմում բառերի, բառային միավորների, դրանց այս կամ այն բաղադրիչի մեծատառով կամ փոքրատառով գրությունը: Ժամանակակից հայերենի՝ ուղղագրական դժվարություն ներկայացնող իրողություններից է որոշ կարգի բառային միավորների, դրանց առանձին (որպես կանոն, առաջին) բաղադրիչների մեծատառով կամ փոքրատառով գրությունը: Այսօրինակ բառային միավորներից են պետական իշխանության բարձրագույն մարմիններ անվանող, ցույց տվող բառային միավորները, որ հատուկ անուններ են¹:

Հարցի ուսումնասիրության պատամությունից

Հայոց լեզվի ուղղագրական բառարաններում, ուղղագրությանը նվիրված աշխատություններում կամ հայոց լեզվին նվիրված առանձին աշխատությունների՝ ուղղագրությանը հատկացված բաժիններում նշված տեսակին պատկանող բառերին քիչ է անդրադարձ կատարվել:

Մի շարք ուղղագրական բառարաններում, ուղեցույցներում և բառարան-տեղեկատուներում (Ռ.Ք. Նազարյան, Վ.Կ. Կոստանյան, «Ուղղագրական ուղեցույց: 2000 և ավելի բառ» (Երևան, 1992)), Վ. Լ. Կատվայան, «Ուղղագրական և կետադրական ուղեցույց» (երկրորդ բարեփոխված հրատարակություն) (Երևան, 1998), Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան», (Ե., 2002, 2011), Վ. Ա. Սահակ-

¹ Տե՛ս Ա. Ղարիբյան, Գ. Շեկյան, *Դպրոցական ուղղագրական բառարան*, Ե., 1965, Հ.Զ. Պետրոսյան, Ս.Ա. Գալստյան, Թ.Ա. Ղարազյուլյան, *Լեզվաբանական բառարան*, Ե., 1975 և այլն:

յան, Վ. Վ. Սահակյան, «Ուղղագրական-բացատրական բառարան», (Ե., 2002), Մեյքիխանյան Փ., «Հայերենի ուղղագրական նոր բառարան», (Ե., 2013), Նազարյան Ռուբինա, Գյոդակյան Անահիտ, Դպրոցական հայերեն ուղղագրական փոքր բառարան, (Ե., 2010), Նույնի «Հայերեն դպրոցական ուղղագրական տեղեկատու բառարան, (Ե., 2016) և այլն»² խոսվում է մեր գեկուցման նյութ հանդիսացող՝ պետական իշխանության բարձրագույն մարմիններ անվանող, ցույց տվող բառային միավորների մասին (տարբեր բառարաններում այդ մարմինները տարբեր կերպ են անվանված):

2001-ին հայ իրականության մեջ առաջին անգամ լույս է տեսնում Դավիթ Գյուրջինյանի՝ ամբողջովին բառերի և բառակապակցությունների մեծատառով կամ փոքրատառով գրությանը նվիրված «Մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու»-ն (Երևան, 2001), որ հետագայում վերահրատարակվում է մի քանի անգամ. այստեղ քննության են ենթարկված նաև մեր գեկուցման առարկա բառային միավորները:

Հայ իրականության մեջ հատուկ անունների ուղղագրությանը առաջին անգամ առանձին բառարանով անդրադարձել է Կարինե Առաքելյանը՝ «Հատուկ անունների ուղղագրական բառարան (Երևան, 2017): Այս աշխատանքում ևս անդրադարձ կա մեզ հետաքրքրող հարցին:

Բոլոր պետությունների կենտրոնական ղեկավար օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անունների գրության վերաբերյալ առանձին ենթակետ կա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2003 թ. հունվարի 14-ի՝ «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» կանոնները հաստատելու մասին N 18 հրամանում, որ ուժի մեջ է և գործում է մինչ օրս:

2006 թ. լեզվի պետական տեսչության լույս ընծայած «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ի «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» բաժնում (որը ՀՀ ԿԳ նախարարի՝ վերը նշված հրամանով հաստատված նախագիծն է) խոսք կա նաև բոլոր պետությունների կենտրոնական ղեկավար օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անունների և դրանց ոչ տառային և խառը տիպի հապավումներով դրսևորված ձևերի մասին⁴:

Պետական իշխանության բարձրագույն մարմինների պաշտոնական-ամբողջական անվանումները

Դավիթ Գյուրջինյանի կազմած «Մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու»-ում (Ե., 2005) տարբերակված են հիշյալ մարմինների բաղադրյալ և մենաբառ անունները: Սա անհրաժեշտ տարբերակում ենք դիտում, քանի որ նշված մարմինների բաղադրյալ կամ բազմաբառ անվանումները այլ առանձնահատկություն ունեն, մենաբառ

² Ուսումնասիրել ենք հետխորհրդային շրջանի, հատկապես վերջին տարիների բառարանները և ուղղագրությանը վերաբերող աշխատությունները, քանի որ դրանցում է ներկայացված մերօրյա լեզվավիճակը:

³ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրաման «բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» կանոնները հաստատելու մասին.—

<https://www.irtek.am/views/act.aspx?aid=19823>

⁴ *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 2006, էջ 291–292, 294:

անվանումները՝ այլ: Նախ պետք է տարբերակել պետական իշխանության բարձրագույն մարմինների պաշտոնական-ամբողջական և բուն անվանումները: Ինչպես գրեթե բոլոր հատուկ անունները, այնպես էլ մեր ուսումնասիրության նյութ հանդիսացողները ունեն ամբողջական և կրճատ տարբերակներ: Պետական իշխանության բարձրագույն մարմինների պաշտոնական-ամբողջական անվանումները տվյալ պետության կողմից պաշտոնապես տրված անվանումներն են, որոնք, որպես կանոն, լինում են բաղադրյալ, բազմաբաղադրիչ և ունենում են որոշակիացնող, կոնկրետացնող արժեք, իսկ տվյալ դեպքում որոշակիացում, կոնկրետացում նշանակում է տեղայնացում, քանի որ նշվում է իշխանական մարմնի գնտվելու վայրը, պետությունը, որտեղ գտնվում է այն, որին պատկանում է: Սա նշանակում է, որ պաշտոնական-ամբողջական անվան մեջ առաջին պլան է մղվում տեղ, վայր ցույց տվող բառը և նշված անվանումն սկսվում է այդ բառով: Սա էլ բնականաբար ենթադրում է, որ այդ անվանումն սկսվում է մեծատառով, քանի որ տեղանունները հատուկ անուններ են, իսկ հատուկ անունները գրվում են մեծատառերով: Սրանից պարզ է դառնում, որ պետական իշխանության բարձրագույն մարմինների պաշտոնական-ամբողջական անվանումների գրությունը ուղղագրական որևէ դժվարություն չի ներկայացնում՝ *Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով*, *Հայաստանի Հանրապետության Կառավարություն*, *Հայաստանի Հանրապետության դատախազություն* և այլն: Հիշյալ մարմինների բուն անվանումները հենց տվյալ մարմիններին տրված անվանումներն են՝ առանց որոշակիացման, կոնկրետացման, այսինքն՝ տեղայնացման: Այս կարգի անվանումները լինում են բաղադրյալ կամ բազմաբառ և մենաբառ. բաղադրյալ կամ բազմաբառ անվանումներն են՝ *Գերագույն խորհուրդ*, *Պետական դումա*, *Ներկայացուցիչների պալատ*, *Համայնքների պալատ*, *Լորդերի պալատ*, *Պետական խորհուրդ*, *Նախարարների խորհուրդ* այլն, մենաբառ անվանումներն են՝ *Մենատ*, *Կանգրես*, *Սեյմ*, *Դումա*, *Ռադա*, *Կնեսետ*, *Խուրալ*, *Մեջլիս* և այլն:

Բաղադրյալ կամ բազմաբառ բուն անվանումները

Բաղադրյալ կամ բազմաբառ բուն անվանումների առաջին բաղադրիչները գրվում են մեծատառերով, երկրորդները՝ փոքրատառերով՝ *Գերագույն խորհուրդ*, *Պետական դումա*, *Ներկայացուցիչների պալատ*, *Համայնքների պալատ*, *Լորդերի պալատ*, *Ժողովրդական ժողով*, *Պետական խորհուրդ*, *Նախարարների խորհուրդ* և այլն: Մեծատառով գրությունը պահպանվում է պաշտոնական-ամբողջական անվանումներում՝ *Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով*, *Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան*, *Ռուսաստանի Դաշնության Պետական դումա*, *Բուլղարիայի Հանրապետության Ժողովրդական ժողով*, *ՉՇՀ Պետական խորհուրդ* և այլն:

Մենաբառ բուն անվանումները

Առանձնակի ուշադրության արժանի ենք համարում հիշյալ մարմինների մենաբառ բուն անվանումները՝ *Մենատ*, *Կանգրես*, *Բունդեսթագ*, *Սթորթինգ*, *Ռիկսդագ*, *Սեյմ*, *Սկուպշինա*, *Էդուսկունտ*, *Դումա*, *Ռադա*, *Կնեսետ* կամ *Քնեսետ*, *Խուրալ*, *Մեջլիս* և այլն: Այս բառերի՝ հատուկ անուններ լինելը ավելի որոշակի է, դրանք հատուկ անվան հատկանիշներ ավելի

շատ ունեն. գործածվում են հենց տվյալ մարմիններն անվանելու համար և չեն թարգմանվում: Այս մենաբառ անվանումները պաշտոնական-ամբողջական անվանումներում պահպանում են մեծատառերով գրությունը՝ *Լեհաստանի Հանրապետության Սեյմ, ԱՄՆ Կոնգրես, ԱՄՆ Սենատ, Ռուսաստանի Դաշնության Պետդումա կամ Դումա* և այլն:

Պետական իշխանության բարձրագույն մարմինների մենաբառ (երբեմն նաև բազմաբառ, բայց հատկապես մենաբառ) բուն անվանումները մեկ այլ առաձևահատկությունն էլ ունեն. քանի որ նախատեսված են միայն տվյալ երկրի համապատասխան մարմինն անվանելու համար, ապա շատ դեպքերում հասկանալի են խոսքից դուրս և, հետևաբար, կարող են առանձին գործածվել, քանի որ այդ դեպքում էլ պարզ կլինի, թե խոսքը որ երկրի որ պետական իշխանական բարձրագույն մարմնի մասին է: Այս դեպքում կարևոր է տվյալ երկրի՝ խոսակցության առարկա պետական իշխանական բարձրագույն մարմնի ու նրա անվան հայտնի լինելը, կարևոր են նաև խոսքային ու արտախոսքային իրադրությունները: Օրինակ՝ *Սենատ, Կոնգրես, Բունդեսթագ, Դումա, Ռադա, Կնեսետ* կամ *Քնեսեթ* և նմանատիպ այլ բառեր հայտնի են գրեթե ամբողջ աշխարհին, գրեթե բոլորը գիտեն, թե դրանք որ երկրի որ պետական մարմինների անվանումներն են, հետևաբար խոսքից դուրս էլ կարելի է գործածել, միայն *Սենատ*-ի ու *Կոնգրես*-ի պարագայում երբեմն որոշակիացման կարիք կարող է լինել, քանզի այս բառերով են կոչվում մի քանի երկրների բարձրույն օրենսդիր ներկայացուցչական մարմիններ: Ի տարբերություն վերջիններիս՝ *Սթորթինգ, Ռիկսդագ, Սկուպշինա, Էդուսկունտ, Խուրալ* և այլ անվանումներ լայն հանրությանը հայտնի չեն, հետևաբար դրանք, որոշ խոսքային ու արտախոսքային իրադրություններ ի բաց առյալ, պետք է գործածվեն գտվելու վայրի, այսինքն՝ պետության անվան հետ: Հավելենք, որ *կոնգրես* բառն ունի նաև այլ իմաստ՝ «միջազգային նշանակություն ունեցող լայն կազմով համագումար, համաժողով, վեհաժողով»⁵, «վեհաժողով», «համաժողով»⁶, այս իմաստով գործածվելիս բնականաբար փոքրատառով է գրվում:

Պառլամենտ և կառավարություն բառերի մասին

ԿԳ նախարարի՝ վերը հիշատակված հրամանում ասվում է. «Պաշտոնական փաստաթղթերում և հաղորդագրություններում մեծատառով գրվող Պառլամենտ, Կոնգրես, Սենատ, Սեյմ, Մեջլիս, Դումա, Ռադա, Խուրալ, հայերեն՝ Կառավարություն և այլ անունները՝ իբրև պետական կենտրոնական ղեկավար մարմնի՝ տեսակ անվանող բառեր գործածվելիս գրվում են փոքրատառ և մտնում են բառարան՝ որպես հասարակ անուն»⁷: Մեջբերված հատվածի վերաբերյալ կկամենայինք մեր տեսակետն արտահայտել՝ թվարկված բառերի մեջ այլ է *պառլամենտ* և *կառավարություն* բառերի պարագան: *Պառլամենտ* բառը ցույց է տալիս ընդհանրապես պետական իշխանության բարձրագույն մարմնի տեսակ՝ օրենսդիր մարմին, հայերեն *խորհրդարան* բառի հոմանիշն է: Այն, սակայն, Ֆրանսիայի բարձրագույն օրենսդիր

⁵ *Մամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հատոր երրորդ, Ե., 1974 էջ 178:

⁶ **Է. Բ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ա-Ձ, Ե., 1976, էջ 755:

⁷ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրաման «բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» կանոնները հաստատելու մասին.—

<https://www.irtek.am/views/act.aspx?aid=19823>

մարմնի անվանումն է և ֆրանսերենում գրվում է մեծատառով⁸: Այս փաստը մի տեսակ անորոշություն է առաջացնում. եթե խոսքը Ֆրանսիայի օրենսդիր մարմնի մասին է, ապա որպես հատուկ անուն պետք է գրվի մեծատառով, մանավանդ որ ֆրանսերենում մեծատառով է գրվում, բայց մյուս կողմից՝ *պառլամենտ* բառը նշված պետության օրենսդիր մարմնի առնչությամբ կարող է գործածվել ընդհանուր՝ «օրենսդիր մարմին» իմաստով՝ իբրև *խորհրդարան* բառի հոմանիշ, այս դեպքում, իհարկե, պետք է գրվի փոքրատառով: Կողմնորոշվելու միակ միջոցը խոսքաշարն է, խոսքային միջավայրը, նաև խոսքի հեղինակի նպատակադրումը: *Կառավարություն* բառը ևս ցույց է տալիս ընդհանրապես պետական իշխանության բարձրագույն մարմնի տեսակ՝ գործադիր իշխանություն, իշխանական մարմնի անվանում չէ, սակայն իբրև ՀՀ բարձրագույն գործադիր իշխանության պաշտոնական–ամբողջական անվան բաղադրիչ գրվում է մեծատառով՝ *Հայաստանի Հանրապետության Կառավարություն*: Կառավարության պաշտոնական կայքում, սակայն, այս բառը գործածված է և՛ մեծատառով, և՛ փոքրատառով¹⁰, «Հայաստան» հանրագիտարանում՝ մեծատառով¹¹, ՋԼՄ–ներում, կայքերում և այլուր՝ փոքրատառով:

Օրենսդիր մարմիններին տրվող առանձին անվանումները

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորաբար օրենսդիր մարմիններին են տրվում առանձին անվանումներ, գործադիրին ու դատականին, որպես կանոն, չեն տրվում. օրենսդիր մարմինների բուն անվանումներ՝ *Սենատ* (ԱՄՆ, Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատ), *Կոնգրես* (ԱՄՆ, լատինաաամերիկյան մի շարք երկրներ), *Բունդեսթագ* (Գերմանիա), *Դումա* (Ռուսաստան), *Ռադա* (*Գերագույն ռադա* (Ուկրաինա)), *Կնեսետ* կամ *Քնեսետ* (Իսրայել), *Սթորթինգ* (Նորվեգիա), *Ռիկսդագ* (Շվեդիա), *Սկուպչյինա* (Սերբիա, Չեռնոգորիա), *Սեյմ* (Լեհաստան, Լատվիա, Լիտվա), *Էդուսկունտ* (*Էդուսկունտ Ռիկսդագեն* ((Ֆինլանդիա), *Խուրալ* (*Պետական Մեծ Խուրալ* (Մոնղոլիա)), *ժոգորկու կենեշ* (Ղրղըզստան)), *Մաջլիսի Օլի Մաջլիսի նամոյանդագոն* (Տաջիկստան), *Մեջլիս* (Իրան, Թուրքմենստան, Թուրքիա¹²), *Միլլի Մեջլիս* (Ադրբեջան) և այլն: Այս բառային միավորները չեն թարգմանվում՝ ի տարբերության օրենսդիր մարմինների մի շարք այլ, ինչպես նաև թերևս բոլոր գործադիր ու դատական մարմինների անվանումների, որոնք թարգմանվում են: Նաև նշենք, որ օրենսդիր մարմինների պաշտոնական–ամբողջական անվանումները թարգմանելիս այդ անվանումների մեջ եղած այստեսակ, այսինքն՝ միայն տվյալ երկրի օրենսդիր մարմնին տրված յուրահատուկ, բուն անվանումները մնում են նույնը, չեն թարգմանվում՝ *ՌԴ Պետական դումա*¹³, *Ուկրաինայի Գերագույն ռադա*, *Մոնղոլիայի Մեծ խուրալ* և այլն:

Մեծատառերով են գրվում նաև այս կարգի բառերի վանկաբառային հապավումները՝ *Պետդումա*, *Պետխորհուրդ* և այլն:

⁸ Տե՛ս <https://www.parlement.fr/>:

⁹ Տե՛ս <https://www.gov.am/am/>

¹⁰ Տե՛ս <https://www.gov.am/am/news/item/16061/>, <https://www.gov.am/am/announcements/item/1594/> և այլն:

¹¹ Տե՛ս «Հայաստան» հանրագիտարան, Ե., 2012, էջ 11:

¹² Հայկական լրատվական և այլ բնույթի կայքերում գրված է փոքրատառով, գործածվում է նաև *Թուրքիայի Ազգային մեծ ժողով* անվանումը:

¹³ Տե՛ս ԿԳ նախարարի հարաման, էջ 4:

Պետական իշխանության բարձրագույն մարմինների՝ շրջասություններ հանդիսացող անվանումները

Կան նաև պետական իշխանության բարձրագույն մարմինների յուրահատուկ, առանձին անվանումներ, որոնք ըստ էության շրջասություններ են կամ առաջացել են դրանց հիմքի վրա՝ *Սպիտակ տուն*, *Ելիսեյան պալատ*, *Բուքինգհեմյան պալատ*, *Կրեմլ* և այլն: Սրանք, բացի *Կրեմլ*-ից, հասարակ անուններից կազմված բառակապակցություններ են, բայց գրվում են մեծատառերով, քանի որ անվանում են պետական իշխանության բարձրագույն մարմիններ, ընդ որում՝ այդ մարմիններից ամենաբարձր՝ պետության գերագույն գլխավոր իշխանությունը՝ Սպիտակ տուն՝ ԱՄՆ-ի գերագույն գլխավոր իշխանությունը, Ելիսեյան պալատ՝ Ֆրանսիայի գերագույն գլխավոր իշխանությունը, Կրեմլ՝ Ռուսաստանի (նախկինում՝ ԽՍՀՄ-ի) գերագույն գլխավոր իշխանությունը. սրանց մեջ առանձնանում է *Բուքինգհեմյան պալատ*-ը, որով անվանվում է պետության ձևական գերագույն գլխավոր իշխանությունը, քանի որ Մեծ Բրիտանիայում երկրի փաստացի իշխանությունը պատկանում կառավարությանը: *Կրեմլ* անվանումը, ի տարբերություն նախորդների, մենաբառ է, իբրև բառային միավոր գործածվում է միայն տվյալ հաստատությունն անվանելու համար: *Կրեմլ* էր կոչվում ռուսական ֆեոդալական քաղաքների կենտրոնական ամրացված մասը: Հետագայում, Ռուսական քաղաքների վերահատակագծման ժամանակ (XVIII դ. 2-րդ կես - XIX դ. 1-ին քառորդ) Կրեմլը, կորցնելով ռազմա-ստրատեգիական նշանակությունը, ընդգրկվել է քաղաքի համալիրի մեջ, որպես վարչական կենտրոն և պատմագեղարվեստական համալիր: Մոսկվան ևս կրեմլ ուներ, որը հետագայում դարձավ ԽՍՀՄ, այնուհետ՝ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքի գլխավոր հասարակա-քաղաքական և պատմագեղարվեստական համալիրը, երկրի պետական իշխանության բարձրագույն մարմինների նստավայրը¹⁴: Օրինաչափ լեզվական երևույթ է, երբ շինության անվանում կամ շինություն ցույց տվող բառը գործածվում է տվյալ շինության մեջ գտնվող հաստատության իմաստով. Սպիտակ տունը, Ելիսեյան պալատն ու Կրեմլը համապատասխանաբար ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահների նստավայրերն են, Բուքինգհեմյան պալատը՝ Անգլիայի թագավորական ընտանիքի լոնդոնյան նստավայրը: *Սպիտակ տուն*, *Ելիսեյան պալատ*, *Կրեմլ* անվանումները քաղաքական խոսույթում գործածվում են նաև տվյալ պետության անվան փոխարեն, համապատասխանաբար՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստան: Համանման երևույթ է Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների աթոռանիստ վայրերի (Էջմիածին, Անթիլիաս) անվանումներով համապատասխանաբար «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հոգևոր և նվիրապետական գերագույն իշխանությունը՝ Կաթողիկոսություն ամենայն հայոց» և «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու մասնավոր նվիրապետական աթոռը՝ Կաթողիկոսություն մեծի տանն Կիլիկիո» իմաստներն արտահայտելը: Պատմությունից էլ հայտնի են նման դեպքեր՝ *Բարձր դուռ* կամ *Բարձրագույն դուռ*, նաև՝ *Օսմանյան դուռ*, *Փայլուն դուռ* (Օսմանյան կայսրության կառավարության պաշտոնական անվանումը եվրո-

¹⁴ Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Ե., 1979, էջ 684:

պական դիվանագիտական փաստաթղթերում և գրականության մեջ մինչև հանրապետության հռչակումը(1923)¹⁵:

Պետական իշխանության բարձրագույն մարմիններ անվանող և ցույց տվող բառային միավորները

Պետք է տարբերել նաև պետական իշխանության բարձրագույն մարմիններ անվանող և պետական իշխանության բարձրագույն մարմիններ ցույց տվող բառային միավորները. կան բառային միավորներ, որոնք ուղղակի ցույց են տալիս պետական իշխանության բարձրագույն մարմիններ, ավելի ճիշտ՝ պետական իշխանության բարձրագույն մարմինների տեսակներ, դրանց հատուկ անունները չեն ու թարգմանելի են, բնականաբար գրվում են փոքրատառով՝ *կառավարություն, խորհրդարան, պառլամենտ, գործադիր իշխանություն, օրենսդիր իշխանություն, դատական իշխանություն* և այլն: *Խորհրդարան* և *պառլամենտ* բառերը, որ նշանակում են պետության բարձրագույն օրենսդիր մարմին, հաճախ կարող ենք գործածել և գործածվում են առհասարակ այս կամ այն երկրների օրենսդիր մարմինը կամ դրա որևէ պալատը ցույց տալու համար, միայն *Սենատ* և *Կոնգրես* բառերի փոխարեն է, որ ընդունված չէ *խորհրդարան* և *պառլամենտ* բառերի գործածությունը:

Ի տարբերություն պետական իշխանության բարձրագույն մարմինների բաղադրյալ կամ բազմաբաղադրիչ, անգամ մենաբաղադրիչ անվանումների՝ պետական իշխանության բարձրագույն մարմինների տեսակներ ցույց տվող բառերը՝ *կառավարություն, խորհրդարան, պառլամենտ*, առավել ևս նկարագրական եղանակով ցույց տվող միավորները՝ *գործադիր իշխանություն, օրենսդիր իշխանություն, դատական իշխանություն* և այլն, ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ, ընհանուր առմամբ են ցույց տալիս առարկան:

Պետական իշխանության ոչ բարձրագույն մարմինների յուրահատուկ, առանձին անվանումները

Առանձին երկրներում յուրահատուկ, առանձին անվանումներ կարող են ստանալ նաև պետական իշխանության ոչ բարձրագույն մարմիններ՝ գերատեսչություններ, նախարարություններ՝ Պենտագոն (ԱՄՆ–ի պաշտպանական գերատեսչություն)¹⁶, Ցահալ կամ Ցախալ (Իսրայելի պաշտպանության բանակ (ավելի ճիշտ է, կարծում ենք, *Ցահալ* տարբերակը, քանի որ այս հապավական բաղադրությունն առաջացել է եբրայերեն *Ցվա հազանա լե-Ցիսրաեղ* բառակապակցությունից)¹⁷, Մոսադ (Իսրայելի հետախուզության և հատուկ գործողությունների գործակալություն)¹⁸, որոնք ևս մեծատառերով են գրվում: Օրինակներ կարելի է բերել նաև հեռավոր ու մերձավոր պատմական ժամանակաշրջաններից՝ միջադարյան Հայաստանի և Կիլիկիայի մի շարք գործակալություններ, այսօրվա բառով ասած՝ գերատեսչություններ:

¹⁵ **Դավիթ Գյուրջիկյան**, *Մեծատառ, թե՛ փոքրատառ. հայերեն բառարան–տեղեկատու*, Ե., 2005, էջ 46:

¹⁶ Տե՛ս <https://www.defense.gov/>, նաև՝ **Դ.Ս. Չիլինգարյան, Ե.Լ. Երզնկյան**, *Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան*, Ե., 2015, էջ 59, 498:

¹⁷ Գրվում է որպես հապավում՝ *ՑԱՀԱԼ կամ ՑԱԽԱԼ*:

¹⁸ Գրվում է չակերտներով՝ «Մոսադ»:

չություններ, նախարարություններ, ունեցել են առանձին, յուրահատուկ անվանումներ՝ *Հազարապետություն, Սպարապետություն, Մարդպետություն, Մաղխագություն, Թագադիր ասպետություն* և այլն, ֆաշիստական Գերմանիայում՝ *Ռայստագ, Արվեր, Էսէս, Գեստապո, Լյուֆթվաֆե*, Օսմանյան կայսրությունում՝ *Մեխթերհանե* (երբեմն գրվում է՝ *Մեթթերհանե* (կենտրոնական բանտ)) և այլն:

Օտար պետությունների՝ իշխանության բարձրագույն մարմիններ անվանող բառային միավորների բաղադրիչների մեծատառով կամ փոքրատառով գրությունը

Առանձին խնդիր է օտար պետությունների իշխանության բարձրագույն մարմիններ անվանող բառային միավորների բաղադրիչների մեծատառով կամ փոքրատառով գրությունը: Բանն այն է, որ մի շարք օտար պետությունների՝ իշխանության բարձրագույն մարմիններ անվանող բառային միավորների բոլոր բաղադրիչները տվյալ երկրների՝ առաջին հերթին պաշտոնական գրավոր խոսքում հանդես են գալիս մեծատառերով՝ *Սպիտակ տուն* (White House)¹⁹, Պետական դումա (Государственная Дума), *Բուքինգհեմյան պալատ* (Buckingham Palace), հայերենում միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով, երկրորդը և հաջորդները (եթե կան)՝ փոքրատառով՝ *Սպիտակ տուն, Պետական դումա, Բուքինգհեմյան պալատ*: Տեսնում ենք, որ բաղադրյալ բազմաբառ անվանումները թարգմանված են, չեն թարգմանվել միայն հաստատությունների բուն անվանումները, բնականաբար անփոփոխ են մնացել նաև իբրև ածականների բառակազմական հիմքեր հանդես եկող հատուկ անունները՝ *Ելիսե, Բուքինգհեմ: Կրեմլ* բառը, ինչպես տեսանք, չի թարգմանվում, քանի որ հատուկ անուն է՝ միայն տվյալ հաստատություն անվանելու համար գործածվող: ՀՀ Ազգային ժողովի կայքում *Շոգորկու կենեշ* (Жогорку Кеңеш) անվան առաջին բաղադրիչը գրված է մեծատառով, երկրորդը՝ փոքրատառով, *Պետական Դումա, Մաջլիսի Օլի, Միլլի Մեջլիս* անվանումների երկու բաղադրիչներն էլ գրված են մեծատառերով²⁰. պետք է միօրինականացվի: Առհասարակ նմանատիպ բառային միավորների մեծատառով կամ փոքրատառով գրության միօրինակություն, հատկապես ՁԼՄ-ներում ու կայքերում, չկա:

Եզրակացություն

Պետական իշխանության բարձրագույն մարմիններ անվանող բառային միավորները ըստ կազմության լինում են երկու տեսակ՝ բաղադրյալ կամ բազմաբառ և մենաբառ: Այդ կարգի մարմիններն ունենում են ամբողջկան–պաշտոնական անվանումներ և բուն՝ միայն իրենց տրված, միայն իրենց համար նախատեսված անվանումներ՝ առանց կոնկրետացման՝ տեղայնացման: Բուն անվանումները կարող են լինել բազմաբաղադրիչ (հիմնականում երկբաղադրիչ) և մենաբաղադրիչ: Հատկապես մենաբաղադրիչ բուն անվանումները, որպես կանոն, լինում են չթարգմանվող բառային միավորներ՝ հատուկ միայն տվյալ երկրի պետական իշխանության այս կամ այն մարմին: Որպես կանոն, հատուկ անվանում են ստանում պետական իշխանության օրենսդիր բարձրագույն մարմինները:

¹⁹ Տե՛ս <https://www.whitehouse.gov/about-the-white-house/the-white-house/>

²⁰ Տե՛ս <http://www.parliament.am/>

Օգտագործված գրականություն

Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, Ա-Ձ, 1976, 932 էջ:

Կարինե Առաքելյան, Կարինե Առաքելյանը՝ «Հատուկ անունների ուղղագրական բառարան, Երևան, 2017, 272 էջ:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրաման «բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» կանոնները հաստատելու մասին.— <https://www.irtek.am/views/act.aspx?aid=19823>:

Դավիթ Գյուրջինյան, «Մեծատա՞ն, թե՞ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու Երևան, 2001, 144 էջ, 2005, 156 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր երրորդ, կազմեցին՝ Ա. Ս. Սուքիասյան, Ե. Գ. Տեր-Սինասյան՝ աշխատակցությամբ Ա. Ս. Հակոբյանի, Հ. Հ. Կոստանյան, Երևան, 1974, 576 էջ:

Վ.Լ. Կատվայան, Ուղղագրական և կետադրական ուղեցույց (երկրորդ բարեփոխված հրատարակություն), Երևան, 1998, 118 էջ:

Հայաստան հանրագիտարան, Երևան, գլխավոր խմբագիր՝ Հովհաննես Այվազյան, 2012, 1164 էջ:

Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, 1979, 720 էջ:

Ա. Ղարիբյան, Գ. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 1965, 214 էջ:

Մեյթիխանյան Փ., Հայերենի ուղղագրական նոր բառարան, Ե., 2013, 428 էջ:

Ռ.Ք. Նազարյան, Վ.Կ. Կոստանյան, Ուղղագրական ուղեցույց: 2000 և ավելի բառ, Երևան, 1992, 64 էջ:

Նազարյան Ռուբինա, Գյոդակյան Անահիտ, Դպրոցական հայերեն ուղղագրական փոքր բառարան, Ե., 2010, 151 էջ:

Նույնի, Հայերեն դպրոցական ուղղագրական տեղեկատու բառարան, Ե., 2016, 180 էջ:

Դ.Ս. Զիլինգարյան, Ե.Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Երևան, 2015, 1200 էջ:

Հ.Զ. Պետրոսյան, Ս.Ա. Գալստյան, Թ.Ա. Ղարաբյուրյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, 316 էջ:

Վ. Ա. Սահակյան, Վ. Վ. Սահակյան, Ուղղագրական-բացատրական բառարան, Ե., 2002, 103 էջ:

Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002, 408 էջ, 2011, 462 էջ:

Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, գիտական խմբագիր՝ Լավրենտի Միրզոյան, կազմ. և խմբ. Հ. Խ. Բարսեղյան, Երևան, 2006, 384 էջ:

<https://www.irtek.am/views/act.aspx?aid=19823>:

<https://www.parlement.fr/>:

<https://www.gov.am/am/>:

<https://www.defense.gov/>:

<https://www.whitehouse.gov/>:

Baloyan Hrachya – The capital letter or lower-case letter writing of word units that name, indicate the highest bodies of state power: The highest bodies of state power have official–full and proper names. Official–full names are the names officially given by a given state, which, as a rule, are compound and have a concretizing, localizing value. Those names start with place names, therefore they are written in capital letters. The proper names of the aforementioned bodies are the names given to the given bodies just, without any concretization. Names of this type can be compound or multiword and monoword. The first components of compound or multiword proper names are written in capital letters, the second components in lower-case letters. Capital letter writing is preserved in official–full names. These single-word names retain capital letter in their official–full names. Syllableolexical abbreviations that name, indicate the highest bodies of state power are also written in capital letters. A number of names of the highest bodies of state power are periphrasis: they are also written in capital letters. There are word units that simply indicate the types of highest bodies of state power, are naturally written in lower-case letter. In a number of foreign states, all components of the word units that name the highest bodies of state power are capitalized primarily in the official written speech of those countries, in Armenian, only the first component is written in capital letters, the second and subsequent ones in lower-case. In general, there is no uniformity in capital letter or lower-case letter writing of similar word units, especially in the media and websites.

Keywords: capital letter, lower-case letter, highest bodies of state power, word units.

Baloyan Hrachya (Armenian Hrachya), candidate of philological sciences.

Балоян Рачья – Написание с заглавной или строчной буквой словесных единиц, именующих и указывающих на высшие органы государственной власти. –Официально-полные имена – это названия, официально данные данным государством, которые, как правило, являются составными и имеют конкретизирующее, локализирующее значение. Эти названия начинаются с топонимов, поэтому пишутся с заглавной буквой. Истинные имена указанных органов – это названия, данные этим органам, без конкретизации. Названия этого типа бывают сложными или многосложными и односложными. Первые компоненты сложных или многосложных истинных имен пишутся с заглавной буквой, вторые – со строчной буквой. В официально-полных именах сохраняется написание с заглавной буквой. Эти однословные имена сохраняют написание с заглавной буквой в официально-полных наименованиях. Слогословные сокращения, называющие высшие органы государственной власти, также пишутся с заглавной буквой. Некоторые наименования высших органов государственной власти являются перифразами: они также пишутся с заглавной буквой. Существуют словесные единицы, которые просто указывают на виды высших органов государственной власти, естественно пишутся строчными буквами. В ряде зарубежных стран, все компоненты словесных единиц, называющих высшие органы власти, прежде всего в официальной письменной речи этих стран пишутся с заглавной буквой, в армянском языке с заглавной буквой пишется только первый компонент, а

второй и последующие - строчными. В целом, не существует единообразия в написании с заглавных или строчных букв схожих словесных единиц, особенно в средствах массовой информации и на веб-сайтах.

Ключевые слова: заглавной буквой, строчной буквой, высший орган государственной власти, лексическая единица.

Балоян Рачья (Армянян Рачья), кандидат филологических наук.

Գալստյան Աշոտ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի
ղեկան, Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ash.galstyan@mail.ru

Բանայի բառեր. երկխոսություն, մենախոսություն, գեղարվեստական խոսք, հեղինակ, երկխոսության տեսակներ, ժեստ, կերպար:

Մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ մեծ դեր ունի **երկխոսությունը**: Այն ծագել է մարդկության վաղ արշալույսին, երբ մարդը դարձել է հասարակական էակ: Մտածողության և մարդու մտային գործունեության զարգացման հետ փոխվում են երկխոսության դրսևորման ձևերը:

Հին աշխարհի մտածողների շրջանում բանավիճելն ընդունված էր որպես ճշմարտության հասնելու ուղի: Էրիստիկան (վիճարվեստը) ձևավորվել և ծաղկել է Ք. ա. հին հունական սոփեստների երկերում (Պրոտագորաս, Հիպիաս, Պրոդիկոս): Այնուհետև խոսքի մասին ուսմունքը Հունաստանից տեղափոխվել է Հռոմ, որտեղ երկխոսության կատարելության գործում կարևորվել է գիտելիքը, ճաշակը և աշխատասիրությունը: Վիճարվեստի նկատմամբ հետաքրքրություն է առաջացել նաև հին Հնդկաստանում: Ռուս նշանավոր արևելագետ Վ. Վասիլևը գրել է, որ հնդիկները շատ լուրջ են վերաբերվել վեճին: Շատ հետազոտողներ ընդգծել են, որ հնդկական վեճի ավանդույթներից մեկը եղել է հարգանքը միմյանց նկատմամբ:

Հունաստանի, Հռոմի, Հնդկաստանի ճարտասանական ուսմունքները մեծ ազդեցություն են ունեցել հայերի ճարտասանական արվեստի զարգացման վրա (Տիգրան Մեծ, Արտավազդ Բ):

Երկխոսությունը, որի պարզ ձևը զրույցն է, կայանում է, եթե նրան մասնակցում են երկու կամ ավելի մարդ: Երկխոսությունը մեկը մյուսին հաջորդող բարդ կառույց է՝ սովորաբար բաղադրված ուղղակիորեն մեջբերված և հեղինակի խոսքերից:

Լեզվաբանական գրականության մեջ երկխոսության կառուցվածքը ներկայացվում է հետևյալ սխեմայով՝ ա-ն ասաց, բ-ն ասաց, կամ ա-ն հարցրեց, բ-ն պատասխանեց: Այստեղ ընդգծվում է խոսողի և խոսակցի մտքերի սերտ փոխհարաբերությունը, քերականական կապը: Երկխոսության այս սխեմային կարելի է ավելացնել նաև երրորդ կառույցը. ա-ն հարցրեց, բ-ն հարցրեց: «Հարցին հարցով տրված պատասխանը կոչվում է լրացահարցական

¹ Введенская Л., Павлова Л., *Культура и искусство речи*, Ростов на Дону, 1996, с. 410-412.

² Գ. Խաչատրյան, *Երկխոսությունները «Մասնա ծոեր» էպոսում*, Պատմաբանասիրական հանդես, հ. 3, 2022, էջ 155:

³ Տե՛ս Ծ. Խլղաթյան, *Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը*, Ե., 1988, էջ 165:

նախադասություն»⁴: Հարցնողը հարց կարող է տալ ոչ միայն խոսակցին, այլև իրեն: Առաջին դեպքում հարցական նախադասությունը կոչվում է երկխոսական, իսկ մյուս դեպքում՝ մենախոսական: Մենախոսական հարցական նախադասություններն ավելի շատ գործածվում են գեղարվեստական խոսքում:

Երկխոսության կիրառության ոլորտները բազմազան են: Երկխոսությունը գեղարվեստական երկի կարևոր բաղադրամասերից է:

Դրամատիկական ստեղծագործություններն ըստ էության այլ բան չեն, քան երկխոսության արվեստ: Ինչպես նշում է Գ. Զոհրապը, «երկխոսությունը թատերական պիեսի հաջողության առաջին պայմանն է»⁵: Դրամատիկական ստեղծագործություններում ներկա ժամանակով դրված բայ-ստորոգյալները սովորաբար արտահայտում են խոսքի պահին կատարվող գործողություն. ներկայի այսպիսի կիրառությունը հայտնի է *բեմական ներկա* անունով, որը գործածվում է *պատմական ներկայի* իմաստով⁶:

Ուղղակի խոսքը ամենից ավելի հաճախված է երկխոսություններում: Այստեղ այն հանդես է գալիս իբրև հեղինակային պատումի ծավալման, կերպարի մտածողության, հոգևոր կերտվածքի բնութագրության, լեզվական անհատականության միջոց: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Պապոյանը, էպիկական սեռի ժանրերում երկխոսությունները բնորոշվում են նրանով, որ հեղինակային խոսքի հետ կապվում են ոչ այնքան ասացական իմաստ արտահայտող բայերի միջոցով, որքան ասելու եղանակը, ձևը կամ նման հանգամանքներ նշող բայերի օգնությամբ⁷:

Գեղարվեստական խոսքում երկխոսություն կարող է տեղի ունենալ.

ա) մարդկանց միջև, որոնք զրուցում են իրար հետ:

Գեղարվեստական արձակում կարող է երկխոսություն ընթանալ առանց հեղինակային միջամտության.

«Ի՞նչ կա, քեռի՛ Խեչան:

-Մթամ էս ուր եկանք, ուր ենք գնում:

-Մեր տունն ենք գնում էլի»:

Գեղարվեստական խոսքում առանց հեղինակային միջամտության երկխոսություններ սովորաբար քիչ են գործածվում: Հաճախ երկխոսությանն իր վերաբերմունքով խառնվում է հեղինակը, ներկայացնում հերոսների իրավիճակը, ուղղակի խոսքն ընդմիջում լրացուցիչ ծանոթագրություններով.

«Ի՞նչ պատահեց,-բացականչեցին նրանք՝ միաժամանակ աչքերը տրորելով:

-Ջուրը կտրվեց, քարը կանգ առավ,-պատասխանեց Ասոն՝ սաստիկ հուզված և դողալով, հանցանքի մեջ բռնվածի պես»:

Երկխոսություն կարող է իրականանալ մահացած մարդու հետ: Վարդգես Պետրոսյանի «Կեսգիշերային զրույց» պատմվածքի հերոսը բարձրաձայն զրուցում է վաղամեռիկ հոր

⁴ Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, *Հայոց լեզու*, 2-րդ մաս, շարահյուսություն, Ե., 1975, էջ 119:

⁵ Գ. Զոհրապ, *Երկեր*, Ե., 1989, էջ 448:

⁶ Ռ. Մկրտչյան, *Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն*, Ե., 1991, էջ 229:

⁷ Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 433:

հետ. «Քո կենացը, հայրի՛կ: ...Դու շատ շուտ գնացիր, ես նույնիսկ չհասկացա, որ դու գնում ես: Վեց տարին կարճ ճանապարհ էր մահը հասկանալու համար» (ՎՊ):

Այս միակողմանի երկխոսության մեջ, թվում է, գրուցակիցը ներկա է: Այդ պահին որդին գործում է նաև հոր փոխարեն. «Մեր բաժակները զնգում են, ես կում-կում խմում եմ նախ իմ գինին, հետո հորս» (ՎՊ): Զրույցի միջոցով բացահայտվում է հերոսի ներաշխարհը:

Ինչպես գրում է Մ. Բախտինը, «ամեն մի ռեպլիկ մենախոսություն է, ամեն մի մենախոսություն մեծ երկխոսության ռեպլիկ»:

Հայաստանի նախկին գավառներում՝ մասնավորապես Սյունյաց աշխարհում, տարածված են եղել հարսի և փեսայի, ինչպես նաև երկու խնամիների միջև տեղի ունեցող հարսանեկան երգեր: Տեղի է ունենում երկխոսություն երգի միջոցով: Մ. Խանգաղյանի «Հողը» վեպում մեջբերված է «Գալ մի, կգամ» նշանախոսի երգը:

բ) մարդու և իր միջև (երկփեղկված) (Ս. Կապուտիկյան, «Երկխոսություն իմ և իմ միջև»): Հայտնի փիլիսոփա Կիրկեգորը գրել է. «Ես շատ եմ խոսել ինքս ինձ հետ: Ես համոզվեցի, որ իմ շրջապատի ամենահետաքրքիր մարդը ես եմ»: Հոգեբան Կուչինսկին գտնում է, որ մարդու հաղորդակցությունն ինքն իր հետ «իսկական երկխոսություն է»:

գ) մարդու և կենդանու միջև (Ա. Բակունց, «Սպիտակ ձին», Հ. Մաթևոսյան, «Գումեշը»),

դ) մարդու և ոչ շնչավոր էակների միջև (Հ. Թումանյան, «Խելոքն ու հիմարը», Մ. Գալշոյան, «Միայնակ ծառը»),

ե) ոչ բանական էակների միջև (այլաբանորեն) («Աղվեսը, գայլը և առյուծը» հրաշապատում հեքիաթ):

Գեղարվեստական արձակը կառուցվում է այնպիսի յուրահատուկ երկխոսություններով, ինչպիսիք են ներքին երկխոսությունը, միակողմանի երկխոսությունը, անպատասխան երկխոսությունը, պատասխանը ժեստով երկխոսությունը և այլն¹⁰: Մարդկանց միջև խոսակցությունը երբեմն կարող է ընթանալ ներքին խոսքի ձևով՝ առանց բարձրաձայն արտահայտվելու: Օրինակ՝ Բենիկ Սեյրանյանի «Ճամփաներ և ճակատագրեր» վեպի հինգերորդ գլխում հեղինակը ներկայացնում է մոր և որդու մտքի խոսքը, որը ներքին խոսքի յուրահատուկ դրսևորում է: Որդին մտքում խոսում է մոր հետ, մայրը՝ որդու: Եվ այդ ամենը ներկայացվում է ընթերցողին:

Գեղարվեստական խոսքը միատարր չէ, և նրա տարբեր ժանրերում երկխոսությունը հանդես է գալիս տարբեր յուրահատկություններով: Երկխոսությունը՝ իբրև գեղարվեստական հնար, հանդես է գալիս նաև բանաստեղծական խոսքում (օրինակ՝ Հ. Շիրազի «Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք»):

Գրական բանավեճերը, գաղափարական տարաձայնությունները կարող են ուրույն արտահայտություն ունենալ գեղարվեստական խոսքում՝ բանաստեղծական երկխոսության տեսքով: Այսպիսի երկխոսություններ են կայացել աշուղ Ջիվանու և Ա. Իսահակյանի միջև: Բանաստեղծական «թաքուն» երկխոսություն է կայացել նաև Ա. Իսահակյանի և Հ. Շիրազի

⁸ *Вопросы литературы*, н.10, 1975, էջ 139.

⁹ Г. Кучинский, *Психология внутреннего диалога*, Мунск, 1988, с. 24.

¹⁰ Երկխոսության տեսակների մասին ավելի մանրամասն տե՛ս **Ա. Գալստյան**, *Երկխոսությունը ժամանակակից հայերենում*, Ե. 2003, էջ 13-57:

միջև: «Սրիկա է նա, ով հայր է լինում» նախադասությանը հակադրված է «Սրիկա է նա, ով հայր չի լինում» նախադասությունը: Ուրույն բանաստեղծական երկխոսություններ են Գևորգ Հակոբյանի «Քելե, լառ» և Ս. Կապուտիկյանի համանուն բանաստեղծությունները:

Երկխոսության կառուցվածքում առանձնանում է դիմելաձևը, որից պարզվում է խոսողի և խոսակցի փոխհարաբերությունը, նրանց մտերմության, հարգանքի աստիճանը: Մտերմիկ, բարեկամական զրույցի դիմելաձևը, անշուշտ, տարբերվում է պաշտոնական դիմելաձևից: «Դուք» դերանունը «դու» դերանվան իմաստով է գործածվում հարգանքի և քաղաքավարության դիմումի դեպքերում, որը ոճական հնար է¹¹: Այս առումով հետաքրքիր է գրականագետ Գ. Անանյանի խոսքը՝ ուղղված բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանին. «Ինձ թվում էր ինչպես մեր առտնին հանդիպումների ժամանակ, այսօր էլ հեշտ կլինի մեր զրույցը: Բայց խոստովանեմ, կաշկանդված եմ, նույնիսկ չգիտեմ՝ ինչպես դիմել հոբեյարիդ, դու-ով, դուք-ով, Տիկին Սիլվա ասեմ, Սիլվա ջան... Ախր, զրույցը պաշտոնական է, թերթում պիտի տպագրվի: Այս դեպքում հարմար է, որ ամենայն հայոց բանաստեղծուհի կոչեմ... » (ՄԿ):

Զրույցի ընթացքում խոսակիցը իր մասին խոսելիս կարող է օգտագործել նաև «մենք» ձևը, որը մարդու հոգեբանության յուրօրինակ դրսևորում է: Օր.՝ Հ. Մաթևոսյանի «Տերը» վիպակի գլխավոր հերոսը՝ Ռոստոմ Մամիկոնյանը, իր մասին խոսելիս «մենք» է օգտագործում, որն ինքնամեծարանքի արտահայտություն է:

Երկխոսությունը կարող է լինել նաև անպատասխան՝ ա-ն ասաց (հարցրեց), Բ-ն լռեց, այսպես՝ «-Հայրի՛կ, - աղջկա ձայնը զրնգում էր, բայց հայրը չպատասխանեց» (ՎՊ):

Լռությունը կարող է լինել

ա) համաձայնության նշան.

«-Ուզո՞ւմ ես գալ ինձ հետ, - ասաց Թաթուլը:

Մարանը համաձայն էր, բայց ոչինչ չպատասխանեց»:

բ) անհամաձայնության նշան.

«-Փախչենք, փախչենք, Մարգարի՛տ, հավատա ինձ, դա լավագույն էլքն է:

Պատասխանի փոխարեն նա երկու ձեռքս բռնեց և նայում է դեմքիս լռությամբ:

-Ո՞ւր փախչենք, մարդ ինքն իրենից ինչպե՞ս կարող է փախչել» (ԱԱ):

գ) չկողմնորոշվելու նշան.

«-Ախր, ինչո՞ւ ես թողել՝ եզները հարևանի արտը տրորեն:

Երեխան լուռ էր, գլուխը քաշ ձգած» (ԱԱ):

Խոսակիցը կարող է խոսողին միայն ժեստով պատասխանել՝ ձեռքի և գլխի շարժումներով: Այս դեպքում հարցն առաջարկվում է, իսկ պատասխանը տրվում է անձայն՝ դիմախաղի կամ ձեռքի շարժումների միջոցով, որոնք համարվում են երկխոսության արտաքին տեսողական բաղադրիչներ:

Այսպիսով՝ գեղարվեստական խոսքում երկխոսությունը կերպարների բնութագրման, համոզմունքների արտահայտման, սյուժեի զարգացման, դեպքերը նկարագրելու միջոցներից է:

¹¹ Իր ծագման ժամանակ այն ոճական հնար չի եղել: Հին Հռոմում եռապետության իշխանության ժամանակ երեք տիրակալներին դիմողները դուք-ով էին դիմում: Հետագայում այս հոգնակի դիմելաձևը տարածվեց իբրև կիրթ, հարգալից խոսելաձև:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, շարահյուսություն, Ե., 1975:
2. Գալստյան Ա., Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Ե., 2003:
3. Զոհրապ Գ., Երկեր, Ե., 1989:
4. Խաչատրյան Գ., Երկխոսությունները «Սասնա ծռեր» էպոսում, Պատմաբանասիրական հանդես, հ. 3, 2022:
5. Խլղաթյան Ֆ., Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Ե., 1988:
6. Սկրոյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1991:
7. Պապոյան Ա., Բաղդիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003:
8. Введенская Л., Павлова Л., Культура и искусство речи, Ростов на Дону, 1996.
9. Вопросы литературы, н.10, М., 1975.
10. Кучинский Г., Психология внутреннего диалога, Мунск, 1988.

Համառոտագրություն

ԱԱ-Ավետիս Ահարոնյան
ՄԿ-Միլվա Կապուտիկյան
ՎՊ-Վարդգես Պետրոսյան

Galstyan Ashot - Dialogue in Literary Speech.- The main form of human communication is verbal activity, in which dialogue plays a major role. Dialogue, whose simplest form is conversation, takes place when two or more people participate in it. Dialogue is a complex structure, usually composed of direct quotations and authorial speech. It is an important component of literary works.

In literary speech, dialogue can occur between people talking to each other, as well as between a person and themselves. Literary prose is also built upon unique forms of dialogue such as internal dialogue, one-sided dialogue, unanswered dialogue, dialogue answered through gesture, and so on.

Key words: dialogue, monologue, literary speech, author, types of dialogue, gesture, character.

Galstyan Ashot, Dean of the Faculty of Philology at Khachatur Abovian Armenian State Pedagogical University, Doctor of Philological Sciences, Professor.

Галстян Ашот - Диалог в художественной речи.- Основной формой человеческой коммуникации является речевая деятельность, в которой большую роль играет диалог. Диалог, простой формой которого является беседа, происходит, если в нем участвуют два или более человека. Диалог представляет собой сложную структуру, в которой обычно сочетаются прямая речь и слова автора.

Диалог является важной составной частью художественного произведения. В художественной речи диалог может происходить между людьми, которые общаются друг с другом, а также между человеком и самим собой. Художественная проза также строится на таких особых формах диалога, как внутренний диалог, односторонний диалог, диалог без ответа, диалог с ответом в виде жеста и др.

Ключевые слова: диалог, монолог, художественная речь, автор, виды диалога, жест, персонаж.

Галстян Ашот, декан филологического факультета Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, доктор филологических наук, профессор.

Գյուլգառյան Դավիթ

բանասիրական գիտությունների թեկնածու,
Վանաձորի պետական համալսարանի
հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
davitgiulzdyan@gmail.com

Բանալի բառեր. գրական լեզու, լեզվական կացություն, լեզվի կանոնարկում, հանրալեզվաբանություն, հոգևոր-արարչագործ ուժ, գրականամերձ համագործածական հայերեն, հոլովման և խոնարհման համակարգեր

Նախաբան

Յուրաքանչյուր պետության կայացած լինելու-չլինելու վառ վկայություններից մեկը նրա որդեգրած լեզվաքաղաքականությունն է, որի արդյունքն ակնբախ է ամեն մի գիտակից անձի համար: Բավական է միայն, որ թե՛ տեղացին, թե՛ օտարերկրացին մի հայացք նետի տվյալ երկրի քաղաքների ցուցանակներին ու գովազդերին, և պատկերը լիովին պարզ կլինի: Լեզվաքաղաքականությունը մի բաժինն է հանրալեզվաբանության, որը զարգացման մեծ հեռանկար ունի Հայաստանում, որքան էլ տարօրինակ լինի, գոնե օրենսդրական խախտումների առատության բերումով: Թե՛ այս իրողությունը, թե՛ այն հանգամանքը, որ ժամանակ առ ժամանակ իշխանական մարմինները կամ պատգամավորական խմբակցությունները, հայերենից բացի, այս կան այն օտար լեզվին ևս պաշտոնական կարգավիճակ հատկացնելու օրենսդրական նախաձեռնությամբ են հանդես գալիս, հուշում են, որ իրականում ո՛չ թե մեր պետությունն է լեզվաքաղաքականություն իրականացնում, այլ այդպիսի քաղաքականություն իրականացնում են պետության նկատմամբ... Հատկապես այս նկատառումներով խիստ ցանկալի է հանրալեզվաբանության զարգացվածությունը մեր իրականության մեջ, որովհետև լեզվաբանական այդ միջգիտակարգը կարող է նպաստել քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Հանրալեզվաբանության բաժիններից մեկն է նաև լեզվաշինարարությունը՝ գրական լեզվի հնարավոր միօրինակությունն ու աներերությունն ապահովող կանոնարկման հեռանկարով: Ահա այս խնդիրներին ենք անդրադարձել սույն աշխատանքում, որի նորույթը տակավին Վ. Ֆոն Հումբոլդտից եկող պահանջն է՝ լեզվի արարչագործ ուժի բացահայտմանը մղված, իրույթների նորովի գնահատմամբ: Արդիականությունն ենք համարում Հայաստանում եղած լեզվական անմխիթար կացության չեզոքացման հրատապությունը՝ գիտական փաստարկումներով: Աշխատանքը շարադրված է նկարագրական և տրամախոսական մեթոդներով:

Ակնարկ մերօրյա լեզվական կացության

Ծանր է, ի՛նչ խոսք, ժամանակակիցն ու վկան լինելը Հայաստանի մերօրյա նվաստացուցիչ սահմանախախտումների և հայրենական տարածքների կորստյան: Բայց պարտավոր

1 Տե՛ս **Roger T. Bell**, *Sociolinguistics – goals, approaches and problems*. London: Batsford, 1976, էջք 200-226 (առավել հաջող այս աշխատության մեջ են վեր հանված լեզվաքաղաքականության խնդիրները):

ենք խոստովանել, որ այդ խախտումները հետևանք են, ի թիվս այլ հանգամանքների, նաև՝ լեզվի սահմանախախտման, որը շատ ավելի վաղ է սկսվել՝ այդպես էլ չկայացած մեր անկախության սկզբնատարիներից՝ գրեթե ՀՀ Լեզվի օրենքի ընդունմանը զուգընթաց (1993 թ.): Օրենքով ամրագրված բոլոր դրույթներն անխտիր ոտնահարված են, ասել է՝ ոտնահարված է ՀՀ Սահմանադրությունը՝ հաստված հայերենի պետական կարգավիճակով:

Տեղի և ժամանակի սդրությունը թույլ չի տալիս արժանի գնահատական տալ մարդկային տրամաբանության մեջ չտեղավորվող բոլոր օրենքների ոտնահարմամբ օտարագիր գովազդների տարափին տրվելու մեր՝ համազգային մակարդակի ստրկահաճության հասած չտեսությանը: Միայն ասենք, որ սա ևս հետևանք է գործողությունների այն շարքի, որ հանգեցրել է մեզնում դրանով աշխարհին ճանաչելի դառնալու վտանգավոր մտայնությանը, որն իրականում այլ բան չէ, եթե ոչ հանրությանը բթացման ապահովմամբ ուժացման մղող ստորակայության բարդույթ:

Եթե նշվածներին էլ ավելացնենք հեռուստատեսությամբ հեռարձակվող սերիալային վայրենախոսությունը, այդ վայրենախոսությանը ոչնչով չզիջող, պաշտոնական թողտվության հասած գոեհկաբանությունն իշխանական տիրույթներում, ցածրորակ երաժշտության ու երգեցողության տարփողումը, այլև կրթության բարձրագույն գերատեսչության ղեկավարի «փիլիսոփայությունը», թե «հայերնասիրության կոնցեպցիան փուչիկ է»², «հայրենասիրությունը շատ վտանգավոր գաղափար է»³, կարելի կլինի կազմել հուսակտուր անող մեր տխուր իրականության ամբողջական պատկերի ուրվագիծը:

Սրանցից գատ, որոնց հնարավոր չեզոքացումը, որքան էլ ջանք թափվի, վեր է սոսկ լեզվաբանական հանրության ուժերից՝ կան խորքային մարտահրավերներ, որոնց սպառնիչ պատասխանը հենց այդ հանրությունն է ի գորու տալու: Դրանցից մեկը բարբառային «ա» օժանդակ բային գրական լեզվում քաղաքացիություն հատկացնելու քրտնամխած փորձերին տրվելիք արձագանքն է լինելու: Չէինք անդրադառնա սրան, եթե փորձերի հեղինակները գրական շրջանակի մարդիկ չլինեին: Ինչքան պիտի գրողը լեզվական հոստառությունից զուրկ և ազգի ու լեզվի մշակույթի պատմությունից անտեղյակ լինի, որ «այախոսությունը» գրական գոյաձևում արդարացնելու համար վկայակոչի Խաչատուր Աբովյանին: Խ. Աբովյանը հանգամանքների բերումով հրատապ խնդիր ուներ լուծելու՝ ի տես ազգային դիմադրողունակության պահպանման և պայքարի պատրաստման: Նա ինքն է իր «Հառաջաբանում» նոր ձևավորվող լեզվի ապագայի հույսեր կապում՝ այքի առաջ ազգանվեր հնարավոր մշակների գոյությունը: Տերյանն ու Թումանյանն են հրապարակային բանավեճեր մղել, և ի պատիվ Թումանյանի՝ վերջինս ընդունել է տերյանական ճշմարտացիությունը⁴: Մի թե այնքան ենք հետընթաց ապրել, որ մերօրյա սպասելիքը հենց Աբովյանի «Վերք»-ի լեզվական մակարդակն է լինելու, թե՞ հատուկ է կազմակերպվում այդ հետընթացը... Չավեշտալի է այն, որ մտավոր օժտվածությամբ անձնանց գրական լեզուն հարգելու հուշումներ անելիս նրանք,

² <https://www.youtube.com/watch?v=ky0oPkYfGMg&t=812s>

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն*, Ե., ԵՊՀ հրատ., 1978, էջք 261-275, 406-421:

ասես պայմանավորված, համահունչ նենգությամբ են հակադարձում: Մի քանիսից լսել ենք այս հարցումը. «Ի՞նչ ունեք Դուք արարատյան բարբառի դեմ»...

Նախ՝ այս աբովյանիկները տեղյակ էլ չեն, որ իրենց խոսածն ու գրածն ամեննին էլ Արարատյան բարբառը չէ: Ապա՝ ի՞նչ ունեն նրանք Կարնո, Պոլսի ու այլ բարբառների և գրական արևմտահայերենի դեմ: Վերջապես՝ գրո՞ղը տանի, ի՞նչ ունեն գրական արևելահայերենի՞ դեմ... Մի՞թե այնքան միամիտ են, որ կարծեն, թե Տերյանի արքենի հայերենը թողած՝ իրենց «համարձակ նորարարությանն» ենք տրվելու:

Ի դեպ, նույնը վերաբերում է գրողի կերպարակերտման հմտությանը: Հաճախ ենք լսում, թե այսպես կոչված ցածր խավի կերպարները չեն կարող գրական լեզվով հաղորդակցվել: Հասկանալի է՝ համապատասխան ոճավորում է անհրաժեշտ, միայն թե դա ևս պիտի չափավոր լինի, և դրա պահանջը արվեստի պայմանականությունն է տալիս: Եթե բնականության հետից ընկնենք, դժվար չէ որսալ, որ միայն ցածր խավը չէ, որ գրական լեզվով չի հաղորդակցվում: Ուրեմն ի՞նչ են առաջարկում «բնականության» ջատագովները: Տեղյա՞կ են արդյոք, թե Շիրվանզադեի ժամանակներում ինչպես էին միմյանց բնականորեն սեր խոստովանում երիտասարդները: Հազիվ թե գրական լիներ այդ խոստովանությունը, որովհետև այդ ժամանակի լեզվավիճակը պակաս անմխիթար չէր: Բայց Շիրվանզադեի բոլոր կերպարները գրական լեզվով են «սիրում իրար», իսկ երբ այդ սերը բեմ էր բարձրանում, հանդիսատեսի ականջն ընտելանում էր գրական խոսքին, և դրանով էր տարածվում գրական լեզուն: Այո՛, գրական լեզվին պիտի ընտելացնե՛լ մարդկանց, ինչպես որ ընտելացած էինք մի քանի տասնամյակ առաջ, և կար լեզվի համար մի շատ կարևոր բան: Ձևավորվել էր **գրականամերձ համագործածական հայերեն**: Չափազանց կարևոր միջնօղակ է գրականամերձ գոյածը, որովհետև սրա՛ միջնորդությամբ է գրական լեզուն սնունդ քաղում բարբառներից: Հիմա չկա այդ միջնօղակը, որովհետև լայն գործառականությունից մեծ չափով գրական լեզուն է պարպված, իսկ նշված միջնօղակի չգոյությամբ գրական լեզվի զարգացում կոչվածը շեղվում է դեպի պարզունակություն, որի բերելիք վտանգը քչերն են նկատում:

Վ. ֆոն Հումբոլդտի պահանջը

Ընդհանուր լեզվաբանության հիմնադիր Վիլհելմ ֆոն Հումբոլդտը, ի մի բերելով և վերախմբավորելով լեզուների կառուցատիպերը, այն տեսակետն է հայտնում, թե չորս տիպերից առավելագույն կատարելության հասածը լեզուների թեքական տիպն է: Բազմաթիվ քննադատությունների է արժանացել այս տեսակետը, իսկ խորհրդային տարածքում հատկապես պիտի նսեմացվեր «բուժուական» գիտության ներկայացուցիչը: Ի տարբերություն բազմաթիվ լեզվաբանների՝ Հումբոլդտը՝ իր քննախոսությամբ, ենթակա չէ մակերեսային տրամաբանության կանոններով առաջնորդվող քննադատական բնութագրումների: Նրա մեթոդաբանությունը սահման չճանաչող, սահմանի հաղթահարման ձգտող տրամախոսությունն է, որով լեզվի յուրաքանչյուր միավոր՝ ներառյալ նվազագույնը, նուրբ թելերով միակցված լինելով թե՛ մյուսներին, թե՛ համակարգին ամբողջությամբ, ունի այն վեհ դերակատարումը, որով բացահայտելի է այդ լեզուն կրող ժողովրդի հոգևոր-արարչագործ ուժը, և

⁵ Տե՛ս **В. фон Гумбольдт**, *Избранные труды по языкознанию*, М., «Прогресс», 1984, էջ126:

լեզվաբանի վերջնանպատակն այդ ուժի բացահայտումը պիտի լինի, այլապես ավելորդ է լեզվաբանական ամեն մի մեկնաբանություն, որովհետև ինքնանպատակ մի բան է դառնում: Հիմնելով ընդհանուր լեզվաբանությունը որպես փիլիսոփայություն՝ Հումբոլդտն իրենից հետո լեզուն ուսումնասիրողների առջև այնպիսի պահանջներ է դրել, որոնք գրեթե անկատար են մնացել, թեև ինքը իր պահանջները կետ առ կետ իրագործել է՝ բացահայտելով հիշատակած արարչագործ կամ հոգևոր ուժը, այսինքն՝ հետազոտության կերպն է հետազոտողների ափի մեջ դրել, որոնց մեծ մասը, սակայն, այդպես էլ անհաղորդ է մնացել դրան: Հենց այդ ուժի գործառնության չափաբանությամբ է գնահատել լեզուները, և դրա՝ վրա է հիմնված նրա համոզումը: Եվ, իսկապես, մնացած կառուցատիպերը դուրսով վերծանելի են: Հեշտ է մատնանշել անջատական տիպի մեջ քերականական մասնիկների առկայությունը, որոնցով բառաձևեր են կազմվում: Հեշտ է նաև կցված մասնիկների անջատումը: Մինչև իսկ հեշտ է ներմարմնավորյալ լեզուների մեջ արմատներին ներանցված ընդհանուր մասնիկների մտովի անջատումը: Մինչդեռ ներքին փոփոխությամբ բառաձևերն անջատելի չեն, լեզվի ողջ խոհականությունն է ննջած այդ ձևերում, և ինքնամփոփ են դրանք՝ հարագատ ինքնամփոփ խոհերի տրված իր լեզվակիրներին: Բարդ մտածողության արգասիք է ներքին թեքումը, իսկ լեզուն հենց մտածողությունն է, նաև նրա կառուցաձևն ու տարազը, որ մինչև իսկ աշխարհայացքի ընդհանրություն է ապահովում իրենով հաղորդակցվողների համար: Եվ սրանով է, որ Հումբոլդտն ուղղակի նույնացնում է լեզուն ու ազգային ոգին, լեզուն համարում ճիշտ այդ ոգու արտահայտությունը:

Հուլավման համակարգի որոշ առանձնահատկությունների գնահատման խնդիրը

Արևելահայերենի հոլովման համակարգին հատուկ մի երևույթ, իրոք, գնալով ընդհանրանալու միտում ունի: Դա «Ի» հոլովման տիրույթի աստիճանական ընդլայնումն է: Միայն թե կարծես ամեն ինչ արվում է այդ ընթացքն արագացնելու համար: Այսօր պաշտոնական հաղորդագրություններում գրեթե վերացված է «Ու» հոլովման բառերի՝ նույն հոլովիչով դրսևորման հնարավորությունը: Անտանելի է անընդհատ «Զելենսկիի», «Մահակաշվիլիի», մինչև իսկ «այգիի», ոսկիի», «Լոռիի», «Մեղրիի», «Ալավերդիի» շինծու բառաձևերի հորանջին ականջ դնելը: Մովորական է դարձել «այգով», «այգում», «Լոռում» ձևերի փոխարեն դրանց անհնչունափոխ հիմքերի գործածությունը՝ «այգիով», «այգիում», «Լոռիում»: Կարելի է, իհարկե, առարկել դժգոհությանս՝ փաստելով դրանց տարածվածությունը, բայց բանն այն է, որ հատուկ կազմակերպվեց այդ տարածվածությունը՝ հեռուստահաղորդավարներին լեզվական թույլ հոտառությամբ անձանց տված խորհուրդներով: Չգիտեմ՝ եթե իմանային այդ խորհրդատուները, որ չարագործությամբ են զբաղված, արդյո՞ք կվարվեին այդպես: Իսկ այդպեսն այլ բան չէ, քան գրական հայերենի կառուցատիպի մղում դեպի թրքացում, այն է՝ պարզունակ կցականության հաստատում մեր լեզվում: Վա՛յ մեզ, եթե «այգում» ձևից հրաժարվելու «հիմնավորում» ենք համարում «այգի» բառապատկերի կորուստը: Սրանով հրաժարվում ենք այդ պատկերը քողարկմամբ ընկալելու վեհությունից՝ վանելով մեզնից մեր լեզվին հատուկ համակարգային խորհրդադաշտը: Նույնը վերաբերում է «Ան» հոլովման

⁶ Տե՛ս **В. фон Гумбольдт**, *Избранные труды по языкознанию*, էջ 46-47:

⁷ Տե՛ս **В. фон Гумбольдт**, *Избранные труды по языкознанию*, էջ 68:

բառերին, որոնք, իհարկե, ոճական նկատառումներով կարող են «Ի» հոլովման դրսևորումներ էլ ունենալ, ինչպես՝ կառուցման || կառուցումի, ոգորմամբ || ոգորումով ևլն: Բայց հրաժարման միտում է նկատվում «կառուցմամբ» տիպի գործիականի ձևերից («կառուցումով»), որը տարածվում է նույնիսկ «Ա» ներքին հոլովման բառերի վրա՝ «խաղաղությունով»: Անհնչյունափոխ թեք ձևեր են սկսել կազմվել «բժիշկ» և «երաժիշտ» բառերի համար՝ *բժիշկի, երաժիշտի*: Եթե սկսի գործել համաբանության սկզբունքը, համատարած բնույթ կընդունի կցականությունը: Թեքականությունը պարզունակ կցականության է վերածվում հավանաբար մեր լեզվակիրների՝ գնալով մտածողության պարզունակացման համաչափությամբ...

Համակարգի վրա ազդող բերված տեղաշարժերի պատճառը ոչ այնքան լեզվի բնականոն շարժունության և փոփոխությունների հակվածությունն է, որքան լեզվաբանների՝ լեզվի էությունը սուկ նրա արտաքին ձևով գնահատելու մոլորությունը, որը հավակնում է լեզվաբանական ընդհանրացման, այն է՝ լեզուները ձգտում են պարզության: Սա ճշմարիտ կլիներ, թե չանտեսվեր այս ձևակերպման հակադիր բևեռը, այսինքն՝ լեզուն գնահատվեր ոչ միայն իր արտաքին, այլև ներքին ձևով, որն այդ լեզվի բովանդակությունն արտաքին ձևին կապող իմաստային կառուցվածքն է:

Խոնարհման համակարգի որոշ առանձնահատկությունների գնահատման խնդիրը

Գրական արևելահայերենի խոնարհման համակարգում ամենից դյուրավ որսալի փոփոխությունը արգելական հրամայականի կազմաբանության տիրույթում է, որը, իրոք, միօրինակության է հասել: Այսօր արգելականի բոլոր ձևերը կազմվում են դրական ձևերի հիմքով՝ «մի՛» մասնիկով ժխտմամբ: Հենց այս կազմաբանությունն էլ մատուցվում է դպրոցում որպես կանոնական իրողություն: Միայն թե այդ միօրինակությունից դուրս մնացած «Ա» խոնարման պարզ բայերի հոգնակի թվի, ինչպես նաև սուկածանցավոր և պատճառական բայերի թե՛ եզակի, թե՛ հոգնակի արգելականի երբեմնի գործուն ձևերը չի կարելի անտեսել և պաշտոնապես վտարել խոնարհման համակարգից, ինչ է թե մտայնություն կա լեզվաբանական հանրության մեջ, թե զուգաձևությունները թուլացնում են կանոնի ուժը: Անպայման պետք է հատուկ կետով մատուցվի ներքոբերյալ ձևերի բազմությունը՝ որպես արտահայտություն վսեմ ոճի.

մի՛ գնաք

մի՛ մոտենա, մի՛ մոտենաք

մի՛ բարձրանա, մի՛ բարձրանաք

մի՛ հասնիր, մի՛ հասնեք

մի՛ թռչիր, մի՛ թռչեք

մի՛ մոտեցնիր, մի՛ մոտեցնեք

մի՛ բարձրացնիր, մի՛ բարձրացնեք

մի՛ հասցնիր, մի՛ հասցնեք

մի՛ թոցնիր, մի՛ թոցնեք

Շատ կարևոր է, որ լեզվակիրը դպրոցական նստարանից կարողանա ընկալել լեզվական իրակությունների ոճական շերտավորվածության յուրահատկությունները: Իսկ այն, որ

8 Տե՛ս **В. фон Гумбольдт**, *Избранные труды по языкознанию*, էջք 100-107:

հարացույցով բերված ձևերը վսեմ ոճի են, նույնպես պայմանավորված է դրանց թեքական բնույթով՝ ի հակադրություն միօրինակությամբ դրսևորվող վերլուծական կցականության (հմմտ. *գնացե՛ք – մի՛ գնացեք*):

Ինչ խոսք, լեզվի մեջ վսեմ ոճի կիրարկման հիմնական տիրույթը գերազանցապես գեղարվեստական գրականությունը պիտի լիներ, որ հատկապես երեխան տարբերակների համեմատության հնարավորություն, դրանով էլ ճաշակ ունենար, սակայն խորքային իմաստով արվեստավոր խոսքին ևս կարոտ ենք մեր օրերում...

Տերմինակազմության և տերմինահամակարգի գնահատման խնդիրը

Բառերի տերմինային շերտը ճշգրտորեն սահմանելի հասկացություն արտահայտող բառերի ու բառակապակցությունների պատկառելի զանգված է ներկայացնում՝ ընդգրկելով գիտության, տեխնիկայի, արվեստի, տնտեսության, արհեստի, քաղաքական, գործարարության, վարչական և այլ ոլորտների հազարավոր տերմիններ ու անվանակարգություններ:

Քանի որ տերմինաբանության զարգացման գործում գոնե վերջին 70 տարում էական դերակատարություն ունեն լեզվաբանները, հարկ ենք համարում դիտարկումներն սկսել լեզվաբանության մեջ կցական եղանակով տերմինաբանական նորակազմություններին առավելություն տալու որոշ միտումների գնահատմամբ: Դրանցից մեկը վերաբերում է *-ույթ*, մյուսը՝ *-ույթուն* ածացի հնչափոխական իրացվածությանը կամ չիրացվածությանը, որոնց հնչափոխելի միավորներն են [ույ] և [յու] երկբարբառները⁹: Անցյալ դարի 60-ականների վերջից սկսած՝ մեր լեզվաբաններն սկսում են *-ույթ*-ով վերջավորվող բառերի ածանցումն ու բարդումը կազմել [ույ] երկբարբառի պահպանմամբ՝ առանց հնչափոխելու, ինչպես՝ *հնչույթային*, *հչույթակազմ*, *ձնույթային*, *շարույթային*, *հիմնույթային*, *նշույթավոր* ևլն: Պատճառաբանությունն այն է, թե նոր սերունդն է անհնչյունափոխ ձևերը նախընտրում: Այս տեսակետի առաջնային ջատագովը թերևս Է. Աղայանն էր, որի շարադրանքում և նույնիսկ գրքի վերջի բառացանկում խախտված է միօրինակությունը¹⁰: Ի տարբերություն բերված (և չբերված) բազմաթիվ այսպիսի կազմությունների՝ «արժույթ» բառով բաղադրությունները հետևողականորեն բացառապես հնչյունափոխ ձևով են դրսևորված՝ *արժույթային*, *արժույթայնություն*¹¹: Եվ ահա Է. Աղայանի ժամանակակից և նրան հաջորդող լեզվաբանները, ուշադրություն չդարձնելով Է. Աղայանի՝ «արժույթ»-ով բաղադրված միավորների անհնչյունափոխ գործածությանը, այդ բառի բաղադրությունները ևս սկսեցին գործածել անհնչյունափոխ ձևով՝ *արժույթային*, *արժույթայնություն*: Է. Աղայանը մեր լավագույն լեզվաբաններից է՝ հայտնի նաև տերմինակերտման իր վարպետությամբ: Մակայն նկատել պիտի տանք, որ նա վրիպել է այս հարցում: Վրիպանքը ո՛չ թե միօրինակության խախտմանն է վերաբերում,

⁹ Սկզբունքորեն ենք հրաժարվում «երկհնչյուն» կեղծգիտական անվանումից, որի շրջանառությունն սկսվել է այն բանից հետո, երբ Մանուկ Աբեղյանն արձանագրել է, թե աշխարհաբարը չի պահպանել հին հայերենի երկբարբառների համակարգը: Սրանից լեզվաբաններն այն եզրահանգման են եկել, թե աշխարհաբարում երկբարբառներ չկան: Մինչդեռ Մ Աբեղյանն ինքը իր հետազոտության մեջ արևելահայերենի համապատասխան միավորները քննելիս բացառապես «երկբարբառ» տերմինն է գործածում: Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., «Միտք», 1965, էջք 88-90:

¹⁰ Տե՛ս Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Ե., ՀՄՍՀ ԳԱ, 1967, էջք 380-381:

¹¹ Տե՛ս Է. Աղայան, անդ:

այլ լեզվական իրակությունների գործառնման գնահատմանը: Այն, որ նոր սերունդն իբր անհնչունափոխ ձևերն է նախընտրում, հերքվում է մի կարևոր փաստով: Անկախացումից անմիջապես հետո ֆինանսական նոր տերմին մտավ շրջանառության մեջ՝ *արժույթային տարադրամ*՝ *արժույթ* բաղադրիչի հնչունափոխ եղանակով: Տերմինը շրջանառեցին տնտեսագետները, և սա ապացույց է այն բանի, որ այդ կարգի բաղադրություններում շարունակում է գործել [ույ] > [ու] հնչունական օրենքը: Եվ այսօր մենք մի վիճակում ենք, երբ լայն գործառության դեպքում միևնույն բառերը հանդես են գալիս հնչունափոխ, լեզվաբանական գործառության դեպքում՝ անհնչունափոխ եղանակով: Եվ է. Աղայանի՝ «արժույթ»-ով անհնչունափոխ բաղադրությունները ևս վկայում են, որ ենթագիտակցորեն նրա ընկալման մեջ ևս գործում է նշված հնչունական օրենքը: Լեզվի վրա հնարավոր չէ բռնանալ, անգամ եթե նրա վրա ազդել փորձողը լեզվական նուրբ հոտառությամբ անհատն է: Հենց լեզվաբանների մեղքով երբեմնի միօրինակությունն անմիաօրինակության հանգեց: Առավել արտառոց է *-ություն* ածանցի անհնչունափոխ գոծածությունը բաղադրություններում, այն է՝ *հասկությունական*՝ *հասկությունական-ի* փոխարեն: Լեզվի՝ իբր ինքնապարզեցման միտումն այսպես գնահատելը վտանգավոր է նույնքան, որքան վերը նկատված հոլովման համակարգի՝ թեքականությունը թափով կցականության հանգեցնող միտումները: Ահնչունափոխ ձևերի պարտադրանքը ո՛չ թե պարզեցնում, այլ պարզունակացնում է լեզուն՝ զրկելով նրան թեքականության ինքնամփոփ խորհրդավորությունից:

Բոլոր ժողովուրդները չէ, որ գիտությունը սեփական լեզվով զարգացնելու հնարավորություն ունեն: Հայությունը դրա 1600-ամյա փորձառությունն ունի: Դեռևս 5-րդ դարում՝ գրերի գյուտին զուգահեռ, հայոց իրականության մեջ, շնորհիվ հայերենի բառակազմական ճկունության, Աստվածաշնչի, իմաստասիրական, տրամաբանական, գիտական տարաբնույթ երկերի առատ թարգմանությամբ հարյուրավոր նորակազմություններ են ի հայտ եկել, որոնց մեծ մասը, հետագայում անցնելով բառապաշարի գործուն շերտին, բազում դարերի քննությունն է բռնել: Նոր հասկացությունների անվանման համար հայերեն նոր բառեր ստեղծելու կարելիությունը տոկունություն է դրսևորել դարերում, և այսօր էլ հաջողությամբ շարունակվում է առավելապես ներքին միջոցներով տերմինաստեղծման գործունեությունը: Չնայած այս կարևոր ձեռքբերումներին՝ մեր իրականության մեջ երբեմն դժգոհություն է լինում առ այն, թե չարաշահում կա հայերենի մեջ ամեն նոր բան հայերեն ստեղծելու առումով: Պարտավոր ենք ասել, որ առնվազն տարօրինակ է այսպիսի վերաբերմունքը, և դրան վերջ կարող է տրվել, եթե համապատասխան մասնագետները՝ մշակութաբանները, հանրաբաններն ու լեզվաբանները, շահեկան ուսումնասիրություն կատարեն՝ վեր հանելով մեր մշակույթի գոնե մոտ ժամանակների պատմական ընթացքը՝ նաև իր խոտորումներով: Իսկ խոտոր մտայնության սկիզբը դրվել է խորհրդային տարիներին՝ ստալինյան շրջանում: Բանն այն է, որ անցյալ դարի 40-ական թվականների վերջերին Ստալինի հրամանագրով հանձնարարվում է ազգային լեզուներում քաղաքական և հեղափոխական նշանակությամբ հասկացությունների համար գործածել օտար անվանումներ, այսինքն (մասնավորելով մեր լեզվի վրա)՝ հայերեն «հեղափոխություն» բառի փոխարեն գործածել «ռևոլյուցիա», «հանրապետություն» բառի փոխարեն՝ «ռեսպուբլիկա», «սահմանադրություն» բառը փոխարինել

«կոնստիտուցիա» բառով, «կուսակցություն» բառը՝ «պարտիա»-ով, «խորհուրդ», «խորհրդային» բառերը՝ «սովետ»-ով ու «սովետական»-ով և այլն: Սա հակահամակարգային հրահանգ էր, որին, սակայն, արագորեն դրական արձագանք են տալիս ամենուրեք (վախի մթնոլորտ էր. հակառակվել չէր կարելի), և ցավալիորեն հրահանգի սահմաններն ընդլայնում են մեր մտավորականները. այդ հրահանգից հետո գիտության բոլոր ոլորտներում մինչև այդ հայերեն գործածվող բարեհունչ տերմինների զգալի մասը կամայականորեն փոխարինվում է օտար համարժեքներով: Հենց այդ շրջանից սկսած՝ գիտական մի մոլորություն է իր տեղն ամրացնում, ըստ որի՝ «միջազգային տերմինները» հարկ չկա թարգմանելու, քանի որ դրանք գործածվում են աշխարհի բազմաթիվ լեզուներում, և այդ գործածությունից որևէ լեզու վնաս չի կրում: Դյուրավ հերքելի պնդումներ են դրանք: Նախ՝ կեղծգիտական ըմբռնում է «միջազգային տերմին» ասածը՝ ոչինչ չասող: Յուրաքանչյուր բառ՝ ներառյալ տերմինը, եթե ստեղծված չէ ազգային լեզվով, ծագումնաբանորեն կարող է պատկանել միայն մեկ լեզվի, և տերմինը, թեկուզ բազմաթիվ լեզուներում գործածվելիս լինի, որևէ հիմք չի տալիս միջազգային համարվելու. եթե այն տվյալ ազգային լեզվով չի ստեղծվել, ուրեմն **փոխառություն** է. ոչինչ ավելի: Այս լեզվաբանության մեջ կա **անհատական-դինամիկ ձևի** ըմբռնումը¹², ըստ որի՝ լեզուները հարմարակված են սեփական կամ արտաքին միջոցներով լրացնելու իրենց անհրաժեշտ մուծումները: Համաձայն սրա՝ անգլերենի, ռուսերենի և բազմաթիվ այլ լեզուների անհատական-դինամիկ ձևը թելադրում է օտար տարրերը վերցնել պատրաստի ձևով, իսկ **հայերենի, գերմաներենի, պարսկերենի և այլ լեզուների նույն ձևի թելադրանքով այդ նույն տարրերը յուրացվում են թարգմանաբար**: Սա էլ՝ անհատական-դինամիկ ձևը, պայմանավորված է մի կողմից՝ լեզուների **ներքին ձևի** մղումով, մյուս կողմից՝ նրանց **գործունեությամբ (էներգեյա)**¹³: **Հիմք չկա, ուրեմն, մեր լեզվի ներքին և անհատական ձևերը ենթարկելու արտաքին ազդեցությունների փորձությանը**, այն էլ հետևողականորեն, ինչպես եղել է ստալինյան շրջանում, որը դեռ խորհրդային տարիներին՝ հետստալինյան ժամանակներում, մասամբ վերացել է: Նրանք, ովքեր կարծում են, թե «միջազգային» տերմինները թարգմանելը ճիշտ չէ, բռնանում են մեր **լեզվի ստեղծագործունակության** վրա: Մի՞թե հայերենի բառաստեղծման 1600-ամյա փորձառությունը սպառել է իրեն: Ճիշտ է այն, որ աշխարհի լեզուների զգալի մասը գործածում է «արիֆմետիկա», «ալգեբրա», «գեոմետրիա», «լոգիկա», «գեոլոգիա», «գեոդեզիա», «գեոգրաֆիա», «բիոլոգիա», «աստրոնոմիա», «ֆիլոլոգիա», «լինգվիստիկա», «մորֆոլոգիա», «լեքսիկոլոգիա», «պարադիգմա», «սինտաքսիս», «ֆորմուլա», «ֆոնեմա», «էլեմենտ», «բոտանիկա», «զոոլոգիա» և բազմաթիվ այլ անվանակարգություններ ու տերմիններ, բայց նշանակում է արդյոք, որ մենք պարտավոր ենք հրաժարվել հայահունչ **թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, տրամաբանություն, երկրաբանություն, երկրաբաշխություն, աշխարհագրություն, կենսաբանություն, աստղագիտություն, բանասիրություն, լեզվաբանություն, ձևաբանություն (նաև՝ կազմաբանություն), բառագիտություն, հարացույց, շարահյուսություն, բանաձև, հնչույթ, տարր, բուսաբանություն, կենդանաբանություն** բառերից: Կարծում ենք՝ պատասխանը պարզ է: Ի՞նչ պատահեց ուրեմն այսօր: Ասվածը չի

¹² Sté u Sté u В. фон Гумбольдт, նույն տեղում, էջք 58, 88:

¹³ Sté u В. фон Гумбольдт, նույն տեղում, էջք 67-68, 100, 108, 143, 206:

վերաբերում փոխառություններն առհասարակ մերժելուն. դրանց գոյությունն անխուսափելի է յուրաքանչյուր լեզվում, և մենք էլ մեր շարադրանքում հարկ եղած դեպքում դիմում ենք դրանց օգնությանը (հմմտ. հունարենից փոխառած «տերմին», «դինամիկ» բառերը): Բայց երբեք չպիտի բացառել փոխառությունները ևս ժամանակի ընթացքում հայերեն գտնված համարժեքներով փոխարինելու հնարավորությունը: Այդպես մի որոշ շրջան մեր լեզվում գործածվել և մասամբ շարունակում են գործածվել՝ 1. «սիստեմ», 2. «կուլտուրա», 3. «պոլիտեխնիկական», 4. «մենեջմենթ», 5. «դիրեկտոր», 6. «պոմիդոր», 7. «բադրիջան», 8. «կոնտինգենտ» (տարբեր իմաստներով), 9. «կոմպլեքս» (տարբեր իմաստներով), 10. «կոնտրաստ» (տարբեր իմաստներով), 11. «կոմպյուտեր», 12. «ինտերնետ», 13. «սոցիալական ցանց», 14. «կոնգրուենտ», 15. օնլայն և այլ օտար անվանումներ՝ որպես փոխառություններ, որոնց մեծ մասն անդարձ փոխարինվել, մի մասն էլ սկսում է փոխարինվել հայաբառ համարժեքներով, որոնք են՝ (նույն հաջորդականությամբ)՝ 1. *համակարգ*, 2. *մշակույթ*, 3. *ճարտարագիտական*, 4. *կառավարում*, 5. *տնօրեն*, 6. *լույիկ*, 7. *սմբուկ*, 8. *ա) հավաքակազմ, բ) քանակակազմ, գ) խմբակազմ, դ) քանակություն*, 9. *ա) համալիր, բ) բարդույթ*, 10. *ա) հակադրություն, բ) հանդիպադրություն*, 11. *համակարգիչ*, 12. *համացանց*, 13. *հանրացանց*, 14. *համընկնելի*, 15. *սոցանց*: Նշված իրողությունը հայերենի զարգացմանը հատուկ միանգամայն բնականոն ընթացք է, և «փոխառություն» տերմինն էլ, որը լեզվաբանությունը փոխ է առել ֆինանսական ոլորտից, հրաշալիորեն է արտահայտում համատիպ երևույթը՝ տարբեր լեզվական «աշխարհների» հարաբերությամբ. ինչպես ֆինանսական փոխառությունն է վերադարձ ենթադրում, այդպես էլ լեզվական օտար բառը¹⁴: Ինքնին հասկանալի է, որ ազգային լեզվով բառն առավել դյուրընկալելի է, և այլ կերպ լինել չի կարող: Թեև այս միտքը լրացուցիչ հիմնավորման կարիք չի զգում, բայց երևույթի գնահատման տեսնակյունից արժե խոսել մաթեմատիկական մի տերմինի «ճակատագրի» մասին: 1972-1973 ուսումնական տարում դպրոցական 6-րդ դասարանի երկրաչափության նոր դասագիրք լույս տեսավ, որտեղ ներմուծված էին երկրաչափական նոր՝ մինչ այդ դպրոցականին անհայտ «կոնգրուենտ» և «կոնգրուենտություն» հասկացությունները: 1972-ից մինչև 1977 թթ. մաթեմատիկա դասավանդող ուսուցիչները լավ պետք է հիշելիս լինեն, թե ինչքան են տանջվել երեխաներին երևույթը բացատրելիս և մեծ մասամբ արդյունքի չեն հասել, մինչև որ 1977-ին Հայաստանի Մինիստրների խորհրդին¹⁵ առընթեր տերմինաբանական կոմիտեն մաթեմատիկոս Վ. Սաղաթեյանի նախագծի հիման վրա որոշում կայացրեց, ըստ որի՝ «կոնգրուենտ»-ը թարգմանվեց «համընկնելի», «կոնգրուենտություն»-ը՝ համընկնելիություն¹⁶: Դրանից հետո, հե՛նց նշված բառերի հասկանալիությամբ պայմանավորված, որևէ դժվարություն չէր ունենում աշակերտը՝ սահմանելու այդ հասկացությունները: Ահա՛ թե ինչու պետք է առավելություն տրվի սեփական բառերին, եթե դրանցով ճշգրտորեն սահմանելի են նշանակյալները¹⁷:

¹⁴ Խնդրին անդրադարձել ենք նաև հետևյալ աշխատության մեջ. **Ռ. Գյուլզատյան**, *Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ*, Ե., «Գլոբալ համալսարան», 2016, էջ 24:

¹⁵ Խորհրդային Հայաստանի բարձրագույն գործադիր մարմնի անվանումը:

¹⁶ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու» (կազմող, մեկնաբանությունների հեղինակ և խմբագիր՝ Ն. Բարսեղյան), Ե., «9-րդ հրաշալիք», 2006, էջ 143:

¹⁷ Հմմտ. **Ս. Աբրահամյան**, *Հայոց լեզվի կանոնարկման համակարգի ու ելակետային սկզբունքների մասին*.– Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, պատասխանատու խմբագիր՝ Ն. Պառնասյան, Ե.,

Տերմինային թյուրըմբռնման հետևանք է նաև տարբեր գիտակարգերում գործածվող միևնույն հասկացության տարալեզու զուգաձևությունների գոյությունը: Աստղագիտության և լեզվաբանության մեջ «մորֆոլոգիայի» հասկացությունը թարգմանական համարժեքով է գործածվում՝ ձևաբանություն, մինչդեռ կենսաբանները համառորեն նախընտրում և պահպանում են «մորֆոլոգիա» անվանումը՝ բռնանալով հայերենի բառաստեղծման հնարավորության վրա և խախտելով տարբեր գիտությունների համար անհրաժեշտ տերմինաբանական միասնության ու միօրինակության պահպանման սկզբունքը:

Որպես ասվածի ամփոփում հարկ ենք համարում մեջբերել համբավված աստղագետ Վիկտոր Համբարձումյանի դատողությունը հայաստեղծ տերմինների առավելության վերաբերյալ. «Գիտական աշխատանքի ընթացքում համոզվել եմ, որ հայերենը շատ ավելի հարուստ լեզու է, քան բազմաթիվ եվրոպական լեզուներ: Կարող եմ օրինակ բերել հենց աստղագիտությունից: Եվրոպական բոլոր լեզուները ասում են «էկլիպտիկա», իսկ հայերը ունեն իրենց սեփական բառը՝ «խավարածիր», որը արտահայտիչ ու հասկանալի է, մատչելի, քան օտար բառը: Կամ մի ուրիշ օրինակ, կա «էկվատոր». հունարեն բառ է, որը տարածված է բոլոր եվրոպական լեզուներում, իսկ մեր գիտական լեզվում ունենք «հասարակած»: Տեսնո՞ւմ եք՝ մենք ինչքան հարուստ ենք: Եթե որևէ նրբություն արտահայտելու համար անհրաժեշտ է մի ուրիշ բառ հնարել, մենք արդեն պատրաստ ենք: Լեզվի հարստությունը գիտության բնագավառի, ինչպես նաև այլ բնագավառների համար շատ մեծ նշանակություն ունի, որովհետև այս բարեմասնությունը հնարավորություն է տալիս մեզ արտահայտելու մտքի և զգացմունքի նրբությունները՝ միևնույն ժամանակ պահպանելով մեր լեզվին հատուկ ոգին»¹⁸:

Եզրահանգումներ

Ա) Գրական լեզուն նրանով է այդպիսին, որ ենթակա է մշակման, կատարելագործման, կանոնարկման: Եթե մշակումն ու կատարելագործումը մտավոր լայն հանրության՝ գեղարվեստական գրականության, գիտության ու հրապարակախոսության տիրույթներում է իրականացվում, ապա կանոնարկումը գերազանցապես լեզվաբանական քննությամբ իրականացվելիք գործընթաց է, որին, ինչ խոսք, զգալի չափով մասնակցություն կարող են ունենալ մյուս ոլորտների մշակները ևս:

Բ) Եթե պատմական, հասարակական-քաղաքական հանգամանքների բերումով գրական արևմտահայերենի հատկապես հոլովման համակարգն այլ լեզվի ազդեցությամբ խոտորվել է դեպի կցականություն, որի բերած միապաղաղությունը, շնորհիվ արևմտահայ գրական մշակների ջանքերի, հատկապես շարահյուսական կիրառություններում թեքականության բարեբեր դաշտ է տեղափոխում մեր լեզվի այդ գոյածը, ապա գրական արևելահայերենը, զգալաչափ պահպանած լինելով թեքականությունը նաև՝ հոլովման համակարգում (հմմտ. արևմտ. *գիրքի* և արևել. *գըրքի* ձևերը), այսօր խառնափնթոր խոսակցական լեզվի

ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 5-19: Ս. Աբրահամյան, *Ղեկավարվել գիտական սկզբունքներով*.– Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., ՀՄՍՀ ԳԱ, 1970, հմ. 12, էջ 43-48: Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., ԵՊՀ հրատ., 1984, էջ 310-356: Ռ. Իշխանյան, *Ակնարկ հայերենի տերմինաշինության*, Ե., «Լույս», 1981, էջ 15-125:

¹⁸ Վիկտոր Համբարձումյան, *Մեր ամենամեծ գանձը՝ մայրենի լեզուն*.– «Գրանիշ», 21. 02. 2014
<http://granish.org/our-greatest-treasure/>

ազդեցությամբ, որին մեծ չափով նպաստում է հանրային-պաշտոնական հաղորդակցությունը՝ հակասելով ՀՀ Լեզվի օրենքին, ոչ առանց միտումնավոր դրդումների ենթակա է պարզունակացման, դրանով իսկ կցականության շերտի թանձրացման, որն ավելի հարմար է պարզունակ մտածողության արտահայտմանը:

Գ) Նախորդ կետից բխում է, որ կրթական և պաշտոնական լրատվության տիրույթներում լեզվական կանոնների գործառության խստարկման պաշտոնական միջոցներ են անհրաժեշտ՝ բացառելու «Մեդրիի», «Լոռիի», Դոստոնսկիի»՝ հորանջ պարունակող անբարեհունջ և անցանկալի կցական ձևերի տարածումը, քանի որ «ՈԻ» հոլովման գործադրությամբ բառաձևը ձուլման եղանակով է կազմվում, որը հենց թեքականության արտահայտություն է: Պաշտոնապես խրախուսել է պետք նաև մյուս հոլովումների ազատ գործառությունը:

Դ) Պաշտոնական մարմնի՝ Լեզվի կոմիտեի հետ համատեղ հսկողությամբ հարկ է օրենքի ուժով («Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է», – ՀՀ օրենքը լեզվի մասին, հոդված 1-ին) պարտավորեցնել հեռուստաընկերություններին հետամուտ լինել նշված հոդվածի իրագործմանը՝ պաշտոնական հաղորդակցության ընթացքում կիրառելով հայերենի կանոններին համապատասխանող ձևեր՝ բացառելով թե՛ հորանջով կազմվող թրքաբնույթ հոլովաձևերի, թե՛ «ա» օժանդակ բայի գործածությունը, այլև բաղադրյալ գոյականների թվակազմության ժամանակ հետևել վերջնաբաղադրիչ բայարմատով կամ գոյականական արմատով բառերի՝ խիստ տրամաբանականացված *-ներ* կամ *-եր* հոգնակերտների գործածությանը՝ վերացնելու *ջրաչափեր*, *ջերմաչափեր* բնույթի անկանոնությունները, ինչպես նաև քողարկված երկվանկ *սպա*, *շտաբ*, *սկիզբ* և այլ բառերի՝ *սպայեր*, *շտաբեր*, *սկիզբեր* անճաշակ ձևերի գործածության հնարավորությունը: Այս աննշան թվացող օրինակներով շատ կարևոր բան է բացահայտվում լեզու-խոսք հարաբերություններում: Ճիշտ է այն, որ այսօր արևելահայերենում հիշյալ բառերի դեպքում բառակզբում [ը] չենք արտասանում: Սակայն հենց այն փաստը, որ սրանց հոգնակիները կազմվում են *-ներ* վերջավորությամբ, նշանակում է, որ ունենք վանկակազմի և վանկի ինքնատիպ հարաբերություն: Վանկակազմը նույն դերակատարումն ունի վանկի նկատմամբ, ինչ հնչույթը՝ հնչյունի: Վանկակազմով մեր ենթագիտակցության մեջ պահպանված է բառակզբի [ը]-ն, որը լեզվական իրողություն է՝ հնարավորություն՝ խոսքում դրսևորվելու, որը ժամանակին դրսևորվել է (ինչպես այսօր՝ արևմտահայերենում), իսկ հիմա չի դրսևորվում, բայց խոսքում չարտահայտվելը չի նշանակում նրա բացակայություն լեզվից, և սրանով է, որ հիշյալ բառերի հոգնակի թիվը բազմավանկ բառերին հատուկ վերջավորությամբ է արտահայտվում: Ի դեպ, սա ևս թեքական «խորհրդավորությանը» հատուկ իրողություններից է:

Ե) Բայական համակարգում հարկ է հետևել սոսկաձանցավոր բայերի՝ կատարյալի հիմքից կազմվելու կանոնի գործադրությանը՝ բացառելու *թռչեց*, *փախչեցինք* (փոխ.՝ թռավ, փախանք) զավեշտահարույց ձևերի գործածությունը, ինչպես նաև հանձնարարել դասագիրք կազմողներին վսեմ ոճ ապահովող բայական ձևերի գործածության հնարավորության ընձեռմանը սովորողներին:

Զ) *-Ույթ* վերջածանցով կազմվող լեզվաբանական տերմինների հարցում պետք է որդեգրել կանոնարկման՝ անհնչունափոխ բաղադրությունների աստիճանական չեզոքաց-

ման սկզբունք: Խիստ բացառում չենք առաջարկում՝ նկատի ունենալով տարածվածության և ընտելացվածության չափը, ասել է՝ թույլատրել է պետք ժամանակավոր գուգաձևությունների հնարավորություն (*հնչույթային // հնչույթային*):

Է) Գրական արևելահայերենում հոլովակազմությունը, եթե զուտ կցական եղանակով չի կատարվում, իրացվում է որպես ձուլում (*գ/ը/ըք-ի, գին-ու*): Ձուլումը հենց թեքականության արտահայտությունն է: Գրական լեզվի պահպանողականության սկզբունքից ելնելով՝ ինչքան հնարավոր է, պետք է կանոնի սահմաններում պահել ձուլման գործողությունը:

Ը) Լեզուն կանոնարկելիս գուգաձևությունների հարցում երկու հակադիր սկզբունք պիտի որդեգրել: 1) Այն դեպքում, երբ գուգահեռ ձևերի առկայությունը լեզվական քառույվտանգ է առաջ բերում, հարկ է առաջնորդվել միօրինակացման սկզբունքով: 2) Այն դեպքում, երբ տարածվում է գուգահեռ ձևերից մեկը, իսկ մյուսը վսեմ ոճ է ապահովում, հարկ է առաջնորդվել գուգաձևության պահպանման սկզբունքով՝ ա) չեզոք ոճի համար կանոնական համարելով տարածվածը, բ) հնարավոր համարելով վսեմ ոճի ձևերի կիրարկումը:

Թ) Կանոնարկման այս ուրվագիծը, կարծում ենք, արժանի է ուշադրության, քանի որ բխում է մեր ժողովրդի հոգևոր-արարչագործ ուժի բացահայտման մղումից (այն, ինչի համար պարտավոր է զբաղվել լեզվաբանը լեզվի հետազոտությամբ՝ ըստ Վ. Ֆոն Հումբոլդտի): Պարտ է մեզ ընդգծել, որ՝ 1) լեզվի մեջ թեքական բաղադրիչի առատությունը արտահայտությունն է նրանով խոսող հանրության բարդ մտածողության և ուշագրավ աշխարհայացքի, 2) գրական արևելահայերենն առավելապես թեքակցական կառուցատիպի լեզու է՝ թեքականության առավելությամբ), 3) հայ լեզվակիր հանրության ինքնության պահպանման համար պարտական ենք նաև՝ մեր ուրույն մտածողությունն ապահովող լեզվի կառուցվածքին, 4) մեր երկրի արտաքին սահմանները խարխիլելուց առաջ թշնամին մեր լեզվի՝ ներքին սահմանների վրա է հարձակվել, և մեծ թափով շարունակվում է այդ հարձակումը, որի նպատակը լեզվամտածողության պարզունակացմամբ հայության և հայոց պետության վերջնական անձնատրությունը դյուրացնելն է, և այսօր դրա շեմին ենք:

Օգտագործված գրականություն

Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, «Միտք», 1965:

Աբրահամյան Ս., *Հայոց լեզվի կանոնարկման համակարգի ու ելակետային սկզբունքների մասին*.– Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, պատասխանատու խմբագիր՝ Ն. Պառնասյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1988, էջ 5-19:

Աբրահամյան Ս., *Ղեկավարվել գիտական սկզբունքներով*.– Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1970, հմ. 12, էջ 43-48:

Աղայան Է., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Երևան, ԵՊՀ հրատ., 1984:

Աղայան Է., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967:

Գյուլգասյան Դ., *Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ*, Երևան, «Գլոբալ համալսարան», 2016:

Իշխանյան Ռ., *Աղնարկ հայերենի տերմինաշինության*, Երևան, «Լույս», 1981:

Իշխանյան Ռ., *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն*, Երևան, ԵՊՀ հրատ., 1978:

Համբարձումյան Վ., *Մեր ամենամեծ գանձը՝ մայրենի լեզուն.*– «Գրանիշ», 21. 02. 2014 <http://granish.org/our-greatest-treasure/>

Bell T. Roger, *Sociolinguistics – goals, approaches and problems*. London: Batsford, 1976.

Гумбольдт В. фон, *Избранные труды по языкознанию*, М., «Прогресс», 1984.

Gyulzatyan Davit -What was Wilhelm Von Humboldt Warning about?- The founder of general linguistics, Wilhelm von Humboldt, summarizing and regrouping the structural types of languages, expresses the view that among the four types, the inflectional type of languages has reached the highest degree of perfection. This view has been subjected to numerous criticisms. Internal inflection is the result of complex thought, and language itself is thought – as well as its structure and form, which even provide a shared worldview for those who communicate through it. In this way, Humboldt directly identifies language with the national spirit, regarding language precisely as the expression of that spirit.

In standardizing a language, two opposing principles must be adopted regarding variant forms.

1) When the presence of parallel forms poses the danger of linguistic chaos, the principle of unification must be followed.

2) When one of the parallel forms becomes widespread while the other provides an elevated style, the principle of preserving variation must be followed,

a) recognizing the widespread form as standard for neutral style,

b) allowing the use of the elevated-style forms where appropriate.

We believe this outline of normalization deserves attention, since it stems from the drive to reveal the spiritual and creative power of our people – the very task for which, according to Wilhelm von Humboldt, the linguist is obliged to engage in the study of language.

Keywords: literary language, linguistic situation, language standardization, sociolinguistics, spiritual and creative force, literary-adjacent commonly used Armenian, case and conjugation systems.

Gyulzatyan Davit, Doctor of Philology, Associate Professor at the Department of Armenian Language and Literature.

Гюлзатян Давит - Что предупреждал Вильгельм Фон Гумбольдт.- Основатель общей лингвистики Вильгельм фон Гумбольдт, обобщив и переклассифицировав типы строения языков, высказывает мнение, что из четырёх типов наивысшей степени совершенства достиг флективный тип языков. Эта точка зрения подвергалась многочисленным критикам. Внутренняя флексия является результатом сложного мышления, а язык — это само мышление, а также его структура и форма, которые даже обеспечивают общность мировоззрения для тех, кто общается посредством него. Тем самым Гумбольдт прямо отождествляет язык с национальным духом, считая язык именно выражением этого духа.

При нормировании языка в вопросах вариативных форм следует принять два противоположных принципа.

1. В случае, когда наличие параллельных форм создаёт опасность языкового хаоса, необходимо руководствоваться принципом унификации.

2. В случае, когда одна из параллельных форм становится распространённой, а другая обеспечивает возвышенный стиль, необходимо придерживаться принципа сохранения вариативности:

а) для нейтрального стиля считать нормативной распространённую форму,

б) допускать использование форм возвышенного стиля.

Мы полагаем, что этот набросок нормирования заслуживает внимания, поскольку он исходит из стремления раскрыть духовно-творческую силу нашего народа — того самого, ради чего, по словам В. фон Гумбольдта, лингвист обязан заниматься исследованием языка.

Ключевые слова: литературный язык, языковая ситуация, нормирование языка, социолингвистика, духовно-творческая сила, литературно-близкий широко используемый армянский, системы склонений и спряжений

Гюлзатян Давит, кандидат филологических наук, доцент кафедры армянского языка и литературы Ванадзорского государственного университета.

Գրիգորյան Սուսանա

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. Susanna7494@gmail.com

Բանալի բառեր և բառակապակցություններ. Իմաստափոխություն, համագործա-
ծական բառեր, իմաստային քննություն, փոխառություն, բնիկ բառեր, ստուգաբանություն,
բառաբացատրություն:

Նախաբան

Քննության են ենթարկվել հին հայերենյան մի շարք բառեր (ապուր, բոսր, մարգարե,
նուեր և այլն), որոնք արդի հայերենում իմաստափոխված են: Բառերը բաժանել ենք երկու
խմբի. իմաստափոխված բառեր, որոնք նախնական իմաստը չեն պահպանել և իմաստա-
փոխված բառեր, որոնց մեջ նախնական իմաստը մասնակի պահպանված է: Անդրադարձ է
կատարվել որոշ բառերի ստուգաբանությանը, որպեսզի պարզ լինի, թե իմաստափոխու-
թյունից առաջ ի՞նչ նախնական իմաստ է ունեցել բառը:

Նախնական իմաստը չպահպանած իմաստափոխված բառեր

Արդի հայերենում «կերակուր» իմաստով օգտագործվող *ապուր* բառը ըստ Հ. Աճառ-
յանի ունեցել է «կեալ, ապրիլ» նշանակությունը. Նա գրում է. «Ապրի «ազատիլ» բայը յետոյ
ստացել է «կեալ, ապրիլ» նշանակութիւնը. արդէն հին լեզուի մէջ էլ կան պարագաներ, որ
«ազատելու» հետ նաև «կեալ» նշանակութիւնը անբաժան է»: Այս բացատրությունից հետո՝
հղելով Գրիգոր Տաթևացուն, Աճառյանը գրում է. «Հներից Տաթև. ամ. 261 գրում է. «Ապրանքն
փրկանք թարգմանի». ուզում է ասել, թէ ապրանք ծագում է ապրիլ «ազատիլ» բայից»: Հեղի-
նակի բացատրության մեջ «ուզում է ասել»-ը հնչում է իբրև համաձայնություն կամ ասածի
հիմնավորման փորձ, այսինքն հեղինակը նշում է «ապուր, ապրիլ, ապրանք – ազատիլ
(փրկիլ)» անցումը:

Բէեղզեբուղ - Բառն արդի հայերենում ընկալվում է սուրբգրային բացատրությամբ
իբրև «սատանայապետ»: Մինչդեռ խոսակցական հայերենում և բազմաթիվ բարբառներում
սովորական է «զիբիլ» բառի գործածությունը՝ «աղբ» իմաստով, որը ծագում է «բէեղզեբուղ»
բառից: Ըստ Աճառյանի ծագում է՝ «եբբ. «be'elzebus», որ բուն նշանակում է «ճանճիկ
աստուած» և փղշտացւոց աստուածներից մեկն էր: Եօթանասունք այս բառը մեկնել կամ
կարդացել են «be'elzebul», որ նշանակում է «աղտեղութեան կամ աղբի աստուած», որից՝
խսկց. «zibil»: Աճառյանը հղում է նաև Գրիգոր Տաթևացուն, որ արդէն իսկ իր օրերում

1 **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1971, հ. Ա, էջ 239:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, էջ 445:

գործածում է միայն բառի վերջին մասը՝ «գեբուդ». Տաթև. ամ. 70»⁴, այսինքն՝ «աղտեղութիւն, աղբ»՝ որոշակի առումով վերաբերմունք դնելով բառիմաստի նկատմամբ:

Բէլ - Արդի հայերենում պահպանված է աստվածաշնչյան հայտնի պատումի, ապա՝ «Հայկ և Բէլ» ավանդապատման բացասական հերոսի անունով, այսինքն որպէս հատուկ գոյական: Մակայն բառն ունեցել է նաև «կնքահայր» իմաստը, չնայած այդ իմաստով Աճառյանը համարում է «նորագիւտ». «նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ.146. «Ձեռնգրք հայր զկնքահայր, որ է **բէլն**»:

Բառն առայսօր «կնքահայր» իմաստով՝ «**պէլի**» տարբերակով գործում է մի շարք բարբառներում, որ ենթադրել է տալիս Ժամանակին նրա համագործածական բառ լինելը: Հնարավոր է, որ գործածությունից դուրս է եկել «Բէլ» հատուկ անվան բացասական ընկալման պատճառով:

Մարգարէ - Հաջորդը «մարգարէ» բառն է, և նախ անդրադառնանք նրա նախնական իմաստի քննությանը:

1914 թ. Անտուան Մեյեն Զալեմանին ուղղված մի նամակում նշում է, որ իրեն հետաքրքրեց «մարգարէ» բառի Զալեմանի ստուգաբանությունը⁵: Ասենք, որ սրան նախորդել էր Նիկողայոս Մառի ստուգաբանությունը, որը բոլորովին չէր գոհացրել Մեյեին: Ըստ Մառի «մարգարէ»-ն նախապէս նշանակել է «աստղաբաշխ», «աստղագետ» և ծագում է հայերեն *մարգ*՝ վաղնջական «աստղ» նշանակությունից, որ հաբեթական «մրգ»՝ «փայլ» արմատի ամենահարազատ պահպանված ձևն է. ցեղակիցներն են արաբ. *barq*՝ փայլել, վրաց. բրկիալի՝ փայլուն, հայերեն՝ պերճ, պայծառ ձևերը: Մերժելով այս ստուգաբանությունը՝ Զալեմանը առաջադրում է «մարգարէ»-ի սողդերեն ծագման տեսակետը՝ *markray, markarak*՝ «կախարդ, գուշակ վիուկ» նախնական նշանակություններով: Մինչ այս կարծիքները բառի ստուգաբանությանը նախապէս անդրադարձել են «Նոր հայկագեան բառարանի» հեղինակները՝ այն կապելով *մոգ* բառի հետ: Հետագայում այս բառի ստուգաբանությունը հետաքրքրել է գրեթե բոլոր նշանավոր հայագետներին, որոնք հիմնականում հարում են վերոնշյալ կարծիքներից որևէ մեկին: Քիչ տարբերվող ստուգաբանություն են տալիս Լազարըր, որը «մարգարէ»-ն բխեցնում է եբրայերենի *ngr*՝ հոսիլ, հեղուկ արմատից, իսկ Հյունքերյանը և Ալիշանը այն կապում են լատիներեն *Mercurius*՝ Հերմես անվան հետ:

Մոգ, մարգարէ տարբերակը հետագայում ընդունում է Պեդերսենը, պահլավական *margar* և սողդերեն *markray, markarak*- *մարգարէ* տարբերակը՝ Մեյեն, Աճառյանը, Ջահուկյանը, *մարգ/աստղ/- մարգարէ* տարբերակը՝ Պատրուբանին և Ղափանցյանը, մի տարբերությանը՝ Պատրուբանին այն բխեցնում է սանսկրիտի *marg*՝ կանխատեսել արմատից + հայ. ար/ արար/ + է հունական վերջավորությունը:

Այսինքն մենք գործ ունենք էականորեն իրարից տարբերվող երեք տարբերակի հետ:

Անտուան Մեյեն, խորապէս համոզված լինելով, որ «մարգարէ»-ն իրանական փոխառություն է, բավականին խիստ քննադատության է ենթարկում Մառի տեսակետը՝ դուրս գալով ներլեզվական խնդրի գնահատականի շրջանակներից. Մեյեի խորհրդածություններն

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս **Անտուան Մեյե**, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1978, էջ 182:

ի վերջո վեր են ածվում անվանի հայագետի անձի բուռն քննադատության. «Ես ձեզ պետք է ասեմ,-գրում է Մեյեն Զալեմանին,-որ ես երբեք ոչ մի արժեք չեմ տվել այս բառի ստուգաբանության վերաբերյալ Մառի արտահայտած վարկածներին: Շատ ցավալի է որ այնքան լեզուներ իմացող մարդն այդքան քիչ է ըմբռնել լեզվաբանական մեթոդները և այդքան զուրկ լինելով լեզվաբանական ըմբռնողությունից՝ համառում է լեզվաբանությամբ զբաղվել, փոխանակ բնագրեր հրատարակելու և գրականագիտական ու պատմագիտական ուսումնասիրություններով զբաղվելու»⁶:

Եվ այնուամենայնիվ, Մեյեն, ընդունելով հանդերձ այս բառի իրանական ծագումը՝ ստիպված է լինում խոստովանել, որ այս բառի ստուգաբանության պարագայում ի հայտ են գալիս երեք անկանոնություններ, որոնք բացահայտորեն շեղվում են փոխառության ներքին օրենքներից: Նա գրում է. «1.Խոշոր անկանոնություն է, որ գ-ն տա հայերեն ր և ոչ թե րկ կամ կ: 2.Եզակի երևույթ է, որ գ-ն, երբ ն-ից հետո հանդես չի գալիս, համապատասխանի իրանական k-ին: 3.Անսպասելի է նաև բառավերջի է-ն»⁷: Այսպիսով, եթե մարգարե-ն ստույգ ունենար իրանական ծագում, ապա փոխառյալ տարբերակում սպասելի էր, որ նրա հնագույն տարբերակը, այսինքն զենդերեն *magra-kara* ձևի 0-ն հայերենում տար -րկ- կամ -կ- և ոչ թե -ր-, այսինքն եթե մար-գարե-ի -գարե-ն *kara*-ն է, որ նշանակում է գործող, կերտող, ապա *magra*-ին համապատասխանում է մար-ը, որտեղ *g*-ն տվել է -ր:

Այսքանից հետո Մեյեն եզրակացնում է. «Մեկը մյուսից զարմանալի այս երեք առանձնահատկություններն ինձ կարծել են տալիս, թե «մարգարե»-ն իրանականից անմիջականորեն կատարված փոխառություն չէ: Հավանաբար եղել է միջնորդ: Մակայն ես ինձ հարց եմ տալիս,- շարունակում է Մեյեն,- թե դա ո՞րն է»⁸: Հարցը անվանի հայագետի համար այդպես էլ մնում է առկա, չնայած նրա բնութագրումները խոսում են ի վնաս իրանական փոխառության տարբերակի: Եվ իսկապես, Մեյեն երկբայելու պատճառ ուներ, քանի որ կան այլ տվյալներ «մարգարե» բառի վերաբերյալ, որոնք թերևս կօգնեն ճշտելու այդ բառի անցած պատմական ուղին, գուցե և առաջադրելու բառի ծագման այլ տարբերակ:

Գրիգոր Տաթևացին իր «Մեկնութիւն Մատթէի» և «Գիրք հարցմանց» աշխատություններում քանիցս անդրադառնում է «մարգարե» բառին: Նա, վկայակոչելով նախնի վարդապետներին տարբերակում է մարգարեության հինգ տեսակ. 1. բնական, 2. արուեստական, 3. դիւական, 4. գոեհիկ, 5. ճիշտ մարգարեութիւն: Նա գրում է.«Առաջին՝ ի բնական, որպէս երեոց, անասնոց, թռչնոց և մրջմանց...: Երկրորդ, արուեստական, որպէս բժիշկք և նաւավարք զխոռվութիւն ալեաց և զանդորրութիւն: Երրորդ՝ դիւական, որպէս կռոց սուտ մարգարէքն Սեդեկիայն և այլոց բազմաց, որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց, նաև հավակոյիչք և գարեդիւթք, որք են բնաւ սուտք և ոչինչք: Չորրորդ, գոեհիկ, զոր սովորութեամբ լուեալ ասեն՝ ձմեռն գայ և զկնի այնորիկ գարուն, ամառն և աշուն: Եւ ի կարմրանալ երկնից ընդ երեկս և ընդ առաւօտս, զերաշտոց և զանձրևոց ի փորձոյ ուսեալք յառաջագուշակ լինին»⁹:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, Կ. Պոլիս, 1729, էջ 536:

Բնականը, փաստորեն, համապատասխանում է բնագրին, որովհետև, ինչպես Տաթևացին է նշում, կենդանիներն ավելի կանխագետ են բնության հարցերում, քան մարդը: Երկրորդը՝ արուեստականը, վերաբերում է դիտարկումներով, վարժանքով ձեռքբերովի փորձին, որը թույլ է տալիս կանխատեսելու որևէ բան: Երրորդը՝ դիականը, կեղծ կանխատեսումն է, որով զբաղվում են դիւթերը, կախարդները, հաւակոճիչը, գարեդիւթը և այլն: Ընդ որում, աստղագուշակները ըստ Տաթևացու սկսում են արուեստականով, այսինքն՝ ձեռքբերովի փորձով, դիտարկումներով, գիտելիքներով, և վերջում հանգում են դիւթականին: Չորրորդը՝ գռեհիկը, երկու երևույթների կապի դիտարկումն է, որ թույլ է տալիս, օրինակ, որ երկինքը կարմրելիս ասվի, թե առավոտյան կամ երեկոյան կանձրևի՞, թե չոր կլինի: Եվ վերջապես հինգերորդը ճիշտ մարգարէութիւնն է, որ ինչպես հեղինակն է ասում՝ «է կանխագիտութիւն ամանակաց, անցելոց, ներկայից և ապագայից»¹⁰:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ *մարգարէ* բառի վերոնշյալ բացատրության հիմնաբառերը հետագայում տեղ են գտել այս կամ այն հայագետի ստուգաբանության մեջ. գուշակ, կախարդ իմաստները՝ Չալեմանի, Մեյեի, Աճառյանի, Ջահուկյանի, աստղագուշակը՝ Մառի, իսկ կանխագետ, կանխատեսելը՝ Պատրուբանիի:

Դժվար չէ նկատել, որ այս բոլոր բացատրությունների մեջ ընդհանուր է կանխատեսել-կանխագգալ-ը, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապվում է աստղերի հետ: Այսինքն կա աստղերի որոշակի ազդեցությունը երկրի վրա, Տաթևացու առաջին չորս բացատրությունները ի վերջո կապվում են դրա հետ: Վերոնշյալ հայագետների ստուգաբանություններից այս իմաստով Տաթևացուն ամենամոտ կանգնածը Պատրուբանին է, իսկ քիչ ավելի միջնորդավորված՝ Նիկողայոս Մառը:

Աճառյանը գրում է. «Մեր մարգարէն էլ, որ զրադաշտական կրօնից փոխառեալ բառ է, նշանակում էր նախապես այն արևելեան կարդացողները, որոնք Ս. Գրքերից զանազան աղօթքներ կարդալով հիվանդների վրայ, բժշկում էին նրանց և կամ այդ գրվուածքներից գուշակութիւններ էին անում: Քրիստոնէութեան հաստատութեամբ բառը նոր գաղափարների դրոշմն ստացաւ և նոր իմաստով սրբագործուեցաւ, այնպէս՝ ինչպէս պատարագ բառը հասարակ և աշխարհիկ «նուէր» նշանակությունից՝ անցաւ քրիստոնէական քավութեան պատարագի իմաստին»¹¹:

Հետագա անցումը Աճառյանը հրաշալի է բացատրել, սակայն ոչ մի պահ չերկբայելով, որ *մարգարէ*-ն փոխառյալ բառ է: Մինչդեռ մեր կարծիքով, այնուամենայնիվ, փաստեր կան առաջ քաշելու *մարգարէ*-ի բնիկ հայերեն բառ լինելու վարկածը.

ա. մի կողմից Մեյեի բերած երեք անկանոնությունները.

բ. Աճառյանի իսկ վկայությամբ այդ բառի ավանդված չլինելը պահլավական գրականության մեջ, այսինքն ենթադրվում է, որ սողդերենի markray-ն փոխ է առնված պահ. margar ձևից, իսկ այս վերջինը բարբառային վկայություն է և պահլավական գրականության մեջ չի հիշատակվում:

¹⁰ Տե՛ս նույնը, նաև՝ **Մաշտոցի անվ. Հին ձեռագրերի ինստիտուտ, Մատենադարան**, ձեռ. N 1264, էջ 100բ:

¹¹ **Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան**, Ե., 1977, հ. Գ, էջ 276-277:

գ. Տաթևացու սովերում մնացած վկայությունը, որտեղ դեռ պահպանված կա «մարգարե»-ի աստղագուշակ իմաստը:

դ. Հայերենից փոխառնված վրացերենի մեմարգե ձևը՝ *մե* և *մարգե* բաղադրիչներով, որտեղ մե-ն պաշտոն ցույց տվող մասնիկ է, նույն աստղագուշակ, կախարդ իմաստներով:

ե. Կա նաև արտալեզվական փաստարկ. հայտնի է, որ ասղաբանությունը հայոց մեջ զարգացած է եղել վաղնջական ժամանակներից, որոնց վկայությունն է նաև Քարահունջի աստաղիտակների շարքը: Այս դեպքում կարող ենք «մարգ»՝ աստղ բառի շրջանակներում բացատրել «մարգարե»-ն, որը «աստղերով զբաղվող այրն է», մարդ, որը վարժանքով, հմտություններով գիտելիքներ է ձեռք բերել աստղերի մասին, իսկ հետո աստղերի վարքագծի և մարդկային ճակատագրերի կապի դիտարկումը մարգարեին կամ աստղագուշակին միջնադարում և հետո վեր են ածել բախտագուշակի, մոգի և այլն:

զ. Թերևս հուշում կա «մարգագետին» բառաձևում, որ հիշեցնում է, որ սա մարգ է, որը գետնի վրա է (այսինքն աստղաշարքի նման - Ս.Գ.), այն դեպքում ասենք, որ չկա «ակոսագետին» բառաձևը, որովհետև այդտեղ հուշելու կարիք չկա, որ այն գետնի վրա է գտնվում:

Այսպիսով, բերված փաստերը մեր կարծիքով համալրում են այն շարքը, որը հայագետների մի մասին թույլ է տվել վերոնշյալ բառին հայկական ծագում վերագրել:

Արդի հայերենում «մարգարե» բառի «աստղագուշակ» իմաստը չի պահպանվել և այն կիրառվում է հիմնականում Սուրբ Գրքի շրջանակներում հայտնի «աստուածային կանխատեսումներ անող մարդ» իմաստով:

Նախնական իմաստը մասնակի պահած իմաստափոխված բառեր

Բոսոր - Արդի հայերենում համագործածական բառերի շարքում է «հրե կարմիր» իմաստով: Աճառյանը բերում է բառի նաև նախնական հատուկ անուն լինելը, ապա և՛ «արենագոյն կարմիր» իմաստը: Բերում է նաև Գրիգոր Տաթևացու բացատրությունը. «Տաթև. ձմ. ճծա. մեկնում է «Եդոմն կարմիր երկիր թարգմանի և բոսորն նեղություն»¹²: Տարբերվող այս բացատրությունն առկա է հենց փոխատու լեզվի՝ եբրայերենի մեջ, որտեղ բառը նշանակել է «ամրապատ և անմատչելի տեղ», որ պարունակում է նաև «նեղության», այսինքն «նեղ լինելու» իմաստը:

Ունենք նաև արտալեզվական «Բոսֆորի նեղուց» աշխարհագրական անունը, որտեղ պահպանված կա հենց «նեղ» իմաստը:

Նուէր - Արդի հայերենում համագործածական բառերի շարքում է, որ նշանակում է ընծայ, մինչդեռ բառի նախնական իմաստը եղել է «հարսնացող աղջկան տրվող ընծան»:

Գրիգոր Տաթևացին «Գիրք քարոզութեան» Ամարան հատորում գրում է. «Հարսին տուեալ լինին երեք իրք. այսինքն բաժինք, օժիտք և պարզևք. բաժինքն տուեալ լինլ ի հօրէ հարսինն վասն պիտոյից պսակին, և օժիտքն ի փեսայէն լինի տուեալ, իսկ պարզևքն ի բարեկամացն լինին տուեալ»¹³. այսինքն՝ ա. օժիտը բերվել է փեսայի կողմից. աղջկա հարական տնից բերվածը կոչվել է բաժինք, որը ծավալով և կշռով զիջել է օժիտին, որովհետև

¹² **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, էջ 473:

¹³ **Գ. Տաթևացի**, *Գիրք քարոզութեան*, Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 203:

նախատեսված է եղել հարսանեկան ծախսերը հոգալու համար. բ. երեք նվերներն էլ հասցեագրվել են հարսնացուին, այսինքն ապագա տանտիկնոջը, մի հանգամանք, որ հատկապես կօգնի բացատրելու *նուէր* բառը: Դրանով սկզբում կոչվել է այն նվերը, որ փեսան տվել է հարսնացուին: Դա, ամենայն հավանականությամբ, շատ ավելին է եղել քան աղջկա հոր կողմից տրված բաժինքը, որովհետև նախ՝ բաժինքը տրվել է հարսանիքի հոգսերը հոգալու համար և երկրորդ՝ հետագայում, երբ արդեն դադարել է փեսայի կողմից պաշտոնապես օժիտ տալը, այն իբրև անվանում գրավել է բաժինքի տեղը՝ վերջինիս գրեթե դուրս մղելով գործածությունից: Արդի հայերենում բաժինքը իր նախնական իմաստով, այսինքն աղջկա հոր կողմից տրվող ստացվածքի առումով, պահպանվել է Ղարաբաղ-Գորիս բարբառում՝ *պէժինք, պաժինք* ձևերով:

Ամուսնական ընծայաբերության մեջ իր մշտական տեղն է ունեցել նաև նուէրը, որ նախորդ երկուսի նման հասցեագրվում էր հարսնացուին, թերևս պարզ ու հասկանալի այն պատճառով, որ իբրև ապագա ընտանիքի խարիսխ դիտվում էր կինը և ի տարբերություն դրսում աշխատանքներ կատարող ամուսնու, տնտեսության կարգավորողը ներսում հիմնականում կինն էր: Գաղտնիք չէ, որ հայ իրականության մեջ կինն այդպես է գնահատվել:

Նուէր բառը այս առումով չի դիտարկվել և չի նկատվել նրա ուղղակի կապը *կին* բառի հետ: Ասվածը հավաստի դարձնելու համար նախ անդրադառնանք հայագետների կողմից բնիկ հայերեն համարվող նու և մեր կարծիքով նրա հետ ծագումնաբանական կապ ունեցող դարձյալ բնիկ հայերեն համարվող նոր բառերի ստուգաբանությունների պատմությունը: *Նու*-ն, որ նշանակել է «հարս», իր մեջ կրում է նաև *դեռատի, մատղաշ, թարմ, նոր* իմաստները: Սրան նպաստող փաստարկներ են բերում Հյունքերյանը, Պատրուբանին, Պեդերսենը, «Նոր հայկազեան բառարանի» հեղինակները: Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ում «նոր» բառի բառահոդվածում գրում է. «Պատրուբանին հայերենից փոխառեալ է կարծում ֆինն. *nuore նոր, թարմ, մատղաշատի*, էսթն. *nuor դեռատի, թարմ* լապ. *nuor nuora, մատղաշ*. նոյնը նաև Պեդերսեն: Հինքերեան լատիներեն *nurus հարս* բառը բխեցնում է հայերեն «*նոր*» արմատից»¹⁴: «Նոր հայկազեան բառարանը» «*նուէր*» բառը բացատրում է՝ «*նոր իր կամ նոր բերք*»¹⁵:

Ինչպես տեսնում ենք, խաչաձևված են *նոր, նուէր, հարս* բառերի բացատրությունները:

«*Նու*» արմատը «*կին, աղջիկ*» իմաստով դրսևորվել է հայերեն *Նուարդ* հատուկ անվան մեջ. այն պետք է տեսնել նաև *նուաղ, նուաճ, նուաստ, նուազ, նուրբ* բառերում, որոնցից առաջին չորսը «Հայերեն արմատական բառարանում» չստուգաբանված բառերի շարքում են, իսկ *նուրբ*-ը համարվում է բնիկ հայերեն բառ: *Նուաղ, նուաճ, նուաստ, նուազ* բառաշարքի համար ընդհանուր է *թույլ, տկար* նշանակությունը, որ ուղղակիորեն կապված է նու-կին հասկացության հետ: Իսկ մյուս կողմից, քանի որ օժիտը, բաժինքը, նուէրը տրվում էին հատկապես հարսնացուին, ապա դրանցից վերջինը՝ նուէրը, ուղղակիորեն կրել է

¹⁴ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Գ., էջ 466:

¹⁵ Գ.Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ.Աւգերեան, *Նոր բարոյիք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1837, հ.2, էջ 450:

վերջին իմաստը, այսինքն նուր նշանակել է *հարսնացող աղջկան տրվող իրը, ընծան*: Մեր կարծիքով հատկապես նուր բառի առկայությունն է դեր խաղացել «տուար» բառը հայեցի ստուգաբանելու փորձերի մեջ. «Տուարը... Գոշի Դատաստանագրքում ստացել է տու-այր, տուեալն յառնէ իմաստով, ինչպես և բացատրված է այն Հայկազեան բառարանում», - գրում է Ադոնցը¹⁶: Իսկ Նոր Հայկազեան բառարանի բացատրությունը կասկած չի թողնում, որ վերոնշյալ համաբանությունը դեր է խաղացել. «Տուայր- Տուեալն յառնէ վարձանք կնոջ, փոխարեն իմն օժտից բերելոյ ի հարսնէ»: Գտնվելով օժիտ, բաժինք, նուր շարքում՝ տուարը նուրի համաբանությամբ ընկալվել է տուայր, ապա և ստուգաբանվել «տուեալն յառնէ»¹⁷:

Եզրակացություն - Այսպիսով, հինհայերենյան մի շարք բառերի քննությունը ցույց է տալիս, որ հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքում արձանագրված ընկալումների փոփոխության հատկանքով գրանցվել են բառերի իմաստափոխություններ: Դրանք երբեմն մասնակի են կորցրել նախնական իմաստը, երբեմն էլ՝ ամբողջովին:

Ամփոփում - Քննության են ենթարկվել հին հայերենյան մի շարք բառեր (մարգարե, ապուր, բոսոր, նուր, Բեհեդգերուդ (զիբի), որոնք արդի հայերենում ընդհանրական գործածություն են ստացել նոր իմաստներով: Մասնավորապես, «մարգարե» ի սկզբանե նշանակել է «աստղաբան», որը աստվածաշնչյան թարգմանության և մեկնությունների մեջ ձեռք է բերել «կանխագետ», «կանխագուշակ» իմաստները: «Ապուր», որ նշանակել է «ապրուստ, ապրելու միջոց» ձեռք է բերել ուտելիք, ճաշ իմաստը: «Բոսոր» բառը ունեցել է նաև «նեղ, անձուկ» նշանակությունը, հին հայերենյան հուշարձաններում վկայվում է միայն «հրե կարմիր» իմաստով: Անդրադառնալով որոշ բառերի ստուգաբանությանը, նպատակ ենք հետապնդել պարզել, թե իմաստափոխությունից առաջ ի՞նչ նախնական իմաստ է ունեցել տվյալ բառը: Օրինակ՝ քննելով և ի մի բերելով փաստերը, որոնք հայագետների մի մասին թույլ են տվել «մարգարե» բառին հայկական ծագում վերագրել, մենք համալրել ենք այդ շարքը:

Օգտագործված գրականություն

1. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, Ե. 1971, 1977, հ. Ա, հ. Գ:
2. Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե. 1978:
3. Տաթևացի Գ., Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729:
4. Տաթևացի Գ., Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741:
4. Մաշտոցի անվ. Հին ձեռագրերի ինստիտուտ, Մատենադարան, ձեռ. 1264:
5. Աւետիքեան Գ., Միրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837, հ. 2:

¹⁶ Ն. Ադոնց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, Ե., 1987, էջ 219:

¹⁷ Գ. Աւետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, էջ 890:

Grigoryan Susanna- On the change of meaning of some Old Armenian words. - The examination of a number of Old Armenian words shows that changes in the meaning of words were recorded as a result of changes in perceptions recorded during the development of social relations. Sometimes they partially lost their original meaning, sometimes completely. A number of ancient Armenian words (prophet, soup, bosor, Beheghzebub (garbage) were examined, which received new meanings in classical Armenian in general use. In particular, "prophet" originally meant "astrologer", which in biblical translation and commentaries acquired the meanings of "forecaster". "Soup", which meant "subsistence, means of living", acquired the meaning of food, meal. The word "bosor" also had the meaning of "narrow", and is attested in ancient Armenian monuments only in the meaning of "fire red".

Key words - Meaning change, colloquial words, semantic analysis, borrowing, native words, etymology, lexicography.

Grigoryan Susanna, Candidate of Philological Sciences, National academy of sciences of the Republic of Armenia, Senior Researcher.

Григорян Сусанна, Об изменении значения некоторых староармянских слов - Рассмотрение ряда древнеармянских слов показывает, что изменения в значении слов фиксировались в результате изменений в восприятии, зафиксированных в ходе развития общественных отношений. Иногда они частично теряли свое первоначальное значение, иногда полностью. Были рассмотрены ряд древнеармянских слов (пророк, суп, босор, подарок, Бехегзебуб (мусор)), которые получили новые значения в классическом армянском языке в общем употреблении. В частности, «пророк» изначально означало «астролог», что в библейском переводе и комментариях приобрело значения «предсказатель». «Суп», что означало «пропитание, средства к существованию», приобрело значение еда, суп. Слово «босор» также имело значение «узкий» и засвидетельствовано в древнеармянских памятниках только в значении «огненно-красный».

Ключевые слова: Изменение значения, разговорные слова, семантический анализ, заимствования, исконные слова, этимология, лексикография.

Григорян Сусанна, кандидат филологических наук, Национальная академия наук РА, старший научный сотрудник.

ՄԵՐԳԵՑ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ
ՉՆԱՅՈՂ Է

Դոլուխանյան Աելիտա

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
e-mail aelita.dolukhanyan@gmail.com

Բանալի բառեր. Մերգեյ Աբրահամյան, շարահյուսության դասագիրք, գրականու-
թյուն, սեղանի գիրք, լեզվական ճաշակ, վարժություններ, դասական երկեր, աշակերտ:

Նախաբան

Բախտ եմ ունեցել անձամբ ճանաչելու ազնվական տեսքով, մանկավարժին ու գիտ-
նականին արժևորող հատկանիշներ ունեցող ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մերգեյ Աբրահամյա-
նին: Գրականագետը չի կարող չկարդալ, նաև չսովորել իսկական լեզվաբանների գրքերից:
Մերգեյ Աբրահամյանը իսկական լեզվաբան էր, որն ապրում էր հայոց լեզվի ապագայով
մտահոգ, հայոց լեզուն նվիրումով դասավանդելով և այդ լեզուն առաջ մղողներով ոգևոր-
ված: Միայն 2002 թվականին «Գրական թերթում» և ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթում նրա
տպագրած հոդվածները ասվածի առհավատյան են: Այդ հոդվածներն են՝ «Ազգային լեզուն և
դպրոցը՝ ազգի գոյատևման և զարգացման պայման»¹, «Հանուն լեզվական և կրթական ազ-
գային քաղաքականության»², «Ապահովենք գիտության առաջնային դերը հայոց լեզվի
ուսուցման և նրա գործառույթի այլ ոլորտներում»³ :

Նրա բազմաթիվ գրքերի մասին Հայաստանի գիտական մամուլում, նաև այլ պար-
բերականներում տպագրվել են հարյուրավոր գրախոսականներ՝ նշանավոր լեզվաբանների
կողմից, նրա գիտամանկավարժական մտահոգությունների ոլորտում են եղել ոչ միայն
Հայաստանի Հանրապետությունը, այլև հայրենի Արցախը, որի հետ կապը գիտնական-ման-
կավարժը երբեք չի կտրել, ու Արցախը նույն ջերմությամբ պատասխանել է իր զավակին:

2002 թվականին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական հա-
մալսարանի «Հայագիտական հանդեսը» լեզվաբան Սուրեն Սահակյանի նախաձեռնությամբ
հրատարակեց «Մերգեյ Գյանջումի Աբրահամյան», գիտական դիմանկար և կենսամատե-
նագիտություն, արժեքավոր գիրքը «Հայ ակադեմիկոսներ» շարքով:

Դեռ 1974-ին՝ Մերգեյ Աբրահամյանի անունը մտել է «Հայկական սովետական հանրա-
գիտարանի» առաջին հատորի մեջ⁴: Դրանից հետո, որպես ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, նրա ա-
նունը տեսնում ենք բազում այլ հանրագիտարաններում⁵:

¹ «Հայագիտական հանդես», գիրք III, *Մերգեյ Աբրահամյան, Գիտական դիմանկար և կենսամատենա-
գիտություն*, Ե., 2002, էջ 119:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ *Հայկական սովետական Հանրագիտարան*, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 43-44:

Ինձ համար հատկապես թանկ է Սերգեյ Աբրահամյանի դպրոցական շարահյուսության դասագիրքը, որով ես պարապել եմ երկու տարի Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարանի 9 և 10-րդ դասարաններում՝ մաթեմատիկական թեքումով սովորող աշակերտների հետ: Միայն պետք էր տեսնել, թե որքան սիրով ապագա մաթեմատիկոսները կապվեցին այդ դասագրքի հետ:

Շարահյուսության դասագրքի կարևորությունը

Կան դասագրքեր, որոնք քեզ ուղեկցում են ողջ կյանքում: Դրանցից մեկն է նշանավոր լեզվաբան, եզակի գրաբարագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիայի անդամ Աշոտ Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկը»⁶, որն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ: Այդպիսին է նաև Մորիս Գրևիսի ժամանակակից ֆրանսերենի քերականության 1517 էջից բաղկացած ծավալուն գիրքը, որն ունեցել է մեկ տասնյակից ավելի հրատարակումներ, եղել ու մնում է առ այսօր Ֆրանսիայի նշանավոր գրողների սեղանի գիրքը⁷:

Ամեն հայ ուսուցչի համար կարող է սեղանի գիրք լինել Սերգեյ Աբրահամյանի շարահյուսության դպրոցական դասագիրքը:

Հայ գիտական լեզվաբանությունը սկսվում է հույն քերական Դիոնիսիոս Թրակացու աշխատության հայ մեկնիչների շարադրած աշխատություններից, որոնց գիտական արժևորումը ներկայացրեց մեծագույն բյուզանդագետ ու հայագետ Նիկողայոս Ադոնցը⁸:

Այսօր, այն բանասերները, որոնք գիտեն եվրոպական լեզուներ, կարող են գտնել բազմաքանակ լեզվաբանական աշխատություններ՝ նվիրված ձևաբանության ու շարահյուսության ճշգրիտ ուսուցման մեթոդներին⁹: Այդ գրքերում լեզվի ուսուցման հետ մեկտեղ կարևորվում է, թե ինչ բնագրերից պետք է բերվեն օրինակները¹⁰:

Հայոց լեզվի դպրոցական ուսուցման պատկառելի բաժինը պատկանում է շարահյուսությանը, որն աշակերտը յուրացնում է 7-8-րդ դասարաններում: Երկար տարիներ և առ այսօր ուսուցիչների համար նախընտրելի է համարվում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի «Հայոց լեզու, շարահյուսություն» դասագրքով առաջնորդվելը:

Այդ դասագիրքը ունի դպրոցական դասագրքերին առաջադրվող բոլոր մանկավարժական, գիտական խնդիրների լուծումները: Ձեռնարկի ողջ բովանդակությունը հուշում է հեղինակի քաջատեղյակությունը հայոց լեզվի դպրոցական ուսուցման բոլոր աստիճաններին՝ սկսած առաջին դասարանից: Գրքի հեղինակը աշխարհի հնագույն քաղաքակրթության կնիքը իր վրա կրող լեզուն ներկայացնում է նրա քերականական համակարգի շարահյուսական բաժնի բոլոր անհրաժեշտ տրոհումներով, որը հնարավորություն է տալիս աշակերտին՝ ապագա գրագետ մարդուն, խոսել և գրել կիրթ հայերենով, գեղեցիկ հայերենով:

⁵ «Հայագիտական հանդես», գիրք III, Սերգեյ Աբրահամյան, Գիտական դիմանկար և կենսամատենագիտություն, Ե., 2002, էջ 98:

⁶ Աբրահամյան Ա.Ա., Գրաբարի ձեռնարկ, «Լույս» հրատ., Ե., 1976:

⁷ Grevisse M., Le bon usage, Onzième édition, Duculot, Paris, 1980:

⁸ Ադոնց Ն., Երկեր, Գ, ԵՊՀ հրատ., Ե., 2008:

⁹ Kouligina A., Rosenblit, Livre du maitre, En 9-10^e, Le français, Москва, 1978, с.8.

¹⁰ Նույն տեղում, էջ 6:

«Ոճը ինքը մարդն է» [996]¹¹ հանրահայտ ասացվածքը կիրառելի է ամեն մի դասագրքի համար: Դասագրքի բովանդակությունից պարզ են դառնում նրա հեղինակի մասնագիտական խորաթափանցությունը, ինչպես նաև նրա բազմագիտական սահմանները: Այս առումով Սերգեյ Աբրահամյանի «Հայոց լեզու, շարահյուսություն» դասագիրքն օրինակելի է: Դասագրքում նյութերը դասակարգված են այնպիսի հերթականությամբ, որն ուսուցչին հնարավորություն է ընձեռում աշակերտին ճշգրտորեն սովորեցնել հայոց լեզուն տիրապետելու բոլոր գաղտնիքները:

Լեզուների ուսուցման համակարգում ապացուցված է, որևէ օտար լեզու սովորելիս, մարդը այդ նոր լեզվի օրինաչափությունը յուրացնելիս իր գիտելիքները խարսխում է մայրենի լեզվից ունեցած գիտելիքների վրա: Եթե ամուր են գիտելիքները, մատչելի կլինի նաև այլ լեզվի իրողությունները գիտականորեն ընկալելը: Խոսքը օտար լեզվի տիրապետման մակարդակի մասին է և ոչ պարզ խոսակցական լեզվի տիրույթի: Այս դիտակետից Սերգեյ Աբրահամյանի գիրքը նախընտրելի է:

Որևէ լեզու սովորելիս՝ մայրենի թե օտար, անհրաժեշտ է սեր տածել այդ լեզվի նկատմամբ, իսկ այդ սերն արթնացնում և ամրապնդում է հայոց լեզվի այս դասագիրքը, որն ամբողջությամբ խարսխված է հայ գրականությունից քաղած ընտիր օրինակների վրա:

Շարահյուսության այս դասագիրքը աշակերտին տեսանելի է դարձնում հայոց լեզվի հնամենիությունն ու կատարելությունը այն ընտրված ասույթներով, որոնք պատկանում են հայ միջնադարյան մեծերին: Ահա դրանք.

Եթե քեզ նմանների հոգսերը քեզ չեն անհանգստացնում, առաջնորդ մի լինի:

(Եզնիկ Կողբացի)

Մեռած է այն հավատը, որին գործեր չեն հաջորդում:

(Ներսես Շնորհալի)

Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը:

(Եղիշե)

Ինչպես որ քաղցր են ծնողները, այնքան էլ քաղցր է ծննդավայրը:

(Մովսես Կաղանկատվացի)

Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել, և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը:

(Անանիա Շիրակացի)

Եթե որևէ մեկը ցանկանում է ճիշտ խոսել ու դատել մի բանի մասին, ապա նա պետք է նախ և առաջ իմանա այդ իրի բնությունը, այսինքն՝ սահմանումը:

(Դավիթ Անհաղթ)

¹¹ Французско-русский фразеологический словарь, Москва, 1963, с. 996.

Անփույթ չպետք է լինես շնորհքիդ վերաբերմամբ, որ կա քեզանում. այդ մասին խորհիր և դրանով անցկացրու ժամանակդ:

(Կորյուն)

Նկատենք, որ այս իմաստուն մտքերը բերված են որպես վարժություն՝ ընտրված օրինակներում շաղկապներն ու հարաբերական դերանունները գտնելու համար:

Դասագրքում ընտրված օրինակներն աչքի են ընկնում ոչ միայն ճշգրտությամբ, այլև գեղագիտական կատարելությամբ: Աշակերտը պետք է յուրացնի սովորական և շրջուն շարադասությունը: Հեղինակի համար այս հարմար առիթ է իր սիրելի բանաստեղծից բերված օրինակով աշակերտին հասկանալի դարձնել ոչ միայն քերականական իրողությունը, այլև բանաստեղծության պոետիկայի առանձնահատկությունը.

Անտառում ամպի ծվեններ կային,

Կապույտ մշուշներ կային անտառում.

Օրոր էր ասում աշունն անտառին,

Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

(Հ.Սահյան)¹²

Աշակերտներին հանձնարարված վարժություններում իրականացվում է հայոց լեզվի ուսուցման հավերժական կապը հայ գրականության հետ: Շատ-շատ են այն վարժությունները, որոնք ուղղակի քաղված են հայ նշանավոր գրողների դասական երկերի այն հատվածներից, որոնք ամբողջական են իրենց պատումով և աշակերտին գիտելիք են տալիս նաև հայ գրականությունից, իրականացնում են միջառարկայական կապը:

Հենց նույն «Շարադասություն, տրամաբանական շեշտ» թեմայի համար դասագրքում որպես վարժություն առաջարկվում է մի գողտրիկ հատված Ավ. Իսահակյանի «Գարիբալդիականը» պատմվածքից:

Սերգեյ Աբրահամյանի գիրքը ուսուցչի իսկական օգնականն է, որովհետև իր՝ վարպետորեն մատուցված քերականական օրինաչափությունների մեկնություններով բազմաթիվ դոճեր է բացում դեպի հայոց լեզվի քերականությունը: Ուսուցիչը այս գիրքը պետք է մշտապես ունենա սեղանին:

Դասագրքի համար լուծվում են երկու կարևոր խնդիրներ՝ ինչ է սովորեցնում դասագիրքը և ինչպես է սովորեցնում: Այս երկու առումով էլ Ս.Աբրահամյանի դասագիրքը էական նորություններ է բերում: Բազմաթիվ են շարահյուսական համակարգի, նրա բաղադրիչների վերաբերյալ գիտելիքների ճշտումները: Դրանք նպաստում են թե՛ մայրենի լեզվի կառուցվածքի ճիշտ ճանաչմանը, թե՛ ուսուցման գիտակցականությանը, թե՛ աշակերտի տրամաբանական մտածողության զարգացմանը: Ս.Աբրահամյանի դասագիրքը դասագրքային գրականության մեջ նորություն է բերում նաև նյութի ուսուցման մեթոդական մշակման՝ ինչպես սովորեցնելու հարցում:

¹² Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու, 7-8, Դասագիրք միջնակարգ դպրոցի VII-VIII դասարանների համար, Ե., 1988, էջ 39:

Ամեն կենդանի լեզու իր շարունակական զարգացման ընթացքում նորանում է. թարմանում, մեծացնում իր հնարավորությունները. իր շփումները այլ լեզուների հետ, հարստացնում իր բառապաշարը, փոխում ակտիվ և պասիվ բառերի հարաբերությունը, նորացնում դարձվածքները, ձգտում կատարելության, հղկման: Այս իրողություններն ուղղակիորեն կապված են կենդանի լեզուն սովորեցնող դասագրքերի հետ: Շեշտում ենք կենդանի լեզուն, որովհետև հին լեզուների ուսուցման դասագրքերը կարող են առավել երկար գործածության մեջ լինել և նորացման այդօրինակ կարիք չունենալ:

Սերգեյ Աբրահամյանի «Հայոց լեզու, շարահյուսություն» դասագիրքը այդ առումով ևս օրինակելի է: Այն ամբողջությամբ շարադրված է արդիական դպրոցի պահանջների համեմատ, այն հիմնովին նորացված է և հանձնարարելի է նաև այս առումով: Գրքում ընդգրկված են դիդակտիկ, տեսողական սխեմաներ, որոնք շարահյուսական իրողությունները դարձնում են առավել տեսանելի, հատկապես կարևոր են դրանք բարդ ստորադասական նախադասության տեսակները բացատրելիս և նրանց բազմազանությունը ներկայացնելիս:

Գիրքը աշակերտին սովորեցնում է մարդկային խոսքի շաղկապման գաղտնիքները, նախադասությունների տեսակները, նախադասության անդամների փոխկապակցությունը, նախադասության գոյական անդամների լրացումների համակարգը, բայական անդամի լրացումների տեսակները՝ խնդիրները, պարագաները:

Առանձին թեմա է կապերի տեսակները, որոնք այնքան մատչելի առանձնացված են իրենց ենթատեսակներով, որ ուսուցիչը կարող է նրանց միջոցով հեշտությամբ բացատրել բայական անդամի այդ երկու տեսակ լրացումները՝ խնդիրներն ու պարագաները, և աշակերտը շատ հեշտ կճանաչի, թե որ կապը ինչ տեսակի լրացում է ձևավորում և արտահայտում:

Դասագրքից երևում է, թե որքան է կարդացել հեղինակը, որոնել և գտել համապատասխան օրինակներ հայ գրականության տարբեր հատվածներից՝ հին, նոր և նորագույն: Թվարկենք այն գրողների անունները, որոնցից առավել շատ քաղվածքներ ենք հանդիպում գրքում: Դրանք են՝ Մ. Նալբանդյան, Բաֆֆի, Մուրացան, Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան, Ե. Չարենց, Ա. Բակունց, Դ. Դեմիրճյան, Հ. Շիրազ, Պ. Սևակ, Հր. Քոչար, Ն. Զարյան, Հ. Սահյան, Վ. Պետրոսյան, Ս. Կապուտիկյան, Հ. Սաթևոսյան, Ն. Աղայան և շատ ուրիշներ:

Դասագրքի էջերում հանդես են գալիս նաև Վիկտոր Հյուգոն, Կիմ Բակշին, Գարեգին Նժդեհը, Վիլյամ Սարդյանը՝ հայոց լեզվի, հայկական մշակույթի մասին իրենց ասույթներով: Որքան տեղին է Կիմ Բակշիից բերված հատվածը.

«Ամեն մի ժողովուրդ ունի իր Կրեմլը, իր Լուվրը, իր Բուրգերի հովիտը: Հայաստանում դա Մատենադարանն է: Այնտեղ մտնում ես ինչպես համերգասրահ:

Մկզբում նվագախումբը լարում է գործիքները, բազմաձայն նվագում է Երևանը: Վեր ես բարձրանում վարդագույն շենքեր ունեցող փողոցով դեպի բարձունքը: Հնչյունները մեկը մյուսի հետևից լռում են: Մնում են ճնճողիկների խլացուցիչ ճովողյունը և մեկ էլ մանուկների զիլ կանչերը հարթ ու անվերջանալի աստիճաններին:

Մա հնչում է որպես երաժշտական առաջին թեմա: Եվ դրա հետ, դրան զուգահեռ, յուրաքանչյուր քայլի հետ դեպի վեր՝ ծնվում է, ուժգնանում Մատենադարանի հանդիսավոր մեղեդին:

Մատենադարանը վեհասքանչ մոտենում է, աճում որպես բերդ, որպես հուշարձան: Լեռան պաստառին նրա ճակատը նման է խորանի՝ հին ձեռագրի սկզբնաէջը, այնտեղ պահվող խորաններից մեկը:

Մատենադարանը այդպես էլ թարգմանվում է հին հայերենից՝ գրադարան, գրասպահոց:

Այնտեղ տասնվեց հազար ձեռագիր մատյան և պատաստիկ կա, փոքրից՝ 19 գրամանոցից, մինչև ամենամեծը՝ երկփթանոց մագաղաթյա հսկան: Ամենահին թերթիկները պահպանվել են 5-րդ դարից, ամենահին մանրանկարներն ստեղծվել են 6-րդ դարում»:

(Ըստ Կիմ Բակշիի)

Գրքի մեծագույն առավելություններից մեկն էլ այն է, որ հայերենի կետադրությունը հատուկ ձևով բացատրվում է ամեն թեմայի համապատասխան և նոր միայն առավել ամրացվում գրքի վերջում՝ որպես առանձին և կարևոր թեմա՝ «Կետադրություն» խորագրով¹³:

Սերգեյ Աբրահամյանի «Հայոց լեզու, շարահյուսություն» դասագիրքը հարուստ է և խորքային, ուսուցման համար ունի անհրաժեշտ թեթևություն, նրանում եղած օրինակները, վարժությունները լուծման առումով մատչելի են և ընդգրկում են հայերենի կանոնակարգված լեզվական իրողությունները:

Դասագրքի հեղինակը ջանացել է, որ հայոց լեզվի քերականության նկատմամբ աշակերտը խորթություն չունենա, այլ ընկալի այն որպես անհրաժեշտ գիտելիքի հասկանալի գանձարան:

Մա դասագիրք է, որի միջոցով աշակերտը կսովորի ճիշտ խոսել, կիրթ գրել, նրա միջոցով առավել շնորհալիները կդառնան պերճախոս, սովորական աշակերտները՝ գրագետ:

Գրքի մեջ իսպառ բացակայում են լեզվական բռնագրոս, ճոճոս օրինակները, ամեն էջում աչքի է զարնում գրական և լեզվական ճաշակը: Այն հիրավի արժանի է ուսուցչի և մտավորականի սեղանի գիրք լինելու պատվին:

Եզրակացություն

Այդ դասագիրքը ունի դպրոցական դասագրքերին առաջադրվող բոլոր մանկավարժական, գիտական խնդիրների լուծումները: Ձեռնարկի ողջ բովանդակությունը հուշում է հեղինակի քաջատեղյակությունը հայոց լեզվի դպրոցական ուսուցման բոլոր աստիճաններին՝ սկսած առաջին դասարանից: Գրքի հեղինակը աշխարհի հնագույն քաղաքակրթության կնիքը իր վրա կրող լեզուն ներկայացնում է նրա քերականական համակարգի շարահյուսական բաժնի բոլոր անհրաժեշտ տրոհումներով, որը հնարավորություն է տալիս աշակերտներին՝ ապագա գրագետ մարդուն, խոսել և գրել կիրթ հայերենով, գեղեցիկ հայերենով:

Դասագրքի համար լուծվում են երկու կարևոր խնդիրներ՝ ինչ է սովորեցնում դասագիրքը և ինչպես է սովորեցնում: Այս երկու առումով էլ Ս.Աբրահամյանի դասագիրքը

¹³ Նույն տեղում, էջ 311-325:

Էական նորություններ է բերում: Բազմաթիվ են շարահյուսական համակարգի, նրա բաղադրիչների վերաբերյալ գիտելիքների ճշտումները: Դրանք նպաստում են թե՛ մայրենի լեզվի կառուցվածքի ճիշտ ճանաչմանը, թե՛ ուսուցման գիտակցականությանը, թե՛ աշակերտի տրամաբանական մտածողության զարգացմանը: Ս.Աբրահամյանի դասագիրքը դասագրքային գրականության մեջ նորություն է բերում նաև նյութի ուսուցման մեթոդական մշակման՝ ինչպես սովորեցնելու հարցում:

Գրքի մեջ իսպառ բացակայում են լեզվական բռնազբոս, ճոճոան օրինակները, ամեն էջում աչքի է զարնում գրական և լեզվական ճաշակը: Այն հիրավի արժանի է ուսուցչի և մտավորականի սեղանի գիրք լինելու պատվին:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ա.Ա., Գրաբարի ձեռնարկ, «Լույս» հրատ., Երևան, 1976, 558 էջ:
2. Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու, 7-8, Դասագիրք միջնակարգ դպրոցի VII-VIII դասարանների համար, 5-րդ հրատարակություն, «Լույս» հրատ., Երևան, 1988, 328 էջ:
3. Ադոնց Ն., Երկեր, Գ, ԵՊՀ հրատ., Երևան, 2008, 489 էջ:
4. «Հայագիտական հանդես», գիրք III, Սերգեյ Աբրահամյան, Գիտական դիմանկար և կենսամատենագիտություն, «Հայրենիք-Արտագերս» հրատ., Երևան, 2002, 120 էջ:
5. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, 720 էջ:
6. Grevisse M., Le bon usage, Onzième edition, Duculot, Paris, 1980, 1519 p.
7. Kouligina A., Rosenblit, Livre du maitre, En 9-10^e, Le français, изд. “Просвещение”, Москва, 1978, 222с.
8. Valid D.D., Improve Your English, Orient Paperbacks, Delhi, 1985, 172p.
9. Французско-русский фразеологический словарь, Гос.издательство иностранных и национальных словарей, Москва, 1963, 1111 с.

Dolukhanyan Aelita - Sergey Abrahamyan's Syntax Textbook is not Outdated.-This textbook meets all the requirements for school textbooks that are designed to solve pedagogical and scientific problems. The content of the textbook demonstrates the author's high professionalism in teaching the Armenian language in schools, starting from the first grade. S. Abrahamyan presents the Armenian language—the bearer of one of the world's most ancient civilizations—with all the necessary sections of its syntax as part of the grammatical system. This enables students—future members of society—to speak and write competently in their native language.

The textbook addresses two important questions: what to teach and how to teach it. In this respect, S. Abrahamyan's textbook features significant innovations. It clarifies knowledge in the field of syntax and its components, which contributes to a more accurate understanding of the native language's structure, conscious learning, and the development of students' logical thinking. The textbook is a novelty in this type of literature, both from the perspective of the methodical processing of the material and the teaching approach.

The book contains no deliberate or fabricated linguistic examples, and every page demonstrates the author's literary and linguistic taste. This textbook can truly become a go-to reference for teachers and intellectuals.

Keywords: Sergey Abrahamyan, syntax textbook, literature, reference book, linguistic taste, exercises, classical compositions, student.

Dolukhanyan Aelita, Head of the Chair of Ancient and Medieval Armenian Literature and Methods of Teaching, Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan, Corresponding Member of the NAS of the RA, Doctor of Philological Sciences, Professor.

Долуханян Аэлита - Учебник по синтаксису Сергея Абраамяна не устаревает.-Этот учебник соответствует всем требованиям, выдвигаемым в отношении школьных учебников, призванных решить педагогические и научные вопросы.

Содержание учебника в целом говорит о высоком профессионализме автора в вопросах школьного изучения армянского языка начиная с первого класса. С. Абраамян представляет армянский язык, являющийся носителем древнейшей цивилизации мира, со всеми необходимыми разделами его синтаксиса как части грамматической системы, что дает возможность ученикам – будущим членам общества – грамотно говорить и писать на родном языке. В учебнике решены две важные задачи: чему и как учить. В этом плане учебник С. Абраамяна отличается существенными новациями. Речь идет об уточнении знаний в области синтаксиса и его составных частей, которые способствуют как более верному пониманию структуры родного языка, осознанному обучению, так и развитию логического мышления учеников. Учебник С. Абраамяна является новизной в такого рода литературе как с точки зрения методической обработки изучаемого материала, так и обучения.

В книге отсутствуют нарочитые и вымышленные лингвистические примеры, ее каждая страница явствует о литературном и лингвистическом вкусе автора. Учебник воистину может стать настольной книгой для учителей и представителей интеллигенции.

Ключевые слова: Сергей Абраамян, учебник по синтаксису, литература, настольная книга, лингвистический вкус, упражнения, классические сочинения, ученик.

Долуханян Аэлита, Заведующая кафедрой древней и средневековой армянской литературы и методики ее преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, Член-корреспондент НАН РА, доктор филологических наук, профессор.

Զաքարյան Հովհաննես
բանասիրական գիտությունների թեկնածու,
«Տաթև» ԳԿՀ,
լեզվաբանության բաժանմունքի ղեկավար.
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր. արդի հայերեն, տարբերակայնություն, համասեռ զուգաձևեր, տարասեռ զուգաձևեր, լեզվի զարգացման միտումներ, լեզվական կանխատեսում, լեզվաշինական քաղաքականություն:

Նախաբան

Սույն հոդվածն այն մասին է, թե ինչ է զուգաձևությունը, ինչպես են առաջանում լեզվական զուգաձևերը, զարգացման ինչ ընթացք են անցնում, ինչպես են մարում:

Համառոտ քննարկված է այն հարցը, թե ինչ դեր ունեն զուգաձևերը լեզվի զարգացման գործընթացում: Անդրադարձ է կատարված նաև այն խնդրին, թե զուգաձևության եզրերը միմյանց նկատմամբ ինչ փոխհարաբերություն կարող են ունենալ կանոնարկման տեսակետից, և ինչպես ու ինչ օրինաչափություններով կարող է այդ հարաբերությունը փոխվել ժամանակի ընթացքում:

Ներկայացված է արդի արևելահայերենում առկա զուգաձևությունների ընդհանուր պատկերը՝ առավել նշանակալից զուգաձևերի նկարագրությամբ և օրինակներով: Զուգաձևության դեպքերը դասակարգված են ըստ առաջացման ուղիների, կառուցվածքային տարատեսակների և մակարդակների:

Շոշափված է նաև զուգաձևության ուսումնասիրության խնդիրն ընդհանրապես և հայ լեզվաբանության մեջ մասնավորապես:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Զուգաձևությունը լեզվական որևէ միավորի՝ նույնիմաստ ձևային ազատ տարբերակներ ունենալն է լեզվական տվյալ համակարգի զարգացման տվյալ փուլում և կանոնարկման տվյալ պահի շրջանակներում:

Զուգաձևերը նույն իմաստն ու գործառույթն ունեցող լեզվական ձևային ազատ (ոչ դիրքային) տարբերակներ են, որոնք այնուհանդերձ կարող են միմյանցից զանազանվել կանոնարկման աստիճանով և գործառական-ոճական նրբերանգներով:

¹ Զուգաձևությունը (**ազատ** տարբերակումը) պետք է հստակ զանազանել կախյալ (**դիրքային**) տարբերակումից: Օրինակ՝ տարբեր բառեր պատկանում են հոլովման (սեռական-տրական հոլովի եզակի թվի կազմության) տարբեր տիպերի, այսինքն՝ տիպային հոլովակերտները (-ի, -ու, -ոջ, -վա նն) փոխլրացման հարաբերության մեջ են և, որպես կանոն, չեն կարող նույն դիրքում (նույն բառի դեպքում) միմյանց փոխարինել: Դրանք՝ որպես դիրքային տարբերակներ, միասին կազմում են եզակի սեռական-տրական հոլովի կազմության անփոփոխակը: Բայց առանձին դեպքերում նույն բառը՝ որպես բացառություն, կարող է ենթարկվել հոլովման երկու կամ ավելի տիպերի (*ամռան // ամառվա, Գյումրիի // Գյումրու // Գյումրվա*)՝ առաջ

Չուգաձևեր չեն համարվում բառային նույնանիշներն ու հոմանիշները՝ *անձավ // այր, ավելի // առավել, պակաս // նվազ, ամենալավ // լավագույն*, ինչպես նաև շարահյուսական հոմանիշ կառույցները՝ կրավորական ու ներգործական, ուղղակի ու անուղղակի մեջբերմամբ, դերբայական դարձվածով ու երկրորդական նախադասությամբ և այլն: Դա բացատրվում է նրանով որ զուգաձևեր են համարվում լեզվական միավորի այն տարբերակները, որոնք ինքնուրույն ու մշտակայուն չեն, այլ բնորոշ են լեզվի զարգացման տվյալ պահին միայն: Մինչդեռ նշված կարգի հոմանիշները համակարգային նշանակություն ունեն, ուստի և կայուն են, մշտատև:

Չուգաձևության մասին սովորաբար խոսվում է լեզվի գրական տարբերակի առնչությամբ, թեև սկզբունքորեն զուգաձևեր կարելի է տեսնել նաև բարբառներում ու լեզվի գոյության այլ ձևերում:

Չուգաձևությունը՝ որպես կենդանի լեզվին բնորոշ և այդ լեզվի՝ ժամանակի մեջ փոփոխության ընթացքն ապահովող յուրահատուկ երևույթ, սկսել է հետևողականորեն ուսումնասիրվել անցյալ դարի երկրորդ կեսից սկսած՝ *հանրալեզվաբանություն* միջգիտակարգի ձևավորմանը զուգընթաց: Այդ երևույթը հետազոտողների ուշադրությանն է արժանացել հատկապես գրական լեզվի կանոնարկման, լեզվի հասարակական շերտավորման բացահայտման խնդիրների կապակցությամբ:

Նայ իրականության մեջ զուգաձևությունների ուսումնասիրությունը թափ է առել անցյալ դարի 70-ականներից սկսած և շարունակվում է առ այսօր:

բերելով առատ տարբերակներ՝ զուգաձևեր, որոնք միմյանց փոխարինում են նույն դիրքում (նույն բառի դեպքում): Չուգաձևության դեպքում ընդունված չէ խոսել անփոփոխակի մասին:

² Տե՛ս, օրինակ. W. Labov. *The Social Stratification of English in New York City*. W., 1966. W. A. Wolfram. *A Sociolinguistic Description of Detroit Negro Speech*. W. 1969. Ch. Pahlsson. *The Northumbrian Burr. A Sociolinguistic Study*. Lund, 1972. *Varieties of Present-day English* (eds. R. W. Bailey, J. L. Robinson). N. Y. 1973. L. Lewin and H. J. Crockett. *Speech Variation in a Piedmont Community: Postvocalic r*. — «Explorations in Sociolinguistics» (ed. S. Lieberman). «International Journal of American Linguistics», vol. 33, no. 4, Bloomington, 1973. *Sex and Language: Difference and Dominance* (eds. B. Thorne and N. Henley). Rowley, Mass., 1975. W. Labov. *The Study of Nonstandard English*. N. Y., 1976. L. R. Heber. *Leaped and Leapt. A Theoretical Account of Linguistic Variation*. - «Foundations of Language», 1976, v. 14, no. 2. S. Kroch. *Toward a Theory of Social Dialect Variation*. - «Language in Society», 1978, no. 1. P. П. Рогожникова. *Варианты слов в русском языке*. М., 1966. Е. И. Голанова. *Словообразовательная вариативность наименований приспособлений и механизмов*. - «Социально-лингвистические исследования» (отв. ред. Л. Крысин, Д. Шмелев), М., 1976, с. 167-180. С. М. Кузьми на. *Вариативность произношения групп согласных*. — «Социально-лингвистические исследования» (отв. ред. Л. Крысин, Д. Шмелев), М., 1976, с. 123-128. К. С. Горбачевич. *О норме и вариативности на синтаксическом уровне (колебания в формах управления)*. — ВЯ (отв. ред. Ф. Филин), 1977, N 2, с. 64-73. Л. К. Граудина. *Вопросы нормализации русского языка (грамматика и варианты)*. М., 1980. *Литературная норма и вариантность* (отв. ред. И. Скворцов). М., 1981. Э. Д. Головина. *К типологии языковой вариантности*. — ВЯ (отв. ред. Г. Степанов), 1983, N 2, с. 58-63. В. М. Солнцев. *Вариативность как общее свойство языковой системы*. — ВЯ (отв. ред. Г. Степанов), 1984, N 2, с. 31-42.

³ Տե՛ս, օրինակ. Հ. Հարությունյան, *Բայական զուգաձևերի վիճակագրական պատկերը ժամանակակից հայերենում*. - «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Է. Ջրբաշյան), 1975, N 3, էջ 55-68: Ն. Պառնայան, *Չնաբանական զուգաձևությունները ժամանակակից գրական հայերենում*. - «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր» (խմբ.՝ Գ. Սևակ), Ե., 1976, էջ 24-41: Հ. Չաքարյան, *Չայերենի հասարակական տարբերակումը Երևանում*. - «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն» (խմբ.՝ Է. Սդայան), Ե., 1981, էջ 120-280: Ս. Սարգսյան, *Գոյականական զուգաձևությունները ժամանակակից հայերենում*. - «Լեզվի և ոճի հարցեր», X (խմբ.՝ Ս. Աբրահամյան, Լ. Հովսեփյան), Ե., 1987, էջ 123-230: Ն. Մկրտչյան, *Չոլովական զուգաձևությունները դասական և հետդասական գրաբարում*. - «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Հ. Միրզոյան), Ե., 1994, թիվ 3, էջ 176-181: Բ. Մեծունց, *Չոգնակիի զուգաձևերը հայերենում*. - «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Հ. Միրզոյան), Ե., 1995, թիվ 3, էջ 29-39: Ն. Մկրտչյան, *Գրաբարի չոլովական զուգաձևությունների զարգացման*

Ձուգաձևերը, ինչպես և ընդհանրապես լեզվական տարբերակները արդյունք են լեզվական արտահայտության միջոցների անսահման բազմազանության՝ թե՛ որպես իրողություն, թե՛ որպես հնարավորություն: Ձուգաձևերի շարժը կախված է ներլեզվական ու արտալեզվական բազմաթիվ գործոններից:

Ձուգաձևեր կարող են լինել լեզվի տարբեր մակարդակներում ու ենթամակարդակներում՝ հնչյունական, գրային, բառային-բառակազմական, ձևաբանական, շարահյուսական և այլն:

Ձուգաձևության եզրերը ծագումնաբանորեն լինում են երկու տեսակի՝ համասեռ և տարասեռ: Տարասեռ են այն զուգաձևերը, որոնք առաջանում են տարբեր և անկախ միավորների գործառական համընկնումից: Համասեռ են այն զուգաձևերը, որոնք առաջանում են նույն միավորից՝ ձևական երկփեղկմամբ: Այսպես, օրինակ՝

Ա. ձևաբանական մակարդակում՝

ա. տարասեռ զուգաձևեր կարող են առաջանալ տարբեր միավորների իմաստային ու գործառական մերձեցմամբ և նույնացմամբ՝ որպես քերականական նույն ձևի տարբերակային դրսևորումներ՝ *ե՛կ // արի՛, մի՛ եկ // մի՛ արի // մի՛ գա, մի՛ եղիր // մի՛ լինիր,*

բ. համասեռ զուգաձևեր կարող են առաջանալ լեզվական միավորի ձևական երկփեղկման հետևանքով նույնիմաստ տարբերակների առաջացմամբ:

Երկփեղկումը հիմնականում առաջանում է ձևակազմության հոմանիշ կադապարների զուգահեռ իրացմամբ: Դրա դրսևորումներից են՝

1. **տիպային** զուգաձևությունը, երբ որոշ թեքվող բառեր զուգահեռաբար կարող են պատկանել թեքման մեկից ավելի տիպի: Դրա տարատեսակներ են՝

1.1. հոլովական զուգաձևությունը, երբ որոշ գոյականներ զուգահեռաբար կարող են պատկանել մեկից ավելի հոլովման տիպի՝ *բեռի // բեռան, հանգստի // հանգստյան, կայսրի // կայսեր, օրի // օրվա, սկեսուրի // սկեսորոջ, Լոռիի // Լոռու // Լոռվա, ամռան // ամառվա, անկյամբ // անկյունով, միությունմբ // միությունով,*

1.2. խոնարհման զուգաձևությունը, երբ որոշ բայաձևեր զուգահեռաբար կարող են կազմվել տարբեր բանաձևերով՝ *ե՛լ // ելի՛ր, մի՛ զարկ // մի՛ զարկիր, մի՛ տուր // մի՛ տա, մի՛ վեր կաց // մի՛ վեր կենա, մի՛ գաք // մի՛ ք գա,*

ընթացքը միջին և նոր գրական հայերենում. - «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Հ. Միրզոյան), Ե., 1995, թիվ 2, էջ 156–160: **Հ. Չաքարայան,** *Բացարձակ աներևույթի և համանման կառույցների զուգաձևերը ժամանակակից հայերենում.* - «Ջահուկյանական ընթերցումներ» (խմբ.՝ Լ. Հովհաննիսյան), Ե., 2007, էջ 79-86: **Հ. Չաքարայան,** *Համադրական և վերլուծական կառույցների զուգաձևությունը ժամանակակից հայերենում.* - «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր (խմբ.՝ Ս. Գասպարյան), Ե., 2009, էջ 8–19: Փ. Մեյթիխանյան, *Ուղղագրական և բառային զուգաձևությունները ժամանակակից հայերենում.* - «Արդի հայերենի հիմնախնդիրներ (միջազգային գիտաժողովի նյութեր)» (խմբ.՝ Լ. Գալստյան, Յու. Ավետիսյան), Ե., 2016, էջ 97-102: Լ. Թեյլան, **Շարահյուսական նորմ. զուգաձևեր և շեղումներ.** - «Հայագիտության հարցեր» (խմբ.՝ Վ. Պետրոսյան), Ե., 2017, հմ. 1, էջ 137-148: **Հ. Չաքարայան,** *Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության զուգաձևերը արդի հայերենում.* — «Մանկավարժական միտք» (խմբ.՝ Է. Այվազյան), Ե., 2019, հմ. 3-4 (72-73), էջ 18-31: **Յու. Ավետիսյան,** *Հոլովական զուգաձևությունների տարբերակման սկզբունքները և տեսակները արդի գրական արևելահայերենի անվանական համակարգում.* - «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Լ. Ավետիսյան), 2023, հ. 2, էջ 60-74:

1.3.. թվակազմական գուգաձևությունը, երբ մի քանի գոյականների հոգնակին կարող է կազմվել տարբեր կադապարներով՝ ավանդական կամ նոր՝ *տիկնայք // տիկիններ, անձինք // անձեր,*

2. հիմքային գուգաձևությունը, երբ որոշ բառաձևեր կարող են կազմվել տարբեր հիմքերից, մասնավորապես՝

2.1. որոշ գոյականների և դերանունների բացառականը, գործիականը և կամ ներգոյականը կարող է կազմվել թե՛ ուղղականից, թե՛ սեռական-տրականից կամ էլ վերջինիս տարբեր տիպերից՝ *տնից // տանից, զարունից // զարնանից, ձմեռով // ձմռանով, կղզ(ի)ում, Գյումր(ի)ում, մթ(ն)ում, ամռանից // ամառվանից, տիկինով // տիկնոջով, մեզ(ա)նից,*

2.2. մի շարք բայաձևեր կարող են կազմվել տարբեր բայահիմքերից (կատարյալի կամ անկատարի)՝ *թող(եց)ին, գր(եց)ե՛ք, աս(աց)ե՛ք, մի՛ եղիր // մի՛ լինիր, մի՛ եկեք // մի՛ գաք, մի՛ մոռացիր // մի՛ մոռանա, մի՛ հուսացեք // մի՛ հուսաք, մի՛ լա(ց)իր, մի՛ հարցրու // մի՛ հարցնի, ներդնող // ներդրող,*

2.3. որոշ կարգի գոյականների, ինչպես նաև փոխանուն ածականների հոգնակին կարող է կազմվել տարբեր հիմքերից՝

2.3.1. ավանդական (վերապրուկային) կամ նոր հիմքից՝ *ձեռներ // ձեռքեր, ոտ(ն)եր, մատ(ն)եր, ծնկներ // ծունկեր,*

2.3.2. բազմավանկ կամ միավանկ ընկալվող հիմքից՝ *արկղ(ն)եր, սպի(ն)եր,*

2.3.3. իբրև միավանկ անվանական վերջնաբաղադրիչով կամ սովորական բազմավանկ ընկալվող հիմքից՝ *մարզպետ(ն)եր, լեռնանցք(ն)եր, բթամատ(ն)եր, ջրահարս(ն)եր, խորհրդանիշ(ն)եր, մեծամեծ(ն)եր,*

3. **հնչյունափոխական գուգաձևությունը**, երբ որոշ թեք ձևեր կարող են կազմվել հնչյունափոխությամբ կամ առանց դրա՝ *կամ(ու)րջի, եզրափակ(ի)չում, ծն(ու)նդի, ծ(ու)նկի, կոշ(ի)կի, թ(ու)զի, բվի // բուի,*

Բ. Բառային-բառակազմական գուգաձևերը նույնպես կարող են առաջանալ՝
ա. համասեռ տարբերակմամբ՝

1. կադապարային տարբերակմամբ՝

1.1. (շարադասական տարբերակներ) *զօրուզիշեր // գիշերուզօր, սրտնեղել // նեղսրտել, մահամերձ // մերձիմահ, մայրաքաղաք // քաղաքամայր, ծակաչք // աչքածակ, ցիրուցան // ցանուցիր, հետայսու // այսուհետ,*

1.2. (կցական/իսկական բարդություն) *հնդուհավ // հնդկահավ, կեսկատակ // կիսակատակ, հինգտակ // հնգտակ,*

1.3. (համադրական/հարադրական բարդություն) *ծուռքիթ // քիթը ծուռ, կողահաստ // կողը հաստ, սրտաբաց // սիրտը բաց,*

1.4. (հապավական և ոչ հապավական բարդություն) *հրետզունդ // հրետանագունդ,*

1.5. (հոլովական/կապային հարադրություն) *երես երեսի // երես առ երես,*

1.6. (աձանցավոր/բարդ (աձանցավոր) կազմություն) *քարե // քարաշեն, արծվիկ // արծվաձագ, ծանրորդ // ծանրամարտիկ,*

2. կազմիչի առկայությամբ/բացակայությամբ՝

2.1. (հոդակապով) լեզվ(ա)ստամնային, երես(ա)պատում, չորս(ա)նոց, ջր(ա)շուն, վեր(ա)ստեղծել, մեքենա(յա)բար, մոսկվա(յա)բնակ,

2.2. (բայածանցով) հափրանալ // հափրել, հանգ(չ)ել, թող(ն)ել, հակառակ(վ)ել,

2.3. (ածանցով) սուրսայր(ի), տմարդ(ի), պատկան(ել(ի))ություն, սիրազեղ(ուն), սրաթոփչ(ք), այսուհետ(և), քառամասն(յա), (ի)զուր, կոինչ // կոնչոց, ճոինչ // ճոնչուն, հնգաթև // հինգթևյան, հարյուրոտն // հարյուրոտանի, հաջող(ություն)ն,

2.4. (շաղկապով) հաց-պանիր // հաց ու պանիր, կամա-ակամա // կամա թե ակամա,

2.5. (ն/ը հիմքակազմիչով) տաս(ը)հազարանոց, տաս(ն)երորդ, անցում(ն)ային, գազաթ(ն)ածողով, վերջ(ն)ավանկ, յոթ(ն)ամսյա, դառը // դառն,

2.6. (նախահավելվածով) քն(հ)ատ, (հ)ետ, (հ)ավելել,

2.7. (ձայնակապով) Հա(յ)իթի, Միխա(յ)իլ, Տա(վ)ուշ,

2.8. (այլ մասնիկով) խոստումնալի(ց), սիրալի(ր), տղամարդ(կ)ություն,

3. կազմիչի տարբերակներով՝

3.1. (ձայնդարձով) հար-հավիտյան // հուր-հավիտյան, երկնաբերձ // երկնաբարձ, միակտոր // միակտուր, միջանցիկ // միջանցուկ,

3.2. (խոնարհիչով) հազել // հազալ, սարսռել // սարսռալ, խմեցնել // խմացնել,

4. հոմանիշ կազմիչներով՝ մորուս // մորուք, թորվածք // թորուցք, մուրացիկ // մուրացկան, հինգթևանի // հինգթևյան, բրդե // բրդյա, մոնչուն // մոնչոց, դիպվածային // դիպվածական, մեծամտաբար // մեծամտորեն, նախօրե // նախօրյակ, մեկմեկի // մեկմեկու, մեկումեջ // մեկընդմեջ, մեկսենյականոց // միսենյականոց, հուզաթաթավ // հուզաթաթախ, պնդաջիղ // պնդաջիլ, փոշեկուլ // փոշեծծիչ // փոշեհավաք, արծվաձագ // արծվաճուտ,

5. հիմքային տարբերակմամբ՝ խոսքիմասային // խոսքամասային, զարմանքախառն // զարմացախառն, հորական // հայրական, տեգերկին // տեգորկին, կայս(ե)րական,

6. հնչյունափոխական տարբերակմամբ՝ էշատեր // իշատեր, ձեթոտ // ձիթոտ, այլատյացություն // այլատեցություն, եղջուրափող // եղջերափող, ձ(յու)նաբուք, մրցու(յ)թային, սր(ու)նքակալ, գոլորշ(ի)ացում, ավստրալ(ի)ական, Գյումր(ե)ցի, հ(ի)նգական, կապ(ի)կություն,

7. ուղղախոսական (արտասանական) տարբերակմամբ՝

7.1. (խլացմամբ) ողջույն // ոխչույն // ոխձույն, հարավ // հարաֆ,

7.2. (քմայնացմամբ) յոթերորդ // յոթյերորդ // յոցյերորդ, Նալբանդյան // Նալբանձյան,

7.3. (համրացմամբ) պաշ(տ)պան, օր(հ)նել, դաստի(ա)րակել,

7.4. (շեշտի տեղով) ո՞րտեղ // որտե՞ղ, մա՛նավանդ // մանավա՛նդ, նա՛ն // նան՛,

8. ուղղագրական (գրային) տարբերակմամբ.

8.1. (ր/ռ) Խորիտունիք // Խոռիտունիք, մրթմրթալ // մոթմոթալ, ապար // ապառ,

8.2. (կրկնակ բաղաձայն) Կոմ(մ)ագենե, շվ(վ)ացնել,

8.3. (մեծատառ/փոքրատառ) Դավիթ բեկ // Բեկ, Միսիթար սպարապետ // Սպարապետ, Հայկ նահապետ // Նահապետ,

8.4. (միության գծիկ / շեղ գիծ) մարդ-օր // մարդ/օր,

8.5. (առանձին/միասին՝ ըստ համադրականացման միտումի) *վեր հանել // վերհանել, ահ ու դող // ահուդող, բարձր լեռնային // բարձրլեռնային, գուցե և // գուցեն, լիտր ու կես // լիտրուկես, Նարեկա վանք // Նարեկավանք, քաջ նազար // քաջնազար, վաղը նեթ // վաղնեթ,*

8.6. (գծիկով/միասին) *կահ-կարասի // կահկարասի, հարայ-հրոց // հարայիրոց,*

8.7. (առանձին/գծիկով) *Արին բերդ // Արին-բերդ, Դավիթ Բեկ // Դավիթ-Բեկ,*

9. տողադարձային տարբերակամբ՝ *ան-կյուն // անկ-յուն, մրցա-կցել // մրցակ-ցել, ծով-եզր // ծո-վեզր, չարա-ճճի // չարաճ-ճի,*

10. տառադարձական տարբերակամբ՝ *ագաթ // ագատ, Էդվարդ // Էդուարդ, Ափրոդիտե // Աֆրոդիտե, լեզիոն // լեզեոն, մեռոն // մյուռոն,*

բ. տարասեռ տարբերակամբ՝

1. հայերենի տարածքային կամ պատմական տարբերակից վերցված⁴ և ներհամակարգային ձևերի գուգահեռ գործածությամբ՝

1.1. (արևմտահայերեն // արևելահայերեն) *աղեկ // լավ, վարժուհի // ուսուցչուհի,*

1.2. (բարբառային // գրական) *վրեն // վրան, իրիկուն // երեկո, թուշ // այտ,*

1.3. (գրաբար // աշխարհաբար) *հուսո // հույսի, համենայն դեպս // ամեն դեպքում,*

2. փոխառյալ և ոչ փոխառյալ բառերի գուգահեռ գործածությամբ՝ *անսամբլ // համույթ, Էմոցիա // հույզ, անարխիստ // անիշխանական, լեզիտիմ // օրինական:*

Գ. Շարահյուսական գուգաձևերը, որ առավելապես համասեռ տարբերակներ են, կարող են լինել՝

1. հնչերանգային՝ *կարո՞ղ ես // կարող է՞ս, համաձա՞յն եք // համաձայն է՞ք, արդյո՞ք գիտես // արդյոք գիտե՞ս,*

2. հոլովառական (խնդրառական)՝ *կառչել բազրիքին // բազրիքից, հինգին // հինգից տաս պակաս, իրար կողք(ի) հայտնվել, դասել բացառությունների շարքը // շարքին // շարքում, կախել պատից // պատին, գամվել անկողնուն // անկողնում, տեղյակ լինել գործերից // գործերին // գործերի մասին, ուժերը // ուժերի ներածի չափով, ամեն քայլափոխի // քայլափոխում, բավարարել պահանջները // պահանջներին, ձեռնարկել մի բան // բանի,*

3. հոդառական՝ *ուժերի ներածի(ն) չափով, ամեն քայլափոխի(ն),*

4. համաձայնական՝ *30 ծառ չի // չեն ծաղկել, ինձ հետ գա // գան 3 քաջ զիվոր(ներ),*

5. շարադասական՝ *գնացի տուն // տուն գնացի,*

6. կետադրական՝ *.... բայց(.) եթե.... 2025 թ(.)-ին:*

Զուգաձևության առաջացման պատճառները

Զուգաձևությունը, ինչպես նշվեց, կարող է առաջանալ ներլեզվական զարգացումների արդյունքում կամ էլ արտաքին գործոններով պայմանավորված: Ահա այդ պատճառներից մի քանիսը:

⁴ Մրանք երբեմն համարվում են ներքին փոխառություններ (տե՛ս, օրինակ, **Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան**, Ե., 1987, էջ 613):

ա. Լեզվի զարգացման միտումների (օրինակ՝ տնտեսման և բանականացման) հանդիպադրում՝ *ծաղկի // ծաղիկի, թզի // թուզի*: Չուզաձևության նշված եզրերից առաջիններում կատարվել է շեշտազրկված ձայնավորի թուլացում (ը-ի վերածում) կամ սդում՝ համաձայն տնտեսման միտումի, մինչդեռ երկրորդները մնացել են անհնչունափոխ՝ համաձայն բանականացման միտումի:⁵

բ. Ձևակազմության և բառակազմության ավանդական և արդիական կադապարների հանդիպադրում՝ *գարնանից // գարունից, ծնկներ // ծունկեր, անձինք // անձեր, մի՛ գաք // մի՛ եկեք, մորական // մայրական, կայսերապաշտ // կայսրապաշտ*:

գ. Բառի հնչապատկերի (ավանդական արտասանության) և գրապատկերի (գրային արտասանության) հանդիպադրում՝ *թաքավոր // թագավոր, ախշիկ // աղջիկ*:

դ. Բառի կանոնական և ստուգաբանական արտասանության հանդիպադրում՝ *քսաներեք // քսանյերեք, անօղնաշար // անվօղնաշար*:

ե. Լեզվական կառույցների խաչաձևում (կետադրական կանոնների հանդիպադրում). *Տեսնելով, որ ոչ ոք չի լսում՝ (.) լռեց*: Ըստ մի կանոնի՝ երկրորդական նախադասությունը տրոհվում է ստորակետերով, ըստ մեկ այլ կանոնի՝ առաջադաս դերբայական դարձվածի վերջում բուրժ է դրվում:⁶

զ. Լեզվամտածական մեկնակերպերի հանդիպադրում, օրինակ՝ *ձեռնարկել* բառն ընկալվում է մերթ որպես պարզ՝ «սկսել» իմաստով, մերթ որպես բարդ՝ «ձեռք զարկել, ձեռնամուխ լինել» իմաստով: Այդ պատճառով այս բայն ունի խնդրառական զուգաձևություն՝ *ձեռնարկել մի բան // մի բանի*:

է. Կառուցվածքային վերլուծության մեկնակերպերի հանդիպադրում, օրինակ՝ բաղադրյալ բառը տարբեր կերպ է ընկալվում ու մեկնաբանվում՝ ըստ կառուցվածքի կամ ըստ ներքին ձևի, և ըստ այդմ տարբեր կերպ է ձևափոխվում կամ կապակցվում: Այսպես՝ նիշի (նշանի) տարատեսակ ցույց տվող գոյականները (*խորհրդանիշ, նամականիշ, վարկանիշ, հատկանիշ, չափանիշ*)՝ որպես միավանկ անվանական վերջնաբաղադրիչով կազմություններ, կանոնի համաձայն՝ պետք է ստանան -եր հոգնակերտ (*հայտանիշեր, աստղանիշեր, համարանիշեր, մականիշեր* և այլն), սակայն ավելի հաճախ ընկալվում են որպես սովորական բազմավանկ բառեր և ստանում -ներ հոգնակերտ (*հայտանիշներ, աստղանիշներ, համարանիշներ, մականիշներ* և այլն): Այս երկրորդ՝ սխալ ձևերի խիստ տարածվածության պատճառով թույլատրվում է նշված երկու տարբերակները համարել զուգաձևեր:

ը. այլընտրանքային կանոնների հանդիպադրում, օրինակ՝ տողադարձ կարելի է անել վանկատմամբ կամ բաղադրիչների բաժանմամբ (*հո-րեղբայր // հոր-եղբայր, շարադ-րանք // շարա-դրանք*), յ-ն համարելով պարզապես բաղաձայն կամ կիսաձայն (*գոչ-յուն // գո-չյուն, միութ-յուն // միութ-յուն*),

⁵ Բանականացման միտումը ենթադրում է ձգտում դեպի արտահայտության ու բովանդակության դիտվածքների, արտասանության ու գրության համաձևություն (այդ թվում՝ գրային արտասանության տարածում), անկանոնությունների ու շեղումների նվազում, լեզվական կառույցների թափանցիկություն և այլն:

⁶ Ավելի հանգամանորեն տե՛ս Հ. Լ. Չաքարյան, *Փորձնական կետադրության հիմունքներ. ուսումնական ձեռնարկ-բառարան*, Ե., 2021, էջ 92-95: Ա. Լ. Սարգսյան, *Ժամանակակից հայերենի կետադրությունը (ուղեցույց)*, Ե., 2012, էջ 112-114:

թ. Միսլ մեկնակերպի տարածում, օրինակ՝ *բարդ ածանցավոր* հարադրության փոխարեն թյուրիմացաբար տարածվել է *բարդածանցավոր* համադրական տարբերակը: Մա համադրականացման միտումի չարաշահման հետևանք է: Ունենք *ածանցավոր* բառը, որին ավելանում է *բարդ* որոշիչը: *Բարդ ածանցավոր* «որոշիչ+ որոշյալ» կապակցության բաղադրիչները միասին գրելու որևէ պատճառ կամ կանոն չկա: Պարզապես շփոթություն է տեղի ունեցել «[լրացում+լրացյալ]+ածանց» կաղապարի հետ, որի համաձայն՝ առաջանում է համադրական բարդություն (օրինակ՝ *Փոքր Ասիա > փոքրասիական, բարձր լեռ > բարձրլեռնային, ծուռ քիթ ծուռքթանի, ութ ոտք > ութոտնուկ, սառը պատերազմ սառըպատերազմյան, Նյու Յորք > նյույորքցի, թեթև քաշ > թեթևքաշային*): Այս կաղապարում ածանցն ընդհանուր է ամբողջ կապակցության համար: Մինչդեռ *բարդ ածանցավոր*-ի մեջ ածանցը վերաբերում է միայն երկրորդ բաղադրիչին (*ածանց+ավոր*): *Բարդ ածանց* կապակցություն չկա, որը, ընդհանուր ածանց ստանալով, դառնար մեկ համադրական բառ, ինչպես *խոսքի մաս* կապակցությունը դառնում է *խոսքիմասային*: Մի խոսքով՝ *բարդածանցավոր* գրելաձևն ուղղագրական սխալ է: Դա նույնն է, թե գրենք *ճանրհրետանի, բարդհամադասական, խառըհապավում, շնչեղձայնեղ, երկրորդհամաշխարհային* և այլն:

ժ. Օտար մշակույթների և լեզուների ազդեցությամբ մեր լեզու մուտք գործած ու տարածում ստացած փոխառյալ բառի և դրան համարժեք հայերեն նորակազմության հանդիպադրում՝ *ֆորմատ // ձևաչափ, օնլայն // առցանց, պացիենտ // բուժառու, սլայդ շոու // սահկահանդես*: Երբեմն լինում է հակառակը, երբ հայերեն բառին հանդիպադրվում է նորաձև ու նորամուտ օտարաբանությունը՝ *շպարում // մեյքափ, բացառիկ // էքսկլյուզիվ, ակումբ // քլաբ, (շատ) լավ // օքեյ, ուղերձ // մեսիջ, միջոցառում // իվենթ, ճաշ // լանչ*:

ժա. Օտար լեզուներին բնորոշ արտասանության (օրինակ՝ քմայնացման) հայերեն խոսք ներթափանցում՝ *յոթերորդ // յոցյերորդ, արդյունք // արցյունք, ինստիտուտ // ինսծյիտուտ, վալս // վայս*:

Ձուգաձևության մարման ուղիները

Ձուգաձևությունը, որպես կանոն, ժամանակավոր երևույթ է. ինչ-որ ժամանակ առաջանում է, այնուհետև մարում կամ փոխարինվում մեկ այլ զուգաձևությամբ: Մարման կամ լուծման ուղիները հետևյալն են:

1. Ձևերից մեկի հնացում և արտամղում՝ *նրանք // նոքա, վիհի // վիի, երկնիշ // երկանիշ, փուչիկ // օղափամփուշտ, կենսաբանություն // բիոլոգիա*:

2. Ձևերի իմաստային-գործառական տարբերակում և ինքնուրույնացում՝ *ցուցում // ցուցմունք, տերություն // տիրություն, հղիանալ // հղանալ, դասատուություն // դասատվություն, վերջնակետ // վերջակետ, արջորս // արջաորս, հրձիգ // հրաձիգ, վիճաբանել // բանավիճել, սրտմաշուկ (ածական) // սրտմաշուք (գոյական), խնդրել մեկին (լռել) // խնդրել մեկից (փող) և այլն*:

3. Ձևերից մեկի արգելման կանոնի հաստատում. օրինակ՝ սխալ են համարվում պատճառական ածանցով բայերի անցյալ կատարյալի ավելորդ **-եց**-ով կեղծ գրական ձևերը՝ *խաղացրեցի, մոտեցրեցի, թոցրեցի*: Պետք է նկատել, որ կանոնով արգելքը խնդրի լուծման

արմատական ձև չէ. դրանից հետո գուգաձևությունը կարող է դեռ երկար պահպանվել՝ չնայած դրա եզրերի կարգավիճակի փոփոխությանը:

Չուգաձևությունն իսպառ վերանում է, երբ դա տեղի է ունենում բնական ճանապարհով, ինքնըստինքյան:

Չուգաձևության եզրերի փոխհարաբերությունն՝ ըստ կանոնարկման աստիճանի

Չուգաձևությունները իրենց գործառական արժեքով, եզրերի փոխհարաբերությամբ և լեզվական հանրության կողմից արժանացած վերաբերմունքի տեսակետից կարող են լինել ամենատարբեր բնույթի:

Ըստ գործառական արժեքի՝ կան գուգաձևություններ, որոնց մրցակցող երկու եզրն էլ կանոնարկված են, պատկանում են գրական լեզվին և հանրության կողմից ընկալվում են որպես գրեթե համարժեք տարբերակներ, թեև առանձին անհատներ կարող են նախընտրել կամ նույնիսկ միակ ճիշտը համարել դրանցից մեկը կամ մյուսը՝ *մեզանից // մեզնից, հինգթևանի // հնգաթև, մեղմորեն // մեղմաբար, զորուզիչեր // զիչերուզոր, գուցե և // գուցեն, վեր պիտի կենամ // պիտի վեր կենամ, երկուսից հինգ պակաս // երկուսին հինգ պակաս:*

Այլ դեպքերում թեև երկու եզրն էլ կանոնական են, սակայն դրանց միջև կա գործառական-ճակատական որոշակի տարբերություն՝ հետևյալ դրսևորումներով:

1. եզրերից մեկն ունի խոսակցական երանգ՝ *բարձրությունով // բարձրությամբ, դրինք // դրեցինք, ձկնոտ // ձկնոտ, ընկերավարի // ընկերաբար,*

2. եզրերից մեկն ունի գրքային երանգ՝ *մի՛ թողնիր // մի՛ թող, այսուհետ // այսուհետև, մանկուց // մանկությունից, օրեցօր // օր օրի, արյամբ // արյունով, կայսեր // կայսրի,*

3. եզրերից մեկն ունի հնացածության երանգ՝ *մի՛ մոտենաք // մի՛ մոտեցեք, մանկութ // մանկուց, հալչել // հալվել:*

Կան գուգաձևություններ, որոնց մրցակցող եզրերից մեկը կանոնարկված է, իսկ մյուսը, թեև կանոնարկված չէ, սակայն բանավոր խոսքում անհամեմատ տարածված է և զանգվածաբար ընկալվում է որպես կանոնական ձև՝ *կթողնեմ // կթողեմ, դարձա // դառա, սառչող // սառող, ասացի // ասեցի, ուզում եմ ասել // ուզում եմ՝ ասեմ, խորհրդանիշեր // խորհրդանիշներ, տեսնո՞ւմ ես // տեսնում ե՞ս, տասներեք // տասյերեք, մեզ մոտ // մեր մոտ:*

Կան նաև գուգաձևություններ, որոնց մրցակցող եզրերից մեկը՝ ոչ կանոնականը, բանավոր խոսքում թեև անհամեմատ տարածված է, սակայն զանգվածաբար ընկալվում է որպես ոչ գրական ձև՝ *է // ա (օժանդակ բալի ներկա եզակի 3-րդ դեմք), փախի՛ր // փախի՛, հատակ // պոլ:*

Լինում են նաև գուգաձևություններ, որոնց մի եզրը կեղծ գրական ձև է (*ծրար // ծրայր, պարերգ // պարյերգ, ռոտապրինտ // ռոտոպրինտ, կանցերոզեն // կոնցորոզեն, լուսնալույս // լուսնելույս, համոզիչ // համոզեցուցիչ, չափազանցել // չափազանցեցնել, սառած // սառչած, սաղմոսերգություն // սաղմոսաերգություն, մի՛ վախեցնի // մի՛ վախեցնիր, մի՛ թռիր // մի՛ թռչիր, սառան // սառեցին կամ սառչեցին, կորցրի // կորցրեցի և այլն): Այդ ձևերը հետևանք են գերշտկման՝ գրական կանոնի չափազանցման, կանոնարկված ձևերը համաբանությամբ ընդհանրացնելու և տվյալ կանոնին չենթարկվող այլ դեպքերի վրա տարածելու:*

Թեև գուգաձևությունների եզրերը սովորաբար նշույթավորված են լինում (խոսակցական, հնացող, գրքային, նորաձև և այլն), սակայն կան զգալի թվով դեպքեր, երբ եզրերից մեկը չեզոք տարբերակ է (*խաղալ // խաղ անել, անցումային // անցումնային, ծարավել // ծարավանալ, խաբվել // խաբնվել, վրդովել // վրդովեցնել, նախրապան // նախրեպան, առևտուր // առուտուր, երեխաներ // երեխեք, գործերս լավ չեն // գործերս լավ չի* և այլն): Այդպիսի ձևերը (*խաղալ, անցումային, ծարավել, խաբվել, վրդովել, նախրապան, առևտուր, երեխաներ, գործերս լավ չեն* և այլն) և պատկանում են գրական հայերենի ընթացիկ, մնայուն, հիմնական շերտին:

Երբեմն գուգաձևության մի եզրը սաղմնային տարբերակ է, որը կարող է և կանոնարկված չլինել (*դուռից // դռնից, ձյունի // ձյան, տարրաբանություն // քիմիա, փշարմավ // չիչխան, փորձանկար // էտյուդ* և այլն): Լեզվում միշտ էլ լինում են պահեստային տարբերակներ՝ քնած կամ մոռացված բառեր, ածանցներ, բառակազմական կաղապարներ, ներունակ (պոստենցիալ) բառեր և այլն, որոնք ցանկացած պահի ըստ անհրաժեշտության կարող են իրականանալ կամ կենսունակ դառնալ, կանոնարկվել և գործածվել: Մյուս կողմից՝ կան գուգաձևություններ, որոնց եզրերից մեկը մնացորդային տարբերակ է: Այդպիսի ձևերը թեև այլևս չեն պատկանում գրական լեզվի գործող համակարգին, սակայն գործածվում են իբրև վերապրուկներ, պահպանվում են կանոնի ավանդականության ուժով, որպես լեզվի անցյալ փուլերի մնացորդներ (*սկեսրոջ // սկեսուրի, մթանից կամ մթնից // մթից, ձևավոր չձկասահք // զեղասահք* և այլն) կամ էլ համակարգային ձևերի կողմից դուրս մղվող ներքին և արտաքին փոխառություններ (*ձիաններ // ձիեր, վեր ընկնել // վայր ընկնել, ինտելիգենտ // մտավորական, պեյզաժ // բնանկար, ջեզվե // սրճեփ* և այլն):

Զուգաձևությունը՝ լեզվական փոփոխության միջոց

Զուգաձևությունը բնորոշ է կենդանի բոլոր լեզուներին: Կենդանի լեզուն, իբրև բնական երևույթ, իր շարժման և վերարտադրման ընթացքում տարբերակվում է տարածության ու ժամանակի մեջ: Ամեն մի տվյալ պահի առկա տարբերակների ամբողջությունը (մեծահամակարգի սահմաններում) նախադրյալ է լեզվի զարգացման համար: Իսկ լեզվական տարժամանակյա տարբերակների հերթագայությունը հենց լեզվի փոփոխությունն է ժամանակի մեջ:

Տարբերակների մրցակցության և ընտրության միջոցով է տեղի ուենում լեզվական փոփոխությունը (ընդ որում՝ զարգացումը, կատարելագործումը):

Հետևաբար պետք չէ դժգոհել գուգաձևերի առկայությունից և պահանջել դրանց անհապաղ, համատարած ու անվերապահ կանոնակարգում՝ հանձնարարելով մեկը և արգելելով մյուսը: Պետք է զգուշավոր և անհատական մոտեցում մանավանդ ուսումնական գործընթացում:

⁷ Ավելի հանգամանորեն տե՛ս Հ. Զաքարյան, *Փոփոխակումը որպես լեզվի զարգացման նախադրյալ*. — «Ձահուկյանական ընթերցումներ» (խմբ. Լ. Հովհաննիսյան), Ե., 2006, էջ 61-71:

⁸ Զուգաձևությունների հետ կապված ուսումնական ու քննական խնդիրների մասին տե՛ս **Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Ա. Աբրահամյան, Հայոց լեզվի և հայ գրականության ձեռնարկ-շտեմարան**, Ե., 2009, 352 էջ:

Այլ հայեցակետեր

Ձուգաձևերը կարելի է ավելի հանգամանորեն քննել նաև մի շարք այլ տեսանկյուններից՝

- ըստ դրանց վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների,
- ըստ կայունության,
- ըստ կառուցվածքի,
- ըստ ծագման,
- ըստ գործառույթի,
- ըստ ոճական-նրբերանգային տարբերակման,
- ըստ կապակցելիության և այլն:

Բայց դրանց մասին՝ այլ առիթներով:

Եզրակացություն

Ձուգաձևությունը համընդհանուր լեզվական երևույթ է: Հանդես է գալիս լեզվի տարբեր մակարդակներում ու ենթամակարդակներում՝ հնչյունական, գրային, բառային-բառակազմական, ձևաբանական, շարահյուսական և այլն:

Ձուգաձևության եզրերը ծագումնաբանորեն լինում են երկու տեսակի՝ համասեռ և տարասեռ: Տարասեռ են այն զուգաձևերը, որոնք առաջանում են տարբեր և անկախ միավորների իմաստային և գործառական մերձեցմամբ ու նույնացմամբ՝ որպես քերականական նույն ձևի տարբերակային դրսևորումներ՝ **ե՛կ // արի՛**: Համասեռ են այն զուգաձևերը, որոնք առաջանում են նույն միավորից՝ ձևական երկփեղկմամբ՝ **մեզնից // մեզանից**, կամ էլ ձևակազմության տարբեր կաղապարների զուգահեռ իրացմամբ՝ **ամռան // ամառվա**, մի՛ զարկ // մի՛ զարկիր:

Ձուգաձևության առաջացման պատճառներից են լեզվական կառույցների խաչաձևումը, լեզվի զարգացման միտումների, կառուցվածքային վերլուծության, լեզվամտածական մեկնակերպերի հանդիպադրումը, արտաքին ազդեցությունները և այլն:

Կանոնական ու ոչ կանոնական զուգաձևերի իմացությունը կարևոր է թե՛ ուսուցաբանական առումով, թե՛ լեզվի զարգացման միտումները բացահայտելու, կանխատեսումներ անելու և դրանց հիման վրա լեզվաշինական քաղաքականություն մշակելու տեսակետից:

Օգտագործված գրականություն

Ավետիսյան Յու., Հոլովական զուգաձևությունների տարբերակման սկզբունքները և տեսակները արդի գրական արևելահայերենի անվանական համակարգում. — «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 2 (խմբ.՝ Լ. Ավետիսյան), 2023, էջ 60-74:

Ավետիսյան Յու., Ջաքարյան Հ., Աբրահամյան Ա., Հայոց լեզվի և հայ գրականության ձեռնարկ-շտեմարան, Եր., 2009, 352 էջ:

Չաքարյան Հ., Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում. — «Ժամանակակից խոսակցական հայոց լեզուն» (խմբ.՝ Է. Աղայան), Եր., 1981, էջ 120-278:

Չաքարյան Հ., Փոփոխակումը որպես լեզվի զարգացման նախադրյալ. — «Ջահուկյանական ընթերցումներ» (խմբ.՝ Լ. Հովհաննիսյան), Եր., 2006, էջ 61-71:

Չաքարյան Հ., Բացարձակ աներևույթի և համանման կառույցների զուգաձևերը ժամանակակից հայերենում. — «Ջահուկյանական ընթերցումներ» (խմբ.՝ Լ. Հովհաննիսյան), Եր., 2007, էջ 79-86:

Չաքարյան Հ., Համադրական և վերլուծական կառույցների զուգաձևությունը ժամանակակից հայերենում. — «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր (խմբ.՝ Ս. Գասպարյան), Եր., 2009, էջ 8-19:

Չաքարյան Հ., Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության զուգաձևերը արդի հայերենում. — «Մանկավարժական միտք», հմ. 3-4 (72-73), 2019 (խմբ.՝ Է. Այվազյան), Ե., էջ 18-31:

Չաքարյան Հ., Գործնական կետադրության հիմունքներ. ուսումնական ձեռնարկ-բառարան, Եր., 2021, 264 էջ:

Թեյլան Լ., **Շարահյուսական նորմ. զուգաձևեր և շեղումներ.** — «Հայագիտության հարցեր» (խմբ.՝ Վ. Պետրոսյան), Ե., 2017, հմ. 1, էջ 137-148:

Հարությունյան Հ., Բայական զուգաձևերի վիճակագրական պատկերը ժամանակակից հայերենում. — «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Է. Ջրբաշյան), Ե., 1975, N 3, էջ 55-68:

Մեծունց Բ., Հոգնակիի զուգաձևերը հայերենում. — «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Հ. Միրզոյան), Ե., 1995, թիվ 3, էջ 29-39:

Մեյթիխանյան, Փ. Ուղղագրական և բառային զուգաձևությունները ժամանակակից հայերենում. — «Արդի հայերենի հիմնախնդիրներ (միջազգային գիտաժողովի նյութեր)» (խմբ.՝ Լ. Գալստյան, Յու. Ավետիսյան), Ե., 2016, էջ 97-102:

Մկրտչյան Ն., Հոլովական զուգաձևությունները դասական և հետդասական գրաբարում. — «Բանբեր Երևանի համալսարանի» (խմբ.՝ Հ. Միրզոյան), Ե., 1994, թիվ 3, էջ 176-181:

Մկրտչյան Ն., Գրաբարի հոլովական զուգաձևությունների զարգացման ընթացքը միջին և նոր գրական հայերենում. — «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2 (խմբ.՝ Հ. Միրզոյան), Ե., 1995, էջ 156-160:

Պառնասյան Ն., Ձևաբանական զուգաձևությունները ժամանակակից գրական հայերենում. — «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր» (խմբ.՝ Գ. Սևակ), Ե., 1976, էջ 24-41:

Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, 686 էջ:

Սարգսյան Ա. Ս., Գոյականական զուգաձևությունները ժամանակակից հայերենում. — «Լեզվի և ոճի հարցեր», X (խմբ.՝ Ս. Աբրահամյան, Լ. Հովսեփյան), Ե., 1987, էջ 123-230:

Մարգարյան Ա. Լ., Ժամանակակից հայերենի կետադրությունը (ուսումնական ձեռնարկ), Եր., 2012, 144 էջ:

Heber L. R. Leaped and Leapt: A Theoretical Account of Linguistic Variation. — «Foundations of Language», 1976, v. 14, no. 2.

Labov W. The Social Stratification of English in New York City. W., 1966.

Labov W. The Study of Nonstandard English. N. Y., 1976.

Lewin L. and Crockett H. J. Speech Variation in a Piedmont Community: Postvocalic r. — «Explorations in Sociolinguistics» (ed. S. Lieberman). «International Journal of American Linguistics», vol. 33, no. 4, Bloomington, 1973.

Kroch S. Toward a Theory of Social Dialect Variation. — «Language in Society», 1978, no. 1.

Pahlsson Ch. The Northumbrian Burr. A Sociolinguistic Study. Lund, 1972.

Sex and Language: Difference and Dominance (eds. Thorne B. and Henley N.). Rowley, Mass., 1975.

Varieties of Present-day English (eds. Bailey R. W., Robinson J. L.). N. Y. 1973.

Wolfram W. A. A Sociolinguistic Description of Detroit Negro Speech. W. 1969.

Граудина Л. К.. Вопросы нормализации русского языка (грамматика и варианты). М., 1980, 288 с.

Голанова Е. И.. Словообразовательная вариативность наименований приспособлений и механизмов. — «Социально-лингвистические исследования» (отв. ред. Л. Крысин, Д. Шмелев), М., 1976, с. 167-180.

Головина Э. Д.. К типологии языковой вариантности. - ВЯ, N 2 (отв. ред. Г. Степанов), М., 1983, с. 58-63.

Горбачевич К. С.. О норме и вариативности на синтаксическом уровне (колебания в формах управления). — ВЯ, N 2 (отв. ред. Ф. Филин), М., 1977, с. 64-73.

Кузьмина С. М.. Вариативность произношения групп согласных. — «Социально-лингвистические исследования» (отв. ред. Л. Крысин, Д. Шмелев), М., 1976, с. 123-128.

Литературная норма и вариантность (отв. ред. И. Скворцов). М., 1981, 271 с.

Рогожникова Р. П.. Варианты слов в русском языке. М., 1966, 158 с.

Солнцев В. М.. Вариативность как общее свойство языковой системы. — ВЯ, N 2 (отв. ред. Г. Степанов), М., 1984, с. 31-42.

Zakaryan Hovhannes – Ways of origin of parallel forms. – Variability is a universal linguistic phenomenon. It manifests itself at different levels and sublevels of language: phonetic, lexical, word-formation, morphological, syntactic, etc.

Parallel forms are genealogically of two types: homogeneous and heterogeneous. Heterogeneous are those parallel forms that arise as a result of the semantic and functional convergence and identification of different and independent units as variant manifestations of the same grammatical form: է՛կ // առի՛. Homogeneous are those parallel forms that arise from the same unit through formal bifurcation (վեզնից // վեզանից), or as a result of the parallel implementation of different models of formation of language forms: ամռան // ամառվա, մի՛ զարկ // մի՛ զարկիր.

The reasons for the emergence of parallel forms are the intersection of language structures, the opposition of both language development trends and interpretations of structural analysis and linguistic thinking, etc.

Knowledge of normalized and unnormalized (non-standard) parallel forms is important both from a didactic point of view and in terms of identifying trends in language development, language forecasting and elaboration of language building policy.

Keywords: modern Armenian language, variability, homogeneous parallel forms, heterogeneous parallel forms, language development trends, language forecasting, language building policy.

Zakaryan Hovhannes, Candidate of Philology, Associate Professor, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education.

Закарян Оганес – Пути возникновения параллельных форм. – Вариативность (вариантность) — универсальное языковое явление. Он проявляется на разных уровнях и подуровнях языка: фонетическом, лексическом, словообразовательном, морфологическом, синтаксическом и т. д.

Параллельные формы генеалогически бывают двух типов: однородные (гомогенные) и неоднородные (гетерогенные). Гетерогенными являются те параллельные формы, которые возникают в результате семантической и функциональной конвергенции и идентификации разных независимых единиц как вариантов проявлений одной и той же грамматической формы: Է՛կ // արհ՛. Гомогенными являются те параллельные формы, которые возникают из одной и той же языковой единицы посредством формальной бифуркации (սէզնից // սէզնից), либо в результате параллельной реализации разных моделей образования языковых форм: անանի // անանիս, սի՛ զարկ // սի՛ զարկիր.

Причинами возникновения параллельных форм являются пересечение языковых структур, противостояние как тенденций развития языка, так и интерпретаций структурного анализа и языкового мышления и т. д.

Знание нормализованных и ненормализованных параллельных форм важно как с дидактической точки зрения, так и в аспекте выявления тенденций развития языка, языкового прогнозирования и разработки политики языкового строительства.

Ключевые слова: современный армянский язык, вариативность, гомогенные параллельные формы, гетерогенные параллельные формы, тенденции развития языка, языковое прогнозирование, политика языкового строительства.

Закарян Оганес, к.ф.н., доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев".

**ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Թեյյան Լեոնիդ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. leonidteyan0@gmail.com

Բանալի բառեր. բազմաբաղադրիչ բարդ նախադասություն, համասեռ, տարասեռ նախադասություններ, անմիջական բաղադրիչներ, համաստորադասություն, ստորահամադասություն

Նախաբան

Արդի հայերենի քերականության շատ իրողություններ կան, որոնց՝ այսօր հիմնավորապես ընդունված մեկնաբանություններն ու սահմանումները՝ տերմինային ձևակերպումներով հանդերձ, գիտական շրջանառության մեջ են դրվել ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի շնորհիվ: Դրանք վերաբերում են և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական համակարգերին: Շարահյուսական հասկացություններից ու դրանք արտահայտող տերմիններից կարելի է հիշել թեկուզ **միակազմ նախադասությունը**, որի վերլուծության ու ըստ **դիմային հատկանիշի** դասակարգման աբրահամյանական տեսությունը ընդունվել ու մանրամասնվել է հետագա ուսումնասիրողների կողմից: Այդպես և՛ նախադասության երկրորդական անդամների դասակարգման սկզբունքը՝ ըստ լրացյալի խոսքիմասային արժեքի, նախադասության հնչերանգային տեսակների առանձնացումն ու քննությունը, **զիջման պարագա** տերմինի ներմուծումը, երկրորդական (ստորադաս) նախադասությունների նոր տեսակների (**հետևանքի** և **ամբողջ գլխավորին լրացնող**) առանձնացումը և այլն: Բարդ համադասական նախադասությունների բաղադրիչ մասերի հարաբերությունների՝ Աբրահամյանի կատարած իմաստային դասակարգումը թերևս մեր քերականագիտության մեջ ամենահաջողվածներից է:

Հայերենի շարահյուսության ասպարեզում Աբրահամյանի ավանդը գնահատելիս նախ պետք է արձանագրենք, որ նա այստեղ ևս հարազատ է մնում լեզվական իրողությունների ուսումնասիրման այն ընդհանուր մեթոդին, որ տեսականորեն հիմնավորել է դեռևս իր գիտական գործունեության սկզբում. «Ամեն մի գիտություն պետք է իր ուսումնասիրության օբյեկտը ճանաչի այնպես, ինչպես որ այն կա: Լեզուն ոչ թե բաղկացուցիչ մասերի, իր տարբեր կողմերի մեխանիկական գումար է, այլ մի ամբողջական համակարգ: Այս կամ այն գիտության հարցերի ընդգրկման շրջանակները պետք է համապատասխանեն ուսումնասիրության օբյեկտի բնույթին, բխեն նրանից»: Հենց այս լույսի տակ էլ պետք է ընկալել բարդ նախադասության արտալեզվական նշանակելիի, մի կողմից պարզ նախադասության, մյուս կողմից՝ նախադասությունների կապակցության հետ նրա բովանդակային և կառուցվածքա-

¹ **Աբրահամյան Ս.**, *Չթերվող խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Ե., 1965, էջ 90:

յին ընդհանրությունների ու տարբերությունների աբրահամյանական մեկնաբանությունները: Այստեղ էականն այն է, որ բարդ նախադասությունը, ինչպես և լեզվական այլ միավորներ սահմանելիս հաշվի են առնվում դրա ոչ թե կամ ոչ միայն տրամաբանական, դեմոտատային հարաբերակցվածությունը (տվյալ դեպքում՝ արտալեզվական իրադրության պարզ կամ բարդ լինելը), այլ գուտ կառուցվածքային հատկանիշներ: Նաև այս նկատառումով է, որ Ս. Աբրահամյանը չի ընդունում Գ. Սևակի ներմուծած «միավորյալ նախադասություն» գաղափարը, ըստ որի բարդ են համարվում և՛ ենթականերով (*Արամը և Հակոբը գնացին*) և՛ ստորոգյալներով (*Արամը գնաց և վերադարձավ*) «միավորված» նախադասությունները: Աբրահամյանի մոտեցումը հստակ է և բխում է քննության ընդհանուր սկզբունքից: «Լեզվական միջոցի լեզվական արժեքավորման համար, - գրում է նա, - կարևոր է լեզվական, կառուցվածքային կողմը և ոչ թե նշանակյալը (դեմոտատը)՝ արտալեզվական նշանակությունը: Ուրեմն բարդ նախադասության կառուցվածքը պետք է որոշել նրա մեջ առկա՝ քերականորեն ձևավորված բաղադրիչ նախադասության առկայությամբ: ...Այնպես որ բազմակի ենթականերով և բազմակի ստորոգյալներով նախադասությունները կառուցվածքային նույն տեսակին չեն պատկանում: Բազմակի ենթակայով նախադասությունը, եթե ունի մեկ ընդհանուր ստորոգյալ, բարդ չէ, ինչպես կարծում են ոմանք»²: Ավելորդ չէ նշել, որ կառույցի այսպիսի գնահատումը համընդհանուր ընդունելություն է գտել շարահյուսագիտական գրականության մեջ:

Բազմաբաղադրիչ կառույցների տեսությունը

Բարդ նախադասության ուսումնասիրությունը, ինչպես հայտնի է, հիմնվում է երկբաղադրիչ կառույցների վրա, և դա բնական է այն առումով, որ դրանց բաղադրիչների միջև առկա իմաստային և քերականական հարաբերությունները, ինչպես նաև այդ հարաբերությունների արտահայտման եղանակներն ու միջոցները նույնն են մնում՝ անկախ կապակցվող բաղադրիչների քանակից: Կենդանի խոսքում, սակայն, հատկապես նրա որոշակի ոճերում շատ տարածված բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների քննությունը նույնպես հետաքրքրություն և կարևորություն է ներկայացնում, քանի որ սրանց բաղադրիչների հարաբերությունները հանդես են գալիս բազմապիսի գուգորդումներով և առաջացնում են այդ կառույցների դասակարգման և նկարագրության որոշակի գիտական սկզբունքների առաջադրման անհրաժեշտություն: Այս հարցում նույնպես Սերգեյ Աբրահամյանի ներդրումը, մեր համոզմամբ, խիստ արժեքավոր է: Այն գնահատելու համար ավելորդ չենք համարում հակիրճ անդրադառնալ այդ կառույցների դասակարգման՝ մեր շարահյուսագիտության մեջ կատարված փորձերին³:

Շայ քերականագիտության մեջ բարդ նախադասության տեսական համակարգված քննությունը սկիզբ է առել Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունից»: Հենց այստեղ էլ «բազմաբարդ խոսքերը» հստակորեն տարաբաժանվում են երկու՝ համադասական և

² Աբրահամյան Ս., *Շայոց լեզու: Շարահյուսություն: Բուհական ձեռնարկ*, Ե., «Լույս», 2004, էջ 111:

³ Հմմտ. նաև Թեյյան Լ., *Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման շուրջ*, «Արդի հայերենի քերականության հարցեր», Ե., 2016, էջ 52-67:

ստորադասական տեսակների, սրանց ներսում էլ առանձնացվում են զուգորդային տարբերակները: Ահա այդ բաժանման ամբողջական պատկերը.

«I. **Համադասությունը** բազմաբարդ է լինում, երբ՝

1. կազմված է լինում երկուսից ավելի պարզ անկախ խոսքերից....,
2. համադաս խոսքերից մեկը կամ մի քանիսը կամ ամեն մեկը ինքը բարդ է, կազմված լինելով՝ ա) երկու կամ ավելի համադաս խոսքերից, բ) մի գլխավոր և մի կամ ավելի երկրորդական խոսքերից, որոնք իրենց կողմից նույնպես կարող են երկրորդ կարգի երկրորդական խոսքեր ունենալ....:

II. **Ստորադասությունը** բազմաբարդ է լինում՝

Ա. Երբ գլխավոր խոսքն ունի երկու և ավելի երկրորդական խոսքեր, որոնք կարող են վերաբերել

1. Գլխավոր խոսքի տարբեր մասերին....
2. Գլխավոր խոսքի միևնույն մասին, այն էլ՝
ա) Իբրև տարբեր տեսակի (իմա՝ տարբեր պաշտոններ կատարող - Լ. Թ.) երկրորդական խոսքեր....:

բ) Իբրև նույն տեսակի երկրորդական խոսքեր կամ **համաստորադաս** խոսքեր....:

Բ. Երբ երկրորդական խոսքերն ևս իրենց կողմից, ինչպես մի գլխավոր խոսք, ունին երկրորդական խոսքեր վերևում նշված ձևերով,– երկրորդ կարգի երկրորդական խոսքեր և այլն....»⁴:


Աբեղյանական այս սխեման իր հիմնական գծերով կրկնվում է հետագա հեղինակների կողմից՝ անշուշտ, որոշ մասնավորումներով կամ հավելումներով, տերմինային համապատասխան հանդերձավորմամբ:

Ակադ. Գ. Սևակն իր հեղինակած շարահյուսության դպրոցական դասագրքում հատուկ անդրադառնում է Աբեղյանի կողմից «համաստորադաս խոսքեր» անվանված նախադասություններին, սահմանում է դրանք և բերում համապատասխան օրինակներ: Բազմաբարդ խոսքերի կառուցվածքային մյուս տարբերակներին առանձին անդրադարձ չկա այս դասագրքում, սակայն «Համաստորադաս նախադասություններ» վերնագրի տակ ներկայացվում են նաև այլ բնույթի կառուցվածքներ, որոնց հեղինակային բնութագրումները սկզբունքային առումով բավական հետաքրքիր են: «Բարդ ստորադասական նախադասության մեջ,– գրում է Գ. Սևակը,– համադաս նախադասություն կարող են ունենալ ոչ միայն երկրորդական, այլև գլխավոր նախադասությունները: Գլխավոր նախադասության համադաս նախադասությունը ինքն էլ դառնում է գլխավոր, եթե երկրորդական նախադասությունը հավասարապես լրացնում է երկու գլխավոր նախադասությունների միտքը. օրինակ՝ **Երբ զանգը տրվում է, բոլորս մտնում ենք դասարան, և դասն սկսվում է: Շատերը գիտեին, բայց ես վերջերս իմացա, որ ռադիոընդունիչների մեջ լամպերի փոխարեն օգտագործվում են կիսահաղորդիչներ**»: (Այս կառույցի մասին խոսք կլինի ստորև): Շարունակության մեջ Գ. Սևակը ներկայացնում է մի այլ կառույց ևս, որը, ինչպես երևում է, նախորդի տարբերակն

⁴ Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 671-673:

⁵ Սևակ Գ., *Հայոց լեզու*, Ե., 1982, էջ 111:

Է համարում և նրա հետ միասին էլ հատկացնում է ստորադասական տիպին: «Լինում են սակայն և այնպիսի դեպքեր, երբ գլխավոր նախադասությանը ստորադասված երկրորդական նախադասությունը բոլորովին չի վերաբերում գլխավորին համադաս նախադասությանը: Օրինակ՝ **Ես պատասխանեցի, որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին, և ուսուցիչը ինձ գովեց:** Այստեղ **որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին** երկրորդական նախադասությունը լրացնում է միայն **ես պատասխանեցի** նախադասության միտքը (**ի՞նչ պատասխանեցի**), բայց կապված չէ **ուսուցիչը ինձ գովեց** նախադասության հետ: Հետևաբար, թեև **ուսուցիչը ինձ գովեց** նախադասությունը համագոր է գլխավոր նախադասությանը, բայց գլխավոր չէ երկրորդական նախադասությանը, այլ միայն գերադաս է նրա համեմատությամբ»⁶: Սույն օրինակը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Բերված երկու կառուցատիպերն էլ Գ. Սևակը ստորադասական է համարում և որպես ընդհանուր եզրահանգում գրում է. «Գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխադարձ հարաբերության այս տարբերությունները, ինչպես և համաստորադաս նախադասությունների առկայությունը, բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի էական փոփոխություն չեն ստեղծում, ուստի և քերականական տարբեր անուններով կոչելը սխալ է:

Կա միայն բարդ ստորադասական նախադասություն՝ անկախ գլխավոր և երկրորդական նախադասությունների քանակից և հարաբերություններից, կան համադաս գլխավոր նախադասություններ, գլխավորին համադասվող գերադաս նախադասություններ, կան համաստորադաս երկրորդական նախադասություններ, բայց չկա բարդ համաստորադասական նախադասություն, բարդ համագերադասական նախադասություն, բարդ համաստորագերադասական նախադասություն:

Շատ ճյուղավորված և բարդ նախադասությունը կարելի է կոչել բազմաբարդ»⁷:

Դժվար է դպրոցական դասագրքի այս հատվածը բազմաբարդադրիչ բարդ նախադասությունների շատ թե քիչ ամբողջական և տրամաբանորեն ճշգրիտ դասակարգում համարել. վերոբերյալ դիտարկումները, ինչպես նշեցինք, արված են համաստորադաս նախադասությունների առնչությամբ և դրանք բոլորն էլ հատկացվում են ստորադասական տիպին: Այսինքն, ըստ հեղինակի, բազմաբարդադրիչ ցանկացած կառույց ստորադասական է, եթե նրանում առկա է համադասական և ստորադասական հարաբերությունների որևէ կարգի գույգորդում: Սակայն Գ. Սևակի բերած օրինակներից գոնե մեկը (**Ես պատասխանեցի, որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին, և ուսուցիչն ինձ գովեց**) միանշանակորեն համադասական նախադասություն է (տե՛ս գծապատկերը):

⁶ Սևակ Գ., նշվ. աշխ., էջ 112:

⁷ Նույն տեղում:

Բազմաբաղադրիչ բարդ նախադասություններին անդրադարձել են նաև հետաքեղյանական շրջանում բարդ նախադասության շարահյուսությունն ուսումնասիրող մյուս հեղինակները:

Այսպես, Գ. Գարեգինյանի և Մ. Աբեղյանի դասակարգումների միջև կարելի է նշել հետևյալ մասնակի անհամապատասխանությունները. **ա)** Գարեգինյանը գործածում է «խառը տիպ» անվանումը համադասական այն կառույցների համար, որոնց համադասվող բաղադրիչները իրենց հերթին բարդ ստորադասական նախադասություններ են, **բ)** ստորադասական կառույցների մեջ որպես ինքնուրույն տեսակ նշում է մեկից ավելի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով տարբերակը (որը, ինչպես տեսանք, նշվել է նաև Սևակի դասագրքում): Բազմաբաղադրիչ ստորադասական մյուս կառուցատիպերը անվանվում են **համաստորադասում** (երկու տիպի՝ համասեռ և անհամասեռ երկրորդականներով) և **ենթաստորադասություն** կամ **հաջորդական ստորադասություն**:

Ա. Պապոյանը, նույնպես հետևելով Աբեղյանի դասակարգմանը, ավելի մանրամասնում է այն. համադասական կառույցը, օրինակ, ենթատեսակների է բաժանում ըստ բաղադրիչ նախադասությունների միջև առկա **նույնաբնույթ** (ասենք՝ միայն միավորական, միայն ներհակական և այլն) և **տարաբնույթ** (օրինակ՝ միավորական և ներհակական և այլն) իմաստային հարաբերությունների: Ստորադասական տիպի ներսում էլ նշվում են նույն տարբերակները, որոնք քննվել են Գարեգինյանի գրքում. այստեղ, սակայն, տերմինային էական նորամուծություն է կատարվում. մեկից ավելի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով կապակցությունը կոչվում է **հանրաստորադասություն**:

Վ. Առաքելյանը բազմաբարդ ստորադասական կառույցների ընդամենը երկու տիպ է առանձնացնում՝ դրանք կոչելով հաջորդական ստորադասություն և համաստորադասություն, այս վերջին տեսակի մեջ ներառելով նաև «տարաբնույթ համաստորադասությունը» (իմա՝ տարաստորադասությունը): Նա հարկ է համարում նշել նաև, որ «նախադասությունների համադասական և ստորադասական կապակցությունները երբեմն այնքան խաչաձև խմբավորումներ են կազմում, որ այդ ամենը մի առ մի թվել այստեղ ննարավոր չէ»¹⁰:

Բազմաբաղադրիչ նախադասությունների դասակարգման, այլև դրա տեսական հիմնավորման և առանձնացվող տեսակների գիտական տերմինավորման հարցերը այլ չափանիշներով են ներկայացված Սերգեյ Աբրահամյանի աշխատություններում, առաջին հերթին՝ «Ժամանակակից հայերենի քերականություն», «Ժամանակակից գրական հայերեն» գրքերում, առավել ամփոփ ու ամբողջական՝ իր կյանքի վերջին տարիներին լույս ընծայած՝ շարահյուսության բուհական ձեռնարկում: Այստեղ բարդ նախադասությունները նախապես բաժանվում են **համասեռ** և **տարասեռ** տեսակների. «Համադասական և ստորադասական հարաբերությունները բարդ նախադասության կառուցվածքում կարող են հանդես գալ միայնակ և զուգորդված: Ըստ այդմ՝ բարդ նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ **համասեռ** և **տարասեռ**: Սա վերաբերում է բարդ նախադասության երկու տեսակներին՝ թե՛ համադասական, թե՛ ստորադասական: Հասկանալի է, որ երկբաղադրիչ բարդ նա-

⁸ Տե՛ս Գարեգինյան Գ., *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1984, էջ 319-340:


⁹ Տե՛ս Պապոյան Ա., *Բաղիկյան Խ.*, *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 377-406:

¹⁰ Առաքելյան Վ., *Հայերենի շարահյուսություն*, հատոր Բ, Ե., 1964, էջ 279:

խաղասությունները կարող են լինել միայն համադասական կամ միայն ստորադասական: Ուրեմն՝ հիշյալ բաժանումը կարող է վերաբերել բազմաբաղադրիչ (երեք և ավելի բաղադրիչ ունեցող) բարդ նախադասություններին»¹¹: Ի՞նչ սկզբունքով պետք է առաջնորդվել տարասեռ բարդ նախադասությունը համադասական կամ ստորադասական տիպին հատկացնելիս: «Այս հարցում, – գրում է Ս. Աբրահամյանը, – մեզ օգնում է նախադասության (կառույցի) **անմիջական բաղադրիչներ** հասկացությունը՝ ի տարբերություն **միջնորդավորված բաղադրիչների**»¹²:

Վերլուծության այս եղանակը, հայտնի է, կիրառելի է լեզվական այլ մակարդակների միավորների նկատմամբ, և հավատարիմ մնալով լեզվի բաղադրիչ մասերը միասնական չափանիշներով քննելու իր որդեգրած սկզբունքին՝ Աբրահամյանը հաճախ գուգահեռներ է տանում բառակազմական և շարահյուսական օրինաչափությունների միջև: Այս առնչությամբ նա վերլուծում է **արմատահան անել**, **պատառ-պատառ լինել**, **անհանգիստ լինել**, **անցուդարձ անել** հարադիր բարդ բառերը, որոնց անմիջական բաղադրիչները իսկական, կցական, կրկնավոր բարդություններ են կամ ածանցավոր բառեր, սակայն դա չի խանգարում ամբողջական կառույցն իբրև հարադրություն գնահատելուն, «քանի որ դրանք անվանական բաղադրիչի անմիջական կազմիչների կառուցվածքային հատկանիշ են, ստորին օղակն են բնորոշում և ոչ թե ամբողջ բարդությունը»¹³: Վերլուծության երկրորդ և հաջորդ աստիճաններում ստացվող բաղադրիչները կառույցի տեսակը որոշելու հիմք չեն ծառայում. բարդ բառի բաղադրիչների համար գերակա է ստորադասական հարաբերությունը, որով կապակցվել են դրա անմիջական բաղադրիչները (հմմտ.՝ «հիմնակաղապար» և «ենթակաղապար» հասկացությունները Գ. Ջահուկյանի տերմինաբանությամբ):

Տարասեռ բազմաբաղադրիչ կառույցները գնահատելու համար, այսպիսով, Աբրահամյանն առաջադրում է դասակարգման՝ տրամաբանական առումով առավել հստակ ելակետ. անհրաժեշտ է հաշվի առնել հենց անմիջական բաղադրիչների միջև առկա հարաբերությունը, որը գերակա է միջնորդավորված բաղադրիչների (ենթակաղապարային միավորների) միջև առկա հարաբերության նկատմամբ: «Արամը գնաց գյուղ, որպեսզի մի քանի օր հանգստանա, բայց նրան հետ կանչեցին, որպեսզի լուծի անհետաձգելի մի հարց» նախադասությունը ներկայացնում է տարասեռ համադասական կաղապար.




«Ես տեսա, որ նա կարդաց այդ նամակը, և նրա աչքերը խոնավացան» նախադասությունը տարասեռ ստորադասական կառույց է ներկայացնում.

¹¹ **Աբրահամյան Ս.**, *Հայոց լեզու: Շարահյուսություն*, Ե., 2012, էջ 106

¹² Նույն տեղում:

¹³ **Աբրահամյան Ս.**, *Ժամանակակից հայերենի քերականություն*, Ե., «Լույս», 1969, էջ 391:



«Այսպիսով,– եզրակացնում է Ս. Աբրահամյանը,– բազմաբաղադրիչ նախադասություններում տարբեր հարաբերությունների առկայությունը բնավ չի նշանակում, թե դրանք խառը նախադասություններ են: «Խառն» անվանումը ճիշտ չի արտահայտում այդ նախադասությունների կառուցվածքը: Պարզապես անհրաժեշտ է ճիշտ որոշել տարբեր հարաբերությունների ստորակարգությունը, հարաբերությունների մեջ գերադասն ու ստորադասը և նրանց գուցորդումը: Լեզվի մեջ խառը ոչինչ չկա: Ամեն ինչ օրինաչափական է:

Այս դեպքում պարզապես պետք է ճիշտ որոշել համադասության և ստորադասության ստորակարգությունը և դրանց տարբեր գուցորդումները նույն նախադասության մեջ:

Դրանք կամ ստորադասական են՝ համադասության գուցորդումով (գուցորդումներով), կամ համադասական են՝ ստորադասության գուցորդումով (գուցորդումներով):


Առաջին տեսակը կոչվում է **բարդ համաստորադասական նախադասություն** (հարաբերություն): Թերևս նույն սկզբունքով երկրորդ տեսակը կարելի է կոչել **բարդ ստորահամադասական նախադասություն** (հարաբերություն) նկարագրական ձևակերպումով՝ բարդ համադասական նախադասություն՝ ստորադասության գուցորդումով»¹⁴:

Համաստորադասական կապակցությունը այդ տերմինով հայտնի է Աբեղյանի հիշյալ գրքից սկսած, մինչդեռ **ստորահամադասություն** ձևակերպումով առաջին անգամ բնութագրվող կապակցությունը, Ս. Աբրահամյանի կարծիքով, «դեռևս կարիք ունի վերլուծման ու գնահատության»¹⁵:

Այսպիսով, խնդրո առարկա կառույցների քննության ասպարեզում, ինչպես իր գիտական գործունեության մեջ ընդհանրապես, Սերգեյ Աբրահամյանը հարազատ է մնում դասակարգման գիտական ստույգ չափանիշներով առաջնորդվելու սկզբունքին: Ինչ վերաբերում է նրա առաջարկած **ստորահամադասություն** տերմինին, ապա այն շատ հարմար է գալիս անվանելու համար բազմաբաղադրիչ բարդ նախադասության այն կառույցը, որ շարահյուսության վերը հիշատակված դասագրքերում, մեր կարծիքով, թյուրիմացաբար հատկացվել է ստորադասական տիպին: Խոսքը վերաբերում է մեկից ավելի համադաս գերադաս նախադասություններին ստորադասվող ընդհանուր երկրորդականով (կամ երկրորդականներով) կառույցին, որը Գ. Գարեգինյանի գրքում անվանվում է նկարագրորեն՝ «մի քանի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով կառույցներ», իսկ Ա. Պապոյանը բաղադրիչների այդ կարգի հարաբերությունը կոչում է «հանրաստորադասություն» տերմինով: Սրա նվազագույն կառուցվածքի գծապատկերն է՝

¹⁴ **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 107

¹⁵ Նույն տեղում, էջ 106:



Սա, ինչպես պարզ երևում է, համաստրադասության «գլխիվայր» շրջված տարբերակն է, ուստի, մեր կարծիքով, բաղադրիչների հարաբերությունն էլ պետք է բնորոշել որպես «ստորահամադասություն» և հատկացնել ոչ թե ստորադասական (ինչպես որ վերը նշված գրքերում արվում է), այլ տարասեռ համադասական կառույցներին¹⁶:

Բազմաբաղադրիչ ստորադասական կառույցների համար Աբրահամյանը առանձնացրել է **համաստրադաս**, **ենթաստրադաս**, **տարաստրադաս** (այս տերմինը ևս իր առաջարկածներից է) երկրորդականներով տարբերակները, որոնցից առաջինը տարասեռ ստորադասական, իսկ երկրորդն ու երրորդը՝ համասեռ ստորադասական կառույցներ են: Սկզբունքն անփոփոխ է մնում նաև բազմաբաղադրիչ համադասական նախադասությունների դասակարգման դեպքում:

Կարծում ենք՝ բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները դասակարգելիս իմաստակառուցվածքային ստույգ չափանիշներով առաջնորդվելու սկզբունքը, դրանց բաղադրիչ մասերի հարաբերությունները նշելու համար **համասեռ** և **տարասեռ** տերմինների՝ այս իմաստով կիրառությունը առավել նպատակահարմար են այդ կառույցների ճշգրիտ լեզվաբանական գնահատության, դրանք միանշանակորեն համադասական կամ ստորադասական տիպին հատկացնելու և մասնավորապես «խառը տիպ» որակումից հրաժարվելու առումով¹⁷:

Եզրակացություն

Հայ շարահյուսագիտության մեջ ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ավանդը մեծ չափով վերաբերում է նաև բարդ նախադասության տեսության մշակմանը: Մասնավորապես բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման հարցում Սերգեյ Աբրահամյանի կիրառած գիտական սկզբունքը որոշակիորեն տարբերվում է շարահյուսագիտական գրականության մեջ ներկայացվող այլ մոտեցումներից և, մեր կարծիքով, հնարավորություն է տալիս տրամաբանորեն առավել ստույգ ստորակարգել և բնութագրել շարահյուսական այդ կառույցները: Այդ սկզբունքի էությունն այն է, որ շարահյուսական կառույցների

¹⁶ Այս կառուցվածքի նախադասությունները համադասական է համարում նաև Դ. Գյուլգադյանը՝ հարաբերությունը նշելով **համագերադասություն** տերմինով (տե՛ս **Գյուլգադյան Դ., Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ**, Ե., 2016, էջ 197):

¹⁷ Այս սկզբունքին հետևելու դեպքում կարելի է խուսափել հատկապես ուսումնակրթական ոլորտում հանդիպող՝ բազմաբաղադրիչ նախադասությունների անճիշտ գնահատումներից: Հայոց լեզվի և գրականության պետական ավարտական և միասնական քննության «Շտեմարանում», օրինակ, «Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար» նախադասությունը համարված է ստորադասական, մինչդեռ այն համադասական (տարասեռ) կառույցի նմուշ պետք է համարվեր (տե՛ս «Շտեմարան», մաս 1, Ե., 2014, էջ 87):

վերլուծության և դասակարգման հիմքում դրվում է ըստ անմիջական բաղադրիչների վերլուծության մեթոդը, որը կիրառվում է բառակազմության մեջ:

Վերլուծության այս եղանակով բազմաբաղադրիչ կառույցները, անկախ նրանց բաղադրիչների քանակից և դրանց կապակցության տեսակից, միանշանակորեն հատկացվում են կա՛մ համադասական, կա՛մ ստորադասական տիպին՝ նկատի առնելով կառույցի անմիջական բաղադրիչների միջև առկա շարահյուսական հարաբերությունը:

Ինչպես քերականական շատ այլ իրողությունների, այնպես էլ բարդ նախադասության կառուցվածքային և իմաստային կողմերի տեսական ուսումնասիրության բնագավառում ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի վաստակն արժևորվում է նաև նրանով, որ այն արժանավորապես ներկայացված է իր հեղինակած ուսումնամեթոդական ծրագրերում, բուհական և դպրոցական դասագրքերում:

Օգտագործված գրականություն

Աբեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

Աբրահամյան Ս., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:

Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:

Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Շարահյուսություն: Բուհական ձեռնարկ, Երևան, 2012:

Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Երևան, 1964:

Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1984:

Թեյլան Լ., Արդի հայերենի քերականության հարցեր, Երևան, 2016:

Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:

Սևակ Գ., Հայոց լեզու, Երևան, 1982:

Telyan Leonid - Issues of the theory of complex sentences in the works of Sergey Abrahamyan.- Academician Sergey Abramyan made a significant scholarly contribution to the study of the syntactic structure of the Armenian language, particularly in the domain of complex sentence theory. The classification model he proposed for multi-clause constructions notably diverges from the principles commonly accepted in other syntactic frameworks. In our assessment, Abramyan's approach enables a more precise categorization and description of such syntactic structures.

The core of his methodology lies in the application of the immediate constituent analysis, a technique traditionally employed in lexicological studies, to syntactic classification. Within this framework, multi-clause constructions—regardless of the number or nature of syntactic relations among their components—are definitively categorized as either coordinative or subordinative. This determination is based exclusively on the type of syntactic linkage between the immediate constituents of the construction.

Keywords: multi-clause constructions, homogeneous, heterogeneous sentences, immediate constituents, sub-coordination, sub-coordination within coordination.

Telyan Leonid, PhD in Philology, associate professor, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Телян Леонид - Вопросы теории сложного предложения в трудах Сергея Абрамяна.- Научный вклад академика Сергея Абрамяна в изучении синтаксической структуры армянского языка в значительной степени относится теории сложного предложения. В частности, разработанный им принцип классификации многосложных предложений определенным образом различается от принятых в других синтаксических трудах принципов и, по нашему мнению, дает возможность более точного распределения и описания данных синтаксических конструкций. Суть данного принципа состоит в том, что в основу описания и классификации синтаксических конструкций ставится методика разбора по непосредственным составляющим, используемая в лексикологии. При этом, многосложные конструкции, независимо от количества и вида синтаксических отношений их компонентов, однозначно относятся к сочинительному или подчинительному типам, основываясь на соответствующем виде синтаксической связи между их непосредственными составляющими.

Ключевые слова: многосложные предложения, однородные, разнородные предложения, непосредственные составляющие, соподчинение, подсочинение.

Телян Леонид, кандидат филологических наук, доцент, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

Խալաթյան Գայանե

մանկավարժական գիտությունների թեկնածու,
ՀՊՄՀ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար.
gayane.khalatyan.1958@mail.ru

Բանալի բառեր և բառակապակցություններ. եղանակավորող բառեր, քերականական կարգ, մակբայ, խոսքիմասային տարարժեքություն, ենթահամակարգ, բազմագործառույթ բառեր, ստորոգում:

Նախաբան

Տասնիններորդ դարավերջին և քսաներորդ դարասկզբին չնայած հայրենագիտությունը հասել էր ակնառու նվաճումների, այնուհանդերձ նրա ոչ բոլոր գիտակարգերն էին հանգել իրենց ուսումնասիրության եզրագծին: Խոսքի մասերի համակարգը իր ամբողջականության մեջ դեռևս բավարար քննության չէր ենթարկվել: Եղանակավորող բառերը (վերաբերականներ) առավել քիչ էին ուսումնասիրված, որքան էլ դրանք հայերենի քերականական համակարգի կարևոր և բաղկացուցիչ մասն են: Նրանց ծագումը, զարգացումը, գործառությունը ուսումնասիրության առարկա են դարձել տարբեր լեզվաբանների կողմից և հետաքրքրություն են ներկայացնում լեզվի ընդհանուր տեսության որոշ հարցերի լուսաբանման տեսակետից:

Թեև եղանակավորող բառերի ուսումնասիրության բնագավառում շատ բան էր արվել, հայ և ռուս լեզվաբանական գրականության մեջ բավական նյութ կար նշված բառախմբի վերաբերյալ, բայց նայնպես բացակայում էր դասակարգման համոզիչ սկզբունքը:

Փորձ ենք արել եղանակավորող բառերի սահմանազատումը կատարելու տարժամանակյա մոտեցումով հայերենի զարգացման տարբեր գոյավիճակների ընձեռած լեզվական փաստերի վրա:

Շարադրանք

Երկար ժամանակ եղանակավորող բառերը դիտարկվել են իբրև մակբայի դրսևորումներ և չեն սահմանազատվել: Այս առնչությամբ Ս. Աբրահամյանը իր դիտարկումներում նշում է, որ մեզանում դեռևս կան որոշ հարցեր, որոնց բավարար լուծումը մեր քերականագիտության ամենահերթական խնդիրն է: Այդպիսիք են, օրինակ, եղանակավորող բառերը, որոնք մինչև այժմ էլ հայերենի քերականության գործող դասագրքերում և ձեռնարկներում (թե՛ դպրոցական, թե՛ բուհական) դասվում են մակբայների շարքը:

Պատմական ակնարկները վկայում են, որ Ա. Գարագաշյանը 1887 թ. լույս տեսած գրաբարի ձեռնարկում ընդունում է մակբայների երկու խումբ: Առաջին խմբում զետեղված

¹ Տե՛ս Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը*, Ե., 1959, էջ 217:

են տեղական, ժամանակական, եղանակական և քանակական մակբայները, երկրորդ խմբում՝ ստորասական, բացասական, արգելական, գատական, խրախուսական, հարցական, տարակուսական տեսակները՝ ուրիշ գործածության մակբայներ անունով: Այդպիսի բաժանումը, ինչպես վկայում է Ա. Քյուրքչյանը, առաջին քայլն է մակբայի և եղանակավորող բառերի քերականական իմաստների տարբերակման ուղղությամբ:

Ավելի ուշ Ա.Առաքելյանի «Գրաբարի ինքնուրույն ձեռնարկում» հաստատական և ժխտական եղանակավորող բառերը դիտարկվում են որպես ձևի մակբայներ, ցուցական եղանակավորող բառերը՝ տեղի մակբայներ⁴:

Ակնհայտ է, որ լեզվի բառային կազմում բոլոր բառերը նույն դերն ու նշանակությունը չունեն: Ս. Աբրահամյանը հետազայում զարգացնում է այն միտքը, որ Ա. Աբրահամյանը, առաջնորդվելով վերոնշյալ սկզբունքով և նկատի ունենալով թե՛ մակբայի, թե՛ եղանակավորող բառերի քերականական իմաստի և խոսքիմասային առանձնահատկությունների հըստակ տարբերակումն ու բացահայտումը, «Գրաբարի ձեռնարկ» աշխատության մեջ գրաբարի քերականության պատմության մեջ առաջինը եղանակավորող բառերը մակբայներից անջատեց և դիտարկեց որպես առանձին խոսքի մաս՝ հաստատական, երկբայական, հարցական, ժխտական և ցուցական անուններով⁵:

Ս.Աբրահամյանը մեջբերում է Ա.Աբրահամյանի միտքը. «Մեր արդի գրական լեզվում բավականաչափ հիմքեր կան եղանակավորող բառերի կատեգորիայի, ինչպես նաև մասնիկների ճանաչման համար: Եվ որպես այդպիսիք նա բերում է հետևյալ օրինակները՝ **թող, հենց, ապաքեն, ևեթ, սուկ, միայն, իսկ, մի**»⁶:

Հենվելով հայերենի ընձեռած փաստերի վրա՝ Ա. Քյուրքչյանը վկայում է, որ արևմտահայ քերականներ Զապել և Հրանտ Ասատուրները ընդունում են մակբայի վեց տեսակներ, որոնցից երկուսը՝ հաստատականը և ժխտականը, մակբայի սահմանման մեջ տրվում են լրացուցիչ կերպով: Հիշատակում են նաև երկբայական եղանակավորող բառ՝ **թերևս**: Եղանակավորող բառերի ճանաչումը հայ քերականագիտության առաջնահերթություններից համարելով՝ Հ. Գալանձյանը հայ քերականության պատմության մեջ կիրառում է եղանակավորողիչ եզրույթը՝ դրանք համարելով մակբայի տեսակ: Ս. Աբրահամյանը և Ա. Քյուրքչյանը նշում են, որ արևելահայ գրական լեզվում Ս. Պալասանյանը և նրան հաջորդող քերականները եղանակավորող բառախմբի համար մակբայի առանձին տեսակներ չեն ընդունում:

Բերված փաստերն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հնարավոր չէ նման մոտեցումները դնել մակբայի և եղանակավորող բառերի սահմանազատման հիմքում: Նկատենք, որ

² Տե՛ս Ա. Գարագաշեան, *Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, 7-րդ տիպ*, Կ.Պոլիս, 1887, էջ 111-127:

³ Տե՛ս Ա. Քյուրքչյան, *Հայերենի մակբայները*, Ե., 2011, էջ 39:

⁴ Տե՛ս Ա. Առաքելյան, *Գրաբարի ինքնուրույն ձեռնարկ*, Ե., 1952, էջ 316-317:

⁵ Տե՛ս Ս. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 218:

⁶ Ա. Աբրահամյան, *Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում (զեկուցում)*, Ե., 1951, էջ 13:

⁷ Տե՛ս Զ., *Հ.Ասատուրներ, Գործնական քերականություն արդի աշխարհաբարի*, Կ. Պոլիս, 1922, էջ 125:

⁸ Հ.Գալանձեան, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Ա և Բ մաս, Բարձրագույն և լրացուցիչ դասընթացը*, Կ.Պոլիս, 1910, էջ 77:

ձևաբանական և շարահյուսական ցուցիչների առկայությամբ անգամ չի վճռվում հիմնական հարցը:

Նույնը կարող ենք ասել նաև Մ. Աբեղյանի առաջ քաշած տեսակետի մասին: Հեղինակը «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ մակբայի եղանակական տեսակն առանձնացնում է և տալիս է երեք խմբերով՝ եղանակական բառեր կամ մասնիկներ՝ **թերևս, գուցե, արդյոք, գոնե, գրեթե**, բացասական մասնիկներ՝ **ոչ, չը**, պատասխանական բառեր՝ **այո, ոչ**: Ա. Քյուրքչյանը իրավացիորեն նշում է, որ Մ. Աբեղյանը առաջինն է աշխարհաբարի քերականության մեջ եղանակավորող բառերը առանձնացնում մակբայներից՝ առանց առանձին խոսքի մաս համարելու և ըստ ամենայնի քննելու¹⁰: Եղանակավորող բառերի հետազոտությունը խիստ անհրաժեշտ համարելով՝ դրանք մակբայներից առանձնացնելու փորձ է արել նաև Ա. Ղարիբյանը, որը, իհարկե, եղանակավորող բառերը նախապես դիտարկում է ձևի մակբայներ, հետո համարում դրանց մի տեսակը՝ եղանակավորող մակբայներ անունով¹¹: Մակբայների և եղանակավորող բառերի տարբերությունների առանձնացման հարցում Ս. Աբրահամյանը կարևորել է նաև Ռ. Իշխանյանի հոդվածը՝ «Մակբայները ժամանակակից հայոց լեզվում» խորագրով:

Եղանակավորող բառերի իմաստային-ձևաբանական կառուցվածքի առնչությամբ նկատառում ունի նաև Գ. Ջուհակյանը իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ՝ առանց նշելու, սակայն, նրանց առանձին խոսքի մաս լինելու հանգամանքը: Լեզվաբանը լայն առումով առանձնացնում է եղանականիշ բառերի և բառախմբերի չորս հիմնական կարգ՝ ա. հարցուպատասխանական, բ. սուբյեկտիվ-վերաբերողական, գ. ձայնարկական, դ. կոչական-դիմողական¹²: Հարցուպատասխանական բառերը, ըստ Ջահուկյանի, եղանակավորող բառերն են, որոնք նա քննում է երկու տեսակով՝ անկախ և գործառական: Անկախ հարցուպատասխանական բառերը և բառախմբերը հետևյալներն են՝ **արդյոք, մի թե, այո, ասենք թե, արդարև, գուցե, կարծեմ, ոչ մի կերպ, չէ** և այլն¹³: Գործառական հարցուպատասխանական բառերը, ըստ լեզվաբանի ընթրնման, հարցական դերանուններն են՝ **ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ինչպիսի՞, քանի՞, ինչպե՞ս, ինչքա՞ն** և այլն: Գ. Ջուհակյանը նկատում է նաև, որ Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» արմատական մակբայներից առանձնացնում է **արդյոք, իբրև, լոկ, միայն, սոսկ** բառերը և համարում եղանակական բառ-մասնիկներ:

Ռուս քերականության մեջ 19-րդ դարի կեսերից եղանակավորող բառերը առանձնացվեցին որպես առանձին քերականական կարգ¹⁴:

Եղանակավորող բառերի դասակարգման հիմնավոր փորձ է արել Ա. Քյուրքչյանը «Հայերենի մակբայները» մենագրության մեջ: Անդրադարձ է կատարել նրանց առաջացման աղբյուրներին, գործածության հարցերին: Լեզվաբանը հայ քերականագիտության մեջ առա-

⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1931, էջ 132:

¹⁰ Տե՛ս Ա. Քյուրքչյան, *նշվ. աշխ.*, էջ 53:

¹¹ Տե՛ս Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի քերականության դասագիրք*, Ե., 1931, էջ 132:

¹² Տե՛ս Գ. Ջահակյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 361:

¹³ Տե՛ս Գ. Ջահակյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 37:

¹⁴ Տե՛ս Ա. Քյուրքչյան, *նշվ. աշխ.*, էջ 83:

ջադրեց եղանակավորող բառերի իմաստային տեսակները՝ հաստատական, ցուցական, սաստկական-սահմանափակման, երկբայական, հարցական, ժխտական: Նկատենք, որ նման դասակարգումը դեռ վերջնական և ավարտուն չէր:

Կարծում ենք՝ այս բոլոր տեսակետները բխում են նրանից, որ մակբայների և եղանակավորող բառերի սահմանագատումը տեսականորեն բարդ և չմշակված հարց էր:

Հավաստենք, որ եղանակավորող բառերը հայերենի քերականական համակարգի կարևոր և բաղկացուցիչ մասն են, և չնայած նրանց ուսումնասիրության բնագավառում այդքան շատ բան էր արվել, եղանակավորող բառերն էլ որպես քերականական կարգ վաղուց էին առաջացել լեզվի մեջ, այնուհանդերձ ավելի ուշ են գիտակցվել և դիտվել իբրև առանձին խոսքի մաս: Եղանակավորող բառերի սահմանագատման և դասակարգման ամբողջական քննությունը մեզանում պատկանում է Ս. Աբրահամյանի գրչին, որը այս բառախմբի հետազոտությունը խիստ անհրաժեշտ է համարել: Արժեքավոր է հեղինակի ներդրումը հայերենի եղանակավորող բառերի ուսումնասիրության բնագավառում: Լեզվաբանի տեսությունը հիմք ընդունելով՝ փորձել ենք քննությունը կատարելիս վեր հանել եղանակավորող բառերի դասակարգման գլխավոր սկզբունքը, դասակարգել եղանակավորող բառերը ըստ կազմության, ըստ ծագման, եղանակավորող բառերի համակարգը ներկայացնել իր ամբողջության մեջ և հնարավորինս պահպանել հարցերի քննության համաչափությունը:

Դիտարկենք եղանակավորող բառերի կազմությունը՝ Ս. Աբրահամյանի տեսության համաձայն: Լեզվաբանը, ըստ ամենայնի վերլուծելով, փորձել է, բացահայտել վերաբերականների բառակազմական հնարավորությունները՝ հիմնավորելով այս ոլորտում մակբայների և խնդրո առարկա բառերի ընդհանրությունները՝ դրանց հիմքում դնելով բառական և քերականական իմաստների տարբերությունները: Այս առնչությամբ Ս. Աբրահամյանը գրում է, որ ժամանակակից հայերենի եղանակավորող բառերը կազմության տեսակետից մակբայների համեմատությամբ ունեն և՛ նմանություններ, և՛ տարբերություններ: Ի լրումն նշվածի՝ նկատում է, որ եղանակավորող բառերի մի զգալի մասը կազմվել է մակբայներից կիրառական հատկանիշների փոփոխության շնորհիվ՝ պահպանելով ձևը: Այս հարցին տալով ճիշտ մեկնաբանություն՝ նշում է, որ որոշ եղանակավորող բառեր էլ կազմվել են ոչ ուղղակիորեն մակբայներից, բայց նրանց կազմության սկզբունքով¹⁵:

Լեզվական փաստերի հիման վրա լեզվաբանը քննում է եղանակավորող բառերի կազմությունը՝ պարզ, ածանցավոր, քերականական ձևերից կազմված, բարդ, նկարագրական¹⁶:

Պարզ կազմության եղանակավորող բառերի շարքում բնականաբար դասել է այն բառերը, որոնք ժամանակակից լեզվամտածողությամբ բաղադրիչների չեն բաժանվում՝ **այո, ոչ, հո, խոմ, իսկ, անգամ, թող, հապա, մի, դե** և այլն: Հեղինակը անդրադարձ է կատարել նաև եղանակավորող բառերի և այլ խոսքի մասերի ձևաբանական աղերսների: Վկայում է **անգամ, իսկ, ապա, մի** բառերը¹⁷: Ս. Աբրահամյանի տեսությունը բովանդակում է նաև ածանցավոր եղանակավորող բառերի քննությունը և կարևորվում է նաև ածանցավոր բառերի

¹⁵ Տե՛ս Ս. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 223:

¹⁶ Տե՛ս Ս. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 223:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 224:

ծագումնաբանության բացահայտման առումով: Լեզվաբանը հավաստում է, որ գոյություն չունեն եղանակավորող բառեր կազմող գործառնապես հստակ տարբերակված հատուկ ածանցներ՝ հավելելով, որ լեզվի մեջ այդպիսի հատուկ ածանցների չլինելը բոլորովին էլ պատահական չէ: Նա հիմնավորում է, որ ածանցները, որոնք բառակազմական հսկայական դեր են կատարում, իրահարաբերական ձևայիններ են: Նրանք ստեղծվում և պահպանվում են իրերի (լայն առումով) հարաբերությունները բառերի մեջ բառերի միջոցով արտահայտելու անհրաժեշտությամբ: Ըստ լեզվաբանի՝ իրերն ու նրանց հարաբերությունները վերաբերում են օբյեկտիվ ռեալականությանը, մինչդեռ եղանակավորող բառերը օբյեկտիվ ռեալության դրսևորումներ չեն. խոսողի վերաբերմունքի արտահայտություն են¹⁸: Այս առնչությամբ հարկավոր է նշել հետևյալը. այնուամենայնիվ գոյություն ունեն ածանցավոր եղանակավորող բառեր: Ս. Աբրահամյանը նկատում է, որ, ըստ արտահայտության պլանի, կան ածականանիշ և մակբայանիշ ածանցներով ձևավորված եղանակավորող բառեր՝ **անշուշտ, անտարակույս, անկասկած, անպատճառ, իսկապես, հատկապես**: Հեղինակի կողմից անտեսվել են **դժբախտաբար, բարեբախտաբար** մակբայական կազմության վերաբերականները:

Սովորաբար լեզվի բաղկացուցիչ մասերը, տարբեր մակարդակները գտնվում են փոխապայմանավորվածության մեջ: Լեզվական այս իրողությունը դիտարկելով՝ Ս. Աբրահամյանը վեր է հանել նաև քերականական ձևերից կազմված եղանակավորող բառերը: Լեզվաբանը նկատում է, որ եղանակավորող բառերի կազմավորման հարցում բացառականը պասիվ է: Այդ հոլովաձևից ունենք մեկ եղանակավորող բառ՝ **իհարկե**: Գործիականը ավելի ակտիվ է, որից կազմված են հետևյալ եղանակավորող բառերը՝ **արդարև, հարկավ, հավաստյալ, իրավ, իրոք, կարծյոք**¹⁹: Սակայն քերականական ձևերից կազմված եղանակավորող բառերի բաշխման հարցը չի կարելի ամբողջացնել առանց բայերի թեքման ձևերից կազմված եղանակավորող բառերի հարցի քննության: Ս. Աբրահամյանը առանձնացրել է նշված բառախմբային կազմություններ՝ **կարծեմ, կարծես (կարծես թե), կարծեք, ասես (ասես թե), գուցե, միգուցե, չլինի, չլինի թե, երևի**²⁰:

Անցնելով բարդ և նկարագրական եղանակավորող բառերի բաշխման և սրանց իմաստային խմբերի քննությանը՝ նշենք, որ լեզվաբանը եզրակացնում է, որ ժամանակակից հայերենում իսկական բարդությամբ կազմված եղանակավորող բառեր չկան: Կցական բարդություններն են՝ **ահավաստիկ, թերևս, միգուցե, միթե, նույնիսկ** և այլն:

Ըստ բաշխման՝ առանձին խումբ են կազմում **թե** թարմատարով գուգորդվող եղանակավորող բառերը, որոնք, ինչպես նկատում է Ս. Աբրահամյանը, հարադրյալ բարդություններ են՝ (բացի **միթե** կցականից)՝ **կարծես թե, իբր թե, իբրև թե**²¹:

Լեզվաբանի կողմից վկայվում են նաև նախադասության արժեք ունեցող վերաբերականները՝ **ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի**: Ակնհայտ է, որ նշված եղանա-

¹⁸ Տե՛ս Ս. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 226:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 227:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 228:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 229:

կավորող բառերի կազմիչները առանց բայական միավորի տվյալ կառուցվածքում գոյություն ունենալ չեն կարող:

Ամենատարբեր տեսակետների և աշխատությունների քննությունը մեզ բերում է այն համոզման, որ Ս. Աբրահամյանը առաջինն է հայ քերականագիտության մեջ, որ կատարել է եղանակավորող բառերի իմաստային ամբողջական դասակարգումը՝ հիմնավորելով դրանց տարբերություններն ու նմանությունները: Ելնելով եղանակավորող բառերի՝ իմաստային տեսակետից բազմազան լինելու հանգամանքից՝ առանձնացնում է իմաստային հետևյալ տեսակները՝ հաստատական, ցուցական, ժխտական, զիջական, երկբայական, սաստկական, կամային, սահմանափակման²²:

Փորձ ենք արել ներկայացնելու Ս. Աբրահամյանի տեսությանը առնչվող մեր դիտարկումները:

Կարծում ենք՝ ավելի շահեկան կլիներ, եթե նաև անդրադառնար խոսքիմասային տեղաշարժերին և տարարժեքությանը եղանակավորող բառերի շրջանակներում: Նշենք, որ բառապաշարի համակարգում բառերի միջև գոյություն ունեն գանազան կապեր, որոնց շնորհիվ բառապաշարը կազմում է փոխկապակցված մի սերտ ամբողջություն: Բառապաշարի համակարգում բառական ենթահամակարգերը փոխազդում են միմյանց վրա, ներթափանցում միմյանց մեջ, որովհետև լեզվի ամբողջ բառապաշարը կազմում է բաց համակարգ: Դա նպաստում է այն բանին, որ լեզվի տարբեր գոյավիճակներում տեղի են ունենում բառային իմաստի փոփոխություններ՝ առաջ բերելով ձևաբանական տարարժեքություն: Նման տեղաշարժերը, բառերի երկատվածությունը պայմանավորվում են առավելաբար շարահյուսական գործոններով: Այս իրողությունը ակնհայտորեն առկա է նաև եղանակավորող բառերի համակարգում: Այլ խոսքի մասերի պատկանող բառամիավորներ խոսքիմասային իմաստի տեղաշարժի և բառային իմաստի մթազմման արդյունքում անցնում են եղանակավորող բառերի համակարգ նոր ձևաբանական արժեքով և գործառույթով, այսինքն՝ նախորդ խոսքի մասի հատկանիշների կորստի և նորի հատկանիշների ձեռքբերման ընթացքում բառի իմաստային կառուցվածքը երկատվում է, և առաջանում են բազմագործառույթ բառեր:

Այսպիսով, վերաբերականները հարաբերակից են դառնում ածականին, թվականին, դերանվանը, բային, մակբային, շաղկապին, ձայնարկությանը:

Նա խոստանում է երեք դոլարով իր բոլոր գաղտնիքները հայտնել ինձ. **դժվար** նա ինձ խաբի (վերաբերական):

Մի՞թե **դժվար** էր սիրել խենթի պես, ճախրել խենթացած... (ածական):

Ախ՛, թե **մի** գտանք, Մածուն ցույց կտանք (վերաբերական):

Ուտիքի ու Գուգարքի **մի** մասը մտնում է Ջաքարյան իշխանապետության կազմի մեջ (թվական):

Մի մրահոն աղջիկ տեսա Ռեալտոյի կամրջին (դերանուն):

Կաքավաբերդի քարերն **ասես** կենդանացել ու խոսում էին հնագետի հետ (վերաբերական):

-Եթե այդ մասին բոլորին **ասես**, հիմա գլուխդ կթոցնեմ, Ջի՛մ (բայ):

²² Ավելի մանրամասն տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 229-238:

Հոգեհացիս **հազիվ** նա գա (վերաբերական):

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան Հազար դարում **հազիվ** դարձավ Մարդասպան (մակբայ):

Հենց դու ես այս դժբախտությունների պատճառը (վերաբերական):

Հենց մութն ընկավ, գյուղում ճրագները մարեցին (շաղկապ):

-**Ա՛յ** կնիկ, էս ի՞նչ ոսկի է (ձայնարկություն):

-**Այ**, ապի՛, մեր տունն էն ա, հա՛, -ցույց տվավ Գիքորը (վերաբերական):

Հայ քերականագիտության մեջ այս իրողությունը դիտարկվում է իբրև պատմական իմաստափոխական գործընթաց, և տեղաշարժի արդյունքում գոյանում են տարբեր խոսքի մասերի պատկանող բազմագործառույթ բառեր, որոնք հարստացնում են հայերենի բառապաշարը. Ս. Աբրահամյանի տեսությունը՝ եղանակավորող բառերի վերաբերյալ, նրա գիտական վաստակի երաշխիքներից մեկն է: Ունենք դիտարկումներ նաև նկարագրական եղանակով կազմված և քերականական ձևերից առաջացած եղանակավորող բառերի շուրջ: Գիտնականը նկատում է, որ եղանակավորող բառերի մի զգալի մասը կազմվել է բայերի թեքման ձևերից՝ **կարծեմ, կարծես (թե), կարծեք, ասես (թե), գուցե, միգուցե, չլինի (թե), ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ով գիտի**²³: Նա նշում է, որ վերջիններս արտահայտում են խոսողի վերաբերմունքը այս կամ այն իրողության, երևույթի, առարկայի նկատմամբ: Հարում են եղանակավորող բառերին, թեև չեն վերածվել բառերի²⁴: Ուշագրավ է այն, որ ուսումնասիրվող կաղապարներով կազմված վերաբերականներում (**ինչ էլ լինի, ինչ գնով էլ լինի, ինչ ուզում է լինի, ով գիտի**) կազմիչները չեն կարող ունենալ իմաստային դաշտերի հեշտությամբ բաժանվող բաղադրիչներ: Նկատում ենք, որ վերոնշյալ կաղապարներում առկա է ստորոգում, որը ինքնին ենթադրում է նախադասության գոյությունը և վկայում է այն մասին, որ մենք գործ ունենք լեզվական ավելի բարդ միավորի հետ, քան բառն է: Մինչդեռ այս դեպքում պատկերն այլ է: Նշված նկարագրական վերաբերականների մեջ կատարվել են բաղադրիչների իմաստային փոփոխություններ: Քերականական նման իրակությունների քննությունը ցույց է տալիս, որ մթագնած են նշված վերաբերականների բաղադրիչների թե՛ բառային, թե՛ ձևաբանական իմաստները, թե՛ շարահյուսական կապը: Ակնառու է, որ **ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչ էլ լինի** հաստատական նկարագրական վերաբերականները արտահայտում են ասվածի անատարկելիություն և ունեն մեկ բառի արժեք՝ **անտարակույս, անպայման, անպատճառ, ով գիտե** երկբայական-հարցական վերաբերականը՝ **հավանաբար** բառի արժեքը: Ուստի ժամանակակից մտածողությամբ ընդգծված կաղապարները ներխոսքիմասային տեղաշարժի արդյունքում դիտարկվում են բառային միավորներ: **Կարծեմ, կարծես, կարծեք, ասես** երկբայական վերաբերականները, ինչպես նկատում է Ս.Աբրահամյանը, երկբայական-հավանականության, թվացողության իմաստ են արտահայտում²⁵: Նկատենք, որ խոնարհման հարացույցը կազմող վերջնամասնիկները՝ դիմանիշ և թվանիշ վերջավորությունները, բայական ձևերում մթագնած են, այսինքն՝ բայաձևի բաղադրվածությունը պահպանվում է, սակայն կազմիչները ենթարկվում են իմաստային փոփոխության:

²³ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 228:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 229:

²⁵ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 232:

Հիմնական ձևային կորցնում է նյութական իմաստը և ձեռք է բերում վերացական նշանակություն, իսկ քերականական ձևային՝ երկրորդական բառակազմական ձևային նշանակություն: Նկատի ունենալով վերնում նշվածը՝ հավելենք, որ բովանդակության պլանը ազդում է արտահայտության պլանի վրա, և նման դեպքերում լեզվի զարգացումը հանգեցնում է ածանցների առաջացմանը. այլ կերպ ասած՝ բառաձևի մի բաղադրիչը վերածվում է ածանցի: Հենց դադարում է բաղադրիչների այդպիսի գիտակցումը, այսինքն՝ բառաձևի քերականական ձևայիններից բաղադրված լինելը, բառաձևը դառնում է ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր բառ, օրինակ՝ **իրավ, իրոք, այնուամենայնիվ, իմիջիայլոց, հարկավ** և այլն: Ակնհայտ է, որ բառակազմական համակարգի զարգացումը նման դեպքերում առաջ է բերում ինչպես կառուցվածքային ձևերի, այնպես էլ կառուցվածքային-իմաստային հարաբերությունների փոփոխություն:

Եզրակացություններ

1. Եթե մակբայները ցույց են տալիս հատկանիշի օբյեկտիվ հատկանիշը, ապա եղանակավորող բառերը այս կամ այն երանգն են հաղորդում նախադասության մտքին, խոսողի վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն իրողության, առարկայի նկատմամբ:

2. Եղանակավորող բառերը չունեն նյութական իմաստ և դրանով հակադրվում են մակբայներին:

3. Եթե մակբայները դրվում են հատկանիշ ցույց տվող բառի վրա, ապա եղանակավորող բառերը դրվում են գերազանցապես նախադասությունների, ինչպես և նախադասության այլ անդամների վրա:

4. Եթե մակբայները հանդես են գալիս պարագայի շարահյուսական արժեքով, ապա եղանակավորող բառերը նախադասության անդամի արժեքով հանդես չեն գալիս:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1931:
2. Աբրահամյան Ա., Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում (գեկուցում), Ե., 1951:
3. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Ե., 1959:
4. Առաքելյան Ա., Գրաբարի ինքնուրույն ձեռնարկ, Ե., 1952:
5. Ասատուրներ Ջ., Հ., Գործնական քերականություն արդի աշխարհաբարի, Կ. Պոլիս, 1922:
6. Գալանձեան Հ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Ա և Բ մաս, Բարձրագույն և լրացուցիչ դասընթացք, Կ. Պոլիս, 1910:
7. Գարագաշեան Ա., Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, 7-րդ տիպ, Կ. Պոլիս, 1887:
8. Ջահակյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

9. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի քերականության դասագիրք, Ե., 1931:

10. Քյուրքչյան Ա., Հայերենի մակբայները, Ե., 2011:

Khalatyan Gayane - "The study of conjunctions according to S. Abrahamyan's theory".-

For a long time, modal words (relatives) were considered as manifestations of adverbs and were not distinguished as an independent part of speech. Historical reviews show that many grammarians - such as A. Garagashyan, A. Arakelyan, M. Abeghyan, A. Gharibyan, G. Jahukyan, and others — attempted to present modal words as a subtype of adverbs in their works.

Among the later scholars, A. Kyurkchyan's contribution stands out. In his work "Adverbs of the Armenian Language", he presented a fairly in-depth discussion of modal words as a separate part of speech. However, his classification was not yet final. The definitive approach was later developed by S. Abrahamyan. In his work "The Non-declinable Parts of Speech in Modern Armenian", he thoroughly explored the word-formational and semantic potential of relative words, comparing them with adverbs and identifying both their similarities and the differences in lexical and grammatical meaning.

Key words and phrases: modal words, grammatical structure, adverb, part-of-speech ambiguity, subsystem, multifunctional words, predicate.

Khalatyan Gayane, Acting professor, phd in pedagogical sciences, chair of Armenian language and teaching methodology named after A. Gharibyan, Armenian state pedagogical university.

Халатян Гаяне - «Исследование союзов согласно теории С. Абраамяна».- В течение длительного времени модальные слова (относительные) рассматривались как проявления наречий и не выделялись как самостоятельная часть речи. Исторический обзор свидетельствует о том, что многие грамматисты - А. Каракашян, А. Аракелян, М. Абемян, А. Гхарибян, Г. Джахукян и другие — в своих трудах пытались представить модальные слова как разновидность наречия.

Среди последующих исследователей особенно выделяется вклад А. Кюркчяна. В своем труде «Наречия армянского языка» он достаточно глубоко представил модальные слова как отдельную часть речи. Однако его классификация еще не была окончательной. Окончательный подход в этой области был сформулирован С. Абраамяном. В своем труде «Непреклоняемые части речи современного армянского языка» он подробно исследовал словообразовательные и семантические возможности модальных слов, сопоставляя их с наречиями и выявляя как общие черты, так и различия в лексическом и грамматическом значении.

Ключевые слова и словосочетания: модальные слова, грамматический строй, наречие, морфологическая полисемия, подсистема, многофункциональные слова, сказуемое.

Халатян Гаяне, Исполняющая обязанности профессора кафедры армянского языка и методики его преподавания имени А. Гарибяна, кандидат педагогических наук, Армянский государственный педагогический университет.

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՎԱԿՈՐՈՒՄ՝ CEFR-Ի ՕՐԻՆԱԿՈՎ**

Հակոբյան Լիլիթ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՊՏՀ լեզուների ամբիոն.

lilithakobian@gmail.com

Բանալի բառեր. հայերենը՝ որպես օտար լեզու, լեզվի ուսուցում, լեզվական մակարդակ, գնահատում, CEFR:

Ներածություն

Հայերենը, լինելով պատմականորեն հարուստ և մշակութային արժեքներով լի լեզու, հայ ժողովրդի ինքնության ու մշակութային ժառանգության հիմնասյուներից է: Ժամանակակից աշխարհում համաշխարհայնացման պայմաններում թե՛ Սփյուռքում ապրող հայերի և թե՛ ոչ հայ ուսումնասիրողների կողմից նկատվում է հայերենը՝ իբրև օտար լեզու սովորելու հետաքրքրության աճ:

Զնայած աճող հետաքրքրությանը՝ հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման և գնահատման գործընթացը դեռևս համակարգված ձևով կազմակերպված չէ: Հայերեն սովորեցնող կրթական հաստատություններում կիրառվող մեթոդները, ուսումնական նյութերն ու գնահատման չափանիշները խիստ տարբեր են, չունեն գիտական միասնական հիմք: Ավելին՝ չկա միջազգային չափանիշներին համապատասխանող հստակ կառուցվածք, որը թույլ կտա սահմանել սովորողի լեզվական մակարդակը՝ ապահովելով շարունակական, համահունչ ուսուցում տարբեր երկրներում:

Եվրոպական խորհրդի կողմից մշակված Եվրոպական լեզվաբանական միավորների ընդհանուր շրջանակը (CEFR) վերջին տասնամյակներում ծառայել է որպես արդյունավետ գործիք՝ տարբեր լեզուների ուսուցման, ուսումնական ծրագրերի մշակումն ու գնահատումն ուղղորդելու համար: Այն թույլ է տալիս դասակարգել լեզվակիրների կարողությունները համընդհանուր չափանիշներով՝ ապահովելով փոխըմբռնում և թափանցիկություն կրթական տարբեր համակարգերի միջև:

Այս հոդվածի նպատակն է ներկայացնել հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման և գնահատման համընդհանուր համակարգի մշակման տեսլականը՝ հիմնվելով CEFR-ի կառուցվածքի և սկզբունքների վրա: Ներկայացվում են համակարգի տեսական հիմքը, մակարդակների առաջարկվող կառուցվածքը, ուսուցման և ստուգման մեթոդական մոտեցումները, ինչպես նաև գործնական առաջարկություններ՝ համակարգի ներդրման համար:

¹ **Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment**, Council of Europe, 2001.

Տեսական հիմք և համատեքստ

Լեզվի ուսուցման և գնահատման համակարգերի մշակումը ժամանակակից լեզվագիտության և մեթոդաբանության առանցքային խնդիրներից է:

Լեզվական համակարգի կառուցումը պետք է հիմնվի այնպիսի մոտեցումների վրա, որոնք ապահովում են հաղորդակցման հմտությունների օպտիմալ զարգացում և գնահատման օբյեկտիվություն:

Սույն համակարգի ձևավորման համար հաշվի են առնվել դիդակտիկ հետևյալ մոտեցումները:

1. Հաղորդակցական ուսուցման (Communicative Language Teaching - CLT) մոտեցումը² կենտրոնանում է լեզվական հմտությունների զարգացման վրա՝ շեշտելով իրական կյանքում լեզվի օգտագործման կարևորությունը: Դրա նպատակն է սովորողին պատրաստել հաղորդակցման իրական միջավայրում: Հաղորդակցման ուսուցումը ենթադրում է, որ լեզուն միտված է հաղորդակցման, ուստի սովորեցնողը պիտի ստեղծի իրավիճակներ, որտեղ սովորողը կկիրառի լեզուն ու կզարգացնի իր հաղորդակցման հմտությունները:

Սովորողին պետք է տալ իրական աշխարհի խնդիրներ՝ զրույցներ վարելու, կարծիքներ հայտնելու կամ հարցեր տալու համար: Կարող են լինել երկխոսություններ, քննարկումներ կամ որոշակի թեմաների շուրջ կարծիքների փոխանակություն:

2. Հնարավորությունների վրա հիմնված ուսուցման (Task-Based Language Teaching - TBLT) մեթոդը³ խթանում է ուսուցման այնպիսի մոտեցումներ, որոնք սովորողներին թույլ են տալիս լուծել լեզվական խնդիրներ՝ իրական կյանքից վերցված սցենարներով: Սա խթանում է ստեղծագործական մտածողությունը և ուսումնական գործընթացում ներգրավում է սովորողին՝ հստակ խնդիրներ տալով, որոնք պիտի լուծի լեզվական միջոցներով:

Օրինակ՝ սովորեցնողը կարող է տալ առաջադրանքներ՝ որոշակի թեմայի վերաբերյալ կարծիք հայտնելու, հոդված գրելու կամ մի քանի տարբերակներ առաջարկելու՝ հիմնված լսած նյութի վրա:

3. Ինտեգրված ուսուցման (Integrated Language Skills Approach) մոտեցումը համատեղում է խոսելու, լսելու, կարդալու և գրելու հմտությունները⁴: Հաճախ այս մեթոդը օգտագործվում է այն դեպքում, երբ կարևոր է, որ բոլոր հմտությունները զարգանան միասին, ոչ թե առանձին՝ տարբեր մակարդակներում: Սովորողները պիտի ունենան հնարավորություն կիրառելու լեզուն ամբողջությամբ՝ հաշվի առնելով բոլոր հմտությունները:

Այս մոտեցումը կարող է ներառել զուգահեռ պարապմունքներ՝ միաժամանակ լսելով լսարանային նյութ, կարդալով և քննարկելով նույն թեման կամ ստեղծելով գրավոր նյութ, որն արտացոլում է լսածը:

Հայերենի ուսուցման այս համակարգի ձևավորման ժամանակ հաշվի են առնվել մեթոդական հետևյալ հիմքերը:

² Hymes, D., *On Communicative Competence*, In J. B. Pride & J. Holmes (Eds.), *Sociolinguistics*. Penguin, 1972, p. 278.

³ Nunan, D., *Task-Based Language Teaching*. Cambridge: Cambridge University Press. 2004. p.4.

⁴ Oxford, R., *Integrated Skills in the ESL/EFL Classroom*. ERIC Digest. ERIC Clearinghouse on Languages and Linguistics. ED456670. 2001.

1. Ինտերակտիվ ուսուցման մեթոդը հիմնված է ուսուցման գործընթացում գործունե երգրավածության վրա: Այն խթանում է սովորողի մտածողությունը, պրակտիկան ու լեզվական հմտությունները այնպիսի ակտիվ առաջադրանքներով, որոնք պահանջում են մասնակցություն:

Իբրև օրինակ կարող են լինել տարբեր զրույցներ, դերաբաներ, խումբ ձևավորող վարժություններ, որտեղ սովորողները կարող են կիրառել իրենց գիտելիքները՝ բարձրացնելով խոսքի ազատությունը:

2. Դետալացված վերլուծությամբ սովորողների լեզվական ունակությունների զարգացումը պահանջում է նաև ուղղակի վերլուծություն ու գնահատում⁶, քանի որ այս մեթոդը նախատեսում է արտահայտությունների մանրակրկիտ ուսումնասիրություն և ուղղման միջոցով սովորողի առաջընթացի գնահատում:

Այս դեպքում ցանկալի է ներկայացնել խնդիրներ և դրանց լուծումներ, որոնք կնպաստեն լեզվական տեխնիկաների ընկալմանը՝ ներառելով վերլուծություն:

3. Մաքուր ուսուցման (Direct Method) մեթոդը կենտրոնանում է լեզվական հասկացությունների բացատրության վրա՝ առանց դիմելու ուղղակի թարգմանության⁷: Այսպիսով, լեզվի ուսուցումը ուղիղ միջավայրում բխում է օտար լեզուն հասկանալու և կիրառելու գործընթացից:

Մաքուր ուսուցումը ենթադրում է, որ սովորեցնողը բացատրում է միայն լեզվական հմտությունները և տրամադրում է հարցեր, որոնք չպետք է թարգմանվեն, այլ ուղղակիորեն հասկանում են տրամաբանությամբ:

4. Ստուգողական ուսուցման (Form-Focused Instruction) մեթոդն ընդգծում է լեզվական կառուցվածքների (օրինակ՝ քերականական, քերականական և ստուգման հմտությունների) ճիշտ կիրառումը⁸: Մեթոդը միտված է լեզվաբառարանական սխալների ուղղմանը և նրանց անխափան կիրառմանը:

Այս դեպքում սովորողներին պետք է տրամադրվեն տարբեր հարցեր ու վարժություններ, որոնք ուղղված են բառապաշար և քերականություն դարձնելու պրակտիկայի վրա:

Դիդակտիկ և մեթոդական այս մոտեցումները ստեղծում են ուսուցման այնպիսի միջավայր, որն ապահովում է լեզվական հմտությունների զարգացման համակարգված գործընթաց: Ուսուցման յուրաքանչյուր փուլում սովորողը պիտի ունենա հնարավորություններ՝ փորձելու լեզուն տարբեր իրավիճակներում, գործնականում կիրառելու տեսական գիտելիքները և վերականգնելու սխալներն ու շտկելու արտահայտությունները⁹, արդյունքների բարձրացման նպատակով:

⁵ **Brown, H. D.** *Teaching by Principles: An Interactive Approach to Language Pedagogy* (2nd ed.). White Plains, NY: Longman. 2001. pp. 48-49.

⁶ **Bachman, L. F., & Palmer, A. S.** *Language Testing in Practice: Designing and Developing Useful Language Tests*. Oxford: Oxford University Press, 1996. pp. 56-57.

⁷ **Richards, J. C., & Rodgers, T. S.** *Approaches and Methods in Language Teaching* (3rd ed.). Cambridge: Cambridge University Press. 2014. pp. 5-9.

⁸ **Spada, N., & Lightbown, P. M.** *Instruction and the role of form-focused instruction and corrective feedback in second language learning*. In W. Grabe (Ed.), *Annual Review of Applied Linguistics*, 13, 1993. pp. 191-193.

⁹ **Swain, M.** *Communicative Competence: Some Applications to Language Teaching*. *Applied Linguistics*, 6(2), 1985. p. 71.

Դիդակտիկ ու մեթոդական այս մոտեցումները կարող են ծառայել այն հիմքը, որի վրա կարելի է կառուցել հայոց լեզվի ուսուցման և գնահատման համակարգը:

CEFR. համառոտ ակնարկ

Լեզվական կարողությունների ստանդարտացված նկարագրումը ոչ միայն նպաստում է ուսումնական ծրագրերի համահունչ կազմակերպմանը, այլև ապահովում է լեզվական տարբեր միջավայրերում սովորողների հմտությունների օբյեկտիվ գնահատում: Այս համատեքստում խիստ կարևոր դեր ունի Եվրոպական խորհրդի կողմից 2001թ. հաստատված Եվրոպական լեզվաբանական միավորների ընդհանուր շրջանակը (**Common European Framework of Reference for Languages, CEFR**):

CEFR-ը մշակվել է իբրև գործիք լեզվական քաղաքականության, ուսուցման, ուսումնառության և գնահատման համակարգման նպատակով: Այն առաջարկում է հստակ սահմանված լեզվական վեց մակարդակ՝ A1-ից մինչև C2, որոնցից ամեն մեկն ունի կոնկրետ նկարագրություն՝ կապված լեզվական չորս հիմնական կարողությունների հետ՝ ունկնդրում, բանավոր խոսք, ընթերցանություն և գրավոր խոսք: Շրջանակը ներկայացնում է նաև ընդհանուր հարթություն՝ լեզվական պրոֆիլ կազմելու, ուսուցչական ծրագրերի համադրման ու լեզվական վկայականների տրամադրման համար:

CEFR-ի կիրառումը լայն տարածում է գտել Եվրոպական և ոչ Եվրոպական բազմաթիվ երկրներում՝ ծառայելով որպես հիմք օտար լեզուների ուսուցման և սերտիֆիկացման ազգային համակարգերի ստեղծման համար: Վերջին տարիներին բազմաթիվ լեզուների (այդ թվում՝ իսլանդերենի, լիտվերենի, վրացերենի) համար մշակվել են ազգային տարբերակներ՝ հիմնված այս շրջանակի վրա: Այս փորձառությունը փաստում է, որ CEFR-ի կառուցվածքային մոդելը արդյունավետ հիմք է նաև փոքր տարածում ունեցող լեզուների ուսուցման կազմակերպման համար:

Հայերենի պարագայում, սակայն, դեռևս բացակայում է համապարփակ և ստանդարտացված նման համակարգ: Անշուշտ, առկա են առանձին փորձեր՝ մշակելու դասընթացներ օտարերկրացիների համար: Դրանք հիմնականում հիմնված են կոնկրետ հաստատությունների մեթոդաբանական որոշումների վրա և չունեն համահունչ, մակարդակային մոտեցում, ուստի դժվարանում են լեզվակիրների կարողությունների համադրումը, լեզվի ուսուցման շարունակականության ապահովումը և միջազգային ճանաչման արժանապատիվ համակարգի ստեղծումը:

Ստեղծվող հայեցակարգը՝ հիմնված CEFR-ի կառուցվածքի վրա, ունի առանցքային նշանակություն մի քանի տեսանկյունից. այն կարող է դառնալ ուսուցիչների, դասընթաց մշակողների, պետական ու մասնավոր կրթական կառույցների համար ուղեցույց՝ կազմելու և իրականացնելու կրթական բովանդակություն, ուսուցման մակարդակներին համապատասխանեցված նյութեր և, ի վերջո, ապահովելու միջազգային չափանիշներին համարժեք լեզվական վկայագրերի տրամադրում:

Առաջարկվող համակարգի կառուցվածքը

Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման և գնահատման համակարգի ձևավորումն արդյունավետ ու համահունչ կազմակերպելու համար անհրաժեշտ է հստակեցնել լեզվակիրների լեզվական կարողությունների աստիճանական զարգացումը: CEFR-ի մոդելի հիման վրա առաջարկվում է կիրառել վեց մակարդակներից բաղկացած համակարգ՝ A1, A2 (սկզբնական), B1, B2 (միջին), C1, C2 (առաջադեմ):

Յուրաքանչյուր մակարդակ ներկայացնում է լեզվական կարողությունների որոշակի շրջանակ, որը ներառում է չորս հիմնական հմտությունները՝ լսել, խոսել, կարդալ և գրել: Մակարդակային նկարագրությունները ներկայացնում են այն կոմպետենտությունները, որոնց պետք է տիրապետի սովորողը տվյալ փուլում: Ստորև ներկայացվում է առաջարկվող հայեցակարգը յուրաքանչյուր մակարդակի համար:

A1՝ Նախնական օգտագործող (բազային մակարդակ)

Սովորողը կարող է հասկանալ ու օգտագործել սովորական արտահայտություններ և պարզ նախադասություններ, որոնք ուղղված են կոնկրետ կարիքների բավարարմանը: Կարող է ներկայացնել իրեն և ուրիշներին, հարցեր տալ և պատասխանել անձնական բնույթի հարցերի: Շփումը հնարավոր է միայն, եթե զրուցակիցը խոսում է դանդաղ և հստակ ու պատրաստ է օգնել:

A2՝ Նախնական օգտագործող (առաջադեմ բազային մակարդակ)

Սովորողը կարող է հասկանալ առանձին նախադասություններ և հաճախ օգտագործվող արտահայտություններ՝ կապված ամենօրյա կյանքի հետ (օրինակ՝ ընտանիք, գնումներ, աշխատանք): Սովորական թեմաների վերաբերյալ կարող է հաղորդակցվել պարզ և ուղիղ տեղեկատվության փոխանակման ժամանակ:

B1՝ Ինքնուրույն օգտագործող (միջին մակարդակ)

Սովորողը կարող է հասկանալ հիմնական կետերը սովորական խոսքի մեջ՝ աշխատանք, ուսում, ազատ ժամանակի կազմակերպում: Կարող է հաղթահարել առօրյա իրավիճակներում հաղորդակցվելու հիմնական խնդիրները, արտահայտել կարծիք, նկարագրել փորձառություններ, երազանքներ, նպատակներ և պատճառաբանել տեսակետներ:

B2՝ Ինքնուրույն օգտագործող (վերին միջին մակարդակ)

Սովորողը կարող է հասկանալ բարդ տեքստերի հիմնական իմաստը, մասնագիտական քննարկումներ: Նա զրուցակիցների հետ կարող է հաղորդակցվել բավականին սահուն և բնական, առանց լարվածության: Կարող է արտահայտել պարզ, հստակ կարծիքներ տարբեր թեմաների վերաբերյալ:

C1՝ Իմաստավորված օգտագործող (առաջադեմ մակարդակ)

Սովորողը կարող է հասկանալ երկար և բարդ տեքստեր, ընկալել ենթատեքստեր: Կարող է ազատ, գրեթե առանց մտածելու արտահայտել մտքերը ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր տարբերակով: Լեզուն կարող է օգտագործել ակադեմիական, մասնագիտական կամ հասարակական ոլորտներում արդյունավետ:

¹⁰ Van Ek, J. A. *The Threshold Level in Modern Language Teaching*. Strasbourg: Council of Europe, 1990. pp. 36-

C2՝ Իմաստավորված օգտագործող (վարպետ մակարդակ)

Սովորողը հեշտությամբ հասկանում է գրեթե այն ամենը, ինչ լսում և կարդում է: Կարող է վերաբարձրել տեղեկատվությունը համակարգված ձևով, ամփոփել փաստերը և պատճառաբանել: Լեզվական արտահայտությունները հարուստ են, հարմարեցված են կոնտեքստին, իսկ հաղորդակցությունը՝ ճկուն ու նուրբ երանգավորմամբ:

Կառուցվածքային այս համակարգը ենթադրում է ոչ միայն մակարդակների հստակ սահմանում, այլև դրանց հիման վրա մշակվող ուսուցման բովանդակություն, առաջադրանքների տեսակավորում, գնահատման չափանիշներ և լեզվական սերտիֆիկացիա: Յուրաքանչյուր մակարդակ պետք է ունենա սովորեցնողների համար նախատեսված համապատասխան ուղեցույցներ, դասագիրք, տեսալսողական նյութեր, որոնք կնպաստեն համակարգի ներդրմանը տարբեր միջավայրերում:

Սա շատ կարևոր հարց է համակարգի մշակման տեսանկյունից: Ստորև ներկայացնում ենք առաջարկվող բազային չափորոշիչներ՝ ըստ CEFR-ի մոդելի, հարմարեցված հայերենի ուսուցման համատեքստում:

Բառապաշարային ու քերականական ծավալի չափորոշիչներ՝ ըստ մակարդակների A1 մակարդակ

Բառապաշար՝ շուրջ 500–600 հիմնական բառ (անձնական տվյալներ, ընտանիք, թվեր, օրեր, գույներ, սովորական գործողություններ, առօրյա իրեր):

Քերականություն՝

Այբուբեն: Գոյականի հոլով, թիվ: «Լինել» բայի ներկա ժամանակ: Բայի ներկա ժամանակ: Հաստատական, հարցական և ժխտական նախադասություններ

A2 մակարդակ

Բառապաշար՝ շուրջ 1000–1200 բառ (անուն, բնակություն, տրանսպորտ, աշխատանք, առողջություն, առօրյա գործողություններ, հասարակական վայրեր):

Քերականություն՝

Հոլովի և թվի համաձայնեցում

Անցյալ և ապառնի ժամանակի հիմնական ձևեր

Սեփականություն (իմ, քո...)

Բարդ նախադասությունների տարրական կաղապարներ՝ «որ», «երբ»:

B1 մակարդակ

Բառապաշար՝ շուրջ 2000–2500 բառ (զբոսաշրջություն, մշակույթ, կրթություն, հասարակական խնդիրներ, զգացմունքներ, կարծիքներ):

Քերականություն՝

Բայերի ժամանակներ՝ ներկա, անցյալ, ապառնի՝ բոլոր դեմքերում

Պայմանական եղանակ (եթե..., ապա...)

Հրամայական եղանակ

B2 մակարդակ

Բառապաշար՝ շուրջ 3000–3500 բառ (մասնագիտական բառապաշար, հասարակական քննադատություն, քաղաքականություն, լրատվամիջոցներ):

Քերականություն՝

Բարդ նախադասություններ

Դերբայների խորացված կիրառում

Շաղկապներ

Ընդգծված ենթատեքստ ստեղծող կառույցներ՝ «թեև», «մինչև անգամ», «չնայած» և այլն

C1 մակարդակ

Բառապաշար՝ շուրջ 4000–5000 բառ (գիտական, ակադեմիական, քաղաքական, մշակութային բառապաշար, նրբերանգներ, սինոնիմիկա):

Քերականություն՝

Ներկայացման, տեսակետ արտահայտող կառուցվածքներ

Արտահայտություններ, ասույթներ, համեմատականներ

Իրավական և գիտական կառուցվածքներ

Բարդ ենթակառուցվածքներով նախադասությունների կառուցում

C2 մակարդակ

Բառապաշար՝ 6000+ բառ՝ ներառյալ նեղ մասնագիտական տերմինաբանություն, պատկերավոր լեզու, փոխաբերություններ, հումորային և ուղղորդված խոսքի տարրեր:

Քերականություն՝

Լեզվական խորացված կառույցներ

Խոսքային ոճերի հստակ տարբերակում և կիրառում

Ոճական հնարներ

Տեքստային ամբողջականության ապահովում

Ստորև ներկայացնում ենք ամեն մակարդակի բառապաշարի ու քերականական նյութի համառոտ նկարագրությունը, ինչպես նաև լսելու, խոսելու, կարդալու և գրելու հմտություններն ընդգրկող համապատասխան օրինակներով առաջադրանքներ՝ ըստ մակարդակների, որոնք կարող են օգտագործվել թե՛ ուսումնական ծրագրերի մշակման, թե՛ սերտիֆիկացիոն թեստերի նախապատրաստման մեջ:

Հայոց լեզվի ուսուցման մակարդակային կառուցվածք (A1–C2)

A1 մակարդակ (նախնական օգտագործող)

1. Լսելու առաջադրանք – Լսի՛ր պարզ երկխոսություն խանութում: Նշի՛ր, թե ինչ ապրանքներ է գնում հաճախորդը:
2. Խոսելու առաջադրանք – Ներկայացրո՛ւ ինքդ քեզ՝ անուն, ազգանուն, տարիք, բնակության վայր, մայրենի լեզու:
3. Կարդալու առաջադրանք – Կարդա՛ պարզ գովազդ՝ բնակարան վարձով: Արձագանքի՛ր՝ ինչ սենյակներ ունի, որտեղ է գտնվում:
4. Գրելու առաջադրանք – Գրի՛ր հաղորդագրություն ընկերոջդ՝ հրավիրելով սրճարան, նշելով ժամը և վայրը:

5. Բառապաշարի առաջադրանք – Գունավորի՛ր նկարում նշված առարկաներն ըստ գույների ցուցակի:

A2 մակարդակ (առաջադեմ բազային)

1. Լսելու առաջադրանք – Լսի՛ր մարդու աշխատանքային օրվա նկարագրությունը: Արձանագրի՛ր հիմնական գործողությունները՝ ըստ ժամերի:

2. Խոսելու առաջադրանք – Նկարագրի՛ր ձեր տունը՝ օգտագործելով «իմ», «մեծ», «փոքր», «գեղեցիկ» և այլ հիմնաբառեր:

3. Կարդալու առաջադրանք – Կարդա՛ էլեկտրոնային նամակ ընկերոջից: Պատասխանի՛ր՝ որտեղ է նա գտնվում, ինչ է անում:

4. Գրելու առաջադրանք – Գրի՛ր կարճ նամակ՝ պատմելով քո վերջին ուղևորության մասին:

5. Քերականության առաջադրանք – Լրացրո՛ւ բաց թողնված բառերը. «Երեկ ես ... (գնալ) գրադարան, այնտեղ ես ... (ընթերցել) նոր գիրք»:

B1 մակարդակ (ինքնուրույն օգտագործող)

1. Լսելու առաջադրանք – Լսի՛ր ռադիոհաղորդման հատված: Նշի՛ր երեք հիմնական միտք:

2. Խոսելու առաջադրանք – Ներկայացրո՛ւ քո կարծիքը՝ «Սոցիալական ցանցերը օգնու՞տ, թե՞ վնաս» թեմայով:

3. Կարդալու առաջադրանք – Կարդա՛ հասարակական հարցազրույցի հատված և պատասխանի՛ր հետևյալ հարցերին:

4. Գրելու առաջադրանք – Գրի՛ր պատմություն՝ օգտագործելով անցյալ և ապառնի ժամանակ. «Եթե ես ավելի վաղ արթնանայի...»:

5. Քերականության առաջադրանք – Փոխի՛ր հետևյալ պարզ նախադասությունները բարդ դարձվածքներով («երբ», «որ», «որովհետև»):

B2 մակարդակ (վերին միջին)

1. Լսելու առաջադրանք – Լսի՛ր նորությունների թողարկում: Ներկայացրո՛ւ բովանդակությունը համառոտ տեսքով:

2. Խոսելու առաջադրանք – Կազմակերպի՛ր բանավեճ՝ «Պետք է արդյոք դպրոցներում սովորեցնել ֆինանսական գրագիտություն» թեմայով:

3. Կարդալու առաջադրանք – Կարդա՛ վերլուծական հոդված և վերաշարադրի՛ր գլխավոր փաստարկները:

4. Գրելու առաջադրանք – Գրի՛ր կարծիքդ հոդվածի տեսքով՝ հիմնավորելով քո տեսակետը սոցիալական խնդրի վերաբերյալ:

5. Քերականության առաջադրանք – Օգտագործի՛ր պայմանական նախադասություններ՝ «Եթե մարդիկ չանտեսեին շրջակա միջավայրը...»:

C1 մակարդակ (առաջադեմ)

1. Լսելու առաջադրանք – Լսի՛ր ակադեմիական զեկուցում: Գրառի՛ր հիմնական թեզերը:
2. Խոսելու առաջադրանք – Պատրաստի՛ր բանավոր շնորհանդես՝ «Հայոց լեզվի կերպարը սփյուռքում» թեմայով:
3. Կարդալու առաջադրանք – Կարդա՛ գիտական հոդված և կատարի՛ր գրավոր ամփոփում՝ թեզեր + քո մեկնաբանություն:
4. Գրելու առաջադրանք – Գրի՛ր կառուցվածքային էսսե՝ «Լեզուն՝ որպես ինքնության ձև» թեմայով:
5. Քերականության առաջադրանք – Վերլուծի՛ր գրական տեքստում գործածված բարդ կառույցները՝ բացատրելով դրանց գործառույթները:

C2 մակարդակ (վարպետ)

1. Լսելու առաջադրանք – Լսի՛ր հրապարակախոսական ելույթ: Վերլուծի՛ր հոետորական միջոցներն ու ենթատեքստը:
2. Խոսելու առաջադրանք – Ներկայացրու՛ կառուցվածքային ելույթ՝ քո ընտրած սոցիալ-մշակութային թեմայով:
3. Կարդալու առաջադրանք – Կարդա՛ գրական էսսե կամ ակնարկ և վերլուծի՛ր կառուցվածքը, ոճը, լեզվամտածողությունը:
4. Գրելու առաջադրանք – Ստեղծի՛ր ստեղծագործական տեքստ՝ օգտագործելով փոխաբերություններ, ենթատեքստ, հղումներ:
5. Քերականության առաջադրանք – Խմբագրի՛ր բարդ ակադեմիական տեքստ՝ բարելավելով կառուցվածքն ու լեզվական ճշգրտությունը:

Դիդակտիկ և մեթոդական հիմքեր

Հայոց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման դիդակտիկ հիմքերը ձևավորվում են համընդհանուր լեզվաբանական, հաղորդակցական և կոգնիտիվ սկզբունքների վրա, որոնք հաշվի են առնում թե՛ սովորողի լեզվական մակարդակը, թե՛ նրա մշակութային և ուսումնական փորձառությունը: Ներկայումս հայերենը դասավանդվում է տարբեր մեթոդաբանություններով՝ սկսած դասական քերականաթարգմանական մոտեցումից մինչև հաղորդակցական և խնդիրային (task-based) ուսուցում: Սակայն միավորող, համակարգված մոտեցման բացակայությունը բարդացնում է ինչպես ուսուցման ընթացքը, այնպես էլ սովորողների ձեռքբերումների գնահատման ճշգրտությունը:

Ներկայացվող համակարգը հիմնված է առանցքային երեք դիդակտիկ սկզբունքի վրա: Դրանք են՝

1. Ֆունկցիոնալ հաղորդակցություն (Functional Communication) – Լեզուն դիտարկվում է որպես հաղորդակցման գործիք, ուստի ուսուցումը պետք է կառուցվի իրավիճակային հա-

դորդակցական տեսարանների շուրջ¹¹:

2. Միջմշակութային ընկալում (Intercultural Competence)¹² – Լեզվի տիրապետմանը գուգահեռ խթանվում է սովորողի մշակութային տեղեկացվածությունը՝ կապված հայկական իրականության, արժեքների և նորմերի հետ:

3. Աստիճանական ծրագիր (Spiral Curriculum)¹³ – Լեզվական յուրաքանչյուր նոր միավոր ներմուծվում է աստիճանաբար, ըստ մակարդակի, կրկնվում ու խորացվում հաջորդ փուլերում՝ ապահովելով կայուն յուրացում:

Մեթոդական տեսանկյունից առաջարկվող կառուցվածքը միավորում է՝

Հաղորդակցական ուսուցման մոդել (Communicative Language Teaching - CLT)- սա շեշտադրում է իմաստային հաղորդակցումը իրական լեզվական իրավիճակներում:

Հանձնարարությունների վրա հիմնված ուսուցում (Task-Based Language Teaching - TBLT)՝ յուրաքանչյուր դաս կառուցվում է լեզվական կոնկրետ խնդրի շուրջ՝ խթանելով լեզվական նյութի գործնական կիրառումը:

Ինտեգրված հմտությունների զարգացում՝ լսելու, խոսելու, կարդալու և գրելու հմտությունների համատեղ ու փոխկապակցված զարգացում:

Այս սկզբունքները դասավանդման մեթոդների և նյութերի ընտրության հիմքում ունենալով՝ հնարավոր է ձևավորել գնահատման չափորոշիչներ, որոնք կարտացոլեն ոչ միայն լեզվական գիտելիքի ծավալը, այլ նաև լեզվով գործելու կարողությունը:

Առաջարկվող մոտեցման տեսական ու գործնական հիմքերը համադրվում են միջազգային ճանաչում ունեցող լեզվական մի շարք համակարգերի դիդակտիկ մոդելների հետ: Առավել նշանավոր օրինակներից է CEFR (Common European Framework of Reference for Languages)-ը: Սա եվրոպական լայնորեն կիրառվող շրջանակ է, որն առաջարկում է լեզվական տիրապետման վեց մակարդակ, հստակ սահմանում է լեզվական ունակությունները՝ ըստ հմտությունների և ծառայում է որպես ուսուցման, դասագրքերի ստեղծման և սերտիֆիկացիոն գործընթացների հիմք: CEFR-ը նաև մեծապես արժեքավոր է իր «Can do» ունակությունների նկարագրությամբ, ինչը հնարավորություն է տալիս չափելի դարձնելու լեզվական առաջընթացը:

Գնահատման համակարգի կառուցվածք

Հայոց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման համակարգի ձևավորումը CEFR-ի մոդելի համադրությամբ ու հայերենին բնորոշ լեզվական առանձնահատկությունների վերամշակմամբ կարող է հիմք դառնալ ուսուցման և ստուգման համընդհանուր չափորոշիչների մշակման համար:

Լեզվաիմացության գնահատումը ուսուցման գործընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման համընդհանուր համակարգի արդյունավետությունը պայմանավորված է գնահատման ճշգրտությամբ, համահունչությամբ

¹¹ Van Ek, J. A. *The Threshold Level in Modern Language Teaching*. Strasbourg: Council of Europe, 1990. p. 39.

¹² Byram, Michael. *Teaching and Assessing Intercultural Communicative Competence*. Clevedon: Multilingual Matters. 1997. pp. 37-38.

¹³ Bruner, Jerome S. *The Process of Education* Cambridge, MA: Harvard University Press, 1960. pp. 33-34.

և կշռադատված կառուցվածքով: Առաջարկվող համակարգում գնահատումը դիտարկվում է որպես գործընթացի միավորիչ օղակ, որը միաժամանակ ապահովում է ինչպես հետադարձ կապ սովորողի համար, այնպես էլ համադրելի տվյալների ներկայացում՝ ուսուցչի և կրթական կառույցների տեսանկյունից:

Գնահատումը կառուցվում է հետևյալ սկզբունքների վրա.

Հստակ մակարդակայնություն. գնահատման չափորոշիչները համապատասխանեցնում են առաջարկվող վեցաստիճանային մակարդակներին (A1–C2)՝ ապահովելով համադրելիություն:

Բազմամիջոցայնություն. կիրառվում են միաժամանակ և՛ օբյեկտիվ (թեստավորում, ընտրովի հարցեր), և՛ սուբյեկտիվ (խոսքի գնահատում, շարադրություն) եղանակներ:

Հմտություն՝ կենտրոնացված մոտեցում. գնահատումը բաժանվում է լսելու, խոսելու, կարդալու և գրելու ենթահմտությունների:

Գործնական ուղղվածություն. փորձարկվող առաջադրանքները կառուցվում են իրական հաղորդակցական իրավիճակների հիման վրա:

Գնահատման համակարգը ներառում է երկու հիմնական տեսակ՝

1. Ֆորմատիվ (ընթացիկ) գնահատում. սա իրականացվում է ուսուցման ամբողջ գործընթացի ընթացքում՝ ուղղված սովորողի առաջընթացի վերահսկմանը: Օրինակ՝ բանավոր առաջադրանքների և գրավոր աշխատանքների գնահատում՝ ըստ կոնկրետ առաջադրանքների:

2. Սումատիվ (ամփոփիչ) գնահատում՝ ամփոփիչ փորձարկում՝ նախանշված մակարդակի ավարտին, որը գնահատում է սովորողի ընդհանրական տիրապետումը լեզվական համապատասխան մակարդակին:

Յուրաքանչյուր մակարդակի համար սահմանվում են գնահատման հստակ չափանիշներ՝ համապատասխան հմտությունների համար: Օրինակ՝

Խոսք – Արդյոք սովորողը կարողանում է ինքնուրույն արտահայտել պարզ կամ բարդ մտքեր՝ հստակ շարադրանքով:

Ունկնդրում – Արդյոք ունակ է ընկալելու բովանդակությունը՝ ըստ մակարդակին համապատասխան խոսքի արագության և բարդության:

Ընթերցում – Արդյոք կարող է վերարտադրել հիմնական գաղափարները կամ ենթատեքստերը՝ տարբեր ժանրային տեքստերում:

Գրություն – Արդյոք գրառումներն ունեն լեզվական, կառուցվածքային և ուղղագրական տվյալ մակարդակին համարժեք պատկեր:

Գնահատման արդյունքները ներկայացվում են ինչպես միավորային համակարգով (օրինակ՝ 0–100 միավորի սահմաններում), այնպես էլ վերլուծական պարզ գրությամբ, օրինակ՝ «Կարողանում է ինքնուրույն գրել և վերանայել գործնական նամակներ՝ B2 մակարդակին համարժեք ձևով»:

Թվայնացված համապատասխան միջավայրի առկայության դեպքում հնարավոր է ներմուծել թեստավորման ավտոմատացված հարթակ, որը կապահովի լայն տարածում և հասանելիություն՝ ներառյալ սփյուռքում սովորողների համար:

Հայերենի ուսուցման համար անհրաժեշտ դիդակտիկ մոտեցումներն ու մեթոդները նախատեսվում են գնահատման համակարգի տարբեր մակարդակներում կիրառելու համար:

Ամփոփում

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացվեց հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման համար համընդհանուր գնահատման համակարգի մի նախագիծ: Վերջինս առաջարկում է հետազոտություն, որը հիմնված է լեզվական մակարդակների, հմտությունների և գնահատման սկզբունքների միահյուսման վրա: Ինչպես արդեն նշվեց, ներկայումս հայերենը դասավանդելու համար չկա միջազգային ճանաչման համընդհանուր համակարգ, ինչպիսիք են CEFR-ը կամ ACTFL-ը: Բացի դրանից, լեզվի ուսուցումը չունի համաչափ գնահատման մեթոդների համակարգ, ինչը բարդացնում է հայերենի ուսուցման վերաբերյալ զարգացումները և ստուգման արդյունավետությունը:

Ուսումնասիրությունը առաջարկում է լեզվի գնահատման վեցաստիճան համակարգ՝ սկսած նորեկից (A1) մինչև լեզվական իմացության վարպետության մակարդակ (C2), որի շրջանակներում ամեն մակարդակ ունի հստակ սահմանված հմտություններ՝ խոսելու, լսելու, կարդալու և գրելու առումով: Յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված են կոնկրետ առաջադրանքներ և գնահատման չափանիշներ՝ սովորողի լեզվական տիրապետման որակը ճիշտ ու գրագետ գնահատելու համար:

Այս համակարգի մշակումը ոչ միայն հեշտացնում է ուսուցման գործընթացը, այլև ապահովում է լեզվի առաջընթացի օբյեկտիվ գնահատումը: Այն առաջարկում է մի քանի դիդակտիկ մոտեցումներ՝ հաղորդակցական ուսուցում, խնդիրների վրա հիմնված ուսուցում և ինտեգրված հմտությունների զարգացում՝ ակնկալելով սովորողների լիարժեք ինտեգրում լեզվական միջավայրում:

Հայերենի դասավանդման նման համակարգի կիրառումը հնարավորություն կտա ապահովելու լեզվի ուսուցման ավելի բարձր որակ թե՛ Հայաստանում, թե՛ հայերենով հաղորդակցվելու անհրաժեշտություն ունեցող այլ երկրներում: Այս համակարգի հաջորդ քայլերը կամբողջացնեն իրական կիրառման գործընթացները՝ ներառելով մեթոդաբանական համապատասխան նյութեր, դասագրքեր և գնահատման ավտոմատացված հարթակներ:

Այսպիսով, ամբողջական գնահատման համակարգը, որի հիմքում ընկած է ուսումնասիրության առաջարկված մոտեցումը, կարող է նպաստել հայերենի ուսուցման բարելավմանը և տարածմանը համաշխարհային կրթական համայնքի շրջանակներում:

Օգտագործված գրականություն

1. ACTFL. ACTFL Proficiency Guidelines. American Council on the Teaching of Foreign Languages.2012.
2. Bachman, L. F., & Palmer, A. S. *Language Testing in Practice: Designing and Developing Useful Language Tests*. Oxford: Oxford University Press.1996.
3. Baker, C. Foundations of Bilingual Education and Bilingualism. Multilingual Matters.2011.

4. Brown, H. D. *Teaching by Principles: An Interactive Approach to Language Pedagogy* (2nd ed.). White Plains, NY: Longman.2001.
5. Bruner, Jerome S. *The Process of Education* Cambridge, MA: Harvard University Press.1960.
6. Byram, Michael. *Teaching and Assessing Intercultural Communicative Competence*. Clevedon: Multilingual Matters. 1997.
7. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Council of Europe, 2001.
8. Hymes, D., On Communicative Competence, In J. B. Pride & J. Holmes (Eds.), *Sociolinguistics*, Penguin, 1972.
9. Gattegno, C. *Teaching Foreign Languages in Schools: The Silent Way*. Educational Solutions.1972.
10. Kumaravadivelu, B. *Beyond Methods: Macrostrategies for Language Teaching*. Yale University Press. 2003.
11. Myles, F. *The acquisition of French as a second language: Theory and practice*. Oxford University Press. 2004.
12. Nunan, D.. *Task-Based Language Teaching*. Cambridge: Cambridge University Press.2004.
13. Oxford, R.. *Integrated Skills in the ESL/EFL Classroom*. ERIC Digest. ERIC Clearinghouse on Languages and Linguistics. ED456670. 2001.
14. Richards, J. C., & Rodgers, T. S. *Approaches and Methods in Language Teaching*. Cambridge University Press. 2014.
15. Spada, N., & Lightbown, P. M. *Instruction and the role of form-focused instruction and corrective feedback in second language learning*. In W. Grabe (Ed.), *Annual Review of Applied Linguistics*, 13, 1993. 187–203.
16. Swain, M. Communicative Competence: Some Applications to Language Teaching. *Applied Linguistics*, 6(2), 1985. 57-83.
17. Swan, M. *Practical English Usage*. Oxford University Press. 2005.
18. Tomasello, M.. *Constructing a Language: A Usage-Based Theory of Language Acquisition*. Harvard University Press. 2003.
19. Van Ek, J. A.. *The Threshold Level in Modern Language Teaching*. Council of Europe.1990.

Hakobyan Lilit - Toward a Unified System of Armenian Language Teaching and Assessment: Insights from the CEFR Model -This article introduces a prototype model for the standardized instruction and assessment of the Armenian language as a foreign language, aiming to establish a coherent, measurable, and internationally comparable framework for language education. Drawing on leading global practices and widely recognized models-most notably the Common European Framework of Reference for Languages (CEFR), the proposed system outlines a six-tier structure, ranging from A1 to C2. Each proficiency level is defined through clear descriptors encompassing the four core competencies: speaking, listening, reading, and writing, alongside grammatical content boundaries, lexical volume estimates, and corresponding assessment formats and criteria.

The didactic foundation of the system is built on communicative, integrated, and task-based approaches, underpinned by methodologically grounded strategies aimed at fostering functional competence in real-life linguistic contexts. The assessment component consists of both formative and summative elements, with a diverse bank of tasks designed to capture both structural and pragmatic aspects of learner development.

Beyond its instructional utility, the proposed model is conceptualized as a strategic guideline for shaping national and diasporic language policy concerning the teaching of Armenian as a foreign language. It aspires to contribute to the sustainable preservation and advancement of the Armenian language in global educational and cultural contexts, while ensuring a standardized and transparent evaluation of linguistic competence.

Keywords: Armenian as a foreign language, language teaching, language proficiency level, assessment, CEFR.

Накобыан Лилит, PhD in Philology, Associate Professor at the Chair of Languages, Armenian State University of Economics.

Акопян Лилит - К формированию единой системы преподавания и оценки армянского языка: опыт и подходы на основе модели CEFR. - В статье представлен прототип модели стандартизированного обучения и оценки армянского языка как иностранного, целью которой является формирование целостной, измеримой и сопоставимой с международными стандартами системы языкового образования. Основываясь на ведущих мировых подходах — в частности, на Общей европейской системе оценки знаний иностранных языков (CEFR), Руководящих принципах ACTFL и шкале Межведомственного языкового комитета США (ILR), — предлагается шестиуровневая структура от A1 до C2. Для каждого уровня определены ключевые компетенции: говорение, аудирование, чтение и письмо, а также объём грамматического материала, предполагаемый словарный запас и соответствующие форматы и критерии оценки.

Дидактическая основа модели опирается на коммуникативный, интегрированный и задачно-ориентированный подходы, дополненные методологически обоснованными стратегиями, направленными на развитие функциональной языковой компетенции в реальных коммуникативных ситуациях. Оценочная часть включает как формативные, так и суммативные элементы с широким банком заданий, позволяющих учитывать как структурные, так и прагматические аспекты языкового развития учащихся.

Предлагаемая система рассматривается не только как инструмент преподавания, но и как стратегическое руководство по формированию языковой политики в Армении и диаспоре в контексте преподавания армянского языка как иностранного. Она призвана способствовать устойчивому сохранению и развитию армянского языка в мировом образовательном и культурном пространстве, обеспечивая при этом стандартизированную и прозрачную систему оценки языковых компетенций.

Ключевые слова: армянский как иностранный язык, преподавание языка, уровень языковой компетенции, оценивание, CEFR.

Акопян Лилит, кандидат филологических наук, доцент кафедры языков Армянского государственного экономического университета.

**ՀԱՉԵՐԱՆՔԸ ԵՎ ՏՐՈՂՈՒՄԸ ՏԱՐԱՐԺԵՔ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ղազարյան Հասմիկ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ լաբորանտ. ghazarian.hasmik@gmail.com

Բանալի բառեր. հնչերանգ, դադար, տրոհում, տարաբժեքություն, նախադասություն, նախադասության անդամներ, նախադասության բաղադրիչների կապակցման եղանակներ:

Նախաբան

Խոսքը՝ որպես հաղորդակցման միջոց, ունի երկու հիմնական դրսևորում՝ բանավոր և գրավոր: Բանավոր խոսքը լեզվի բնական ու կենդանի վիճակն է, որին դիմում ենք անմիջական հաղորդակցման ժամանակ: Բանավոր խոսքի կենդանի և արտահայտիչ լինելը պայմանավորված է հնչերանգով, որը մարդկային ձայնի հիմնական տոնի, տևողության, ուժգնության, տեմպի, տակտի և ռիթմի, տրամաբանական շեշտի, դադարի և այլ բաղադրիչների ամբողջությունն է: Առանց հնչերանգի՝ բացառվում է անմիջական լեզվական ամեն մի հաղորդակցում:

Հնչերանգը, լինելով հնչյունաբանական միավոր, տարբերակում է քերականական իմաստներ և սերտորեն կապված է լեզվի շարահյուսական առանձնահատկությունների հետ: Առաջին հերթին «հնչերանգը նախադասության քերականական այն կարգն է, որով ձևավորվում է նախադասության ավարտվածությունն ու նախադասության ամբողջականությունը»: Հնչերանգը նաև նախադասության ձևավորման կարևորագույն միջոց է: «Եթե երկկազմ նախադասություններում նրա դերը էական է, ապա անդամ նախադասություններում նրա դերը բացառիկ է, որովհետև առաջիններում այն համընկնում է ստորոգման հետ, որն ունի բառային արտահայտման տարբեր ձևեր, իսկ երկրորդներում ստորոգումը կատարվում է միայն ձայնային ելևէջներով, որն անվանվում է հնչերանգային ստորոգում»³: Հնչերանգի կարևոր գործառույթներից է նաև նախադասության հաղորդակցական տիպերի տարբերակումը: Մինչև նույն շարահյուսական կառուցվածքի դեպքում հնչերանգի որևէ բաղադրիչի փոփոխությամբ արտահայտվում են տարբեր իմաստներ (պատմողական, հարցական, բացականչական, հրամայական)⁴ կամ նախադասությունների, նախադասության անդամների տարբեր հարաբերություններ:

Գրավոր տեքստում հնչերանգն ամբողջությամբ արտահայտելը դժվար է կամ անիրագործելի, այդ պատճառով էլ նրա որևէ տարրն է արտահայտվում հատուկ կետադրությամբ:

¹ Տե՛ս **Պետրոսյան Հ.**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 384:

² **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 57:

³ Նույն տեղում, էջ 56:

⁴ Տե՛ս **Ղուկասյան Ս.**, *Հնչերանգի որոշ ըմբռնումներ ժամանակակից լեզվաբանության մեջ*, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1999, էջ 176:

Տվյալ պարագայում մեզ հետաքրքրում են քերականական դադարները, որոնք կապված են արտասանվածքի շարահյուսական բաղադրիչների փոխհարաբերության հետ և գրավոր խոսքում հիմնականում արտահայտվում են տրոհության նշաններով: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը. «Տրոհության նշանները կցույթի դադարային դրսևորումների նշանակումներն են, ընդ որում, դադարի տարբեր աստիճանները բնութագրվում են նախորդ միավորների տևողության, ուժգնության և բարձրության տարբեր աստիճաններով»⁵: Տրոհության նշանների նշանակյալները, այսպիսով, քերականական դեր ունեցող դադարներն են, սակայն ինչպես նշում է Ս. Աբրահամյանը. «Տրոհումը սուկ դադար չէ, այլ դադարի և տրոհվող եզրերի յուրահատուկ հնչման գուգորդում՝ պայմանավորված տվյալ կառույցի բաղադրիչների քերականական հարաբերությամբ»⁶: Դադարը, այսպիսով, ոչ միայն առանձնացնում է շարահյուսական միավորները միմյանցից, այլև «հաճախ արտահայտում է դրանց կապակցման բնույթը և երբեմն միևնույն հնչադասության մեջ դադարների տարբեր տեղաբաշխումից առաջանում են տարբեր իմաստներ, որի հետ բնականաբար կապված՝ փոխվում է հնչադասության հնչերանգը»⁷: Սա ենթադրում է, որ նման դեպքերում գրավոր խոսքը կետադրելիս պետք է հաշվի առնել ինչպես հնչերանգային, այնպես էլ շարահյուսական և իմաստային գործոնները, որոնք շատ հաճախ համատեղվում են միևնույն իրողության մեջ:

Հողվածում քննվում են ժամանակակից հայերենում բառական միևնույն կազմն ունեցող այն տարարժեք շարահյուսական կառույցները, որոնց տարբերակման, իմաստների կոնկրետացման, հստակեցման համար բանավոր խոսքում կարևոր դեր են կատարում հնչերանգը, առանձնապես քերականական արժեք ունեցող դադարները, իսկ գրավոր խոսքում՝ տրոհության տարբեր նշանները:

Ուսումնասիրության նպատակն է հենց տարարժեք կառույցների օրինակով ցույց տալ, որ գրավոր խոսքը կետադրելիս պետք է հաշվի առնել ինչպես հնչերանգային, այնպես էլ շարահյուսական և իմաստային գործոնները, որոնք շատ հաճախ համատեղվում են միևնույն իրողության մեջ և տարբեր կողմերով բացահայտում, ամբողջացնում ու լրացնում միմյանց:

Առաջնորդվելով այս սկզբունքով և կատարելով ուսումնասիրություններ՝ եկել ենք այն եզրակացության, որ ժամանակակից հայերենում յուրահատուկ հնչերանգը և համապատասխան տրոհության նշանները շարահյուսական մակարդակում, կապված նույնաբաղադրիչ նախադասությունների հետ, կարող են տարբերակել՝

- ա) նախադասության անդամներ, անդամների լրացական-քերականական հարաբերություններ,
- բ) պարզ և բարդ նախադասություններ,
- գ) շարահարական կապակցությամբ բարդ նախադասության բաղադրիչների քերականական հարաբերություններ,
- դ) բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման եղանակներ:

⁵ **Ջահուկյան Գ.**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 117:

⁶ **Աբրահամյան Ս.**, *Հայերենի կետադրություն*, Ե., 2004, էջ 8:

⁷ **Խաչատրյան Ա., Դուկասյան Ս.**, *Ներածություն, «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում»*, Ե., 1978, էջ 8:

Ստորև կանդիդատնանք դրանց առանձին-առանձին:

Ա. Նախադասության անդամներ, անդամների լրացական-քերականական հարաբերություններ

Խոսքն իր առարկայական և վերաբերմունքային առումներով շատ բազմազան ու բազմաբնույթ է: Խոսքի կառուցման առարկայական օրինաչափությունները հաճախ խաչաձևվում են խոսողի վերաբերմունքի և տրամաբանության գործոնի հետ, որն էլ դառնում է պատճառ նույն շարահյուսական կառույցներն ընկալելու և կետադրելու տարբեր կերպ: Շարահյուսական տարարժեք նման կառույցներում նախադասության անդամները տարբերակելու, նրանց միջև իմաստային կապերի առկայությունը, լրացական-քերականական հարաբերությունները պարզելու տեսակետից մեծ է հնչերանգի և տրոհության դերը:

Այսպես՝ կան նույնաբաղադրիչ այնպիսի նախադասություններ, որոնցում գործածվող բազմակի անդամները, որոնք արտասանվում են թվարկման հնչերանգով, այսինքն՝ փոքր դադարներով, և տրոհվում ստորակետով, կարող են դիտվել որպես բացահայտիչ-բացահայտյալ հարաբերության մեջ գտնվող անդամներ, արտասանվել բացահայտման հնչերանգով (բարձրացող և անկում ապրող), տրոհվել բութով:

Հմտ.

1. Այստեղ էին հավաքված հայոց **հին ձեռագրերը, սրբազան մատուցները:** (ենթակա)

2. Այստեղ էին հավաքված հայոց **հին ձեռագրերը՝ սրբազան մատուցները:**

1. Նա սիրում էր **գույնզգույն, ծաղկավոր և շերտավոր հագուստ:** (որոշիչ)

2. Նա սիրում էր **գույնզգույն՝ ծաղկավոր և շերտավոր հագուստ:**

1. Նա սիրում էր իր **որդիներին, Արամին ու Աշոտին:** (ուղիղ խնդիր)

2. Նա սիրում էր իր **որդիներին՝ Արամին ու Աշոտին:**

1. Ամբողջ ընտանիքը սպասում էր **հյուրերին, արտասահմանից վերադարձած ազգականներին:** (հանգման խնդիր)

2. Ամբողջ ընտանիքը սպասում էր **հյուրերին՝ արտասահմանից վերադարձած ազգականներին:**

1. Հեռագրերը ստացել ենք **բարեկամներից, Աննայից, Մարիամից:** (անջատման խնդիր)

2. Հեռագրերը ստացել ենք **բարեկամներից՝ Աննայից, Մարիամից:**

1. Նա հպարտանում էր իր **հայրենակիցներով, հանրահայտ մարդկանցով:** (միջոցի խնդիր)

2. Նա հպարտանում էր իր **հայրենակիցներով՝ հանրահայտ մարդկանցով:**

1. Նա անընդհատ խոսում էր իր **կյանքից, լավ ու վատ օրերից:** (վերաբերության խնդիր)

2. Նա անընդհատ խոսում էր իր **կյանքից՝ լավ ու վատ օրերից:**

1. Գյուղը շրջապատված էր **լեռնականներով, քաջարի մարտիկներով**: (ներգործող ան. խնդիր)

2. Գյուղը շրջապատված էր **լեռնականներով՝ քաջարի մարտիկներով**:

1. Վիշտը տարել էր համառ **համբերությամբ, առանց տրտնջալու**: (ձևի պարագա)

2. Վիշտը տարել էր համառ **համբերությամբ՝ առանց տրտնջալու**:

Նույն ձևով հնչեցնելով և դրանով պայմանավորված՝ տրոհությամբ կամ ոչ տրոհությամբ կարող են նույնաբաղադրիչ նախադասություններում տարբերվել՝

• **կոչականը և որոշիչը**: Հմմտ.՝

1. Բժիշկ, Մինասը չի եկել:

2. Բժիշկ Մինասը չի եկել:

• **կոչականը և ձևի պարագան**: Հմմտ.՝

1. Միրտս, **անխիղճ**, մի՛ տանջիր:

2. Միրտս, **անխիղճ մի՛ տանջիր**:

• **բացահայտիչը և հատկացուցիչը**: Հմմտ.՝

1. Աննայի՝ **ընկերուհուս**, քրոջ աշխատասիրությունը սահման չի ճանաչում:

2. Աննայի՝ **ընկերուհուս քրոջ** աշխատասիրությունը սահման չի ճանաչում:

• **մասնական բացահայտիչը և ձևի պարագան**: Հմմտ.՝

1. Այդ գիտնականը՝ **որպես փիլիսոփա**, հոչակված էր քաղաքում:

2. Այդ գիտնականը **որպես փիլիսոփա հոչակված էր քաղաքում**:

• **ստորոգելին և ձևի պարագան**: Հմմտ.՝

1. Երբեմնի կենսաթրթիռ աղջիկը հուսալքված էր, գրեթե **խելակորույս**:

2. Երբեմնի կենսաթրթիռ աղջիկը **հուսալքված էր** գրեթե **խելակորույս**:

• **որոշիչը և ձևի պարագան**: Հմմտ.՝

1. Ափին լուռ արձանացած **վանականը** նայում էր դեպի հեռուները:

2. Ափին լուռ արձանացած՝ **վանականը նայում էր** դեպի հեռուները:

• **որոշիչը և պատճառի պարագան**: Հմմտ.՝

1. Շփոթված տղան չգիտեր ինչ անել:

2. Շփոթված՝ տղան **չգիտեր** ինչ անել:

• **որոշիչը և տեղի պարագան:** Հմմտ.

1. Այդ **լրագրողը՝ հեռավոր հյուսիսից**, մեզ հաղորդում է:
2. Այդ **լրագրողը հեռավոր հյուսիսից** մեզ **հաղորդում է:**

• **հետադաս հատկացուցիչը և նպատակի պարագան:** Հմմտ.

1. Գնաց **խանութը հացի:**
2. Գնաց **խանութը՝ հացի:**

• **ձևի պարագան և ժամանակի պարագան:** Հմմտ.

1. Շավարը թափ տալով վեր կացավ տղան:
2. Շավարը թափ տալով՝ վեր կացավ տղան:

• **ձևի պարագան և հիմունքի պարագան:** Հմմտ.

1. Երկար աշխատելով նա հասավ իր նպատակին:
2. Երկար աշխատելով՝ նա հասավ իր նպատակին:

• **անվանողական գործառույթով գործածվող, որոշիչ պաշտոն կատարող և իր բուն իմաստով գործածվող, նախադասության անդամ չհանդիսացող շաղկապը:** Հմմտ.

1. Այս նախադասությունները կապակցվում են **և, կամ, ու** շաղկապներով:
2. Այս նախադասությունները կապակցվում են **և կամ ու** շաղկապներով:

Հնչերանգի ու տրոհության դերը կարևոր է նաև նախադասության մեջ նույն շարահյուսական պաշտոնը կատարող այս կամ այն անդամի լրացական հարաբերությունը լրացյալի նկատմամբ հստակեցնելու, երկիմաստ չդարձնելու գործում, մանավանդ երբ բառական միջավայրը թույլ է տալիս, որ տվյալ բառը, կատարելով շարահյուսական նույն պաշտոնը, հավասարապես վերագրվի, լրացնի և՛ նախորդող, և՛ հաջորդող բառին: Լրացական հարաբերության երկիմաստությամբ որոշ նույնաբաղադրիչ նախադասություններում կարող են գործածվել՝

• **որոշիչը:** Հմմտ.

1. Կարոտել եմ մեր **դաշտերի՝ նոր հնձած**, խոտի բույրը:
2. Կարոտել եմ մեր **դաշտերի նոր հնձած խոտի** բույրը:

• **հատկացուցիչը:** Հմմտ.

1. **Աներկյուղությունը մահի՝** անպարտելիություն է:
2. **Աներկյուղությունը մահի անպարտելիություն է:**

• **ուղիղ խնդիրը:** Հմմտ.

1. Վերցրու՛, այս **ճամպրուկը տա՛ր** տուն:
2. **Վերցրու՛** այս **ճամպրուկը**, տա՛ր տուն:

• **միջոցի խնդիրը:** Հմմտ.

1. Կե'ր գդալով , մի' խառնիր:
2. Կե'ր, գդալով մի' խառնիր:

• **ձևի պարագան:** Հմմտ.

1. Սովորի'ր քրոջդ պես, հիմար մի' եղիր:
2. Սովորի'ր, քրոջդ պես հիմար մի' եղիր:

• **Ժամանակի պարագան:** Հմմտ.

1. Եկավ, գիշերը զգուշացրեց բոլորին:
2. Եկավ գիշերը, զգուշացրեց բոլորին:

• **նպատակի պարագան:** Հմմտ.

1. Եկավ, օգնելու նպատակով մոտեցավ նրան:
2. Եկավ օգնելու նպատակով, մոտեցավ նրան:

• **եղանակիչի արժեք ունեցող հանգույցը:** Հմմտ.

1. Գնդակահարե'լ, չի կարելի ազատել:
2. Գնդակահարել չի' կարելի, ազատել:

Կան այնպիսի կառույցներ, որոնցում որոշ խնդիրներ ու պարագաներ կարող են համարվել և՛ ստորոգյալի լրացում, և՛ նույն նախադասության կազմում գործածված դերբայի լրացում: Այդպիսի կառույցներում հնչերանգով և տրոհությամբ տարբերակվում են՝

• **ուղիղ խնդիրը և կողմնակի ուղիղ խնդիրը:** Հմմտ.

1. Կաշառք ստացավ երկու ոչխար՝ աշխատանքի վերցնելու համար:
2. Կաշառք ստացավ՝ «երկու ոչխար» աշխատանքի վերցնելու համար:

• **հանգման խնդիրը և կողմնակի հանգման խնդիրը:** Հմմտ.

1. Գումարտակը համառորեն դիմադրում էր թշնամուն՝ թույլ չտալով գրավել բարձունքը:
2. Գումարտակը համառորեն դիմադրում էր՝ թշնամուն թույլ չտալով գրավել բարձունքը:

• **Ժամանակի պարագան և կողմնակի ժամանակի պարագան:** Հմմտ.

1. Քիչ հետո, բարձրացնելով ձեռքը, դիմեց ժողովրդին:
2. Քիչ հետո բարձրացնելով ձեռքը՝ դիմեց ժողովրդին:

• **տեղի պարագան և կողմնակի տեղի պարագան:** Հմմտ.

1. Այդ մասին նշեցինք զրքում՝ կատարված վերլուծություններից ելնելով:
2. Այդ մասին նշեցինք՝ զրքում կատարված վերլուծություններից ելնելով:

Բ. Պարզ և բարդ նախադասություններ

ա. Պայմանավորված բաղադրիչ նախադասությունների ինքնուրույնության, նրանց կապի սերտության աստիճանով, արտասանական տարբեր յուրահատկություններով, հատկապես տարբեր չափի դադարներով՝ մեկ ամբողջական նկարագրություն ներկայացնող ինքնուրույն նախադասությունները կարելի է տրոհել կա՛մ վերջակետով, կա՛մ միջակետով, կա՛մ ստորակետով: Օրինակ՝

1. Արևի առաջին ճառագայթները ջերմացրին հողը: Բնությունը զարթոնք ապրեց: Կյանքը լցվեց մի նոր ուրախությամբ:

2. Արևի առաջին ճառագայթները ջերմացրին հողը. բնությունը զարթոնք ապրեց. կյանքը լցվեց մի նոր ուրախությամբ:

3. Արևի առաջին ճառագայթները ջերմացրին հողը, բնությունը զարթոնք ապրեց, կյանքը լցվեց մի նոր ուրախությամբ:

բ. Ժամանակակից հայերենում կան ներգործական սեռի մի շարք բայեր (խնդրել, պահանջել, պատասխանել, ասել, մտածել և այլն), որոնց պահանջած ուղիղ խնդիրը կարելի է արտաբերել հնչերանգային դադարով, տրոհել բուրժով և դիտել որպես մեկ բառով արտահայտված մեջբերվող ուղղակի խոսք: Հմմտ.՝

1. Նա խնդրում է ջուր:

2. Նա խնդրում է՝ **ջուր**:

Առաջին պարզ նախադասությանը հակադրվում է երկրորդ՝ մեջբերվող ուղղակի խոսքով բարդ ստորադասական նախադասությունը:

գ. Լեզվում կան այնպիսի պարզ նախադասություններ, որոնց կազմում գործածված և նրանց հետ քերականորեն չկապված, հնչերանգով և փակագծերով առանձնացված միջանկյալ նախադասությունը կարելի է ինչ-որ հարաբերությամբ քերականորեն կապել հիմնական նախադասությանը, հանել փակագծերից, տրոհել միջակետով և վերածել բարդ համադասական նախադասության: Հմմտ.՝

Եվ անկարող եմ նաև քրքջալ (քրքիջի համար ո՛ւժ է հարկավոր):

Եվ անկարող եմ նաև քրքջալ. քրքիջի համար ո՛ւժ է հարկավոր:

դ. Ժամանակակից հայերենում բայ և վերաբերական տարաբժեքություն դրսևորող մի շարք բառեր (**բեր, ասա, տես, տեսնենք, թող, եկ, եկեք, արի**), նույնաբաղադրիչ նախադասություններում դրվելով խոնարհված բայերի կողքին և արտաբերվելով առանց հնչերանգային դադարի, առանց տրոհման՝ ձեռք են բերում եղանակավորման իմաստ և կազմում պարզ նախադասություն: Նույն բառերը, արտաբերվելով ստորադասական նախադասությանը բնորոշ բացատրական հնչերանգով և տրոհվելով բուրժով, կազմում են շարահարական կապակցությամբ բարդ ստորադասական նախադասություն: Հմմտ.՝

1.Բեր տեսնեմ:

2.Բե՛ր՝ տեսնեմ:

1.Ասա լսեն մեզ:

2.Ասա՛ լսեն մեզ:

1.Տես ինչ է անում:

2.Տե՛ս՝ ինչ է անում:

1.Թող ուրախ լինեն:

2.Թո՛ղ՝ ուրախ լինեն:

1.Եկ տեսնեմ:

2.Ե՛կ՝ տեսնեմ:

Եկ, արի բայաձևերը կարող են լինել նաև բարդ համադասական նախադասության բաղադրիչ, եթե արտաբերվեն նրան հատուկ հնչերանգով և տրոհվեն ստորակետով: Հմմտ.՝

1.Ե՛կ, սրան օգնի՛ր:

2.Եկ սրան օգնիր:

1.Արի՛, խորհու՛րդ տուր

2.Արի խորհուրդ տուր նրան:

նրան:

Գ.Շարահարական կապակցությամբ բարդ նախադասության բաղադրիչների քերականական հարաբերություններ

Հնչերանգի դերը մեծ է ոչ միայն առհասարակ նախադասության ձևավորման գործում, այլև մասնավորապես բարդ նախադասության կառուցվածքում՝ որպես նրա բաղադրիչները մեկ ամբողջի մեջ միավորող միջոց: Հնչերանգն իր այդ կապակցող դերի հետ միասին քերականական հարաբերության արտահայտման միջոցի դեր է կատարում: Ըստ որում, շարահարական կապակցության դեպքում հաճախ միայն հնչերանգով կարելի է տարբերել համադասական և ստորադասական հարաբերությունները:

«Եթե զոդվածական կապակցության մեջ հնչերանգն ազդարարում է՝ ա) նախադասության սկիզբը, բ) մասերի տրոհումը և գ) ավարտը, ապա զոդի բացակայության դեպքում այն ստանձնում է առնվազն ևս մեկ, երբեմն երկու գործառույթ: Դրանցից մեկն այն է, որ ձայնային որոշակի վերուվարումները պայմանավորում են նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների բնույթը՝ համարժեքությունը՝ համադասությունը և անհամարժեքությունը՝ ստորադասությունը»⁸: Հմմտ.՝

1.Եղանակը լավ կլինի, մենք կգնանք:

Եղանակը լավ կլինի՝ մենք կգնանք:

2.Անձրևը դադարեց, երեխաները դուրս եկան խաղալու:

Անձրևը դադարեց՝ երեխաները դուրս եկան խաղալու:

Այս նախադասությունները շարահարական կապակցությամբ բարդ համադասական և ստորադասական (պատճառի և ժամանակի հարաբերությամբ) նախադասություններ են: Բանավոր խոսքում սրանց բաղադրիչների հարաբերություններն ունենում են տարբեր հնչերանգային յուրահատկություններ: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը՝ «համադասության դեպքում կապակցվող բաղադրիչներն արտաբերվում են միատեսակ, թվարկման հնչերանգով ու դադարով, իսկ ստորադասության դեպքում առաջին բաղադրիչի վերջին վանկն արտա-

⁸ Պապոյան Ա., Բաղիկյան Խ., *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 224:

բերվում է հատուկ շեշտումով, այդ բառից հետո դադարը լինում է այնպես, ինչպես գրավոր խոսքում կատարվում է բուժով, իսկ համադասության դեպքում՝ ստորակետով»:⁹

Երբեմն հնչերանգի դերը կարևորվում է նաև շարահարական կապակցությամբ նույնաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության առանձին մասերի լրացում-լրացյալ քերականական հարաբերությունը և ստորադաս նախադասությունների բնույթը որոշելու հարցում: Օրինակ՝ **Հաստատվեց՝ ամեն ինչ բարեհաջող կանցնի:** Եթե այս նախադասությունն արտաբերենք նախագգուշական հնչերանգով, այսինքն՝ երկու բաղադրիչների սահմանագծում ձայնատոնի որոշակի բարձրացումով, որն այդ վիճակում կպահպանվի երկրորդ մասի սկզբում և աստիճանաբար կիջնի, կունենանք առաջադաս դիրքով, հիմունքի կամ պայմանի երանգով բարդ ստորադասական նախադասություն: Եթե նույն նախադասությունն արտաբերենք բացատրական հնչերանգով, այսինքն՝ առաջին մասի վերջում ձայնի որոշ իջեցումով, դրան հաջորդող մի փոքր դադարով և երկրորդ մասի սկզբում ձայնի կտրուկ բարձրացումով, կունենանք վերջադաս դիրքով, մեկնական իմաստով բարդ ստորադասական նախադասություն:

Կետադրությամբ հնչերանգային այս տարբերությունները հնարավոր չէ ներկայացնել: Երկու դեպքում էլ բաղադրիչների տրոհումը կատարվում է բուժով: Նման պարագայում առաջնությունը տրվում է խոսքային միջավայրին, նախորդող և հաջորդող նախադասություններին, որտեղ բարդ նախադասության բաղադրիչների հարաբերությունները և բնույթը դառնում են որոշակի:

Դ. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման եղանակներ

Ժամանակակից հայերենում բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները կապակցվում են երկու եղանակով՝ բառական և շարահարական: Բառական եղանակի մեջ մտնում են շաղկապները, շաղկապական բառերը (հարաբերական դերանունները և որոշ վերաբերականներ): Շարահարական եղանակի մեջ դեր են կատարում հնչերանգը, առանձնապես քերականական արժեք ունեցող յուրահատուկ դադարը և տրոհումը:

Կան նախադասություններ, որոնցում կապակցման եղանակը որոշվում է միայն հնչերանգով ու տրոհությամբ: Հմմտ.

1. Ասա՛՝ ինչ կուզես:

Ասա՛, ինչ կուզես

2. Ասա՛՝ ինչպես կուզես:

Ասա՛, ինչպես կուզես:

3. Ասա՛ ինչքան/որքան

կուզես:

Ասա՛, ինչքան/որքան կուզես:

4. Պատմի՛ր՝ որտեղ կուզես:

Պատմի՛ր, որտեղ կուզես:

⁹ Աբրահամյան Ս., *Հայոց լեզու. Շարահյուսություն*, Ե., 2004, էջ 100:

Բերված զույգերում առաջին նախադասությունները շարահարական կապակցություններ են: Դրանք արտաբերելիս ձայնային ելևեջների բարձրակետը ներկայացնում են տրամաբանական շեշտն իրենց վրա կրող **ինչ, ինչպես, ինչքան, որքան, որտեղ** հարցական դերանունները: Ստորադաս բաղադրիչներն արտահայտում են **ի՞նչ ես ուզում, ինչպե՞ս ես ուզում, ինչքա՞ն ես ուզում, որքա՞ն ես ուզում, որտե՞ղ ես ուզում անուղղակի հարցումները**: Սրանցում կարելի է ավելացնել **թե** շաղկապը: Տրոհումը կատարվում է բուրժով:

Չույգերի երկրորդ նախադասությունների կապակցումը բառական է՝ հարաբերական տարբերակով: Դրանք արտաբերելիս ձայնային ելևեջները, հատելով երկու բաղադրիչների սահմանը, իրենց բարձրակետին են հասնում ստորադաս նախադասությունների ստորոգյալների վրա, որոնք տվյալ դեպքում ընկնում են նաև տրամաբանական շեշտի տակ: Ստորադաս նախադասությունները սկսվում են **ինչ, ինչպես, ինչքան/որքան, որտեղ** հարաբերականներով, որոնց գլխավոր նախադասությունների մեջ կարող են համապատասխանել **այն, այնպես, այնքան, այնտեղ** հարաբերյալները: Նախադասությունների տրոհումը կատարվում է ստորակետով:

Հնչերանգը և տրոհումը նշված նախադասություններում, տարբերելով կապակցման եղանակներ, տարբերում են նաև հարցական դերանունները հարաբերականներից:

Եզրակացություն: Բերված բոլոր օրինակների քննությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում կան բառական միևնույն կազմն ունեցող տարարժեք շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնց տարբերակման, իմաստների կոնկրետացման, հստակեցման համար բանավոր խոսքում կարևոր դեր են կատարում հնչերանգը, առանձնապես քերականական արժեք ունեցող դադարը, իսկ գրավոր խոսքում՝ տրոհության տարբեր նշանները: Գրավոր խոսքում տրոհության ամեն մի նշանի կիրառություն բանավոր խոսքում ունի քերականական, ոճական պատճառաբանվածություն, և տարարժեք կառույցների դեպքում ցանկալի է, որ բանավոր խոսքի իմաստային ու ոճական նրբությունները առավելագույնս հաշվի առնվեն գրավոր խոսքում:

Օգտա գործված գրականություն

1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2004:
2. Աբրահամյան Ս., Հայերենի կետադրություն, Ե., 2004:
3. Խաչատրյան Ա., Ղուկասյան Ս., Ներածություն, «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում», ՀԳԱ հրատարակչություն, Ե., 1978:
4. Ղուկասյան Ս., Հնչերանգի որոշ ըմբռնումներ ժամանակակից լեզվաբանության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1999:
5. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003:
6. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:
7. Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

Ghazaryan Hasmik-Intonation and Segmentation as Means of Distinguishing Syntactically Ambiguous Structures.- The article examines those syntactically ambiguous structures in Modern Armenian that possess the same lexical composition, but whose differentiation and clarification of meaning in oral speech are significantly influenced by intonation—especially grammatically meaningful pauses—while in written speech, by various marks of segmentation. The reason is that speech is highly diverse and multifaceted in its objective and attitudinal aspects, and the objective regularities of speech construction often intersect with the speaker's attitude and logic. This, in turn, becomes the basis for perceiving and punctuating the same syntactic structures differently.

The aim of the study is to demonstrate, through the example of ambiguous structures, that in punctuating written speech, it is necessary to take into account not only intonational, but also syntactic and semantic factors, which often co-exist within the same phenomenon and, from different perspectives, reveal, complete, and supplement each other.

Guided by this principle and employing a descriptive-analytical method, the study concludes that in Modern Armenian, distinctive intonation and corresponding segmentation marks at the syntactic level, especially in sentences with homogeneous components, can differentiate:

- a) sentence members and their complemental-grammatical relations;
- b) simple and compound sentences;
- c) grammatical relations of components within compound sentences connected by coordination;
- d) methods of connecting components in complex subordinate sentences.

The article examines each of these issues separately. It is noted that the application of each segmentation mark in written speech has grammatical and stylistic justification in oral speech. It is also emphasized that in the case of ambiguous structures, the semantic and stylistic nuances of oral speech should be taken into account as fully as possible in written speech.

Keywords: Intonation, pause, segmentation, syntactic ambiguity, sentence, sentence members, methods of connecting sentence component

Ghazaryan Hasmik, Institute of Language named after H. Acharyan, NAS RA PhD in Philology, Associate Professor, Senior Laboratory Assistant.

Газарян Асмик - Интонация и сегментация как средства дифференциации синтаксически неоднозначных структур. - В статье рассматриваются такие синтаксически неоднозначные структуры современного армянского языка, которые имеют одинаковый лексический состав, но для различения и конкретизации их значений в устной речи важную роль играют интонация, особенно паузы с грамматическим значением, а в письменной речи — различные знаки сегментации. Причина этого заключается в том, что речь по своим предметным и экспрессивным характеристикам чрезвычайно разнообразна, и объективные закономерности построения высказывания часто пересекаются с фактором отношения говорящего и логики. Это становится основанием для различного восприятия и пунктуационного оформления одних и тех же синтаксических структур.

Цель исследования — на примере неоднозначных структур показать, что при пунктуации письменной речи необходимо учитывать как интонационные, так и синтаксические и

семантические факторы, которые часто объединяются в одном и том же явлении и с разных сторон раскрывают, дополняют и усиливают друг друга.

Исходя из этого принципа и используя описательно-аналитический метод, в работе сделан вывод, что в современном армянском языке особая интонация и соответствующие знаки сегментации на синтаксическом уровне, особенно в предложениях с однородными членами, могут дифференцировать:

- а. члены предложения и их дополнительно-грамматические отношения;
- б. простые и сложные предложения;
- в. грамматические отношения компонентов сложносочиненного предложения;
- г. способы связи компонентов сложноподчиненного предложения.

В статье эти вопросы рассматриваются по отдельности. Отмечается, что использование каждого знака сегментации в письменной речи имеет грамматическое и стилистическое обоснование в устной речи, и подчеркивается, что в случаях неоднозначных структур семантические и стилистические нюансы устной речи должны максимально учитываться и в письменной речи.

Ключевые слова: Интонация, пауза, сегментация, синтаксическая неоднозначность, предложение, члены предложения, способы связи компонентов предложения.

Газарян Асмик, Институт языка им. Р. Ачаряна НАН РА, кандидат филологических наук, доцент, старший лаборант.

**ՀԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ղազարյան Շուշանիկ

Մազիստրոս, ՀՊՏՀ, դասախոս.
shushanghazaryan1983@gmail.com

Բանալի բառեր. պատկերավորման համակարգ, մակդիր, փոխաբերություն, համեմատություն, բարբառային բառեր, արտահայտչականություն:

Միյուրքահայ արձակագիր, քննադատ, մանկավարժ Հակոբ Օշականի գեղարվեստական արձակը պատկառելի է ծավալով, յուրօրինակ է բովանդակությամբ ու ձևով: «Իրավ» բաների մասին «իրավ» գրելու Օշական քննադատի պահանջը բավարարվում է Օշական արձակագրի կողմից:

Այս աշխատանքում անդրադարձել ենք գրողի պատկերավորման համակարգին, նրա նախասիրած արտահայտչական միջոցներին, ոճական դարձույթներին: Մասնավորապես ուսումնասիրել ենք համագործածական բառերի ոճական կիրառությունները, դրանց անսպասելի, նոր գուգորդումները, որոնք անհատականության կնիք են կրում և խոսում են հեղինակի աշխարհընկալման մասին, բարբառային և ժողովրդախոսակցական բառերն ու դարձվածքները, որոնք մեծապես կիրառված են արևմտահայ գյուղը պատկերող ստեղծագործություններում, մակդիրներն ու համեմատությունները: Հողվածը օգտակար կարող է լինել բանասերների, ոճաբանությամբ զբաղվողների, սփյուռքահայ գրականությամբ հետաքրքրված անձանց համար: Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք տեքստաբանական, բովանդակային և նկարագրական վերլուծության մեթոդները:

Օշականը ոճի և դրա ուսումնասիրության մասին բավականին կոշտ է արտահայտվել՝ նկատի ունենալով ոճագիտական ուսումնասիրության այսօրվա չափանիշները: Նա մասնավորապես գրել է. «Քիչ մը նորույթ է ինկած ախորժակ մըն է գրագետի մը մօտ **ոճի զգայարանք** մը առանձին միութիւն մը իբրեւ նկատի ունենալ ու գիրքերէ պատգամուած տարազներով կշռել գրուածքի մը արժէքը: Բայց Օշականի հեքիաթին ամենէն ծանր արգումենտներէն մէկն է իր ոճին ենթադրեալ մթութիւնը, բռնագթութիւնը, առնուազն **աշխատուած** հանգամանքը:

«Ինք կը խոստովանի, որ գրագետ մը արժէտրելու համար տրամադրելի ունենալ անոր լեզուն, ոճն ու նախադասութեանց լարումը, գնացքը կը նշանակէ գրեթէ ըսելիք գտած չըլլալ այդ գրագետին վրայ»²: Ասելիք Օշականի ստեղծագործության մասին կա, նրա ստեղծագործությունների լեզվական ուսումնասիրությունը նոր լույս կսփռի հեղինակի գրական ժառանգության բովանդակության վրա, քանի որ Օշականի համոզմամբ բառերը կարևորագույն տարրեր են՝ հեղինակի ներաշխարհն ու ասելիքը բացահայտելու ճանապարհին: «Ես կը խորհիմ, թէ բառերը տարրեր են ու կ'արժեն այն ատեն երբ հզոր նայուածքի մը տակ թափան-

¹ **Յակոբ Օշական**, *Համապատկեր արևմտահայ գրականութեան*, հտ. 10, Վկայութիւն, Անթիլիաս, 1982թ., էջ 205:

² Նույն տեղում, էջ 561:

ցիկ դառնան: Ինչ է բառը, եթե ոչ քարացած հուզում մը, սառած սարսուռ մը երբ անիկա կը պառկի մագաղաթին վրայ: Բառերը կը վարձատրեն, երբ խոշտանգենք զիրենք... Այն ատեն այդ կախարդ պրիսմակին մեջէն պիտի յառնէ ուրիշ աշխարհ մը»:³ Հուսանք, որ նրա գեղարվեստական և գիտական ծավալուն ժառանգությունը ըստ արժանվույն կուսումնասիրվի և կցրվի Օշականի ստեղծագործության վրա կախված անհասկանալիության, խրթինության ամպը՝ ստեղծված նրա ժամանակակիցների կողմից: Կիմ Աղաբեկյանը իրավացիորեն գրում է. «Նա նման չէ ոչ ոքի, և ոչ ոք էլ չի կարող նմանվել նրան: Այստեղ է նրա մեծության գաղտնիքը»⁴:

Հիրավի, Օշականը նման չէ ոչ ոքի: Նրա երկերի թեման հիմնականում արևմտահայ իրականությունն է, հայ ժողովրդի կյանքը Ցեղասպանությունից առաջ և հետո, հայ-թուրքական հարաբերություններն ու համակեցության հարկադրանքը: Այս թեման նորություն չէ հայ ընթերցողի համար, բայց նորություն է Օշականի մատուցումը, պատումի ձևը, ոճը, որքան էլ որ նրան դուր չէր գա այս ձևակերպումը:

Հակոբ Օշականն իր «Համապատկեր արևմտահայ գրականության» քննադատական ծավալուն աշխատության մեջ մեկ անգամ չէ, որ հիշատակում է գրողական պատասխանատվության և գրողի կոչմանը հարազատ մնալու մասին: Իրականությունը իրավ ներկայացնելու նրա պահանջը նաև ոճի պահանջ է, ինքնատիպության և ինքզինքը չլքելու պահանջ:

Մարկ Նշանյանը Օշականին նվիրված հոդվածներից մեկում այս առիթով շատ դիպուկ գրում է. «Պատասխանատու թիւն նաեւ «ոճ»-ին հանդէպ, որուն մէջ կը հանգուցուին գրութիւնը եւ գերութիւնը, որուն պաշտամունքին մէջ ամբողջ սերունդ մը կը դրսեւորէ իր «հօգօրագոյն զգացողութիւն»-ը, տեսնելով ոճական աշխատանքը իբրեւ վայրը ազատագրումին եւ փորձընկալելով գրութեան եւ գերութեան յիշեալ հանգուցումը»⁵: Ահա այս ազատագրումն է հենց ոճը Օշականի դեպքում: Ոճի պարտադրանքներին չենթարկվելով՝ նա կարողանում է գեղարվեստական ստեղծագործությունը դարձնել հենց ազատագրման վայր և գերությունից ազատել իր մտքերը՝ դարձնելով դրանք գրություն:

Առաջին հայացքից բարդ ու միապաղաղ թվացող ոճը հետզհետե է գրավում ընթերցողին՝ փոքր արձակի ավելի պարզ, արևմտահայ գյուղագրության ավանդներին որոշ չափով նմանվող ստեղծագործություններից հետզհետե վերածվելով օշականյան վեպերի բազմաճյուղ, խիտ հյուսված անծայրածիր անտառ հիշեցնող իրականության, որի խորքերը թափանցելը հետազոտողի համար դառնում է ավելի ու ավելի հետաքրքրական:

Ոճական բոլոր հնարանքներին ու դարձույթներին Օշականը անշուշտ տիրապետում է, և նրա ստեղծագործություններում կա ամեն ինչ՝ դրանցով զբաղվողին առատ նյութ տրամադրելու համար: Այս աշխատանքի շրջանակներում փորձել ենք ներկայացնել հեղինակի նախասիրած միջոցները: Օրինակները փոքր արձակից են, այստեղ չենք անդրադարձել վեպերի լեզվական նյութին:

Պատկերավորությունը, ինչպես արձանագրված է Ֆ. Խլղայանի ոճաբանական բառարանում, խոսքի այն հատկանիշն է, որի շնորհիվ մտքի առարկան զգայապես ընկալունակ է

³ **Յակոբ Օշական**, *Գրականության համար*. - Զուարթնոց, Փարիզ, 1930թ., հոկտեմբեր, էջ 435:

⁴ **Կիմ Աղաբեկյան**, *Հակոբ Օշական*, Ե. -2006, էջ 10:

⁵ **Մարկ Նշանեան**, *«Ընկլուզումի մեկնաբանությունը»*. - Գրականագիտական հանդես, 2004 Ա, էջ102:

դառնում: Այդ զգայապես ընկալելի պատկերների ստեղծման գործում մեծ դեր ունի փոխաբերությունը, որի վրա հիմնված է պատկերավորման միջոցների մեծ մասը: **Փոխաբերությունը** լեզվաոճական հնարանք է, երբ խոսքը պատկերավոր, արտահայտիչ, նաև **բանաստեղծական** դարձնելու համար բառը գործածվում է ոչ իր սովորական իմաստով՝ մեկ այլ բառի փոխարեն: Փոխաբերությունը հիմնվում է առարկաների, երևույթների արտաքին կամ ներքին հատկանիշների նմանության, նաև գործառական ընդհանրության վրա: Հակոբ Օջականի ստեղծագործություններում համագործածական շերտի բառապաշարը, որը, ի դեպ, մի շարք լեզվաբանների կարծիքով գուրկ է ոճական որևէ լիցքից, հանդես է գալիս որպես յուրօրինակ, միայն հեղինակին հատուկ, անսպասելի զուգորդումներով, փոխաբերական իմաստներով ոճական մեծ լիցք կրող բառաշերտ: Համագործածական բառերը այստեղ ստանում են ոճական մեծ լիցք փոխաբերական իմաստով գործածվելիս և ծառայում են գրողի ստեղծագործական նպատակների իրականացմանը: Ի վերջո, չկա երկու բառ, որոնց միջև տաղանդավոր գրողը չկարողանա ստեղծել կամուրջ և ցույց տալ աշխարհը իր հայեցակետից:

Եվ իսկապես, մեր առջև հառնում է Օջականի աշխարհը, որը դառնում է նաև մերը՝ համոզելով իր իրավության մեջ: Ահա ասվածը փաստող օրինակներ: «Անիկա չի կշտանար **աչքովը շոյելէ**, գրեթէ **համբուրելէ** ան տղան, որ ապակե փեղկին մէջ կը կենայ խելօք, քիչիկ մը **տրտում**: Ու լուռ, ապակիին դէմ, անիկա կը խոսի **թուղթէ** մանչուն հետ **աչքերուն լեզուն...**»⁶: Հատվածում պատկերված են աղքատ ընտանիքի երեխայի ապրումները խանութի ցուցափեղկի մոտ, նրա երկխոսությունը այնքան ցանկալի տիկնիկի հետ, որն ունենալ չի կարող, և բավարարվում է միայն հետը մտովի «խոսելով»: Կամ՝ «Արևը գացած էր փողոցներէն: Ապակիները շուտ մը, վանդակներով՝ **տաճկացած**»⁷: Նկարագրվում է հայկական գյուղ թուրքական հարձակումից և տեղահանությունից հետո:

Հետևյալ համատեքստում խոսքը կնոջ գեղեցկության մասին է. «Մեծ գեղին բոլոր հեռավոր անկյուններէն շաբաթներով կիներ ու աղջիկներ, ընդհանրապես սափոր մը ջուր պատրվակելով եկան, տեսան, **հիացան ու գլուխ թոթվելով** զացին»⁸: Կինը հիանում ու գլուխ է թոթվում մեկ այլ կնոջ արտաքինի առաջ. կանացի գեղեցկության՝ դրանից ավելի շքեղ ու խոսուն նկարագրությունն դժվար թէ լինի: Նույն ոճական գործառույթն են իրականացնում ընդգծված բառերը հետևյալ հատվածում. «Քաղաք մը, Արեւելքէն: Հոն եմ տարած գեղէն **փախչող** պատանութիւն մը, ոտքեր՝ որոնք գուլպայ չունին ու ծուիկ-ծուիկ չուխայ մը, որ ոսկորներ միայն կը ծածկէ...Այն ատեն, բացէն գացող անոր գլուխը կը դառնայ քանի մը անգամ ուսերուն վրայ, ու **անգուլպայ տղու** իմ աչքերս թաց բանով մը կը լեցուին: Ամայի փողոցին մէջ պատուհանները չեն նայիր դուրս ու **անգուլպայ տղու** իմ ոտքերս **կ'ամչնան** ելլելու»: «Գարուն մը անցավ ձիւներուն վրայէն: Ան ինծի բերավ գուլպայ ու արցունք: Անո՞ր: Չեմ գիտեր»⁹: Արդեն նշեցինք, որ պատկերավորությունը խոսքի առարկան զգայապես ընկալունակ դարձնող հատկանիշ է: Հաջորդող բնագրային օրինակ-

⁶ Ֆ. Խլղաթյան, *Ոճաբանական բառարան*, Ե., 2000թ., էջ 145:

⁷ Յակոբ Օջական, *Երբ պզտիկ են*, Պէյրուս – 1983, էջ 146:

⁸ Յակոբ Օջական, *Կայսերական յաղթերգութիւն*, Պէյրուս – 1983, էջ 30:

⁹ Հակոբ Օջական, *Երկեր*, Ե., էջ 193:

¹⁰ Յակոբ Օջական, *Երբ պզտիկ են*, Պէյրուս – 1983, էջ 494:

ները դրա ապացույցն են: «Այն ատեն կիջներ ծունկի, աղօթելով, լուռ, մինչեւ որ մութը բոլորովին **առնէր ու մարսէր** վարի տուները ու վերի քարերը»¹¹: «Անձրելը դադրեր էր կէսօրէն ետքը: Բայց դեռ կղմինտրները **արցունք** ունէին: Երկինքը՝ ճերմկուորած թեթեւ լուսինով մը, գեղին վրայ **խառնակ էջք մըն էր**, բայց գեղէն վեր՝ յայտնի ու մեծ կամարում մը»¹²:

Հետո, առանց հոս ու հոն նայելու, իրենց ոտքերուն **աչքովը**, շտկվեցան դեպի դուռը ժամուն, ուր շատ **հինցած** լուսարար մը մահվան **հինցած** սաղմոսի մը հատիկները **կթափէր** ընդհատ, նվաղուն, բայց այն չափով հստակ, որ անոր բառերը ճամփու ուղղությունը կուտային կույրերու **բանակին**¹³: Ասելիքն ավելի տպավորիչ է դարձել *հինցած* բառի ուղղակի և փոխաբերական իմաստների միաժամանակյա գործածության շնորհիվ: Ծավալուն փոխաբերության տպավորիչ օրինակ է հետևյալ հատվածը, որտեղ դուռը անձնավորվել է՝ դառնալով սիրելիների հանդիպմանը սպասող գործող անձ: «Ամբողջ երկաթ է ան: Ու հաճոյք մըն է՝ անոր **մարմինին** վրայ փորձել զարկը իր թաթիկներուն: Ինչպէ՛ս ահագին դուռը **կը փութայ** պատասխանելու: Ինչպէ՛ս հեծկլտուքի պէս երկար ու միակտուր բան մը կը բարձրանայ **երկաթին փորէն** ու միօրինակ լացի մը նման դուռը **կը տրոփէ** քանի մը անգամ: Ու օր մըն ալ **երկաթը բարի էր եղած**»¹⁴:

Օջականի ստեղծագործություններում բավական հաճախված են համեմատությունները: Համեմատությունն այլաբերության տարատեսակ է, լեզվի պատկերավորման միջոց, ոճական այնպիսի հնարք, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, պատկերավոր դարձնելու նպատակով այդ առարկայի որևէ կողմ համեմատվում է արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը¹⁵: Ի դեպ, այդ նմանությունը կարող է միշտ առկա չլինել, սակայն գրողի տաղանդի և աշխարհը տեսնելու իր պրիզմայի շնորհիվ ստեղծվում է: Հեղինակի խոսքում, որտեղ կան զանազան գնահատողական բնութագրումներ, համեմատությունների գործածության գործակիցը բարձր է, հեղինակը կարծես իրեն է վերապահում համեմատությունների՝ որպես գեղարվեստական առաջատար միջոցի և շարահյուսական ակտիվ դարձույթի, գործածության իրավունքը: Հերոսների խոսքում համեմատությունը քիչ է գործածված: Համեմատությունները սովորաբար կազմվում են երեք բաղադրիչից՝ համեմատվող առարկան, այն առարկան, որի հետ համեմատվում է, և այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը:

Օջականի պատմվածքներում բազմաթիվ են այսպես կոչված **եռանդամ** համեմատությունները: Դրանց կիրառմամբ հեղինակը կարողացել է հասնել գեղարվեստական պատկերի կատարելության, ընդգծել իր անհատական վերաբերմունքը պատկերվող առարկայի, երևույթի նկատմամբ, բացահայտել ընթերցողի համար աշխարհը այլ տեսանկյունից: Բերենք ասվածը հավաստող օրինակներ. «Քիչ անգամ մազերը այդքան մետաքս ու ոսկի կկախեն

¹¹ Յ. Օջական, *Ծակ-պտուկը*, Անթիլիաս, 1996, էջ 202:

¹² **Նույն տեղում**, էջ 239:

¹³ **Հակոբ Օջական**, *Երկեր*, Ե., 1979թ., էջ 206:

¹⁴ **Յակոբ Օջական**, *Կայսերական յաղթերգութիւն*, Պէյրուս – 1983, էջ 37:

¹⁵ **Լ. Եզեկյան**, *Ոճագիտություն*, Ե., 2003, էջ 340:

աղջկան մը կոնակեն ու քիչ անգամ ճերմակը կրնա խառնվիլ, առանց ավրվելու, թնավոր արյունի մը հետ, որ անոր այտերուն վրա պտտեցավ ու ծիածանի մը պես, օրվան պահերուն համեմատ երանգ փոխեց հոն»¹⁶:

«Կաթի պես ճերմակ կամ երկինքին չափ անուշ մեղմ կապույտը կփոխվեր հոծ, ջղուտ, լեղակի պես երիտասարդ կապույտի մը, ուր շարժումները, պրկումները, փրփուրի բարակ ձյուն մը տառապանքի չափ սրտին կդպեին»¹⁷: Օշականը վարպետորեն կարողանում է գուգորդել առաջին հայացքից անգուգորդելի թվացող երևույթները, գտնել դրանց մեջ կապ, նմանություն և համոզել ընթերցողին իր գեղեցիկ գեղարվեստական պատկերներով: Ասվածի օրինակն են հետևյալ համեմատությունները: Հետևյալ հատվածում պատկերվում է երիտասարդ տղայի հանդիպումը իր մանկության սիրած աղջկա հետ, որն արդեն նշանված է ուրիշի հետ: Աղջկա գնացքը համեմատելով խունկի բույրի տարածման հետ՝ իր ձայնը համեմատում է միայնակ ցավի հետ. «Այն ատեն, ձայնին վրա մեր աչքերը կհանդիպին իրարու: Կարմրած՝ կդառնա կրունկին վրա ու անոր պարեգոտը արևին մեջ բռնկած մեծ շուշանի մը կնմանի, որ կքալե:

Ու անոր գլուխը կնմանի ոսկի սաղավարտի մը՝ կարմիր երիզի մը վրա:

Ու անոր գնացքը քաղցր է, ինչպես խունկինը, որ կդանդաղի:

-Բուբո՛ւլ:

Մինակ է իմ ձայնս, արևին մեջ հանկարծ բուսած խորունկ ցավի մը նման»¹⁸:

Միշտ չէ, որ համեմատության մեջ առկա են երեք անդամները, երբեմն բացակայում է համեմատության հիմքը՝ հատկանիշը: Դա սովորաբար լինում է այն դեպքում, երբ տվյալ առարկան բնորոշվում է մեկ հիմնական հատկանիշով, որը տվյալ դեպքում հատուկ է այդ առարկային, կամ համեմատյալը արտահայտված է փոխանվանաբար: Այս կարգի համեմատությունները կոչվում են **երկանդամ** և կառուցվում են կապերով ու համեմատիչ բառերով. «Հույս, երազ չկա իր մեջ: Տեսակ մը ծերուկի սեր, իր սիրտին մեջ չմարած տաքություն մը կարթննա մոխիրի տակեն կամաց-կամաց բացվող կրակի նման»¹⁹:

Հաճախ անհատի բնավորության առանձին գծեր, հոգեկան ապրումներ, արտաքին հատկանիշներ ավելի պատկերավոր նկարագրելու համար զուգահեռներ են անցկացվում դրանց և բնության երևույթների միջև: Այդ զուգահեռները օգնում են թափանցել հերոսի ներաշխարհը. գյուղում «քիչ պատահող» շիկահեր ու կապուտաչյա գեղեցկուհին ամուսնանում է մեծահարուստի հետ: Գյուղի բոլոր տղաների երազանքը եղած այդ աղջիկը ամուսնու տանը ճակատագրի բերմամբ հանդիպում է իր պատանեկան տարիների սիրուն, և նորից փոթորկում երիտասարդի սիրտը. «Քիչ ետքը կուգա աղջնակը, - ո՞վ պիտի ուզեր Քուղիկին տեղը ըլլալով, հարս ըսել անոր, - կթելու կովերը և տղեկը կբռնե զսպված եղնիկի մը նման իր հոգին, պահելու համար իր հանդարտությունը և կնային անոնք իրարու՝ կենդանիին փորին տակեն, ճիշտ այնպես, ինչպես նայեր էր իրենց մանկությունը, իրենց պզտիկ ծակին առջևեն»²⁰:

¹⁶ **Հակոբ Օշական**, *Երկեր*, Ե., 1979թ., էջ 234:

¹⁷ Նույն տեղում, էջ 105:

¹⁸ Նույն տեղում, էջ 257:

¹⁹ Նույն տեղում, էջ 183-184:

²⁰ Նույն տեղում, էջ 240:

Համեմատությունները հաճախ ծառայում են նաև գեղեցիկ բնապատկերների ստեղծմանը: Այս դեպքում էլ բնությունն է համեմատվում մարդկային այս կամ այն հատկանիշի հետ: Ահա ասվածը փաստող օրինակներ. «Այդ տեղվանքը խոտերը իրենց գույն-գույն գլուխներով շղվուն աղջիկներու պես կծոին քիչ մը, կքավին երեսիդ, համբույրի փափկություն մը պտտցնելով միսերուդ վրա»²¹:

Օջականի պատմվածքներում և վիպակներում լայնորեն օգտագործված է համեմատությունների մի այլ տեսակ ևս՝ **զուգահեռականությունը**, որը դարձյալ համեմատություն է, բայց առանց համեմատության երկու եզրերը իրար կապող համեմատիչ բառերի: Զուգահեռականությունը ներքին համեմատություն է՝ մտքերի զուգորդման միջոցով: Զուգահեռ համեմատության այս տեսակը ավելի խոսուն է. «Երբեք չուզեց մտահոգ ըլլալ այդ խենթի սերին հետևանքներովը: Ի՞նչ էր վերջապես այդ տղան. փողոցն գտնված զվարճալիք մը, գոր սիրած աստենդ ազատ ես մեկդի նետելու: Շատ բարի կըլլաս, երբ խաղալիքը անվնաս ձեռքեդ դուրս ելլե»²²:

Միմյանցից հեռու և անհամատեղելի առարկաների ու երևույթների միջև ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը ոչ միայն նուրբ ճաշակի, բանաստեղծական շնորհքի, այլև իմացության արտահայտություն է: Օջականի կենսափորձն ու կյանքի խորը իմացությունը թույլ են տալիս նրան համեմատությունների միջոցով կատարել եզրահանգումներ, որոնք մտքի յուրահատուկ խտացումներ են: «Որքան ճիշդ է, որ բառերը պարապ ու անգոյն բաժակներ են գրեթե միշտ ու թանկ, ու բիւրեղ կը դառնան նայելով հեղուկին, որ անոնց պատերը կու գայ գրկելու»²³: Այդ հեղուկը՝ բառերի օջականյան իմաստավորումը, ահա բյուրեղ է դարձնում անգույն բաժակները:

Այսպես՝ «Ու անխօսուկ, սուսիկ, ջնջուած՝ սկսաւ անիկա **որբին** լացը: Ան՝ որ կը նմանի աշնան նիհար անձրեւներուն, կու գայ ու չի հասնիր ու կենալ չի գիտեր: Որ արցունք ալ չէ: Տեսակ մը **անգայտ թանձրացումը** մեր հոգիին, որ այդպէս կ'ուզէ դուրս տալ ինչ որ չի կրնար տանիլ»²⁴: Ապրելու նահատակությունը, **հոգի ըսված թույնէ շոգին**՝ դժվար է տանիլ առանց բարության»²⁵:

Բառերի փոխաբերական իմաստների վրա կառուցվող պատկերավորման միջոցներից մեկն էլ **մակդիրն** է: Համաձայն Լ. Եզեկյանի սահմանման՝ սա ոճական այնպիսի հնարանք է, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր գեղագիտական բնութագրությունը²⁶:

Չանդրադառնալով մակդիրների մասին եղած տեսություններին, գիտական գրականությանը՝ նշենք, որ ընդունելի ենք համարում մակդիրի՝ գեղարվեստական, փոխաբերական

21 Նույն տեղում, էջ 46:

22 Նույն տեղում, էջ 85:

23 **Յակոբ Օջական**, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան*, հտ. 9, Անթիլիաս, 1980 թ., էջ 389:

24 **Յակոբ Օջական**, *Ծակ-պտուկը*, Անթիլիաս, էջ 79:

25 **Հակոբ Օջական**, *Երկեր*, Ե., 1979, էջ 289:

26 **Լ. Եզեկյան**, *Ոճագիտություն*, Ե., 2003, էջ 334:

որոշիչ լինելու տեսակետը և այդ տեսակետից ելնելով ենք առանձնացրել և ներկայացրել մակդրային օրինակները:

Վերը մեջբերեցինք Օշականի այն միտքը, որ բառերը վարձատրում են, երբ «խոշտանգենք» իրենց: Օշականը կարողանում է, իր բառով ասած, խոշտանգելով բառից դուրս կորզել նրա բոլոր հնարավորությունները, տեսնել բառի հոգին, թաքնված կարողությունները և հենց այդ բացահայտված-կորզված իմաստներով էլ գործածել որպես մակդիր ու ընթերցողին ապշեցնել դրանց անսպասելիությամբ, թարմությամբ, գեղեցկությամբ, իրավությամբ: Օշականը հաճախ նույն երևույթը բնութագրելու համար կիրառում է մի քանի բառ, այսպես ասած, մակդրային կուտակումներ, որոնք համակողմանիորեն բացահայտում են երևույթը՝ միաժամանակ շեշտելով հեղինակի վերաբերմունքը դրա նկատմամբ: Ահա այդպիսի բնագրային մի քանի օրինակ. «Ան մօտեցաւ դրան: Չէր կրնար թողուլ, որ դուռը կրկնէ այդ **կսկծոտ, մեղաւոր ու հրապարակային, խոստովանող** զարկը»²⁷: «Անոր հեքիայթը կը գունաւորուէր խիտ, ճշգրիտ այն իրականութեամբ, զոր ուժգին, խոր ակօսուած զգայութիւններ կը դիզէն մեր ուղեղի տախտակներուն ու մեր բառերը կը լընեն **խլղոտ, հոսուն, փափաքելի ու աներկբա**»²⁸: «Ու ճամբան: **Խեղճ, որբ, խոցոտ, հազիւ երկու ոտք կոնակով**, դժուարութեամբ կը պահէ ինքզինքը ու մուրացկանի պէս կը տառապի, քիչ մը մարմին ճարելու համար ապառաժին փեշերէն»²⁹: «Բայց անմիջապէս որ ուզես՝ ամէն պարբերութեան ու մելանի բոլոր խազխազութիւններուն տակ դուն կը հետեւիս **ոսկի** թելին, որմէ կը գրուի **թանկագին, նուիրական, զգլխող** վանկը: Բառը չեմ գրած: Կը սիրեմ մտածել, որ քու կողմէդ պզտիկ ճիգ մը զայն պիտի ընէ **լուսաւէտ**, զայն պիտի տեսնէ գրուած **արիւնէ** տառերով»³⁰:

Գեղարվեստական գրականության լեզուն ուսումնասիրողները հատուկ ուշադրության են արժանացրել գունային մակդիրները, որոնք աշխարհը տեսնելու և վերարտադրելու հեղինակի գունապանկի արտահայտություններն են: Օշականի նախընտրած գույնը ոսկին է (ոսկեգույնը), որը ոչ միայն բարու, երջանկության, երիտասարդության, անցյալի խորհրդանիշ է, այլև թախծի, հիասթափության, կորուստի: Օշականը գունանունների դեպքում ևս ցուցաբերում է ինքնատիպություն և հասնում ասելիքի անհատականացման: Ահա ասվածը փաստող օրինակներ: «Ու այդ պզտիկ միջոցի կտորին մէջ հոգիներուն **ոսկի** թելը կէրթայ ու կու գայ նոյն մեծ վայելչութեամբ, նոյն խորհուրդով, որքան **ծնող** երկինքի մը երկունքը ու **մեռնող** աշխարհի մը թաղումը»³¹: Այս օրինակն ավելի խոսուն է հականիշ բառերի մակդրային գործածության շնորհիվ նաև:

«Մարդերուն կեանքը:

-Ի՛նչ **ոսկեգօծ** սուտ. երբեմն՝ ի՛նչ **իրաւ** արցունք, բայց մա՛նաւանդ, գրեթէ միշտ, ի՛նչ **աղուոր** կեղծիք»³²: «Սպասում: Դուրսը կառքեր, կառքեր: Մանդուխներուն՝ քայլեր, կարճն ալ, հասակովն ալ: Անհատում: Ու **սե՛ւ**: Չայնն ալ գոյն ունի երբեմն: Խորհեցէք քիչ մը: Չեր

²⁷ Յ. Օշական, *Ծակ-ստուկը*, Անթիլիաս, 1996, էջ 9:

²⁸ *Նույն տեղում*, էջ 103:

²⁹ *Նույն տեղում*, էջ 115:

³⁰ Յակոբ Օշական, *Երկեր*, «Մահուան ծաղիկներ», Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 480:

³¹ *Նույն տեղում*, էջ 452:

³² Յակոբ Օշական, *Երբ պզտիկ են*, Պէրուֆ – 1983, էջ 162:

միտքին բերեք տագնապի ժամեր, երբ սպասումը կը գունաւորէ ձեր շնչած օդն իսկ: Այն ատեն հաւատաք պիտի սա **սեւ** ձայներուն, որոնք ոտք-ոտք կը կոխկոտէն մեր **խեղճ** սրտերը»³³: «Ես կը բռնեմ անոր ոտքերը կապող ձիւնին գուղձը, կտոր-կտոր կը նետեմ **ճերմակ այդ ձիւթը** անոր կօշիկներուն կրունկէն ու դողալով մատ կը նետեմ գուլպայով կոճերուն: Բայց ինչպէ՛ս կու լան **անգուլպայ** ոտները, ձիւններուն ներքեւ, ներքեւ մանաւանդ **մուշտակով** նայուածքներուն»³⁴: Հատվածը հուզիչ և առավել արտահայտիչ է օքսիմորոնի գործածությամբ՝ **ճերմակ ձյուն**, որով հեղինակը ընդգծել է խիստ ձմռան ու սառը ձյան ազդեցությունը անգուլպա, աղքատ երեխայի վրա:

Ինքնատիպ գունային մակդիրներ են հետևյալները՝ **կաթնորակ** անգայտություն, **խունկի գոյն** բառեր, **դեղին** լռություն, **խարտեաշ** իգություն, **կանաչ** ատելություն, **մարմարյա** հավակնություններ, **ոսկի** ստրկություն և այլ:

Նման և ուրիշ շատ մակդրային կապակցություններ Օշականի ստեղծագործությունները դարձնում են տարբերվող, բայց մանավանդ խորհելու տեղիք են տալիս ընթերցողին: Բերենք բնագրային օրինակ. «Ու ոտքի ելաւ նորէն հին հեքիայթը Հաճի Ստեփանին ու անոր մեռած կնիկը պտըտեցաւ ամբոխին բառերուն վրայ իր **հրաշքի մօտեցող, արնապարտ** գեղեցկութեամբը»³⁵: Մեկ բառ՝ **արնապարտ**, ծավալուն նկարագրության փոխարեն, և հստակորեն պատկերանում է գեղեցկուհին, որի համար արյուն է թափվել: **Բռնաբարուած** պատուհաններ, **յօշոտուած** ձերութիւններ, **վիրաւոր** պատանութիւն, **խնկուած** նայուածք, **խոսված** աղջիկութիւն, **մեղրամուկ** վարդապետ, **ծանր** պայծառութեան, **մեծ ու քաղցր** լաց, **խատուտիկ** պարը, **ծեր տղու** սիրտ բառակապակցությունները ևս սեղմություն են հաղորդում խոսքին՝ միաժամանակ լինելով շատ խոսուն:

Հակոբ Օշականի փոքր արձակը գլխավորապէս արևմտահայ գյուղի մասին է, այդ գյուղի մարդու, նրա հոգսերի, առօրյայի, երազանքների, վշտի, հոգու մթին անկյունների ու չգիտակցված կրքերի: Բնական է և սպասելի, որ այդ թեմայով ստեղծագործություններում հաճախադեպ են բարբառային ու ժողովրդական բառերն ու արտահայտությունները, դարձվածքները: Բարբառային բառերն ու բառաձևերը հանդիպում են և՛ հերոսների, և՛ հեղինակի խոսքում. հեղինակը դիմում է դրանց այն դեպքում, երբ խնդրո առարկա բառերը չունեն գրական միաբառ հոմանիշներ, կամ եղածները չեն բավարարում հեղինակին, իսկ հերոսների խոսքում այդ բառերը գործածվում են նաև տիպականացման, հոգեբանության ու մտածողության յուրահատկությունն ընդգծելու, ժողովրդական լեզվամտածողության թարմ շեշտ հաղորդելու, բներանգի պատրանք ստեղծելու նպատակով:

Օշականի պատկերած իրականության մեջ հայն ու թուրքը ապրում են կողք կողքի, կիսում կենցաղը, ունեն նույն հոգսերն ու զբաղմունքը և, բնականաբար, Օշականի հայ հերոսների խոսքում շատ են թուրքերեն բառերն ու արտահայտությունները: Հողվածում որպէս բարբառային քննված մի շարք բառեր թուրքերեն բառեր են, որոնք կարող են տարակուսանք առաջացնել. դրանք բարբառայի՞ն բառեր են, թե՞ օտարաբանություններ: Հր. Աճառյանը իր «Հայ բարբառագիտութիւն» աշխատությունում գրում է, որ ամեն բարբառ երեք տարրերից է

³³ **Յակոբ Օշական**, *Երբ պզտիկ են*, Պէրուօ – 1983, էջ 172:

³⁴ **Նույն տեղում**, էջ 494:

³⁵ **Յ. Օշական**, *Ծակ-պտուկը*, Անթիլիաս, 1996, էջ 84:

բաղկանում. բնիկ բառեր, որոնք հին հայերենում էլ կային, գավառական բառեր, որոնք չկային գրաբարում և նոր կազմված ձևեր են, և օտար բառեր, որոնք զանազան լեզուներից նոր վերցված բառեր են³⁶: Այսինքն՝ ցանկացած բարբառում կա օտար բառերի՝ նոր փոխառությունների մի մեծ խումբ: Խնդրո առարկա բառերի բարբառային լինելու մասին է փաստում նաև դրանց գոյությունը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած Հայոց լեզվի բարբառային բառարանում:

Միայն բարբառը կարող է ստեղծել միջավայրի պատրանք: Ընթերցողին նկարագրվող աշխարհ փոխադրելը, այդ աշխարհի գույներն ու բույրերը զգալ տալը, միջավայրին բնորոշ զգացողություններ արթնացնելը գեղարվեստական խոսքի արժանիքներից են: Եթե միջավայրը բարբառախոս գյուղն է, ապա այս գործառույթները իրականացվում են բարբառի հմուտ գործադրմամբ:

Տեղի, միջավայրի երանգավորումը ավելի ցայտուն է արտահայտվում հերոսների խոսքում հաճախակի գործածվող **օղու** կոչականի, միջոցով, որը հատուկ է այդ խոսվածքին: Ահա բազմաթիվ օրինակներից մեկը.

«-Հոգդ չըլլա, **օղու**, աշխարհք է, ասանկ բաներ կանցնին մարդուն գլխեն: **Հելլաթ** քեզի ալ **խըսմեթ** չի պակսիր»³⁷: Շառլ Բալլին գրում է, որ խոսակցական լեզվում խոսողը մեղմացնում է իր արտահայտությունները՝ խնայելով խոսակցին. շրջապատին հարմարվելը գրեթե միշտ ուղեկցվում է ինչպես մտքի, այնպես էլ նրա արտահայտության մեղմացմամբ³⁸: Ահա խոսակցին խնայելու նպատակով էլ հենց գործածված են **հելլաթ** և **խսմեթ** բարբառային բառերը վերը բերված օրինակում, որ նշանակում են **անշուշտ** և **բախտ**:

Նշենք, որ Օշականը չունի մաքուր բարբառախոս հերոսներ: Կերպարների խոսքին երանգ հաղորդելու նպատակով վերջիններիս լեզուն տեղ-տեղ է բարբառայնանում՝ դրանով ոճական լիցք հաղորդելով խոսքին:

«Ծակ-Պտուկը» վիպակի հետևյալ հատվածում տարիքով մեծ ու զենքի հետ գործ ունեցած Հաճին խրատում է անհամբեր ու տաքարյուն երիտասարդին հետևյալ խոսքերով. «-Տեղդ ծանր, տղա՛ս: Կրակին հետ **շախա** չըլլար:

Իրաւ ալ, խօսքը բերանն էր Հաճիին, երբ գնդակ մը գդակը թոցուց գլխէն յախուռն երիտասարդին»³⁹: Մեկ այլ հատվածում նույն Հաճին կովի է կոչում յուրայիններին այս խոսքերով. «-Ինձի՛ նայեցէք,- ըսաւ ան տղոցը,- ա՛լ բացուեցէք: Ասոր կըսեն **ճան պագարի**»⁴⁰: **Շախա** (կատակ) բառն ու **ճան պագարի** (կյանքից հոգնած, ձեռք քաշած) արտահայտությունը թեև բարբառային են, սակայն անբարեհունչ չեն և հասկանալի են կամ էլ հասկանալի են դառնում համատեքստի բովանդակությունից: Հաճիի խոսքում ընդգծված բառերը գրական հոմանիշներով փոխելու դեպքում խոսքը չէր լինի համոզիչ և չէր ունենա այն արտահայտչականությունը, որն ունի բարբառային բառերի շնորհիվ:

³⁶ Տե՛ս Հր. Աճառեան, *Հայ բարբառագիտություն*, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 11:

³⁷ **Հակոբ Օշական**, *Երկեր*, Ե., 1979, էջ 180:

³⁸ **Շարլ Բալլի**, *Ֆրանцузская стилистика*, Москва, Инстр. лит., 1961, с. 340.

³⁹ **Յ. Օշական**, *Ծակ-պտուկը*, Անթիլիաս, 1996, էջ 316:

⁴⁰ Նշվ. աշխ., էջ 314:

«Աղբարիկ» պատմվածքի հերոսը, օրինակ, որ այդ գյուղում հայտնվել էր տեղահանության ու շարդի օրերին և կարողացել մնալ այնտեղ, խոսում է իր հայրենի Մուշի բարբառով՝ տարբերվելով համագյուղացիներից: Նրա խոսքը Օշականը անհատականացնում է Մուշի տարածաշրջանի խոսվածքներին հատուկ բառերի ու բառաձևերի, տառադարձության միջոցով. «Կեսօրին, խանութը երեսին վրայ բաց ձգած՝ գնաց տերտերը գտնելու:

-Էսպէս **բիան**, էսպէս **բիան**:

Չկրցավ շարունակել, աչքերը լեցուեցան: Տերտերը յանցանք մը գործողի մեղմութեամբ.

-Օղո՛ւլ, հոգ մի՛ ըներ, ան թող չըլլայ, ուրիշ մը թող ըլլայ, տղա՛ս. հազար հատ կը գտնամ:

Աղբարիկ ուժերը հաւաքեց եւ իրապէս մեծ, արի նայուածքով մը տերտերը չափելով.

Տէր պա՛պ, տէր պա՛պ, **քոչակ** չեմ ես, **խասկացա՞ր**. **զիմ** սիրտ **ծեկեցին**, էլ ուրիշ կնիկ **խարամ** թող ըլլի: **Խարա՛մ, խարա՛մ, խասկացա՞ր** »⁴¹:

Բառը, մի շարք ոճական գործառնություններից բացի (սեղմություն, տեղի և ժամանակի պատրանքի ստեղծում, հավաստիություն), նաև հեղինակի վերաբերմունքի դրսևորման միջոց է: Հետևյալ հատվածում հեղինակի վերաբերմունքը ընդգծվում է մանավանդ բարբառային բառի հետ **ահավոր** մակդիրի գործածությամբ. «Քսանէն անդին կը սպասէ փեսայութիւնը ու անոր ահաւոր **շարը**, որ պիտի սանձէ այդ կրակի կտոր մանչերը ու զսպուած եզի մը պիտի վերածէ զանոնք, լծելով հողին ու անոր անվախճան աշխատանքին»⁴²: **Շար-ը** բառը բարբառային «մետաքսից թաշկինակ, որ հարսանիքին կապում են փեսայի վզին» իմաստն ունի:

Հեղինակի խոսքում հանդիպում են նաև այնպիսի բարբառային բառեր, որոնք ունեն իրենց գրական հոմանիշները, սակայն որոշ նրբերանգներով տարբերվում են դրանցից: Այդպիսի բառերի գրական համարժեքի գործածությունը նախընտրելի չէ այն դեպքում, երբ գրականը երանգային որոշ տարբերությունների պատճառով անհրաժեշտ վերաբերմունք չի կարողանում արտահայտել: Այդ գործառնություն է իրականացնում հետևյալ համատեքստում **աղավորել** բառը, որը նշանակում է ճանապարհել, բայց ճանապարհել համոզելով, հանգստացնելով. «Անուշ ու լուրջ բառերով ան **աղաւորեց** պառաւր: Օրերը ասանկ մնալու չէին»⁴³:

Ինչպես վերը նշել էինք, հեղինակային խոսքին ևս հատուկ է բարբառային բառերի գործածությունը: Եթե մի կողմ թողնենք «իրավ» բաների մասին «իրավ» գրելու Օշականի ձգտումը, ինչի պատճառով երբեմն բարբառային բառերի գործածությունը չարաշահվել է, ապա այս գործածությունն արդարացվում է բառի ոճական դերով՝ խոսքին հաղորդած հուզականությամբ, կենդանությամբ: Այս դեպքում գրական լեզվի նորմերին անհարիր լինելը երկրորդ պլան է մղվում: Բերենք ասվածը հավաստող օրինակներ: Հետևյալ համատեքստում նկարագրվում է կեսօրվա խաղաղությունը գյուղի տան մեջ, երբ բոլորը դաշտում են, և տունը անասելի լռության մեջ է. «Խաղաղ, չպատմուող լռութեամբ խաղաղ է տունը: Չէլլար նոյնիսկ լացը Մողմէնին **կոխցու** աղջկան, որ գիշեր ու ցերեկ կը նուայ»⁴⁴: **Կոխցու**-ն հայոց լեզվի բարբառային բառարանում բացատրված է որպես երեխաների հիվանդություն, որի դեպքում

41 **Յ. Օշական**, *Երկեր*, Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 159:

42 **Յ. Օշական**, *Ծակ-պտուկը*, Անթիլիաս, 1996, էջ 170:

43 Նույն տեղում, էջ 96:

44 **Յ. Օշական**, *Ծակ-պտուկը*, Անթիլիաս, 1996, էջ 43:

չեն կարողանում ժամանակին քայլել, ինչը իբրև առաջանում է օրորոցի վրայով ինչ-որ բան փոխանցելու հետևանքով⁴⁵: Այդ երեխան հայտնի է իր անդադար լացով, և նրա լռությունը չպատմվող խախտությամբ է համակել տունը:

Այսպիսով, ուսումնասիրելով Հակոբ Օշականի նախասիրած արտահայտչամիջոցներն ու պատկերավորման համակարգը փոքր արձակում՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Գրողի ստեղծագործություններում հայերնի բառապաշարը հանդես է գալիս իր բոլոր հնարավորություններով: Գործածված են ոճական բոլոր դարձույթներն ու միջոցները, սակայն առավել հաճախված են փոխաբերությունը, մակդիրը, համեմատությունը:

2. Ոճական կոնկրետ նպատակադրում են իրականացնում բարբառային բառերն ու բառաձևերը, որոնք ավելի հաճախված են հերոսների խոսքում և նպաստում են խոսքի տիպականացմանը, բներանգի ստեղծմանը: Հեղինակի խոսքում բարբառային բառերը գործածվում են հիմնականում այն դեպքում, երբ նա ստեղծագործության հերոսներից մեկն է:

3. Փոխաբերություններ հեղինակը շատ հաճախ ստեղծում է համագործածական բառերի ոճական կիրառություններով: Դրանց միջոցով հեղինակը հասնում է խոսքի անհատականացման՝ դարձնելով գեղարվեստական պատկերը անկրկնելի, անսպասելի, հեղինակի մտածողության կնիքով կնքված: Ծավալուն փոխաբերությունները խոսքը դարձնում են տպավորիչ, համակողմանիորեն բնութագրում նկարագրվող երևույթը:

4. Հեղինակը գործածում է համեմատության բոլոր տեսակները՝ այդպիսով կամուրջներ ստեղծելով առաջին հայացքից որևէ նմանություն կամ համեմատության եզրեր չունեցող բառերի միջև: Առավելապես հեղինակի խոսքում գործածված համեմատությունները բացահայտում են աշխարհը տեսնելու Օշականի կերպը, նրա աշխարհընկալումն ու ճաշակը:

5. Մակդիրների կիրառության մեջ նույնպես Օշականը կարողանում է բառից դուրս կորզել նրա բոլոր իմաստային հնարավորությունները, տեսնել բառի հոգին, թաքնված կարողությունները: Դրանք իրենց անսպասելիությամբ, թարմությամբ, գեղեցկությամբ զարմացնում և հիացնում են ընթերցողին: Օշականը հաճախ է նույն երևույթը բնութագրելու համար կիրառում մակդրային կուտակումներ, որոնք համակողմանիորեն բացահայտում են երևույթը՝ միաժամանակ շեշտելով հեղինակի վերաբերմունքը դրա նկատմամբ: Գունային մակդիրներից քանակապես գերակշռում են **ուսկեգույն** բառով մակդիրները:

«Համապատկեր արեւմտահայ գրականութեան» 5-րդ հատորի հրատարակիչը «Երկու խօսք» բաժնում գրում է. «...երեկ, երբ տակաւին ողջ էր այս հատորին հեղինակը, անիկա շատերուն կը թուէր ապրող անցեալ մը. այսօր, իր մահէն տարիներ վերջ, անիկա մտքիս մէջ կը վերածուի հեռաւոր ու մեծ ապագայի մը: Ահա հրաշքը որուն մէջ ինքզինքը պատմուճանած կը մնայ Օշական...»⁴⁶:

⁴⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ Գիտությունների ակադեմիայի ակադեմիա, Ե., 2001-2012:

⁴⁶ Յակոբ Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հտ. 5, Երուսաղեմ, 1952թ.:

1. Աճառեան Հր., Հայ բարբառագիտություն, Մոսկուա-Նոր-Նախիջեան, 1911:
2. Հայոց լեզվի բարբառային բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, 2001-2012:
3. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984:
4. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք I, Երևան-1990:
5. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևան, 1982:
6. Օշական Հ., Երկեր, Երևան, 1979:
7. Օշական Յ., Երկեր, Անթիլիաս-Լիբանան, 1998:
8. Օշական Յ., Ծակ-պտուկը, Անթիլիաս, 1996:
9. Балли Ш., Французская стилистика, Москва, Инстр. лит., 1961.

Shushanik Ghazaryan - Some Characteristics of Hakob Oshakan's System of Imagery - This article explores the stylistic features of the short prose of Hakob Oshakan, a writer of the Armenian diaspora. In particular, it examines the author's favored expressive means (metaphor, comparison, epithet, the stylistic use of dialectal vocabulary), and the characteristics of his imagery system. Hakob Oshakan skillfully employs almost all stylistic devices and all layers of the Armenian language's vocabulary; however, the aforementioned techniques are especially frequent and prominent in his work.

Among the metaphors, those based on the figurative use of common words stand out in particular. Through such metaphors, the author achieves a personalization of speech, making the artistic image original and unexpected. These metaphors also bear the mark of the author's thinking and reflect his worldview.

The author employs all types of comparisons, thus building bridges between words that at first glance seem to have nothing in common or no points of connection. These comparisons mainly appear in the author's narrative and reveal Oshakan's perception of the world, his imagination, and his sense of taste.

In his use of epithets, Oshakan is also able to extract the full semantic potential from a word, to perceive its "soul" and hidden capabilities. These epithets surprise and impress the reader with their freshness, beauty, and unexpectedness. Oshakan often uses clusters of epithets to describe a single phenomenon, which allows for a comprehensive depiction while also emphasizing the author's attitude toward it.

Dialectal words and word forms serve a specific stylistic function—they are more frequently found in the speech of characters and contribute to the typification of speech and the creation of local color. Dialectal grammatical forms are used extremely rarely and are mostly limited to individual words and expressions.

Keywords: System of Imagery, Epithet, Metaphor, Comparison, Dialect Words, Expressiveness.

Shushanik Ghazaryan, master's degree, ASUE, lecturer.

Шушаник Казарян - Некоторые особенности системы образности Акопа Ошакана. - В данной статье исследуются стилистические особенности малой прозы писателя армянской

диаспоры Акопа Ошакана. В частности, рассмотрены предпочитаемые автором выразительные средства (метафора, сравнение, эпитет, стилистическое использование диалектной лексики), а также особенности системы образности. Акоп Ошакан мастерски применяет практически все стилистические приёмы, все пласты лексики армянского языка, однако особенно часто им применяются именно вышеуказанные средства.

Среди метафор особенно выделяются те, которые построены на переносном стилистическом использовании общеупотребительных слов. С помощью таких метафор автор добивается индивидуализации речи, делая художественный образ оригинальным и неожиданным. Эти метафоры также несут отпечаток авторского мышления и отражают его мировоззрение.

Автор использует все виды сравнений, тем самым создавая мосты между словами, которые на первый взгляд не имеют ничего общего или точек соприкосновения. Сравнения в основном встречаются в авторской речи и раскрывают восприятие мира Ошаканом, его воображение и вкус.

В использовании эпитетов Ошакан также умеет извлечь из слова весь его смысловой потенциал, увидеть «душу» слова, его скрытые возможности. Эти эпитеты поражают и восхищают читателя своей неожиданностью, свежестью и красотой. Ошакан часто использует накопление эпитетов для описания одного и того же явления, что позволяет всесторонне раскрыть его, одновременно подчеркивая отношение автора к нему.

Диалектные слова и формы слов выполняют конкретную стилистическую задачу — они чаще встречаются в речи персонажей и способствуют типизации речи, созданию колорита. Диалектные грамматические формы используются крайне редко, в основном представлены отдельные слова и выражения.

Ключевые слова: система образности, эпитет, метафора, сравнение, диалектные слова, выразительность.

Шушаник Казарян, магистр, ГЭУА, преподаватель.

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

Ղարսյան Աննա

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՊՏՀ, դասախոս.

anna.gharslyan@asue.am

Բանալի բառեր. տնտեսագիտական բուհ, հայերենի դասավանդում, տնտեսալեզվաբանական մոտեցում, մասնագիտական լեզու, լեզվական նորմեր, դասախոսություն, գործնական աշխատանք:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հայերենի դասավանդման ծրագրերն ու մեթոդաբանությունը բավարար չեն ուսումնառուների՝ մայրենիի նկատմամբ հետաքրքրությունն ու արժևորումը բարձր մակարդակում պահելու համար, քանի որ հազարամյակների պատմություն ու հարուստ բառապաշար ունեցող հայոց լեզուն մեր օրերում դասավանդվում է սահմանափակ մոտեցմամբ՝ մասնավորապես լեզվական նորմերի, կանոնների, քերականական հասկացությունների հաղորդմամբ, բառապաշարի՝ հաճախ ոչ կենսունակ բառամթերքի մատուցմամբ: Հայերենը կրթական համակարգում որպես հաղորդակցման հմտությունների, խոսքի մշակույթի ձևավորման աղբյուր և մասնագիտական լեզու էականորեն ստվերվում է և ժամանակակից տեղեկատվական դարաշրջանում հայտնվում ճգնաժամային իրավիճակում: Հայերենի դասավանդման սույն մտահոգություններն ունեն մեր ժամանակի տարբեր լեզվաբաններ, որոնք ևս փորձում են ճգնաժամից դուրս գալու ելքեր գտնել: Ըստ Ջ. Աղաջանյանի՝ ժամանակակից մեթոդագիտության նպատակն է լեզվի ուսուցումը հանել «հին դրությունից» և լեզվաբանության տեսական նշանակությանը զուգակցել նրա կիրառական նշանակությունը՝ ներակայելով լեզվաբանության ժամանակակից ենթաձյուղերի և հարակից գիտությունների տվյալներն ու հնարավորությունները²: Ս. Աբազյանի և Լ. Գևորգյանի հավաստմամբ լեզվի դասավանդման հիմնական պատակը պետք է լինի լեզվական խոսքային կարողությունների և խոսքային ստեղծագործական աշխատանքների զարգացումը³:

¹ Տե՛ս **Ս. Հովհաննիսյան**, *Հայոց լեզվի ուսուցման հիմնախնդիրները*. - Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում, Ե., Տիր, 2021, էջ 166:

² Տե՛ս **Ջ. Աղաջանյան**, «*Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*»-ի ուսուցման հիմնահարցերը բուհական համակարգում». - «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը» հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան, 2024, էջ 118:

³ Տե՛ս **Ս. Աբազյան**, **Լ. Գևորգյան**, *Որոշ դիտարկումներ հայերենի դասավանդման մասին*. - «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը» հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան, 2024, էջ 157-158:

Ըստ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ հայաստանյան բուհերի բակալավրի կրթական ծրագրում հայերենի ուսուցանումը նախատեսված է առնվազն 2 կիսամյակ⁴: Հետևաբար հայոց լեզվի դասընթացն ուսանողներին առավել արդյունավետ և նորովի ուսուցանելու համար նոր մեթոդաբանական մոտեցումների և ռազմավարությունների անհրաժեշտություն է առաջանում:

Վերլուծություն

Հայերենը, լինելով լեզվաբանության ուսումնասիրության առարկա, միաժամանակ պետք է դիտարկվի, ուսումնասիրվի և ուսուցանվի որպես **մասնագիտական հաղորդակցման լեզու** գիտական տարբեր ոլորտներում: Հարկավոր է լեզվի ուսումնական ծրագիրը համապատասխանեցնել տվյալ մասնագիտության (օրինակ՝ տնտեսագիտություն, իրավագիտություն) լեզվական պահանջներին և զարգացման միտումներին՝ այդպեպ խթանելով ուսանողների հետաքրքրությունը հայերենի նկատմամբ, զարգացնելով մասնագիտական բառապաշարի ճանաչման, ընկալման և դրանցով գիտականորեն ճշգրիտ, գրագետ խոսք ձևակերպելու կարողությունները: Առաջնորդվելով հայերենի լեզվական նորմերի պահանջներով՝ անհրաժեշտ է կատարել ուսումնասիրվող ոլորտի մասնագիտական լեզվի լեզվաբանական հետազոտություն՝ կիրառելով համապատասխան մեթոդաբանություն: Կարևոր նախապայման է լեզվաբանների և ոլորտային մասնագետների համագործակցությունը, ինչը թույլ կտա մշակել նպատակային, արդյունավետ և ժամանակակից ուսումնական ծրագիր:

Ինչպե՞ս իրագործել տեսլականը:

Քայլ 1

- Մասնագիտական բուհերում դասավանդող հայերենի դասախոսներին ներգրավել տվյալ մասնագիտական լեզվին, տերմինաբանությանը վերաբերող հետազոտական աշխատանքներում, քանի որ ոչ լեզվաբանական բուհերում հայերենի դասավանդման արդյունքում ուսանողը ոչ միայն պետք է ամրապնդի իր լեզվական գիտելիքները, այլև ձեռք բերի տվյալ գիտական ոլորտի լեզվական գիտելիքներ և մասնագիտական խոսք կառուցելու հմտություններ:

Քայլ 2

- Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմել գործնական աշխատանքների ձեռնարկներ և տեսական նյութերի հետ ներառել հայերենի առարկայական ծրագրերում՝ այսպեպ վերաիմաստավորելով հայերենի դասավանդումն ու բուհական համակարգում բարձրացնելով լեզվի ուսուցման արդյունավետությունը:

Ինչ խոսք, գործընթացը ժամանակատար է, բայց շատ արդյունավետ:

Վերոնշյալ քայլերն իրականացնելուց հետո կունենանք հետևյալ արդյունքները.

1. մասնագիտացված հայերեն դասախոսներ,

⁴ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (02.03.2005), ՀՀՊՏ 2005.01.31/8(380) Հոդ.159:

2. լեզվաբանական մեթոդաբանությամբ մշակված մասնագիտական հոդվածներ, դասախոսություններ՝ ընդգրկված՝

- որևէ գիտական լեզվի տերմինաբանության համակարգված ուսումնասիրությամբ,

- մասնագիտական խոսքի յուրահատկությունների վերլուծությամբ,
- գիտական հաղորդակցման ձևերի մշակմամբ.

3. գործնական աշխատանքների ձեռնարկներ՝ ընդգրկված՝

- մասնագիտական տեքստերի վերլուծական առաջադրանքներով,
- տերմիններին վերաբերող վարժություններով,
- գիտական խոսքի կառուցմանը նպաստող հանձնարարություններով.

4. ուսանողների մտահորիզոնում հայերենի նկատմամբ նոր ընկալման ձևավորում՝ այն դիտարկելով որպես մասնագիտական մտածողության և հաղորդակցման կարևորագույն գործիք:

Ուսումնասիրելով տնտեսագիտական տերմինահամակարգը և հենվելով իմ գիտական հետազոտությունների (3 հոդված, 1 մենագրություն, 1 ձեռնարկ՝ համահեղինակությամբ)⁵ ու դասավանդման 5-ամյա փորձի վրա՝ ներկայացնում եմ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (ՀՊՏՀ) հայերենի դասավանդման իմ մոտեցումը:

ՀՊՏՀ-ում հայոց լեզվի դասավանդումը ձեռք է բերում բովանդակային նոր որակներ: Մասնագիտական հաղորդակցման հմտությունների ձևավորման համար լեզվական նորմերի ուսուցանումը զուգորդվում է տնտեսագիտական լեզվի և բառապաշարի համակարգված ուսումնասիրությամբ: Այսինքն՝ կատարվում են լեզվաբանական մեթոդաբանությամբ մասնագիտական լեզվի անվանողական (բառապաշար) և հաղորդակցական (խոսք) միավորների⁶ ուսումնասիրություններ, որոնք, մշակվելով որպես դասախոսություններ, հետագայում համալրում են հայոց լեզվի առարկայական ծրագիրը: Մա երկու գիտակարգերի՝ տնտեսագիտության և լեզվաբանության համագործակցություն է ընդհանուր հետաքրքրությունների շրջանակում և հայոց լեզվի դասավանդման տնտեսալեզվաբանական նոր մոտեցում:

Խոսքը հիմնավորենք «Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ» դասախոսություններով և «Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար» ուսումնասօժանողական ձեռնարկով⁷:

Այսպես՝ «Հայոց լեզվի բառապաշարը» թեման ուսումնասիրելիս ուսանողները, լեզվական հիմնական նյութից զատ, ծանոթանում են տնտեսագիտական բառապաշա-

⁵ Տե՛ս գրականության ցանկում:

⁶ Տե՛ս **Լ. Խաչատրյան**, *Ընդհանուր լեզվաբանության դասընթաց*, Ե., Զանգակ, 2017, էջ 24:

⁷ Տե՛ս **Ա. Ղարսյան**, *Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ (դասախոսություններ)*, Ե., Լուսակն, 2023; **Ա. Ղարսյան**, **Ա. Երկանյան**, *Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար*, Ե., Տնտեսագետ, 2024:

րի ձևավորման հիմքերին, ստուգաբանությանը, համալրման, հարստացման աղբյուրներին (փոխառություն, նորակազմություն, դարձվածք), զարգացման առանձնահատկություններին և ժամանակակից միտումներին:

Ստուգաբանական հետազոտությունը լեզվաբանությունից և տնտեսագիտությունից առավել փաստարկված գիտելիք է հաղորդում ուսանողին: Այս ճանապարհով նա բացահայտում է տերմինների պատմական զարգացման ուղիներն ու ընթացքը, հասկանում հայեցակարգային փոխակերպումները: Այսպես՝ **տարիֆ**, **տոկոս** կամ **շուկա** տերմինների ծագումը պարզելու համար ուսանողը պետք է օգտվի ստուգաբանական բառարաններից, օրինակ՝ Աշոտ Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»-ից և Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից»: Տեսական նյութում նախապես նշված են բառարաններից օգտվելու կանոնները: **Տարիֆ** տերմինի արաբական ծագումն ուսանողին «տանում է» տնտեսագիտական դաշտ՝ բացահայտելու մասնագիտական բառի իմաստային նախապատմությունը:

Գրավոր աղբյուրը՝ փաստում է, որ **տարիֆ** բառը ծագել է Ջիբրալթարի նեղուցում գտնվող կղզու անունից: Երբ 8-րդ դարում արաբները գրավեցին կղզին, այն անվանեցին Տարիֆ՝ ի պատիվ իրենց գորապետ Տարիֆ իբն Մալիկի: Նրանք կղզին դարձրին նեղուցով անցնող նավերից տուրքերի գանձման (չափը կախված էր նավերի ջրատարողությունից) հսկիչ կետ: **Տարիֆ** («սակագին») տերմինը ներկայումս տնտեսագիտական բառապաշարի հիմնական ֆոնդի անբաժանելի լեզվամիավոր է:

Այս պարզ օրինակով տեսնում ենք 2 գիտակարգերի համագործակցային մեծ արդյունք, որն ուսանողի համար խիստ շահեկան է. մի կողմից ձեռք է բերում լեզվաբանական, օրինակ՝ ինչ ստուգաբանական բառարաններից օգտվել և ինչպես օգտվել, մյուս կողմից՝ տնտեսագիտական խորքային գիտելիքներ: Այսինքն՝ ուսանողը հայերենը դիտարկում է մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու տեսանկյունից ժամանակակից ճկուն գործիք: Գործնական աշխատանքի ժամանակ տերմինները ուսումնասիրվում են ոչ միայն որպես բառարանային լեզվամիավորներ, այլև տնտեսագիտական հասկացություններ:

Տնտեսալեզվաբանական մոտեցումն առավել արդյունավետ է կիրառվում տնտեսագիտական դարձվածքներն ուսումնասիրելիս, քանի որ դրանց մեծագույն մասն ունի նախապատմություն: Դարձվածքների իմաստներն ուսումնասիրել նշանակում է լեզվաբանական դաշտ մուտք գործելով՝ անցում կատարել տնտեսագիտության պատմություն: Այսպես՝ **փողերի լվացում** դարձվածային կապակցությունը անգլերեն *money laundering* տերմինի բառային պատճենումն է և նշանակում է *անօրինական եղանակով (գողությամբ, թմրանյութերի առևտրով և այլ) կուտակված փողի հետ կապված գործառնություններ, որոնց նպատակն է թաքցնել դրամագումարի առաջացման*

8 Տե՛ս **Ա. Ղարսյան**, *Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ (դասախոսություններ)*, Ե., Լուսակն, 2023, էջ 32-35

9 Տե՛ս **E. Gibbon**, *The History of the Decline and Fall of the Roman Empire*. - The History of the Decline and Fall of the Roman Empire, vol. 9, 1776:

աղբյուրը, դրան տալ օրինական բնույթ¹⁰: Դարձվածքի իմաստային ուսումնասիրությունը առավել լիարժեք է դառնում, երբ ներթափանցում ենք տնտեսագիտության պատմություն: 1930-ական թվականներին ԱՄՆ-ում արգելված էին ակոհոլային խմիչքների արտադրությունը, ներմուծումը, փոխադրումն ու վաճառքը: Մաքսանենգության միջոցով ներմուծում կատարող հանցավոր խմբերը՝ մաֆիաները, փնտրում էին ուղիներ՝ պետականորեն արգելված ճանապարհով ձեռք բերած գումարները օրինականացնելու: Նրանք գնում էին արտաքուստ օրինական բիզնեսներ և իրենց ապօրինի եկամուտները քողարկում դրանցից ստացած օրինական եկամուտներով: Գանգստերները, ինչպես ամերիկացի հայտնի Ալ Կապոնեն էր, ընտրում էին կանխիկ բիզնեսներ (լվացքատներ, կահույքի արտադրություն) և այս ճանապարհով օրինականացնում ապօրինի եկամուտները¹¹: Հանցավոր կապիտալը «մաքրելու» գործընթացը տնտեսագիտական խոսքում արտահայտվեց **փողերի վաճում** դարձվածքով, որը լեզվաբանության և տնտեսագիտության համագործակցության լավագույն արտահայտումներից է:

Տնտեսագիտական տերմինահամակարգի դասավանդումն ընդգրկում է բառապաշարի հարստացման երկու աղբյուրների՝ փոխառությունների և նորակազմությունների վերաբերյալ դասախոսություններ, որոնցում խոսվում է տնտեսագիտական փոխառությունների տեսակների, նոր տերմիններ կազմելու բառակազմական գործող կադապարների, բառապաշարը համալրելու նոր մոտեցումների մասին:

Առաջնորդվելով տնտեսալեզվաբանական մոտեցմամբ՝ նույնկերպ ուսանողներին մատուցվում են լեզվաբանության մյուս բաժիններին ու ենթաբաժիններին վերաբերող մասնագիտացված դասախոսությունները:

Ինչպիսի՞ն պետք է լինեն դասախոսությունները:

Ցանկալի է, որ դրանք լինեն դինամիկ, ներկայացվեն թեմային համապատասխան տեսասահիկաշարով (պրեզենտացիայով), որն ավելի տեսանելի և ընկալելի կդարձնի տեսական նյութը: Դասախոսությունները չպետք է լինեն երկարաշունչ, քանի որ մեր նպատակն է դասընթացը կազմակերպել մասնավորապես գործնական մոտեցմամբ: Ուստի թեմայի որոշակի ներկայացումից հետո դասախոսը փոխադարձ կապ է հաստատում ուսանողների հետ գործնական աշխատանքներով նյութն ամրապնդելու համար: Այսպես՝ «Տնտեսագիտական դարձվածքներ» թեման ուսուցանվում է հետևյալ ենթամասերով՝

- բաղադրական և դարձվածային կայուն կապակցություններ,
- տնտեսագիտական դարձվածքները որպես մասնագիտական լեզվամիավորներ,
- խոսակցական և մասնագիտական դարձվածքների ոճական և գործառական առանձնահատկությունները:

¹⁰ Տե՛ս **Ա. Մարկոսյան, Տ. Դավթյան**, *Ամենագործածական տնտեսագիտական տերմինների բացատրական բառարան*, Ե., Լեզվալ Պլյուս, 2008, էջ 173:

¹¹ Տե՛ս **G. Horne**, *Rethinking the Lumpen: Gangsters and the Political Economy of Capitalism. African American History and Radical Historiography*, Marxist Educational Press, 1998, p. 285:

Յուրաքանչյուր ենթաթեմա ամրապնդվում է համապատասխան հանձնարարությամբ: Օրինակ՝

Խմբավորե՛ք ներքոնշյալ բաղադրական և դարձվածային կայուն կապակցությունները.

լողացող փոխարժեք, փողերի լվացում, տնտեսական աճ հոլանդական հիվանդություն, ընթացիկ հաշիվ, ցլերի շուկա, մասնակի գույքագրում, դրամամիջոցների փախուստ, բանկային համակարգ, տնտեսական շահույթ, դուստր բանկ:

Հետևաբար հայոց լեզվի դասախոսությունները տնտեսագիտական բուհերում պետք է լինեն՝

- *մասնագիտացված,*
- *գիտաուսումնական,*
- *շարժական՝ տեսասահիկաշարերի, գործնական աշխատանքների գույքորդմամբ,*
- *թվային տեխնոլոգիաների ներգրավմամբ,*
- *դասախոս – ուսանող փոխընկալմամբ:*

Հայերենի մասնագիտացված ուսումնասիրությունները պարտադիր պետք է կատարվեն լեզվաբան – տնտեսագետ համագործակցությամբ:

Ինչպիսի՞ն պետք է լինեն գործնական աշխատանքները:

Անհրաժեշտ է, որ առաջադրանքները կազմված լինեն հայերենի մասնագիտացված դասախոսությունների հիման վրա, իսկ նյութը հագեցած լինի մասնավորապես տնտեսագիտական բառապաշարով ու տեքստերով: Գործնական աշխատանքների արդյունավետությունը կապված է հանձնարարությունների ճշգրիտ, ժամանակակից և հետաքրքիր պահանջներով, որոնք կնպաստեն ուսանողների կենտրոնացմանն ու դասընթացին ակտիվ ներգրավվածությանը: Արդյունքում ուսանողները ձեռք կբերեն մասնագիտական խոսք կառուցելու հմտություններ և կգարգացնեն իրենց ստեղծարար մտածողությունը:

Գործնական առաջադրանքները տարբերակել ենք՝

1. ըստ կատարման եղանակի՝

- լսարանային
 - արտալսարանային.
- **Լսարանային աշխատանքի օրինակ**

Տրված պատկերների միջոցով կռահել տնտեսագիտական տերմինները:



2. ըստ բովանդակության՝

- տնտեսագիտական (ներառյալ ենթաոլորտները)
- հարակից ոլորտներին վերաբերող (օրինակ՝ սոցիոլոգիա, փիլիսոփայություն).

➤ **Տնտեսագիտական դարձվածքներին վերաբերող օրինակ**
Բնութագրիչ տեքստերի, կապակցությունների օգնությամբ կռահել և բացատրել տնտեսագիտական դարձվածքներն ու կայուն կապակցությունները.

ա) ապրանքների և ծառայությունների համար օրինական հիմունքներով սահմանված առավելագույն գին.

բ) ֆինանսական շուկա, որը բնութագրվում է արժեթղթերի գների հետևողական անկմամբ.

գ) «Անվճար» բարիք գոյություն չունի. ամեն ինչ ամեն դեպքում ենթակա է վճարման:

3. ըստ արտահայտման ձևի

- բանավոր (պրեզենտացիաներ, գրույցներ, քննարկումներ, բանավեճեր)
- գրավոր (էսսեներ, անհատական աշխատանքներ, գործնական գրություններ, գեղարվեստական վերլուծություններ, թեստեր՝ թվային գործիքներով (օրինակ՝ Moodle, Kahoot).

➤ Քննարկման օրինակ

Լսել Մարտին Լյութեր Քինգի «Ես երազանք ունեմ» ելույթը և քննարկել:

4. ըստ անցկացման ձևի՝

- անհատական
- խմբային (թիմային).

➤ Խմբային աշխատանքի օրինակ

Ձևավորել թիմեր, տեսանկարել 1,5-2 ընթացք տևողությամբ գովազդային հոլովակ և ներկայացնել՝

ա) ձեր «հիմնած» բիզնեսը կամ հայկական որևէ արտադրանք.

բ) որևէ ապրանքանիշ՝ պահպանելով մարքեթինգային ռազմավարության հիմունքները (20-30 բառ):

Հետևաբար գործնական աշխատանքները տնտեսագիտական բուհերում պետք է՝

- *կազմվեն մասնավորապես մասնագիտական նյութի հիման վրա,*
- *զարգացնեն ուսանողների ստեղծարար մտածողությունը, մասնագիտական ոլորտում գրագետ խոսք կառուցելու հմտությունները,*
- *իրականացվեն ինտերակտիվ մեթոդներով և նորարար տեխնոլոգիաներով,*
- *ձևավորեն թիմում աշխատելու, համագործակցելու կարողություններ:*

Այսպիսով՝ տնտեսալեզվաբանական մոտեցումը նոր բովանդակությամբ է հարստացնում հայոց լեզվի դասավանդումը տնտեսագիտական բուհերում. լեզվական նորմերին զուգահեռ տնտեսագիտական լեզվի ուսումնասիրությունն ու կիրառումը ոչ միայն բարձրացնում են հայոց լեզվի ուսուցման արդյունավետությունը, այլև խթանում ուսանողների հետաքրքրությունը մայրենիի նկատմամբ:

Եզրակացություն

ՀՀ բուհական համակարգում հայերեն դասավանդել նշանակում է հայերենի լեզվական նորմերը ուսանողներին մատուցել տվյալ ոլորտի մասնագիտական լեզվի, բառապաշարի ուսումնասիրության շրջանակում, այլ կերպ ասած՝ հայերենը դասավանդել որպես մասնագիտական լեզու:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում հայոց լեզվի դասավանդման բովանդակային նոր որակները կրթական ոլորտում կարող են ապահովել հետևյալ արդյունքները.

1. Հայոց լեզվի նկատմամբ հետաքրքրության մեծացում: Հայերենի դասավանդման սույն մոտեցումը նպաստում է ուսանողի այն գիտակցմանը, որ հայերենը ժամանակակից ճկուն գործիք է ոչ միայն հաղորդակցման, այլև մասնագիտական գիտելիքների յուրացման և կիրառման տեսանկյունից:

2. Տնտեսագիտական բառապաշարի համակարգված ուսումնասիրություն: Մասնագիտական լեզվի և բառապաշարի լեզվաբանական ուսումնասիրության շնորհիվ ուսանողները, ձեռք բերելով տնտեսալեզվաբանական գիտելիքներ և հմտություններ, առավել կողմնորոշված և վստահաբար են գործածում տերմինները, ինչը կարևոր է մասնագիտական հաղորդակցման տեսանկյունից:

3. Միջգիտակարգային համագործակցություն: Տնտեսագիտական բուհում սովորող ուսանողներին մատուցվող լեզվական նյութը ուսումնասիրվում է 2 գիտակարգերի՝ լեզվաբանության և տնտեսագիտության հետաքրքրությունների շրջանակում: Այս մոտեցմամբ ուսանողը լեզվական նորմերը սովորում է մասնագիտական նյութերի ուսումնասիրությամբ:

4. Նոր առարկայական ծրագրերի մշակում: Լեզվաբանական մեթոդաբանությամբ մշակված տնտեսագիտական նյութերը կարող են հիմք հանդիսանալ մասնագիտացված այլ բուհերի հայոց լեզվի առարկայական ծրագրերում համապատասխան հետազոտությունների ներառմանը:

Օգտագործված գրականություն

1. Աբազյան Ս., Գևորգյան Լ., Որոշ դիտարկումներ հայերենի դասավանդման մասին. - «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը» հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան, 2024, էջ 152-159:

2. Աղաջանյան Զ., «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա»-ի ուսուցման հիմնահարցերը բուհական համակարգում».- «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը» հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան, 2024, էջ 114-124:

3. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (02.03.2005), ՀՀՊՏ 2005.01.31/8(380) Հոդ.159:

4. Խաչատրյան Լ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., Զանգակ, 2017:

5. Հովհաննիսյան Մ., Հայոց լեզվի ուսուցման հիմնախնդիրները. - Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում, Եր., Տիր, 2021, էջ 157-169:

6. Ղարսյան Ա., Արդի հայերենի տնտեսագիտական փոխառյալ տերմինների գործառական բնութագիրը. - Լեզու և լեզվաբանություն, 2(27), Եր., ԳԱԱ ԼԻ հրատ., 2022թ., էջ 54-69:

7. Ղարսյան Ա., Երկանյան Ա., Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար, Եր., Տնտեսագետ, 2024:

8. Ղարսյան Ա., Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ (դասախոսություններ), Եր., Լուսակն, 2023:

9. Ղարսյան Ա., Արդի հայերենի տնտեսագիտական տերմինների իմաստաբանական դրսևորումները. - Գիտական Արցախ, 1(16), Եր., Արցախ, 2023թ., 79-88: DOI: 10.52063/25792652-2023.1.16-79

10. Մարկոսյան Ա., Դավթյան Տ., Ամենագործածական տնտեսագիտական տերմինների բացատրական բառարան, Եր., Լեզու Պլուս, 2008:

11. Gharslyan, A. (2024). Terminological investigation into the domain of economic phrases. Messenger of ASUE, 3, 106. DOI: 10.52174/1829-0280_2024.3-106.

12. Gibbon E., The History of the Decline and Fall of the Roman Empire. - The History of the Decline and Fall of the Roman Empire, vol. 9, 1776.

13. Horne G., Rethinking the Lumpen: Gangsters and the Political Economy of Capitalism. African American History and Radical Historiography, Marxist Educational Press, 1998, 285.

Gharslyan Anna. - New Approaches to Teaching Armenian in Universities of Economics. - Due to the rapid advancement of global scientific thought, new methodological approaches and strategies are necessary for teaching the Armenian language in higher educational institutions of the Republic of Armenia. Traditional programs and methods are no longer sufficient to maintain students' interest and ensure high-quality learning. Armenian, beyond being an object of linguistic study, should be considered, studied, and taught as the language for special purposes. Therefore, it is essential to carry out studies of the language of instruction in various sciences, using linguistic methodology and involving mandatory collaboration between linguists and subject-matter specialists. This economic and linguistic approach ensures the following outcomes:

- language instructors of Armenian for special purposes,
- profession-oriented lectures developed with the use of linguistic methodology,
- workbooks for practical assignments,
- shaping a new perception of the Armenian language in students' worldview - as a key tool for professional thinking and communication.

Hence, the economic and linguistic approach enriches the teaching of Armenian with new content in universities of economics: alongside linguistic norms, the study and application of economic language not only enhance the effectiveness of Armenian language instruction, but also stimulate students' interest in their mother tongue.

Keywords: economic university, teaching Armenian, economic-linguistic approach, professional language, language norms, lecture, practical work.

Gharslyan Anna, PhD in Philology, Docent Associate Professor, Armenian State University of Economics, Chair of Languages, lecturer.

Карслян Анна. - Новые подходы к преподаванию армянского языка в экономических вузах. - В связи со стремительным развитием мировой научной мысли в высших учебных заведениях Республики Армения необходимы новые методические подходы и стратегии преподавания армянского языка. Традиционные программы и методы уже недостаточны для поддержания интереса студентов и обеспечения высокого уровня эффективности обучения. Армянский язык, помимо объекта лингвистического исследования, должен рассматриваться, изучаться и преподаваться как язык специальности для других научных дисциплин. Следовательно, необходимо проводить исследования языка преподаваемой науки, разработанные на основе лингвистической методологии и при обязательном сотрудничестве лингвистов и специалистов в соответствующей области. Такой экономико-лингвистический подход обеспечивает следующие результаты:

- преподаватели армянского языка для специальных целей,
- лекционные курсы, разработанные на основе лингвистической методологии,
- пособия с практическими заданиями,
- формирование нового восприятия армянского языка в мировоззрении студентов в качестве важнейшего инструмента профессионального мышления и коммуникации.

Таким образом, экономико-лингвистический подход придает преподаванию армянского языка в экономических вузах новое содержание: наряду с языковыми нормами, изучение и использование языка экономической науки не только повышают эффективность преподавания армянского языка, но и стимулируют интерес студентов к родному языку.

Ключевые слова: экономический вуз, преподавание армянского языка, экономико-лингвистический подход, профессиональный язык, языковые нормы, лекция, практическая работа.

Карслян Анна, Кандидат филологических наук, доцент, Армянский государственный экономический университет, кафедра языков, лектор.

**ԿԱՊ ԽՈՍՔԻ ՄԱՍԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԸՍՏ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ**

Ղարիբյան Սուսաննա
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ.
gharibyansusanna01@aspu.am, susannagharibyan75@mail.ru

Բանալի բառեր և բառակապակցություններ. կապը՝ որպես խոսքի մաս, իսկական կապեր, անիսկական կապեր, կապական բառեր, նյութական իմաստի վերացարկում, բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնում:

Կապը՝ որպես խոսքի մաս, ճանաչվել է հայ քերականագիտության վաղնջական շրջանում: Դ. Թրակացու «Քերականական արվեստ»-ի հայերեն թարգմանության մեջ գրված է. «Նախադրություն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի ընդ բարդութեան և բաղդասութեան»: Ելնելով գրաբարի քերականության տերմինաբանությունից՝ աշխարհաբարի առաջին քերականները ևս (Ա. Այտրնյան², Ս. Պալասանյան³, Վ. Չալրիսյան⁴, Ա. Բագրատունի⁵) այս խոսքի մասն անվանում են նախադրություն՝ փոխելով նրա ըմբռնումը:

Ստ. Պալասանյանը և Ա. Այտրնյանը ընդունում են նախադրությունների երեք տեսակ՝

1) Բուն նախադրություններ՝ *համար, պես, հետ, մոտ, չափ, համեմատ, հակառակ, առանց, դեպի, փոխանակ, մինչև, բացի, իբրև,*

2) Գոյականներից առնված նախադրություններ՝ *մեջը, միջին, միջից, միջովը, միջումը, վրա, տակ, ետև, ձեռքով, միջոցով,*

3) Մակբայներից առնված նախադրություններ՝ *առաջ, հետո, ներս, դուրս, հեռու:*

Կապերի ուսումնասիրության ու դասակարգման հարցում նոր մոտեցում է հանդես բերում Մ. Աբեղյանը: Նա իր «Աշխարհաբարի քերականության» մեջ այս խոսքի մասն անվանում է կապ և բնորոշելով որպես կախման հարաբերություններ ցույց տվող բառեր՝ դրանք բաժանում է երեք խմբի՝ իսկական կապեր, անիսկական կապեր, կապական բառեր: Եվ ըստ նրա, թե դրանք կապվող բառից առաջ են դրվում, թե հետո, ընդունում է կապերի երկու տեսակ՝ նախադրություններ և ետադրություններ:

Ժամանակակից հայերենի կապային համակարգին անդրադարձել են նաև Ա. Ղարիբյանը և Գ. Սևակը:

1 **Н. Адонц, Дионисий Фракинский и армянские толкователи,** Петроград, 1915, էջ 30:

2 **Ա. Այտրնեան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի հանդերձ ներածութեամբ և յաւելումով, յօրինեաց Հ. Արսենէ Այտրննու,** Վիեննա, 1866, էջ 118:

3 **Ստ. Պալասանյան, Գործնական քերականություն հայերեն լեզուի,** Թիֆլիս, 1874, էջ 156:

4 **Հ. Վրթանիսի Չալրիսեան, Քերականություն հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբք և յաւելումովք աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ. Այտրնեան,** Վիեննա, 1885, էջեր 148, 178:

5 **Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց ի Հ. Արսենէ Կոմիտասայ Բագրատունույ Մխիթարեան Վարդապետէ,** ի Վենետիկ, 1852, էջ 238:

6 **Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն,** Վաղարշապատ, 1906, էջ 69:

Ա. Ղարիբյանը գրում է. «Այն բառերը, որոնք նախադասության որևէ անդամի վրա դրվելով որոշում են նրա պաշտոնը, կապելով ստորոգյալին, կոչվում են կապ»⁷:

Գ. Սևակը տալիս է կապերի շարահյուսական կիրառության բնորոշումը: «Այն բառերը, որոնք, նախադասության այս կամ այն անդամի վրա դրվելով, ցույց են տալիս նրա պաշտոնը նախադասության մեջ, կոչվում են կապեր»⁸:

Նրանք ևս կապերը բաժանում են երեք խմբի՝ իսկական կապեր, որոնք գործածվում են միմիայն որպես կապ և նյութական բովանդակություն չունեն (*առանց, բացի, մինչև, դեպի* և այլն), անիսկական կապեր, որոնք գործածվում են թե՛ որպես կապ և թե՛ որպես գոյական (*հետ, չափ, դեմ, մոտ, մեջ, տակ, վրա* և այլն), կապական բառեր, որոնք այն գոյականները, ածականները, մակբայներն են, որոնք խոսքի մեջ գործածվում են որպես կապ (*տեղ, առաջ, դիմաց, ժամանակ, հետո, նման, հեռու, համեմատ, համաձայն, պատճառով* և այլն):

Էդ. Աղայանը կապ է անվանում այն բառերը, «որոնք արտահայտում են բառերի հարաբերությունները նախադասության մեջ»⁹:

Ա. Մարգարյանը, իր գրքույկում համառոտ ներկայացնելով կապ խոսքի մասի ըմբռնումը աշխարհաբարի քերականության պատմության մեջ, կապ խոսքիմասային կարգի մեջ է մտցնում այն բառերը, որոնք «ինքնուրույն նյութական բովանդակություն չունեն և գոյային հարաբերության իմաստ են արտահայտում»¹⁰:

Նա այդպիսի կապերն անվանում է իսկական կապեր, իսկ այն բոլոր բառերը, որոնք այլ խոսքի մասի իմաստ ունեն, բայց կարող են գործածվել և կապի նշանակությամբ, հանում է կապ խոսքիմասային համակարգից՝ այսպիսով նեղացնելով կապի խոսքիմասային շրջանակները:

Ժամանակակից հայերենի կապային համակարգի մասին ամբողջական գաղափար է տալիս Վ. Առաքելյանը «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները»¹¹ աշխատության մեջ:

Զուգահեռ անցկացնելով հոլովական ձևերի և կապերի արտահայտած հարաբերությունների միջև՝ նա կապերը բաժանում է երկու խմբի՝ իսկական և անիսկական՝ վերջիններիս մեջ ներառելով նաև կապական բառերը, որոնք, «կիրառվելով իբրև այլ խոսքի մաս, արտահայտում են իրենց կոնկրետ նյութական նշանակությունը, իսկ իբրև կապ կիրառվելով՝ հավասարաչափ դառնում են ձևական բառեր»¹²:

Կապ խոսքի մասն առավել մանրակրկիտ և հանգամանալից է ուսումնասիրել ակադեմիկոս Ս. Աբրահամյանն իր «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը»¹³ աշխատության մեջ:

⁷ Ա. Ղարիբյան, *Հայոց լեզու, դասագիրք 5-7-րդ դասարանների համար*, Ե., 1956, էջ 280:

⁸ Գ. Սևակ, *Հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 1956, էջ 93:

⁹ Է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Ե., 1959, էջ 366:

¹⁰ Ա. Մարգարյան, *Արդի հայերենի կապերը*, Ե., 1955, էջ 16:

¹¹ Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները*, Ե., 1957:

¹² Վ. Առաքելյան, *նշվ. աշխ.*, էջ 177-182:

¹³ Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը*, Ե., 1959:

Ներկայացնելով ժամանակակից հայերենի կապերի ուսումնասիրության համառոտ պատմությունը և ցույց տալով դրանց մեջ եղած անճշտությունները՝ Ս. Աբրահամյանը կապերը բնորոշում է որպես «վերաբերական իմաստ ունեցող բառեր, որոնք, դրվելով այլ բառերի (գոյականների, առարկա նշանակող դերանունների, գոյականաբար գործածված բառերի) վրա, ցույց են տալիս նրանց ստորադասական, լրացական հարաբերությունները և դրանով իսկ կապում գերադաս անդամի հետ»¹⁴:

Կապային կիրառություն ունեցող բառերը լեզվաբանը բաժանում է երեք խմբի՝ իսկական կապերի, որոնք նյութական իմաստից գուրկ են և միշտ գործածվում են իբրև կապ՝ **ի, առ, քստ, դեպի, համար** և այլն, անիսկական կապերի, որոնց խոսքիմասային իմաստն արդեն երկփեղկված է, և նյութական իմաստի կողքին հավասար կամ առավել չափով հանդես է գալիս նաև կապային իմաստ՝ **մոտ, վրա, մեջ, շուրջ, անց, դիմաց, առջև** և այլն, կապական բառերի, որոնք թեև գործածվում են կապի գործառույթով, բայց նրանց իմաստի մեջ իշխողը նյութական իմաստն է՝ **ժամանակ, վերև, ներքև, դուրս, պատճառով** և այլն:

Կապերն ունեն քերականական իմաստ, և նրանց դերը խոսքի մեջ շարահյուսական է: Սրանք, լինելով բառերի կապակցության ձևերից մեկը, ցույց են տալիս, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում գոյականը, գոյականաբար գործածված բառերը, առարկայական իմաստ ունեցող դերանունները գերադաս բառի նկատմամբ: Կապերի այդ դերը զգալի չափով նման է հոլովների դերին: Այսպես՝ Խոսում էին *անցյալի մասին*: Խոսում էին *անցյալից*:

Սակայն կապերի մեծ մասն արտահայտում է այնպիսի հարաբերություններ, որոնք միայն հոլովներով հնարավոր չէ արտահայտել, ինչպես՝ **առ, բացի, օրոք, նախքան, տակ, հետ** և այլ կապերը:

Թե՛ կապերը և թե՛ հոլովական վերջավորությունները, դրվելով բառի վրա, ցույց են տալիս նրանց հարաբերությունները գերադաս բառի նկատմամբ: Կատարելով նույն գործառույթը՝ կապերն ու հոլովները, սակայն, իրարից տարբերվում են: Կապերը բառեր են, ունեն իրենց բառային ձևավորումն ու իմաստը և մտնում են լեզվի բառապաշարային համակարգի մեջ, իսկ հոլովական վերջավորությունները քերականական մասնիկներ են, որոնք անկախ գործածություն չունեն և առանձին վերցրած իմաստ չեն արտահայտում: Հոլովների արտահայտած հարաբերություններն ավելի ընդհանուր են ու վերացական, քան կապերի արտահայտած հարաբերությունները¹⁵:

Կապերը հարաբերակից են ոչ միայն հոլովներին, այլև նյութական իմաստ ունեցող շատ բառերի, որովհետև կապերն ընկալվում են նաև խոսքից, նախադասությունից դուրս, օրինակ՝ **բացի, առանց, դեպի, մինչև, վրա, տակ, մեջ, առաջ** և այլն:

Կապերի՝ նյութական խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցությունը բխում է կապի խոսքիմասային բնույթից: Կապերն առաջացել են տարբեր խոսքի մասերից՝ մեծ մասամբ գոյականներից՝ **մեջ, տակ, վրա, դեմ, հետ, չափ, տեղ, առաջ, շուրջ** և այլն, ածականներից՝ **համեմատ, համաձայն, առընթեր, նման** և այլն, մակբայներից՝ **հետո, մոտ,**

¹⁴ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 73:

¹⁵ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 70-71:

վեր, հանդիման, հանդեպ, իբրև, մինչև, ներքո և այլն, համեմատաբար քիչ չափով՝ *բայերից՝ վերաբերյալ, անց, զատ, չնայած* և այլն:

Որոշ կապերի՝ նյութական իմաստից առաջանալը ակնհայտ է, մի մասինն էլ պատմական ուսումնասիրությամբ է պարզվում: *Ի, առ, ընդ, ըստ, զ* գրաբարյան նախդիրները, որոնք բոլորն էլ, բացի *զ*-ից, գալիս են հնդեվրոպական նախալեզվից, այս կամ այն չափով գործուն են արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում և բարբառներում¹⁶:

Անցնելով պատմական զարգացման երկար ուղի՝ այս նախդիրները լիովին զրկվել են նյութական իմաստից: Սրանց շատ կիրառություններ միացել են բառերին և վերածվել բառակազմական մասնիկի՝ *ի օգուտ > հօգուտ, ի անուն > հանուն, առհասարակ, օրրստօրե* և այլն: Որոշ դեպքերում եթե չեն էլ կցվել բառին, բայց զրկվել են ինքնուրույնությունից և հանդիսանում են բաղադրյալ բառի բաղկացուցիչ մասը՝ *ի վերջո, ի ծնե, ի հեճուկս, ըստ այսմ, ընդ որում, մեկ առ մեկ* և այլն: Այս կապերից համեմատաբար գործուն են *ի*-ն և *ըստ*-ը: Օրինակ՝ *ի բարօրություն, ի տարբերություն, ըստ օրենքի, ըստ սովորության* և այլն: *Առ*-ը այժմ գործուն է մակբայների կազմության մեջ՝ *մեկատմեկ, ժամառժամ: Առ* նախդիրը գործածվում է նաև գրասենյակային խոսքի մեջ՝ *առ այն, առ 1-ը նոյեմբերի*¹⁷:

Ս. Աբրահամյանը կապային կիրառություն ունեցող բառերն ըստ կազմավորման աստիճանի բաժանում է երեք խմբի՝

1. իսկական կապեր, որոնք գուրկ են նյութական իմաստից և հանդես են գալիս միայն որպես կապ՝ *ի, ըստ, առ, մասին, առանց, բացի, դեպի, իբրև, համար, հանուն, հանդերձ, հանդեպ, օրոք, շնորհիվ, առթիվ, նկատմամբ, վերաբերմամբ, վերաբերյալ, մինչև, միջև, նախքան, ներքո* և այլն,

2. անիսկական կապեր, որոնց խոսքիմասային իմաստն արդեն երկփեղկված է, և նյութական իմաստի կողքին հավասար կամ առավել չափով հանդես է գալիս նաև կապային իմաստ՝ *մոտ, վրա, մեջ, տակ, շուրջ, դեմ, անց, դիմաց, առաջ, առջև, չափ, տեղ, հետո, միջոցին, համաձայն, համեմատ, հակառակ, նայած, չնայած* և այլն,

3. կապական բառեր, որոնք թեև գործածվում են կապի գործառույթով, բայց նրանց իմաստի մեջ իշխողը նյութական իմաստն է՝ *ժամանակ, վերև, ներքև, ներս, դուրս, հեռու, կից, զուգընթաց, պատճառով, միջոցով, ձեռքով, զծով, անունով, անունից, կողմից, համապատասխան, հավասար, ընթացքում, նպատակով, հետևանքով* և այլն:

Լեզվաբանն այս երեք խմբերից առաջին երկուսը՝ իսկական և անիսկական կապերը, համարում է կապեր, իսկ կապական բառերը դուրս են մնում կապի՝ որպես խոսքի մասի, համակարգից¹⁸:

Բառերի խոսքիմասային անցումները տեղի են ունենում մեծ մասամբ նրանց շարահյուսական կիրառությունների հիման վրա և կատարվում են երկու եղանակով՝

ա) նյութական իմաստի վերացարկմամբ (*մեջ, դեմ, շուրջ, չափ, նման* և այլն),

¹⁶ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1926-1935, հ.1, էջ 381-382, հ.2, էջ 883, հ.3, էջ 56, հ.6, էջ 1035:

¹⁷ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 74:

¹⁸ Նույն տեղում, էջ 82:

բ) բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնման կամ քարացման հետևանքով (*առթիվ, հանուն, դուրս* և այլն):

Մեր լեզվի բառապաշարի հիմնական մասը ժամանակակից հայերենին է անցել գրաբարից: Գրաբարում կան բառեր, որոնց ձևաբանական արժեքը երկփեղկված է տարբեր խոսքի մասերի միջև: Սրա ակունքները գալիս են, թերևս, լեզվի զարգացման նախագրային շրջանից, երբ միևնույն քերականական ձևով արտահայտվում էին մեկից ավելի քերականական իմաստներ:

Հայերենի զարգացման տարբեր գոյավիճակներից քաղված բնագրային նյութի հիման վրա ներկայացնենք կապերն ըստ կազմավորման ուղիների:

I Այսպես՝ *տեղ, չափ, տակ, համար, ժամանակ, հանդերձ, փոխանակ, փոխարեն* կապերն առաջացել են գոյականներից՝ նյութական իմաստի վերացարկմամբ:

Այսպես՝ *ժամանակ* կապը, որն արտահայտում է «դեպքում, պարագայում, օրոք» իմաստները, առաջացել է *ժամանակ* գոյականից:

Հմտ. գրաբարում. Եւ եթէ էր *ժամանակ*՝ յորժամ զի հիւղն չէր, ապա չգոյր *ժամանակ* յորում էր անարատ (Եզն., 33), - գոյ.:

Ի *ժամանակի* վախճանին Տրդատայ հանդիպեցաւ մեծն Վրթանէս (Խոր., 258), - նխոր.:

Ժամանակակից հայերենում. *ժամանակ* անցավ, նրանք էլ անցան,

Զըվարթ երգերըս վըշտալի դարձան (ՀԹ, I, 15), - գոյ.:

Հենց էդ խոսակցության *ժամանակ* ներս մտավ Գիքորը (ՀԹ, III, 44), - կապ:

Հանդերձ կապը՝ «հետ, միասին, հանդերձ» իմաստներով, առաջացել է *հանդերձ* գոյականի «զգեստ, հագուստ» նյութական իմաստի վերացարկման ուղիով:

Հմտ. գրաբարում. Արկցին զանձամբք իւրեանց *հանդերձս* (Ագաթ., 116), - գոյ.:

Հանդերձ թագավորան սկսան աղաչել զտուրբ կաթողիկոսն Սահակ (Փարպ., 16), - նխոր.:

Ժամանակակից հայերենում. Նորա *հանդերձ* պատառ-պատառ,

Չունի շապիկ յուր հագին (ԺՀԲԲ), - գոյ.:

Քո ժողովրդով *հանդերձ* կմերժեք և կվանեք չարանենգ հրամանը (ԴԴ, 251), - կապ:

II Ժամանակակից հայերենի մի շարք կապեր էլ առաջացել են գոյականի թեք հոլովաձևերի և բայի խոնարհված ձևերի բառական ու քերականական իմաստի մթագնման ու քարացման ուղիով:

Ա. Գրաբարյան տրական հոլովաձև > կապ:

Ժամանակակից հայերենի *մասին* կապը՝ «վերաբերմամբ, նկատմամբ» իմաստներով, առաջացել է *մասն* գոյականի տրական հոլովաձևից՝ բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնման ուղիով:

Հմտ. գրաբարում. Զի սակաւ ինչ *մասն* նորա բաւական եղև ընդունել զամենայն զնա (Եզն., 23), - գոյ.:

Ժամանակակից հայերենում. Մերոքը սասունցի հայդուկների մի *մասին* զինեց իր քերած հրացաններով (ՄՊ, 184), - գոյ.:

Փողի *մասին* ավելորդ է,

Մեր մեջ խոսելն էլ ամոթ է (ՀԹ, I, 265), - կապ:

Ղիմաց կապը՝ «դեմուդեմ, հանդեպ, առաջ, նկատմամբ, փոխարեն» իմաստներով, առաջացել է **դեմք** գոյականի («1. դեմք, երես, 2. դիմացի կողմը») գրաբարյան տրական հոլովաձևից՝ բառիմաստի մթագնման ուղիով:

Հմմտ. գրաբարում. Ասաց մարգարեն ի **ղիմաց** Տեառն (Ագաթ., 174), - գոյ.:

Ժամանակակից հայերենում. Լուռ գիշերին մտքիս **ղիմաց**

Շատ ստվերներ ժողվեցան (ԱԻ, 85), - կապ:

Բ. Ժամանակակից հայերենի տրական հոլովաձև > կապ:

Միջոցին, պահին, օգտին կապերն առաջացել են ժամանակակից հայերենի **միջոց, պահ, օգուտ** գոյականների տրական հոլովաձևերից՝ բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնման հետևանքով:

Այդ **միջոցին** հայոց երիտասարդ դյուցազունները թաքնվում էին Աշտիշատի դիցանվեր անտառի մթին ծառաստանի մեջ (Ը, 14), - գոյ.:

Նա ձիու սանձը հանեց բերանից, որ լողալու **միջոցին** ազատ շունչ առնե (Ը, 10), - կապ:

Իբրև ջերմ ներշնչանք ու հղացում հարուստ

Այցելում են նրանք հենց այդ **պահին** հանկարծ (ՊՍ, Ա, 5), - գոյ.:

... Չախ թևում, եթե սպարապետը հարվածը հասցնի նրա Արտազն անցնելու **պահին** (ԴԴ, 100), - կապ:

Գ. Ժամանակակից հայերենի բացառական հոլովաձև > կապ:

Բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնման ուղիով գրաբարյան **ձեռն** գոյականի բացառական հոլովաձևից է առաջացել **ի ձեռաց** նախադրությունը գրաբարում, **ձեռքից** կապը՝ ժամանակակից հայերենում:

Հմմտ. գրաբարում. Կտրել և ի բաց հանել զերկաթսն **ի ձեռաց** ... սրբոցն (Փարպ., 91), - գոյ.: Ապրել քեզ չիք հնար այսօր **ի ձեռաց** մերոց (Բուզ., 299), - նխդր.:

Ժամանակակից հայերենում.

Հասմիկն երագում աղավնի դառավ,

Աղավնի դառավ՝ իմ **ձեռքից** թըռավ (ՀԹ, II, 76), - գոյ.:

Ինձ անսահման բախտավոր պիտի համարեի այդ օրը, երբ, վերջապես, ազատվել էի անխիղճ տերտերի **ձեռքից** (Շ, 97), - կապ:

Այդպես նաև **կողմ, երես** գոյականների բացառական հոլովաձևերից են առաջացել ժամանակակից հայերենի **կողմից, երեսից** կապերը:

Կկարծեիր, թե **երեսից** լեղի էր թափում (Ը, 5, 20), - գոյ.:

Իմ տղան էլ նրա **երեսից** բռնվեց (ՍԶ, 4, 88), - կապ:

Դ. Գրաբարյան գործիական հոլովաձև > կապ:

Ժամանակակից հայերենի **շնորհիվ, առթիվ** կապերըն առաջացել են **շնորհ, առիթ** գոյականների գրաբարյան գործիական հոլովաձևերից:

Հմմտ. գրաբարում. **Շնորհիւ** ողորմութեամբն Քրիստոսի լի էք ամենայն զօրութեամբ եւ լաւութեամբ (Փարպ., 51), - գոյ.:

Ժամանակակից հայերենում.

Քո **շնորհիվ** հրրեդեն եմ, թևավոր,

Աշխարհն իմն է, գլխիս տերն եմ ու հզոր (ԱԻ, 139), - կապ:

Ե. Ժամանակակից հայերենի գործիական հոլովածն > կապ:

Բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնման ուղիով գոյականների գործիական հոլովածներից են առաջացել ժամանակակից հայերենի **անունով, ձեռքով, միջոցով, պատճառով, պայմանով, հետևանքով, կապակցությամբ** կապերը:

Ձեռն գոյականի գործիական հոլովածներից ժամանակակից հայերենում առաջացել է **ձեռքով** կապը՝ «միջոցով» իմաստով:

Նա ցած իջավ ձիուց, **ձեռքով** փայփայեց կապուտակի գեղեցիկ բաշը (Ը, 10), - գոյ:

Փոփոխվում էր ընդմիջտ նա ամեհի

Այն թշնամու **ձեռքով** դաժան (ՊՍ, Ա, 36), - կապ:

Ես մի ընկեր ունեի՝ Լիպո **անունով** (ԺՀԲԲ), - գոյ.:

Խոստացել են նոքա իրենց երբեք չեղյալ

Փառապանձ անցյալի **անունով** (ԵՉ, 35), - կապ:

Զ. Ժամանակակից հայերենի ներգոյական հոլովածն > կապ:

Ժամանակակից հայերենի **գործում, ընթացքում, դեպքում** կապերն առաջացել են **գործ, ընթացք, դեպք** գոյականների ներգոյական հոլովածներից:

Առօրեական մեր հոգսերում ու մեր **գործում**

Կար մի իմաստ, կար մի խորհուրդ անբռնելի (ՊՍ, Ա, 180), - գոյ.:

Գևորգին շատ օգնեցին Հալեպից գենք ու զինամթերք փոխադրելու **գործում** (ՍՊ, 85), - կապ:

Հովիվյանը **ընթացքում** գնդակը խփեց հակառակորդի ցանցը (ԺՀԲԲ), - գոյ.:

Վեճի **ընթացքում** նա լուռ նստած էր (ԺՀԲԲ), - կապ:

Է. Նախդրիվ բառաձևեր:

Ժամանակակից հայերենի կապերի մի մասն էլ առաջացել է գրաբարյան նախդրիվ բառաձևերից: Անցնելով պատմական զարգացման երկար ուղի՝ **ի** նախդիրը լիովին զրկվել է նյութական իմաստից և վերածվել բառակազմական մասնիկի: Այդպես են առաջացել **դեպի, բացի** կապերը:

Այսպես՝ ժամանակակից հայերենի **բացի** կապը՝ «զատ, առանց» իմաստով, առաջացել է գրաբարյան **բաց ի** նախդրիվ բառաձևից:

Հմմտ. գրաբարում. Մի է Աստուած, եւ չիք այլ ոք **բաց ի** նմանէ (Եղ., 29), - նխդր.:

Ժամանակակից հայերենում.

Եվ **բացի** խինդից և առատ բերքից,

Մեկ-մեկ էլ մարդու... հոգսերից երգի (ՊՍ, Ա, 194), - կապ:

Չայնավորով սկսվող բառերից առաջ **ի** նախդիրը, դառնալով **յ**, միացել է բառի արմատին՝ **ի անուն > յանուն, ի օգուտ > հօգուտ, ի անձին > հանձին**: Այսպես՝ **անուն** գոյականի գրաբարյան **ի անուն > յանուն** ձևից է առաջացել ժամանակակից հայերենի **հանուն կապը**՝ «նպատակով, հօգուտ մի բանի» իմաստով:

Հմմտ. գրաբարում. **Յանուն** նորա կոչի ազգն Վարաժնունի (Խոր., 128), - գոյ.:

Եւ աշխարհն **յանուն** քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Ադուանք (Խոր., 113), - նխոր.:

Ժամանակակից հայերենում. Պատվեր տըվինք մեր բանակին,

Հանուն արդար ու սուրբ ռիսի

Մըսնի հողը մեր ոստիսի (ՀԹ, I, 332), - կապ:

Անձն գոյականի գրաբարյան նախորիվ բառաձևից է առաջացել ժամանակակից հայերենի **հանձին** (ի(=յ)+անձին) կապը՝ «ի դեմս» իմաստով:

Հմմտ. գրաբարում. Յորում ոչ ոք այսպիսի իրաց փոյթ **յանձին** ունէր (Խոր., 47), - գոյ.:

Ժամանակակից հայերենում. Առաջարկեց օրվա հոբէյարի՝ քաղխորհրդի կենացը, **հանձին** նրա նախագահի (ՍԶ, 4, 320), - կապ:

Բաղաձայնով սկսվող բառերից առաջ **ի** նախորիը հանդես է գալիս անջատ՝ **ի դեմս, ի փառս, ի հեճուկս, ի տրիտուր, ի հաշիվ, ի նշան, ի պատիվ, ի սեր, ի վեր, ի վար** և այլն:

Զրկված անգամ հուսո գանձից

Ի դեմս ամեն բարեկամի

Լոկ տեսնելով ծախու կավատ (ՊՍ, Դ, 219), - կապ:

Եվ ապրելին չապրվի

Ի հեճուկս... չգիտեմ ում (ՊՍ, Զ, 217), - կապ:

III Գոյական > կապ՝ մակբայների միջնորդությամբ:

Մի շարք կապեր էլ (**դուրս, շուրջ, մեջ, առաջ, դեմ, հետ, վրա**) առաջացել են գոյականներից մակբայների միջնորդությամբ:

Հմմտ. գրաբարում. Եւ զարմացան ամենայն իշխանքն, որ **շուրջն** կային (Խոր., 151), - գոյ.: Տայր պատերազմ **շուրջ** ընդ ամ թշնամին իւր (ՆՀԲ), - մկբ.:

Ժամանակակից հայերենում ևս **շուրջ** բառը «շուրջբոլորը» իմաստով գոյական է:

Լեռների գլխին բյուրեղյա պսակ,

Շուրջը ամպերի երամն է լողում (ԱԻ, 205), - գոյ.:

Շուրջ գոյականից առաջացել է **շուրջ** մակբայը՝ «մոտ, մոտավորապես» իմաստով:

Մինչև մերկանար

Պիտի անցնեին **շուրջ** 365 օրեր (ՊՍ, Դ, 288), - մկբ.:

Հետագայում բառիմաստի նեղացման հետևանքով **շուրջ** բառը ձեռք է բերել «շուրջը, բոլորքը» իմաստները և անցել է սպասարկու բառերի շարքը՝ դառնալով կապ:

Եւ գային պահ արկանէին **շուրջ** զԱնգեղ զամուր բերդան (Բուգ., 120), - նխոր.:

Խարույկի **շուրջ**, հովիվների, հոտի քով

Սերս երգեմ՝ քաղցր շվին ծոր տալով (ԱԻ, 138), - կապ:

Մեջք գոյականի **մեջ** արմատից է առաջացել **մեջ** մակբայը, որը որպես հարադիր բառ հանդես է գալիս կայուն կապակցություններում: **Մեջ** մակբայից էլ նյութական իմաստի վերացարկման հետևանքով առաջացել է **մեջ** կապը՝ «միջև» իմաստով:

Հմմտ. գրաբարում. Շատ ցաւեցուց **զմեջք** փափուկ օրիորդին (Խոր., 179), - գոյ.:

Ի **մեջ** առեալ շուրջ զնոքօք պատեալ ծովանային (Փարպ., 72), - մկբ.:

Տերն փառաց բնակէ ի **մեջ** նոցա (Փարպ., 33), - նխոր.:

Ժամանակակից հայերենում. Լառ-Մարգարին թվում էր, թե երկինքը մի հսկա դաշտ է, *մեջը* լի լեղակած ջուր (ԱԲ, 98), - գոյ.:

- Չէ՛, վարողինն է, - *մեջ* է մտնում հողատերը (ԺՀԲԲ), - մկբ.:

Երգ ասելով քաղ եմ անում

Մարգերի *մեջ* ցողափայլ (ՀԹ, I, 37), - կապ:

IV Ածական > կապ՝ մակբայների միջնորդությամբ:

Հեռու բառը գրաբարում ուներ «1. ած. տեղով կամ ժամանակով հեռու, հեռավոր, 2. մկբ. որոշ հեռավորության վրա, 3. նխդր. մի բանից հեռու, ազատ» իմաստները: Նյութական իմաստի վերացարկման հետևանքով *հեռու* ածական // մակբայից ժամանակակից հայերենում առաջացել է *հեռու* կապը:

Հմտ. գրաբարում. Արշակ և ամենայն զօրք իւր տաղտապէին երթալ *զհեռի* ճանապարհն (Բուզ., 113), - ած.: Այդ պատասխանիք ձեր ի նամակէն... շատ *հեռի* են և աննմանք (Փարպ., 48), - մկբ.: Տայր հրաման... տանել գնուսա *հեռի* ի քաղաքէն յանկոյի և յանապատ տեղի (Փարպ., 88), - նխդր.:

Ժամանակակից հայերենում. Պանդխտելով ավեր խորթ ու *հեռու*,

Վերադարձի հույսը... մի՛ք էր թվում (ՊՍ, Ա, 33), - ած.:

Քամին կերգե գաղտնի երգեր

- Միտքս *հեռու* կը սլանա (ԱԻ, 47), - մկբ.:

Մի շքեղ երագ, որով նա կապրի

Աշխարհից *հեռու*, բյուրեղ բարձունքում (ԱԻ, 146), - կապ:

V Մակբայ > կապ:

Որոշ կապեր էլ (*մոտ, հետո, հեռու, հանդիման, ընդառաջ, ընդդէմ, մինչև, իբրև, ներքո, ներքև, վեր, վերև*) առաջացել են անմիջապես մակբայներից:

Այսպես՝ *հետո* բառը գրաբարում ուներ «1. մկբ. ապա, այնուհետև, 2. նխդր. հետը, հետևից, հետևում» իմաստները: Ժամանակակից հայերենում *հետո* մակբայից առաջացել է *հետո* կապը:

Հմտ. գրաբարում. *Յետոյ* բղխեալ եռացեալ յերկրէ ամենայն չորքոտանեաց ազգ (Ագաթ., 135), - մկբ.: Ունկն դներ առ դրան խորանին, քանզի *յետոյ* նորա կայր (ՆՀԲ), - նխդր.:

Ժամանակակից հայերենում. *Հետո* չասեք՝ թե մենք քրնած –

Դավիթ գող-գող եկավ, գնաց (ՀԹ, II, 125), - մկբ.:

Տարիներ *հետո* քեզ տեսա նորից

Միրոս արտասվեց, բայց ժպտացի ես (ԱԻ, 197), - կապ:

Հենվելով կապերի պատմական քննության վրա՝ Ս. Աբրահամյանը հավաստում է, որ կապերը ինքնին նախադասության անդամ չեն դառնում: Նրանք հանդես են գալիս գոյականների, դերանունների (ոչ բոլոր), գոյականաբար գործածվող ու հոլովվող այլ բառերի ու մի քանի մակբայների հետ և որպես կապվող բառեր՝ նրանց հետ միասին դառնում են նախադասության անդամ՝ արտահայտելով զանազան հարաբերություններ՝ տարածական, ժամանակային, ձևի, չափի, նպատակի և այլն: Ապա բնագրային համապատասխան օրինակներով լեզ-

վաբանը ներկայացնում է կապերի տեսակներն ըստ իրենց արտահայտած հարաբերության բնույթի՝

1. տարածական՝ *առաջ, առջև, դեմ, դեպի, դիմաց, դուրս, ի վեր, ի վար, կից, հանդեպ, հեռու, մեջ, միջև, մոտ, ներքո, ներքև, շուրջ, վեր, վերև, վրա, տակ, քով* և այլն,
2. ժամանակային՝ *անց, անցած, առաջ, ի վեր, հետո, մեջ, մինչև, միջոցին, մոտ, նախքան, պահին, պես, օրոք* և այլն,
3. վերաբերության՝ *առթիվ, գծով, հանդեպ, հասցեին, մասին, շուրջ, վերաբերյալ, ուղղությամբ, կապակցությամբ, նկատմամբ,*
4. բացառման և զիջման՝ *առանց, բացի, բացառությամբ, դուրս, զատ, ի հեճուկս, հակառակ, հանդերձ, նայած, չնայած, չնայելով, չհաշված, փոխարեն, փոխանակ, տեղ,*
5. հիմունքի և պատճառի՝ *առթիվ, երեսից, համար, հետևանքով, ձեռքից, շնորհիվ, պատճառով, ըստ, կապակցությամբ, համաձայն,*
6. բացահայտման՝ *իբրև, որպես,*
7. նպատակի՝ *համար, հանուն, ի, օգտին, հօգուտ, նպատակով,*
8. ձևի՝ *պես, նման,*
9. չափի՝ *ավել, ավելի, քան, մինչև, չափ,*
10. ընդդիմության՝ *դեմ, ընդդեմ, դեմ հանդիման, ի հեճուկս, հանդիման,*
11. միասնության՝ *հետ, հանդերձ:*

Լեզվաբանը հավաստում է, որ կապերը հոլովառու բառեր են և պահանջում են որոշակի հոլովով դրված կապվող բառ: Կապերի հոլովառությունը և կապվող բառերի նկատմամբ նրանց բռնած դիրքը, տեղն ու բնույթը պայմանավորված են մի կողմից լեզվի քերականական կառուցվածքի առանձնահատկություններով, իսկ մյուս կողմից՝ կապերի արտահայտած հարաբերություններով ու նշանակությամբ: Այսպես՝

1. ուղղական հոլովի հետ գործածվող կապերն են՝ *իբրև, որպես,*
2. սեռական հոլովի հետ գործածվող կապերն են՝ *առաջ, առջև, առթիվ, դեմ, դիմաց, երեսից, կողմից, հետ, համար, ձեռքից, մասին, մեջ, միջոցով, մոտ, ներքո, նպատակով, շուրջ(ը), շնորհիվ, չափ, պատճառով, պես, վերաբերյալ, վրա, տակ, փոխարեն* և այլն,
3. տրական հոլովի հետ գործածվող կապերն են՝ *առանց, զուգընթաց, ընդառաջ, ընդդեմ, ի դեմս, ի փառս, ի նշան, կից, հանուն, հակառակ, համաձայն, հանձին(ս), հօգուտ, նայած, չնայած* և այլն,
4. հայցական հոլովի հետ գործածվող կապերն են՝ *առ, դեպի, ի, իբրև, ի վար, ի վեր, մինչև, նախքան, չհաշված* և այլն,
5. բացառական հոլովի հետ գործածվող կապերն են՝ *անկախ, առաջ, բացի, դուրս, զատ, վեր, հեռու, հետո, ներքև, սկսած, վերև, վեր* և այլն,
6. գործիական հոլովի հետ գործածվող կապերն են՝ *հանդերձ, միասին, մեկտեղ:*

Ըստ կապվող բառի նկատմամբ ունեցած շարադասության՝ կապերը լինում են՝

1. նախադրություններ՝ *առ, առանց, դեպի, ըստ, ի, ի դեմս, իբրև, ինչպես, որպես, բացառությամբ, ի սեր, ի հաշիվ, ի փառս, ի նշան, ի հեճուկս, ի տրիտուր, հանձին, հանուն, հօգուտ, մինչ, մինչև, նախքան, չնայած, ց, քան,*

2. հետադրություններ՝ *առաջ, առթիվ, առջև, դեմ, դիմաց, կողմից, համար, հետ, հետո, հետևանքով, մասին, մեջ, միջոցով, միջև, մոտ, չափ, ներքո, ներքև, նկատմամբ, նման, նպատակով, շուրջ, պատճառով, պես, վերաբերմամբ, վերաբերյալ, վրա, տակ, տեղ, օրոք,*

3. երկդրություններ՝ *բացի, շնորհիվ, համաձայն, անկախ, նայած, սկսած, հակառակ, համապատասխան:*

Այսպիսով, մեր լեզվի բառապաշարի հիմնական մասը գրաբարից է գալիս, և գրաբարյան իմաստափոխությունները ժառանգորդաբար անցել են ժամանակակից հայերենին: Քերականական իմաստ արտահայտող չթեքվող խոսքի մասի՝ կապի խոսքիմասային համակարգը հարստացել է նյութական խոսքի մասերի նյութական իմաստի վերացարկման և բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնման ուղիով:

Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից կապերի են անցնում այն բառերը, որոնց մեջ այս կամ այն չափով առկա է հարաբերության իմաստ, որի շնորհիվ նրանք նախադասության մեջ կարող են գործածվել որպես կապ: Լեզվի պատմական զարգացման ընթացքում նյութական իմաստ ունեցող այս կամ այն բառը զրկվում է իր հիմնական իմաստից, նրա առարկայական նշանակությունը վերացարկվում է, և այն փոխանցվում է ոչ նյութական խոսքի մասի՝ կապի:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906:
2. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959:
3. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1959:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926-1935:
5. Այտրնեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ և յաւելուածով, յօրինեաց Հ. Արսենէ Այտրննու, Վիեննա, 1866:
6. Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957:
7. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց ի Հ. Արսենէ Կոմիտասայ Բագրատունոյ Մխիթարեան Վարդապետէ, ի Վենետիկ, 1852:
8. Հ. Վրթանիսի Չալրիսեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուածովք աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ.Այտրնեան, Վիեննա, 1885:
9. Ղարիբյան Ա., Հայոց լեզու, դասագիրք 5-7-րդ դասարանների համար, Երևան, 1956:
10. Մարգարյան Ա., Արդի հայերենի կապերը, Երևան, 1955:
11. Պալասանյան Ս., Գործնական քերականություն հայերեն լեզուի, Թիֆլիս, 1874:
12. Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1956:

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

Ագաթ. - Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

ԱԻ - Ավետիք Իսահակյան, Բանաստեղծություններ, I հատոր, Երևան, 1950:

Բուզ. - Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1987:

Եղ. - Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Եզն. - Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

ԵԶ - Եղիշէ Չարենց, Երկեր, Երևան, 1955, 1985:

ԺՀԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1969-1980:

Խոր. - Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

ՀԹ - Հովհաննէս Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, հհ. I, II, III, (1940-1951), VI (1959):

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ Վենետիկ, 1836-1837,

Շ - Շիրվանզադէ, Պատմվածքներ, (Համաշխարհային գրականություն պատանիների համար), Երևան, 1989:

ՊՍ - Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, հհ. 1-4, 6, Երևան, 1972-1976,

Բ - Բաֆֆի, Սամվել, Երևան, 1984:

ՍԶ - Ստ. Ջորյան, Երկերի ժողովածու, Երևան, 1-10 հհ, 1960-1964:

ՍՊ - Ս. Պողոսյան, Կ. Պողոսյան, Ինձ բահ տվեք..., Երևան, 1990:

Փարպ. - Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

Gharibyan Susanna - Observation prepositions in theory of S. Abrahamyan "Indeclinable parts of speech of the modern Armenian language". - In our article, we present an analysis of the preposition as a part of speech based on S. Abrahamyan's work "Non-declinable Parts of Speech in Modern Armenian."

The author provides a brief overview of the study of prepositions in modern Armenian and thoroughly examines the preposition as a part of speech, classifying types of prepositions according to their degree of formation, meaning, government properties, and syntactic relation to the connected word.

The rich factual material of S. Abrahamyan's work is supported by relevant examples that are instructive and easily comprehensible for learners.

A significant part of the Armenian vocabulary originates from Classical Armenian (Grabar), and the semantic changes of Grabar have been inherited by Modern Armenian.

The grammatical system of the preposition, as a non-declinable part of speech expressing grammatical meaning, has been enriched through the abstraction of the concrete meaning of nominal parts of speech and the blurring of lexical and grammatical meaning in word forms.

Based on textual material from different historical stages of the Armenian language, we also present our observations on the ways prepositions develop and their semantic classifications.

Key words and phrases. The preposition as a service part of speech, types of prepositions, abstraction of the concrete meaning of nominal parts of speech and the blurring of lexical and grammatical meaning in word forms.

Gharibyan Susanna, Associate Professor at the Chair of Armenian Language and its Teaching Methods, Candidate of Philological Sciences, ASPU.

Гарибян Сусанна - Наблюдение предлогов по теории С. Абраамяна «Несклоняемые части речи современного армянского языка». - В нашей статье представлено наблюдение предлогов по теории С. Абраамяна «Несклоняемые части речи современного армянского языка».

Автор, давая краткую историю изучения предлогов в современном армянском языке, всесторонне рассмотрел предлог как часть речи, представив типы предлогов по степеням их образования, по значению, по свойствам управления и по отношению к связываемому слову.

Богатый фактический материал научного труда С. Абраамяна насыщен соответствующими примерами, которые являются поучительными и легко воспринимаемыми для обучающихся.

Основная часть словарного состава армянского языка происходит от грабара, и семантические изменения грабара унаследованы в современном армянском языке. Несклоняемые части речи, выражающие грамматические значения, обогащаются за счет абстрагирования вещественного значения вещественных частей речи и затемнения лексического и грамматического значения словоформы.

На основе текстуального материала, извлеченного из разных этапов развития армянского языка, мы представили предлоги по степеням их образования.

На основе текстуального материала, извлеченного из разных этапов развития армянского языка, мы также представили наши наблюдения относительно предлогов по степеням их образования и семантических типов.

Ключевые слова и словосочетания. Предлог, как служебная часть речи, типы предлогов, абстрагирование вещественного значения вещественных частей речи, затемнение лексического и грамматического значения словоформы.

Гарибян Сусанна, доцент кафедры армянского языка и его преподавания, кандидат филологических наук, АГПУ им. Х. Абовяна.

**ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Մալխասյան Էմին

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ.
emiko88@mail.ru

Բանալի բառեր. Միլվա Կապուտիկյան, հրապարակախոսություն, օտարաբանություններ, երկխոսություն, թևավոր խոսք, պատկերավորման-արտահայտչական միջոցներ:

Ամենայն հայոց բանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանի ստեղծագործությունների գունապնակում զգալի կշիռ ունի հրապարակախոսությունը: 1979թ. լույս է տեսել հեղինակի «Իմ ժամանակը» հրապարակագրությունների և ուղեգրությունների ժողովածուն: 1992թ. սեղանին դրվեց «Էջեր փակ գրոցներից» հրապարակագրությունը, իսկ 2000-ին՝ «Չեմ կարող լռել» խորագրով հոդվածներն ու ելույթները:

Ս. Կապուտիկյանի հրապարակագրությունը, որն ըստ էության ունի ներգործման գործառույթ, լոկ հեղինակի անհատականության արտահայտությունը չէ, այլ նաև ժամանակաշրջանի համապատկերի նկարագրություն է, այդ շնչահատ տարիների հասարակության ապրածն ու զգացածը, հույսերն ու հուսաբեկությունները: Հոդվածից հոդված հրապարակախոսի ձայնը դառնում էր առավել խիստ և փոթորկուն: Այս ամենն ըստ էության ներկայացվում է հրապարակախոսական ոճի ներհատուկ լեզվական դրսևորումներով:

Խոսքի հրապարակախոսական ոճը օգտագործվում է տեղեկույթը հանրային ոլորտներին իրագեկելու համար: Հրապարակախոսական ոճն առկա է հեռուստատելույթներում, տարատեսակ հանդիպումներում և հասարակական հնչեղություն ունեցող հոդվածներում:

Ունկնդրի ուշադրությունն անմիջապես գրավելու համար ներկայացվում են իրողություններ, փաստեր, որոնք հրապարակախոսի բանականությամբ ըմբռնված-ապրված են և կրում են Ս. Կապուտիկյանի ստեղծագործական անհատականություն կնիքը: Հեղինակն անմիջապես անցնում է բուն նյութին, և ընթերցողը հայտնվում է նկարագրվող իրադարձության և թեմայի տիրույթում: Այս դեպքում հրապարակախոսը, ներգործելով ընթերցողի հուզական ազդակների վրա, նկարագրող անձի կամ երևույթի նկատմամբ որոշակի մտորումներ է առաջացնում:

Նման ուսումնասիրությունների դեպքում նպատակային է գործառական տվյալ ոճի բառապաշարի շերտերի առանձնացումը: Ուսումնասիրվող տեքստերի բառապաշարն աչքի է ընկնում հատկանունների առատությամբ: *Գրողների և արվեստագետների անուններ՝* Վիլյամ Մարոյան, Մարտիրոս Մարյան, Սուրեն Քոչարյան, Հենրիկ Մալյան, Լուսինե Զաքարյան, *գիտնականների, քաղաքական գործիչների և զորահրամանատարների անուններ՝* Վիկտոր

¹ Բոլոր օրինակները քաղաբերել ենք այս երեք աղբյուրներից. ըստ հերթականության՝ կլոր փակագծերով կնշվի գրքի հերթական համարը և էջը:

Համբարձումյան, Վարդան Մամիկոնյան, Անաստաս Միկոյան, Հովհաննես Բաղրամյան, Համազասպ Բաբաջանյան, Մոնթե Մելքոնյան, Քլինթոն, *պետությունների, քաղաքների և փոքրերի անուններ*² Իրան, Տաջիկստան, Փարիզ, Նյու Յորք, Բոստոն, Վան, Բիթլիս, Կարս, Մոսկվա, Սիվցև-Վրաժեկ (փոքրի անուն):

Հայտնի է, որ տեղանուններն օժտված է հարուստ բովանդակությամբ և տեղեկատվական խոր լիցքով: Իբրև բառային նշաններ՝ տեղանուններն առաջին մակարդակում սերտ հարաբերվում են անձնանվանը, սակայն իրականում այս երկու հատկանունների միջև զգալի տարբերություն կա:

Ս. Կապուտիկյանի հրապարակախոսության լեզվում թափանցել են օտար բառեր՝ կոնգրես (պետությունների ղեկավարների կամ նրանց դեսպանների ժողով, որ քննում և վճռում է քաղաքական խնդիրներ, ֆրանսերեն ռուսերենի միջնորդությամբ), հոթել (հյուրանոց), պրիստիժ (հեղինակություն), լեդի (ամուսնացած կին Անգլիայում, անգլերեն), օֆիս (գրասենյակ, անգլերեն), կոլեկցոներ (կոլեկցիաներ հավաքող, ֆրանսերեն ռուսերենի միջնորդությամբ), բանկետ (հրապարակային հանդիսավոր ճաշ, ֆրանսերեն ռուսերենի միջնորդությամբ), դալմադալ (արաբերեն, աղմուկ-աղաղակ, շփոթություն), Պեն-կլուբ (Պեն-ը կազմված է պոեզիա, էսսե, նովելա բառերի սկզնատառերից, սկզբնապես հիմնվել է Լոնդոնում մոտ հարյուր տարի առաջ) և այլն: Գործածված են նաև օտարազգի բառեր. «Շատ ավելի տպավորիչ էր այն հյուրասիրությունը, որը հանձն էր առել «VIKING LINE» ծովային ճամփորդության ֆինն-շվեդական ընկերությունը» (3, 42) և այլն:

Հրապարակախոսական բնագրերում ակտիվ են *հայ, բարձր, սուզ* սկզբնաբաղադրիչով, ինչպես նաև *պետ, հանդես, տուն* վերջնաբաղադրիչով միավորները՝ հայապաշտ, հայաշխարհ, հայապահպան, բարձրաճ, բարձրամեծար, սգերթ, սեղանապետ, պարահանդես, սգահանդես, գրատուն, սգատուն, աղոթատուն և այլն:

Հետաքրքրական զուգորդումներ կան բայերի արտահայտչական ձևերում: Ս. Կապուտիկյանը, բնութագրելով Հ. Բաղրամյանին, գործածում է բայ-բնութագրիչներ. «Հ. Բաղրամյանը մշտապես մնաց իր փառքի ալիքի վրա, մեծարվեց, սիրվեց, լիացավ, վայելեց» (3, 14): Բայերի կուտակման ոճական այս հնարքը ոճագիտության մեջ կոչվում է *համակուտակում*, որը հրապարակախոսության լեզվում կիրառվում է մտքի յուրովի թվարկման, գործողության ուժգնության ընդգծման նպատակով: Պ. Պողոսյանը նշում է, որ համակուտակումը այնպիսի գաղափարների յուրօրինակ թվարկում է, որոնք միասնաբար թողնում են շատի և ուժեղի տպավորություն: Համակուտակման շղթայի որոշ բայեր կարող են հոմանշային շարքեր կազմել:

Գործածության հաճախականություն ունի *հիշում եմ* բայաձևը: Անկատար ներկայի առաջին դեմքի բայաձևերով հեղինակը փորձել է անցյալի անմոռանալի իրողությունները ցույց տալ. «Հիշում եմ այս տարի, երբ Իջևանի շրջանում էի, այցելեցի նաև տեղի հուշարձանները, այդ թվում Կիրանց եկեղեցին» (1, 39):

Բնագրերում որոշիչն ունի թե՛ սովորական, թե՛ շրջուն շարադասություն: Գունագեղ էպիտետների տարափով է պճնված Ս. Կապուտիկյանի հրապարակախոսությունը: «Այսպես

² Պ. Պողոսյան, *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, գիրք 2-րդ, էջ 7:

է Քուչակը. ուժեղ, բաց, ամեն պայմանականությունն արհամարհող, իր սիրով՝ հանդուգն երևալու չափ հպարտ, իր սիրածով՝ անպարկեշտ թվալու չափ բախտավոր: Հողեղեն է նա՝ իր ողջ եությանը, իր զգացումներով ու նաև իր պոետիկայով» (1, 74):

Երկխոսության կազմիչ նախադասություններում գործածական է հարցական-պատմողական հնչերանգը³:

«...Բյուրական երկա՞ր ժամանակով եկած եք,-դիմում է ինձ ծերունին:

-Կիրակի օրը խոստացել եմ ներկա լինել մուսալեոցիների հանդեսին: Վաղը կմեկնեմ, հետո նորից կվերադառնամ»:

Հրապարակախոսական լեզվի երկխոսության տեսակների մեջ առկա են բանավեճը և բաժակաճառը:

Բանավեճի մասնակիցները տարբեր տեսակներ են արտահայտում նույն իրողության վերաբերյալ: Ս. Կապուտիկյանի «Չեմ կարող լռել» հրապարակախոսական ժողովածուում գետեղված է «Կա՛նգ առեք և նայե՛ք» վերնագրով բանավեճը, որին մասնակցում են Սիլվա Կապուտիկյանը, Գրիգոր Խանջյանը, Ռազմիկ Դավոյանը և միջազգայնագետ Հակոբ Հակոբյանը: Նրանք բանավիճում են Հայաստանի տնտեսական և քաղաքական հարցերի շուրջ: Այստեղ էլ գերիշխում է տնտեսագիտական բառապաշարը՝ շուկա, մրցակցություն, ապրանքային առատություն և այլն: Երբեմն հնչում է *Ո՞վ է մեղավորը* ճարտասանական ինքնահարցադրումը:

Կենացը ներկայացվում է որպես երկխոսության տարատեսակ. «Կենացին պատասխանում է ծեր մայրը, որը թեև ութսունին մոտ, բայց դեռ ամուր է ու մտքով սուր:

-Ողջ մնաս, բալե՛ս, քո նախշուն կենացն էլ թող ըլի...Բալա՛ջան, որ գիտնական ես, գիտե՛ս, թե էս տան շինությունը ինչի՛ց է...» (3, 341):

Հերոսները, ավելի ճիշտ բնորդները հաճախ են երկխոսում, տարբեր մտքեր արտահայտում: Երջանկության տեսությունը յուրակերպ է բանաձևում գյուղատնտես Հակոբյանը. «Երջանիկ եմ, երբ որդիներս, թոռներս, առողջ են, ուրախ, հարսներիս հետ հաշտ ու խաղաղ... Երջանիկ եմ, երբ տեսնում եմ իմ Հայաստանը հիմա շեն, բարգավաճ, ծառ ու ծաղկունքով զարդարված, ու էդ ծառերի մեջն էլ մի քանիսը իմն են, իմ տնկածը...» (1, 336):

Հրապարակախոսական ոճն իր բնույթով տարբերվում է գեղարվեստական վավերագրության կամ, ինչպես ընդունված է ասել, «բաց տեքստի» գրականությունից, բայց և դրանք կարող են ունենալ ընդհանուր կողմեր⁴: Ս. Կապուտիկյանի հուշագրական արձակի որոշ դրսևորումներ նկատելի են հրապարակախոսության էջերում: Աչքի են զարնում բնորդի արտաքին նկարագրությունը, լրացուցիչ մանրամասներ. «Դռների մոտ մեզ ողջունեց բարեղեն մի տիկին, բարալիկ ու գեղանի, ճաշակավոր հագուստ-կապուստով, բայց ոտաբոբիկ: Ասացին, որ իրավաբան է, ունի իր օֆիսը և իր գործերում շատ հաջողակ է» (3, 36):

Գրքի ճանաչողական հատվածները հյուսված են բազում համեմատություններով, որոնք մեզ օգնում են երևույթների մասին իրական պատկերացում կազմել, չնայած երբեմն համեմատության եզրերը կարող են չհամապատասխանել բնականին: Համեմատությունը

³ Ս. Գալստյան, *Երկխոսությունը ժամանակակից հայերենում*, Ե., 2003, էջ 22:

⁴ Գ. Հակոբյան, *Սիլվա Կապուտիկյանի հրապարակախոսությունը*, Սեղմագիր, Ե., 2008, էջ 18:

տարբեր առարկաների կամ երևույթների մեջ եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու երևույթն է: Այսպես. «Համբարձումյանի մենատունն է, տիրոջ նման լռիկմնջիկ» (1, 8): «Իմաստուն է, ինչպես աշխարհի չարն ու բարին ճաշակած ծերունիները» (1, 10): «Քարտեզի վրա, նկատած էք, Հայաստանը գուրգի կնմանի» (2, 10): «Դաշտում ծայր առած պտտահողմի պես ոլորվում են կլոր պարերի օղակները» (2, 12): «Խորանում այրվող մումի պես դողդոջուն նրա հայացքի դեմ ծանրորեն փակվել է պալատի ոսկեքանդակ դուռը» (3, 76):

Ս. Կապուտիկյանը երբեմն այլ գրողների մտային հոսքերով է ամբողջացնում հրապարակախոսական բնագիրը. «Ինչպես Սևակն է ասում՝ «խնդրելով պահանջեց, պահանջելով խնդրեց»» (1, 18): «Սակայն մեծ Թումանյանը ասում է. «Ուրիշի վատությունը շատ էլ վտանգավոր բան չի լավ մարդու համար»» (1, 147): «Այս հանգամանքը լավ է հասկացել իտալացի գրող Ալբերտո Մորավիան, որ գրել է, թե հայի համար կոնյակը սոսկ արտադրատեսակ չէ, այլ ազգային հպարտության առարկա, հարազատ հողի, ջրի և արևի ավյունը իր մեջ կրող էլիքսիր, ուրիշ ժողովուրդներին ներկայանալու այցետոմս» (1, 24):

Առկա են նաև թևավոր խոսքեր հիշեցնող նախադասություններ. «Անունը կար, ամանունը չկար» (1, 42), «Մերն ուրիշ է» (3, 32), «Պատերազմը կանացի դեմք չունի» (3, 33), «Ճամփորդական նավից՝ ուղղակի պարահանդես» (3, 24), «Որտեղ հաց, այնտեղ կաց» (գրողն անվանում է արատավոր կենսափիլիսոփայություն) (3, 10): «Թշնամին դարպասների մոտ է» (3, 98), «Ասում են՝ հանգուցյալի հետևից կամ միայն լավն են խոսում կամ լռում են» (3, 58):

Գործածված են նաև շրջասական նոր կապակցություններ՝ *դարերի երկունք ապրած նորամանուկ*-Հայաստան (1, 93), *արծվաթռիչ բանաստեղծ*-Չարենց (1, 81), *հայապաշտ հեղինակ*-Չարենց (1, 82), *հայրենի բանաստեղծուհի*-Սիլվա Կապուտիկյան (1, 96), *Չանգեզուրի գանգր*-Մերո Խանգաղյան (1, 58), *աստվածատուր երգչուհի*-Լուսինե Զաքարյան (1, 50) և այլն:

Ս. Կապուտիկյանը տարբեր մտքեր է քաղաբերում Աստվածաշնչից, ժողովրդական բառ ու բանից: Սուրբգրային երակ ունեն «Ի սկզբանե էր սերն»: «Հացդ արյուն-քրտինքով վաստակես» (բիբլիական անեծք) (1, 5) արտահայտությունները: «Ժողովուրդն ասում է. «Ախորժակը բացվում է ուտելու ընթացքում»» (1, 339) :

Ս. Կապուտիկյանը հրապարակագական մեկնաբանություններին, երևույթներին երբեմն շաղախում է բնության պատկերներ. «Չնայած վրա հասած ձմռանը, Երևանում դեռ արև է, խնկագույն և սիրելի արև: Դուրս ենք գալիս քաղաքից՝ բնության շունչը վայելելու համար» (1, 339)

Հրապարակախոսական ոճի տեքստն ունի բացատրական բառարանի գործաբանական արժեք. մեկնաբանվում են տարբեր հասկացություններ, բառեր, տրվում են բացատրություններ. «Աշխարհում տարածված է Ֆինլանդիային վերաբերող երկու հանրահայտ հասկացություն՝ ֆիննական դանակ և ֆիննական տնակ» (3, 35): Տեքստի տրամաբանական կամըրջակը սնող այսպիսի հոսքերը ամբողջական են դարձնում հրապարակախոսական ոճի դրսևորումները:

5 Պ. Պողոսյան, *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, գիրք 2-րդ, Ե., 1991, էջ 10:

Էական է տեքստի վերջաբանը, որը հայտնի ճշմարտությամբ է ամրագրված. «Այո՛, մեր միակ փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է ու նաև մեր հոգեկանության, նաև մեր արարիչ ոգու մեջ:

Հավաքենք մեր աշխարհացրիվ ուժերը, մեր արարիչ ոգին՝ ապրելը շարունակելու համար» (13,83):

Եզրակացություններ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ս. Կապուտիկյանի հրապարակախոսությունն աչքի է ընկնում որոշակի բառափնջերի դրսևորմամբ՝ հատուկ անուններ, օտարաբանություններ, շրջասույթներ, բարդության սկզբնաբաղադրիչի և վերջնաբաղադրիչի ակտիվություն ունեցող միավորներ և այլն:

2. Հետաքրքրական գուգորդումներ կան բայերի արտահայտչաձևերում. համակուտակումը որոշակի ոճավորում է ստեղծում:

3. Հրապարակախոսության լեզուն աչքի է ընկնում պասկերավոր և արտահայտչական ձևերի ակտիվությամբ:

5. Հոդվածների որոշ հոսքեր ունեն հարցուպատասխանական կառուցվածք:

Օգտագործված գրականություն

1. Գալստյան Ա., Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Ե., 2003:
2. Կապուտիկյան Ս., Էջեր փակ գգրոցներից, Ե., 1992:
3. Կապուտիկյան Ս., Իմ ժամանակը, Ե., 1976:
4. Կապուտիկյան Ս., Չեմ կարող լռել:, Ե., 1976:
5. Հակոբյան Գ., Միլվա Կապուտիկյանի հրապարակախոսությունը, Սեղմագիր, Ե., 2008:
6. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2-րդ, Ե., 1991:

Malkhasyan Emin- Linguistic Foundations of Silva Kaputikyan's Publicistic Speech.- Publicistic expression holds a significant place in the creative palette of Silva Kaputikyan, the national poetess of Armenia.

The publicistic style of speech is used to convey information to the public sphere. This style is present in Kaputikyan's television speeches, various meetings, and socially impactful articles.

To immediately capture the listener's attention, real facts and events are presented—perceived and experienced through the rational lens of the publicist—bearing the imprint of Kaputikyan's creative individuality. Kaputikyan's publicistic language is distinguished by the use of certain lexical layers: proper nouns, borrowings, idiomatic expressions, units with active prefixes and suffixes, and so on.

Interesting combinations appear in verb expressions, creating specific stylistic effects.

The language of her publicistic works also features a vivid and expressive style. Some articles are constructed in a question-and-answer format.

Certain texts possess the functional value of an explanatory dictionary—clarifying various concepts, words, and providing definitions.

Key words: Silva Kaputikyan, publicism, foreign borrowings, dialogue, winged expressions, figurative-expressive means.

Malkhasyan Emin, Postgraduate student at the Chair of Armenian Language and its Teaching Methodology, Khachatur Abovian Armenian State Pedagogical University.

Малхасян Эмин - Языковые основы публицистической речи Силвы Капутикян.- Публицистика занимает значительное место в палитре творчества всенародной армянской поэтессы Силвы Капутикян.

Публицистический стиль речи используется для информирования общественности. Этот стиль присутствует в телевизионных выступлениях С. Капутикян, на различных встречах и в статьях общественного значения.

Для привлечения внимания аудитории представляются факты и явления, воспринятые и пережитые публицистом с позиции разума и носящие печать творческой индивидуальности С. Капутикян.

Публицистика С. Капутикян отличается использованием определённых лексических пластов: собственные имена, заимствования, устойчивые выражения, конструкции с активными начальной и конечной частями слова и др.

Интересные сочетания наблюдаются в глагольных формах, создающих стилистическую насыщенность.

Язык публицистики также отличается активным использованием образных и выразительных средств. Некоторые статьи построены в форме вопросно-ответной структуры.

Отдельные публицистические тексты выполняют функцию толкового словаря — в них разъясняются различные понятия, слова, приводятся определения.

Ключевые слова: Сильва Капутикян, публицистика, заимствованные слова, диалог, крылатые выражения, изобразительно-выразительные средства.

Малхасян Эмин, Аспирант кафедры армянского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна.

**-ԿԵՐՏ, -ՍՍԱՆ ԵՎ -ԱՎԱՆ ՁԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՆՈՒՆԵՐՈՒՄ**

Մարգարյան Լուսինե

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ.

margaryan.lusine@yandex.com

margaryanlusine06@asu.am

Բանալի բառեր. -կերտ, -ստան, -ավան ձևային, Արցախ, բնականուն, բառակազմություն, իմաստագործառական արժեք, իրանական ծագում:

Նախաբան

Արցախի բնականվանացանկում վկայված հիբրիդ տեղանունները քիչ չեն, և այդ շարքում իրանական ծագման ձևայիններով բաղադրությունները մեծ թիվ են կազմում:

Այդ ձևայինների քննությունը մի կողմից՝ բացահայտում է մայրենի ու փոխառյալ միավորների իմաստային զարգացման արդյունքները, մինչտեղանվանական և տեղանվանական իմաստների գործառական արժեքը, մյուս կողմից՝ փաստում դրանց վերաիմաստավորումը հայերենում՝ հաստատելով, որ տեղանվանագիտությունը նաև լեզվամշակութային հիշողության կրող է: Դրանց ուսումնասիրությունը նաև հնարավորություն է տալիս բնութագրելու Արցախի տեղանվանահամակարգին բնորոշ իրողությունները:

Քննության առարկան իրանական **-կերտ, -ստան** ձևայիններով բաղադրված տեղանուններն են: Այս շարքում քննվում են նաև **-ավան** ձևային կազմված բնականունները: **-Ավան** ձևային ծագումնաբանական պատկանելությունը վերագրվում էր կամ իրանականին, կամ ուրարտականին:

_Կերտ ձևային իմաստագործառական արժեքը

Արցախի բնականվանակազմություններում՝ և՛ հին, և՛ նոր, **-kert** (անել, աստված, գործ, գործվածք, շինություն² նշանակություններով) տեղանվանակազմիչ միավորը գործառականորեն ակտիվ է: Գրիգոր Ղափանցյանը նշում է³, որ **-կերտ** ձևային իրաներենում նվազ կենսունակություն ուներ որպես տեղանվանակերտ մասնիկ, մինչդեռ հայոց տարածքում, այս դեպքում նաև Արցախի տարածքում, այն ակտիվ է և կենսունակ:

Արցախի բնականվանացանկում այդ մասնիկով բաղադրված տեղանուններ են **Տիգրանակերտը, Դաստակերտը, Դռնակերտը, Մարտակերտը, Ստեփանակերտը, Երվանդակերտը**: Քննվող տեղանուններում նույնարժեք չեն **-կերտ** բաղադրիչի մինչտեղանվանական իմաստի դրսևորումները:

¹ Капанцян Гр., *Историко-лингвистические работы*, Т II, Изд. Акад. Наук Арм. ССР, Е., 1956, стр. 161.

² Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, 1926, էջ 579:

³ Капанцян Гр., *նշված ուսումնասիրությունը*, էջ 161:

Արցախի **Տիգրանակերտը** հայկական լեռնաշխարհի համանուն 5 հնագույն բնակավայրերից մեկն է՝ Տիգրան Մեծի անվամբ: Մեբեոսի վկայությամբ **Տիգրանակերտը** շարունակել է գոյատևել նաև վաղ միջնադարում⁴: Բարբառային հնչադարձությամբ Տիգրանակերտը վկայված է **Տրկուակերտ** ձևով: Հայերն անվանում էին նաև **Թգրանակերտ**: Անկախության շրջանի Տիգրանակերտը բնակավայր չէր, այլ բերդ-կոթող և հնավայր: Իբրև տեղանուն՝ այն բաղադրյալ կազմություն ունի, տրոհելի է, և երկու բաղադրիչներն էլ պահպանում են մինչտեղանվանական իմաստը:

Դաստակերտ: Դաստակերտը⁶ Արցախի հին բնակավայրերից էր: Բնականունը տարածամանակյա կտրվածքով համանուն է Սյունյաց տարածաշրջանի **Դաստակերտ** տեղանվանը: Բառակազմական վերլուծությամբ **դաստակերտ** բառամիավորը իր մայրենի լեզվում բաղադրվում է **դաստ** և **կերտ** բաղադրիչների: Լավրենտի Հովհաննիսյանը նշում է, որ այդ երկու բաղադրիչներն էլ իրանական փոխառություններ են. **դաստ**՝ ձեռք և **կերտ**՝ գործ, շինություն՝ **kar, kr**՝ «անել, պատրաստել» արմատից: Ընդ որում «**կերտ**-ը 5-րդ դարում արդեն յուրացված փոխառություն էր, իսկ **դաստ**-ը շատերի համար հասկանալի չէր, և գիտակցվում էր որպես օտար, թարգմանելի բառ»⁷: Իբրև տեղանուն՝ **Դաստակերտը** պարզ և անտրոհելի բառամիավոր է, ու անվանադրման հիմք է դարձել՝ իր բառիմաստային դաշտով որպես ամբողջական կառույց «ներբերվելով»: Ասվածի հիմնավորումն է նաև Լ. Հովհաննիսյանի այն հաստատումը, որ **դաստ** բառով փոխառություններն ամբողջական փոխառություններ են⁸:

Արցախի **Դաստակերտն** անկախության շրջանում արդեն հուշարձան տեղանուն էր. «Ջրաբերդ գաւառի մէջ աւերակ գիւղատեղի, յորում կայ կիսաւեր եկեղեցի եւ հանգստարան»⁹: 1917թ. արխիվային փաստաթղթում բնակավայրը նշված էր Ջրաբերդ գավառում՝ **Դաստակիրտ** անունով՝ 115 բնակչով:

Պատմական մյուս աղբյուրներում նշված է **Դաստակերտ**, **Դաստագյուլ** նաև **Դաստագիրտ**¹⁰: Մովսես Կաղանկատվացին գյուղը հիշատակում է **Դաստակերտ**¹¹: Նա գրում է, որ Վաչագան թագավորը (5-րդ դար) Խնչիկ անվամբ մի փոքր դուստր ուներ, որի անունով էլ կառուցում էր դաստակերտ¹²: Հայկունին նախանվանում է դիտում **Դաստագյուղը**՝ դա բխեց-

⁴ Պատմություն Մեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլյն, Թիֆլիս, 1912, էջ 148, 283:

⁵ Դիվան հայ վիմագրության, Պ.5, Արցախ .-կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարյան/, ՀՍԱՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ե., ՀՍԱՀ ԳԱ հրատ., 1982, էջ 135:

⁶ Սարգսյան Սլ., Արցախ. պատմաշխարհագրական ճշգրտումներ, «Հայ Էդիթ», Ե., 1996, էջ 71: Բարխուդարյանց Ս. Եպս., Արցախ, «Ամարաս», Ե., 1996, էջ 150: Դիվան հայ վիմագրության, Պ. 5, Արցախ.-կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարյան/, ՀՍԱՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ե., ՀՍԱՀ ԳԱ հրատ., 1982, էջ 99:

⁷ Հովհաննիսյան Լ. Շ., Հատուկ անունների մեկնությունները Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2013, էջ 24-25:

⁸ Հովհաննիսյան Լ.Շ., նշվ. աշխ., էջ 24:

⁹ Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ.1, Վենետիկ-Սբ. Ղազար, 1903, էջ 579:

¹⁰ Кочарян Г., Нагорный Карабах, стр. 50.

¹¹ Կաղանկատվացի Ս., Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 62, 261: Ա-Դո, էջ 109:

¹² Կաղանկատվացի Ս., նշվ. աշխ., էջ 62: Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 427: Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, ՍՊ, 1886, էջ 119:

նելով Վաչագան թագավորի աղջկա անունից¹³: Մ. Բարխուդարեանցը վկայում է **Դաստակիւ**՝ նշելով **Դաստակերտ-ավերակ գյուղատեղի**¹⁴:

Դոնակերտը ԱՀ անկախությունից հետո նորանուն ու նորաբնակ գյուղ է Արցախի Կովսականի գավառում: Այն հին բնակավայրի վերանվանակոչում է՝ ոչ տեղագրական ճշգրտությամբ:

Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Կովսական գավառում այդ անվամբ բնակավայր էր վկայված, որը, ըստ հին հարկացուցակի, 13-րդ դ. Տաթևի վանքին տալիս էր 7 միավոր հարկ¹⁵: Ղ. Ալիշանը այդ բնականունը նշել էր **Տգեոնակերտ** ձևով¹⁶: Դոնակերտ տեղանվան **կերտ** բաղադրիչը տրոհելի է, իմաստը՝ ընկալելի: **Դոն+ա-** բաղադրիչը հնարավոր է, որ կապված լինի **դուռն** բառի հետ և բնականունը նշանակի մուտքերով առանձնահատուկ բնակավայր կամ դարպասային բնակավայր, որը գտնվում է կարևոր ճանապարհների կամ սահամանագծերի մոտ: Հայտնի է, որ Կովսական գավառը կարևոր կապ էր ապահովում Սյունիքի կենտրոնական շրջանների, Պարսկաստանի և արևմտյան հայկական տարածքների միջև: Այս տարածքով անցնող հին առևտրային ու ռազմական ճանապարհները մեծ դեր էին խաղում տարածաշրջանի տնտեսական և պաշտպանական համակարգում: Այդ տրամաբանությամբ մայրենի **դուռ /ն/** միավորից բաղադրված լինելը հավանական է:

Վկայված հնչատարբերակներից են **Տնկոնակերտը** և **Տոնակերտը**:

-**Կերտ** մասնիկով բաղադրված նոր բնականուններ են Ստեփանակերտը, Մարտակերտը:

Ստեփանակերտ: Բնակավայրը **Ստեփանակերտ** է վերանվանվել 1923 թ.¹⁷: Այն նախկին Վարարակն¹⁸, Խանքենդ¹⁹ բնակավայրերի, Ներքին շենի, Սողոմոնի շենի, Նոր Արմենավանի, Կրկժանի²⁰, Փահլուլ կամ Փահլուրի²¹ տեղում է հիմնադրված: Բնակավայրը Ստեփանակերտ է վերանվանվել՝ ի պատիվ կոմունիստ Ստեփան Շահումյանի:

Մարտակերտ: Մակար Բարխուդարյանը Ջրաբերդի գավառի բնակավայրերի ցանկում **Մարդակերտն** անվամբ է նշում²²: 1917թ. Լեոնային Ղարաբաղի բնակավայրերի ու բնակչության թվակազմի մասին տեղեկություններում **Մարդակիրտ** հնչատարբերակով է նշված (գյուղ՝ 274 ընտանիքով՝ 1916 բնակչով)²³: Բնականվան բարբառային հնչադարձումը **Միրդագիրդ** է: Մարտակերտ բնականունը մեկնաբանվում է մարտերում կոփված, մարտերում

¹³ **Եղիշե ավագ քահանա Գեղամյանց** /Հայկունի/, *Ուղեգնացական ակնարկներ*, Ե., 2010, էջ 44:

¹⁴ **Բարխուդարեանց Մ. Եպս.**, *նշվ. աշխ.*, էջ 142:

¹⁵ *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., **Հակոբյան Թ.**, հ. 2, Ե.1986, էջ 143:

¹⁶ **Ալիշան Ղ.**, *Արցախ*, Ե., 1993, էջ 95:

¹⁷ **Ուլուբաբյան Բ.**, *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*, Ե., 1994, էջ 251:

¹⁸ 1841թ. Վարարակնը 31 տուն՝ 133 շունչ բնակչով հիշվում է որպես առանձին գյուղ (Վ. Բալայան):

¹⁹ 1917թ. 50 ընտանիք, 619 բնակիչ (ՀԱԱ, ֆոնդ 150, ց.1, գործ 59):

²⁰ 1890-ական թվականներին գյուղում կար 61 տուն, 405 բնակիչ (Վ. Բալայան), 1917 թ. 80 ընտանիք, 584 բնակիչ (ՀԱԱ, ֆոնդ 150, ց. 1, գործ 59):

²¹ 1917թ. 18 ընտանիք, 145 բնակիչ (ՀԱԱ, ֆոնդ 150, ց.1, գործ 59):

²² **Բարխուդարեանց Մ. Եպս.**, *նշված աշխ.*, էջ 142:

²³ ՀՀ ԱԱ, ֆոնդ 150, ցուցակ 1, գործ 59:

կերտված²⁴, այսինքն՝ խորհրդանշում է տարածքի ռազմավարական նշանակությունը որպես պաշտպանական դիրք: Եթե այս մեկնաբանությունը գեղարվեստական մեկնաբանություն է դիտվում, ապա այն առավել քան տիպական է այդ բնակավայրի անցած կենսագրությունը քննելով: Բազմիցս այդ բնակավայրը մարտերում կոփվել ու վերակերտվել է:

Ըստ ավանդության՝ անվանումը կապվում է քաջ բնակիչներից մեկի՝ Չալունց Մարդիի անվան. այս դեպքում այն անձնանվանահիմք բնակավայր է, և ըստ էության՝ **Մարդակերտն** ձևով վկայությունը մեկնաբանելի է դառնում:

Մեկ այլ պատումի համաձայն՝ այն մատուռ բառի հետ է կապվում: Այս դեպքում այն պիտի լիներ Մատուակերտ-Մարտակերտ դրափոխության հետևանք:

Որոշ ժամանակ այս բնակավայրը կոչվել է օտար անվանումով՝ **Աղդարա**, այսինքն՝ **Սպիտակ հովիտ**՝ հովտում սփռված սպիտակ ապարների/կրաքարի/ պատճառով²⁵:

Երվանդակերտը անկախության շրջանից հետո Քաշաթաղի շրջանի վերանվանված նոր բնակավայր է²⁶: Կարծում ենք՝ այն Սյունյաց աշխարհի Բաղք-Քաշունիք գավառի նույնանուն բնակավայրի հուշարձան անունն է:

-Կերտ ձևությոնը հայերենում կիրառվել է որպես ակտիվ տեղանվանակերտ մասնիկ՝ արտահայտելով ստեղծման, կառուցման կամ հիմնադրման գաղափարներ: Արցախի տարածքում այն պահպանվել է ինչպես պատմական, այնպես էլ նորաստեղծ բնակավայրերի անուններում: ՀՀ բնականվանացանկում այդ ձևությոնով 7 բնակավայր է նշվում, որից մեկը համանուն Արցախի տարածքի բնականվանը՝ **Դաստակերտը**, իսկ մյուսը՝ համանուն ներտեղանվանական համակարգում՝ **Նորակերտը**:

Արցախի տեղանվանացանկի **-կերտ** բաղադրիչով բնականունները հիմնականում անձնանուն սերող հիմք ունեն, շարքում առանձնացվող **Դաստակերտը** հայերենյան կազմություն չէ, այն ամբողջական փոխառություն է իրաներենից, իսկ **Դոնակերտ**-ի դոնոն+կերտ բաղադրիչների տրոհումը հնարավոր է մինչտեղանվանական իմաստների վերկանգնման սկզբունքով:

Հատկանշելի է, որ ՀՀ բնականվանացանկում **-կերտ** բաղադրիչով տեղանունների սերող հիմքը հասարակ անուն է՝ **Նորակերտ**, **Լուսակերտ**, **Լեռնակերտ**, **Դարակերտ** և այլն: Կարծում ենք, **Դոնակերտ**-ը հայկական տեղնավանակազմության այս տրամաբանության և համաբանություն սկզբունքի շղթայում է դիտարկելի:

-Ստան ձևությոնի իմաստագործառական արժեքը

-Ստան: Հրայր Աճառյանը նշում է, որ հին հայերենում **-ստան** մասնիկը վերածվել էր հոգնակերտի: Այդ անցումը կատարվել է ձիթաստան, ծառաստան, այգեստան բառերի նմանողությամբ. ըստ այդմ «առարկաների գտնվելու տեղը բազմության մտքով է առնված, որով և հավաքականի է վերածվել»²⁷: Նորայր Պողոսյանը, քննելով հայերենի հոգնակիակազմ տեղա-

²⁴ **Մելքունյան Ս. Ա.**, *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990, էջ 160:

²⁵ **Մելքունյան Ս.Ա.**, նշվ. աշխ.:

²⁶ «ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին» ԼՂՀ 1998թ. հունիսի 26-ի ՀՕ-15 օրենքի (2011թ. ապրիլի 1-ի ՀՕ-Ն օրենքների լրացումներով ու փոփոխություններով) հավելված թիվ 2:

²⁷ **Աճառյան Հր.**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, Ե., 1957, էջ 713-714:

նունները և ներկայացնելով Հրաչյա Աճառյանի դիտարկումը այդ առիթով, ենթադրում է, որ հին հայերենյան շրջանում դեռևս ակտիվ չէր **ստան**-ի հոգնակիակազմության (հատկապես երկրանուններում/ գործառույթը. այդ շրջանում առավելաբար **ք**-ն էր այդ գործառույթի իրացնողը²⁸: Կիլիկյան հայերենում հոգնակերտների շարքում է նշվում **ստան**-ը: Այն, ինչպես փաստում է Յոզեֆ Կարստը²⁹, հոգնակիության իմաստ էր արտահայտում և փոխարինում էր հին հայերենյան **-ք** հոգնակերտ վերջավորությանը՝ վերջինիս տեղանվանակազմիչ գործառույթի իրացմամբ/ ընդգծումը մերն է/: Յ. Կարստը նշում է, որ **ստան** ածանցի նախնական իմաստն է առարկաների հավաքման վայր: Այս վերջավորությունը սկսում է նշանակել մի տեղում հավաքվող առարկաների բազմություն՝ հոգնակիություն:

Էդվարդ Մուրզանը **ստան**-ը մեկնաբանում է երկիր, հող, շրջան նշանակություններով՝ նշելով, որ այն միայն աշխարհագրական բաղադրյալ անուններում է գործածական: Նա **ստան**-ի ծագումը հնդեվրոպական լեզվաընտանիքից է բխեցնում՝ տեղանիշ նշանակությամբ, ու կիրառությամբ տարածված համարում միջին պարսկերենում³⁰:

Լավրենտի Հովհաննիսյանը **-ստան**-ը իրանական փոխառյալ ածանց է հա մարում՝ իրանական *stāna «տեղ» բառից: Նա հաստատում է, որ միջին պարսկերենում և պարթևերենում այն հիմնականում տեղանիշ է: Իմաստի լայնացմամբ ու փոխանցմամբ նաև dadestān՝ դատաստան (դատ բառարմատից) իմաստն ունի³¹:

Ստան-ի հոգնակերտության գործառույթով պայմանավորված՝ Սերոբ Ղազարյանը ծագումնաբանության նոր վարկած է առաջ քաշում: Ըստ նրա՝ **-ստան** հոգնակիակերտ վերջավորությունը կազմված է հոգնակիություն ցույց տվող մի քանի ածանցներից՝ **ս**-ից, **տ**-ից ու **ան**-ից³²: Իսկ Աննա Աբաջյանը այն համարում է պարսկերենից փոխառնված **օսթան** արմատը, որը հին հայերենում վերածվել է ածանցի: Հին պարսկերենում այն նշանակում էր բնակատեղի, որով կազմվել են հիմնականում երկրանունները և առաջին հերթին հենց պարսիկների երկրի անունը³³:

Բոլոր մեկնությունների հիմքում տեղանշությունն է. իսկ նշվող հոգնակիության իմաստը բխում էր բնակավայրերի, ընդլայնված տարածքների միավորում նշանակությունից:

Արցախի տեղանվանահամակարգում -ստան ածանցն առկայացած է Այգեստան (3 բնակավայր), Խնձրիստան, Գյուլիստան բնականուններում: Տեղանվանակերտ այդ միավորի բառակազմական արժեքը և մինչտեղանվանական իմաստը գիտակցելի է մնում դրանով բաղադրված բոլոր տեղանուններում:

²⁸ Պողոսյան Ն., *Հայերենի հոգնակիակազմ տեղանունները*, «Բանբեր Երևանի համալսարանի» 3, (96), Ե., 1998, էջ 105-113:

²⁹ Կարստ Յ., *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն*, Ե., 2002, էջ 166:

³⁰ Յ. Мурзаев, *Словарь народных географических терминов*, Москва, 1984, стр 520.

³¹ Հովհաննիսյան Լ., *Հայերենի իրականական փոխառություններ*, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1990, էջ 156:

³² Ղազարյան Ս., *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 2006, էջ 248:

³³ Աբաջյան Ա., *Հայերենի իրանական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականության մեջ*, Ե., 2006, էջ 229-230:

Այսպես՝ **Այգեստան** բնականունը նկարագրական-տեղագրական բնութագիր ունի: Այդ անվամբ երեք բնակավայր է նշվում Արցախի բնականվանացանկում³⁴:

Այս բնականունների պատմական տեղեկանքը փաստում է, որ **Այգեստան** անվան **-ստան** բաղադրիչը ոչ թե շատ, առատ նշանակությամբ կամ իր ածանցական արժեքի ընկալմամբ է տեղանվանակազմիչ գործառույթ ստացել, այլ իբրև նկարագրական արժեք ունեցող միավոր՝ այգեստան բառն է հենց դիտվել որպես հարմար բնականուն: Ու այս դեպքում մենք չունենք ստան տեղանվանակերտ մասնիկով բաղադրված բնականուն, այլ ունենք պարզ տեղանուն:

Խնձրիստան բնականվան մեջ -ստան մասնիկն առկայացած է հավաքական իմաստով, ինչպես Աճառյանն էր նշում՝ «բազմության մտքով է առնված»: Բնականվան բաղադրիչները պահպանել են իրենց բառային իմաստը, ուստի և հնարավոր է բառակազմական տրոհելիությունը. խնձոր և -ստան. վերջինս թե՛ հոգնակիություն, թե՛ տեղանք նշող գործառույթամբ է գործածվում: Քննելով հոգնակիակազմ տեղանունները՝ Ն. Պողոսյանը Խնձրիստան բնականունը նշում է այդ շարքում՝ ընդգծելով -ստան տեղանվանակերտ մասնիկի հավաքական նշանակությամբ կիրառությունը³⁵: ՀՀՇՏԲ-ում բնականվան առաջացումը կապվում է տեղամասում խնձորուտների առատության փաստով, որը հաստատել են տեղի բնակիչները³⁶:

Խնձրիստան տեղանվան քննությամբ հայկական տեղանվանագիտությանը բնորոշ մեկ այլ երևույթ է նաև վերհանվում: Ալեքսանդր Մարգարյանը Խնձրեակ տեղանվան ծագումնաբանությունը մեկնաբանելիս, նշում է, որ անցյալում հաճախ գյուղերը կոչվել են ծառերի, բույսերի, պտուղների և կամ դրանց հետ կապվող, դրանց վերաբերող անուններով, ինչպես օրինակ՝ Մորենի, Յողունի, Եղեգնաձոր, Տանձյակ, Ճապյակ: Գյուղանվանումների այս խմբի մեջ նա քննում է նաև Խնձրեակ-Խնձրեակ գյուղանունը, որը, կազմվելով խնձորի ծառանունից և -ակ վերջածանցից՝ փոքրացուցիչ-փաղաքշական իմաստի հետ մեկտեղ, անշուշտ, նաև խնձորի ծառերի՝ խնձորենիների տեղ է նշանակել³⁷: Դա հաստատում է նաև Ղ. Ալիշանը՝ նշելով՝ «Զարդիս Խնձրեակ կոչի և Խնձրիստան/խնձորի ծառի տեղ/, և ունի 610 երդս Հայոց»³⁸:

Գյուլիստանը բերդ-ամրոց էր Խաչենի գավառում՝ Մռավ լեռան հյուսիսային կողմում: Ժամանակին այն եղել է Ղարաբաղի մելիքների կայան: 1632թ. Մելիք Բեգլար 1-ինը վերանորոգել է բերդը, և այն եղել է Գյուլիստանի մելիքության նստավայրը: Ըստ ՀՀՇՏԲ-ի տեղեկանքի՝ այն ծաղկուն վարդաստան էր, որից և առաջացել էր բերդանունը³⁹: Նույնանուն վանք կա բերդից 3 կմ հեռավորության վրա՝ Գյուլիստանի Մուրբ Ամենափրկիչ վանքը: Նույնանուն գյուղ ևս կար, որից հարավ էր գտնվում բերդը: 1917թ. վկայված փաստաթղթում գյուղը

³⁴ **Մարգարյան Լ.**, *Համանունության պատմալեզվաբանական հիմքերը Արցախի բնականուններում*. Հայ լեզվաբանության 11-րդ միջազգային գիտաժողով, հոկտեմբերի 2-5-ը, 2017:

³⁵ **Պողոսյան Ն.**, նշված հոդվածը:

³⁶ *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., **Հակոբյան Թ.**, հ. 4, Ե.1986, էջ 777:

³⁷ **Մարգարյան Ալ.**, *Տեղանվանական մեկնություններ*, Պատմա-բանասիրական հանդես, հ. 1, 1992, էջ 138, ISSN 0135-0536:

³⁸ **Ալիշան Ղ.**, *Միսական*, Վենետիկ, 1893, էջ 263:

³⁹ *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., **Հակոբյան Թ.**, հ. 1, Ե., 1986, էջ 906:

հաշվառված էր Իգիբմիդորդի/24/ շրջանում, նույն ժամանակահատվածում Գյուլիստան անվամբ առանձին շրջան էր նաև նշվում՝ 29 բնակավայրերով: ԽՍՀՄ տարիներին շրջանն ընդհանուր անվանվեց Շահումյանի անվամբ, իսկ Գյուլիստան անվամբ բնակավայրն ընդգրկվեց շրջանի մեջ: Գյուլիստանլու անվամբ նաև Կուրի ավազանի գետակ կար, որի հովտում գյուղն ու բերդն էին: Թեպետ բնականուն և ջրանուն համանունների առկայության դեպքում ջրանունն ավելի հին է լինում սովորաբար, բայց այս դեպքում, կարծում ենք, գետակի անունը ավելի ուշ շրջանի ծնունդ է, երբ արդեն բերդը, վանքը կամ բնակավայրը կային: Այդպես կարծելու հիմնավորումը գետակի անվան բաղադրյալ կազմությունն է՝ գյուլիստան + լու. Գյուլիստաններով շուրջառված: Բացի այդ հին գետանունները պարզ կազմություններ են, և ջրանուն հիմք, այնուամենայնիվ, ունեն: Այս դեպքում իբրև գետանուն Գյուլիստանլու-ն մեկնաբանելի է դառնում միայն որպես երկրորդային տեղանունից բաղադրված երրորդային անուն:

Արցախի տեղանվանահամակարգում ի հայտ եկած առաջին Գյուլիստանը իբրև տեղանուն բաղադրյալ է՝ գյուլ/ճաղիկ/ և ստան բաղադրիչներով, իսկ համանուն ձևերը առաջնային տեղանունից սերված երկրորդային տեղանուններ են:

-Ստան ձևույթը, փոխառված լինելով իրանական լեզուներից, հայերենում ձեռք է բերել նաև հավաքական իմաստ: ՀՀ բնականվանացանկում այս ձևույթով բաղադրված 2 բնակավայր է նշվում՝ Սրգաստան, Ձորաստան:

-Ավան ձևույթի իմաստագործառական արժեքը

Աւան. V դարից վկայված այս բառին վերագրվում է իրանական ծագում: Հր. Աճառյանը բառը ստուգաբանում է պահլավերենից ծագող *āvahana* ձևից՝ գյուղ, ավան նշանակություններով, որը պարսկերենում, պիտի լիներ աւահան, իսկ հայերենի ձայնական օրենքներով աւան⁴⁰: Գ. Ջահուկյանը նույնպես բառի իրանական ծագումն է հաստատում⁴¹: Է. Մուրզաևը նույնպես բառի իրանական՝ միջին պարսկերենից ծագման վկայությունն է տալիս՝ զուգահեռ նշելով նաև ուրարտական *-ebani*-ի ձևը՝ երկիր նշանակությամբ: Նաև նշում է բառագուգաբանությունները մեգրելական, ուզբեկական, կիրգիզական, ադրբեջանական լեզուներում⁴²: Ըստ Գր. Ղափանցյանի՝ այն կապ ունի ուրարտական *-ebani*-ի հետ: Նա մերժում է բառի իրանական ծագումը և փաստում ուրարտախուռիական ծագումը՝ նշելով, որ այն փոխանցվել է հայերենին և վրացերենին: Ասորական, իրանական ձևերը Գր. Ղափանցյանը փոխառություն է համարում հին ասիանիկ լեզուներից⁴³: Ըստ այդմ՝ հիմնավոր կերպով հերքվում է բառի իրանական ծագումը: Լ. Հովհաննիսյանը նույնպես բառի իրանական ծագումը մերժում է՝ այն ներկայացնելով ստուգաբանական նոր ապացույցներով իրանական փոխառությունների խմբի մեջ չմտնող բառերի ցանկում: Լ. Հովհաննիսյանը նշում է, որ աքեմենյան արձանագրություններում բառը կիրառված է 2 անգամ և գործածված է միայն օտար տեղանուններ նշելիս:

⁴⁰ Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1926, հ.1, էջ 353:

⁴¹ Ջահուկյան Գ., *Հայերեն ստուգաբանական բառարան*, «Ասողիկ» հրատ., Ե., 2010, էջ 99:

⁴² Զ. Մուրզաև, *Словарь народных географических терминов*, Москва, 1984, стр 37.

⁴³ Ղափանցյան Գր., *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1961, էջ 133-134: Капанцян Гр., *Историко-лингвистические работы*, Т II, Изд. Акад. Наук Арм. ССР, Ереван, 1956, стр. 164.

Սա հիմք է տալիս մտածելու, որ բառն էլ պարսկերենում գիտակցվել է օտար, քանի որ ընդունված երևույթ է օտար անվանումները օտար բառերով ներկայացնելը: Եվ ընդհանրացնելով՝ նշում է, որ ներլեզվական և արտալեզվական տվյալները առավելաբար հաստատում են աւան բառի ուրարտական ծագումը, քան իրանականը⁴⁴:

Հայերենում այն թե՛ անկախաբար կիրառվող տեղանիշ արմատ է, թե՛ տեղանվանակերտ բառակազմական ձևույթ:

Խորհրդային տարիներին Արցախի տեղանվանահամակարգում ավան եզրը գյուղ և քաղաք տեղանիշ միավորների հոմանշային շարքի միջանկյալ անդամն էր՝ նշելով գյուղաքաղաքային միջավայր ունեցող առավել խոշոր բնակավայրեր: Ինչպես՝ Ասկերան ավան, Մարտակերտ ավան, Մարտունի ավան(Անկախության շրջանում, վարչատարածքային բաժանումների մասին որոշման համաձայն, այդ բնակավայրերը որպես քաղաք նշվեցին. դրանք Արցախի շրջկենտրոններն են): Ավան-ն այս հարադրություններում անկախաբար կիրառվող և իր նյութական նշանակությամբ գիտակցվող տեղանիշ միավոր էր:

Իսկ ահա համադրական բարդություններում ավան-ն առկայացել է իբրև տեղանվանակերտ մասնիկ. այդ կազմություններում ապանյութականացումն ակնհայտ է, թեպետ գյուղ մինչտեղանվանական նշանակությունը դեռևս ընկալելի է, բայց առավելաբար ածանցական արժեքով:

Այսպես՝ ավան տեղանվանակերտ մասնիկով բաղադրված բնականունները կարելի է դասակարգել 2 խմբի. անձնանուն հիմքով և հասարակ անուն (գաղափարական կամ տեղանշային իմաստով)հիմքով բաղադրություններ:

Անձնանուն հիմքով և -ավան տեղանվանակերտ ձևույթով բաղադրություններ են.

Արմենակավան. Այն ազատագրված Փոքր Ջինլիի վերանվանումն է: Բնակավայրն անվանակոչվել է ի պատիվ և ի հիշատակ Արցախյան առաջին ազատամարտի նահատակ Արմենակ Մարտիրոսյանի: Արմենակ Մարտիրոսյանը ծնվել է Սյունիքի մարզի Տաթև գյուղում: Կամավորագրվել և մասնակցել է Արցախյան ազատագրական պայքարին: Ձուկվել է 1994թ.: **Վուրգավան** է անվանվել ազատագրված Խանդեկ գյուղը՝ Կուրբաթլուի շրջանում: Գյուղի ազատագրման համար կատաղի մարտերում զոհված հրամանատար **Վուրգ Ոսկանյանի** անունով է կոչվել: **Հովսեփավան.** գյուղն անվանել է գյուղի հիմնադիր Յուրի Ջահանգիրյանը իր հոր՝ Հովսեփի անունով⁴⁵:

Հայկավան. ազատագրված տարածք է Ջաբրայելի շրջանում. ադրբեջանցիներով բնակեցված Սիրիկքենդը 90-ականներից դարձավ հայկական՝ Հադրութի շրջանի Հայկավան գյուղ: **Սուրենավան** անվանվեց ազատագրված Շահբուլաղ գյուղը. վերջինիս ազատագրության մարտերը ղեկավարում էր Ակնաղբյուրի գումարտակի հրամանատար Արշավիր Ղարամյանը. բնակավայրն անվանակոչվել էր ի պատիվ նրա հոր՝ Սուրեն Ղարամյանի: **Տիգրանավան** (Կուրբաթլուի շրջան), **Քիրսավան** (Քյոհնաքենդ). Վերջինը լեռնանուն հիմքից:

Հասարակ անուն հիմքով և -ավան տեղանվանակերտ ձևույթով բաղադրություններ են.

⁴⁴ **Հովհաննիսյան Լ.,** *Հայերենի իրականական փոխառություններ*, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1990, էջ 221-222:

⁴⁵ **Մելքումյան Ս.Ա.,** նշվ. աշխ., էջ 110:

Գեոտավան. հայկական բնակավայր է, Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի ափին: **Խնկավան** (Խունգութալա). հիմնադրվել է 19-րդ դարի վերջին Վաղուհասից այդտեղ տեղափոխված ընտանիքներից⁴⁶: **Ագատավանը** ագատագրված տարածք է, և վերանվանվել է ի նշում ագատագրման հերթական փաստի: **Քնարավան.** ագատագրված տարածքը Քարվաճառի մյուս բնակավայրերի հետ միասին 1921 թվականին բռնակցված էր **Խորհրդային Ադրբեջանին**: 1923-1930 թվականներին վերոհիշյալ տարածքը՝ **Կարմիր Քուրդիստանի օկրուգի**, իսկ 1930 թվականին Քելբաջարի շրջանի կազմում էր⁴⁷: **Կարմիրավան** (Նոր Կարմիրավան), **Հացավան**(2000թ. հունիսի 6-ին վերանվանված Յարմջա բնակավայրը՝ Մարտակերտի շրջանի), **Քաջավան**(Ամիրանլար). ագատագրված տարածք. վերանվանվել է ի պատիվ բոլոր քաջերի:

Հատկանշելի է այն փաստը, որ մինչ խորհրդային կարգերի հաստատումը Արցախի տեղանվանացանկում վկայված չէր -ավան ձևային բնականուն՝ բացառությամբ **Մարգուշանի** (Ավան Յուզբաշովի դստեր անունով). Մարգուշա+ավան: **-Ավան** ձևային տեղանվանակազմիչ գործառույթի ակտիվությունը նկատելի է խորհրդային և հետխորհրդային՝ անկախության շրջաններում. այդ շրջաններում և հատկապես անկախության շրջանում վկայված բնականունների թիվը 15 է⁴⁸:

Զուգադրելով քննության արդյունքները ՀՀ համանուն ցանկին՝ հատկանշելի է, որ ՀՀ բնականվանացանկում⁴⁹ նշյալ ձևայիններից գործառական ակտիվությամբ հատկանշվում է **-ավան** բաղադրիչը: Այդ բաղադրիչով կազմված մոտ 7 տասնյակ բնականուն կա(64), որոնցից 20-ը՝ հատկանուն սերող հիմքով, մնացյալը՝ հասարակ անուն հիմքով: Ընդ որում, այդ ձևային տեղանվանակազմիչ գործառույթի ակտիվությունը դարձյալ խորհրդային և հետխորհրդային շրջանին է հասցեագրվում: Նշյալ ցանկում կան նաև համանուն բնականուններ. Շենավան՝ 3 բնակավայր, Նորավան՝ 2, Հացավան՝ 2:

Եզրակացություն

Արցախի տեղանվանական համակարգի փոխառյալ -կերտ-, -ստան- և -ավան բաղադրիչներով կազմված տեղանունները կարևոր վկայություններ են տարածքի լեզվամշակութային իրականության ու պատմության վերաբերյալ: Դրանք լոկ արտաքին ներթափանցումների կամ օտար մշակույթների ուղղակի ազդեցության հետևանք չեն: Վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք վերաիմաստավորվել են հայոց լեզվամտածողության մեջ, տեղայնացվել հայկական լեզվամշակութային միջավայրում՝ դառնալով տեղանվանման ներքին գործառութային տարրեր:

Այսպիսով՝ Արցախի տեղանունները պատմական շերտերի յուրօրինակ արտացոլանք են, որոնք ցույց են տալիս լեզվամշակութային շփումների, փոխառությունների և դրանց

⁴⁶ **Բալայան Վ.,.** *Արցախի հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր*, Ե., Զանգակ, 2020, էջ 294–295.

⁴⁷ Տե՛ս նույնը, էջ 547–548:

⁴⁸ «*ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին*» ԼՂՀ 1998թ. հունիսի 26-ի ՀՕ-15 օրենքի (2011թ. ապրիլի 1-ի ՀՕ-Ն օրենքների լրացումներով ու փոփոխություններով) հավելված թիվ 2:

⁴⁹ *Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան.* - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե «Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Ե., 2008, 212 էջ:

տեղայնացման գործընթացները: Այդ տեղանունները ոչ միայն հուշում են պատմական գործընթացների ու դրանց հետևանք լեզվաբանական զարգացումների մասին, այլև հաստատում են հայկական տեղանվանաստեղծ ավանդույթի շարունակականությունն ու ինքնատիպությունը:

Margaryan Lusine - The Semantic and Word-Formational Function of The Suffixes –kert, –stan, and -avan in the Toponymy of Artsakh. - The toponymic inventory of Artsakh contains a significant number of hybrid toponyms, among which those formed with Iranian-origin suffixes comprise a considerable part. The analysis of these toponyms reveals, on the one hand, the outcomes of semantic development of both native and borrowed elements, as well as the functional value of pre-toponymic and toponymic meanings; on the other hand, it demonstrates their reinterpretation within the Armenian language, highlighting the role of toponymy as a carrier of linguistic and cultural memory.

The subject of the study is toponyms formed with the Iranian suffixes –kert and –stan. Also considered are toponyms with the -avan suffix, whose etymological origin is attributed either to the Iranian or Urartian languages.

The suffix -kert in Armenian functions as an active toponymic word-forming element, expressing ideas of creation, construction, or foundation. In the toponymy of Artsakh, this suffix is preserved both in historical and newly-established settlement names: Tigranakert, Dastakert, Drnakert, Martakert, Stepanakert, Yervandakert, etc.

The suffix -stan denotes a place, territory, or country and, in Armenian, often also expresses plurality or collectivity. In the toponymic system of Artsakh, this suffix is found in such names as Aygestan (three settlements), Khndzristan, and Gyulistan.

The -avan suffix in Armenian is used both as an independent root denoting a settlement and as a word-forming element. During the Soviet era, in the toponymic system of Artsakh, -avan served as an intermediate unit between the designations of village and town, referring to larger settlements with a semi-urban character, while in compound formations -avan acts as a toponymic forming suffix. Notably, before the establishment of Soviet rule, there were almost no toponyms with the -avan suffix in Artsakh (with the exception of Margushevan, formed from Margusha+avan, named after the daughter of Avan Yuzbashi). The word-forming function of -avan became particularly active during the Soviet and post-Soviet periods, with 15 such toponyms recorded in the independence period: Armenakavan, Hovsepavan, Azatavan, Haykavan, Getavan, Khnkavan, Karmiravan, Hacavan, Kajavan, Knaravan, Kirsavan, Midjnavan, Vurgavan, Tigranavan, and others.

The toponyms of Artsakh are a distinctive reflection of various historical layers, demonstrating the processes of linguistic and cultural contacts, borrowings, and their localization. These toponyms not only indicate the historical processes and the resulting linguistic developments but also confirm the continuity and originality of the Armenian tradition of toponymic formation.

Keywords: -kert, -stan, -avan, suffixes, Artsakh, toponym, word formation, semantic value, Iranian origin.

Margaryan Lusine, PhD in Philology, Associate Professor, Institute of Language after H.Acharian, NAS RA.

Маркарян Лусинэ - Семантическая и словообразовательная функция формантов -керт, -стан и -аван в топонимии Арцаха.- В топонимическом реестре Арцаха значительное

количество занимают гибридные топонимы, в составе которых присутствуют форманты иранского происхождения. Их исследование, с одной стороны, выявляет результаты семантического развития исконных и заимствованных единиц, а также функциональную ценность до топонимических и топонимических значений; с другой стороны, подтверждает их переосмысление в армянском языке, что свидетельствует о роли топонимики как носителя языково-культурной памяти.

Предметом исследования являются топонимы, образованные с помощью иранских формантов *-керт* и *-стан*. Также рассматриваются топонимы с формантом *-аван*, этимологическая принадлежность которого приписывается либо иранскому, либо урартскому происхождению.

Формант *-керт* в армянском языке функционирует как активный словообразовательный элемент для топонимов, выражая идеи создания, строительства или основания. В топонимии Арцаха он сохранился как в исторических, так и в современных названиях населённых пунктов: Тигранакерт, Дастакерт, Дрнакерт, Мартакерт, Степанакерт, Ервандакерт и др.

Формант *-стан* означает место, территорию или страну, а в армянском языке часто выражает также идею множественности или собирательности. В топонимической системе Арцаха этот суффикс представлен в таких названиях, как Айгестан (три населённых пункта), Хндзристан, Гюлистан.

Формант *-аван* в армянском языке употребляется как самостоятельный корень, обозначающий населённый пункт, а также как словообразовательный элемент. В советское время в топонимической системе Арцаха *-аван* занимал среднее положение между обозначениями села и города, отмечая более крупные населённые пункты с полугородским характером. В сложных образованиях *-аван* выполняет функцию топонимообразующего элемента. Примечательно, что до установления советской власти в топонимии Арцаха топонимы с формантом *-аван* практически отсутствовали, за исключением Маргушевана (Маргуша+аван, по имени дочери Авана Юзбаши). Активность словообразовательной функции *-аван* проявилась в советский и особенно в постсоветский периоды: в данный период зафиксировано 15 топонимов с этим формантом, таких как Арменакаван, Овсепаван, Азатаван, Айкаван, Гетаван, Хнкаван, Кармиракан, Хацаван, Каджаван, Кнараван, Кирсаван, Миджнаван, Вургава, Тигранаван и др.

Топонимы Арцаха представляют собой своеобразное отражение исторических пластов, демонстрируя процессы языково-культурных контактов, заимствований и их локализации. Эти топонимы не только свидетельствуют о лингвистических изменениях и исторических процессах, но и подтверждают преемственность и самобытность армянской традиции образования топонимов.

Ключевые слова: -керт, -стан, -аван, форманты, Арцах, ойконим, топоним, словообразование, семантическая ценность, иранское происхождение.

Маркарян Лусинэ, кандидат филологических наук, доцент, Институт языка имени Р. Ачаряна НАН РА.

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ **peh*₂- ‘ՊԱՀՊԱՆԵԼ, ՀՄԿԵԼ, ԱՐԱԾԵՑՆԵԼ’ ԲԱՅՑ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲՆԻԿ և ՓՈԽԱՌՅԱԼ ՇԵՐՏԵՐՈՒՄ

Հրաչ Մարտիրոսյան
(Լեյդեն / Բեռլին / Վյուրցբուրգ)

Հնդեվրոպական **peh*₂- ‘պահպանել, հսկել, արածեցնել’ բայարմատը բնիկ հայկական ճանապարհով ներկայացված է **ph*₂-*tēr* ‘հայր’ > *hայր*, **h₃eui-peh*₂- ‘ոչխարապահ’ (հմմտ. սանսկրիտ *avi-pā-lá*-‘հովիվ’) > **howiwā*- > *հովի* (գործ. հոլ. *hովուս*), **peh*₂-*je*- > *հայիմ* և **peh*₂-*tro*- > *հաւր-ան* ‘հոտ, փարախ’ բառերի մեջ: Այն նաև արտացոլված է իրանական աղբյուրներից փոխառված բազմաթիվ բառերի և անձնանունների մեջ՝ *սպատ*, *բարասպան*, *գր(ա)պան*, *դարասպան*, *թումբան*, *հյաստակ*, *շահասպ*, *չոբան*, *պահեմ* / *պարհեմ*, *պահակ* / *պարհակ*, *պահասպան*, *պահրան*, *Շահասպ*, *Շահպան*, *Շահպատ*, *Շահրասպան* և այլն:

Այս փոխառություններից մի քանիսը համադրում են այս նույն հնդեվրոպական արմատից կազմված երկու ձևեր, օրինակ *պահասպան(ակ)* և *պա(ր)հակասպան* < իրանական **pāθra(-ka)*- + **pāna(-ka)*-, հմմտ. միջ. պարսկ. *pās-bān*- ‘պահասպան, հսկող, հովիվ’, մանիք. պարթև. *pahragbān* [*phrgb’n*] ‘դիտակետի պահակ’: Այսպիսի դեպքերում դժվար է որոշելը՝ գործ ունենք իրանական բաղադրություններից կատարված ամբողջական փոխառությունների հե՞տ, թե՞ հայերենի հողի վրա կազմված բառերի: Հետաքրքիր են նաև *հաւրան* ‘հոտ, փարախ’ և *պահրան* ‘արոտատեղի’ բառերը, որոնք երկուսն էլ ունեն նույն ռնգային ածանցը, բայց մեկը բնիկ է, իսկ մյուսը՝ փոխառյալ:

Հոդվածում այս բառանյութն ամփոփ ներկայացնելու և ստուգաբանական հավելումներ անելու փորձ է արվում: Հատուկ ուշադրություն է հատկացվում մի կողմից հմայակների՝ կախարդական պահպանակների անվանումներին (*պահանորդ*, *պահասպան*, *պահպանակ*, *գրասպանակ*), իսկ մյուս կողմից՝ *պայ/պայն* պահասպան ոգու անվան ստուգաբանությանը:

1. Հնդեվրոպական **peh*₂- բայարմատը և դրա հայկական ժառանգները

1.1. Հնդեվրոպական **peh*₂- ‘պաշտպանել, պահպանել, պահել, հսկել, արածեցնել’ բայարմատը ներկայացված է լեզվաընտանիքի բազում ճյուղերում: Նախ դիտարկենք բայարմատի մաքուր ձևը.

- սանս. *pāti* ‘պաշտպանել, հսկել’;
- ավեստ. *pā*- ‘պաշտպանել’;
- սեպագիր լուվ. *pa*- ‘պաշտպանել (?)’:

Արմատն արտացոլված է նաև հայերեն *հովի*, թեք հոլ. *հովու-ա*- ‘հովիվ’ բառում, որ շարունակում է **h₃eui-peh*₂- բառացի ‘ոչխարապահ’ բաղադրությունը, որի առաջին անդամը

1 This work was possible due to the DFG Centre for Advanced Studies “MagEIA – Magic between Entanglement, Interaction, and Analogy” at the University of Würzburg (DFG project 470815550) and the Alexander von Humboldt Foundation, to both of which I express my deepest gratitude.

**h₃eui-* ‘նշխար’ բառն է, հմմտ. լուվ. *hāwi-*, սանս. *ávi-*, հուն. *ὄϊς, ὄφρις*, լատ. *ovis*, ռուս. *ов-яа*, թոխ. Բ *ā(u)w* և այլն. հմմտ. սանս. *avi-pālā-* ‘հովիվ’, նասն *go-pá-* m. ‘նախրապան’²:

1.2. Հնդեվր. ներկա **peh₂-s-*

• իւեթ. *pahš-* ‘պաշտպանել, պահպանել; դիտել, պահել (երդումը կամ գաղտնիքը), հնազանդել (հրամաններին)’;

• լատ. *pāstor* ‘հովիվ’;

• հինեկեղեց. սլավ. *pasti* ‘հովվել, արածեցնել, կերակրել’:

1.3. Հնդեվր. ներկա **p(e)h₂-ské-*

• լատ. *pāscō, -ere* ‘կերակրել, արածեցնել’:

1.4. Հնդեվր. ներկա **peh₂-je-*

• ավեստ. *ni.pāiiōiš* (Yašt 1.24) ‘պաշտպանել’, իտտան. *pai-*;

• սողդ. *p’y* ‘պահպանել, պահել, հսկել, պաշտպանել’ (Sims-Williams / Durkin-Meisterernst 2022: 159b), մանիք. պարթ. & միջ. պարսկ. *pāy-* [*p’y-*] ‘պաշտպանել, պահպանել; պահել (պաս)’, մանիք. միջ. պարսկ. *pāy* [*p’y*] ‘պաշտպան’ (?);

• Արմ. *հայիմ* ‘նայել, դիտել, գննել’. մի տեսակետի համաձայն *հայ* անվանումը նույնպես ածանցված է այստեղից:

Հնդեվր. **pe/oh₂-i-u-* կազմության շուրջ տես § 4.3:

1.5. Հնդեվր. **peh₂-ter-* ‘պաշտպան’, **peh₂-tr-o-* ‘պաշտպանություն’

• սանս. *pātár-m.* ‘պաշտպան’, *pātra-* ‘vessel, container, cup, goblet’;

• ավեստ. *pātar-* ‘պաշտպան’, մանիք. միջ. պարսկ. *pādār* [*p’d’r*] ‘պաշտպան’; **pāθra-* ‘պաշտպանություն’. ավեստ. *pāθra-uuant-* ‘պաշտպանություն շնորհող’, մանիք. միջ. պարսկ. *pāhr* [*p’hr*] ‘դիտակետ’;


• հայ. *հայրան* ‘հոտ, փարախ’, եթե սրա բնիմաստն է ‘արոտ’ կամ նման մի բան. հմմտ *պահրան* ‘արոտավայր’ (Սմբատ Սպարապետ, 13-րդ դար, Կիլիկիա), որ կարող է լինել հնդեվրոպական նույն կազմության իրանական **pāθra-na-* ժառանգից կատարված փոխառություն:

Ամենայն հավանականությամբ՝ հնդեվրոպական **ph₂tēr* ‘հայր’ բառը նույնպես ածանցված է այս բայից (տես, օրինակ, Clackson 2007. 70):

1.6. Ստորև աղյուսակը ներկայացնում է հնդեվրոպական **peh₂-* ‘պաշտպանել, պահպանել, հսկել, արածեցնել’ արմատի բնիկ հայկական ժառանգներն ու ցեղակից լեզուների տվյալները:

²Հնդեվրոպական լեզուների ստուգաբանական տվյալները վերցված են հետևյալ հիմնարար աշխատանքներից՝ Pokorny 1959. 787; Mallory / Adams 1997. 198b, 200b, 416; LIV 2001. 460; Kloekhorst 2008. 611-613; de Vaan 2008. 448-449; Derksen 2008. 392; Beekes 2010, 2. 1217. հնդիրանականները՝ Mayrhofer EWAia 2, 1996. 112, 119, 121; ЭтимСловИран 6, 2020. 277-280, 284; Cheung 2007. 288-289. մանիքեականները՝ Durkin-Meisterernst 2004.139a, 257b, 259-260, 274a. հայերենի ստուգաբանական նյութը՝ Hübschmann 1897, ՀԱԲ 1-4 & Ջահուկյան 2010 s.vv.; Ջահուկյան 1987 և Olsen 1999 passim (տես բառացանկերը); Martirosyan 2010. 401, 419-420:

³ Հայ. *հայիմ*, *հայ* և *հայրան* բառերի ստուգաբանական քննարկման շուրջ տես Martirosyan 2010, 386-387, 401:



2. Իրանական փոխառություններ

Այս հնդեվրոպական արմատը հայերենում արտացոլված է նաև բազում իրանական փոխառությունների տեսքով:

2.1. Իրանական *pā- և *pā-ta-

ապաստ՝ շեն՝ < *ā-pā-ta-, հմմտ. բակտր. *αβαδοσ*՝. 'մշակված', նոր պարսկ. *ābād* 'մշակված, բնակեցված, շեն (վայր, բնակավայր)';

հպատակ, *h-w* հոլ. 'հպատակ, ենթակա, հնազանդ' < **hu-pātaka-* 'լավ պաշտպանված', հմմտ, ավեստ. *hu-pāta-* ած. 'լավ պաշտպանված', միջ. պարսկ. անձնանուն *Hu-pād* [*hwp't*] 'Լավ-պաշտպանված'⁴;

շահապ 'իշխան, նախարարապետ, քաղաքապետ, գավառապետ' և *Շահապ* անձնանուն < միջ. պարսկ. *šahrap* 'սատրապ, փոխարքա, գավառապետ', պարթև. *xšahrap* [*hštrp*], միջ. պարսկ. անձնանուն *Šahrab* [*štrp*] < հին իրան. **xšaθra-pā-*, նաև հայ. *Շահպան*, *Շահրապան* < **Xšaθra-pā-na-* (հմմտ. ասուր. *Satarpānu* և այլն)⁵;

⁴ Անձնանունը՝ տե՛ս Gignoux 1986. 100 № 462:

⁵ Martirosyan 2021. 275-276 № 541, 278-279 № 549, 280 № 551:

Շահպատ, 17-րդ դարի մի արձանագրության մեջ (Արցախ, գյուղ Ճարտար)⁶. ամենայն հավանականությամբ փոխառված է հին իրանական **xšaθra-pāta-* բաղադրությունից սերող մի միջինիրանական անձնանունից:

2.2. Իրանական **pā-θra(-ka)-*

պա(ր)հ, ni հոլ.՝ պահպանել, դիտել, հսկել՝, **պահ-ք, n** հոլ.՝ հոգն. ‘պահեցողություն, պաս’ (որից ունենք **պա(ր)հեմ** ‘պահել, պահպանել, հսկել, պաշտպանել’ բայը) < **pāθra-* (հմմտ. մանիք. միջ. պարսկ. *pāhr* [p’hr] ‘պահակակետ’);

պա(ր)հակ, ի-ա հոլ. ‘պահակ, պահապան, պահակակետ; ամրակետ կիրճերում’ < **pāθra-ka-* (հմմտ. մանիք. պարթև & միջ. պարսկ. *pahrag* [phrg] ‘դիտակետ, պահակակետ’):

Ուշագրավ է հայ. **աւրին-ա-պահ** ‘օրենքը պահպանող’ բառը (հմմտ. *պահեսջիք զաւրէնս* / *φωλάξεσθεφωλασσωτόν νόμον* «դուք պիտի պահպանեք օրենքը», Ելից ժգ.10), որը կարող է մեկնաբանվել որպես իրանական ծագման երկու արմատների բաղադրություն հայերենի հողի վրա կամ էլ ամբողջական փոխառություն պարթևական **aβ(i)-dēna-pāθra(a)-* < հին իրան. **abi-daina-pātra-* ‘օրենքը / կրոնը պահպանող’ կազմությունից, հմմտ. սողդ. (մանիքեական գիր) *dynpδ’ry* m. ‘նրանք, որ պահպանում են կրոնը’, սողդ. (սողդական գիր) *dynp’šy*, *dynh-p’š’y* m. ‘կրոնի պահապան’, նաև՝ դիցանուն (Sims-Williams / Durkin-Meisterernst 2022.91b):

2.3. Իրանական **pā-na(-ka)-*

-(ա)պան՝ պահպանող, պաշտպան՝ < **pā-na-* միջարքկազմություններում, օրինակ՝ **բարապան & դարապան** ‘դռնապան’, հմմտ. մանիք. միջ. պարսկ. *darbān* [drb’n] ‘դարպասը պահպանող’ (նկատենք **դռն-ապան** կազմությունը բնիկ հայկական **դուռն** բաղադրիչով); **գրապան, ի-ա** հոլ. (նաև **գրապանակ**) ‘զգեստիեզր՝ վզի, քղանցքի վրա և այլն; վակաս, ուսանոց; գրպան’ (հմմտ. միջ. պարսկ. *grīwbān*, նորպարսկ. *girībān* ‘վիզը պահող, վզնոց’ < **graiua-pāna-* ‘վիզը պահող, վիզը պաշտպանող’⁸) և այլն⁹:

-(ա)պանակ < **pāna-* (տեսնախորդը) + **-ka-* (հմմտ. մանիք. պարթև. *pānag* [p’ng] ‘պահպան, վերակացու; հովիվ’, մանիք. միջ. պարսկ. *pānāg* [p’n’g] ‘պաշտպան, պահապան’) միջարք բառերի կազմում, օրինակ՝ **կշտ-ա-պանակ** ‘կուշտը՝ կողը պահող կամ արածն զարդ’ **կուշտ** ‘կող, կողք; փոր՝ բաղադրիչով (հմմտ. միջ. պարսկ. *kust* ‘կողմ, ուղղություն; մարզ’, նորպարսկ. *kušt* ‘փոր’)¹⁰: Նկատենք նաև բնիկ հայկական ծագման բաղադրիչներով կազմությունները, օրինակ՝ **լանջ-ա-պան** և **լանջ-ա-պանակ** ‘լանջը՝ կուրծքը պահող գրահ’ (Ալեքսանդրի վեպ և Հովհաննես Դրասխանակերտցի): Իսկ **գրապանակ** բառի շուրջ տես § 3.4:

⁶ Բարխուտարեանց 1895. 116: Այս արձանագրությունը կորած է համարվում (Դիվձայվիմ 5, 1982. 163-164 № 569): **Շահպատ** անձնանվան մի այլ վկայություն տես ԱճառԱնձն 4, 1948. 171 s.v. *Շնրհաւոր* № 2:

⁷ Այս բառի և այլ իրանական փոխառությունների *ni* հոլովման շուրջ տես Olsen 1999. 860-861; Korn 2013. 80 et passim:

⁸ Իրանական ձևերը տես *ЭтимСловИран* 3, 2007. 291-292 & 6, 2020. 282:

⁹ Տես հատկապես Olsen 1999. 321-323:

¹⁰ Olsen 1999. 247, 888:

Ուշագրավ են *պահապան(ակ)* ‘պահպանող, պահապան, պահակ’ և *պա(ր)հակապան*՝ պահապան, պահակ; կայագոր՝ բառերը, որ համադրում են միևնույն իրանական արմատի երկու տարբեր կազմությունները՝ **pāθra(-ka)*- (տես § 2.2) և **pāna(-ka)*-, հմմտ. միջ. պարսկ. *pās-bān*- ‘պահապան, հսկող; հովիվ’, մանիք. պարթև. *pahragbān*[*phrgb'n*] ‘դիտակետի պահակ’; *պահպանակ* բառի շուրջ տես § 3.3:

3. Հայերեն *պա(ր)հ*- արմատը ‘հմայական պահպանակ’ իմաստով կազմություններում

Հայերեն *պա(ր)հ*- ‘պահպանել, դիտել, հսկել’ արմատով կազմված կազմությունները հաճախ ենթարկվում են իմաստային զարգացման՝ նշանակելով ‘համայիլ, հմայակ, կախարհական պահպանակ’:

3.1. Ոսկեդարյան *պահանորդ* ‘պահակ, պահապան’ կազմությունը ուշ մատենագրության մեջ գործածված է ‘հմայակ, պահպանակ’ իմաստով: Դիտարկենք մեկական վկայություններ նախնական և երկրորդային իմաստների համար.

Եւ կացաք յաղօթս առ Տէր Աստուած մեր, և կացուցաք պահանորդս ի վերայ մեր ի տուէ և ի գիշերի առ ի յերեսաց թշնամեացն (Նեեմի դ.9)¹¹:

Արարից քեզ պահանորդս, զի մի՛ ակնահարեսցիս կամ ակնահարիս յումեքէ (Հ/Յայսմաւորք իբ և իա apud ՆՀԲ 2. 586c):

3.2. Վերոհիշյալ *պահապան* ‘պահպանող, պահապան, պահակ’ (§ 2.3) բառն իր այդ բնիմաստով վկայված է նաև «Կանոնագիրք Հայոց»-ում՝ միջձայնավորի կրճատումով *պահպան* ձևի հետ, որն այստեղ ունի ‘հմայակ, պահպանակ’ իմաստը և դրված է *հմայեակ* հոմանիշի կողքին: Ահա քաղվածքը¹².

Չէ մարթ քահանայից եւ ուխտաւորաց մոզս եւ թովիչս եւ դիւթս եւ վիուկս լինել կամ առնել հմայեակս եւ պահպանս, որ ճշմարտութեամբ չեն պահապանք, այլ կապանք հոգւոցն նոցին:

«Չի կարելի, որ քահանաները և ուխտյալները լինեն մոզեր, թովիչներ, դյութեր և վիուկներ, կամ անեն համայիլներ ու պահպանակներ, որ իրականում ոչ թե պահպանողներ են, այլ նրանց հոգիների կապանքներ»:

3.3. Ունենք նաև *պահպանակ* ‘մարմինը զենքի հարվածից պաշտպանող զրահ’ (< հին իրան. **pāθra-pāna-ka*-) բառը, օրինակ՝

եւ պահպանակս բարձից եւ բազկաց «և ոտքերի ու ձեռքերի պահպանիչ զրահներ»¹³:

Իսկ Կանոնագրքում գտնում ենք՝ *պահպանակս հմայականս* (ՆՀԲ 2. 588c):

3.3. Ապա գտնում ենք *-ական* ածանցով ձև՝ *պահպանական*, որ ‘հմայակ, պահպանակ’ իմաստով հանդիպում է հետևյալ վկայություններում.

¹¹ Զօհրապեան 1805, 2. 435:

¹² Հակոբյան ԿՀ 1, 1964. 237 տող 3-5: Միջնաձայնավորի կրճատումով առաջացած *պահպան*, հոգնակի սեռական *պահպան-ա-ց* ձևի այլ վկայություններ տես Հակոբյան ԿՀ 1, 1964. 322 տող 2, 413 տող 9:

¹³ Մովսէս Խորենացի 1.ժա (1913=1991. 36 տող 1; հմմտ. անգլ. թարգմ. Thomson 2006. 84):

Գրեն ի քարտիսի և կապեն ի բազուկս և ի պարանոցս մանկանց իւրեանց և անասնոց <...> և պահպանականս կոչեն¹⁴։

Ի գիրս փոքունս գրել և կախել ի վերայ լանջացն, գոր պահպանականք կոչէին¹⁵։

3.4. Ոսկեդարյան **գրապանակ**՝ հմայակ, պահպանակ՝ բառը վկայված է Մատթեոս իգ. 5-ում՝ թարգմանելով հունարեն *φωλακτήριον*՝ ‘հսկվող ամրավայր, ամրոց; հմայակ’¹⁶։

Եւ գամենայն (գ)գործս իւրեանց առնեն՝ ի ցոյցս մարդկան. լայնեն գրապանակս իւրեանց և երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց։

Մխիթար Սեբաստացին (1749. 197b) այս **գրապանակ** բառը մեկնաբանում է այսպես՝ *գիր պահպանող* կամ *կամ գիր* պահպանութեան։ Հյուբշմանը¹⁷ դիտարկում է այն որպես հայերեն *գիր* և *պանակ* բաղադրիչներից կազմված բառ՝ “Schriftbewahrer” իմաստով, և այն անջատում է համանուն **գրապանակ**՝ զգեստի եզր՝ վզի, քղանցքի վրա և այլն՝ բառից, որն ամբողջությամբ իրանական փոխառություն է, հմմտ. միջին պարսկ. *grīwbān*՝ ‘վիզը պահող, վզնոց’ (տես § 2.3)։ Այս տեսակետը լայնորեն ընդունվում է¹⁸։ Աճառյանն (ՀԱԲ 1. 602-603) առարկում է, թե այս դեպքում **գրապանակ** բառը պիտի նշանակեր ‘գիր պահող, գրի պահապան’, ոչ թե ‘պահապան գիր’, և այս **գրապանակ**-ը նույնացնում է իրանական փոխառություն **գրապանակ**՝ ‘*վիզը պահող’ բառին։

Սակայն սա վճռորոշ հակափաստարկ չէ, քանի որ **պանակ* իրանական **pāna-ka-* բաղադրիչը կարող է և վերաբերել ‘պահել, պարունակել’ գաղափարին, հմմտ. օրինակ խորեզմ. *bn(y)k*՝ ‘պահաման, անոթ’ (ЭтимСловИран 6, 2020. 283)։ Բացի դրանից, Հայաստանի տարբեր տարածքներից ունենք ազգագրական բազում տվյալներ Չարաչքի դեմ՝ գիր պարունակող (եռանկյունաձև) հմայակների մասին, որոնք կարվում կամ կապվում էին երեխաների շորին՝ վզին կամ անութին կամ այլուր, կամ կախվում էին երեխաների կամ անասունների վզից¹⁹։

Հետևաբար կարելի է մտածել, որ *գր-ա-պանակ*՝ *գիր պարունակող հմայակ, որ կարվում կամ կապվում էր վզին կամ ուսին կամ կախվում էր վզից՝ բառը հայերենի հողի վրա կազմված բառ է, որ կարող էր բաղարկվել իրանական **graiua-pāna-*՝ ‘վիզը պարունակող / պաշտպանող’ բաղադրությունից փոխառված **գրապանակ**՝ ‘զգեստի եզր՝ վզի, քղանցքի վրա և այլն; վակաս, ուսանոց; գրպան’ բառի հետ։

¹⁴ Կանոնագիրք apud ՆՀԲ 2. 588c:

¹⁵ Յովհաննէս Երզնկացի Ծործորեցի (Ներսէս Շնորհալի), «Մեկնութիւն Մատթեոսի» apud ՆՀԲ 2. 588c:

¹⁶ Զօհրապեան 1805, 4. 51; Künzle 1984, 1. 61a, Künzle 1984, 2. 172a:

¹⁷ Hübschmann 1897. 132 № 153:

¹⁸ Künzle 1984, 2. 172a; Olsen 1999. 248 ծնթ. 105, 873; Ջահուկյան 2010. 175b, բայց հմմտ. 1987. 521, 568, 577: Հմմտ. նաև Ալիշան 1910. 411, 431; Աբեղյան 1965. 276 § 224:

¹⁹ Տվյալների զգալի մասի համար երախտապարտ եմ Սաթենիկ Ղարազոյանին: Այստեղ ներկայացնում եմ բազմաթիվ տվյալներից միայն մի քանիսը. Աճառեան 1913. 378a; Վարդանյան 2009. 98, 301 (Համշեն); Պետոյան 1965. 496 (Մասուն); Տեր-Մկրտչյան 1970: 148-150 (Վան); Միքայելյան 1980. 142b (Նոր Բայազետ); Լիսիցյան 1969. 200, 309 (Սյունիք); Հովսեփյան 2009, 1. 213, 448 (Ղարաղաղ):

4. Հայերեն *պայ, պայն* ‘մի առասպելական էակ’

4.1. Հայերեն *պայ, պայն* ‘մի առասպելական էակ’ բառը երկիցս վկայված է Եզնիկ Կողբացու երկում (5-րդ դար) և այլուր: Ջուզաձևերից ավելի վստահելի է *պայն* տարբերակը (Mariès 1927): Սա ամրապնդվում է նաև բարբառային տվյալներով, որոնցից Աճառյանը (ՀԱԲ 4. 16a) նշում է միայն *տն-պայն* (Ագուլիս) և *տն-պան* (Աստապատ) ‘տունը պահպանող ոգի’ ձևերը՝ նշելով, որ *այ* երկբարբառն օրինաչափորեն պահպանվում է Ագուլիսի բարբառում:

4.2. Եվդոկիայի բարբառում գտնում ենք *պան* բառը, որ վերաբերում է անտառներում բնակվող մի ոգու, որի ահից մարդիկ չեն միզում ծառերին տակ (Գազանճեան 1899. 50): Կարծում եմ սա նույնպես սերում է քննվող *պայն* դիվանունից, ընդ որում *այ>ա* զարգացումը միանգամայն օրինաչափ է այս բարբառում, հմմտ. *այլ>ալ, հայր>հար, ձայն>ձան* և այլն (տես Գազանճեան 1899. 13): Համադրելով Ագուլիսի՝ արևելյան բարբառի ‘տան պահապան ոգի’ իմաստը ծայր արևմտյան Եվդոկիայի բարբառի ‘անտառի պահապան ոգի’ իմաստի հետ՝ կարող ենք վստահորեն ամրագրել հին հայկական *պայն* ‘պահապան ոգի կամ աստվածություն’ բառը:

4.3. Այս բառն ընդունված ստուգաբանությունն չունի: Թեև եղել են իրանական **pā(-na)-* ին համադրելու որոշ փորձեր, սակայն ձևի ու բնիմաստի անհստակության պատճառով դրանք ընդունելության չեն արժանացել²⁰: Ավելի խոստումնալից է Ասատրյանի (Asatrian 2013: 16) զգուշավոր ու հպանցիկ համեմատությունը MPers. *pāy* ‘protector’, որը, կարծում եմ, չի հարուցում ոչ հնչյունական, ոչ էլ իմաստային խնդիրներ: Գործ ունենք այս հողվածումս քննվող հնդեվրոպական արմատի **peh₂-i-* հիմքից ածանցված **pe/oh₂-i-u-s* գոյականի հետ (§ 1.4), որի ժառանգներն են՝

- սանս. *pāyī-* m. ‘պահապան, պաշտպան, պահապան ոգի, պաշտպանող աստված’,
- հին և նոր ավեստ. *pāiiu-* m. ‘պահապան, պաշտպան, հովիվ’;
- հուն. *ποιμήν* m. ‘հովիվ, տավարած’, *πῶν, -εος* n. ‘ոչխարի հոտ’:


Հնդեվրոպական **pe/oh₂-i-* նախաձևի կազմության համար հմմտ. սանս. *tāyī-* m. ‘thief’ <*(s)teh₂-i-ú- (Lubotsky 1988. 44-45):

Այս արմատից սերող միջին իրանական **pāy(u)-* գոյականը, հնդարիական ցեղակցի նման, կարող էր նշանակել ‘պահապան ոգի կամ աստված’, որից էլ, առանց որևէ խնդրի, կարող էր փոխառվել հայերեն *պայ-ն* բառը՝ ոնգային հավելումով (վերջինիս շուրջ տես Weitenberg 1985): Հիշենք հատկապես *ճուռաղ* ‘մի առասպելական էակ’ հոմանիշը, որի կողքին ունենք նաև *ճուռաղ-ն* տարբերակը (ՀԱԲ 3. 203a): Մյուս կողմից՝ հայերեն *պայն* բառի վերջնառոնգայինը կարող է համեմատվել հնդեվրոպական **peh₂us-(V)n-* ‘հովվական աստված, կենդանիների հովանավոր աստված’ դիցանվան (հմմտ. վեդայական *Pūśán-* և հունական *Πόν,*

²⁰ Տես ՀԱԲ 4.16a; Feydit 1987, հատկապես 318-319 ծնթ. 4; Ջահուկյան 2010. 619a:

Πάονι) ընգային ածանցի հետ, ընդ որում այս դիցանունը նույնպես սերում է քննվող *peh₂- ‘պահպանել, պաշտպանել’ բայարմատից²¹:

5. Անվտիիչ պատկեր



²¹ Այս դիցանվան շուրջ տես Mallory / Adams 1997. 415; West 2007. 281-283, 293, 302-303; Beekes 2010, 2.

Օգտագործված գրականություն

Աբեղյան, Մանուկ

1965 Հայոց լեզվի տեսություն (տեքստը տպագրության պատրաստեց և խմբագրեց Ալ. Ս. Մարգարյանը). Երևան. «Միտք» հրատարակչություն:

Ալիշան, Ղևոնդ

1910 Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք Հայոց. Վենետիկ. Ս. Ղազար:

Աճառյան, Հրաչյա Հակոբի (Աճառեան)

1913 (Աճառեան), Հայերեն գաւառական բառարան. Թիֆլիս («Էմինեան ազգագրական ժողովածու», հտ. Թ):

1942-62 Հայոց անձնանունների բառարան [ԱճառԱնձն 1-5]. 1, 1942; 2, 1944; 3, 1946; 4, 1948; 5, 1962. Երևան. Երևանի համալսարանի հրատարակչություն [1-4 հատորները = *Գիտական աշխատություններ* 21, 24, 25, 26]:

1971-79 (ՀԱԲ), Հայերեն արմատական բառարան, 4 հատորով (2-րդ հրատ.). Երևանի համալսարանի հրատարակչություն [1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով]:

Բարխուտարեանց, Մակար եպիս.

1895 Արցախ. Բագու. Տպարան «Արօր»:

Գազանճեան, Յովհաննէս

1899 Եղոկիոյ հայոց գաւառաբարբառը. Վիեննա. Մխիթարեան տպարան:

ԴիվՀայՎիմ 1-9,

1960-2012 Դիվան հայ վիմագրության. 1, 1966 (*Հ. Ա. Օրբելի, Անի քաղաք*). – 9, 2012 (*Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, Լոռու մարզ*). Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:

Զօհրապեան, Յովհաննէս

1805, 1-4 Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց (4 հատորով). Վենետիկ. Ս. Ղազար:

Լիսիցյան, Ստեփան

1969 Զանգեզուրի հայերը. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

ՀԱԲ 1-4

տես Աճառյան 1971-1979

Հակոբյան, Վազգեն Ա.

1964-71 (ԿՀ 1-2) Կանոնագիրք Հայոց. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Հովսեփյան, Հովհաննէս

2009, 1-2 Ղարադաղի հայերը. 1. Ազգագրություն. 2. Բանահյուսություն. Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն («Ազգագրական և բանահյուսական ժառանգություն», 1-2):

Միքայելյան, Գ. Հ.

1980 Նոր Բայազետ. *Հայ ազգագրություն և բանահյուսություն* 11. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Մխիթար Սեբաստացի

1749 Բաղդիքի Հայկազեան լեզուի. Վենետիկ. ի տպարանի Անտոնի Պոթթոլի:
ՆՀԲ 1-2

1836-37 *Գ. Աւետիքեան, Խ. Միրսէլէեան, Մ. Աւզերեան*, Նոր բաղդիքի հայկազեան լեզուի. Վենետիկ. Սուրբ Ղազար., 2-րդ հրատ. Երևանի համալսարանի հրատարակչություն, 1979-1981:

Պետոյան, Վ. Ա.

1965 Սասնա ազգագրությունը. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Ջահուկյան, Գ. Բ.

1987 Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

2010 Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Աստղիկ» հրատարակչություն:

Վարդանյան, Մերգեյ

2009 Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը. նյութեր և ուսումնասիրություններ. Երևանի համալսարանի հրատարակչություն:

Տեր-Մկրտչյան, Ե.

1970 Վանեցոց հարսանիքը. *Հայ ազգագրություն և բանահյուսություն* 1. 143-198:

2000ff *В. С. Расторгуева, Д. И. Эдельман*, Этимологический словарь иранских языков. Москва: «Восточная литература» РАН. Том 1, 2000; 2, 2003; 3, 2007; 4, 2011; 5 [1-н], 2015; 6, 2020 [р-г].

Beekes, Robert S. P.

2010 *Etymological Dictionary of Greek* (with the assistance of Lucien van Beek). 2 vols. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 10.1-2).

Cheung, Johnny

2007 *Etymological dictionary of the Iranian verb*. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 2).

Clackson, James

2007 *Indo-European linguistics: an introduction*. Cambridge University Press.

Derksen, Rick

2008 *Etymological dictionary of the Slavic inherited lexicon*. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 4).

Durkin-Meisterernst, Desmond

2004 *Dictionary of Manichaean Middle Persian and Parthian*. Turnhout: Brepols. (Corpus Fontium Manichaeorum; 3.1).

Feydit, Frédéric

1987 *La démono-mythologie d'après les sources anciennes*. In: *Bazmavēp* 1987, 1-4: 316-336.

Gignoux, Philippe

1986 *Noms propres sassanides en moyen-perse épigraphique*. In: *Iranisches Personennamenbuch* (hrsg. von Manfred Mayrhofer und Rüdiger Schmitt). Band II, Faszikel 2. Wien: Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften.

Hübschmann, Heinrich

- 1897 Armenische Grammatik. 1. Theil: Armenische Etymologie. Leipzig: Breitkopf & Härtel [The first part of the book (pp. 1-280) was first published in 1895].

Kloekhorst, Alwin

- 2008 Etymological dictionary of the Hittite inherited lexicon. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 5).

Korn, Agnes

- 2013 Final troubles: Armenian stem classes and the word-end in late old Persian. In: *Commentationesiranicae: Vladimiro f. Aaron Livschitsnonagenario donum natalicium* [Sbornikstatej k 90-letiju V. A. Livšica] (ed. by Sergius Tokhtasev and Paulus Luria). Saint Petersburg: "Nestor-Istoria": 74-91.

Künzle, Beda O.

- 1984 Das altarmenische Evangelium – L'Évangile arménien ancien (2 vols). Bern, Frankfurt am Main, Nancy, New York: Peter Lang. (Europäische Hochschulschriften: Reihe 21, Linguistik und Indogermanistik; Bd. 33 = Publications universitaires européennes. Série 21, Linguistique et langues indo-européennes; vol. 33).

LIV

- 2001 Lexikon der indogermanischen Verben: die Wurzeln und ihre Primärstambildungen (2nd ed.) (ed. by Helmut Rix, Martin Kümmel, Thomas Zehnder, Reiner Lipp, Brigitte Schirmer). Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag.

Lubotsky, A. M.

- 1988 The system of nominal accentuation in Sanskrit and Proto-Indo-European. Leiden, New York, København, Köln: E. J. Brill. (Memoirs of the Kern Institute, 4).

Mallory, J. P. & Adams, D. Q.

- 1997 (eds.), *Encyclopedia of Indo-European culture*. London, Chicago: Fitzroy Dearborn Publishers.

Mariès, Louis

- 1927 Critique de quelques témoignages allégués en faveur de la forme *uyj*, *pay*, sans *n*. In: *Handēsamsōreay* 41: 767-772.

Martirosyan, Hrach K.

- 2010 Etymological dictionary of the Armenian inherited lexicon. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 8).
- 2021 Iranian personal names in Armenian collateral tradition. *Iranisches Personennamenbuch* V/3 (ed. by Rüdiger Schmitt, Heiner Eichner, Bert G. Fragner, and Velizar Sadovski). Vienna: Austrian Academy of Sciences Press, 2021 (Österreichische Akademie der Wissenschaften. Philosophisch-Historische Klasse; Sitzungsberichte 912. Iranische Onomastik 17).

Mayrhofer, Manfred

- 1992-01 (EWAia) Etymologisches Wörterbuch des Altindoarischen (3 vols). Heidelberg: Carl Winter Universitätsverlag.

Olsen, B. A.

- 1999 The noun in Biblical Armenian: origin and word-formation – with special emphasis on the Indo-European heritage. Berlin, New York: Mouton de Gruyter. (Trends in linguistics. Studies and monographs; 119).

Pokorny, Julius

- 1959 Indogermanisches etymologisches Wörterbuch. I. Band. Bern, München: Francke Verlag.

Sims-Williams, Nicholas & Durkin-Meisterernst, Desmond

2022 Dictionary of Manichaean Sogdian and Bactrian (second edition, revised and enlarged). Turnhout, Belgium: Brepols Publishers. (Corpus Fontium Manichaeorum, Dictionary of Manichaean texts, vol. III: Texts from Central Asia and China, part 2).

Thomson, R. W.

2006 *Moses Khorenats'i*, History of the Armenians: translation and commentary on the literary sources (revised edition of 1978). Ann Arbor: Caravan Books.

Vaan, Michiel de

2008 Etymological dictionary of Latin and the other Italic languages. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 7).

Weitenberg, Jos J. S.

1985 Additional *-n* in Armenian. In: *Annual of Armenian linguistics* 6: 101-106.

West, M. L.

2007 Indo-European poetry and myth. Oxford: University Press.

Մխիթարյան Արմենուհի

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս.
mkhitaryanarmenuhi@ysu.am

Բանալի բառեր. ակադեմիկոս, ակնավոր լեզվաբան, հայագետ, մանկավարժ, մարդ, քաղաքացի, կենագործունեություն:

Նախաբան

Հայ լեզվաբանության պատմության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Գյանջումի Աբրահամյանը: Գիտնական-մտավորական-հայագետ-մանկավարժ, ով իր ստեղծած ծանրակշիռ ժառանգությամբ, աբրահամյանական դպրոցով, հարուստ ու բազմաբովանդակ կյանքով դեռ իր կենդանության օրոք կերտել է իր իսկ անմահությունը: Արդեն իսկ 50-ական թվականներին լեզվաբանության ասպարեզում գիտության մեջ մի նոր անուն-ազգանուն է հայտնվում: Եվ արդեն շատ վաղուց **Սերգեյ Աբրահամյան** անուն-ազգանունը միայն գիտնականինը չէ, այլ հայ ազգինը:

Դիպուկ է նրան բնութագրում բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանը. «Արդեն 70-ական թվականներից ժամանակակից հայոց լեզուն Հայաստանում անձնավորված գիտություն էր, իսկ անձնավորված գիտությունն արդեն հեղինակություն է, հեղինակավոր գիտություն, ինչպես ասենք ֆիզիկայի բանագավառում բազում գիտնականներ կան, բայց առաջատարը Վիկտոր Համբարձումյանն է, այդպես էլ, աներկբայորեն, ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության մեջ առաջինը եղել է և դեռ երկար ժամանակ կմնա Սերգեյ Աբրահամյանը»:

Ս. Աբրահամյանի մասին շատ է գրվել և դեռ էլի պիտի գրվի, սակայն այդ հրապարակումները հիմնականում նրա գիտական ժառանգության ուսումնասիրմանն ու բացահայտմանն են միտված: Նրա գիտամանկավարժական մեծարժեք ժառանգության նկատմամբ այսպիսի հետաքրքրությունը հարգանքի տուրք է մեծանուն լեզվաբանի գիտական ժառանգությանը: Իսկ ինչպիսի՞ն էր Ս. Աբրահամյան մարդը և քաղաքացին:

Ուսումնասիրելով Ս. Աբրահամյանի աշխատությունները՝ մենագրություններ, ձեռնարկներ, գիտական և հրապարակախոսական հոդվածներ, ինչպես նաև նրա կյանքի և աշխատությունների մասին եղած ուսումնասիրությունները՝ փորձել ենք ի մի բերել և ներկայացնել Ս. Աբրահամյանին որպես գիտնական-լեզվաբան-հայագետ-մանկավարժ, մարդ և քաղաքացի:

Ս. Աբրահամյան գիտնական-լեզվաբան-հայագետ-մանկավարժը

Ծնվել է 1925 թվականի փետրվարի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետի շրջանի Տուսի գյուղում: 1942 թվականին գերազանց առաջադիմությամբ ավարտել է Տուսի գյուղի միջնա-

կարգ դպրոցը: 1942 թվականին գորակոչվել է Կարմիր բանակ և մասնակցել Հայրենական պատերազմի մարտերին. նախ՝ ծառայել է Բաքվի դիպուկահարների ուսումնարանում, ապա՝ մեկնել է ռազմաճակատ: 39-րդ հրաձգային գնդի կազմում որպես շարքային մասնակցել է Բրյանսկի և Գոմելի ազատագրման համար մղվող մարտերին: Ծանր վիրավորվել է 1943 թվականի նոյեմբերի 26-ին՝ Գոմելն ազատագրելու ժամանակ: Մինչև 1944 թվականի մայիսի 9-ը բուժվել է հոսպիտալում, որտեղից էլ զորացրվել և վերադարձել է իր ծննդավայրը:

1945 թվականին ուսուցիչ դառնալու մեծ երազանքը նրան բերել է Երևանի պետական համալսարան. ընդունվել է բանասիրական ֆակուլտետ և 1950 թվականին ավարտել այն գերազանց առաջադիմությամբ: Ավարտելուց անմիջապես հետո ընդունվել է ԵՊՀ-ի ասպիրանտուրան: 1953 թվականին փայլուն կերպով պաշտպանել է թեկնածուական, իսկ 1966 թվականին՝ դոկտորական ատենախոսություններ՝ ստանալով համապատասխան գիտական աստիճաններ: 1956 թվականին նրան շնորհվել է դեցենտի, իսկ 1970 թվականին՝ պրոֆեսորի կոչում, 1996 թվականից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս է:

Դեռևս ասպիրանտական տարիներից՝ 1952-1953 թթ., դասախոսել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնում: 1953 թվականից սկսել է աշխատել ՀՍՍՀ ԳԱ (այժմ՝ ՀՀ ԳԱԱ) Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում նախ՝ որպես ավագ գիտաշխատակցի պաշտոնակատար, 1956 թվականից՝ ավագ գիտաշխատակից, իսկ արդեն 1959 թվականից մինչև իր կյանքի վերջ դեկավարել է ժամանակակից հայոց լեզվի բաժինը: 1953-1958 թթ. համատեղությամբ դասախոսել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) Մ. Նալբանդյանի անվան, իսկ 1970-1971 թթ. Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտներում: 1972-1992 թթ. համատեղությամբ դասախոսել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: 1991-2003թթ. համատեղությամբ աշխատել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում և ղեկավարել հայոց լեզվի ամբիոնը:

Համալսարանական տարիներին նա շփվել և աշակերտել է հայ և համաշխարհային գիտական մտքի ներկայացուցիչների, անվանի հայագետների հետ, ինչպիսիք էին Արսեն Տերտերյանը, Գրիգոր Ղափանցյանը, Հրաձյա Աճառյանը, Էդուարդ Աղայանը, Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը և ուրիշներ: Շփվելով անվանի գիտնականներ հետ՝ Ս. Աբրահամյանը գիտակցել և կարևորել է մայրենի լեզվի զարգացման հայրենանվեր գործը և ամբողջությամբ նվիրվել այդ գործին: Հարազատ մնալով հայոց լեզվի քերականությանը հատուկ հետազոտական մեթոդներին, եղանակներին ու հայեցակարգերին՝ նա չի սահմանափակվել միայն ազգային ավանդների յուրացմամբ ու զարգացումներով: Նա առաջիններից էր, որ հայ իրակա-նության մեջ համաշխարհային լեզվաբանական մտքի նոր ու նորագույն նվաճումների լույսի ներքո է դիտարկել հայոց լեզվի վիճելի շատ հարցեր: Ս. Աբրահամյանը տեսաբանի խորագնին հայացքով անդրադարձել է լեզվում առկա վիճելի, տարակարծությունների առիթ դարձած հարցերին և գիտական հիմնավոր լուծումներ է տվել դրանց: Նա իր հետազոտություն-

¹ Տե՛ս **Հարությունյան Կ. Ա., Սահակյան Մ. Գ., Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի**, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Ե., 1988, էջ 39:

ները կառուցել է վերլուծական արդի եղանակների ու ձևերի՝ ժամանակի քննությունը բռնած ամենաառաջադեմ հայացքների ու ելակետային սկզբունքների համադրական հիմքի վրա:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի գործունեությունն ընդգրկուն է և բազմակողմանի. նա ուսումնասիրել է ժամանակակից հայերենի ամբողջ համակարգը՝ անդրադանալով կառուցվածքային բոլոր բաժիններին, կատարել գիտական լուրջ վերանայումներ, ճշգրտումներ, գրել դրանց վերաբերող մեծարժեք աշխատություններ: Այս առիթով Ն.Պառնասյանը գրել է. «Արդյունքը՝ չկա ժամանակակից հայերենի գիտական ուսումնասիրության որևէ բնագավառ, լինի դա քերականական կառուցվածք, խոսքի մասերի ուսմունք, բառագիտություն ու բառակազմություն, բառարանագրություն, տերմինաբանություն, շարահյուսություն, ոճաբանություն, գեղարվեստական գրականության լեզու և ոճ, ժամանակակից հայերենի պատմություն և այլն, որտեղ նա ասած չլինի իր ծանրակշիռ խոսքը»²:

Ս. Աբրահամյանը առաքելական անձնուրաց խորհրդով, չթուլացող եռանդով ու աշխատասիրությամբ իր կյանքի ընթացքում ստեղծել է գիտական պատկառելի ժառանգություն՝ երկու տասնյակին մոտ մենագրություններ, դասագրքեր, ձեռնարկներ ու հարյուրից ավելի գիտական ու հրապարակախոսական հոդվածներ, որոնք բոլորն էլ աչքի են ընկնում բարձր գիտականությամբ, արդիականությամբ, խոր և համակողմանի քննությամբ, տեսականի ու գործնականի անխզելի կապով, խոսքի պարզությամբ, ճշգրտությամբ ու մաքրությամբ, որը լուրջ ներդրում է հայ լեզվաբանության մեջ:

Ս.Աբրահամյանգիտնականի վաստակը ներկայացնող ուսումնասիրություններ շատ կան և դեռ կլինեն, հետևաբար և այս հոդվածում նպատակահարմար չենք գտել մանրամասն անդրադառնալ այդ հարցին:

Առաջին մենագրությունը՝ «Արդի հայերենի դերանունները» (1956 թ.), որն, ի դեպ, նրա թեկնածուական ատենախոսությունն է եղել, մեծ ճանաչում է բերել նրան: Այստեղ նա մանրամասն ուսումնասիրել և գիտական նոր մոտեցմամբ քննել է ժամանակակից հայերենի դերանունները, ճշգրտել սահմանումը, դրանց տեղը հայերենի խոսքի մասերի համակարգում, ձևաբանական, շարահյուսական և ոճական առանձնահատկություններն ու կիրառությունները՝ առաջ քաշված խնդրին տալով սպառիչ լուծում: Այնուհետև իրար են հաջորդել «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» (1959 թ.), «Ժամանակակից հայերենի շարահյուսության հարցեր» (1962 թ.), «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965 թ.), որն եղել է նրա դոկտորական ատենախոսությունը, «Հայերենի կետադրություն» (1992 թ., որը վերահրատարակվել է 1999, 2002 թթ.), «Մեր լեզուն և մեր դպրոցը» (2001 թ.):

Նա այն մտավորականներից էր, որը կարողացել է համատեղել տարատեսակ աշխատանքներ և բոլորի հիմքում մայրենի լեզվի շահն է եղել: Տասնամյակներ ի վեր գիտական գործունեությանը զուգահեռ Ս. Աբրահամյանը կատարել է նաև դասախոսական իր վեհ առաքելությունը. դասավանդել է ժամանակակից հայերենի բոլոր բաժիններին վերաբերող թե՛ տեսական, թե՛ գործնական դասընթացներ՝ հիմք դնելով աբրահամյանական դպրոցին: «Դասա-

² Մանրամասն տե՛ս **Պապոյան Ա.**, *Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյան (ծննդյան 75-ամյակի առթիվ)*. Պատմաբանասիրական հանդես, Ե., 2000, հմ. 2, էջ 278-279:

³ **Պառնասյան Ն.**, *Ի շահ հայերենագիտության*. Գրական թերթ, Ե., 1985, 8 մարտի, էջ 4:

խոսության միշտ գնացել ու գնում եմ ներքին պահանջով, հաճույքով, սիրով: Աշակերտի, ուսուցչի, դպրոցի հետ ես կապված եմ մտքով ու սրտով: Եվ քանի որ ես մանկավարժներ եմ պատրաստում, ուրեմն և այստեղ էլ ոչ միայն իմ միտքն է, այլև՝ իմ սիրտը: Ավելացնեմ նաև, որ երիտասարդների հետ շփումը ինձ վրա դրական ներգործություն է ունենում»⁴: Որպես մարդ՝ նա հոգի էր դնում բոլոր այն գործերի մեջ, որոնցով զբաղվում էր, որպես դասախոս՝ բարեխիղճ էր, անաչառ, սրտացավ, հոգատար... անվերջ կարելի է թվել Ս. Աբրահամյանի արժանիքները:

Մեծ է ակադեմիկոսի վաստակը նաև գիտական կադրեր պատրաստելու հայրենանվեր ու շնորհակալ գործում: Նրա ղեկավարությամբ ու արժեքավոր խորհրդատվությամբ գիտության շեմն են անցել երկու տասնյակից ավելի ինչպես հայաստանաբնակ, այնպես էլ արցախաբնակ գիտաշխատողներ՝ պաշտպանելով թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, որոնք գիտամանկավարժական գործունեություն են ծավալել և ծավալում հանրապետության տարբեր բուհերում, ինչպես նաև գիտահետազոտական հիմնարկներում՝ շարունակելով աբրահամյանական դպրոցի ավանդույթները: Մեջբերենք նրա առաջին ասպիրանտի՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Խ. Բաղիկյանի խոսքերը իր սիրելի ղեկավարի մասին. «Իր ուսանողների ու ասպիրանտների համար նա հանդիսանում է աշխատասիրության, ընտրված ասպարեզի նկատմամբ նվիրումի, ազնվության ու բարեխղճության օրինակ»⁵: Երիտասարդների (ուսուցիչներ, ասպիրանտներ) հետ աշխատանքի մասին Ս. Աբրահամյանը ասել է. «... ես շատ եմ սիրում երիտասարդներին, և նրանց հետ աշխատելն ինձ համար հաճելի է»⁶:

Հիմնականում դասավանդելով մանկավարժական բուհերում և մասնակցելով մայրենի լեզվի ուսուցիչներ պատրաստելու հայրենանվեր գործին, միշտ էլ կապը պահել է հենց դպրոցի հետ՝ սատարելով թե՛ դպրոցին, թե՛ ուսուցչին: Իսկ գործող ուսուցիչների հետ պարբերաբար հանդիպում-քննարկումները ոչ միայն հարուստ փորձի փոխանցում էին, վարպետության բարձրացում, այլև իր սեփական կենսագործունեության օրինակով մայրենի լեզուն ճանաչել, արժևորել, սիրել, նախանձախնդրորեն պահպանել ու պաշտպանել սովորեցնելն էր:

Արդարացի է գրել Ն.Պառնասյանը. «Դժվար է պատկերացնել հայ լեզվաբաններից մեկ ուրիշին, որ այնքան սերտ կապված լինի դպրոցի հետ, որքան Ս. Աբրահամյանը: Բազմաբնույթ են այդ կապերը. գիտական և գիտամեթոդական բնույթի ձեռնարկներ ու հոդվածներ ուսուցիչների համար, գործուն մասնակցություն մայրենի լեզվի դպրոցական ու բուհական ծրագրերի կազմության ու խմբագրության, մայրենի լեզվի ուսուցման կազմակերպման աշխատանքներին, ամենօրյա աշխատանք ուսուցիչների հետ (զեկուցումներ, կոնսուլտացիաներ) և վերջապես դպրոցական դասագրքեր: Քաջածանոթ լինելով դպրոցական կյանքին և մայրենի լեզվի ուսուցման հետ կապված խնդիրներին ու դժվարություններին՝ նա մեծ հայրենասիրությամբ է իր գրիչն ու գործը նվիրել այդ բնագավառին»⁷:

⁴Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք է (Հարցազրույց Ս.Գ. Աբրահամյանի հետ).- Առաքյալ, Ե., 1997, հմ. 3, էջ 4:

⁵Բաղիկյան Խ., Հայագիտական վաստակով. - Հայրենիքի ձայն, Ե., 1975, 19 փետրվաի, էջ 6:

⁶Որտեղ էիր, մարդ Աստծո (Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ). - Կանչ, Ե., 1999, 15 սեպտեմբերի, էջ 7:

⁷Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 4:

Ս. Աբրահամյանի հեղինակած շատ գրքեր, ձեռնարկներ, հոդվածներ հասցեագրված էին հենց դպրոցին, ընդ որում նաև սփյուռքի դպրոցին: Ինչպես՝ Բ. Վերդյանի և Վ. Քոսյանի հեղինակակցությամբ գրված «Հայերեն լեզուի դասագիրք»-ը նախատեսված էր սփյուռքահայ դպրոցների միջին և բարձր դասարանների համար և առաջինն էր իր տեսակի մեջ (1966թ.), «Ժամանակակից հայերենի քերականություն»-ը (1969 թ., վերահրատարակվել է 1975 թ.) ևս գրվել էր ուսուցիչների համար, «Աշակերտի խոսքի զարգացում» (1973 թ.), «Հայոց լեզու: Բառ և խոսք: Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի VII-VIII դասարանների նախասիրական պարապմունքների համար» (1978 թ.), «Հայոց լեզու: Շարահյուսություն: Դասագիրք միջնակարգ դպրոցի VII-VIII դասարանների համար» (1985թ.), որը պարբերաբար վերահրատարակվել է մինչև 1997 թ., իսկ 1998թ.-ից ՀՀ Կրթության և գիտության նախարարության առաջարկով վերածվել երկու դասագրքի՝ «Հայոց լեզու: Շարահյուսություն, կետադրություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք» (1998 թ.), «Հայոց լեզու: Շարահյուսություն, խոսք, կետադրություն: Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք» (1998 թ.):

Ս. Աբրահամյանը բոլոր ուսումնասիրությունները գրելիս այքի առաջ է ունեցել թե՛ հանրակրթական ու բարձրագույն դպրոցը, թե՛ ուսուցչին ու դասախոսին, թե՛ ուսանողին ու ընդհանրապես հայոց լեզու ուսումնասիրող ցանկացած մարդու: Ահա այդ պատճառով էլ բոլոր ուսումնասիրությունները, ունենալով խոր գիտականություն, օժտված են նպատակադիր գործնական ուղղվածությամբ:

Վերոնշյալների մասին խիստ արժեքավոր է հենց իր մոտեցում-կոնցեպտը. «Գիտական և դասախոսական աշխատանքները ինձ համար միշտ եղել են, այժմ էլ մնում են հոգեկան ու գիտական ներքին պահանջ: Դրանք կարելի է համարել մեկը մյուսի շարունակությունը: Դասախոսությունները ինձ համար դառնում են իմ հետազոտական աշխատանքի արդյունքների ներդրման, կիրառության, դրանց ճշտության, համոզության ստուգման միջոց: Ի դեպ, դասախոսության մասին ասվածը վերաբերում է նաև դասագիրք գրելուն. առանց սեփական հետազոտական աշխատանքի և միայն ուրիշներիստեղծածով դասագիրք գրելը նման կլիներ ուրիշների ստեղծածը մասնակի վերադասավորումներով ու ձևափոխումներով վերավաճառելուն որպես սեփական ապրանք»:

Նա զարմանալիորեն համատեղել է նշված բոլոր աշխատանքները և որևէ բնագավառ արդյունքում չի տուժել, ընդհակառակը, որտեղ կար Ս. Աբրահամյան գիտնականը, այդ գործը շահում էր, իսկ ոլորտը՝ ծաղկում ու զարգանում: Հետաքրքիր և շատ կարևոր է այն հանգամանքը, որ լայնախոհ գիտնականը, խորությամբ ներթափանցելով իրերի և դրանց էության մեջ, իր դիտակետում է պահել կրթության բոլոր օղակները՝ սկսած տարրական դպրոցից¹⁰ մինչև բուհ, որոնք, ըստ էության, միևնույն փակ շղթայի իրար հետ սերտորեն կապված օղակներն են: Ահա թե ինչու է նա կադրեր պատրաստել թե՛ գիտության, թե՛ բուհի, թե՛ դպրո-

⁸ Տե՛ս **Դավաթյան Ռ.**, *Հայերենագիտության և դպրոցի նվիրյալը*.- Ս.Գ. Աբրահամյան. գիտական դիմակակար և կենսամատենագրություն, Ե., 2002, էջ 83:

⁹ *Որտե՞ղ էիր, մարդ Աստծո (Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ)*.- էջ 7:

¹⁰ 1972-1992 թթ. դասախոսել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում (նույն ամբիոնի վարիչ Ա. Տեր-Գրիգորյանի հրավերով)՝ նպաստելով դպրոցի տարրական օղակի կայացմանը, ինչը շատ կարևոր ու հետաքրքիր փաստ է:

ցի համար: Առաջին հայացքից դա կարող է չնկատվել, անգամ կարող է շրջանցվել այն փաստը, որ նա մշտապես աշխատել է հենց մանկավարժական բուհերում, բայց այդ բուլորը, մերկարծիքով, ռազմավարական նշանակություն ունեցող մոտեցման դրսևումներ են եղել: Այդ առիթով հենց ինքը՝ Ս.Աբրահամյանը, ասել է. «Հանրակրթությունը, բարձրագույն կրթությունը և գիտությունը համակարգային կապի մեջ են, դրանք օղակներ են մեկ ամբողջական շղթայի, որի ամրությունը պայմանավորված է ամեն մի օղակի ամրությամբ»¹¹:

Ս. Աբրահամյանի գիտական գործունեության մաս էր նաև գիտական-կազմակերպչական աշխատանքը: 1959 թվականից մինչև կյանքի վերջ հմտորեն ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայերենի բաժինը: Նրա ղեկավարության օրոք և շնորհիվ են լույս աշխարհ եկել ՀՍՍՀ ԳԱ (այժմ ՀՀ ԳԱԱ) Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած բազում արժեքավոր ուսումնասիրություններ: Նրա ղեկավարությամբ է պատրաստվել և հրատարակվել հայոց լեզվի ակադեմիական եռահատոր ուսումնասիրությունը՝ «Ժամանակակից հայոց լեզու» վերնագրով, որի հեղինակներից մեկն էլ ինքն էր: «Ժամանակակից հայոց լեզու: Հ. 2, Ձևաբանություն» հեղինակակիցներ Ն. Պառնասյան, Հ. Օհանյան (1974 թ.), «Հայոց լեզու: II մաս» հեղինակակիցներ Վ. Առաքելյան, Վ. Քոսյան (1975 թ.), «Ժամանակակից հայոց լեզու: Հ. 3, Շարահյուսություն» հեղինակակիցներ Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան (1976 թ.): Ս. Աբրահամյանի գիտական ղեկավարությամբ և հեղինակակցությամբ է գրվել նաև «Հայոց լեզվի զարգացումը խորհրդային շրջանում» (1973թ.) արժեքավոր ուսումնասիրությունը, որի ներածությունը ևս գրել է անձամբ Ս.Աբրահամյանը: Գրքում մանրամասն ուսումնասիրվել և ներկայացվել է խորհրդային շրջանում հայոց լեզվի զարգացման կեսդարյա պատմությունը: Կազմակերպել և ակտիվ մասնակցել է նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» ակադեմիական քառահատորի կազմությանը և հատկապես խմբագրմանը: Խմբագրել է նաև «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական հրատարակության 5-7-րդ հատորները, «Ժամանակակից հայերենի պատմությունը 1920 թ. մինչև մեր օրերը» աշխատանքը, ինչպես նաև խմբագրել ու գրախոսել է բազմաթիվ մենագրություններ ու աշխատություններ:

1962 թվականից անդամ էր Հայաստանի Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի: 1968-1973 թթ. համատեղությամբ աշխատել է ՀՍՍՀ լուսավորության նախարարության ՄԳԳ (մանկավարժական գիտությունների գիտահետազոտական) ինստիտուտում որպես հայոց լեզվի և գրականության բաժնի վարիչ: 1992 թվականից՝ ՀՀ կառավարությանն առընթեր Լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի անդամ էր: 1991-1993 թթ. ՀՀ լուսավորության նախարարության ՄԳԳ ինստիտուտում աշխատել է որպես հանրակրթական միջնակարգ դպրոցի հայոց լեզվի նոր ծրագրեր ու դասագրքեր ստեղծող հեղինակային խմբի գիտական ղեկավար ևն: Արդեն 1990-ական թթ.-ից Ս.Աբրահամյանի գիտական ղեկավարությամբ են շարադրվել 1-8-րդ դասարանների հայերենի բոլոր դասագրքերը՝ կիրառելով նրա մշակած և բարձրագույն աստիճաններում հաստատված սկզբունքները, որոնցից հատկանշական է քերականական նվազագույն գիտելիքներով ապահովել լեզվի

¹¹ Աբրահամյան Ս., *Մեր լեզուն և մեր դպրոցը*, Ե., 2001, էջ 37:

գործնական ուսուցումը¹²: 1996 թվականից եղել է ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի բանասիրության և արվեստագիտության պրոբլեմային գիտական խորհրդի նախագահ, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ:

Երկար տարիների գիտամանկավարժական բեղուն աշխատանքի համար ակադեմիկոս Ս. Աբրահամյանը միշտ էլ մեծ գնահատանքի է արժանացել. տարբեր տարիների տարբեր առիթներով նա արժանացել է տարբեր շնորհակալագրերի, պատվոգրերի և պարգևների, ինչպես նաև մարտական և աշխատանքային մի շարք մեդալների (միութենական և հանրապետական). 1985 թվականին պարգևատրվել է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով, 1986 թվականին լուսավորության նախարարության կողմից պարգևատրվել է Խաչատուր Աբովյանի անվան մեդալով, վերջինս ամենաթանկն էր իր համար, քանի որ դպրոցին մատուցած մեծ ծառայությունների համար էր:

Թերևս գիտնականի վաստակի գնահատանքի պակաս կարևոր հանգամանք չէ նաև այն փաստը, որ դեռ սովետական իշխանության օրոք որոշում է կայացվել և անվանի լեզվաբան Ս. Աբրահամյանին է հատկացվել խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյանի՝ Մաշտոցի պողոտայի 43-րդ շենքում գտնվող տունը, որտեղ նա ապրել է 1974-1990 թթ.:

Մեծանուն գիտնականի ծանրակշիռ վաստակի գնահատանքներից մեկն էլ 2001 թվականին հայրենի գյուղի՝ Արցախի Հաղորթի շրջանի Տումի գյուղի միջնակարգ դպրոցը նախկին սանի՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի անունով կոչելն էր: Այս առիթով ՀՀ ԳԱԱ այն ժամանակվա նախագահ Ֆ. Սարգսյանը ուղերձ-նամակով ակադեմիայի նախագահության անունից Արցախի վարչապետ Անուշավան Դանիելյանին հղել է ջերմ շնորհավորանքներ, ինչպես նաև գոհունակություն է հայտնել այդ գնահատելի նախաձեռնության առթիվ:

2015 թվականի մարտի 26-ին (Ս. Աբրահամյանի 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում)տեղի է ունեցել Ս. Աբրահամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի հանդիսավոր բացումը, որը փակցված է Մաշտոցի պողոտայի 43-րդ շենքի ճակատային մասում¹³:

2016 թվականի փետրվարից Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը անվանակոչվել է ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անունով: Դա ամբիոնի դասախոսների, հատկապես նրա ասպիրանտների երախտիքի ու գնահատանքի դրևորումներից մեկն էր¹⁴:

Ս. Աբրահամյան մարդը

Ս. Աբրահամյանը առավելապես հայտնի է որպես գիտնական, որն իր ամբողջ կյանքը նվիրաբերել է մայրենի լեզվի ուսումնասիրմանը: Նրա անձնական կյանքի մասին իմանալու

¹² Տե՛ս **Պապոյան Ա.**, նշվ. աշխ., էջ 281:

¹³ Ս. Աբրահամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի հ. 43 հասցեում փակցնելու վերաբերյալ քաղաքապետարան միջնորդություն է ներկայացրել ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը:

¹⁴ Ս. Աբրահամյանը նշանակալի դեր է ունեցել Արցախի պետական համալսարանի, հատկապես նրա հիմքը հանդիսացող հայոց լեզվի և գրականության ամբիոնի կայացման ու զարգացման հայրենանվեր գործում:

ամենահավաստի աղբյուրը իր ելույթների ու հարցազրույցների ժամանակ տրված հենց իր հուշումներն են: Արժեքավոր են հատկապես «Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք է» և «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո՞ւ» հոդվածները, որոնք հարցազրույցներ են Ս.Աբրահամյանի հետ, ինչպես նաև «Սերգեյ Աբրահամյան. հին լեզվի նոր պահպանը» ֆիլմը՝ նկարահանված 90-ամյակի առիթով, Արցախի հարազատ Տումի գյուղի դպրոցի անվանակոչության մասին պատմող հոլովակը, նաև այն հուշերը, որոնցով տարբեր առիթներով կիսվել են հարազատները, մտերիմները, գործընկերները, ընկերներն ու ասպիրանտները:

Մարդու կյանքում ամենակարևորը սկիզբն է՝ ակունքերն ու մանկությունը. «Այո՛, Արցախն իմ սկիզբն է, իմ գոյության ու գոյատևման սկիզբը: Ավելին՝ Արցախն իմ գոյատևման, իմ անցած ճանապարհի ու այդ ճանապարհին անցնելու կերպի սկիզբն է: Իդեալական ընտանիքի, ճշմարիտ մարդու, աշխատանքի, գրքի, ուսման, դպրոցի, ուսուցչի իմ առաջին պատկերացումներն ու սկզբունքային համոզմունքները ձևավորվել ու խորացել են Արցախում, արցախյան օրինակի վրա: Եվ քանի որ, ինչպես ասում են, հաջող սկզբի բոլոր կետն է և իմ անցնելիք հետագա ճանապարհի համար էլ այդ կերպը տրված էր ու յուրացված, այդ պատճառով էլ կյանքում կատարած իմ քայլերի համար, իմ մարդկային կերպարի համար ես ամենից առաջ պարտական եմ Արցախին՝ իմ հայրենի հող ու ջրին, իմ հայրական ընտանիքին, իմ հարազատ դպրոցին, իմ անսահմանորեն սիրելի ուսուցիչներին, որոնց նկատմամբ ես այժմ էլ ունեմ համեստ աշակերտի խոր երախտագիտության զգացում: Ի դեպ, դա միշտ զարմացրել է իմ ուսուցիչներին, իսկ ինձ էլ զարմացրել է, թե նրանք ինչու են զարմանում»¹⁵:

2001 թվականին՝ Տումու դպրոց այցելության ժամանակ, նա ասում է. «Ես այս գյուղի գավակն եմ, այս գյուղի որդին եմ, այս գյուղը, այս գյուղի ժողովուրդը, իմ ծնողն է, այս դպրոցը իմ ծնողն է, այս դպրոցը, այս գյուղը այն ակունքն է, որից ես ծնվել եմ: Տումին ծննդավայր չէ սուկ, Արցախը ծննդավայր չէ, որտեղ ես ծնվել եմ, վայր չէ, ակունք է, որը ինձ սնունդ է տվել»¹⁶:

Ընտանիքի մասին քիչ է խոսել կամ չի խոսել, բայց հարցազրույցներից մեկում նա բացել է փակագծերը և խոսել իր իդեալական ընտանիքի մասին. նախ՝ հայրական ընտանիքի մասին, որից, հատկապես իր ծնողներից ստացած սերն ու ջերմությունը հետագայում ինքը՝ որպես ծնող, պիտի դրսևորեր իր զավակների հանդեպ, ապա՝ իր ստեղծած ընտանիքի մասին, իր զավակների իր հանդեպ ունեցած սիրտ և զավակների հանդեպ ունեցած իր սիրտ մասին, ինչպես նաև կնոջ մասին, որտեղ անթաքույց կերպով երևան են գալիս գորովալից հայրն ու անմնացորդ սիրով սիրող ամուսինը: Երբ լրագրողը նրան հարցրել է՝ արդյոք նա իրեն համարում է երջանիկ հայր և պապիկ, հայրեր և զավակներ հավերժական հակասությունն արդյոք այցելել է իրեն, նա անկեղծացել է՝ պատասխանը նորից կապելով-համեմա-

¹⁵ *Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք է* (Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ).- էջ 3:

¹⁶ **Աբրահամյան Ս.**, Ելույթ.- *Արցախի Հաղորդի շրջանի Տումի գյուղի միջնակարգ դպրոցի՝ իր նախկին սանի՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի անվանակոչության մասին պատմող տեսաֆիլմ*, որտեղ մի քանի դրվագում խոսում է նաև Ս.Աբրահամյանը.- Ե., 2001,

<https://www.facebook.com/watch/?v=4479249258776989&rdid=hrDd1eRgUnxm7ELX>:

տելով իր Արցախի հետ. «Իմ հայրենի գյուղի երկնքում ամպերը տարբեր կերպ են գնահատվում գյուղացիների կողմից: Եթե ամպերը հավաքվում են Տոդասարի (որտեղ Գտիչ վանքն է) կողմից, ասում են, որ եղանակը փոխվելու է, իսկ եթե ամպերը հավաքվում են Դիզափայտ լեռան վրա, մարդիկ չեն անհանգստանում, ասում են՝ լեռ է, էլի, մի քիչ կամալի ու կանցնի: Իմ ընտանեկան երկնքում երբեմն հայտնված ամպերը նման են Դիզափայտի փեշերին երևացող ամպերին: Քանի որ իմ զավակները և թոռնիկները երջանիկ են զգում իրենց, ուրեմն, ես երջանիկ հայր ու պապիկ եմ: Ի դեպ իմ որդին (Աշոտ) և դուստրը (Անահիտ) որպես դասախոս աշխատում են Երևանի պետհամալսարանում: Ինչ վերաբերում է «հայրեր և զավակներ» հավերժական պրոբլեմին, ապա որքան էլ դա հավերժական է բոլոր ժամանակների համար, բայց անխուսափելի չէ բոլոր ընտանիքների համար: Այդ պրոբլեմը չի եղել իմ հայրական ընտանիքում (իմ հոր, մոր և իրենց հինգ տղաների և երկու դուստրերի միջև), չկա ու չի եղել նաև իմ ընտանիքում: Ըստ երևույթին, երբ ընտանիքում ծնողների նկատմամբ հարգանքը հասնում է ակնածանքի ու զուգակցվում է ջերմ սիրո հետ, ծնողներն էլ անսահման սիրով ու ջերմությամբ են պատասխանում զավակներին և միաժամանակ հասկանում նաև նրանց իրավունքը՝ այս կամ այն հարցում տարբերվելու նախորդ սերնդից, այսպիսի դեպքում բացառվում են հակասությունը, պրոբլեմը»¹⁷: Շարունակելով իր խոսքը՝ նա ասել է. «Ինչ խոսք, ժամանակի, կյանքի առաջընթացի հետ միասին փոխվում են նաև շատ ըմբռնումներ, հայացքներ, ճաշակներ: Սա պետք է հասկանան թե՛ ծնողները, թե՛ զավակները և իրա՛ր հասկանան, անհրաժեշտության դեպքում՝ միմյանց զիջեն: Դա անհրաժեշտ է թե՛ ամեն մի ընտանիքին և թե՛ հասարակությանը, ամբողջ ազգին: Դրանով նոր սերունդը չի կտրվի մեր ազգային, կենցաղային, մշակութային արժեքներից ու ավանդույթներից, միաժամանակ հասարակությունը կանգնած չի մնա նույն կետում, կշարունակի զարգանալ, բայց զարգանալ՝ պահպանելով նախորդ սերնդի ստեղծած արժեքներն ու անհրաժեշտ սովորույթները»¹⁸:

Ասվածից կարելի եզրակացնել, որ ոչ սկզբունքային հարցերում նա, անհրաժեշտության դեպքում, պատրաստ էր զիջել, ինչը շատ կարևոր հանգամանք է ընտանիքի, ինչու չէ, նաև հասարակության համերաշխության ու խաղաղության պահպանման հարցում:

Կնոջ մասին քիչ է խոսել, բայց յուրաքանչյուր բառ քննուշ էր, շատ ջերմ ու խոսուն: Ի դեպ, նրանք ծանոթացել են ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում, քանի որ Նորա Աշրաֆյանը (ով ամուսնությունից հետո սիրով պիտի վերցնեք ամուսնու ազգանունը՝ դառնալով Նորա Աբրահամյան) ևս սովորել է այնտեղ մեկ տարի ցածր կուրսում, և Ս. Աբրահամյանը՝ որպես ուսանող, այդ կուրսի հետ որոշակի աշխատանքներ էտարել: Նրանց շփումները պետհամալսարանից դուրս շարունակվել են ազգային գրադարանում, որտեղ երկուսն էլ, հատկապես Ս.Աբրահամյանը սիրել են երկար ժամանակ անցկացնել: Գրադարանային հանդիպումներից մեկի ժամանակ Ս. Աբրահամյանը շատ ռոմանտիկ մի քայլ է արել. երբ իր Նորան սեղանից հեռացել է՝ գիրք վերցնելու, նա արագ սեղանի վրա դաշտային ծաղիկներով զրել է սիրելիի անունը: Դաշտային ծաղիկներով, քանի որ իր Նորան շատ էսիրել դրանք. վերջինս հաճախ է

¹⁷ Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք է (Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ).- էջ 3:

¹⁸ Նույն տեղում:

իր զգեստի ճարմանդները զարդարել հենց այդպիսի ծաղիկներով, հատկապես սարի հոտավետ մեխակներով:

1951 թվականին, երբ դեռ ասպիրանտ էր, սիրելիի հետ ընտանիք է կազմել: Ջերմ սիրո ու հոգատարության մթնոլորտում ծնվել ու մեծացել են նրանց երկու զավակները: Որքան էլ որ դժվար էր, բայց հենց այդ տարիներին էր, որ նա գրել և փայլուն ձևով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Ընտանեկան հոգսերը, զավակների ծնունդը, նրանց արժանապատիվ կյանքով և դաստիարակությամբ ապահովելը, որոնք պակաս կարևոր չեն, և որ ամենակարևորն է, պակաս աշխատատար ու ժամանակատար չեն, երբեք իրար չեն խանգարել, Ս. Աբրահամյանը կարողացել է ընտանիքը համատեղել գիտամանակավարժական գործունեության հետ:

Տարիներ անց հարցազրույցներից մեկի ժամանակ, երբ լրագրողը փորձել է սադրել՝ ասելով, թե մի նենգ հարց է պատրաստվում տալ և հնչեցնել՝ արդյոք Ս. Աբրահամյանը նորից կամուսնանա՞ր իր կնոջ հետ, եթե հարսանիքը վաղը լիներ: Պատասխանը չի ուշացել. «Հարցը բոլորովին էլ նենգ չէ... Ըստ երևույթին «Առաքյալը» ցանկանում է իմանալ՝ եթե իմ կինը և ես հայտնվեինք մեր նախաամուսնական տարիքում ու վիճակում, կուզեի՞նք ամուսնանալ իրար հետ: Ինչպես ասում են՝ հարց չկա: Հենց որ «Առաքյալը» իրագործի մեզ մեր նախաամուսնական տարիքին ու վիճակին վերադարձնելու առաքելությունը, մենք հենց նույն օրը կամուսնանանք: Սպասում ենք և նախապատրաստվում»¹⁹: Այստեղ երևում են Աբրահամյանի հումորի զգացումը և սիրառատ սերը սիրելիի հանդեպ: Առհասարակ հարազատների, հատկապես կնոջ ու զավակների մասին խոսելիս գորովանք ու սեր կա նրա յուրաքանչյուր բառում:

Նրա երազանքների մասին կարող ենք իմանալ իր իսկ խոսքերից: Նախ՝ Տումի գյուղի միջնակարգ դպրոցի անվանակոչության մասին պատմող տեսահոլովակից, որտեղ նա ասել է. «Ճիշտն ասած, ես միշտ մտածել եմ, որ պետք է դառնամ ուսուցիչ և դասավանդեմ իմ գյուղի դպրոցում», ապա՝ «Առաքյալին» տված հարցազրույցի ընթացքում, երբ լրագրողը հարցրել է, թե արդյոք նրա երազանքը ակադեմիկոս դառնա՞լն է եղել: Ս. Աբրահամյանը, իրեն բնորոշ հանդարտությամբ ու հումորով, պատասխանել է. «Մանկության ու պատանեկության տարիներին ես երազել եմ դառնալ ուսուցիչ: Ավելացնեմ, որ իմ հիշյալ ցանկության մեջ մեծ դեր ունեն նաև իր սիրելի ուսուցիչները՝ Ներսես Աբրահամյանը, Բոգդան Ջանյանը (հայտնի բանաստեղծ), Խաչիկ Խաչատրյանը, Արամ Նարինյանը և ուրիշներ, որոնց շնորհիվ ես սիրեցի մեր լեզվի, գրականության, այլև մաթեմատիկայի խորհրդավոր, հետաքրքիր աշխարհը»²⁰:

Արժևորելով ուսուցչի մասնագիտությունն ու առաքելությունը՝ երախտագիտությամբ է խոսել իր ուսուցիչների մասին, հատկապես իր հայոց լեզվի և գրականության ուսուցչի՝ Բոգդան Ջանյանի մասին, որի 90-ամյակի առիթով գրված հոդվածը, ըստ էության, ամբողջությամբ երախտիքի ու գնահատանքի ծավալուն խոսք է:

Շարունակելով խոսել ուսուցիչ դառնալու երազանքի մասին՝ նշել է, որ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո իր կողմնորոշումը միանշանակ չի եղել և բանակում ծառայության տարիները ազդել են հակումների վրա՝ հակելով նրան դեպի լեզուն. «Այնպես որ, եթե ես

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

ուսումնական անմիջապես շարունակելի, չի բացառվում, որ մասնագիտանայի մաթեմատիկայի բնագավառում: Բայց որ իմ ապագան կլինե՞ր գիտությունը, դա որոշակի է»²¹:

Առանձնացնենք հետաքրքիր մի փաստ: Ս.Աբրահամյանը որդու՝ Բ.Գ.Թ., դոցենտ Աշոտ Աբրահամյանի մասին խոսելիս նշում է, որ վերջինս էլ, լինելով լեզվաբանության դասախոս պետական համալսարանում, նույնպես ունեցել է միևնույն հակումները. զբաղվել է մաթեմատիկական լեզվաբանությամբ, ինչպես նաև համահեղինակ է մաթեմատիկայի 4-րդ և 5-րդ դասարանների դասագրքերի: Արժանի մարդու արժանի զավակ, ինչպես ասում են, պտուղը ծառից հեռու չի ընկնում: Մեջբերենք վերոնշյալի մասին Ս. Աբրահամյանի խոսքերը. «Երևի սրանում դեր է կատարում երկու հանգամանք՝ թե՛ ժառանգականության գործոնը, թե՛ այն հանգամանքը, որ քերականական և մաթեմատիկական տրամաբանություններն ունեն զգալի ընդհանրություններ»²²:

Անդրադառնալով ակադեմիկոսի կոչմանը՝ նա ասել է. «Ինչ վերաբերում է ակադեմիկոսի կոչմանը, ապա նշեմ, որ դա առհասարակ ինձ համար երազանք չի եղել: Ես աշխատել եմ իմ ուժերի ու հնարավորությունների առավելագույն չափով, իսկ կոչումն ու գնահատությունը եղել են աշխատանքիս հետևանքը: Այնուամենայնիվ, քանի որ Ձեզ հետաքրքրում է իմ վերաբերմունքը ակադեմիկոսի կոչման վերաբերյալ, նշեմ, որ իմ զգացումը նման է վաղուց ծանոթ կնոջ հետ ուշ ամուսնացածի զգացման»²³: Երազում էր դառնալ ուսուցիչ և դարձավ իսկական Ուսուցիչ լայն իմաստով...

Դիպուկ է նրան բնութագրում Բ.Գ.Թ., պրոֆեսոր Լ. Խաչատրյանը. «Ակադեմիկոս Ս. Աբրահամյանը տաղանդի և բարոյականության չափանիշ էր»²⁴:

Հատուկ ուզում ենք առանձնացնել մի գեղեցիկ և շատ խոսուն փաստ. Ս. Աբրահամյանի կյանքի ու գործունեության մասին գրված հոդվածների, զեկուցումների, նկարած ֆիլմի, տեսահոլովակների ու ռեպորտաժների վերնագրերն անգամ տիպիկ բնորոշումներ են: Օրինակ՝ «Մերգեյ Աբրահամյան. հին լեզվի նոր պահապանը», «Հայերենագիտության և դպրոցի նվիրյալը», «Լուսավոր մարդ, ականավոր գիտնական...», «Անվանի լեզվաբանն ու մանկավարժը», «Մեծավաստակ հայագետը և մանկավարժը», «Վաստակաշատ հայագետը», «Խոսք գիտնականի մասին» են:

Գիտության ոլորտում կշիռ և վաստակ ունենալով հանդերձ Ս. Աբրահամյանն էության մնացել է պարզ, համեստ ու երախտապարտ մարդ: Էություն, որը միևնույն ժամանակ և՛ մեղմ էր, և՛ սկզբունքային: Նրա դեմքը մշտապես պսակված էր մեղմ ժպիտով, վեհ էր, բայց և անցուցադիր պահվածքով:

Հետաքրքրական և շատ արժեքավոր են իր իսկ բնորոշումներն իր էության մասին. «Իմ էությունը և կեցվածքը իրար չեն հակասում: Իմ մեղմ ժպիտը իմ մեղմ էության, մեղմ բնավորության արտահայտությունն է: Դա իմ վերաբերմունքի, իմ ներքին ջերմության դրսևորումն է՝ մարդկանց հանդեպ: Դա գալիս է իմ հորից: Իմ մեղմությունից տուժում եմ ես, շահում

²¹ Նույն տեղում:

²² Նշվ. աշխ., էջ 4:

²³ Նշվ. աշխ., էջ 3:

²⁴ **Խաչատրյան Լ.**, *Մեծավաստակ հայագետը և մտավորականը*.-Ս.Գ. Աբրահամյան.գիտական դիմանկար և կենսամատենագրություն, Ե., 2002, էջ 13:

է շրջապատը: Փորձել եմ գոնէ որոշ չափով փոխվել, չի ստացվել»²⁵: Այս տողերում շեշտադրվում են նաև նրա սերն ու հարգանքը իր ծնողների հանդեպ: Մեկ այլ առիթով Ս. Աբրահամյանը նորից մեծարել է ծնողներին, հատկապես հորը՝ ասելով. «Ես ծնվել եմ աշխատավոր գյուղացու ընտանիքում: Իմ հորից շատ գծեր են եկել, իմ հիմնական բոլոր մարդկային գծերը եկել են իմ հորից ու մորից: Եվ ես մինչև հիմա համարում եմ, որ չեմ հասել իմ հորը մարդկային, մարդկայնության առումով, աշխատանքը գնահատելու առումով, մարդասիրության առումով»²⁶:

Ս. Աբրահամյանը բացատրել է իր էության փոփոխությունն ու դրա կարիքը. «Իմ սիրտը և իմ միտքը բոլոր հիմնական հարցերում ընդհանուր առմամբ համերաշխ են իրար հետ: Նրանք սովորաբար միասնաբար են գործում և համագործակցում իրար հետ, լրացնում իրար: Դա երևում է իմ գիտական, աշխատանքային գործունեության մեջ: Եվ նրանց համագործակցությունից գործը շահում է: Իմ գրքերը, հատկապես դասագրքերը, իմ գիտական ու հրապարակախոսական հոդվածներն ուշադիր ընթերցողը կարող է առանց դժվարության զգալ նրանց երկուսի առկայությունը դրանցում և նրանց համերաշխության դրական հետևանքը: Երբեմն նույնիսկ դժվար է տարբերել, թե իմ կատարածի մեջ ո՞րն է մտքի, և ո՞րն է սրտի դերը: ...Մի դժգոհություն ունեմ իմ սրտից: Իմ սրտի պատճառով շատ է տուժում իմ անձը, հենց ինքը՝ սիրտս, նա իր նկատմամբ շատ անսիրտ է, չի լսում ո՛չ իմ բժշկին, ո՛չ իմ մտքին: Բայց եթե իմ սիրտը փոխվի, նա արդեն ի՛մ սիրտը չի լինի, ես էլ ես չեմ լինի, իսկ ես չեմ կարող ես չլինել»²⁷:

Իր մեջ գոյություն ունեցող երկու «Ես»-երը՝ իրական և իդեալական, համաձայնեցնելու համար նա նաև մշտապես ինքնակատարելագործվել է. «Ես դեռ մանկուց միշտ ձգտել եմ ինձ նայել ուրիշների աչքերով և գնալով այդ գիծն իմ մեջ խորացրել եմ: Սա որքան դժվար, այնքան էլ կարևոր է որպես ինքնահսկման, ինքնակատարելագործման միջոց»²⁸:

Ս.Աբրահամյանին երբեք չի բավարարել իր ստեղծածը, ձգտել է ստեղծել ավելին.«Արել եմ այն, ինչ ուզում էի, այնքան, որքան հասցրել եմ, որն ավելի քիչ է, քան այն, ինչ ծրագրել էի: Ափսոսում եմ, որ շատ բան չեմ հասցրել... դեռ: Լավատես եմ ու համոզված, որ համեմատաբար կարճ ժամանակում պիտի ավարտեմ կիսատ աշխատանքներս, իսկ ավելի հետագայի մասին՝ հետագայում»²⁹:

Ինչպես տեսանք, վերոնշյալ մեջբերումներում հստակ գծագրվեց Ս. Աբրահամյան մարդը, մարդ, որն իր ապագա կյանքի մասին հստակ պատկերացումներ է ունեցել, այն է՝ իդեալական ընտանիք ունենալը, ճշմարիտ ու սկզբունքային մարդ-քաղաքացի լինելը, գիտնական-լեզվաբան-մանկավարժ դառնալը: Ահա այս երեքի մասին ունեցած պատկերացում-

²⁵ Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք է(Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ).- էջ 4:

²⁶ **Աբրահամյան Ս.**, Ելույթ.- Արցախի Հանրապետության շրջանի Տումի գյուղի միջնակարգ դպրոցի՝ իր նախկին սանի՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի անվանակոչության մասին պատմող տեսաֆիլմ, որտեղ մի քանի դրվագում խոսում է նաև Ս.Աբրահամյանը.- Ե., 2001, <https://www.facebook.com/watch/?v=4479249258776989&rdid=hrDd1eRgUmxm7ELX>:

²⁷ Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք է(Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ).- էջ 4:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

ներն են ուժ տվել նրան ապրելու, արարելու և կերտելու Ս. Աբրահամյան մարդու, գիտնական-լեզվաբան-հայագետ-մանկավարժի ու քաղաքացու կյանքի պատմությունը:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանին ճանաչելը և նրա վերջին ասպիրանտը լինելը մեզ համար մեծ պատիվ է: Սակայն մեզ համար մեծ հայտնություն էր նրա մարդ տեսակը, որին գրավչություն էին տալիս բարձր կարգապահությունը, ազնիվ սկզբունքայնությունը, զգացմունքայնությունը, ազնվական կեցվածքը և անցուցադիր պահվածքը³⁰:

Ս.Աբրահամյան քաղաքացին

Նա իր գիտամանկավարժական կենսագործունեությանը զուգահեռ նաև ակտիվ քաղաքացի էր: Եվ որպես ակտիվ, սրտացավ, պատասխանատու, նախաձեռնող, արժանապատիվ քաղաքացի՝ արձագանքել է ժամանակի խնդիրներին, առաջարկել բարեփոխման, լուծման իր ուղիները:

Արցախի պաշտպանը: Արցախից տեղափոխվելուց հետո նա ապրել և արարել է Երևանում: Հեռու լինելով Արցախ աշխարհից՝ նա միշտ ապրել է նրա հոգսերով: Հեռու էր Արցախից, բայց Արցախը հեռու չէր իրենից. իր մտքում էր, սրտում էր, գործերում էր...

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից, երբ ադրբեջանական սանձարձակ գործողությունների զոհ էին դառնում հազարավոր հայ խաղաղ բնակիչներ, Ս. Աբրահամյանը մտահոգվել է Արցախի ներկայով և ապագայով և չի կարողացել ձեռքերը ծալած հանգիստ նստել, սպասել և արել է բազում հայրենասիրական քայլեր:

Արցախի խնդրի կարգավորման նպատակով՝ մի խումբ արցախցի մտավորականների հետ նամակով դիմել է Գերագույն խորհրդի այն ժամանակվա նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին, հայտնել իրենց մտահոգությունն ու խոր տագնապը ադրբեջանական իշխանությունների հակահրավական, հակահայկական քայլերի, զինվորական պարետության և զորքի կամայականությունների առթիվ: Նախագահը չէր կարող շրջանցել նամակը: Նա հանդիպել է սրտացավ մտավորականների հետ, լսել նրանց մտահոգությունները, կիսվել իր մտորումներով, բարձրաձայնել արցախյան շարժման ճանապարհին մեր ժողովրդի ունեցած հաջողությունների և բացթողումների մասին, ինչպես նաև ընդգծել, որ Արցախը մնում է ՀՀ հոգսերի հոգսը³¹:

Երբ թշնամին շրջափակման մեջ էր գցել Արցախը, այդ օրհասական օրերին Ս. Աբրահամյանը իր որդու՝ Աշոտ Աբրահամյանի հետ ուղղաթիռով հասել է հայրենի եզերք: Մահվան վտանգն արհամարհելով, վտանգելով որդու և սեփական կյանքը՝ օգնության ձեռք է մեկնել շրջափակման մեջ գտնվող հայրենակիցներին: Ցանկացած պահի ուղղաթիռը կարող էր խոցվել թշնամու կողմից. սա իսկական սխրանք էր:

³⁰ **Մխիթարյան Ա.,** *Լուսավոր մարդ, ակնավոր գիտնական*, (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Աբրահամյանի ծննդյան 90-ամյակի առիթով)․- Կրթություն, Ե., 2015, 4 մարտի, թիվ 10 (671) էջ 4:

³¹ **Աբրահամյան Ս.,** *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանը*.-Խորհրդային Ղարաբաղ, Ե., 1990, 13 դեկտեմբերի, էջ 2: (Հայաստանաբնակ մի խումբ արցախցիների (Ս.Աբրահամյանի, Հ. Աբրահամյանի, Ս. Ավագյանի, Ս. Արզումանյանի, Ն. Մովսիսյանի, Վ.Մուրադյանի, Վ. Խաչոյանի, Ս. Մելքունյանի, Ս. Մուլեյմանյանի, Ռ. Դալլաքյանի, Լ. Թեյլանի, Լ. Հովհաննիսյանի) առաջարկությունները Արցախի հիմնահարցի լուծման և իրավիճակի կարգավորման վերաբերյալ):

Տարիներ հետո նա այդ մասին պիտի խոսեր. «Երբ թուրք-ազերիները փորձում էին շրջափակումով սովի մատնել Արցախի ժողովրդին, ես իմ որդի Աշոտի հետ միասին Երևանի և Վարդենիսի օդանավակայաններից ուղղաթիռով սննդամթերք էինք հասցնում Արցախ, հատկապես իմ հայրենի գյուղ: Սա ի՞նչ համարել՝ մտքի՞, թե՞ սրտի գործ: Անշուշտ, երկուսը միասին: Երևի միայն սրտին է վերաբերում այն, որ երբ ուղղաթիռը վայրէջք էր կատարում, ես մի կողմ էի քաշվում ու աննկատ համբուրում իմ Արցախի, մեր բոլորի Արցախի սուրբ հողը»³²:

Այստեղ երևան են գալիս ոչ միայն հոր, այլև որդու՝ ակունքների հարազատ մնալը, սրտացավությունը թե՛ Արցախի, թե՛ արցախցիների հանդեպ, անձնագոհությունը, անմնացորդ նվիրումն ու սերը:

Ս.Աբրահամյանը երկար տարիներ «Արցախ» հայրենակցական միության վարչության անդամ է եղել և ակտիվ մասնակցել նշված կազմակերպության հայրենանվեր գործունեությանը:

Արցախի ազատագրումից հետոնգամ Ս. Աբրահամյանը մշտապես մտահոգվել է Արցախի ապագայով: Նրան հատկապես անհանգստացրել է այն փաստը, որ Ադրբեջանը իր պարտությունից հետո սկսել է հակահայկական քայլեր. քարոզարշավ է սկսել, որտեղ հայերին ներկայացրել է իբրև ագրեսոր՝ խեղաթուրելով ոչ միայն ներկան, այլ նաև հայ ազգի անցած ողջ պատմական ուղին՝ արժեզրկելով հային ու հայկականությանը: Իսկ մենք, հատկապես մեր մտավորականները, դիվանագետները, ցավոք, ոչինչ չենք արել այդ ամենը կասեցնելու, խնդիրը լուծելու համար: Նա պարբերաբար նշել էր, որ այսօրվա քայլերով է պայմանավորված մեր ապագան³³: Հանդես է եկել զգոնության ու համախմբման կոչերով հանուն ազգային միասնության, ուժեղ պետության ու պետականության. առաջարկել խնդիրների լուծման իր ուղիները, որով հնարավոր կլիներ ստեղծել ազգային ամուր պետություն:

Նրա համար թանկ ու հարազատ էին իր ծննդավայրը, հայրենի տունը, դպրոցը: Որպես արժանի զավակ՝ հարկ եղած դեպքում նա կանգել է իր հայրենի եզերքի կողքին, բայց և մշտապես կարոտ կար սրտում. «1942 թվականից հետո եկավ մի շրջան, կարոտի շրջան, որը տևում է մինչև այժմ: Երբ ես գյուղում չեմ, դպրոցում չեմ»³⁴: Կարոտի զգացման մասին է վկայում նաև մի փաստ: Ամառանոց գնելու կապակցությամբ մտերիմ ընկերների հետ զրույցում անկեղծացել է և նշել, որ չնայած այն այդքան էլ աչքի չի ընկել իր շքեղությամբ և հարմարավետությամբ, բայց հատկապես այդ տունն է ընտրել, որովհետև բակում կար թթենի, որը շատ նման էր իր հայրենի գյուղի հայրենական տան բակիթթենուն³⁵:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ Ս. Աբրահամյանը մշտապես կապված մնաց իր հայրենի բնօրրանին՝ հարազատ մնալով ինքն իրեն, իր էությանը:

³² *Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք* է (Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ).- էջ 4:

³³ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, *Ազգային համախմբվածության ուժը (ԼՂՀ 10-ամյակ)*.- Կամք հայրենյաց, Ե., 1998, հմ. 2, էջ 2-3:

³⁴ **Աբրահամյան Ս.**, Ելույթ.- «Մերզեյ Աբրահամյան. հին լեզվի նոր պահապանը» տեսաֆիլմ, որտեղ մի քանի դրվագում խոսում է նաև Ս.Աբրահամյանը.- Ե., 2015, <https://www.youtube.com/watch?v=r7-os7bG7Mg>:

³⁵ **Թեյլան Լ.**, Հուշեր.- «Մերզեյ Աբրահամյան. հին լեզվի նոր պահապանը» ֆիլմ, որտեղ խոսում է նաև Լ. Թեյլանը.- Ե., 2015, <https://www.youtube.com/watch?v=r7-os7bG7Mg>:

Հայաստանն աշխարհի պաշտպանը: Նա ապրել և արարել է Հայաստանն աշխարհում և մտահոգվել է վերջինիս ճակատագրով. մեծ հույսեր է ունեցել անկախացումից հետո նոր Հայաստանի ապագայի նկատմամբ և հասարակական-քաղաքական ակտիվություն է ցուցաբերել նաև այս հարցում: Հայաստանի համար վճռական օրերից մեկի ժամանակ կոչով դիմել է հայ ազգին. «Այս օրերը մեր ժողովրդի համար ճակատագրական են, բախտորոշ և պատասխանատու: Իսկ ո՞վ է գրում ժողովրդի ժակատագիրը, ո՞վ է որոշում նրա բախտը, և ո՞վ է դրա պատասխանատուն³⁶»: Այս հռետորական հարցերին հետևում է հենց իր պատասխանը. «Ինքը՝ ժողովուրդը, բոլորս, յուրաքանչյուրս: Այս օրերին մենք ենք գրում մեր ճակատագիրը, մենք ենք որոշում մեր բախտը, մենք էլ պատասխանատու ենք դրա համար: ... քանի որ մայր Հայրենիքից, Հայաստանի ապագայից է կախված Արցախի և Սփյուռքի ապագան³⁷»: Արցախի ազատագրման հարցը նա պայմանավորում է Հայաստանի և Սփյուռքի բարոյաքաղաքական, նյութական, ինչպես նաև մարդկային ուժերի առկայության, այն է՝ միասնականության հզոր ուժի հետ: Արցախի ազատագրման 10-ամյակի առթիվ գրված հոդվածում նա ուրախությամբ է փաստում, որ հաղթանակը հնարավոր եղավ միասնության շնորհիվ. «Մա մի անգամ ևս հաստատում է, այն ճշմարտությունը, որ Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի միասնությունը, առհասարակ մեր ազգային միաբանությունը մեծ հնարավորություններ ունի իր մեջ, որոնք ոչ թե պետք է տրոհել ու ծառայեցնել անձնական, խմբակցական նպատակների, այլ բարձր կանգնել նեղ շահերից և այդ մեծ ներուժին տալ ազգանպաստ ուղղվածություն³⁸»:

Այստեղ է, որ նա՝ որպես խիզախ քաղաքացի, կոչ է արել ազգին համախմբվել՝ հանուն ընդհանուր շահի՝ հայի ու հայկականության պահպանման և զարգացման:

Մայրենի լեզվի պաշտպանը: Վաստակաշատ լեզվաբանը զբաղվել է ոչ միայն մայրենի լեզվի ուսումնասիրման, նրա կանոնարկման հարցերով, այլև իրեն բնորոշ նվիրումով ու նախանձախնդրությամբ ստանձնել է լեզվի պաշտպանության պատասխանատվությունը՝ միշտ լինելով նրա մաքրության ու անաղարտության համար պայքարողների առաջնագծում:

«Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանը մեր ազգային լեզվին և ազգային դպրոցին ծառայելու իր պարտականությունն ու պատրաստակամությունը հաստատել է ոչ միայն իր գիտահետազոտական, մեթոդական-մանկավարժական գործունեությամբ, այլև նրանով, որ նա՝ որպես քաղաքացի, ապրում է լեզվի և դպրոցի այլ հոգսերով ևս. սկզբունքային, գործուն դիրքորոշումով անհրաժեշտությամբ դեպքում պաշտպանում է լեզվի և դպրոցի շահերը տարբեր կարգի կամայական միջամտություններից: Նա լրագրերում հանդես է եկել հայոց լեզվի ու դպրոցի նվաճումների պաշտպանության և նրանց հետագա զարգացումն ապահովելու անհրաժեշտության պնդումով՝ միաժամանակ ցույց տալով դրա ուղին³⁹»:

1990-ականներից, երբ Խորհրդային միության փլուզումից հետո սկսվել է նախորդ վարչակարգի և գաղափարախոսության մերժողական քաղաքականությունը, դրան զուգահեռ սկսվել է արշավանք հայոց լեզվի դեմ: Ս.Աբրահամյանին անհանգստացրել է այն փաստը, որ, ըստ էության, Խորհրդային համահարթեցման տարիներին հայոց լեզուն ավելի լավ է պահ-

³⁶ **Աբրահամյան Ս.**, *Ղեկավարվենք ազգային շահերով*. - Հայոց աշխարհ, Ե., 1998, 29 մարտի, էջ 11:

³⁷ Նույն տեղում:

³⁸ **Աբրահամյան Ս.**, *Ազգային համախմբվածության ուժը*, էջ 3:

³⁹ Տե՛ս **Դավաթյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 96:

պանվել, քան անկախացման շրջանում ու ակախացումից հետո. «Հին աշխարհը քանդելու» ձգտումն այնքան ուժեղ է, որ ոմանք չեն կարողանում կամ չեն ուզում տարբերակել «վարչակարգի ստեղծած» և «վարչակարգի օրոք ստեղծված» հասկացությունները՝ մոռանալով, որ արժեք ստեղծողը ժողովուրդն է, ազգն է»⁴⁰:

Ս. Աբրահամյանը մշտապես կոչ էարել պահպանել ու պաշտպանել սեփական լեզուն և իրավացիորեն նշել, որ ցանկացած բան պահպանելու ու պաշտպանելու համար պետք է սիրել, իսկ սիրելու համար պետք է ճանաչել⁴¹:

1998 թվականին ՀՀ Ազգային ժողովի քննարկման է ներկայացվել մի նախագիծ «ՀՀ օրենքը հայոց լեզվի այբուբենի մասին», որում պահանջվել է հայերեն գրային համակարգից հանել ու-ն, և-ը, վերականգնել ւ-ը՝ պահանջի հիմքում դնելով այն անհիմն պնդումը, որ այսօր մեզանում գործածվող այբուբենը սովետական այբուբեն է, անհրաժեշտ է վերադառնալ մաշտոցյան այբուբենին, մեր դասական ուղղագրությանը: Ըստ էության, կեղծ հայրենասիրական մղումներով պայմանավորված պահանջվել է փոխել ժամանակակից հայերենի ուղղագրությունը, ինչպես նաև լեզուն (ժամանակակից գրական հայերենից անցում կատարել արևմտահայերենին):

Ս. Աբրահամյանն անմիջապես արձագանքել է, հանդես է եկել մի հզոր հոդվածով, որի խորագիրն արդեն իսկ կոչ էր՝ «Պահանջվում է լրջություն և արհեստավարժություն»: Լինելով իր մայրենի լեզվի գիտակը՝ Աբրահամյանը այս օրհասական պահին, հիմնվելով ու հենվելով գիտականության սկզբունքների վրա, կարողացել է համապատասխան փաստեր ու հիմնավորումներ բերել և աբրահամյանական ոճով ապացուցել, որ վերոնշյալ նախագիծը դեմ է հենց մաշտոցյան սկզբունքին: Որպես խնդրի հիմնավոր լուծում 1999 թվականին Ս. Աբրահամյանը հրապարակել է ՀՀ կառավարությանն առնթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի որոշումը՝ վերնագրված «Արևելահայերենի այբուբենի և գրանշանների համապարփակ հավաքածուն»⁴², որի հեղինակը ինքն էր:

Մեջբերենք մի հատված. «Պատգամավորն առաջարկում է այբուբենից հանել ու տառը՝ այն համարելով ոչ թե տառ, այլ ո և ւ տառերի զուգակցություն: Տարօրինակ է. փաստը վերաբերում է հին հայերենին, իսկ առաջարկը, եզրակացությունը՝ նոր հայերենին: Ու-ն ձևավորվել է ո և ւ (վյուն) տառերի կցումով և այն ժամանակ գոյություն ունեցող երկու հնչյունների գրային կապակցություն էր: Բայց հետագայում ւ (վյուն) տառի հնչյունը վերացել է լեզվից, և երկհնչյունը վերածվել է պարզ հնչյունի՝ մաքուր ձայնավորի: Այս պարզ հնչյունը վաղուց ունի իր տառային արտահայտությունը, և վերջինս դարեր առաջ ըստ էության դադարել է կցագիր լինելուց: Ու-ի նախկին բաղադրիչ ւ-ն (վյունը), զրկվելով տառային ինքնությունից, վաղուց ձուլվել է ու պարզ հնչյունին: ... այսպիսի մի ճշմարտություն, որը հասկանալի է ամեն մի աշակերտի: Չնայած Ռ.-ը և-ը համարում է «սովետական տառ», իրականում այն գոյություն ունի միջին դարերից: Նույնիսկ Մխիթարյան միաբանների ստեղծած Հայկազյան բառարա-

⁴⁰ Աբրահամյան Ս., *Երդում...* - Գիտություն, Ե., 1996, հ. 1-2, էջ 2:

⁴¹ Մանրամասն տե՛ս Աբրահամյան Ս., *Ճանաչենք, սիրենք, պահպանենք*. - Հայրենիքի ձայն, Ե., 1967, 19 մարտի, էջ 1:

⁴² Աբրահամյան Ս., *Արևելահայերենի այբուբենի և գրանշանների համապարփակ հավաքածուն*. - Հայաստան, Ե., 1999, 3 ապրիլի, էջ 3:

նում և շաղկապը համատարած հենց այդպես էլ գրվում է՝ և»⁴³: Ինչ վերաբերում է ւ-ի վերականգնման հարցին, նա գրում է. «Ռ.-ը ւ-ի (վյունի) վերականգնման հարցում շահարկում է Մաշտոցի անունը՝ այն դարձնելով հիմնական «փաստարկ»: Ռ.-ին խորհուրդ եմ տալիս նկատի ունենալ Մաշտոցի հանճարի «գաղտնիքը»: Այդ «գաղտնիքը» այն սկզբունքի և նրա հետևողական կիրառման մեջ է, որով ապահովվում է տառի և հնչյունի, այբուբենի և հնչյունական համակարգի և վերջին հաշվով՝ լեզվի գրավոր և բանավոր տարբերակների համապատասխանությունը: Դրանով է, որ լեզվի էությունը, ոգին, որ ամենից առաջ հանդես է գալիս բանավոր տարբերակում, իր դրսևորումն է գտնում նաև գրավոր խոսքում: Արդի հայերենի այբուբենում ւ (վյուն) տառի գոյությունը պարզապես հակասում է Մաշտոցի սկզբունքին, տառի և այբուբենի մեսրոպյան ըմբռնմանը, քանի որ ւ-ը (վյունը) արդի հայերենում կդառնար մի տառ՝ առանց համապատասխան հնչյունի, նշանակիչ՝ առանց նշանակյալի: Այնպես որ՝ Մաշտոցի անվան շահարկումն էլ չի կարող օգնել մի նախագծի հաստատմանը, որը իրականում հակասում է նույն Մաշտոցի սկզբունքներին»⁴⁴:

Ս. Աբրահամյանը նշել է նաև, որ մեր այբուբենը հիմնականում մեսրոպյանն է՝ խիստ մասնակի տարբերությամբ, որն արդյունք է լեզվի պատմական զարգացման, իսկ մեր ուղղագրության երեք հիմնական սկզբունքներից երկուսը ավանդական են⁴⁵:

Հայերենի գործող ուղղագրության և այբուբենի վերաբերյալ պարբերաբար քննարկումները միշտ էլ եղել են, որը, սակայն, խորացել և վերաճել էր սուր բանավեճի: Նշված բանավեճի՝ գրական արևելահայերենից արևմտահայերենին անցում կատարելու հարցի շուրջ խոսելիս Ս. Աբրահամյանը նշել է, որ լեզվի երկու ճյուղերի ուղղագրության միասնության հարցը պետք է քննել երկու ճյուղերի մերձեցման համատեքստում, մեր ժողովրդի երկու հատվածների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ազգային ու գիտական լուրջ մոտեցումներով:

Մեջբերենք հոդվածից հատկանշական մի հատված. «Ռ.-ի մոտեցումներում ակնհայտ է այբուբենի, ուղղագրության և առհասարակ լեզվի պատմական զարգացման ընթացքի համահարթեցման միտում, ըստ որի համահարթեցման ելակետը և հանգման կետը հին հայերենն է: Սա «վերադարձ դեպի արմատները» կեղծ հայրենասիրական կարգախոսի գոեհիկ կիրառություն է, որով հին հայերենի կշիռը բարձրացնելու անվան տակ անտեսվում են արդի հայերենի, մասնավորապես արևելահայերենի նվաճումները: Կույր պետք է լինել չտեսնելու համար, որ թե՛ այբուբենի, թե՛ ուղղագրության հարցերում արդի հայերենը ամուր հենված է գրաբարի վրա: Վերադարձ արմատներին կոչը իրավացի կլիներ այն դեպքում, եթե լիներ խզում, արհեստական հեռացում լեզվի պատմական անցյալից: Բայց այդպիսի բան չկա»⁴⁶:

Այնուհետև երևան է եկել մայրենի լեզվի և ազգայինոպրոցի զարգացման շարունակականությունը կասկածի տակ դնող ևս մեկ մարտահրավեր. հայկական դպրոցներում երկլեզու ուսուցման անցնելու միտում է եղել, որն էլ, ըստ էության, վտանգելու էր ազգային դպրոցի լինելության հարցը: Վերոնշյալ խնդիրների դեմ պայքարում շատ մեծ նշանակություն ու

⁴³ **Աբրահամյան Ս.**, *Պահանջվում է... լրջություն և արհեստավարժություն.* - Հայաստան, Ե., 1998, 18 հունիսի, էջ 3:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ **Աբրահամյան Ս.**, *Հանուն հայոց այբուբենի և լեզվի շահերի.* - Գիտություն, Ե., 1998, 1-15 հուլիսի, էջ 1-2:

ծանրակշիռ հակազդեցություն էր ակադեմիկոս Ս.Աբրահամյանի յուրաքանչյուր հոդված, ելույթ, զեկույց, նույնիսկ բառ: Նա տարբեր պարբերականներում հետևողականորեն հանդես է եկել այս խնդրի լուծմանը նվիրված տարբեր հոդվածներով, սովել է մեր լեզվի և դպրոցի զարգացման պատմական ուղին, պահանջել ապահովել զարգացման շարունակականությունը, մատնանշել ապագա զարգացման ուղիները: Նշված հիմնախնդրին նվիրված իր մտորումներն ամբողջացել են «Մեր լեզուն և մեր դպրոցը» (2001 թ.) գրքույկում:

Վերոնշյալ քայլերով ակադեմիկոսը կանխել է լեզվի մշակներին շրջանցելով լեզվի վերաբերյալ որևէ հարց լուծելու հնարավոր փաստը: Նա տիրոջ իրավունքով ու պահանջատիրությանը տեր է կանգնել և պաշտպանել մայրենի լեզուն՝ պայքարն ավարտելով հետևյալ կոչ-դիմումով. «Մեր ամեն մի քայլ կատարելիս կարողանանք պարզել, թե ինչի՛ կարիք է զգում լեզուն: Ճիշտ հասկանանք լեզվի լեզուն: Լեզվի հարցերով կարելի է և պետք է զբաղվել միայն լրջությամբ և արհեստավարժությամբ»⁴⁷:

Այստեղ է, որ դրսևորվել են նրա ղեկավար-ռազմավարի հիմնությունները, ով ուղղորդել է ոչ միայն մտավորականությանը, այլև կոչով դիմել է ազգին. «Մեր ժողովուրդն ապրում է պատմական նշանակություն ունեցող անցման ժամանակաշրջան: Անցման շրջանի կարևոր խնդիրներից մեկը ժողովրդի ստեղծած բոլոր կարգի արժեքները պահպանելն է և ըստ հնարավորին զարգացնելը: Մայրենի լեզուն մեր ազգային ամենամեծ հարստությունն է, ազգային մշակույթի բարձրագույն ձևը, որին մենք ազգովի պարտավոր ենք վերաբերվել բացառիկ հոգատարությամբ, այն պահպանել սրբությամբ»⁴⁸: Նա քաջ գիտակցել և կարևորել է լեզվի դերը ազգի պահպանման ու զարգացման հարցում, ինչպես մեզանից շատ տարիներ առաջ արել էր հայերենի առաջին ուսուցիչը՝ Մ.Մաշտոցը:

Նշենք, որ լայնախոհ գիտնականը մայրենի լեզվի համար մղվող պայքարի ընթացքում ոչ միայն վեր է հանել առկա սխալները, բացթողումներն ու խնդիրները, այլև արժևորել մեզանում արված դրական, ազգապահպանմանը նպաստող քայլերը. նա շեշտադրել և կարևորել է 1993 թվականի մարտի 30-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից հայոց լեզուն պետական լեզու հռչակելը:

Այս ողջ գործընթացում անվանի մտավորական-գիտնական-լեզվաբան-հայագետ-մանկավարժը դրսևորվել է որպես սկզբունքային, ազնիվ քաղաքացի և պաշտպանել մայրենի լեզուն և ազգային դպրոցը՝ երբեք տուրք չտալով ժամանակի պատեհապաշտությանը: Սկզբունքային հարցերում, այո՛, նա անզիջում էր: Մինչև վերջ պայքարեց և կանխեց կործանարար աղետը՝ իր կենսագործունեության արդյունքում դառնալով ազգային դպրոցի նվիրյալ և սերնդեսերունդ փայփայված ու իրեն հասած մայրենի լեզվի պահպանման ու պաշտպանության յուրահատուկ խորհրդանիշ:

Ասվածն ուզում ենք ամփոփել Ս.Աբրահամյանի «Երդում» վերնագրով հոդվածի ամփոփումով. «Իմ ասելիքն ուզում եմ ավարտել նրանով, ինչով սկսվում է 7-8-րդ դասարանների «Հայոց լեզու» դասագիրքը: Այն սկսվում է Միլվա Կապուտիկյանի «Երդում մայրենի լեզվին» խոհագրությամբ (էսսե), որը ներկայացված է որպես վարժություն, և, ի թիվս այլ առաջա-

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ **Աբրահամյան Ս.**, *Երդում...*, էջ 2:

դրանքների, պահանջվում է, որ աշակերտներն անգիր սովորեն և ամբողջ դասարանով բարձրաձայն արտասանեն՝ որպես յուրաքանչյուրի, բոլորի երգում: Մեջ եմ բերում այդ երգման վերջին տողերը և ցանկանում, որ այն դառնա հայերենով զբաղվող ամեն մեկի, բոլոր հայերի սրտից բխող երգում. «Երգվո՛ւմ եմ պահպանել քեզ՝ որպես սերնդեսերունդ փոխանցած և ինձ վստահված տոհմական սրբություն ... Երգվո՛ւմ եմ կրել քեզ շնչո՛վս, արյունո՛վս և ինձնով տանել-հաղորդել զավակներիս քո հավերժական կենդանությունը: Երգվո՛ւմ եմ»⁴⁹:

Ս. Աբրահամյանն իսկապես որ հավատարիմ մնաց իր որդեգրած սկզբունքներին, ինչպես նաև այս երգմանը մինչև իր կյանքի վերջին օրը՝ դառնալով հին լեզվի նոր պահապանը: Եվ որ շատ կարևոր է, նա այդ ամենն անել է լուռ, անմնացորդ նվիրումով, հաշտ ու ներդաշնակ իր մտքի, սրտի ու հոգու հետ:

Եզրակացություն

Բազմաբեղուն և իմաստալից է եղել խոշորագույն գիտնականի, լեզվաբանի, հայագետի, մտավորականի, բուհական մանկավարժի, հայրենասերի և այդ հայրենասիրությամբ պայմանավորված ակտիվ հասարակական գործչի ու ազնիվ մարդու ավելի քան կեսդարյա ստեղծագործական կյանքի փառավոր ուղին: Դժվար է պատկերացնել մեկ այլ մարդու, որը կկարողանար մեկ կյանքի ընթացքում այսքան բան հասցնել որպես գիտնական, մարդու քաղաքացի...

Եվ իսկապես որ... մարդը երջանիկ է, եթե իր միտքն ու սիրտը կյանքի ու գործի հետ հաշտ են: Միրած մասնագիտությամբ ու գործով զբաղվելը, որպես մասնագետ, մանկավարժ և ղեկավար սիրված ու գնահատված լինելը և վերջապես սիրված Մարդ, ամուսին, հայր, պապիկ լինելը Ս. Աբրահամյան գիտնականի, մտավորականի, լեզվաբանի, հայագետի, մանկավարժի, մարդու և քաղաքացու երջանկության գրավականներն էին:

Յավոք, 2005 թվականի մարտի 30-ին իր ծննդյան 80-ամյակը դեռ նոր բոլորած՝ կյանքից հեռացավ հայագիտության անխոնջ նվիրյալը՝ թողնելով խոր ցավ և լուսավոր հետազիծ իր հարազատների, մերձավորների, սաների և գործընկերների հուշերում: Մնացին լուսավոր հուշերը, այն լուրջ արժեքներն ու ծանրակշիռ վաստակը, որ ստեղծել է ակադեմիկոս Ս. Աբրահամյանը, ով Աստծուց իրեն տրված ճանապարհին անցավ չհասարակացող արժանապատվությամբ:

Գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս., Մեր լեզուն և մեր դպրոցը, Ե., 2001:
2. Աբրահամյան Ս., Ղեկավարվենք ազգային շահերով.- Հայոց աշխարհ, Ե., 1998, 29 մարտի:
3. Աբրահամյան Ս., Երգում....- Գիտություն, Ե., 1996, հ. 1-2:
4. Աբրահամյան Ս., Ճանաչենք, սիրենք, պահպանենք.- Հայրենիքի ձայն, Ե., 1967, 19 մարտի:

⁴⁹ Նույն տեղում:

5. Աբրահամյան Ս., Արևելահայերենի այբուբենի և գրանշանների համապարփակ հավաքածուն.- Հայաստան, Ե., 1999, 3 ապրիլի:
6. Աբրահամյան Ս., Պահանջվում է... լրջություն և արհեստավարժություն.- Հայաստան, Ե., 1998, 18 հունիսի:
7. Աբրահամյան Ս., Հանուն հայոց այբուբենի և լեզվի շահերի.- Գիտություն, Ե., 1998, 1-15 հուլիսի:
8. Աբրահամյան Ս., Ազգային համախմբվածության ուժը (ԼՂՀ 10-ամյակ).- Կամք հայրենյաց, Ե., 1998, հմ. 2:
9. Աբրահամյան Ս., Ելույթ.- «Սերգեյ Աբրահամյան. հին լեզվի նոր պահապանը» տեսաֆիլմ, որտեղ մի քանի դրվագում խոսում է նաև Ս.Աբրահամյանը.-Ե., 2015,
<https://www.youtube.com/watch?v=r7-os7bG7Mg>:
10. Աբրահամյան Ս., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանը.- Խորհրդային Ղարաբաղ, Ե., 1990, 13 դեկտեմբերի: (Հայաստանաբնակ մի խումբ արցախցիների (Ս.Աբրահամյանի, Հ. Աբրահամյանի, Ս. Ավագյանի, Ս. Արզումանյանի, Ն. Մովսիսյանի, Վ. Մուրադյանի, Վ. Խաչոյանի, Ս. Մելքունյանի, Ս. Սուլեյմանյանի, Ռ. Դավլաթյանի, Լ. Թեյլանի, Լ. Հովհաննիսյանի) առաջարկությունները Արցախի հիմնահարցի լուծման և իրավիճակի կարգավորման վերաբերյալ):
11. Աբրահամյան Ս., Ելույթ.-Արցախի Հաղորթի շրջանի Տումի գյուղի միջնակարգ դպրոցի՝ իր նախկին սանի՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի անվանակոչության մասին պատմող տեսաֆիլմ, որտեղ մի քանի դրվագում խոսում է նաև Ս.Աբրահամյանը.-Ե., 2001,
<https://www.facebook.com/watch/?v=4479249258776989&rdid=hrDd1eRgUnxm7ELX>:
12. Բաղիկյան Խ., Հայագիտական վաստակով.- Հայրենիքի ձայն, Ե., 1975, 19 փետրվարի:
13. Դավլաթյան Ռ., Հայերենագիտության և դպրոցի նվիրյալը.- Ս.Գ. Աբրահամյան. գիտական դիմանկար և կենսամատենագրություն, Ե., 2002:
14. Թեյլան Լ., Հուշեր.- «Սերգեյ Աբրահամյան. հին լեզվի նոր պահապանը» ֆիլմ, որտեղ խոսում է նաև Լ. Թեյլանը.-Ե., 2015,
<https://www.youtube.com/watch?v=r7-os7bG7Mg>:
15. Իմ գործը մտքի և սրտի համերաշխ համագործակցության արդյունք է (Հարցազրույց Ս.Գ. Աբրահամյանի հետ).- Առաքյալ, Ե., 1997, հմ. 3:
16. Խաչատրյան Լ., Մեծավաստակ հայագետը և մտավորականը.- Ս.Գ. Աբրահամյան. գիտական դիմանկար և կենսամատենագրություն, Ե., 2002:
17. Հարությունյան Կ.Ա., Սահակյան Ս. Գ., Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Ե., 1988:
18. Մխիթարյան Ա., Լուսավոր մարդ, ականավոր գիտնական, (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Աբրահամյանի ծննդյան 90-ամյակի առիթով).- Կրթություն, Ե., 2015, 4 մարտի, թիվ 10 (671):
19. Որտե՞ղ էիր, մարդ Աստծո (Հարցազրույց Ս. Աբրահամյանի հետ).- Կանչ, Ե., 1999, 5 սեպտեմբերի:

20. Պապոյան Ա., Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյան (ծննդյան 75-ամյակի առթիվ).- Պատմաբանասիրական հանդես, Ե., 2000, հմ. 2:
21. Պառնասյան Ն., Ի շահ հայերենագիտության.- Գրական թերթ, Ե., 1985, 8 մարտի:

Mkhitaryan Armenuhi - S. Abrahamyan: the scientist, the individual, the citizen.-

Academician S. Abrahamyan's scholarly contributions are comprehensive and multifaceted. He conducted in-depth research on the entire structure of contemporary Armenian, undertaking significant scientific revisions and authoring a number of influential and valuable works in the field. He was a scholar capable of integrating various branches of linguistics, yet his primary objective remained the advancement and enrichment of his native language. For several decades, he served as a lecturer, during which he laid the foundational principles for what would later be recognized as the Abrahamyanian school of thought. He also played a significant role in the development of young scholars, contributing substantially to the cultivation of a new generation of linguists. He supervised the research of over two dozen of scholars, and scientific mentorship and academic leadership constituted the integral part of his professional activity.

S. Abrahamyan is primarily recognized for his scholarly contributions. However, he was also distinguished by his exceptional personal qualities, including integrity, strong discipline, principled character, sensitivity, intellectual prominence, and remarkable modesty.

S. Abrahamyan was also a compassionate, responsible, and proactive citizen of integrity, who consistently proposed fundamental reforms in response to the pressing issues of his time.

As an outstanding scholar, S. Abrahamyan was deeply devoted to the study of his native language and willingly assumed the responsibility of safeguarding its purity and ensuring its proper use. Fully aware of the vital role the language plays in the preservation and development of national identity, S. Abrahamyan shouldered the responsibility of defending and promoting it, thereby becoming both a devoted advocate of the national linguistic tradition and a distinguished symbol of the preservation of the Armenian language.

Keywords: Academician, Pronounced linguist, Armenologist, Teacher, Individual, Citizen, Activity.

Mkhitaryan Armenuhi, PhD, Associate Professor, Chair of the Armenian Language, Yerevan State University.

Мхитарян Арменуи - С. Абраамян - ученый, человек, гражданин.- Деятельность академика Сергея Абраамяна обширна и многогранна. Он исследовал всю систему современного армянского языка, затрагивая все его структурные уровни, проводил серьёзные научные обзоры, уточнения, написав исследовательские работы об этом. Он был одним из тех интеллектуалов, кто сумел объединить разностороннюю работу, основой которой всегда были интересы родного языка. На протяжении десятилетий он параллельно вёл активную научную и преподавательскую деятельность, заложив основы абраамяновской школы. Велика его заслуга и в подготовке научных кадров: под его руководством и при его ценных консультациях в науку вошли более двадцати исследователей. Научная деятельность С. Абраамяна включала и значительную организационную работу.

Сергей Абраамян известен прежде всего как учёный, посвятивший всю свою жизнь изучению родного языка. Обладая научным авторитетом, он был человеком исключительной

душевной культуры — с высокой дисциплиной, честными принципами, благородными манерами, внутренним достоинством и безупречным поведением.

Он был и активным гражданином. Как неравнодушный, ответственный и инициативный человек, он чутко реагировал на вызовы времени, предлагая свои пути решения и реформ.

Заслуженный лингвист занимался не только исследованием и нормализацией родного языка, но и с полной отдачей взял на себя ответственность за его защиту, неизменно находясь в авангарде борьбы за его чистоту и сохранение. Осознавая ключевую роль языка в судьбе нации, он с правом хозяина и высокой требовательностью защищал и берег армянский язык, став благодаря своей жизнедеятельности преданным служителем национальной школы и символом заботы о родном языке, передаваемом из поколения в поколение.

Ключевые слова: академик, выдающийся лингвист, арменовед, педагог, человек, гражданин, жизнедеятельность.

Мхитарян Арменуи, кандидат филологических наук, доцент, лектор кафедры армянского языка Ереванского государственного университета.

Շարունակության մեջ դեռ դիտարկելի են Սերգեյ Աբրահամյանի հրապարակախոսական հոդվածները, որոնք առանձին ուսումնասիրության արժանի նյութ են:

**ՄԵՂՐ ԵՎ ՄԵՂՈՒ ԲԱՌԵՐԸ ԵՎ ԴԻՎՆՑՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Մկրտումյան Արմինե

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀԱԱՀ, հայոց և օտար լեզուների ամբիոնի դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող.
armine_mkrtumyan@mail.ru

Բանալի բառեր. մեղր, մեղու, նույնաբաղադրիչ, դասակարգում, հոմանիշ, համանուն, հարանուն:

Նախաբան

Մեղուն և մեղրը բոլոր ժամանակներում էլ կարևոր նշանակություն են ունեցել մարդկանց համար: Հատկապես մեծ է դրանց դերը կենսաբանության, բժշկության, սննդաբանության և այլ ոլորտների համար: Հայերենի բառապաշարում զգալի քանակ են կազմում այս բառերով կազմությունները, որոնք արտացոլված են բառարաններում: Ստորև ներկայացվում են այն բառարանները, որոնք հիմք են ծառայել մեր հետազոտության համար: Փակագծերում տրվում է *մեղր* և *մեղու* բառերի և դրանցով կազմությունների բառարանային ժամանակագրական վիճակագրությունը՝ ավելի տեսանելի դարձնելով բառապաշարի համալրման գործընթացը արևելահայերենում և արևմտահայերենում: Կան նաև ավանդույթների, ծեսերի հետ կապված, ժողովրդի մշակույթը, աշխարհընկալումը, լեզվամտածողությունն արտացոլող բառեր, դարձվածքներ, որոնց մասին կխոսենք մեր հետագա ուսումնասիրություններում:

Մեղր և մեղու բառերի ստուգաբանության շուրջ

Մեղր և *մեղու* բառերին հանգամանալից անդրադարձել է Հ. Աճառյանը՝ հասնելով մինչև հնագույն ժամանակներ, մինչև հնդեվրոպացիների քաղաքակրթություն. «Հնդեվրոպացիք ճանաչում էին նաև մեղրը, որ կոչում էր mel-it կամ médhus. բայց այդ մեղրը ստանում էին ո՛չ թե մեղվաբուծությամբ, այլ ծառերի խոռոչներից հավաքելով. սրա համար էլ փեթակի համար մի ընդհանուր բառ գոյություն չունի հնդեվրոպական լեզվաբնի մեջ: Մեղրից գիտեին

¹ Հայր Գաբրիել Ավետիսեան, Հայր Խաչատուր Միրմելեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հ.2, Վեներետիկ, 1837 (14). Հ. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913 (33). Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 1944 (100). *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., 1969 (107). Է. Աղայան, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, Ե., 1976 (130). Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, Գ հատոր, Ե., 1977 (5). Գնլ արքեպիսկոպոս Ճերճերեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաճատուրեան, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրոյթ, 1992 (85). Փ. Մէլքիսեանյան, *Նոր բառերի բացատրական բառարան*, Ե., 1996 (6). Ս. Էլոյան, *Արդի հայերէնի նորաբանությունների բառարան*, Ե., 2002 (7). Ա. Մուքիսայան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009 (119). Գ. Ջահուկյան, *Հայերէն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (4). Ռ. Մաքսալետոյեան, *Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան*, Ե., 2011 (21). Ս. Գալստյան, *Դպրոցական բառակազմական բառարան*, Ե., 2014 (23). «Նոր բառեր», Ա-Ը պրակներ, Ե., 2015-2023 (48):

պատրաստել մի տեսակ խմիչք, որ նույնպես կոչվում էր *médhus*. դա պատրաստվում է այսպես.- մեղրը հալեցնում են ջրի մեջ, մի քանի օր դնում են արևի տակ, խմորվում է և դառնում է նուրբ ոգելից ըմպելիք՝ դուրեկան համով: Հնդեվրոպացիք գինի շինել չգիտեին: Ավելի հետո, երբ գինին մտավ հնդեվրոպական ժողովուրդների մեջ, տեղ տեղ հիշյալ *médhus* բառը հասկացվեց նոր ըմպելիքին»²:

Շարունակելով միտքը՝ Աճառյանը նշում է, որ *մեղր* բառի համար նախալեզուն ուներ երկու ձև՝ *mel* և *medhu*. առաջինը բնորոշ էր արևմտյան լեզուներին (հուն. *méli*, լատ. *mel*, իռլ. *mil*, ալբան. *mjal'* և գոթ. *milíð*), այդ թվում՝ նաև հայերենին, իսկ երկրորդը՝ արևելյան լեզուներին (սանս. *madhu*, ռուս. *мёд*, լիթ. *medūs*): Չնայած արևմտյան լեզուներին ծանոթ էր *medhu* ձևը՝ միայն «*մեղրաջուր*» նշանակությամբ, բայց հայերենը այդ ձևը չունեի³: *Մեղր* բառը հանդիպում է նաև ուգրոֆինական լեզուներում: Երկու վարկած է մեջբերվում. կամ հնդեվրոպացիները և ուգրոֆինները հարևաններ են եղել, կամ այդ երկուսի մեջ ավելի հին ցեղակցական կապ կա⁴:

Մեղու-ն նախալեզվում կոչվում էր *bhei*, որ զանազան մասնիկներով պահել են բալթիկ-սլավական, գերմանական և կելտական լեզուները: Ըստ վայրենիների մի նախապաշարման՝ այս միջատի անունը տաբուի է ենթարկվել, և մի քանի լեզուների մեջ հնարվել է մի նոր բառ՝ «*մեղր*» բառից. այսպես՝ հուն. *mélissa*, ալբան. *mial'tse* և սրանց հետ էլ հայերեն *մեղու*⁵:

Լեզվում առաջ է քաշվում կարծիք, որ *մեղու*-ն գուցե *մեղր*-ի գրաբարյան սեռական, տրական հոլովաձևն է. *մեղր'ի*, իբրև *ճանճ մեղու=մեղրի ճանճ, մեղրաճանճ*⁶ կամ *մեղվ<մեղու, ու>վ<մեղր* (Բաղադրությունների մեջ մտնում է *մեղր* և *մեղ' մեղ/ու, մեղ/վ* հիմքերով)⁷:

Մեկ այլ մոտեցմամբ *մեղր* բառի *ր*-ն կարող է աճական լինել: Հենրիետա Սուքիասյանը *մեղր*-ը ներառում է *ր* աճական ունեցող բառերի ցանկում, բայց միևնույն ժամանակ պարզաբանում է, որ *եզր, ծաղր, կողր, մանր, մեղր, ծունր* և նմանատիպ այլ բառեր հատուկ քննության կարիք ունեն՝ պարզելու դրանցում վերջնահանգ *ր*-ի բուն էությունը (աճակա՞ն, թե՞ նախկին թեքույթ կամ ածանց, կամ արմատի վերջնահնչյուն), մանավանդ որ այդ բառերի զգալի մասն ունի հոլովման յուրահատկություն⁸:

Ընդհանրացնելով *մեղր* և *մեղու* բառերի վերաբերյալ վերը շարադրվածը՝ նշենք, որ *մեղր*-ը բնիկ հայերեն բառ է, համապատասխանում է հնդեվրոպական նախալեզվի *mel* և *medhu*, իսկ *մեղու*-ն՝ *bhei* ձևերին: *Մեղու*-ն կարող է *մեղր*-ի գրաբարյան սեռական, տրական հոլովաձևը լինել, իսկ *մեղր*-ի *ր*-ն հնարավոր է՝ աճական է: Այս բոլոր հարցերը լեզվում լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն:

2 **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 2013, էջ 15:

3 **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 2013, էջ 97-98:

4 **Հ. Աճառեան**, *Հայերեն արմատական բառարան*, Գ հատոր, Ե., 1977, էջ 302:

5 **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 2013, էջ 95:

6 **Ստ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 300:

7 **Ս. Գալստյան**, *Դպրոցական բառակազմական բառարան*, Ե., 2014, էջ 139:

8 **Հ. Սուքիասյան**, *Աճականը հայերենում*, Ե., 1986, էջ 78:

Մեղր և մեղու բաղադրիչներով բառերի իմաստային դասակարգում

Մեր ուսումնասիրության առանցքում են **մեղր** և **մեղու** բաղադրիչ ունեցող բառերը իմաստային տեսանկյունից, որոնք փորձել ենք դասակարգել թեմատիկ տարբեր խմբերում:

Լեզվում բառապաշարի իմաստային (թեմատիկ) դասակարգումը նոր երևույթ չէ: Նման դասակարգումներ արվել են տարբեր լեզվաբանների կողմից: Հ. Աճառյանը հայերենի 713 (909) բնիկ բառերի համար առանձնացրել է 22 խումբ՝ *բնության, կրոնական, մարդ և մարմնի մասեր, հիվանդություններ, կենդանիներ, ընտանիք, երկրագործական, խաշնարածություն և գյուղատնտեսություն, արհեստ և արվեստ, գույներ, վաճառականություն, շինարարական, հագուստ և զարդ, ուտելիք և ըմպելիք, առտնին տնտեսություն, թիվ և չափ, մետաղներ և հանքեր, ժամանակ և տեղ, երկիր և պետություն, զենքեր անվանող, սովորական կյանքի, ճանապարհի վերաբերյալ բառեր*⁹: Գ. Ջահուկյանը իմաստային դասակարգում կատարել է տարբեր խոսքի մասերի համար: Մեր հետաքրքրության շրջանակներում է հատկապես արմատական գոյականների դասակարգումը, որտեղ առանձին խմբերով ներկայացվում են *վերացական գոյականները, անօրգանական, բուսական, կենդանական աշխարհի, հասարակության հետ կապ ունեցող անվանումները*¹⁰: Ա. Սուքիասյանի «Ժամանակակից հայոց լեզու» գրքում իմաստային 14 խմբի է բաժանվում բառային հիմնական ֆոնդը՝ *մարմնի տարբեր մասերի և նյութերի անուններ, ազգակցական և խնամիական հարաբերություններ ցույց տվող բառեր, բնության երևույթների և առարկաների, կենդանական աշխարհի անվանումներ և այլն*¹¹: Հատկապես վերջին շրջանի ուսումնասիրություններում առանձին դասակարգումներ են կատարվում որևէ բառի կամ որևէ բաղադրիչով կազմությունների համար:

Բառապաշարի իմաստային բաժանումը մեծ դեր ունի բառագիտության համար: Այն նշանակալից ուսումնասիրություն կարող է համարվել տարբեր հարցեր կամ երևույթներ լուսաբանելու համար: Մեր աշխատանքում ուսումնասիրվել է **մեղր** և **մեղու** բաղադրիչներով շուրջ 140 բառ: Հիմք ընդունելով վերևում հիշատակված դասակարգումները՝ դրանց համար առանձնացրել ենք իմաստային (թեմատիկ) բազմանդամ և սակավանդամ 12 խումբ, որոնք էլ հաճախ ձևավորում են ենթախմբեր: Այսպես՝

1. Կենդանական աշխարհ (միջատ, թռչուն, կենդանի, խումբ): Այս խումբը բաժանվում է չորս ենթախմբի, որոնք ներառում են մեղվի կամ մեղրի հետ առնչություն ունեցող բառեր:

• **միջատ՝** *մեղրաճանձ, մեղրամտիկ, մեղուկ, մեղվաճանձ (արևմտ.՝ մեղուաճանձ), իշամեղու.*

• **թռչուն՝** *մեղվակեր, մեղվաքաղ, մեղվաթռչնիկ, մեղվահավ, մեղրածուծ.*

• **կենդանի՝** *մեղրակեր, մեղրաճարակ (հզվդ.).*

• **խումբ՝** *մեղվախումբ, մեղվահույլ, մեղվապարս, մեղվամպ, մեղվակծիկ:*

Ուշագրավ են այս բառերից մի քանիսի նշանակությունները: *Մեղրաճանձ*-ը կամ *մեղվաճանձ*-ը ընտանի մեղուն է, որը մեղր է պատրաստում, իսկ *մեղուկ*-ը բառարաններում

⁹ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 2013, էջ 108-112:

¹⁰ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 126-153:

¹¹ Ա. Սուքիասյան, Բ. Սուքիասյան, Մ. Ֆելքյան, *Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն)*, Ե., 2017, էջ 164-165:

հիշատակվում է որպես *իշամեղու, կրեստ: Իշամեղուն* վայրի մեղվի տեսակ է, որի թրթուրները մակաբուծորեն ապրում են կենդանիների մարմնում: Այն ունի նաև փոխաբերական գործածություն՝ *ձրիակեր, ուրիշի աշխատանքով ապրող մարդ: Մեղրամտիկը* մեղրի կամ փեթակի մեջ մտնող մեղուն է:

Մեղվակերը հիմնականում մեղուներով սնվող թռչուն է, իսկ *մեղրակերը*՝ գիշակեր կաթնասուն կենդանի, որ մեղր շատ է սիրում, մտնում է մեղվանոցները՝ մեղր ուտելու: Կարծում ենք՝ *մեղվակեր - մեղրակեր* բառազույգը կարելի է որպես հարանուն դիտարկել:

2. Ընպելիք (սպիրտային և ոչ սպիրտային խմիչք): Այս խմբի բառերն այնպիսի ըմպելիքի անվանում են, որոնց բաղադրության մեջ մեղր կա.

• **ոչ սպիրտային՝** *մեղրաջուր, մեղրօշարակ, մեղրահյութ, մեղրանեկտար, մեղրած, մեղրաքացախ.*

• **սպիրտային՝** *մեղրախմիչք, մեղրասպիրտ, մեղրագինի, մեղրօղի:*

Մեղրահյութը կամ *մեղրանեկտարը* քաղցրահամ հեղուկ է՝ նեկտարը, որն արտադրվում է մեղրատու բույսերի նեկտարանոցներում: Ըստ հունական դիցաբանության՝ այն անմահություն պարգևող խմիչք էր, որը խմել են Օլիմպոսում ապրող աստվածները:

Մեղրաջուրն ու *մեղրօշարակը* հումանիշ բառեր են՝ *մեղրից պատրաստված օշարակ, մեղրի ջուր* նշանակություններով:

Մեղրաքացախը երկու իմաստ ունի՝ 1.մեղրից պատրաստված քացախ, 2.մեղրից ու քացախից պատրաստված օշարակ: Այն օգտագործվում է բժշկության ոլորտում՝ բարերար ազդեցություն ունենալով որոշ հիվանդությունների կանխարգելման կամ բուժման համար: «Հիվանդության սուր շրջանում Հիպոկրատը նշանակում էր մեղրով ու ջրով պատրաստված ըմպելիք՝ **մեղրաջուր**՝ քիչ քանակով քացախով համեմված՝ **մեղրաքացախ**, որը նպաստում էր շնչառության կանոնավորմանն ու խորխի դուրս բերմանը»¹²:

Մեղրած բառը հիմնականում գործածվում է արևմտահայերենում: Այն նշանակում է այն ջուրը, որն օգտագործվում է մեղրի խորխիսիները և պարարտ մոմի չեչը լվանալու համար: Արևելահայերենն ունի *մեղրել* բայի *մեղրած* հարակատարի դերբայական ձևը՝ *մեղր քսել, խառնել, քաղցրացնել* նշանակություններով:

Մեղրագինի պատրաստել են դեռևս հնագույն ժամանակներից: Հիմնական բաղադրիչներն են մեղրը, ջուրը, ցանկության դեպքում ավելացնում են նաև մրգեր, ծաղիկներ, համեմունքներ: Մեղրասպիրտի և մեղրագինու պատրաստման եղանակները նման են, սակայն մեղրագինու համեմատ առաջինի սպիրտային մասն ավելի շատ է:

Մեղրօղին ջրով և մեղրով պատրաստվող, խմորվող կամ չխմորվող օղին է, որը շատ գործածական է եղել հնում: Այս խմիչքը հատկապես շատ են սիրել ռուսները:

Մեղրախմիչքը մեղրից պատրաստվող կամ մեղր պարունակող ոգելից խմիչքների ընդհանուր անվանումն է:

3. Սնունդ (միրգ, բանջարեղեն, այլ):

- **միրգ՝** *մեղրատանձ, մեղրախնձոր, մեղրակենի, մեղրապոպ, մեղրիկ ողկույզ.*
- **բանջարեղեն՝** *մեղրուկ, մեղրադդում, մեղվադդում, մեղրատունկ (ուտելի սնկի տեսակ).*

¹² Ս. Վարդանյան, Ա. Սալանյան, *Բժշկության պատմություն*, Ե., 2017, էջ 82:

• այլ՝ մեղրընկույզ (գոգինախ), մեղրաբլիթ, մեղրամթերք, մեղրապ (արևմտ.), մեղրահաց (հացամեղր), մեղրախորիսիս, մեղրաշաքար:

Մրգերի անվանումներում *մեղր* բառի առկայությունը բացատրվում է մեղրի պես քաղցրահամ լինելու հանգամանքով:

Մեղրատանձ բառն ունի նաև *մեղրուկ*, *մեղրիկ*, *մեղրենի*, *մեղրկեն*, *մեղր տանձ*, *մեղրի տանձ*, *մեղրիկ տանձ* տարբերակները: Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարան»-ում այս անվանումները նշանակում են տանձի տարբեր տեսակներ, որոնք իրարից տարբերվում են ձևով և գույնով: Ինչպես օրինակ՝ *մեղրատանձը* մարդու գլխի մեծություն ունի, ընտիր, բայց երկար չդիմացող տեսակ է, *մեղրուկը* և՛ մեծ, և՛ փոքր չափի է լինում, հասնում է ամռանը, *մեղրիկ տանձը* Պոլսի տանձի տեսակ է, *մեղրի տանձը*, *մեղրիկը* և *մեղրկենը* փոքր են, իսկ *մեղրի տանձը* նաև վառ դեղին գույն ունի¹³:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում *մեղրակենի* բառը: Պարզվում է՝ այն և՛ քաղցրահամ ծիրանի, և՛ խնձորի, և՛ մեծ, սպիտակ, փուխր և քաղցր տանձի մի տեսակ է (բառարանային նշումները տարբեր են)¹⁴:

Ուշագրավ է *մեղրապոպ* (սեխ, ձմերուկ) բառի ստուգաբանությունը: Ստ. Մալխասյանցը նշում է, որ հունարեն *melope'pōn* բառից է, տառացիորեն նշանակում է *խնձորասեխ*, *շամամ*, որն այժմ գործածվում է *ձմերուկ* նշանակությամբ՝ *mēlon'ից*, *խնձոր*, բայց սխալ ստուգաբանությամբ *méli* մեղր բառից կարծելով՝ հասկացել են *մեղրասեխ*, *ձմերուկ*¹⁵:

Մեղրիկ ողկույզը խաղողի տեսակ է, որը հանդիպում է միայն Ստ. Մալխասեանցի բառարանում:

Այս բառախմբից առանձնացրել ենք *մեղրուկ* բազմիմաստ բառը: Բառարաններից մի քանիսում այն ներկայացվում է որպես մենիմաստ, մյուսներում՝ երկիմաստ, եռիմաստ բառ և այլն: Ի մի բերելով բառարաններում ներկայացված իմաստները՝ *մեղրուկ* բառը բացատրվում է հետևյալ նշանակություններով՝ 1.եզնալեզվի կապուտակ ծաղիկը, որից մեղրահամ հյութ (նեկտար) է հոսում և ախորժելի է մեղուներին, 2.մեղրացող (քաղցրահամ կպչուն հյութ, որ բարակ ցողի նման պատում է ծառերի տերևները), 3.մեղվախոտ, 4.թոքախոտ, 5.մեղրահամ դդում, 6.մեղրատանձ (Վանի տանձերի մի տեսակը): Ստացվում է՝ այս բառն իր իմաստներով առնչվում է մեր կողմից կատարված իմաստային դասակարգման տարբեր խմբերին կամ ենթախմբերին:

Մեղրահաց (հացամեղր) և *մեղրախորիսիս* բառերը հոմանիշներ են: Դրանք մոմե բարակ տախտակ են՝ երկու երեսին վեցանկյունի բջիջներով, որոնք լիքն են մեղրով:

Մեղրապը շաքարով և խոլորձի կոճղեգրով պատրաստված սննդարար ուտելիք է:

Մեղրադդումը կամ *մեղվադդումը* (կոչվում է նաև *խոշորապտուղ*) դդումի տեսակներից մեկն է և մեղրի համ ունի:

¹³ Հ. Աճառյան, *նշվ. աշխատություն*, Թիֆլիս, 1913, էջ 769:

¹⁴ Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, էջ 302. *Ճամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., 1969, 515. Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 995. Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009, էջ 758:

¹⁵ Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 302:

4. Բուսանվանումներ: Բույսերը հսկայական դեր են խաղում մարդկանց կյանքում: Հատկապես մեծ է դրանց կարևորությունը բժշկության, արտադրության, առողջ սննդի տեսանկյունից: Դրանց թվում են նաև այն բույսերը, որոնց անվանումները կազմված են *մեղր* և *մեղու* բաղադրիչներով և ունեն մեղրատու կամ մեղրահամ հատկություն՝ *մեղրափուշ*, *մեղրիկ-վարդ*, *մեղրխոտ (մեղրախոտ)*, *մեղվախոտ*, *մեղրածուծ*, *մեղրածծուկ (իշառվույտ)*, *մեղրուկ*, *մեղրանուշ* կամ *մեղրանուշիկ*, *մեղրապաճ*, *մեղրատանձենի (մեղրատանձի)*, *մեղրածաղիկ*, *մեղրաբույս*, *մեղվաթուփ*, *մեղվախունկ*, *մեղվամուշկ*, *մեղրանոցիկ*, *մեղվաթագ*, *մեղրթեր (արևմտ.)*:

Մեղրանուշ կամ *մեղրանուշիկ* բառերը բառարանների զգալի մասում ներկայացվում են *մեղրի նման քաղցր, շատ ախորժեղի* իմաստներով, մինչդեռ որոշ բառարաններում նշվում է այլ նշանակություն ևս՝ *եղնջազգիների ընտանիքի բույս*, որի այլ անվանումները գուցե ավելի տարածված են՝ *եղինջ(ա)մայր*, *լսնեղինջ*, *անմեղ եղինջ*: Հ. Աճառյանի «Գավառական բառարանում» հետաքրքիր մեկնաբանություն ենք կարդում այս բույսի մասին, որը հավանաբար խորհրդանշական է եղել հայկական հին տոների և ծեսերի ժամանակ. «Տեսակ մը բոյս է, տղաքը ասով կը զարդարուին վիճակին ու վարդավառին. ծաղկի պսակին սպիտակ ծայրը՝ կը փրցունեն կուտեն. մեղրի պէս անուշ է»¹⁶:

Մեղրխոտը (մեղրախոտ) մեղր կամ նեկտար պարունակող բույս է, որն ունի նաև *մեղվախոտ*, *մեղրածուծ*, *մեղրուկ* անվանումները:

5. Զբաղմունք, մասնագիտություն: Զբաղմունք, մասնագիտություն նշանակող բառեր են՝ *մեղվապահ*, *մեղվաբույծ*, *մեղվապան*, *մեղվագործ*, *մեղրատեր*, *մեղվատեր*: Սրանք հոմանիշներ են և ունեն *մեղու պահող (մեղվաբուծությամբ զբաղվող¹⁷)* և *մեղվանոցը պահող* նշանակությունները (բացառությամբ *մեղվաբույժ*-ից, որը մեղուներին բուժող անձն է):

6. Կացարան: Այս շարքի բառերը նշանակում են վայր, որտեղ կան կամ պահվում են մեղուներ: Իմաստային առումով գրեթե նույնն են և հոմանիշ են *փեթակ-ին՝ մեղվափեթակ*, *մեղրամանիկ*, *մեղվատուն*, *մեղվատնակ*, *մեղրաքրոց (արևմտ.)*, *մեղվարնտանիք*, *մեղվաձմեռանոց*, *մեղվաբույն*, *մեղվափչակ*, *մեղվանոց*, *մեղվոց*:

Մեղվարնտանիք-ն իր գլխավոր, առաջնային իմաստով է համալրում հոմանշային շարքը, իսկ երկրորդական իմաստով նշանակում է *մեղուների ընտանիք*: *Մեղվաձմեռանոցը* մեղուների ձմեռոցի տեղն է կամ մեղուների փեթակների ձմեռային շենքը: *Մեղվաբույնը* և *մեղվափչակը* իմաստներով նույնանում են՝ նշանակելով *փչակ*, *ծերպ* կամ *խոռոչ*, որտեղ բույն են դնում վայրի մեղուները: *Մեղվանոցն* առաջին իմաստով ավելի լայն ընդգրկում ունի: Այն տարածություն է, որտեղ տեղավորում են փեթակներ, ձմեռանոց, պահեստներ, մեղվաբույծների աշխատասենյակ, անհրաժեշտ գույք և այլն:

7. Գունանվանումներ: Առանձնակի ուշադրության են արժանի այս խմբի բառերը:

Ընդհանրապես գունանվանումները կարևոր նշանակություն ունեն աշխարհը, շրջակա միջավայրը ճանաչելու տեսանկյունից: Հաճախ գույնը ընդգծում է տարբեր իրերի կամ երևույթների առանձնահատկությունները: *Մեղր* բառով բաղադրված գունանվանումներում

¹⁶ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 768:

¹⁷ Մեղվաբուծությունը Հայաստանում դարերի պատմություն ունի, որի զարգացմանը նպաստել են մեր երկրի բնակլիմայական պայմանները:

հասակորեն ընդգծվում են դեղինը կամ դրան մոտ գույները՝ *մեղրագույն, մեղրադեղին, մեղրավուն, շագանակամեղրագույն*:

Որպես գունանվանում՝ *մեղուշ* և *մեղուշագույն* բառերի համար հանդիպում են *մանուշակագույն* և *վարդագույն* նշանակությունները, թեև *մեղուշ* բառի առաջնային իմաստներն են՝ դուրեկան, քաղցր, քնքուշ, հաճելի (Գնել արքեպիսկոպոս Ճերեճեան, Փարամազ Կ. Տոնիկեան, Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուֆ, 1992, էջ 145: Ռուբեն Ղազարյան, Հենրիկ Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 508, Ռուբեն Սաքապետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երևան, 2011, էջ 217)¹⁸: Այդ բառերը բառարաններում հիշատակվում են որպես չստուգաբանված կամ անհայտ ծագման բառեր: *Մեղուշագույն*-ը *մեղուշ* (մեղրի հետ կապ ունեցող) + (*ա*)*գույն* (արտահայտում է գույն, երբեմն՝ որակ, նմանություն կամ հատկություն) կազմությունն ունի: Այս դեպքում *մեղուշագույն* նշանակում է *մեղրի գույն ունեցող* կամ *մեղրի գույնի նման*: Նշենք, որ *մեղուշ*, և՛ *մեղուշագույն* բառերի հիմքում *մեղ/ու* հիմքն է:

8. Հատուկ անուններ (անձնանուն, աշխարհագրական անուն)¹⁹:

- **անձնանուն՝** *Մեղրիկ* (*Մելիաս*²⁰), *Մեղրանուշ* կամ *Մեղուշ*.
- **աշխարհագրական անուն՝** *Մեղրի, Մեղրաձոր, Մեղր* կամ *Մեղրագետ, Մեղվաքար, Մեղրաբուն, Մեղրագու, Մեղրաձոր, Մեղրակեր, Մեղրակում, Մեղրանոց, Մեղրաշեն, Մեղրաջուր, Մեղրաքաղաք, Մեղրաքար, Մեղրիդաղ, Մեղրիսար, Մեղրուտ* և այլն, որոնք առավելապես պատմական անուններ են:

Մեղրիկ անունը *մեղր* բառից է՝ **իկ** փաղաքշական ածանցով: Հայերի մեջ գործածական է իբրև երկսեռ անձնանուն²¹: Հանդիպում է նաև *Մեղուշ*՝ իգական ձևով: Կան *Մեղրիկյան, (Շահեն) Մեղրյան* ազգանունները:

Աշխարհագրական անուններից մի քանիսն աչքի են ընկնում բազմիմաստությամբ և համանունությամբ, ինչպես օրինակ՝

✓ *մեղրակեր*¹ - 1.մեղր ուտող, 2.գիշակեր մեղրասեր կաթնասուն կենդանի (ապրում է Հնդկաստանում և Հարավային Աֆրիկայում), 3.արջ, *մեղրակեր*² - գյուղատեղի և վայր Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանում: Ադրբեջանցիներն անվանում են Ղաբարթու: 20-րդ դարի սկզբին այստեղ պահպանվում էին բնակարանների և եկեղեցու ավերակներ և հանգստարան²².

✓ *մեղրաջուր*¹ - մեղրից պատրաստված ջուր, *մեղրաջուր*² - 1. գետակ Հայկական լեռնաշխարհում, 2. գյուղ Արևմտյան Հայաստանում, 3.վայր Հայկական լեռնաշխարհում.

✓ *մեղրաձոր*¹ - 1.մեղր ծորող, 2.փխբ. մեղրի նման ծոր տվող, քաղցրահամ, 3.փխբ. քաղցր, դուրեկան, անուշ, 4.փխբ. քաղցրալեզու, քաղցրախոս, 5.փխբ. Շողոքորթ, կեղծավոր, *մեղրաձոր*² - գետ պատմական Փոքր Հայքում: (Եզերքին կան անմատչելի ժայռեր, որոնց մեջ

¹⁸ Ըստ Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի՝ *մեղուշ*-ը անհայտ ծագման բառ է: Բառարաններում նշվում են *դուրեկան, քաղցր* իմաստները: Ըստ Ստ. Մալխասեանցի՝ այս բառը համանուն է՝ *մեղուշ*¹-անորոշ նշ. բառ («Մեղուշ արջառաջ») և *մեղուշ*²-դուրեկան, քաղցր, քնքուշ: Այստեղ նկատի ունի *մեղուշ աչքերը (մեղուակն), հայացքը*:

¹⁹ Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, Ե., 1942. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Ե., 1991:

²⁰ Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 3, Ե., 1946, էջ 315:

²¹ <https://hoonch.am/anunner/arakan/m/meghrik>

²² Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Ե., 1991, էջ 780:

հնուց մեղուններն իրենց մշտական բույնն են դրել: Ամռանը մեղրը հալչում, հոսում է ներքևից անցնող գետակը և քաղցրացնում նրա ջուրը: Ըստ ավանդության՝ դրա համար էլ այս գետը կոչվել է Մեղրածոր²³):

Կան նաև այլ տեղանվանումներ.

Մեղրածոր - 1.գավառակ («գավառ») Մեծ Հայքի Սյունիք աշխարհում, 2.գետ Հայկական լեռնաշխարհում՝ Արաքսի ավազանում, 3.գյուղ և երկաթուղային կայարան ՀԽՍՀ Հրազդանի շրջանում:

Ներկայումս *Մեղրածոր* գյուղ կա Հայաստանի Կոտայքի մարզում:

Մեղրի - 1.գավառ ՀԽՍՀ-ում, 2.գավառակ («գավառ») Մեծ Հայքի Սյունիք աշխարհում, 3.գետ ՀԽՍՀ-ում՝ Արաքսի ավազանում, 4.գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, 5.երկաթուղային կայարան կամ ավան ՀԽՍՀ Մեղրու շրջանում, 6.երկիր հնագույն Հայաստանում՝ հիշատակված իւթական և ասորեստանյան աղբյուրներում, 7. ոստիկանական շրջան Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառում, 8.վանք Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Արևիք գավառում, 9.վարչական շրջան ՀԽՍՀ-ում, 10.քաղաք ՀԽՍՀ-ում:

Այժմ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում է գտնվում Մեղրի քաղաքը: «Մեղրին նախկինում ըստ «Աշխարհացույցի» անվանվել է Արևիք գավառ, որի անվան ծագումը կապվում է «արևոտ տեղ» անվան հետ: Ըստ Ղևոնդ Ալիշանի Արևիքը նախկինում կազմել է Գողթն գավառի մի մասը, իսկ հետո անջատվել նրանից և միացել Սյունյաց աշխարհին: Մեղրիի անվան հետ կան մի քանի վարկածներ: Նրանցից մեկն այն է, որ Մեղրին իր անվանումը ստացել է հնում այստեղ ստացվող մեղրի շնորհիվ: Լինելով Իրանին շատ մոտ հարևան, տեսակետներից մեկի համաձայն էլ, Մեղրին իր անվանումը ստացել է պարսկերեն Միհր/արև/ բառի հնչյունափոխությունից: Հայ նշանավոր աշխարհագետ Կամսար Ավետիսյանի կարծիքով էլ Մեղրի անվան առաջացումը կապվում է տարածքում աճող քաղցրահամ թզից ծորացող մեղրի նմանվող հյութի հետ: Կա նաև մի տեսակետ էլ, ըստ որի Արշակ 2-րդ թագավորը Մեղրիի գինին խմելիս բացականչել է. «Գինու չէ նման, այլ մեղրի»²⁴...

9. Ծես, տոն, ավանդույթ, խաղ: Հայկական մշակույթը հին ժամանակներից մինչ օրս աչքի է ընկնում բազմաթիվ ազգային տոներով և ծեսերով: Դրանք տարբեր դրսևորումներ են ունեցել: Քիչ չեն եղել նաև ժողովրդական խաղերը, որոնք անհիշելի ժամանակներից մեր ժողովրդի կենցաղի անբաժան մասն են եղել: Այդ խաղերից շատերը զարգացրել են մանուկների ֆիզիկական ուժը, նշանառությունը, ճարպկությունը, արագ կողմնորոշվելու և որոշում ընդունելու կարողությունը: Հին ծեսերից, ավանդույթներից ու խաղերից կամ շատ բան չի պահպանվել, կամ էլ դրսևորվում են այլ մոտեցմամբ՝ ժամանակակից լուծումներով: Այս խմբի բառերից են՝ *մեղր-կտրելուն (հին հայկական խաղ)*, *մեղրատոն*, *մեղրածես*, *մեղրագովք*, *մեղրամիս*, *մեղրալուսին*, *մեղրագիշեր*:

Մեղր-կտրելուն-ը խաղ է, որի ժամանակ երկու խաղացող կանգնում են, երրորդը՝ նրանց մեջտեղում, և ցուցամատը քթին խփելով, մեղվի նման բզզալով՝ ապտակում է մյուս

²³Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. բառարան, էջ 780:

²⁴ <https://www.meghri.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>

երկուսին: Սրանք էլ աշխատում են նրան ապտակել, որը կռանալով կարող է խուսափել ապտակից: Իսկ եթե չկարողանա խուսափել, ապտակողի հետ տեղերով կփոխվեն²⁵:

Մեղրամիս-ը և *մեղրալուսին*-ը հոմանիշներ են, ունեն ուղիղ և փոխաբերական գործածություն՝ 1. ամուսնության առաջին ամիսը, 2. (փխբ.) որևէ բանի (համատեղ աշխատանքի, ճանապարհորդության և այլն) հաշտ ու խաղաղ շրջանը:

Մեղրատոնը նորակազմ բառ է: Վերջին տարիներին մեղրի և մեղվամթերքի ցուցահանդես-վաճառքի նոր մշակույթ է ձևավորվել մեր իրականության մեջ՝ մեղրի փառատոն, որի ժամանակ ներկայացվում են Հայաստանում արտադրվող մեղրի և մեղրամթերքի տարբեր ապրանքանիշներ:

Համացանցում մեզ հանդիպել են *մեղրածես*, *մեղրագուլք* բառերը, որոնք բառարանագրված չեն և հոմանիշ են *մեղրատոն*-ին:

10. Հատկանիշ ցույց տվող բառեր: Այս խմբի բառերը հիմնականում ձևավորում են հոմանշային շարքեր: Փաստենք, որ բառերի զգալի մասը բազմիմաստ է, ունի ուղիղ և փոխաբերական նշանակություններ, ուստի կարող է ներառվել նաև հոմանշային այլ շարքերում:

Մեղուն հայտնի է իր աշխատասիրությամբ, ժիր ու կայտառ շարժուձևով: Հաճախ եռանդուն, ջանասեր հատկանիշներով օժտված մարդկանց համար փոխաբերական նշանակությամբ գործածվում են՝ *մեղվածիր*, *մեղվական*, *մեղվային*, *մեղվաջան*, *մեղվորեն*, քաղցրալեզու, քաղցրախոս, նաև շողոքորթ ու կեղծավոր մարդկանց համար՝ *մեղրախոս*, *մեղրաբերան*, *մեղրաշուրթ*, *մեղրաշրթունք*, *մեղրահոս* բառերը:

Քաղցր, անուշ, դուրեկան իմաստների համար ասվում է *մեղրածոր* (*մեղրածորան*), *մեղրահաս*, *մեղրավետ*, *մեղուակն*, *մեղրայի* (*մեղրայիր*, *մեղրայից*), *մեղրիկ*, *մեղրագօծ*, *մեղրաճաշակ*, իսկ մեղրի առատ լինելու դեպքում՝ *մեղրաշատ*, *մեղրառատ*, *մեղրաբուխ*:

Հատկանշական են *մեղրիկ* և *մեղուշ* բառերը (այս բառերի մասին խոսվել է նաև իմաստային այլ խմբերում), որոնք ձևավորում են համանուններ՝

*մեղրիկ*¹ - քաղցրիկ, դուրեկան, *մեղրիկ*² - մեղրատանձ, *մեղրիկ*³ - անձնանուն.

*մեղուշ*¹ - քաղցրիկ, դուրեկան, *մեղուշ*² - գունանուն, *մեղուշ*² - անձնանուն:

11. Գործողություն: Այս բառերը քանակով սահմանափակ են, գործածվում են ուղիղ և փոխաբերական իմաստներով՝ *մեղրել*, *մեղրանալ* (*բնստ.*), *մեղրոտ(վ)ել*, *մեղրագործել* և այլն:

12. Այլ: Վերջին խումբը համալրվում է այնպիսի բառերով, որոնք իրենց իմաստներով վերոնշյալ խմբերին չեն համապատասխանում, կամ մեկ բառով խումբ կազմել չեն կարող: Դրանք հայերենում զգալի թիվ են կազմում՝ *մեղրամոմ*, *մեղրամոմե*, *մեղրաման*, *մեղվաստան*, *մեղվափոշոտում*, *մեղրաբույր*, *մեղրացող*, *մեղրաճաշակ* (*քաղցր*, *ախորժելի*), *մեղրաբջիջ*, *մեղվաբջիջ*, *մերախորշ*, *մեղրահաց*, *մեղրախորհիսիս*, *մեղրաշաքար*, *մեղրոտ*, *մեղրաճարակ*, *մեղրադդում* և այլն:

Հոմանշներ են *մեղրաբջիջ-մեղվաբջիջ-մեղրախորշ*, *մեղրահաց-մեղրախորհիսիս* բառերը:

Մեղրացողը տերևային միջատների (լու, մեղրային ոջիլ) կողմից արտադրվող քաղցրահամ կաչուն հյութ է, որը բարակ ցողի նման պատում է ծառերի տերևները:

²⁵ Սո. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 302:

Մեղվակաթը (ապիլակ) աշխատող մեղունների գեղձերի արտազատուկն է, որով մեղուները կերակրում են ապագա մայրերին: Այն արժեքավոր դեղամիջոց է. ունի օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնող, զարկերակային արյան ճնշումը կարգավորող ներգործություն: *Մեղրակաթ* և *մեղվակաթ* բառազույգը ևս կարող է համալրել հայերենի հարանունների շարքը:

Մեղր և մեղու բաղադրիչներով հոմանիշ, համանուն, հարանուն բառեր

Մեղր և *մեղու* բառերով կազմությունների քննության արդյունքում ձևավորվել են նույնաբաղադրիչ հոմանիշ, համանուն և հարանուն բառերի շարքեր: Նշենք, որ *մեղու* բառն արդեն իսկ հոմանշային հարուստ շարք է կազմում՝ *մեղրաճանձ, իշամեղու, կրետ, մոմագործ (փխբ.),* բարբառային՝ *ճանձ, դդեգ, դգեղ, բագ, մողիկ:* Մեղվաընտանիքում յուրաքանչյուր մեղու իր «պաշտոնը» կամ «մասնագիտությունն» ունի, ինչով էլ պայմանավորված է նրանց մասնավոր անուններ տալու հանգամանքը²⁶: Այսպես՝

պարսամայրը կամ *պարսմայրը* մայր մեղուն է՝ «փեթակի թագուհին». նրանից են ծագում փեթակի մյուս մեղունները՝ աշխատավորները, բոռերը, երիտասարդ մայրերը.

գործավոր կամ *աշխատավոր* մեղունները կատարում են մեղվաընտանիքի հետ կապված բոլոր աշխատանքները: Սրանք ունեն իրենց ենթատեսակները՝ *մատակարար* կամ *ավարառու, մոմարար, դայեակ, տնարար.*

պանգործ կամ *սուտակայ* մեղուն փեթակներում խորիսխ պատրաստողն է. *սուտ բրեա*-ն որձ կամ արու մեղուն է, որը բեղմնավորում է դեռատի էգին.

«*վառարան մեղուններ*»-ը փեթակի տաքության պատասխանատուներն են.

թռչող մեղունները բույսերի ծաղիկներից հավաքում են նեկտար, ծաղկափոշի, կպչուն խեժային նյութեր և տանում փեթակ:

Կան նաև *վայրի* կամ *վայրենի* մեղուններ, որոնք մարդկանց խնամքի տակ չեն և իրենց համար բույն են պատրաստում ժայռերի կամ ծառերի մեջ:

Ստորև ներկայացվում է *մեղր* և *մեղու* բաղադրիչներով կազմությունների նույնաբաղադրիչ հոմանիշ, համանուն և հարանուն բառաշարքերի աղյուսակը.

ՀՈՄԱՆԻՇ	ՀԱՄԱՆՈՒՆ	ՀԱՐԱՆՈՒՆ
մեղրամիս - մեղրալուսին	մեղրաջուր ¹ -մեղրից պատրաստված ջուր	մեղրակեր - մեղվակեր
մեղվախումբ-մեղվապարս-մեղվահույլ-մեղվամպ-մեղվակծիկ	մեղրաջուր ² -1.գետակ Հայկական լեռնաշխարհում, 2.գյուղ Արևմտյան Հայաստանում, 3.վայր Հայկական լեռնաշխարհում	մեղրակաթ - մեղվակաթ մեղրադդում-մեղվադդում
մեղրահաց(հացամեղր)-մեղրախորիսխ	Մեղրիկ ¹ - անձնանուն մեղրիկ ² - մեղրատանձ	

²⁶ http://www.nayiri.com/search?dt=HY_HY&wordForm=դայեակ&l=hy_LB

մեղրաբջիջ-մեղվաբջիջ- մեղրախորշ	մեղրիկ ³ - քաղցրիկ
մեղրխոտը(մեղրախոտ)- մեղվախոտ-մեղրածուծ- մեղրուկ	Մեղու ² - անձնանուն մեղու ² - դուրեկան, քաղցր մեղու ³ - վարդագույն կամ մանուշակագույն
մեղրամանիկ-մեղվատուն- մեղվատնակ-մեղվանոց- մեղրաքթոց(արևմտ.)- մեղվաբույն- մեղվարնտանիք- մեղվափեթակ-մեղվափչակ	մեղրակեր ¹ - 1.մեղր ուտող, 2.գիշակեր մեղրասեր կաթնասուն կենդանի, 3.արջ, մեղրակեր ² - գյուղատեղի և վայր Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանում
մեղրատուն-մեղրածես- մեղրագովք	մեղրած ¹ - (արևմտ.) մեղրի խորիսխները և պարարտ մոմի չէչը լվանալու ջուր Մեղրած ² - մեղրել (մեղր քսել, խառնել, քաղցրացնել) բայի հարակատար դերբ.

Եզրակացություն

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ *մեղր* և *մեղու* բառերով կազմությունները զգալի թիվ են կազմում հայերենի բառապաշարում: Այդ բառերի ստուգաբանության շուրջ մոտեցումները տարբեր են, ինչը ենթադրում է որոշ հարցերի լրացուցիչ պարզաբանում: Դրանք բառակազմական մեծ ակտիվություն են դրսևորում և լեզվաբանական տարբեր վերլուծություններ կատարելու լայն հնարավորություններ ստեղծում: *Մեղր* և *մեղու* բաղադրիչներով կազմությունների իմաստային (թեմատիկ) դասակարգումը ևս նշանակալից ուսումնասիրություն կարող է համարվել տարբեր հարցեր կամ երևույթներ լուսաբանելու համար: Այդ բառերը միաժամանակ նպաստում են հոմանիշների, համանունների և հարանունների շարքերի համալրմանը:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Ե., «Հայաստան» հրատ., 1976:

Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան, Գ հատոր, Ե., ԵՊՀ, 1977:

Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարյան ճեմարան, 1913:

Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, Ե., ԵՊՀ, 1942:

- Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Ե., ԵՊՀ, 2013:
- Ավետիսյան Գ., Սիրմելեան Խ., Ալգերեան Մ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837:
- Գալստյան Ս., Դպրոցական բառակազմական բառարան, Ե., «Զանգակ» հրատ., 2014:
- Գնել արքեպիսկոպոս Ճերճերեան, Փարամազ Կ. Տոնիկեան եւ Արտաշէս Տէր Խաճատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, Կ. Տոնիկեան եւ Որդիք հրատ., 1992:
- Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի» հրատ., 2002:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:
- Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1986:
- Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., ԵՊՀ, 2009:
- Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., ՀՍՍՌ պետ. հրատ., 1944:
- Մելիքիսանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., «Փյունիկ» հրատ., 1996:
- «Նոր բառեր», Ա-Ը պրակներ, Ե., 2015-2023:
- Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989:
- Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Ասողիկ» հրատ., 2010:
- Սաքապետոյեան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2011:
- Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն), Ե., ԵՊՀ, 2017:
- Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., ԵՊՀ, 2009:
- Սուքիասյան Հ., Աճականը հայերենում, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
- Վարդանյան Ս., Ասլանյան Ա., Բժշկության պատմություն, Ե., 2017:
- <https://www.meghri.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>
- http://www.nayiri.com/search?dt=HY_HY&wordForm=դայեակ&l=hy_LB
- <https://hoonch.am/anunner/arakan/m/meghrik>

Mkrtumyan Armine - The words *honey* and *bee* and semantic (thematic) classification of their derivatives in the Armenian language. - The approaches to study the etymology of the words *honey* and *bee* are diverse, so it implies additional clarification of some issues. Therefore, honey and bee words and their derivatives make up a significant proportion in the Armenian language. About 140 words have been studied. Through the examples of classification given in linguistic literature 12 semantic (thematic) multimember groups and the ones with few examples, more often having their separate subgroups have been separated. e.g. drinks, food, dwelling, occupation and speciality, action and state, as well as rituals and feasts, traditions and games, the words naming and characterizing flora and fauna, colours, proper names, and etc. This semantic classification can be considered as a significant study for explaining various aspects and phenomena. As a result of the studies a series of monomial synonyms, antonyms, and paronyms has been formed.

Keywords: honey, bee, monomial, classification, synonym, antonym, paronym.

Mkrtumyan Armine, PhD of Philology, ANAU, Chair of Armenian and Foreign Languages, Associate Professor.

Institute of Language named after H. Acharyan of the National Academy of Sciences, Junior researcher.

Мкртумян Армине - Слова *мёд* и *пчела* и семантическая (тематическая) классификация образований с ними в армянском языке. - Различные подходы к этимологии слов *мёд* и *пчела* требуют дополнительного изучения ряда вопросов. В армянском языке немало образований с данными компонентами. В статье рассмотрено около 140 подобных образований. По образцу классификаций, принятых в лингвистической литературе, они подразделяются на 12 семантических (тематических) групп различного объёма. Во многих из них часто выделяются отдельные подгруппы (напитки, еда, жильё, род занятий и профессия, действие и состояние, ритуал – праздник – традиция – игра, объекты животного мира, признаки, цвета, растения, имена собственные и др.). Подобное семантическое подразделение имеет большое значение для освещения ряда вопросов и явлений. Результатом исследования стало также формирование синонимических, омонимических и паронимических рядов с общим компонентом.

Ключевые слова: мёд, пчела, общий компонент, классификация, синоним, омоним, пароним.

Мкртумян Армине, кандидат филологических наук, НАУА, кафедра армянского и иностранных языков, доцент.

Институт языка им. Г. Ачаряна Национальной Академии Наук РА, младший научный сотрудник.

**ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐԳԵՅ
ԱԲՐԱՀԱՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ներսիսյան Վարսիկ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ,
ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի մայրենիի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող,
Գավառի պետական համալսարան,
դասախոս. varsik.nersisyan@mail.ru

Բանալի բառեր և բառակապակցություններ. բառակազմություն, ածանցում, բառաբար-
դում, չթեքվող խոսքի մասեր, քերականական ձևերից առաջացած մակբայներ, նկարագրա-
կան մակբայներ, նախդրավոր կազմություններ:

Նախաբան

Ժամանակակից հայերենի բառակազմության տեսության մշակման հարցերով, ինչպես
հայտնի է, զբաղվել են տարբեր լեզվաբաններ, որոնցից յուրաքանչյուրն ինչ-որ չափով նպաս-
տել է բառակազմության ուսմունքի ձևավորմանն ու առանցքային հարցերի լուծմանը, սա-
կայն մինչ օրս էլ հիմնախնդիրը շարունակում է մնալ արդիական: Սույն հոդվածում կներկա-
յացնենք Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի (1925-2005) մոտեցումները ժամանակակից հայե-
րենի բառակազմության տեսական հարցերի վերաբերյալ, որոնք արտացոլված են լեզվաբանի
մի քանի հիմնարար աշխատություններում: Վերլուծելով դրանք՝ կփորձենք ցույց տալ, թե ի՞նչ
նորամուծություններ է կատարել Ս. Աբրահամյանը խնդրո առարկա հարցերի առնչությամբ՝
մինչ այժմ մեր ուսումնասիրած հայերենագետների (Ա. Այտրնյան, Ս. Պալասանյան, Մ. Աբեղ-
յան, Գ. Սևակ, Գր. Ղափանցյան): համեմատությամբ և ինչո՞վ է նպաստել ժամանակակից
հայերենի բառակազմության ուսմունքի զարգացմանը:

Նշմտ. **Վ. Ներսիսյան**, *Բառակազմության հարցերի քննությունը Ա. Այտրնյանի «Քննական քերականու-
թիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ*, Գիտական հոդվածների ժողովածու՝
նվիրված Ղ. Ալիշանի ծննդյան 200-ամյակին, ԳՊՀ, մաս 2, 2020, էջ 210-221: **Վ. Ներսիսյան**, *Բառակազմության
հարցերի քննությունը Ստեփանոս Պալասանյանի աշխատություններում*, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովա-
ծու, հ. 11, էջ 272-285: **Վ. Ներսիսյան**, *Ածանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություննե-
րում*, «Ջահուկյանական ընթերցումներ» հանդես, հ. 1-2 (17-18), ԳԱԱ ԼԻ հրատ., Ե., 2022, էջ 130-145: **Վ. Ներսիս-
յան**, *Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում*, Գիտական հոդվածների
ժողովածու, Ե., 2023, 14, էջ 249-268: **Վ. Ներսիսյան**, *Բառակազմության հարցերի քննությունը Գուրգեն Սևակի
աշխատություններում*, «Ջահուկյանական ընթերցումներ» հանդես, 1(19), ԳԱԱ ԼԻ, Ե., 2023, էջ 50-69: **Վ. Ներսիս-
յան**, *Բառակազմության տեսական հարցերի քննությունը Գրիգոր Ղափանցյանի աշխատություններում*, «Հայոց
լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԼԻ, Ե., 21
փետրվարի, 2024, էջ 110-121:

Թեև Սերգեյ Աբրահամյանից առաջ, Գ. Սևակի և Ա. Ղարիբյանի աշխատություններից սկսած, արդեն առանձնացվում էր նաև բարդ ածանցավոր տեսակը², ինչպես նաև փորձ էր արվում զարգացնել բառակազմության տեսությունն ու լուծել կնճռոտ մի շարք հարցեր այդ ուղղությամբ, սակայն լեզվի օրինաչափ զարգացման արդյունքում ձևավորվել էին բառային միավորներ, որոնք այլևս չէին տեղավորվում ավանդական՝ **պարզ, բարդ, ածանցավոր, բարդ ածանցավոր** բաժանման մեջ: Անհրաժեշտ էր մշակել նոր լուծումներ՝ հատկապես դասավանդման գործընթացն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակադրմամբ: Եվ այս գործում իր ծանրակշիռ ներդրումն է ունենում Սերգեյ Գյանջումի Աբրահամյանը՝ լրացնելով գրական հայերենի նորմավորմանն ուղղված նորամուծությունների շարքը ինչպես այլ ոլորտներում, այնպես էլ բառակազմության տեսության հարցերում:

1. Զթեքվող խոսքի մասերի բառակազմության հարցերի քննություն

Բառակազմության, մասնավորապես չթեքվող խոսքի մասերի կառուցվածքային առանձնահատկությունների քննությունն ուշագրավ է առաջին հերթին Ս. Աբրահամյանի «**Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում**» աշխատության էջերում³: Դրանք ավելի համառոտ շարադրված են «**Ժամանակակից հայերենի քերականություն**»⁴ աշխատության և «**Ժամանակակից հայոց լեզու**»⁵ ակադեմիական հրատարակության 2-րդ հատորի համապատասխան բաժիններում, որոնցում այլ խոսքի մասերի կառուցվածքային առանձնահատկություններն առանձին ուսումնասիրության նյութ չի դարձնում լեզվաբանը, այլ ներկայացնում է միայն տվյալ խոսքի մասերը կերտող ածանցներն ու դրանցով կազմված օրինակներ բերում⁶:

Մակբայների կազմության յուրահատկություններով պայմանավորված՝ Ս. Աբրահամյանը դրանք բաժանում է հետևյալ 5 տեսակների՝ **1) պարզ կամ արմատական, 2) բարդ, 3) ածանցավոր, 4) քերականական ձևերից առաջացած, 5) նկարագրական մակբայներ**⁷: Թվում է՝ արմատական բառերին անդրադառնալու կարիք չկա, բայց կարծում ենք՝ մեր օրերում այդ հարցը ևս արդիական է, ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև դրանց սահմանումը՝ ուշադրություն հրավիրելու երկրորդ հատվածին, որը մեր օրերի որոշ ձեռնարկներում հաճախ անտեսվում է. «Պարզ կոչվում են այն մակբայները, որոնք կազմված են մեկ

² Հմմտ. **Ա. Ղարիբյան**, *Հայոց լեզու*, դասագիրք V-VII դասարանների համար. 9-րդ վերահրատ., Հայպետ-ուսմանկհրատ, Ե., 1961, էջ 61: **Գ. Սևակ**, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, ԵՊՀ հրատ., Ե., 1955, էջ 221:

³ **Ս. Աբրահամյան**, *Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, ԳԱ հրատ., Ե., 1965:

⁴ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, *Ժամանակակից հայերենի քերականություն*: Ձեռնարկ ուսուցիչների համար, 2-րդ հրատ., Ե., 1975 (Մակբայների կազմությունը՝ էջ 175-180), (Կապերի կազմությունը՝ էջ 192-194), (Շաղկապների կազմությունը՝ էջ 206-208), (Եղանակավորող բառերի կազմությունը՝ էջ 227-229):

⁵ Տե՛ս **Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան**, *Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն*, հ. 2, ԳԱ հրատ., Ե. 1974 (**Ս. Աբրահամյանը** հեղինակ է «Ներածություն», «Գոյական» (կազմությունը՝ էջ 123-133), «Դերանուն», «Մակբայ» (կազմությունը՝ էջ 442-451), «Կապ» (կազմությունը՝ էջ 477-479), «Շաղկապ» (կազմությունը՝ էջ 517-522), «Եղանակավորող բառեր» (կազմությունը՝ էջ 554-555), «Ձայնարկություն» բաժինների):

⁶ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, *Ժամանակակից հայերենի քերականություն*, Ե., 1975, (Գոյականի կազմությունը՝ էջ 27-30), (Ածականի կազմությունը՝ էջ 72-76), (Թվականի կազմությունն ու տեսակները՝ էջ 91-95), (Բայի կազմությունը՝ էջ 126-130):

⁷ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, *Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, էջ 233:

արմատից, կամ ժամանակակից լեզվամտածողությամբ ըմբռնվում են որպես այդպիսիք»⁸ (ընդգծումը՝ Վ. Ն): Իբրև օրինակ է բերում «մերթ» մակբայը, որը թեև կազմված է «մի երթ» բաղադրիչներից, սակայն «մեր արդի լեզվամտածողությամբ ըմբռնվում է ոչ թե իբրև բարդ, այլ պարզ բառ, հետևապես այն բուն կամ արմատական մակբայ է»⁹: Բերում է մի քանի օրինակ ևս և ամփոփելով՝ նշում, որ «...որպես կանոն, թեքվող խոսքի մասերն են վերածվում մակբայի: Այդ օրինաչափությունից իբրև շեղում նշենք մի փաստ: Ժամանակակից հայերենի *աքացի* գոյականն առաջացել է հին հայերենի *աքացի* մակբայից, որ նշանակել է «աքով», «ոտքով»¹⁰:

Մանրամասնորեն ներկայացնում է բարդ մակբայները, որոնք «...կարող են կազմվել բարդության բոլոր տեսակներով՝ թե՛ իսկական, թե՛ անիսկական»¹¹: Նախ նշում է կրկնավորներից կազմված օրինակներ՝ տարբեր խոսքի մասերից, ինչպես՝ *հիվանդ-հիվանդ, մեկ-մեկ, երկու-երկու, տեղ-տեղ, շտապ-շտապ* ևն, ապա ներկայացնում է գրաբարյան բացառականից կազմված կրկնավորների օրինակներ ևս, որոնցից միայն *պատեպատ, տնետուն, սարեսար, բերնեբերան, գյուղեգյուղ* բառերն է գրում միասին, մյուսները՝ *քաղաքե-քաղաք...* ևն՝ զծիկով¹²:

«Մակբայ կազմող ածանցները, գրում է Աբրահամյանը, իրենց դերով հավասարաժեք չեն ժամանակակից հայերենում: Այս տեսակետից դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) ածանցներ, որոնք գերազանցապես մակբայների կազմության մեջ են հանդես գալիս (մակբայակերտ ածանցներ), բ) ածանցներ, որոնցով այլ խոսքի մասերից բացի, կարող են կազմվել նաև մակբայներ»¹³: Առաջին տեսակի՝ մակբայակերտ ածանցներից առանձնացնում է - *(ա)բար, -(ա)պես, -որեն, -ովին*, որոնք հիմնականում հոմանիշներ են և կարող են դրվել գոյականների, ածականների, մի երկու դերանունների և մակբայների վրա՝ *հայրաբար, մեծապես, բոլորովին, մշտապես* ևն: Երբեմն ածանցը կարող է դրվել ածականի արմատի վրա՝ ածականակերտ ածանցի փոխարեն, ինչպես՝ *տնտեսապես, ֆիզիկապես* ևն¹⁴ (տվյալ դեպքերում՝ - *ական* ածանցի փոխարեն): Հանգամանորեն ներկայացնում է ածանցների ծագումը, կազմությունը, կիրառությունը, իմաստային նրբերանգները՝ հիմնվելով հատկապես Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսության» տվյալների վրա, կարևորելով նաև դրանցում *ա* հոդակապի՝ որպես այդպիսին այլևս չգիտակցվելու փաստը¹⁵, որը նույնպես ուշագրավ է արդի լեզվաբանության տեսանկյունից: Ավելացնում է, որ մակբայները կազմվում են այլ ածանցներով ևս, որոնք մասնակցում են նաև այլ խոսքի մասերի կազմությանը, «...հենց այդ պատճառով էլ մակբայ կազմելու իրենց դերով այս ածանցները զիջում են մակբայակերտ ածանցներին: Դրանք են՝ - *ակի, -այն, -ին, -ուկ*»¹⁶:

Հաջորդիվ առանձնացնում է քերականական ձևերից կազմված մակբայները, ցույց տալիս, որ մակբայի կարող են վերածվել և՛ հոլովաձևեր, և՛ բայի թեքման որոշ ձևեր: Բացառա-

8 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 233:
9 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:
10 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 235:
11 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:
12 Տե՛ս Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 235-241:
13 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 242:
14 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 243:
15 Տե՛ս Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 242- 251:
16 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 249:

կան հոլովից են առաջացել, օրինակ, **ներքուստ, արտաքուստ, վերուստ, հանպատրաստից, հնուց, վաղուց...**ևն, գրաբարյան, մասամբ էլ ժամանակակից հայերենի գործիականից են առաջացել հետևյալ մակբայները. **հազիվ, սակավ, բնավ, դիտմամբ, մասամբ, մեղմիվ, փութով...**ևն: Հավելում է նաև, որ գործիական հոլովի վերջավորությունների հետ միասին երբեմն հանդես են գալիս **-ի, -ին** ածանցները, ինչպես՝ **յուրովի, կամովին, գլխովին, բոլորովին, տակավին**: Այսպիսի բառերի **-ովի, -ովին, -ավին** մասնիկներն այժմ գիտակցվում են որպես բաղադրյալ ածանց¹⁷: Ներգոյականից են առաջացել **ներկայումս** (ներգոյականի ձևին միացել է ցուցական **ս** հոդը), **հնում, հետագայում, հիմնականում**¹⁸, հայցականից են առաջացել **դուրս** (**դուռն** գոյականից), **ցմահ, ցարդ** ևն¹⁹, որոնց մասին հիմնականում արմատականներին վերաբերող հատվածում է խոսվում²⁰:

Նշում է նաև, որ «Տարբեր հոլովաձևեր հաճախ մտնում են անիսկական բարդությունների տարբեր տեսակների, նախդրավոր կազմությունների մեջ, ինչպես, օրինակ, **տեղ-տեղ, ալիք-ալիք, քայլ առ քայլ, ժամանակ առ ժամանակ, ըստինքյան, ծայրեծայր, հազիվհազ** և այլն»²¹: Բայի քերականական ձևերից, ըստ Ս. Աբրահամյանի, հետևյալ մի քանի մակբայներն են առաջացել, **դարձյալ, համարյա, գրեթե**²²:

Աբրահամյանն առանձնացնում է նաև հինգերորդ՝ **նկարագրական մակբայներ** տեսակը. դրանք «...բառերի կիսակայուն կապակցություններ են, որոնք ունեն մակբայական իմաստ ու մակբայական կիրառություն» և «... մեծ մասամբ կազմվում են երկու բաղադրիչներից, ինչպես՝ **ամենից առաջ, ժամ առաջ, մեծ մասամբ...** և այլն»: Կան նաև երեք բաղադրիչներից կազմված՝ համեմատաբար ավելի քիչ մակբայներ, ինչպես՝ **մինչև որ աստիճանի, օր օրի վրա** ևն²³: «Նկարագրական մակբայների իմաստները հիմնականում պայմանավորված են նրանց բաղադրիչների իմաստով»²⁴: Դրանցում համեմատաբար շատ հանդես եկող բաղադրիչներից են **կերպով, առաջ** բառերը²⁵:

Կապերն ըստ կազմության բաժանում է երեք տեսակի՝ 1) պարզ կամ արմատական, ինչպես՝ **ի, առ, ըստ...** ևն, 2) քերականական ձևերից առաջացած, ինչպես՝ **առթիվ, շնորհիվ, մասին, օգտին, երեսից, ձեռքից, վերաբերյալ, նայած...** ևն, 3) նախդրավոր կազմություններ, ինչպես՝ **հոգուտ, դեպի, բացի...** ևն²⁶: Ավելի ուշ Լ. Եզեկյանը կապերը բաժանում է պարզ և բաղադրյալ տեսակների՝ անդրադարձ կատարելով նաև դրանց առաջացման ուղիներին²⁷:

Շաղկապներն ըստ կազմության բաժանում է չորս տեսակի՝ 1) **պարզ** շաղկապներ, ինչպես՝ **և, ու, որ, բայց...** ևն՝ դրանց մեջ ներառելով նաև այն շաղկապները, որոնք թեև **ստու-**

17 Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 251-253:

18 Նկատենք, որ ավելի ուշ գրված քերականական աշխատություններում սրանց մի մասը ներկայացվում է որպես ածանցավոր մակբայ: Հմմտ. Լ. Եզեկյան, *Հայոց լեզու*, Ե., 2007, էջ 308-310:

19 Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 252- 253:

20 Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 233- 235:

21 Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 253:

22 Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 251-253:

23 Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 253-254:

24 Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 251-254:

25 Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

26 Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 301-303:

27 Տե՛ս Լ. Եզեկյան, *Հայոց լեզու*, Ե., 2007, էջ 313:

գաբանորեն բաղադրյալ են, բայց այժմ գիտակցվում են որպես պարզ բառեր, ինչպես՝ **եթե, թեկուզ, թեպետ** ...ևն, 2) **քերականական** ձևերից առաջացած շաղկապներ, ինչպես՝ **որովհետև, այնուամենայնիվ, ըստ որում**...ևն, «որոշ վերապահությամբ՝ նաև **ասես, կարծես** շաղկապական բառերը», 3) **ածանցավոր** շաղկապներ, ինչպես՝ **այլապես, հետևապես, նմանապես, հետևաբար**, 4)բարդ շաղկապներ՝ երկու հիմնական ենթատեսակներով. կցական բարդություններ՝ **այնինչ, այսինքն, այնուամենայնիվ, որովհետև... ևն**, հարադրական կազմությամբ շաղկապներ՝ **քանի որ, թե որ, այնքան որ ... ևն**²⁸: Հարադրական շաղկապների կազմության մեջ մեծ դեր են խաղում **թե, և, որ** շաղկապները, ինչպես՝ **կամ թե, միայն թե, քան թե, քանի որ, մանավանդ որ, ուստի և, ուրեմն**... ևն²⁹: Բոլոր շաղկապների համար բերում է համապատասխան օրինակներ՝ իմաստային տարբեր նրբերանգներով: «Բաղադրյալ շաղկապներից պետք է զանազանել շաղկապների այնպիսի կիրառությունը, երբ նախադասությունների և մասնավորապես բարդ նախադասություն կազմող նախադասությունների յուրահատուկ շարադասության պատճառով տարբեր նախադասությունների վերաբերող ու տարբեր հարաբերություններ արտահայտող շաղկապներ գործածվում են կողք-կողքի»³⁰: Այդպիսի կիրառություններ են **և եթե, իսկ եթե, և որովհետև, և քանի որ...**, **նախևառաջ...**, **թեպետն (թեպետ)...** **բայց, չնայած...**, **սակայն...** ևն այլ զուգադրականներ:

Եղանակավորող բառերն ըստ կազմության բաժանում է պարզ (**այո, ոչ, ահա, իբր, հո, խոմ**...ևն), **ածանցավոր**, որոնց «քանակը մեծ չէ», ինչպես՝ **անշուշտ, անտարակույս, անկասկած, անպատճառ, իսկապես, հատկապես, հավանաբար, հավանորեն, քերականական** ձևերից առաջացած, ինչպես՝ **իհարկե, արդարև, հարկավ, հավաստյալ, իրավ, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, իրոք, կարծյոք** և այլն, **բարդ և նկարագրական**, որոնց մեջ «իսկական բարդությամբ կազմվածներ չկան», կցական են՝ **ահավասիկ, թերևս, միգուցե, միթե, նույնիսկ, կաչկա, կարծես թե, կարծեք թե, հազիվ թե**...ևն, բաղադրյալ են նաև **մինչև անգամ, մինչև իսկ, ինչ խոսք, ինչպես չէ** ևն, բառակապակցություններ, որոնք «թեև չեն վերածվել մեկ բառի, բայց և այնպես իմաստով հարում են եղանակավորող բառերին, նրանցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը այս կամ այն իրողության, երևույթի, առարկայի նկատմամբ: Այդպիսիք են՝ **ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչ գնով ուզում է լինի, առանց այլևայլության, ըստ երևույթին, ուր մնաց թե, ուր է (էր), ով գիտե, ով իմանա** և այլն»³¹ (բարդ և նկարագրական տեսակը ներկայացնում է մեկ ընդհանուր կետով): Անդրադառնալով բարդ բառերին՝ հաջորդիվ դրանց մասին խոսելիս գործածում է **բաղադրյալ** եզրույթը, ապա սահուն կերպով ներկայացնում է **նկարագրական** եղանակավորները՝ առանց կոնկրետ սահմանումների. «...նկարագրական եղանակավորող բառերն իրենց բառակազմի մեջ եղած բառերի իմաստային երանգների շնորհիվ հաճախ արտահայտում են այնպիսի նրբերանգներ, որպիսիք չկան համապատասխան մեկ բառական միավորով արտահայտված եղանակավորող բառերի մեջ»³², «Նկարագրական միջոցով վերաբերմունքի ավելի շատ նրբերանգներ, խոսողի վերաբերմունքն

²⁸ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 388-403:

²⁹ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

³⁰ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 398:

³¹ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 513:

³² Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 515:

ավելի ճշգրիտ արտահայտելու լայն հնարավորությունն է պատճառը, որ ժամանակակից հայերենն անընդհատ հարստանում է այդպիսի կազմություններով: Իսկ խոսքի ճշգրտությունը և դրա համար լեզվական միջոցների հայթայթումը միշտ ուղեկցել և ուղեկցում է լեզվի զարգացմանը և ծառայել է իբրև լեզվի զարգացման կարևոր ազդակ: Անշուշտ դա սերտորեն կապված է մտածողության զարգացման հետ»³³: Կարևոր է եզրակացությունը. «Գոյություն ունեն ածանցավոր եղանակավորող բառեր, սակայն գոյություն չունեն եղանակավորող բառեր կազմող հատուկ ածանցներ: ... եղանակավորող բառերը իբրև բառական ամբողջական միավորներ (այդ թվում և իրենց ածանցներով) այս խոսքի մասի մեջ են մտել այլ խոսքի մասերից»³⁴: Ձայնարկությունների կազմությանը չի անդրադարձնում: Նկատելի է, որ Աբրահամյանը նույն բառերը ներկայացնում է և՛ որպես բարդ, և՛ որպես քերականական ձևերից առաջացած: Այդ առիթով Հովհաննես Բարսեղյանը գրում է. «Հարցի այսպիսի մասնակի շրջանցումով խնդիրը դարձյալ չի լուծվում: Եղանակավորող բառերի բառակազմական հարցի լուծումն ավելի է խճճվում, երբ Աբրահամյանը մեջ է բերում «նկարագրական բնույթի եղանակավորող բառեր» հասկացությունը: Վերլուծությունից պարզվում է, որ եղանակավորող բարդ բառերը կցական և մեծ մասամբ հարադրական բարդություններ են, «իսկական բարդությամբ կազմված եղանակավորող բառեր չկան» (էջ 512): Այստեղ էլ անորոշ են մնում հարադրական բարդ բառերի և եղանակավորող բառերի իմաստով գործածվող բառակապակցությունների սահմանները: Այս կարգի բառակապակցություններին տալով «նկարագրական եղանակավորող բառեր» անվանումը՝ Աբրահամյանը սրանց համար բերված օրինակները մեկնաբանում է տարբեր, երբեմն հակասական բնութագրմամբ»³⁵: Ս. Աբրահամյանը թերևս դժվարանում է որոշել բարդ և նկարագրական եղանակավորող բառերի սահմանը և այդ պատճառով դրանք ներկայացնում է մեկ ընդհանուր ենթատեսակի մեջ: Բացի այդ, կարծում ենք, չթեքվող խոսքի մասերից յուրաքանչյուրի համակողմանի և խոր քննությունը առաջ է բերում մեկ այլ՝ հատկապես դասավանդման գործընթացում կարևոր խնդիր. ստացվում է, որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր կառուցվածքային տեսակները, և դժվար է աղերսներ գտնել մյուս խոսքի մասերի բառակազմական առանձնահատկությունների հետ առհասարակ:

Այսպիսով՝ Ս. Աբրահամյանը, քննելով չթեքվող խոսքի մասերի կառուցվածքային առանձնահատկությունները, հայերենի պարզ, բարդ, ածանցավոր բառերի կողքին ավելացնում է ևս երկուսը՝ **քերականական ձևերից առաջացած** և **նկարագրական** տիպերը, որը, ըստ Հ. Բարսեղյանի, արել է **կարծեմ, կարծես, կարծես թե, ասես, ասես թե, ինչ ուզում է լինի** և նմանատիպ բայաձևերի պատճառով: Դրանցում «... և՛ արմատի, և՛ բայական վերջավորությունների գիտակցումն ու սրանց հակադրությունը արդի հայերենում ոչ միայն զգալի ու կենդանի են, այլև գործող օրինաչափություն»³⁶՝ ի տարբերություն **իրավ, հասցե** ձևերի, որոնք դեռևս էդ. Աղայանը ժամանակակից հայերենում նոր արմատներ էր համարում³⁷:

2. Բառի կազմի քննություն

³³ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

³⁴ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 510:

³⁵ Հ. Բարսեղյան, *Հայերենի խոսքի մասերի ուսմունքը*, Ե., 1980, էջ 276:

³⁶ Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 275:

³⁷ Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., նույն տեղում:

Գործնական նպատակ հետապնդող «**Ժամանակակից գրական հայերեն**» աշխատության առաջաբանում նշվում է, որ հեղինակի «...նպատակն է եղել ներկայացնել ժամանակակից գրական հայերենի գործուն օրինաչափությունները նրա ամբողջ համակարգում: Կենդանի լեզվի օրինաչափությունների որոշումը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվի կանոնարկում (նորմավորում), դժվարին խնդիր է, եթե նկատի ունենանք, որ լեզվի տվյալ վիճակը միայն հարաբերականորեն է կայուն. այն իրականում գտնվում է անընդհատ շարժման, ինքնակատարելագործման մեջ և ենթակա է լեզվական արտաքին գործոնների՝ այլ լեզուների ու իր բարբառների ազդեցությանը»³⁸: Անդրադառնալով մեզ հետաքրքրող թեմայի քննությանը՝ ստորև կներկայացնենք առանցքային մի քանի ձևակերպումներ, որոնք հիմնականում չեն տարբերվում արդեն ընդունված բնութագրումներից:

Այսպես՝ **ձևույթը** սահմանում է որպես լեզվի իմաստային միավոր³⁹ և բաժանում է երկու տեսակի՝ հիմնական և երկրորդական: Հիմնական ձևույթները բաժանում է երկու՝ անկախ և կախյալ տեսակների: Նշում է, որ անկախ ձևույթները կարող են լինել նաև հնչյունափոխված, ինչպես՝ **գրավոր, սիրահոժար** և այլ բառերում: Նկատում է, որ անկախ ձևույթների «...հնչյունափոխված տարբերակները հանդես են գալիս միայն որոշակի դիրքում՝ մասնավորապես բառակազմում, մի քանի հիմնական ձևույթների առկայության դեպքում՝ նաև բառամիջում, համենայն դեպս ոչ բառավերջում: Հմտ. *լուսապայծառ—վերջալույս...*»⁴⁰: «Մինչդեռ կախյալ հիմնական ձևույթը բոլոր դիրքերում ունի այնպիսի ձև, որն անկախ գործածվել չի կարող: Կախյալ հիմնական ձևույթը բառի բոլոր դիրքերում կարող է ունենալ նույն ձևը, ինչ՝ *բաղձանք* և *ազատաբաղձ*, *խոսակից* և *ճշտախոս*, *սքանչանալ* և *հիասքանչ*, կամ տարբեր ձև. ինչ՝ *ցրել* և *գնդացիր*, *ցնցում* և *զգայացունց*, *սնել* և *կաթնասուն*»⁴¹:

Թեև արմատական ձևույթի բնորոշ հատկանիշ է համարում բառի հիմնական իմաստ արտահայտելը⁴², սակայն ուշագրավ և մտածելու առիթ տվող դիտարկում է անում. «Արմատական ձևույթը բառի հիմնական իմաստ չի արտահայտում՝ ա) Երբ բաղադրյալ բառի իմաստի հիմքում ընկած չէ տվյալ արմատական ձևույթի անկախ գործածության կենդանի իմաստը. ինչ՝ **քաղաքականություն**:

բ) Երբ արմատական ձևույթն իր տվյալ ձևով անկախ գործածական չէ, անճանաչելիորեն փոխվել է. ինչ՝ **սեփական**:

գ) Երբ արմատը միաձուլվել է բազմաստիճան ածանցական կապակցությունների հետ, և բաղադրյալ բառի իմաստի հիմքում այժմ ընկած է արմատի և ածանցի (կամ ածանցների) կապակցությունը: Այսպես, **անարտադրողական** բառի արմատն է **-դր-**, որը, սակայն, չի կարելի համարել այդ բառի հիմնական իմաստի արտահայտիչը: Հիմնական իմաստի արտահայտիչ կարելի է համարել, թերևս, **արտադր** կապակցությունը, որը կենդանի բաղադրիչ է (թեև բաղադրյալ) **արտադր-ել**, **արտադր-անք**, **արտադր-ող**, **արտադր-ություն** և նման կազմու-

³⁸ Մ. Աբրահամյան, *Ժամանակակից գրական հայերեն*, ԳԱ հրատ., Ե., 1981, էջ 5:

³⁹ Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 73:

⁴⁰ Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 74:

⁴¹ Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

⁴² Տե՛ս Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

թյուններում»⁴³: «Նման դեպքերում ձևային ճանաչման չափանիշ պետք է համարել այն, որ բառի քերականական փոփոխության ժամանակ այն ստանում է քերականական վերջավորություններ»⁴⁴: Տվյալ դեպքում՝ **դր-ել, դիր, դն-ել**...⁴⁵: Նույն տեղում նշում է, որ երևույթը բնորոշ է հատկապես բայերին:

Հաջորդիվ ներկայացնում է ձևային տարբերակները (հնչյունափոխված), ձևայինների պարզումը և վերակազմավորումը, ինչպես՝ *հու «լավ»* և *լու «լսող»* բաղադրիչներից առաջացած **հլու** պարզ բառը, **ընդ+կեր, ընկեր**... ևն: Կարևոր է նաև այն, որ «*Հայերենի համար միաձևային են համարվում նաև փոխառյալ այնպիսի բառեր, որոնք փոխաստու լեզվում բաղադրյալ են՝ բազմաձևային, բայց հայերենում նրանց բաղադրիչները չեն գիտակցվում. ինչպիսիք ավանգարդ (ֆր. avant-garde), ատոմ (հուն. atomos-անբաժանելի) և այլն*»⁴⁶:

3. Բառերի կազմավորման եղանակների քննություն

Անդրադառնալով բառերի կազմավորման եղանակներին՝ գրում է. «**Հայերենի բառերը կազմավորվում են երկու եղանակով՝ կամ լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող կադասյարի, կամ բառաքերականական փոխանցումների հիման վրա**»⁴⁷:

Կադասյարային եղանակը, ըստ Ս. Աբրահամյանի, իրանում է բառակազմական հետևյալ միջոցներով՝ ա. **Բառական հիմքերի միացում**, որով կազմվում է համադրական բարդ բառերի մեծագույն մասը: Դրանք իսկական բարդություններն են: Բ. **Կիսահարադրում**, որի դեպքում բաղադրիչները միանում են գծիկով՝ *կիրովատ-ժամ, տուն-թանգարան* ևն: Գ. **Հապավում՝ ՍՍՀՍ, Կենտրոն** ևն: Դ. **Ածանցում՝ դարձ + ույթ** ևն:

Փոխանցումային եղանակն իրանում է բառակազմական հետևյալ միջոցներով՝ Ա. **Բառակապակցություն՝ գլուխգործոց**... ևն: Բ. **Բառաքերականական՝ մասին, հաշվին**... ևն⁴⁸:

Բառերն ըստ կազմության բաժանում է **պարզ և բաղադրյալ**, վերջինները՝ **բարդ և ածանցավոր** տեսակների: Այստեղ մի կողմից հակասություն է առաջանում չթեքվող խոսքի մասերի բառակազմական հնարավորությունների առումով, մյուս կողմից՝ բարդաձանցավոր բառերի ընկալման և սահմանման առումով: Հարցի լուծումը տրվում է թերևս մեկ այլ՝ *կադասյարային վերլուծության* սկզբունքով, որը, ինչպես Աբրահամյանն է գրում, իրենից առաջ ընդունված էր արդեն⁴⁹: «Բառաբարդումն իրականանում է բառակազմական երկու հիմքի միջոցով: Ամեն մի հիմքի մեջ լինում է առնվազն մեկ արմատ: Հիմքը կարող է լինել ա) անաձանց, բ) աձանցավոր: Օր.՝ *հաց +ա +վաճառ, դաս+ա+խոս, (ակն+ոց) +ա+վաճառ, դաս +ա +(ցուց +ակ)*»⁵⁰: Այսինքն՝ բառաբարդումը ենթադրում է նաև աձանցի առկայություն:

Բարդ բառերը, ըստ բաղադրիչների կապի սերտության աստիճանի, լինում են համադրական և հարադրական: *Համադրական*, որոնք կազմվում են՝ Ա+Ա, Աա +Ա, Ա+Աա, Աա+Աա,

⁴³ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 75:
⁴⁴ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:
⁴⁵ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:
⁴⁶ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 77 :
⁴⁷ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 78:
⁴⁸ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 78-80:
⁴⁹ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 86:
⁵⁰ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 85:

աԱ+Աա նն կաղապարներով (**Ա** նշանակում է արմատ, **ա**՝ ածանց): Եռարմատ բարդությունները բաժանում է Ա + ԱԱ, ԱԱ + Ա: Ըստ Աբրահամյանի՝ ժամանակակից հայերենում հատկապես տարածված է Ա + [(Ա + Ա) + ա] կաղապարը: Քառարմատ բարդությունները քիչ են, կազմվում են հետևյալ կաղապարով՝ ԱԱԱ+Ա, ԱԱ+ԱԱ, Ա+ԱԱԱ, որի արմատները կարող են ունենալ ածանց կամ չունենալ⁵¹:

Համադրական բարդ բառերը բաժանում է *հոդակապով* և *անհոդակապ* տեսակների: Անհոդակապ բառերը բաժանում է երկու խմբի՝ *ա. հոդակապավոր բառերին հարաբերակից կամ կաղապարային բարդ բառեր* (օր.՝ *ջրկիր*), այլ կերպ ասած՝ իսկական բարդություններ, *բ. հոդակապավոր բառերին անհարաբերակից կամ փոխանցումային բարդ բառեր* (կցական բարդություններ, օր.՝ *տանտեր*)⁵²: Կցականների բաղադրիչները կապվում են ինչպես ստորադասական, այնպես էլ համադասական հարաբերությամբ⁵³: Անհոդակապ բառերն առավելապես հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին՝ *ակնթարթ, ձայնդարձ, հացթուխ* ևն, գրական լեզվին օրինաչափորեն հատուկ են այնպիսի անհոդակապ բարդություններ, որոնց 2-րդ եզրը սկսվում է ձայնավորով՝ *գաղթօջախ, ժպտերես, լուսերես* ևն⁵⁴:

Հարադրական բարդ բառերը բաժանում է **բուն հարադրական** և **կիսահարադրական** տեսակների⁵⁵: Բուն հարադրական բառերը լինում են երկու տեսակ՝ **պարզ հարադրում**՝ առանց կապակցող միջոցի, օր.՝ *ման գալ, շուռ տալ* ևն, **շաղկապով, նախդիրով**, օր.՝ *վար ու ցանք, մերթ ընդ մերթ* ևն:

Համեմատելով Մ. Աբեղյանի, Ա. Մուրվայյանի, Ա. Աբրահամյանի տվյալները՝ եզրակացնում է, որ դրանք տարբեր խոսքի մասերի են պատկանում, բայց ամենաշատը բայեր են⁵⁶:

«Կիսահարադրական բարդ բառերը կազմված են քերականորեն համարժեք երկու միավորներից, որոնց համագործությամբ ու կիսանկախությամբ էլ պայմանավորվում է յուրաքանչյուր բաղադրիչի շեշտ ունենալը: Այդ երկու շեշտերից երկրորդ բաղադրիչի շեշտն ավելի ուժեղ է, որը և կարելի է համարել գլխավոր»⁵⁷: Կիսահարադրականները լինում են **նույնարմատ (կրկնավոր) և տարարմատ (գուգադրական)**: Վերջիններն էլ լինում են **անվանական տուն-թանգարան**, և **բայական**՝ *ա. ծլել-ծաղկել, բ. գնալ-գալ, գ. դողալ-դողդղալ*⁵⁸: **Անորոշ դերբայ+տալ** կառույցը բուն բառակազմություն չի համարում, քանի որ այն ունի լրացուցիչ քերականական իմաստ:

4. Բառաձանցում

Բառաձանցման քննություն կատարելիս նշում է, որ ածանցավոր բառի հիմքը կարող է լինել **միաձևույթ**՝ մեկ արմատից կազմված, և **բաղադրյալ**՝ (*բծա+խնդր*) + *ուրյուն* ևն: Ածանցավոր բառի հիմքը կարող է լինել բառակապակցությունը, ինչպես՝ *թուլլտվություն*: Ածանցավոր բառերը բաժանում է **միարմատ** և **բազմարմատ** տեսակների: «Բազմարմատ ածանցավոր

51 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 87:

52 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 90-92:

53 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 90-92:

54 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 91:

55 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 93:

56 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 94:

57 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 97:

58 Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 97-99:

բառերը կազմված են երկու կամ ավելի արմատներից, որպես հիմքից, և ածանցից: Բազմարմատ հիմքի մեջ կարող է ա. ածանց չլինել, բ. ածանց լինել, այսպիսի հիմքի մեջ եղած ածանցը վերաբերում է արմատներից միայն մեկին և ոչ երբեք բոլոր արմատներին, օր.՝ (դաս+ա+կարգ)+ային ... »⁵⁹: Շատ են այն բառերը, որոնց համար որպես հիմք են ծառայում որոշ ռո-որոշյալի բառակապակցությունները, ինչպես՝ **երկարօրյա...** ևն⁶⁰: Այսինքն՝ այս աշխատության մեջ Ս. Աբրահամյանը չի առանձնացնում **բարդածանցավոր** տեսակը՝ նախընտրելով ածանցավոր բառերը ներկայացնել **միարմատ** և **բազմարմատ** բաժանումներով: Թեև «**Հայոց լեզու. բառ և խոսք**» ուսումնական ձեռնարկի «**Բառ, արմատ, ածանց**» բաժնի առաջադրանքներից մեկում պահանջում է տրված բառերը բաժանել ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր տեսակների⁶¹:

Ըստ ածանցի դիրքի՝ առանձնացնում է **նախաածանցավոր, վերջածանցավոր, նախածանցավոր** բառեր: «Իրենց կազմի մեջ և՛ նախածանց, և՛ վերջածանց ունեցող շատ բառերի կազմությունը, ի տարբերություն §183-ում նշված փաստերի, բնորոշվում է թե՛ նախածանցի, թե՛ վերջածանցի մասնակցությամբ միաժամանակ»⁶²: Օր.՝ **բացասաբար, արտաբերական...** ևն: Դրանք առաջարկում է անվանել **նախաածանցավոր** բառեր: §183-ում նշվածներից *անմեղություն* բառը, օրինակ, վերջածանցավոր է, քանի որ *անմեղ* բառին ավելացել է *-ություն* ածանցը⁶³:

Շատ համառոտ ներկայացնում է նաև բառածանցումն ըստ խոսքի մասերի, հապավումը՝ *տառային, վանկային, խառը՝ վանկաբառային, տառաբառային* տեսակներով: Նշում է դրանցում **վանկային** տերմինի պայմանական լինելը, քանի որ երբեմն բառամասն ու վանկը չեն համապատասխանում: Երբեմն հապավման մեջ որոշ բառեր առհասարակ զեղչվում են՝ **պետական պլանային կոմիտե՝ պետպլան**: Ներկայացնում է նաև փոխառյալ հապավումները՝ ՆԱՏՕ ևն, ինչպես նաև նոր շրջանին հատուկ՝ բառակապացության բաղադրիչների յուրահատուկ զեղչումով՝ **բիոնիկա (биология + электроника), մոտել (моторизованный отель), անգլերենից motorists' hotel** ևն⁶⁴: Բառակազմության այս և մյուս՝ ժամանակակից հայերենում նոր ձևավորվող դրսևորումներին ավելի հանգամանորեն անդրադառնում է հետագայում՝ 1981 թ. տպագրված մի հոդվածում, որում, ամփոփելով ժամանակակից հայերենի բառակազմության զարգացման միտումները, եզրակացնում է. «...հայոց լեզվի բառակազմական օրինաչափությունները, իրենց հարաբերական կայունությամբ հանդերձ, համեմատաբար կարճ ժամանակաշրջանում հանդես են բերել զարգացման որոշակի միտումներ: Այս միտումները ընդհանուր առմամբ ոչ թե փոխարինում են հայերենի բառակազմական օրինաչափությունները, այլ հարստացնում են դրանք, ծավալում են կամ լրացնում: Ուշագրավ է, որ բառակազմության զարգացման այս նոր միտումները ընդգրկում են հիմնականում տերմինաբանության

⁵⁹ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 103:

⁶⁰ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

⁶¹ Տե՛ս Ս. Աբրահամյան, *Հայոց լեզու. Բառ և խոսք*, ուսումնական ձեռնարկ միջն. դպրոցի 7-8-րդ դաս. նախասիրական պարապմունքների համար, Ե., 1978, էջ 17:

⁶² Տե՛ս Ս. Աբրահամյան, *Ժամանակակից գրական հայերեն*, ԳԱ հրատ., Եր., 1981, էջ 106:

⁶³ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 106:

⁶⁴ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 99-109:

բնագավառը: Մա այն բանի արտահայտություն է, որ ժամանակակից հայերենի բառապաշարը հարստանում է առավելապես տերմինաբանության հաշվին»⁶⁵:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Ս. Աբրահամյանի ներդրումը բառակազմության ուսմունքի զարգացման գործում բազմաշերտ է ու ընդգրկուն: Այն զգալի է հատկապես չթեքվող խոսքի մասերի բառակազմական յուրահատկությունների քննության առումով: Մակայն, այնուամենայնիվ, ոլորտում մնացին չլուծված՝ ուսումնասիրության արժանի շատ հարցեր, որոնց վերաբերյալ հենց ինքն է իրավացիորեն գրում. «Պետք է նկատի ունենալ, սակայն, որ ընդհանուր պայմաններում զարգացող ամեն մի լեզու, տվյալ դեպքում հայոց լեզուն, այդ համանման պահանջներին արձագանքում է յուրովի, իր լեզվական ատաղձին համապատասխան, իր բառակազմական օրինաչափությունների պրիզմայով անցկացնելով ամեն մի ընդհանուր պահանջ, կյանքի կոչելով ու ծավալելով իր ներքին հնարավորությունները»⁶⁶: Թերևս հենց այս իրողությունն է պատճառը, որ մինչ օրս բառակազմության տեսությունը մշակման, վերանայման կարիք ունի:

Եզրակացություն

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը Ս. Աբրահամյանի աշխատություններում բառակազմության տեսական հարցերի քննության վերաբերյալ՝ արձանագրենք, որ լեզվաբանը խոր և բազմակողմանի քննության է ենթարկել հայերենի բառապաշարը և զգալի ներդրում ունեցել ինչպես բառերի կազմավորման եղանակների, այնպես է բառակազմության տեսական հարցերի մշակման, համակարգման առումով առհասարակ: Դա ակնհայտ է հատկապես չթեքվող խոսքի մասերի կառուցվածքային առանձնահատկությունները քննելիս:

Մակբայները բաժանում է հետևյալ 5 տեսակների՝ 1)պարզ կամ արմատական, 2)բարդ, 3)ածանցավոր, 4)քերականական ձևերից առաջացած մակբայներ, 5)նկարագրական մակբայներ: Կապերն ըստ կազմության բաժանում է երեք տեսակի՝ 1)պարզ կամ արմատական, 2)քերականական ձևերից առաջացած, 3) նախդրավոր կազմություններ: Շաղկապներն ըստ կազմության բաժանում է չորս տեսակի՝ 1)պարզ շաղկապներ՝ դրանց մեջ ներառելով նաև **ստուգաբանորեն բաղադրյալ**, բայց այժմ որպես պարզ բառեր գիտակցվող շաղկապները, 2)**քերականական** ձևերից առաջացած շաղկապներ, 3)**ածանցավոր** շաղկապներ, 4)բարդ շաղկապներ՝ երկու հիմնական ենթատեսակներով (կցական բարդություններ և հարադրական կազմությամբ շաղկապներ):

Հանգամանորեն քննում է բառի կազմն առհասարակ, ներկայացնում ձևույթների պարզումը և վերակազմավորումը: Ըստ Ս. Աբրահամյանի՝ բառերը կազմավորվում են երկու եղանակով՝ ա.կաղապարային և բ.բառաքերականական փոխանցումների հիման վրա: Բառերն ըստ կազմության բաժանում է պարզ և բաղադրյալ, վերջինները՝ բարդ և ածանցավոր տեսակների: Ածանցավոր բառերը բաժանում է միարմատ և բազմարմատ տեսակների: Ըստ ածանցի դիրքի՝ առանձնացնում է նախաածանցավոր, վերջածանցավոր, նախածանցավերջածանցավոր բառեր:

⁶⁵ Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները*... «Պատմա-բանասիրական հանդես», հ. 3, (1981), էջ 46:

⁶⁶ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 47:

Օգտագործված գրականություն

1. Ս.Գ.Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԳԱ հրատ., Ե., 1965:
2. Ս.Գ.Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն: Ձեռնարկ ուսուցիչների համար, 2-րդ հրատ., «Լույս» հրատ., Ե., 1975:
3. Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնապյան, Հ. Ա. Օհանյան, *Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն*, հ. 2, ԳԱ հրատ., Ե. 1974:
4. Ս.Գ. Աբրահամյան, *Ժամանակակից գրական հայերեն*, ԳԱ հրատ., Եր., 1981:
5. Ս.Գ. Աբրահամյան, *Հայոց լեզու. Բառ և խոսք*, ուսումնական ձեռնարկ միջն. դպրոցի 7-8-րդ դաս. նախասիրական պարապմունքների համար, «Լույս» հրատ., Ե., 1978:
6. Ս.Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները, «Պատմա-բանասիրական հանդես», հ. 3, ԳԱ հրատ., Ե., (1981), էջ 32-47:
7. Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀ հրատ., Ե., 1980:
8. Լ. Եզեկյան, *Հայոց լեզու*, ԵՊՀ հրատ., Ե., 2007:
9. Ա. Ղարիբյան, *Հայոց լեզու*, դասագիրք V-VII դասարանների համար. 9-րդ վերահրատ., Հայպետուսմանկհրատ, Երևան, 1961:
10. Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, ԵՊՀ հրատ., Երևան, 1955:

Nersisyan Varsik - Analysis of Theoretical Aspects of Word-Formation in Sergey Abrahamyan's Works. - This paper presents Sergey Abrahamyan's approaches to the theoretical issues of word formation in modern Armenian, as reflected in several of his fundamental works. It is demonstrated what innovations S. Abrahamyan introduced in the matter discussed and how he contributed to the development of the study of word formation in modern Armenian. In particular, it is noted that S. Abrahamyan, in his works, conducted a deep and comprehensive analysis of the wordstock of the Armenian language and made a significant contribution both to the study of word formation and to the development and systematization of theoretical issues of word formation as a whole. This is most clearly manifested in the examination of the structural features of indeclinable parts of speech.

According to S. Abrahamyan, words are created in two ways: according to word-formation patterns and as a result of the transition of grammatical forms. He divides words by their composition into simple and derived, with the latter further classified into compound and affixal types. Affixal words in Abrahamyan's works are divided into words with a single root and words with multiple roots. According to the position of the affix, Abrahamyan distinguishes prefixed, suffixed, prefixed-suffixed words.

Keywords and phrases: word-formation, affixation, compounding, indeclinable parts of speech, adverbs derived from grammatical forms, descriptive adverbs, structures with prepositions.

Nersisyan Varsik, Ph.D., Associate professor, Associate Professor at the Chair of Mother Tongue and Its Teaching Methodology at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,

Senior Researcher at the Department of the Modern Armenian Language at the NAS RA Institute of Language after H. Acharyan,GSU lecturer.

Нерсисян Варсик -Анализ теоретических вопросов словообразования в трудах Сергея Абраамяна. - В данной статье представлены подходы Сергея Абраамяна к теоретическим вопросам словообразования современного армянского языка, отраженные в ряде его фундаментальных трудов. Показано, какие нововведения внес С. Абраамян в рассматриваемые вопросы, и каким образом он способствовал развитию учения о словообразовании современного армянского языка. В частности, отмечается, что С.Абраамян в своих трудах подверг глубокому и всестороннему анализу лексический состав армянского языка и внес значительный вклад как в изучение способов образования слов, так и в разработку и систематизацию теоретических вопросов словообразования в целом. Наиболее ярко это проявляется при рассмотрении структурных особенностей неизменяемых частей речи.

Согласно С.Абраамяну, слова образуются двумя способами: по словообразовательным моделям и в результате перехода грамматических форм. Слова по составу он делит на простые и производные, а последние – на сложные и аффиксальные. Аффиксальные слова в трудах Абраамяна делятся на слова с одним и несколькими корнями. По позиции аффикса Абраамян выделяет префиксальные, суффиксальные, префиксально-суффиксальные слова.

Ключевые слова и словосочетания: словообразование; аффиксация; сложение; неизменяемые части речи; наречия, образованные от грамматических форм; описательные наречия; образования с предлогами.

Нерсисян Варсик, Кандидат филологических наук, доцент, Доцент кафедры родного языка и его преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Гр. Ачаряна НА НРА, преподаватель ГГУ.

Պետրոսյան Լիլիթ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վանաձորի պետական համալսարան,
դասախոս. lilitpetrosyano1977@mail.ru

Գևորգյան Նանե

Վանաձորի պետական համալսարան,
մագիստրանտ. gevorgyanane@gmail.com

Բանալի բառեր. բայակազմություն, բայի սեռ, սեռային փոխանցումներ, խնդրառություն, ենթակաառություն, դասանշություն:

Բառակազմության ոլորտում իրականացված հետազոտությունները վկայում են, որ բարդ բառերի առաջացումը լեզվական կադապարների աստիճանական գործընթաց է, որի ընթացքում բառակապակցության՝ ինքնուրույն գործառույթով օժտված միավորները սերտաճում են՝ դառնալով լեզվական մեկ միավոր: Նույն օրինաչափության շրջանակում լեզվի վաղ զարգացման փուլում գործածված մի շարք բայական հարադրություններ աստիճանաբար փոխակերպվել են համադրական բարդությունների՝ արտահայտության պլանում երբեմն ենթարկվելով փոփոխությունների, երբեմն պահպանելով նախնական տեսքը: Այդպիսի օրինակներ են՝ թափ անցանել – թափանցել, շուրջ գալ – շրջագայել, ունկն դնել – ունկնդրել, ձեռն արկանել – ձեռնարկել, դատ վարել – դատավարել, գերի վարել – գերեվարել, ակն ածել – ակնածել, ակն առել – ակնառել, կէտ դնել – կետադրել: Ա. Մարգարյանը բայական գերադասանդամով իսկական բարդությունների ներշարահյուսական բազմազան ու բարդ հարաբերությունների առաջացումը պայմանավորում է բայի՝ տարբեր երևույթների և իրողությունների հետ կապված լինելու հանգամանքով: Հ. Հարությունյանը իրավացիորեն ընդգծում է, որ կառավարման երևույթը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել շարահյուսորեն վերլուծելի բարդ բայերին բնորոշ կառավարման առանձնահատկությունները, երբ վերջին բայական բաղադրիչը հանդես է գալիս որպես ինքնուրույն կառավարող բայ, իսկ անվանական նախադաս բաղադրիչը՝ որպես այդ բայի կառավարվող անդամ: Հենց այստեղ է, որ սևեռել ենք մեր ուշադրությունը՝ բացահայտելու արժույթային առանձնահատկությունները ոչ ավելի ներքերականական հարաբերություններում, որքան արտաքերականական արտահայտություններում, երբ փոխվում է բայի սեռը՝ կախված համադրական բարդության մեջ իրեն լրացնող միավորի իմաստից: Կազմությամբ բարդ հիմքով բայական ձևերը «միջուկային նախադասություններից սերված երկրորդական նախադասությունների, բառակապակցությունների և դերբայական

1 Սրա մասին վաղուց խոսվել է՝ Մ. Աբեղյան, Հ.Աճառյան, Էդ. Աղայան և այլք:

2 Խաչատրյան Գ., *Գրաբարի վերլուծական բայերի արժույթը*, Ե., 2000 թ., էջ 88-89:

3 Մարգարյան Ա., *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1990 թ., էջ 147-148:

4 Հարությունյան Հ., *Կառավարումը ժամանակակից հայերենում*, Ե., 1983 թ., էջ 113-114:

դարձվածների փոխակերպման արդյունք են»⁵: Բայական համադրական բարդությունները, ելնելով դրանցում ընդգրկված հիմնական ձևույթների քանակից, բաժանվում են երկբաղադրիչ (օր.՝ գունագրկել, շատախոսել, բարեմաղթել) և եռբաղադրիչ (օր.՝ էլեկտրալուսաչափել, լուսանկարահանել, ծաղկաշղթայագարդել, կինոդերակատարել, ռադիոլուսանկարել և այլն) կազմությունների: Տարածվածությամբ գերակշռում են երկբաղադրիչ կազմությունները: Բայական բարդություններին բնորոշ են ինչպես հոդակապով (օր.՝ յոթնապատկել, պատվագրկել, ծանրաբեռնել, մոխրաջրել), այնպես էլ անհոդակապ համադրությամբ (օր.՝ պատմեցել, փայլարդել, ունկնդրել, փառերգել, գործուղել) կազմությունները: Վերջիններս, սակայն, թվով ավելի սահմանափակ են:

Ժամանակակից արևելահայերենի բայական բառապաշարում համադրական բարդ բայերը լայն տարածում ունեն: Ըստ բառաբաղադրիչների միջև եղած հարաբերության՝ դրանք դասակարգվում են հիմնականում հետևյալ խմբերով՝

1. Գոյական+բայ՝ ակնահյուս(վ)ել, ամոթահարվել, փառագարդել, օղագրկել, քաղաքակրթել, մոխրաջրել և այլն,
2. Ածական+բայ՝ ամրահյուս(վ)ել, բարեմաղթել, բազմաձևել, ծանրահարկել և այլն,
3. Թվական+բայ՝ յոթնապատկել, ութապատկել, երեքտակ(վ)ել, չորեքտակ(վ)ել և այլն,
4. Դերանուն+բայ՝ այլափոխ(վ)ել, այլագուն(վ)ել, այլակերպ(վ)ել, այլահամել, այլասեր(վ)ել, ինքնաձևել և այլն,
5. Մակբայ+բայ՝ արագագրել, շատախոսել, ուղղահայել և այլն:

Օրինակները ցույց են տալիս, որ կազմությամբ բարդ հիմքով բայերը մեծամասամբ **համակադրապարային կազմություններ են**⁶, որոնց վերջնաբաղադրիչ բայը շարունակում է իր խոսքիմասային պատկանելությունը նոր կազմության մեջ: Սրանցում լեզվաբանական ուսումնասիրության տեսակետից հետաքրքիր է վերջնաբաղադրիչ բայի սեռային պատկանելության արտահայտությունը, ըստ որի էլ դրանք կարող ենք դասակարգել երկու խմբով՝

1. Բայեր, որոնք պահպանում են իրենց սեռային պատկանելությունը. օրինակները բազմաթիվ են, բավարարվենք մի քանիսով՝

Գրել-ագատագրել: Թեև պահպանում է իր սեռային պատկանելությունը, այն է՝ ներգործական սեռ, բայց ակնհայտորեն փոխվում է խնդիրների դասանշությունը՝ անցում իրանիշ-թանձրացականից դեպի վերացական՝ և ուղիղ խնդիր և միջոցի անուղղակի խնդիր առնելու տեսանկյունից: Այսպես՝ *գիր գրել, ագատագրել հայրենիքը՝ և գրել գրիչով, ագատագրել համախմբությամբ կամ ուժով* և այլն:

⁵ **Զահուկյան Գ.**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Ե., Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 565:

⁶ **Զահուկյան Գ.**, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 216:

⁷ Թեև «հայրենիքը» ըստ իր բնույթի վերացական հասկացություն է (չունի նյութական մարմին, ուղղակիորեն չի շոշափվում), այն **տվյալ բառակապակցական միջավայրում՝ «ագատագրել հայրենիքը»**, սկսում է գործել որպես **թանձրացական սուբյեկտ**: Այսինքն՝ վերացական հասկացությունը ներկայացվում է այնպես, կարծես նյութական մարմին ունենա: Այս երևույթը տեղի է ունենում մի քանի լեզվաբանական և հոգեբանական որոշ հիմնավորումներով՝

Դնել-ունկնդրել: «Դնել» բայն իր հիմնական իմաստով պահանջում է ուղիղ խնդիր, որն արտահայտվում է կոնկրետ-առարկայական (ուժեղ թանձրացական) գոյականով՝ նշելով որևէ շոշափելի առարկա, որը տեղափոխվում է որևէ տեղ: Օրինակ՝ «դնել գիրքը սեղանին», «դնել բաժակը պահարանում»: Այստեղ «գիրքը» և «բաժակը» հստակորեն ուժեղ թանձրացական խնդիրներ են: Երբ «ունկն դնել» կապակցությունը վերածվում է մեկ բայի՝ «ունկնդրել»-ի, տեղի է ունենում խնդիրների դասանշության նշանակալի տեղաշարժ: Այս նոր բայը, թեև պահպանում է իր ներգործական սեռը, սկսում է պահանջել խնդիրներ, որոնք կարող են լինել ինչպես թանձրացականի տարբեր աստիճանների, այնպես էլ վերացական: «Ունկնդրել դասախոսին» բառակապակցության մեջ «դասախոսը» մարդ է, թանձրացական գոյական: Սակայն ունկնդրողի ու դասախոսի կապը բացատրվում է ոչ թե ֆիզիկական ազդեցությամբ, այլ հիմնականում նրա խոսքին կամ ներկայությանը ուշադրություն դարձնելով: Այսինքն՝ դասախոսը հանդես է գալիս որպես հնչյունի, խոսքի կամ տեղեկատվության աղբյուր, որը ընկալվում է լսողության միջոցով: Նա ավելի շուտ **մակերեսային-օբյեկտային** է դառնում այդ գործողության համար: «Ունկնդրել» բայը ավելի հստակորեն պահանջում է դասանշությամբ վերացական խնդիրներ՝ էլույթ, դասախոսություն, խորհուրդ և այլն:

Դիտարկենք վառել-գունավառել գույզը: «Վառել» բայն ի սկզբանե պահանջում է ուղիղ խնդիր՝ արտահայտված կոնկրետ-առարկայական կամ **«ուժեղ թանձրացական»** գոյականով, օրինակ՝ «վառել լույսը», «վառել կրակը»: Այստեղ խնդիրը հանդես է գալիս որպես անմիջականորեն ընկալելի և շոշափելի էություն: Ի հակադրություն, «գունավառել» բարդ բայը, թեև պահպանում է ներգործական սեռը, պահանջում է խնդրառության այլ արտահայտություն: «Գունավառել» բայը նշանակում է «գույներով զարդարել այսինչ բանը»: Այս դեպքում ուղիղ խնդիրը հաճախ հանդես է գալիս որպես **մակերեսային-տարածական** կամ **«թույլ թանձրացական»** գոյական: Օրինակ՝ «գունավառել տոնածառը», «գունավառել սենյակը»: Այս գոյականները, թեև պահպանում են իրենց առարկայական բնույթը, ավելի շատ ընկալվում են որպես որևէ գործողության մակերեսային կամ արտաքին օբյեկտ, որի վրա կատարվում է զարդարման կամ գունավորման գործողությունը, այլ ոչ թե որպես ֆիզիկական ուղղակի ազդեցության ենթարկվող գոյություն: Հիմնական պատճառն այն է, որ բարդ հիմքով բայերի առաջին բաղադրիչը ներշարահյուսորեն արդեն դառնում է խնդիր այդ բայի համար: Սա հանգեցնում է նրան, որ բուն բայի իմաստային կենտրոնը տեղափոխվում է, և այն սկսում է պահանջել

1. **Միմվոլիկ մարմնավորում**. հոգեբանորեն մարդը հայրենիքը կապում է հողին, տարածքին, սահմանի ներսում գտնվող ֆիզիկական տարածքին ու նաև նրա վրա գտնվող շինություններին ու բնությանը: Այսպիսով, վերացական «հայրենիք» հասկացությունը սիմվոլիկորեն կամ խորհրդանշորեն մարմնավորվում է իրական, շոշափելի տարածքներում:

2. **Կոնցեպտուալ մարմնավորում հասարակական հիշողության մեջ**. քաղաքական, գրական և հանրային խոսքի մեջ «հայրենիքը» վաղուց արդեն դարձել է ոչ միայն վերացական հասկացություն, այլև մարմնավորված մի արժեք, որը մարդիկ պատկերացնում են քարտեզով, բնապատկերով, տուն-տեղով: Դա թույլ է տալիս լեզվական մակարդակում այն դիտարկել որպես թանձրացական միավոր:

3. **Գործողության բնույթով թանձրացում**. «ազատագրել» բայը պահանջում է գործողություն իրական, հաճախ ֆիզիկական արգելքի դեմ: Երբ այն ուղղվում է «հայրենիքի» վրա, խոսողը կամ ընթերցողը սկսում է այն ընկալել որպես այնպիսի միավոր, որը հնարավոր է գրավել, պահել կամ պաշտպանել: Այս տեսանկյունից «հայրենիքը» արդեն նյութականացած պատկեր է:

Ընդհանրապես, շատ բառեր են մի խմբից մյուսն անցնում իմաստափոխության հետևանքով, ինչպես *հայտարարություն*, *դիմում* և այլն:

խնդիրներ, որոնք կարող են լինել ինչպես կոնկրետ-առարկայական (ուժեղ թանձրացական), այնպես էլ ավելի մակերեսային կամ նույնիսկ վերացական:

Այսպես նաև «նկարել» բայը պահանջում է ուղիղ խնդիր՝ արտահայտված կոնկրետ-առարկայական գոյականով՝ «նկարել ծաղիկ», «նկարել դիմանկար»: Այստեղ խնդիրը նկարվելիք օբյեկտն է: Սակայն «**ծաղկանկարել**» բարդ բայը պահանջում է խնդրի դասանշային այլափոխված արտահայտություն՝ հաճախ մակերեսային-տարածական բնույթի գոյական, օրինակ՝ «ծաղկանկարել տետրը», «ծաղկանկարել զգեստը»: Այս դեպքում խնդիրը այն մակերեսն է, որի վրա կատարվում է ծաղիկների նկարման գործողությունը: Չնայած այն դեռևս թանձրացական է, սակայն դրա դերն ու կապը բայի հետ փոխվում է. այն դառնում է ավելի շուտ գործողության կատարման վայր կամ մակերես, քան բուն գործողության օբյեկտ:

2. **Բայեր, որոնք ձեռք են բերում նոր սեռային պատկանելություն:**

Այս շարքում հիմնականում ներգործական սեռի բայեր են, որոնք, զուգադրվելով գոյականներին, վերածվել են չեզոք սեռի բայերի, ինչն էլ իր հերթին դարձյալ առաջ է բերել դասանշության և արժույթայնության փոփոխություն: Բավարարվենք երկու օրինակով:

Կախել-ունկակախել: «Կախել» բայը ներգործական սեռի բայ է: Այն պահանջում է ուղիղ խնդիր՝ արտահայտված իրանիշ-թանձրացական (ուժեղ) գոյականով, ինչպես՝ «կախել նկարը պատից», «կախել լամպը առաստաղից»: «Ունկակախել»-ը դառնում է չեզոք սեռի բայ: Այն արդեն չի նշանակում «ինչ-որ բան կախել», այլ նկարագրում է ենթակայի վիճակը կամ դիրքը՝ «հոնքերը կիտել»:

Խոտել-մոլախոտել: «Խոտել» բայն իսկապես ուշագրավ է իր բազմիմաստությամբ և սեռային ճկունությամբ, ինչը հազվադեպ հանդիպող երևույթ է մեկ բայի շրջանակում: Դիտարկենք դրա երեք հիմնական մեկնաբանությունները՝

1. **«Զզվել» (չեզոք սեռ):** Այս իմաստով «խոտել» բայը նկարագրում է ենթակայի ներքին վիճակը կամ զգացմունքը: Այն չի պահանջում ուղիղ խնդիր, քանի որ գործողությունը չի ուղղվում մեկ ուրիշի վրա, այլ դրսևորվում է հենց ենթակայի մեջ: Օրինակ՝ «նա խոտեց այդ մտքից»: Այստեղ խնդիրը (մտքից) անուղղակի է, և ցույց է տալիս զզվանքի աղբյուրը, այլ ոչ թե օբյեկտը: Այս իմաստը, թեև այսօր քիչ է գործածվում, պահպանում է բայի՝ հնարավոր չեզոք սեռով հանդես գալու ներուժը:

2. **«Արհամարհել» (ներգործական սեռ):** Սա «խոտել» բայի ամենատարածված և ակտիվ գործածվող իմաստն է: Այստեղ խնդրառության առանձնահատկությունը այն է, որ կարող է ընդունել ինչպես կոնկրետ-առարկայական (ուժեղ թանձրացական) խնդիրներ (օրինակ՝ «խոտել մարդուն» (ասում են հիմնականում հեգնական ենթատեքստով), այնպես էլ դասանշությամբ վերացական խնդիրներ, օրինակ՝ «խոտել առաջարկը», «խոտել գաղափարը»: Այս իմաստը սերտորեն կապվում է նաև «խոտանել» բայի հետ, որը նշանակում է «խոտան համարել, մերժել, անպիտան համարել»: «Խոտանել» բայը, նույնպես, կարող է ընդունել ինչպես թանձրացական («խոտանել ապրանքը»), այնպես էլ վերացական («խոտանել որոշումը») խնդիրներ:

3. **«Խոտով լցնել» (ներգործական սեռ):** Այս իմաստով «խոտել»-ը հանդես է գալիս որպես մեկ այլ ներգործական բայ՝ պահանջելով կոնկրետ-առարկայական (ուժեղ թանձրացական)

ուղիղ խնդիր (օրինակ՝ «խոտել դաշտը», «խոտել բակը»): Այս իմաստը ամենաուղղակի կապն ունի «բույս» բառի հետ և ցույց է տալիս, թե ինչպես կարող է բայը պահպանել իր սկզբնական նշանակությունը՝ ֆիզիկական գործողություն արտահայտելով:

Ի տարբերություն «խոտել» բայի բազմիմաստության, «**մուլախոտել**» բայի սեռը միանգամայն պարզ է: Այն կազմված է «մուլ+խոտ» գոյականներից: Սա նշանակում է, որ «մուլախոտել» բայը նկարագրում է որևէ տարածքի կամ օբյեկտի վիճակը՝ մուլախոտերով պատվելը, և այլևս չի պահանջում ուղիղ խնդիր. այն չեզոք սեռի բայ է, օրինակ՝ «Դաշտը մուլախոտել է», այսինքն՝ դաշտը լցվել է մուլախոտերով: Սա հակադրվում է «խոտել» բայի «խոտով լցնել» իմաստին, որը ներգործական էր և ուղիղ խնդիր էր պահանջում:

Քննության արդյունքում հանդիպել են նաև բարդ հիմքով բաղադրություններով *փոխկադասարային* կազմություններ, այսինքն՝ բարդության վերջնաբաղադրիչ արմատով ժամանակակից հայերենում բայ չկա, ինչպես՝ *այլահամել, այլակերպ(վ)ել*⁸ և այլն: Այս դեպքում, իհարկե, սեռային փոխանցման մասին չենք կարող խոսել, պարզապես կարող ենք նշել այդ բայի կապակցելիական հնարավորությունը ժամանակակից հայերենում (դասանշություն, խնդրատություն, ենթակաատություն, պարագաատություն): Ձահուկյանը ենթակաների դասանշությանը անդրադառնալիս առանձնացնում է չորս խումբ, որոնցից երրորդի մեջ գրում է. «3-րդ խումբը կազմում են մարդու համար բնորոշ երևույթներ, վիճակներ, գործառություններ, սովորություններ արտահայտող բայերը. սրանց մեջ առաջին հերթին պետք է նշել բարդ հիմքով կազմված բայերը»: Այսինքն՝ ըստ Գ. Ձահուկյանի՝ ենթակաատությամբ անձանիշ են գրեթե բոլոր բարդ բայերը: Մեր բերած օրինակներից երկուսն էլ բացառություն են այս հարցում. իրանիշ են (2-րդը՝ վերապահությամբ)՝ «Մնունդն այլահամեց», «Նկարիչն այլակերպեց իր կերպարը», «Ժամանակն այլակերպեց շենքը», և այլն:

Բայական կազմությամբ բարդ հիմքերը ժամանակակից հայերենում գործածվում են մենեզր և երկեզր, երբեմն բազմեզր հարաբերությամբ, այսինքն՝ նշված բարդ հիմքերով մի դեպքում կազմվում են միայն բայեր, մյուս դեպքում՝ նաև գոյականներ, ածականներ, մակբայներ, ինչպես՝ ազատագրել-ազատագրություն-ազատագրական, բազմաձևել-բազմաձևություն-բազմաձևային-բազմաձևաբար, ամոթխածել-ամոթխած-ամոթխածություն և այլն:

Այսպիսով, հայերենի բարդ բայերը, հաճախ ձևավորված լինելով բառակապակցությունների սերտաձումից, լեզվի զարգացման կարևոր դրսևորումներից են: Այս գործընթացում դրանք ենթարկվում են իմաստային և շարահյուսական փոփոխությունների՝ հարստացնելով արտահայտչական հնարավորությունները: Բարդ հիմքով բայերը բաժանել ենք երկու խմբի՝ ըստ վերջնաբաղադրիչ բայի սեռային պատկանելության.

1. Բայեր, որոնք թեև պահպանում են սեռը (օրինակ՝ *գրել-ազատագրել, վառել-գունավառել, դնել-ունկնդրել*), բայց նկատվում է խնդիրների դասանշության տեղաշարժ:

⁸ Ինչ վերաբերում է հոդվածում տեղ գտած բոլոր կրավորական սեռի բայերին, ապա, ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Հարությունյանը, «Անհրաժեշտություն չկա կրավորական սեռի բայերի կառավարումը վերլուծելիս խմբավորել ըստ արժույթի, քանի որ սերված կրավորական բայերը պահպանում են սերող բայի արժույթայնությունը, իսկ նոր՝ կրավորականության ներգործող խնդիր առնետու հատկությամբ, բավականին միօրինակ են», *Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում*, Ե., 1983թ., էջ 173:

2. Բայեր, որոնք ձեռք են բերում նոր սեռ (օրինակ՝ *կախել-ունկակախել, խոտել-մոլախոտել*): Այստեղ ներգործական բայերը վերածվում են չեզոքի՝ փոխելով իրենց խնդրառությունը:

Գոյություն ունեն նաև փոխկադապարային կազմություններ (օրինակ՝ *այլահամել, այլակերպ(վ)ել*), որոնց վերջին արմատը ժամանակակից հայերենում անկախ բայ չէ: Այս բայերի դեպքում կարևորվում են դրանց ընդհանուր կապակցելիական հնարավորությունները (դասանշություն, խնդրառություն, ենթակատություն, պարագատություն), ներառյալ իրանիշ ենթակա ունենալու հնարավորությունը:

Բարդ բայերը նաև հաճախ հանդես են գալիս որպես բառակազմական հիմքեր՝ ձևավորելով ոչ միայն բայեր, այլև այլ խոսքի մասեր (օրինակ՝ *ազատագրել-ազատագրություն-ազատագրական և այլն*): Այս ամենը վկայում է հայերենի բայական համակարգի բարդության, ճկունության և շարունակական զարգացման մասին:

Օգտագործված գրականություն

1. Խաչատրյան Գ., Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Երևան, 2000թ.:
2. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990թ.:
3. Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983թ.:
4. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974.:
5. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:

Petrosyan Lilit, Gevorgyan Nane – The Valency of Compound Verbs in in Armenian. -Thus, compound verbs in Armenian, often formed by the fusion of word combinations, are significant manifestations of language development. In this process, they undergo semantic and syntactic changes, enriching their expressive capabilities. We have categorized compound-stem verbs into two groups based on the voice affiliation (or valency) of the final component verb:

Verbs that retain their voice (e.g., *գրել-ազատագրել, վառել-գունավառել, դնել-ունկնդրել*) exhibit a shift in argument classification.

Verbs that acquire a new voice (e.g., *կախել-ունկակախել, խոտել-մոլախոտել*). Here, transitive verbs transform into intransitive verbs, altering their argument structure (or valency requirements).

There are also non-productive/analogous formations (e.g., *այլահամել* (to make taste different), *այլակերպ(վ)ել* (to transform/be transformed)), where the final root is not an independent verb in modern Armenian. In the case of these verbs, their overall valency potential becomes crucial, encompassing argument classification, argument structure, subject realization, and adjunct realization, including the possibility of having an inanimate subject.

Compound verbs frequently serve as word-formation bases, forming not only verbs but also other parts of speech (e.g., *ազատագրել-ազատագրություն-ազատագրական* (to liberate - liberation - liberating), etc.). All these phenomena attest to the complexity, flexibility, and continuous development of the armenian verbal system.

Keywords: verb formation, verb voice, voice shifts, valency, subject realization, argument classification.

Petrosyan Lilit, PhD in Philology, Associate Professor, Vanadzor State University.

Gevorgyan Nane, Master's Student, Vanadzor State University..

Петросян Лилит, Геворгян Нане – Валентность сложных глаголов в армянском языке. - Ключевые слова: глаголообразование, залог глагола, залоговые сдвиги, актантная структура, реализация субъекта, классификация аргументов.

Таким образом, сложные глаголы в армянском языке, часто образующиеся в результате слияния словосочетаний, являются важными проявлениями языкового развития. В этом процессе они претерпевают семантические (semantic) и синтаксические (syntactic) изменения, обогащая свои выразительные возможности. Сложные глаголы были разделены на две группы в зависимости от залоговой принадлежности конечного глагольного компонента:

Глаголы, которые, хотя и сохраняют залог (например, գրել-ազատագրել, վառել-գուհավառել, դնել-ունկնդրել), демонстрируют сдвиг в классификации аргументов.

Глаголы, которые приобретают новый залог (например, կախել-ունկախել, խոսել-մոլորակախոսել). Здесь переходные глаголы (transitive verbs) превращаются в непереходные глаголы (intransitive verbs), изменяя свою актантную структуру (argument structure/valency requirements).

Существуют также аналогичные/непродуктивные образования (например, ալիսհամել (изменить вкус), ալիսկերպ(վ)ել (преобразовывать/преобразовываться)), у которых последний корень не является самостоятельным глаголом в современном армянском языке. В случае этих глаголов особую важность приобретают их общие валентные возможности, классификация аргументов, актантная структура, реализация субъекта, реализация адьюнктов, включая возможность иметь неодушевленный субъект.

Сложные глаголы также часто выступают в качестве словообразовательных основ, образуя не только глаголы, но и другие части речи (например, ազատագրել-ազատագրութիւն-ազատագրիչ (освобождать – освобождение – освободительный) и т.д.). Все эти явления свидетельствуют о сложности, гибкости и непрерывном развитии армянской глагольной системы.

Петросян Лилит, кандидат филологических наук, доцент, Ванадзорский государственный университет.

Геворгян Нане, магистрант, Ванадзорский государственный университет.

**ԲԱՅ-ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԻ
ԵՐԿԵՐՈՒՄ**

Պետրոսյան Լիլիթ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վանաձորի պետական համալսարան, դասախոս.

lilitpetrosyano1977@mail.ru

Թադևոսյան Անժելա

Վանաձորի պետական համալսարան,
մագիստրանտ. anjelatadevosyan0@gmail.com

Բանալի բառեր. դասանշություն, անձնանիշ, իրանիշ, կենդանանիշ, լրացումառու-
թյուն, բայակազմություն, միարժույթ բայ, երկարժույթ բայ:

Նախաբան

Բայերի կապակցելիական դասակարգմանը հայ լեզվաբանության մեջ անդրադարձել է Գևորգ Ջահուկյանը՝ այն քննելով որպես «բայերի դասակարգումը ըստ նախադասությունը կազմող բառերի և բառախմբերի հետ նրանց ունեցած կապակցելիության»:

Դասակարգման նպատակն է պարզել նախադասություն կազմող բառերի և բառա-
խմբերի որ տեսակների հետ բայերը կարող են կապակցվել կամ չկապակցվել: Կապակցե-
լիական դասակարգումը իմաստային դասակարգում է, քանի որ դրանով պարզ է դառնում,
թե տվյալ հատկանիշը ինչ կարգի առարկաների է վերագրվում կամ ինչ կարգի լրացումներ
կարող է պահանջել:

Բայերն իրենց լրացումներին կապակցվում են դասանշությամբ, արժույթայնությամբ և
ընտրությամբ, որոնց քննությունը հիմք է հանդիսանում հեղինակային նորաբանու-
թյունների իմաստի բացահայտման:

Բայ-նորաբանությունների կապակցելիական առանձնահատկությունները

Եղիա Տեմիրճիպաշյանը, իր երկերում հեղինակելով տարբեր նորակազմություններ,
ստեղծագործել է նաև բայ-նորաբանություններ, որոնց հատուկ են ինչպես անդեմ, այնպես էլ
դիմավոր կիրառությունները: 19-20-րդ դդ. բայական նորաբանությունները ըստ կազմության
դասակարգվում են հիմնական երկու խմբերով՝ **է** խորնարհման պարզ և **ա** խոնարհման **ան**
սուկաձանցով բայեր, որոնք համարվում են գործուն կաղապարներ ժամանակակից հայոց
լեզվում: **Ա** խոնարհման **ան** սուկաձանցավոր բայ-նորաբանություններից է **անզարգանալ**
նորաբանությունը՝ կերտված ժխտականության հիմքով, որը հեղինակը կիրառել է ժխտական
կառույցում՝ ձևավորելով կրկնակի ժխտմամբ դրականության իմաստ, ինչպես՝ Եւ քանի որ
Հայ ժողովուրդն էկեղեցականաց զարգացման համեմատությամբ չը պիտ **'անզարգանայ**,

1 **Ջահուկյան Գ.**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Ե., Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 461:

2 **Ասատրյան Մ.**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 197:

քանի որ իր բարոյական կարողութեանց մշակմամբն իսկ պիտի բերուի իւր իրաւանց վրայ կատարելագոյն ծանաւութիւն մը ստանալ, եւ այդ իրաւանց պաշտպանութեան համար աւելի նախանձայուգութիւն ու միանգամայն զարութիւն ունենալ, մարդս ախտային երկիւղի մը համակուած ըլլալու է, մարդս ջլախտաւոր մը, սեւամաղձոտ մ'ըլլալու է, որպէսզի Հայ եկեղեցականաց լուսաւորութենէն Հայ ժողովրդեան խաւարումն հետեւցնէ [112]: Բայնորաբանությունը՝ ըստ դասանշոյան, անձնանիշ ենթակառու է՝ կապակցված *հայ ժողովուրդն* ենթակային, իսկ ըստ արժույթի՝ հեղինակային խոսքում հիմունքի և պատճառի պարագա լրացումառություն է դրսևորել. առաջին դեպքում լրացումը արտահայտվել է գոյականական բառակապակցությամբ, երկրորդ դեպքում՝ երկրորդական նախադասությամբ: Քննելով նորաբանությունների այս կարգի կապակցելիական հնարավորությունները՝ պարզվում է բայերի իմաստային բովանդակությունը «առարկայական հարաբերությունների և դասային ու մակբայական տարբերությունների արտահայտությամբ՝ համանշային և ստուգաբանական զանազան տարբերություններով հանդերձ»:

Ա խոնարհման *ան* սուկածանցավոր մյուս բայ-նորաբանությունը՝ **դրականանալ**, ըստ դասանշոյան իրանիշ ենթակառու է՝ կապակցված *հավասարակշռության հիմունք* ենթակային, իսկ ըստ արժույթի՝ զիջման պարագա լրացումառություն է դրսևորել, որը նույնպէս արտահայտվել է երկրորդական նախադասությամբ, ինչպէս՝ Ո՛չ, երկիւղ չը կայ, թէ կղերանոցներու հաստատմամբ, Հայ կղերին իմացական մակարդակին բարձրացմամբ պիտի խանգարի հաւասարակշռութիւնն, որ կը տիրէ Հայ ընկերութեան մէջ, Հայ ժողովրդեան եւ Հայաստանեայց եկեղեցոյն միջեւ. հաւասարակշռութեան հիմունք, ընդհակառակն, աւելի պիտի **դրականանան**, աւելի հաստատուին:

Դեղավորել և **գեղավորել** բայ-նորաբանությունները պահանջել են դասանշոյամբ անձնանիշ խնդրառու լրացում, որը տվյալ խոսքաշարում է հանդէս եկել որպէս անձնանիշ գոյական, ինչպէս՝ Թերեւս բժիշկք այդ եկեղեցականաց կ'արգիլեն հեռանալ մայրաքաղաքէն, կը պատուիրեն խորշիլ աշխատութենէ, տեղաւորիլ իրենց թաղին մէջ, իրենց տան մէջ, եւ **դեղաւորի՛լ, գեղաւորի՛լ**:

Գնորգ Ջահուկյանը բայերի կապակցելիական հնարավորությունները քննելիս հիմնականում անդրադառնում է դիմավոր բայերի լրացումառոյանը, սակայն վերլուծությունները ցույց են տալիս, որ կապակցական նույն հնարավորություններով են բնութագրվում նաև անդեմ բայերը: Եղիա Տեմիրճիպաշյան հեղինակի երկերում բայ-նորաբանությունները հիմնականում անդեմ են, ինչպէս՝ **օղակախել** բայը, որը, գործածվելով անորոշ դերբայի գործիական հոլովով համասեռ հարաբերությամբ, զուգահեռվել է գոյականի:

Նորաբանությունը կերտվել է համակաղապարային եղանակով⁴, քանի որ բարդոյան վերջին բաղադրիչը պահպանել է իր սեռային պատկանելությունը: Այսպիսով՝ կազմվել է դասանշոյամբ անձնանիշ ենթակառու և դասանշոյամբ իրանիշ խնդրառու կապակցություն, օրինակ՝ Մեռնիլ ես ի՛նչպէս կ'ուզէի, գիտե՞ք. Անձնասպանութեամբ. **Աւղակախելով** Մարմինս առաձիգ՝ փայլակնածայրէն Հուր խարագանին բեկբեկ փեռեկող [38]:

³ Տե՛ս Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 462:

⁴ **Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն**, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 216:

Գևորգ Ջահուկյանը դասային չորս կարգերից բացի, նշում է, որ կան այս կամ այն դասին պատկանող բառերի ենթակարգերի հետ բայերի կապակցելիական տարբերություններ. ասպես, առանձնացնում է կենդանիների տարբեր տեսակների անվանումների հետ կապակցվող ձայնանիշ տարբեր բայեր, ինչպես՝ *կովը բառաչում է, ոչխարը մայում է, թռչունը ծլվում է* և այլն [464]: Ահա Եղիա Տեմիրճիպաշյանն էլ աղավինների ձայնը բնորոշող վու-վու նմանաձայնական ձայնարկությունից կերտել է դասանշությամբ կենդանանիշ ենթակաառու *վու-վուել* բայ-նորաբանությունը՝ որպես *դունդունալ* բայի տարբերակ:

«Փռչի՛»: Այո՛, ի մէջ փռչույ հեղեղին,
Ադու՛ թռչունքն այն լողային հաճո՛ւնք
Դրընդին արագ իւրեանց թեւոց խառնըլին
Ահագնագոչ հողմոց ձայնին, կորչի՛ն յայն:
Ծածկեալ փռչուով, ծանրաբեռնեալ, պարտասեալ,
Գըլխոյս վերեւ *վուվուելով* սիրագին,
Գընալ մըտնել ի խորշս ի սեաւ այլեւայլ,
Չորս որմոց մէջ հաւուցն համար են բացած:

Աղամանդել ներգործական սեռի բայից կազմված **աղամանդացնել** պատճառական տարբերակը ևս պահպանել է սեռային պատկանելությունը և մյուս պատճառական բայերի նման պահանջել է ուղիղ խնդիր, որը օրինակում իրանիշ վերացական գոյական է, ինչպես՝ Ու երկնքի կապոյտը՝ ծալի աչքերու մանրանկարութեամբը բազմապատկուելով՝ անտառին ծոցն իջաւ շրջշրջիլ ու թռչտիլ, անտառին մանիշակ ստուերն երանութեան ժպիտով փայլակնաւորելով ու սիրոյ արտասուաց շրթներովն **աղամանդացնելով**:

Բայերը նախածանցավոր կազմություններում պահպանում են սեռի քերականական կարգի արտահայտությունը: *Վեր-* նախածանցը, որը ցույց է տալիս, որ նախատիպի արտահայտած գործողությունը վերստին, նորից, երբեմն նոր ձևով է կատարվում, բաղադրվելով ներգործական սեռի բային՝ ձևավորել է խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի բայ՝ **վերդանալ**, որը պահանջել է իրանիշ ուղիղ խնդիր և նպատակի պարագա լրացումառություն, որն արտահայտվել է դերբայական դարձվածով, ինչպես՝ Երբ «Մանկավարժական Հանդիս»-ի վերջին թուոյն մէջ ընթերցայ Գաղղիոյ Հանրային կրթութեան եւ Գեղարուեստից Նախարարին ճառն ի հանդիսի բացման արհեստական կրթութեան ազգային դպրոցին Վուառոնի, յիշեցի Ձեր վսեմութիւնն, որ **վերդացած էիք**՝ զայն հուսկ ուրեմն իրացնելու հաստատ կամաւք՝ Ազգային Արհեստանոցի մը գաղափարն՝ եւ կը համարձակիմ ձաւնել առ Ձեզ յիշեալ ճառին մէկ կարեւոր մասին թարգմանութիւնն:

Կազմությամբ բարդ բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության

Ներկայացնենք բայական նորաբանություններ, որոնց հիմքերը բարդ են և արտահայտվել են «գոյական + բայ» մասնակաղապարով, որտեղ գոյական բաղադրիչը հանդես է եկել որպես ուղիղ խնդիր, հանգման անուղղակի խնդիր, միջոցի անուղղակի խնդիր:

5 Գալստյան Ա., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1978, էջ 232:

Եղիա Տեմիրճիպաշյանը նաև թարգմանական փորձեր է կատարել: Այսպես, նա թարգմանել է Վ. Հյուգոյի «Կրոմվելի» առաջաբանից հատված, որի ֆրանսերեն և անգլերեն համարժեքներում հանդիպում ենք *anatomistes//anatomists* գոյականը, որ նշանակում է *կազմախոսություն* (գիտություն կենդանական մարմնի ձևի և կազմության մասին): Այս բառի համար հեղինակը ստեղծել է *անդամագննիչ* գոյական-նորաբանությունը, որից էլ՝ **անդամագննել** բայ-նորաբանությունը: Այսպես «գոյական+բայ» կաղապարով արտահայտվել է *անդամագննել* բայը, որի գոյական բաղադրիչը ուղիղ խնդիր է, իսկ ըստ Գ. Ջահուկյանի՝ բարդ բայերի գոյականական լրացման ամենատարբեր շարահյուսական պաշտոններից գերակշռում է ուղիղ խնդրի պաշտոնը: **Անդամագննել** բային համարժեք ֆրանսերենում և անգլերենում հանդիպում ենք *disséquer//to dissect*, որ նշանակում է *վերլուծել*, մասնավորապես՝ «բացել ինչ-որ բան, մասնավորապես՝ դիակ կամ բույս, և ուսումնասիրել դրա կառուցվածքը»⁶:

Ինչպես նշեցինք, գոյական բաղադրիչը կարող է լինել նաև հանգման անուղղակի խնդիր, ինչպես՝ **գոյաբերել** բայը: Ինչպես *բերել*, այնպես էլ **գոյաբերել** բայը պահանջում են ուղիղ խնդիր լրացում:

«Միջոցի անուղղակի խնդիր + լրացյալ» ներշարահյուսական կաղապարով հեղինակը ստեղծել է **մտաշէն** նորաբանությունը, ինչպես՝ «Հազի դպրոցէն էլաժ, դպրոցի Տնարէն ես արդէն, հազի գրիչ շարժելու սկսար, Հանդէս մը կը խմբագրես **մտաշէն**» [91]: Ապա իր կերտած ածական-նորաբանությունից էլ կազմել է **մտաշինել** բայ-նորաբանությունը, որի վերջնաբաղադրիչը սովորաբար պահանջում է իրանիշ ուղիղ խնդիր լրացում, բայց այստեղ անձնանիշ լրացում է պահանջել, ինչպես՝ Եթէ սոյն ներդաշնակութեան վրայ տարակոյս ունիք դեռ, կրնանք զմեզ **մտաշինել**, ներկայէն կրնանք դատել ապագայն. ո՛չ ապաքէն եկեղեցական մ'իւր արժանեաց համեմատութեամբ կը յարգենք ու կը տիրենք այսաւր:

Բայական հարադրությունը հեղինակը վերածել է համադրական բարդության **ցուցամատել** նորաբանության կազմության ճանապարհին: Ինչպես տեսնում ենք, բարտահայտության պլանում ենթարկելով փոփոխության, մասնավորապես՝ *մատնացույց անել*, *մատով ցույց տալ* հարադրության փոխարեն կազմել է *ցուցամատել* նորաբանությունը՝ շրջուն շարադասությամբ: *Տալ* բայը եռարժույթ է և կարող է պահանջել ուղիղ խնդիր-հանգման անուղղակի խնդիր-միջոցի անուղղակի խնդիր, բայց քանի որ բայն արդեն ունի միջոցի անուղղակի խնդիր լրացում՝ *մատով*, ստեղծված բայը խնդրառությամբ դարձել է երկարժույթ և կարող է պահանջել ուղիղ խնդիր և հանգման խնդիր: Մեր օրինակում բայը պահանջել է միայն անձնանիշ ուղիղ խնդիր, ինչպես՝ Ինձ քաղցր է հաւատալ, թէ չէք ցանկար այդմ, այլ յԱտենի Ազգային Ժողովոյ ցանկացած էք այդմ, ի դիմաց Կրանական Ժողովոյ Ձեր համարատուութեան մէջ **ցուցամատելով** երիտասարդ մը, որ կը քարոզէ Տարուինեան վարդապետութիւնն:

Եզրակացություն

Այսպիսով՝ ներկայացնելով դիմավոր և անդամ բայական նորաբանությունների օրինակների կապակցելիական հնարավորություններից էլնող իմաստաբանությունը՝ պարզ է դառ-

⁶ **Ջահուկյան Գ.**, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989թ., էջ 223:

⁷ <https://dictionary.cambridge.org/dictionary/english/>

նում բառաստեղծ հեղինակի բառաստեղծման առանձնահատկությունը և նոր բառի իմաստը, որը կարևոր է բնագրի ընթերցանության և իմաստի ընկալման տեսակետից:

Օգտագործված գրականություն

Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, 432 էջ:

Գալստյան Ա., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1978, 325 էջ:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1974, 586 էջ:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 319 էջ:

<https://dictionary.cambridge.org/dictionary/english/> Հասանելի է 04.07.2025:

Petrosyan Lilit, Tadevosyan Anjela.- The Valency of Verb Neologisms in the Works of Yeghia Demirjipashian.- This article examines the valency of verb neologisms, drawing on the works of Yeghia Demirjipashian, focusing on the referential classification of subjects into object, personal, and animate types; drawing on the theoretical framework of Jahukyan, it analyzes the syntactic realization of these subject types in modern Armenian, with particular attention to the structural and functional patterns of complementation within predicative constructions, especially in cases involving compound verb neologisms that incorporate intra-grammatical expressions.

Keywords: classification, nouns indicating persons, animals, inanimate objects, complementation, verb formation, monovalent verbs, divalent verbs.

Petrosyan Lilit, Candidate of Philological Sciences, Associate Professor, Vanadzor State University, lecturer.

Tadevosyan Anjela, Master's student, Vanadzor State University.

Петросян Лилит, Тадевосян Анжела.- Валентность глагольных неологизмов в произведениях Егии Темирчипашяна.- В данной статье исследуется валентность глагольных неологизмов на основе произведений Егиа Темирчипашяна, с акцентом на референтную классификацию подлежащих на объектные, личные и одушевлённые типы; опираясь на теоретические положения Джаукяна, анализируется синтаксическая реализация этих типов подлежащих в современном армянском языке, с особым вниманием к структурным и функциональным моделям комплементации в предикативных конструкциях, особенно в случаях, включающих сложные глагольные неологизмы с внутриграмматическими выражениями.

Ключевые слова: классификация, существительные со значением предметных реалий; существительные, обозначающие животных, комплементация, глагольное образование, одновалентные глаголы, двухвалентные глаголы.

Петросян Лилит, Кандидат филологических наук, доцент Ванадзорский государственный университет, лектор.

Тадевосян Анжела, Магистрант, Ванадзорский государственный университет.

**ԲԱՌԵՐԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ
ՃԱՀՈՒԿ-ՎԱՅՔԻ ՄԻՋԲԱՐԲԱՌՈՒՄ**

Վարդանյան Արտակ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. artva@list.ru

Բանալի բառեր՝ իրադրական ոճ, իրադրական տարբերակ, հնչատարբերակ, բառապաշար, հնչյունափոխություն, փոխառություն, Ճահուկ-Վայքի միջբարբառ:

Նախաբան

Հայտնի է, որ հաղորդակցության ժամանակ կարևոր են խոսքի իրադրությունն ու պայմանները, որոնք էլ ձևավորում են իրադրական ոճը: Դրանցով է պայմանավորված նաև խոսքի կառուցվածքը և ընդհանրապես լեզվական միջոցների, մասնավորապես՝ բառապաշարի ընտրությունը:

Ըստ Գևորգ Ջահուկյանի՝ լեզվական միջոցների օգտագործման տարբերությունները հիմնականում կախված են որոշակի պայմաններից և իրադրությունից, որոնցում գտնվում են խոսողը և լսողը²: Տարբեր պայմաններում խոսքն ընդունում է արտահայտության տարբեր ձևեր, ստանում հուզաարտահայտչական տարբեր երանգներ:

Հուզական-զգացական երանգավորում ունեցող բառերը՝ որպես լեզվի համակարգի միավորներ, ակնհայտորեն արտահայտում են համապատասխան իմաստային երանգներ, որոնք ոչ միայն առարկաների, երևույթների, հատկանիշների և այլնի հասկացություններ են, այլև խոսողի վերաբերմունքը դրանց նկատմամբ³:

Բնականաբար, համանման երևույթներ են առկա նաև մեր լեզվի տարածքային տարբերակներում՝ հայերենի բարբառներում: Թեև բարբառները շարահյուսական կառուցվածքով ընդհանուր առմամբ համընկնում են ժամանակակից գրական հայերենին՝ դրսևորելով որոշակի յուրահատկություններ, այնուամենայնիվ բարբառներում առկա հնչյունափոխական երևույթները առավել հարուստ են դարձնում բարբառների իրադրական բառային տարբերակները: Նկատի ունենք նաև բառերի տարբերակային ձևերը, որոնք տարբեր իրավիճակներում կարող են փոխարինել միմյանց:

Դիտարկումներ

Դիտարկենք բարբառային բառերի իրադրական տարբերակները Ճահուկ-Վայքի միջբարբառի օրինակով:

Միջբարբառն այսօր ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի շուրջ մեկ տասնյակ բնակավայր (Արենի, Աղավնաձոր, Խաչիկ, Գնիշիկ, Ռինդ, Արփի, Չիվա,

¹ Լ. Եզեկյան, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Ե., 2006, էջ 19-20:
² Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, *Հայոց լեզու*, Ե., 1994, էջ 23:
³ Ս. Էլոյան, *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն*, Ե., 1989, էջ 17:

Կեչուտ, Գնդեվագ, Հոբս, Վերին Ազնաբերդ գյուղերը)⁴, անցյալ դարում դրանց թվում էին նաև հյուսիսային Նախիջևանի ևս երկու բնակավայր (Նախճավան գավառի Ազնաբերդ և Ճահուկ գավառի Օծոփ գյուղերը), իսկ նախքան շահաբբասյան բռնագաղթը՝ Նախիջևանի տարածքի հյուսիսկենտրոնական գրեթե ողջ տարածքը⁵: Ինչպես յուրաքանչյուր բարբառային միավոր, այս միջբարբառը նույնպես ունի իրեն բնորոշ՝ խոսքի արտահայտման կենդանի, աշխույժ, հաճախ առած-ասացվածքներով, օրինանքներով, առօրյայում սովորական դարձած անեծքներով, նաև հայհոյանքներով համեմված ոճ:

Որոշ բառեր ունեն իրենց ոճական ենթատարբերակները: Օրինակ, *տըրորվիլ* («սեթևեթեվ») բառի կողքին առկա է նաև *տըրոր-տըրոր կալ* («չափից ավելի սեթևեթեվ») հոմանիշը, կամ *զըռթսրվիլ* («զարդարվել») բառի կողքին՝ փոխառյալ *բսնգսնգվիլ* («խիստ զարդարվել, պճնվել») և *սնգսնգ-բսնգսնգ ըլիլ* («խիստ պճնվել, պճնագարդվել») ձևերը:

Միջբարբառի բառապաշարը հարուստ է նաև բառերի բազմաթիվ հնչատարբերակներով: Դրանք, միմյանցից գրեթե չունենալով իմաստային տարբերություններ, երբեմն խոսքին հաղորդում են ոճական որոշակի առանձնահատկություն, երբեմն էլ իմաստի որոշակի փոփոխությամբ՝ զգացականություն, վերաբերմունք:

Տարբերակային ձևեր են ստանում գրեթե բոլոր խոսքի մասերը՝ ոչ միայն գոյականներ, ածականներ, դերանուններ, բայեր, այլև մակբայներ, կապեր, անգամ ձայնարկություններ:

Բառերի տարբերակների առաջացման հիմքերը առաջին հերթին պայմանավորված են խոսքի արտաբերման նվազագույն ճիգի գործադրմամբ, անշուշտ, այստեղ էական դեր են կատարում նաև բարբառի հնչյունափոխական օրենքները, հարևան բարբառներից և լեզուներից կատարված փոխառությունները:

Միայն *հըմի* («հիմա») մակբայը ունի վեց հնչատարբերակ՝ *հիմա>հըմի//մըհի//հըմիգ//մըհիգ//հըմիգըս//մըհիգըս*:

Ինչպես նկատվեց, այստեղ առկա է *ի>ը* հնչյունափոխություն, այնուհետև *հ/մ* դրափոխություն, *իկ* և *ս* վերջնամասնիկների հավելում, սակայն բոլոր տարբերակները կիրառվում են հավասարազոր՝ միևնույն իմաստով:

Տարբերակային երեք ձև ունի նաև *հըմար* («համար») մակբայը՝ *համար>հըմար//մըհար//մար*:

Ինչպես նկատվեց, այստեղ էլ առկա են ինչպես *հ/մ* դրափոխության, այնպես էլ ամփոփման հնչյունափոխական երևույթներ:

Մրանք, դրանք, նրանք ցուցական դերանունները ունեն երկուական տարբերակներ՝ *ըստանք//ըստոնք, ըդանք//ըդոնք, ընդանք//ընդոնք*:

Կապերից տարբերակներ ունի *մինչև* կապը՝ *մինչև>մընչեվ//ընչուր//չուր*:

Եթե առաջինը ակնհայտորեն *ի>ը* հնչյունափոխությամբ առաջացած ձև է, ապա երկրորդն ու երրորդը ավելի շուտ փոխառություն են հարևան Խոյ-Սալմաստի բարբառից:

⁴ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 5-16:

⁵ Ա. Վարդանյան, *Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները*.– Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 1-7:

Կլոր(իկ) ածականը ունի *կըլօլիգ//պըլօլիգ//փըլօլիգ տարբերակները*:

Երկու տարբերակ ունի պարսկերենից փոխառյալ *զընջիլ//ժընջիլ («շղթա»)* բառը (*պարսկերեն՝ zanjir («շղթա»*), որոնցում առկա է *ը*-լ հնչյունափոխություն և երկրորդում՝ նաև *զջ>ժջ* առնմանական հնչյունափոխություն:

Հավաքել բայի չորս տարբերակներն են՝ *հըվաքիլ//վըհաքիլ//վաքիլ//ֆաքիլ*: Ի դեպ, այստեղ տեղի է ունեցել ոչ միայն *ա>ը* հնչյունափոխություն և *հ/վ* դրափոխություն, այլև բարբառներում փոքր հաճախականությամբ հանդիպող *վհ>ֆ* հնչյունափոխություն (ինչպես Արեւհատ>Արէվհադ>Արեֆադ (Ճահուկ-Վայք), շնորհաւոր>շնօրհվուր> շնօրվհուր>շընօֆուր (Տիգրանակերտ, Մուսա լեռ)⁶, որբնայրի > օրփվարի>օրհվարի> օրվհարի>օրֆարի (Նոր Նախիջևան)⁷: Ի դեպ, այս երևույթը վկայում է *ֆ* հնչյունի՝ պատմականորեն ոչ միայն փոխառյալ բառերի միջոցով հայերենի մեջ ներթափանցելու, այլև հայերենի հնչյունական համակարգի ներքին հնարավորությունների հիմքի վրա ինքնուրույն առաջանալու մասին⁸:

Վերցնել բայը ունի երեք տարբերակ՝ *վէր ունիլ//վէրնիլ//վէննիլ*: Հարադրական կազմությունից համադրականի անցումը տեղի է ունեցել *րն>նն* հնչյունափոխությամբ, որը միջբարբառին խիստ բնորոշ *տն>նն* առնմանական հնչյունափոխության (մասոնց>մաննօց, մտնել>մրննիլ, վոտնաման>վօննաման) համաբանությունն է:

Իրար գալ («շարժվել») բայը ունի հինգ տարբերակ՝ *իրար գալ>իրսւր կալ//տիրսւր կալ//տոնրսւր կալ//ոնրսւր կալ//ոնրոնր կալ*: Այստեղ նույնպես առկա են հարևան բարբառներից (Ջուղա, Արցախ-Սյունիքի) փոխառյալ ձևեր:

Ջրիճալ, ճըլխիլ, փըշրիլ բայերը ունեն մի քանի տարբերակներ՝ զոջալ («զզվել») > *զըիճալ//ժըիճալ, ճխլել>ճըլխիլ//պըլխիլ//փըլխիլ, փշրել>փըշրիլ//մըշրիլ* և այլն:

Ճըլխիլ//պըլխիլ//փըլխիլ և *փըշրիլ//մըշրիլ* բայերի տարբերակները, սակայն, խոսքին երբեմն հաղորդում են որոշակի նրբերանգ՝ դառնալով իրադրական տարբերակներ.

Ծիրանը սալագըմը ճըլխէլ ա («Ծիրանը կողովի մեջ ձգմվել-տրորվել է»):

Ծիրանը ծառան վըրեն հասէլ ա, պըլխէլ («Ծիրանը ծառի վրա հասել, փափկել է»):

Ծիրանը ծառան տագին մընացէլ ա, փըլխէլ (Ծիրանը ծառի տակ մնացել է, լիկել):

Հացը փըշըրվէլ ա («Հացը փշրվել է»):

Էս տաբլետկէն մըշրի, յէղավ իըմի (Այս դեղահաբը լավ փշրիր, հետո խմիր):

Մեկ տասնյակից ավելի հնչատարբերակներ ունի *փոքրիկ* (*պստիկ, պուճուր(իկ)*) ածականը՝ *պուճուր>պըջիր//պըջրիգ//պըջիրիգ//պըջլիգ//պըջլինգ//պըջլօնգ//պըջլունգ//պըջլանգ//պըջըլօ* և այլն, ինչպես նաև պստիկ> *փըստլիգ//փըստըլիգ//փըստլօ//փըստըլօ* և այլն: Սակայն այս բառի որոշ հնչատարբերակներ երբեմն կրում են զգացական-հուզական իմաստային ենթաերանգներ և դառնում են իրադրական տարբերակներ:

Օրինակ՝ *Մին պըջիր փէդ քըցէց թօրէնը* նախադասության մեջ *պըջիր* բառը ուղղակի «փոքր» իմաստն ունի, սակայն *Հըրօրոցըմը մին պըջըլօ ըրէխա կար* նախադասության մեջ

⁶ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1976, էջ 194:

⁷ Հ. Աճառեան, *Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի*, Ե., 1925, էջ 59:

⁸ Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն. հատոր 1. հնչյունաբանություն*, Ե., 1982, էջ 257-279:

պրջլօ-ն՝ «շատ փոքրիկ, սիրունիկ» իմաստը, *Ժամի պագըմը մին պրջլանգ մառթ ա նըստաձ* նախադասության մեջ *պրջլանգ*-ը ունի «փոքրամարմին, թզուկ» իմաստով արհամարհական-քամահրական երանգ:

Ձայնարկություններից՝ *պա՛հ-պա՛հ*-ը կիրառվում է որպես զարմանքի, զայրույթի արտահայտություն, իսկ վերջինիս *բւ՛ւ հ-բւ՛ւ հ* տարբերակը՝ խիստ զայրույթի և արհամարհանքի արտահայտություն, *ի՛ՖՖ*-ը կիրառվում է որպես զզվանքի արտահայտություն, *փի՛ՖՖ*-ը՝ նողկանքի:

Միջբարբառում առկա են նաև մի շարք ձևաբանական զուգաձևություններ: Օրինակ, բայի սահմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակները կազմվում են անորոշ դերբայով և *պիտեմ* բայի կրճատ ձևերով (*լըսիլ՝դէմ//լըսի՛բդէմ, լըսիլ՝դիմ//լըսի՛բդիմ*), իսկ շրջուն շարադասության, հարադրական բայերի և ժխտական խոնարհման դեպքերում երևան են գալիս ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևեր (*յէս էմ լըսիլօ, լըսիլօ չէմ, յէս իմ քընալօ, քընալօ չիմ, լւնց էմ ըլիլօ, պար իմ կալօ*): Աղավնաձորի, Արփիի, Գնիշիկի և Խաչիկի խոսվածքներում, սակայն, *պիտեմ* բայի կրճատ ձևերով կազմված տարբերակներին զուգահեռ կիրառվում են նաև ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևերը (*լըսիլօ էմ, լըսիլօ իմ*)⁹:

Չարկադրական եղանակի անցյալը և ապառնին նույնպես ունեն տարբերակային ձևեր՝ կազմված *բիդի, բըդի, բիդմա, բիդըմա* եղանականիշ մասնիկներով (*բիդի քընամ (քընիմ)//բըդի քընամ (քընիմ)//բիդմա քընամ (քընիմ)//բիդըմա քընամ (քընիմ)*):

Բացառական հոլովը երբեմն կազմվում են զուգահեռաբար *էն* և *ից* վերջավորություններով (*Սարէն ա կալի//Սարիցն ա կալի*):

Սակայն սրանք չունեն իրադրական տարբերակում և ուղղակի զուգահեռ կիրառվող ձևեր են:

Եզրակացություն

Այսպիսով, Ճահուկ-Վայքի միջբարբառում առկա են միմյանցից գրեթե իմաստային տարբերություններ չունեցող՝ բառերի բազմաթիվ հնչատարբերակներ, որոնք, կիրառվելով ըստ իրադրության, երբեմն խոսքին հաղորդում են ոճական որոշակի առանձնահատկություն, որոշակի իմաստային նրբերանգ՝ զգացականություն, վերաբերմունք:

Բառային տարբերակների առաջացման հիմքերը առաջին հերթին պայմանավորված են խոսքի արտաբերման նվազագույն ճիգի գործադրմամբ և, անշուշտ, էական դեր են կատարում նաև բարբառի հնչունափոխական օրենքները, ինչպես նաև հարևան բարբառներից և լեզուներից կատարված փոխառությունները:

Օգտագործված գրականություն

Աճառեան Հ., Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Ե., 1925:

Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2006:

⁹ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 51:

Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989:

Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., 1976:

Սուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն. հատոր 1. Հնչյունաբանություն, Ե., 1982:

Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Ե., 1994:

Վարդանյան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները.– Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողովի նյութեր, Ե., 2020:

Վարդանյան Ա., Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004:

Vardanyan Artak – The Situational Word Variants in the Jahuk-Vayk interdialect. – The article studies numerous phonetic variants of words existing in the Jahuk-Vayk interdialect, which have almost no semantic differences from each other, which, when used depending on the situation, sometimes give speech a certain stylistic feature, a certain semantic shade - emotionality, attitude.

It is noted that the basis for the emergence of word variants is primarily due to the minimal labor intensity of pronunciation of speech and, of course, a significant role is also played by the phonetic laws of the dialect, as well as borrowings from neighboring dialects and languages.

Keywords: situational style, situational variant, phonetic variant, vocabulary, phonetic change, borrowing, Jahuk-Vayk interdialect.

Vardanyan Artak, PhD in Philology, senior Researcher in Department of Dialectology of the Institute of Language named after H. Acharyan of NAS RA. Tel. 091484601, E. mail: artva@list.ru

Варданян Артак - Ситуативные варианты слов в Джаук-Вайкском междиалекте. - В статье изучены существующие в Джаук-Вайкском междиалекте многочисленные фонетические варианты слов, почти не имеющие семантических отличий друг от друга, которые при употреблении в зависимости от ситуации иногда придают речи определенную стилистическую особенность, определенный смысловой оттенок - эмоциональность, отношение.

Замечено, что основа возникновения вариантов слов обусловлена прежде всего минимальной трудоемкостью произношения речи и, конечно, значительную роль играют также фонетические законы диалекта, а также заимствования из соседних диалектов и языков.

Ключевые слова: ситуативный стиль, ситуативный вариант, фонетический вариант, лексика, фонетическое изменение, заимствование, Джаук-Вайкский междиалект.

Варданян Артак, кандидат филологических наук, старший научный сотрудник отдела диалектологии Института языка имени Р. Ачаряна НАН РА.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուքիասյան Հենրիետա - Սերգեյ Աբրահամյան՝ մեծ լեզվաբանն ու քաղաքացին.....	3
Սաքայան Դորա - Ուղերձ իմ գործընկերներին.....	8
Աբրահամյան Անահիտ –Խոսք հայրիկիս.....	10
Ամիրջանյան Սուսաննա - Ս. Աբրահամյանի «Ժամանակակից գրական հայերեն» աշխատության մի շարք հարցերի շուրջ.....	12
Բալոյան Հրայր - Պետական իշխանության բարձրագույն մարմիններ անվանող, ցույց տվող բառային միավորների մեծատառով կամ փոքրատառով գրությունը.....	20
Գալստյան Աշոտ -Երկխոսությունը գեղարվեստական խոսքում.....	31
Գյուլգաստյան Դավիթ - Ի՞նչ էր զգուշացնում Վիլիելմ Ֆոն Հումբոլդտը.....	37
Գրիգորյան Սուսաննա - Հին հայերենյան մի քանի բառերի իմաստափոխության մասին.....	51
Դոլուխանյան Աելիտա - Սերգեյ Աբրահամյանի շարահյուսության դասագիրքը չհնացող է.....	59
Զաքարյան Հովհաննես – Զուգաձևության առաջացման ուղիները.....	67
Թեյյան Լեոնիդ -Բարդ նախադասության տեսության հարցերը Սերգեյ Աբրահամյանի աշխատություններում.....	81
Խալաթյան Գայանե -«Վերաբերականների ուսմունքը ըստ Ս. Աբրահամյանի տեսության».....	91
Հակոբյան Լիլիթ - Հայոց լեզվի ուսուցման և գնահատման համընդհանուր համակարգի ձեւավորում՝ CEFR-ի օրինակով.....	100
Ղազարյան Հասմիկ - Հնչերանգը և տրոհումը տարաբժեք շարահյուսական կառույցների տարբերակման միջոց.....	114
Ղազարյան Շուշանիկ -Հակոբ Օշականի պատկերավորման համակարգի մի քանի առանձնահատկություններ.....	126
Ղարսյան Աննա - Տնտեսագիտական բուհերում հայերենի դասավանդման նոր մոտեցումներ	139
Ղարիբյան Սուսաննա - Կապ խոսքի մասի դիտարկումն ըստ Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» աշխատության.....	149
Մալխասյան Էմին - Միլվա Կապուտիկյանի հրապարակախոսության լեզվական հիմքերը.....	162
Մարգարյան Լուսինե —Կերտ, -ստան և -ավան ձևույթների իմաստագործառական արժեքը Արցախի բնականուններում.....	168
Մարտիրոսյան Հրաչիկ - Հնդեվրոպական * <i>peh2</i> - ‘պահպանել, հսկել, արածեցնել’ բայը հայերենի բնիկ և փոխառյալ շերտերում.....	179
Մխիթարյան Արմենուհի - Սերգեյ Աբրահամյան գիտնականը, մարդը, քաղաքացին.....	191
Մկրտումյան Արմինե - <i>Մեղր</i> և <i>մեղու</i> բառերը և դրանցով կազմությունների	

իմաստային (թեմատիկ) դասակարգումը հայերենում.....	213
Ներսիսյան Վարսիկ - Բառակազմության տեսական հարցերի քննությունը Սերգեյ Աբրահամյանի աշխատություններում.....	226
Պետրոսյան Լիլիթ, Գևորգյան Նանե - Կազմությամբ բարդ բայերի արժույթը հայերենում.....	239
Պետրոսյան Լիլիթ, Թադևոսյան Անժելա - Բայ-նորաբանությունների արժույթը Եղիա Տեմիրճիպաշյանի երկերում.....	246
Վարդանյան Արտակ - Բառերի իրադրական տարբերակները Ճահուկ-Վայքի միջբարբառում.....	252

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2025, մայիսի 19-20)

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի